

ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱԿԱՍՅԱՆ

ՅԱՎԱՆՈՑ ԼԵԳՈՆԷ

ՇԱՐԱԿՅՈՒԽՈՒԹՅՈՒՆ

Բուհական ճեռնատրոփ

«ԼՈՒՅՍ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՇԱՐԱՀՅՈՒՍՅՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՀԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅՍ» 2004

ՀՏԴ- 809.198.1(07)
ԳՍԴ- 81.2ՀԳ73
Ա 161

*Մասնագետ խմբագիր՝
բանասիրական գիտ. քեկնածու
Աշոտ Աբրահամյան*

Աբրահամյան Ս.

Ա 161

**Հայոց լեզու. Շարահյուսություն:
Բուհական ձեռնարկ. - Եր.: Լույս, 2004 - 288էջ:**

Աշխատության մեջ ամփոփված է հայոց լեզվի շարահյուսական համակարգի ամբողջական ուսումնասիրությունը, որի հիմքում ընկած են հեղինակի տարբեր տարիների աշխատությունների համապատասխան բաժինները՝ բարեփոխումներով և թարմացված օրինակներով:

Ձեռնարկը նախատեսված է լեզվաբանների, բուհերի ուսանողների, ժամանակակից հայերենի օրինաչափություններով հետաքրքրվողների համար:

Ա 4306020200 2004
702 (01)2004

ԳՍԴ- 81.2ՀԳ73

ISBN 5-545-01470-5

© «Լույս» հրատարակչություն
© Սերգեյ Աբրահամյան

Շարահյուսության ուսումնասիրության առարկան ամենից առաջ նախադասությունն է, նրա կառուցվածքը, տեսակները:

Շարահյուսությունն ուսումնասիրում է նաև բառակապակցությունը: Բառերի կապակցությունը կարելի է խմբավորել երեք տեսակների մեջ՝ ա) մեկ բառական, անվանողական արժեք ունեցող կապակցություններ, ինչպես՝ Միավորված ազգերի կազմակերպություն, սահմանային գոտի. բ) բառական ինքնուրույն միավորներից կազմված, բայց շարահյուսական մեկ միավորի արժեք ունեցող կապակցություններ, ինչպես՝ շատ ընտիր տեսակի (միրգ), սրանից երկու տասնամյակ առաջ. գ) բառերի ազատ կապակցություններ, ինչպես՝ մոտենալ դռանը, դասագրքերի վաճառք: Առաջին տեսակի բառակապակցությունները՝ որպես հարադրական բարդություններ ու բաղադրյալ անուններ, ուսումնասիրվում են բառագիտության, իսկ մյուս երկու տեսակները՝ շարահյուսության մեջ:

Շարահյուսությունն ուսումնասիրում է նաև նախադասությունների կապակցությունը խոսքի մեջ: Բանն այն է, որ խոսքի մեջ նախադասությունները պատահական դասավորություն չունեն, և նրանում չի իշխում անկապակցությունը: Մեկ խոսք կազմող նախադասությունները քերականական ու իմաստային որոշակի կապի մեջ են գտնվում: Խոսքի կառուցվածքին վերաբերող այդ հարցերը բնականաբար չեն մըտնում նախադասության կառուցվածքային ուսումնասիրության մեջ, դուրս են մնում նրա ոլորտից: Այդ հարցերը, սակայն, գիտական հետաքրքրություն են ներկայացնում, ուսումնագործնական կարևորություն ունեն և իրենց քերականական կողմով, անշուշտ, վերաբերում են շարահյուսությանը:

Ասվածը համառոտակի մասնավորենք միայն մեկ օրինակի վրա.

Վուհաղիներից զով սյուքն էր բերում վառ քասիդները այրող կարուտի,

Դայրայլում էին կաթնաղբյուրները երազներն իրենց կուտական սրտի:

Եվ *հեքիաթների յույս փերիները մայր-արմավենու քնքուշ սոսյունով*

Համբույր ու ողջույն ուղարկում էին և կանչում նրան գաղտնի խոստումով:

Քայց *Աբու-Լալան չէր ուզում լսել սիրո ողջույնին, գողտրիկ սոսավին,*

Թռչում էր անհազ՝ դեպի արևը, և ինքն էլ պայծառ՝ նման արևին:

Իսկ *սերաքները նոր տեսիլներով բյուր պատրանքների, հրապույրների՝*

Թոցնում էին կախարդված հոգին ոսկի քներով յույս-անուրջների:

Ուղտերը արձակ պարուսաններով հուժկու, մոլեգին, այնպես խուլաբար

Սլանում էին, ճախր էին առնում հրեղեն քափով, խենթ ու խելագար:

Եվ *արեգական վառ ցնցողի տակ բոցկլտում էին ուղտերը զվարթ,*

Եվ *բարձրադողանց կայրակում էին զանգակներն ազատ, ցնծուն, լուսագարդ (Իս.):*

Բերված հատվածում, նախ, մտքի տեսակետից յուրաքանչյուր հաջորդ նախադասություն հասկանալի է նախորդի կամ նախորդների հետ ունեցած կապակցու-

թյան մեջ և շարադասական տեսակետից պետք է գործածվեր հենց այնտեղ, որտեղ որ գործածված է բնագրում: Դրան ավելանում են նախադասությունների կապակցման քերականական այնպիսի միջոցները, ինչպիսիք են շաղկապներն ու շարահարությունը: Ինչպես երևում է, այստեղ նախադասությունները կապակցելու համար գործածված են տարբեր բնույթի (միավորիչ, ներհակական) շաղկապներ՝ **և, բայց, իսկ**, որոնցով արտահայտվում են համապատասխան քերականական հարաբերություններ տարբեր նախադասությունների միջև: Այս և նման հարցերը խոսքի կառուցվածքի, խոսքի մեջ նախադասությունների կապակցման հարցեր են, որոնք պետք է ուսումնասիրվեն շարահյուսության մեջ:

Այսպիսով՝ շարահյուսությունն ուսումնասիրում է նախադասությունը, ինչպես և բառերի, նախադասությունների կապակցությունը:

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

Քառակապակցություն բառի ստուգաբանական իմաստը թույլ է տալիս նրա տակ հասկանալ բառերի ամեն մի կապակցություն: Ըստ որում, բառերի կապակցություններն իրենց կառուցվածքային բնույթով ու հաղորդակցական արժեքով տարբեր են: Բառերի կապակցություններ են՝

- | | |
|----------------|---------------------|
| 1) մայրը զնաց, | 4) մոր սիրտը, |
| 2) մայր մեղու, | 5) սիրել մորը, |
| 3) մոր համար, | 6) սովորականից լավ: |

Ինչպես երևում է, 1-ին կապակցությանը հատուկ է ստորոգումը, որով այն ձևավորվում է որպես նախադասություն: Իսկ նախադասությունը շարահյուսության ուսումնասիրության առարկա է, քննվում է առանձին, ուստի «քառակապակցություն» տերմինը նախադասության վրա տարածելու հարկ չկա, թեև այդպիսի փորձեր արվել և արվում են: Նախադասությունը ևս քառակապակցություն հասկացության մեջ մտցնելը կհակասեր տերմինների մենիմաստության սկզբունքին, տեղիք կտար տերմինների անտեղի զուգահեռությունների: Բնավ նպատակահարմար չէ յուրահատուկ կառուցվածք ունեցող և մտքի ձևավորման ու հաղորդման միավոր հանդիսացող նախադասությունը մտցնել քառակապակցությունների շարքը, որոնք այլ կարգի միավոր են, և հետո միայն տարբերել նրանցից:

2-րդ օրինակը, թեև կազմված է **մայր** և **մեղու** բառերի կապակցությունից, բայց իր էությանը ու արժեքով մեկ բառական, անվանողական միավոր է. այն բաղադրյալ հասարակ անուն է, ուստի և քննվում է ոչ թե շարահյուսության, այլ բառագիտության մեջ՝ որպես անվանական հարադրություն:

3-րդ օրինակը կազմված է նյութական իմաստ ունեցող բառից (**մոր**) ու քերականական հարաբերություն արտահայտող բառից (**համար**) և արտահայտում է մեկ

հասկացություն՝ քերականական որոշակի հարաբերությամբ հանդերձ:

4-րդ օրինակը կազմված է նյութական իմաստ ունեցող երկու տարբեր բառերից, որոնցից յուրաքանչյուրը շարահյուսական ինքնուրույն արժեք ունի, ուրեմն և այն գնահատվում է որպես շարահյուսական երկու միավորների՝ անդամների կապակցություն: Իմաստային տեսակետից այն կարող է գիտակցվել որպես մեկ հասկացություն (**մայրական սիրտ՝** ի տարբերություն այլ սրտի կամ զգացմունքի):

5-րդ օրինակը կազմված է երկու բառից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն իմաստն ու պաշտոնը: Ուրեմն այն թե՛ իմաստային-հասկացական և թե՛ շարահյուսական տեսակետից երկու ինքնուրույն միավորների կապակցություն է:

6-րդ օրինակը նյութական իմաստ ունեցող երկու բառից կազմված մեկ կապակցություն է, որ նախադասության մեջ կարող է հանդես գալ շարահյուսական մեկ միավորի՝ անդամի արժեքով:

Այսպիսով՝ 1-ին և 2-րդ կապակցությունները՝ բառակապակցության՝ որպես շարահյուսության ուրույն բաժնի մեջ չեն մտնում, քանի որ վերաբերում են լեզվի կառուցվածքի այլ բաժինների. 1-ինը՝ նախադասության, 2-րդը՝ բառագիտության: Մյուս բոլոր կառուցվածքները բառակապակցություններ են և համապատասխան տեսանկյունով ու մոտեցումով ուսումնասիրվում են շարահյուսության «Բառակապակցություն» բաժնում:

Չնայած ներքին տարբերություններին՝ դրանց մեջ կա այն ընդհանուրը, որ կազմված են մեկից ավելի բառերից, որոնք կապակցության մեջ պահպանում են իրենց բառական իմաստն ու արժեքը և իրար հետ կապված են քերականական հարաբերությամբ: Միայն թե դրանց հասուկ չէ ստորոգումը, որի առկայության դեպքում կազմվում է նախադասություն, ինչպես 1-ին օրինակում է:

Այսպիսով՝ բառակապակցությունը շարահյուսական բաղադրյալ միավոր է, որի բաղադրիչ բառերը պահպանում են իրենց բառական արժեքը և կապված են քերականական, բայց ոչ ստորոգման հարաբերությամբ:

Բառակապակցությունը մի կողմից՝ հակադրվում է բառին, մյուս կողմից՝ նախադասությանը: Բառից տարբերվում է նրանով, որ կազմված է մեկից ավելի բառերից, նախադասությունից տարբերվում է նախ՝ ստորոգում չունենալով և երկրորդ՝ նրանով, որ նախադասությունը կարող է կազմված լինել մեկ բառից (ինչպես՝ Մթնեց: Լուսացավ:), իսկ բառակապակցությունը շարահյուսորեն միշտ բաղադրյալ է. կազմված է երկու կամ ավելի բառերից:

Քանի որ խոսք եղավ բառակապակցությունից ստորոգման բացառման մասին, նշենք, որ բառակապակցության մեջ կարող է լինել դիմավոր բայ, բայց այդ դեմքը չի վերցվում համապատասխան ենթակայի գուգորդությամբ, այլ դիմավոր բայը՝ որպես բայ (անկախ դեմքից), վերցվում է իր լրացման հետ միասին: Հմնտ. **սիրել մորը** և **սիրում է մորը**: Սա նշանակում է, որ վերջին տեսակի բառակապակցությունները չպետք է շփոթել զեղչված ենթակայով նախադասության հետ, այլ պետք է նկատի ունենալ որպես բայի և լրացյալի կապակցություն, որ իր էությամբ չի տարբերվում համապատասխան բայի անդեմ ձևի և նրա լրացման կապակցությունից:

Դիտելով վերը բերված բոլոր բառակապակցությունները՝ հեշտությամբ կարելի է

նկատել, որ նրանց բաղադրիչները կապված են ստորադասական հարաբերությանը: Բառակապակցությունն այդպես էլ գնահատվում է լեզվաբանության մեջ: Բառերի համադասական կապակցությունները սովորաբար բառակապակցություն չեն համարվում: *Շոբայից ուսանել են հավատարմություն, սեր, քաջություն, ասպետություն: Սովորել են լեզու, ճաշակ, արվեստ, իմաստություն, բանաստեղծություն (Իս.):* Այս նախադասությունների մեջ ընդգծված բազմակի անդամները չեն դիտվում որպես բառակապակցություն: Դրանցից յուրաքանչյուրը բառակապակցություն է կազմում լրացյալի (*ուսանել են, սովորել են*) հետ, և նշված բազմակի անդամների քերականական համագործունը հետևանք է դրանցից յուրաքանչյուրի ու լրացյալի միջև եղած միևնույն քերականական հարաբերության (ներգործական սեռի բայ+կրող խնդիր):

Սակայն կան համադասական և մասնավորապես շաղկապավոր համադասական կապակցություններ, որոնց բաղադրիչները փոխադարձ ակտիվ հարաբերության մեջ են գտնվում միմյանց հետ, կազմում են բառակապակցություն և պետք է ուսումնասիրվեն որպես այդպիսին: Օրինակ՝ **դպրոցը և արտադրությունը, Եղիշե Չարենցը և ռուս սիմֆոլիստները** և այլն:

Այսպիսի կապակցությունների բաղադրիչները սովորական ձևով թվարկվող համագործուն միավորներ չեն, ինչպես որ վերը բերվող բազմակի ուղիղ խնդիրներն են, այլ գտնվում են քերականական ու իմաստային ակտիվ փոխհարաբերության մեջ (ասենք՝ **դպրոցի և արտադրության կապն ու փոխհարաբերությունը, Չարենցի կապը ռուս սիմֆոլիստների հետ, ռուս սիմֆոլիստների ազդեցությունը Չարենցի վրա և այլն**): Այս և նման համադասական կապակցությունները ևս պետք է քննվեն բառակապակցությունների շարքում՝ որպես նրանց մի տեսակ:

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ

Բառակապակցություններն ունեն տարբեր շարահյուսական ու հաղորդակցական արժեք: Այդ տարբերությունը կարող է բխել նրանց կազմությունից կամ գործածության բնույթից:

Բառակապակցությունների շարահյուսական կամ հաղորդակցական դերը կարելի է ամփոփել հետևյալ երեք կետերում:

Ա. Բառակապակցությունը կարող է հանդես գալ նախադասության անդամների կապակցության կամ նրանց բաղադրիչի դերով, և այդ իմաստով այդպիսի բառակապակցությունների ուսումնասիրումը նպաստում է նախադասության անդամների կապի ու հարաբերությունների ուսումնասիրությանը:

Այսպես՝ **երջանիկ մայր, սիրել (սիրում է) մորը** բառակապակցությունները կարող են հանդես գալ նախադասություններում: *Նա երջանիկ մայր է: Դրանից հետո նա սկսեց խենթի պես սիրել մորը: Նա խենթի պես է սիրում մորը:*

Առաջին նախադասության՝ ըստ անդամների վերլուծության դեպքում **մայր**-ը գնահատվում է որպես ստորոգելի, իսկ **երջանիկ**-ը՝ նրա որոշիչ: Այդ

նույնը բառակապակցության տեսակետից վերլուծելիս քննում ենք որպես ածականի ու գոյականի կապակցություն՝ անկախ նրանից, թե **մայր**-ը ինչ անդամ է, այնուհետև որոշում ենք նրանց կապակցման եղանակը՝ առդրություն, որ սովորաբար չենք քննում նախադասությունն ըստ անդամների վերլուծելիս: Այսպես՝ **երջանիկ մայր, գրած նամակ** կապակցությունները նախադասության մեջ վերլուծելիս դիտում ենք որպես որոշչի ու որոշյալի կապակցություններ, իսկ դրանց՝ որպես բառակապակցության կազմությունը քննում ենք՝ հաշվի առնելով, որ առաջինը առդրական, իսկ երկրորդը խնդրառական կապակցություն է:

Վերը բերված օրինակներից հաջորդ երկուսը վերլուծելիս **մորը** համարում ենք ուղիղ խնդիր բայ-ստորոգյալի (**սիրում է, սկսեց սիրել**) համար: Իսկ բառակապակցության տեսակետից քննելիս **սկսեց սիրել** ստորոգյալը դիտվում է որպես մեկ կապակցություն, **սիրել մորը**՝ մի այլ կապակցություն, որի բաղադրիչները կապված են խնդրառական հարաբերությամբ: Անշուշտ, մենք կարող ենք վերցնել նաև **սկսեց սիրել մորը** որպես մեկ եռանդամ բառակապակցություն: Բայց այդ դեպքում դարձյալ պետք է քննել նրանց բաղադրիչների ներքին հարաբերությունները, իսկ այդ էլ պետք է անել դարձյալ **սկսեց սիրել** և **սիրել մորը** բառակապակցությունների բաղադրիչների հարաբերության քննությամբ: Այսպիսով՝ միևնույն կապակցությունը նախադասության կառուցվածքի մեջ՝ որպես նախադասության անդամների կապակցություն, և նրանից դուրս՝ որպես բառակապակցական միավոր, քննվում է տարբեր առումներով: Այնպես որ այդ երկու քննություններն իրար չեն կրկնում, այլև լրացնում են և ամբողջացնում շարահյուսական համապատասխան երևույթի մասին մեր պատկերացումը:

Բ. Բառակապակցությունները կարող են հանդես գալ որպես նախադասության մեկ անդամ: Դա կախող է արտահայտվել՝ **ա)** նյութական իմաստ և քերականական իմաստ ունեցող բառերի կապակցությամբ. ինչպես՝ *հանուն մարդասիրության, քաղաքակրթության համար, դեպի վեր, անպատի մեջ* և այլն, **բ)** նյութական իմաստ ունեցող բառերի կապակցությամբ. ինչպես՝ *վերջին անգամ մենք գրկեցինք իրար (Իս.): Քսուսուն տարեկան հասակում գյուղում հողաբաժան եղավ (Իս.): Կաթավաբերդի զլխին տարին բոլոր ամս է նստում (Քակ.): Այս դրության մեջ տարբեր գույների փղերի առկայությունը ավելացրեց Բոտլիննիկի հնարավորությունները ոչ-ոքիի հասնելու համար (լր.):*

Նման դեպքերում տարբեր նյութական իմաստ ունեցող բառերի կապակցությունը կարող է ավելանալ քերականական իմաստ ունեցող բառ. ինչպես՝ *Առավոտից մինչև ուշ երեկո ծուխ էր բարձրանում Օհանեսի երդիկից (Իս.): Մինչև քառասուն տարին Օհան ամին ասյրել էր իր սրայերի գյուղում (Իս.):*

Քանի որ նախադասության անդամը նախադասության կառուցվածքի նվազագույն միավորն է, ուստի նշված բառակապակցությունների առանձին քննությունն անհրաժեշտ է նրանց կառուցվածքային հատկանիշները (բաղադրիչների խոսքի-մասային պատկանելություն, նրանց քերականական կապ և այլն) վերհանելու, նրանց ընդհանուր արժեքը պարզելու համար:

Գ. Բառակապակցությունները կարող են հանդես գալ խոսքից դուրս՝ որպես ինքնուրույն արտահայտություններ՝ վերնագրերի, անվանողական այլ արտահայտու-

թյունների ձևով: Եվ այսպես՝ բառակապակցությունները հաճախ ունենում են իրենց կառուցվածքային ու իմաստային յուրահատկությունները՝ ի տարբերություն նախադասության մեջ հանդես եկող համապատասխան կապակցությունների, և հենց այդ պատճառով էլ նրանց առանձին ուսումնասիրումը խիստ անհրաժեշտ է:

Վերցնենք վերը բերված բառակապակցություններից մեկը՝ **Եղիշե Չարենցը և ռուս սիմվոլիստները**: Սա նույն կառուցվածքով և արտահայտած յուրահատուկ իմաստով չի կարող հանդես գալ նախադասության մեջ: Այնպես որ այս բառակապակցության արտահայտած իմաստը, նրա բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը կարող են արտահայտվել միայն նրա առանձին գործածության դեպքում: Այլ բան է, որ այն՝ որպես ինքնուրույն անվանողական բառակապակցություն, կարող է գործածվել խոսքի մեջ, ինչպես՝ *Նա ուսումնասիրում է «Եղիշե Չարենցը և ռուս սիմվոլիստները» թեման*:

Նույնը որոշ յուրահատկությամբ վերաբերում է հետևյալ օրինակին՝ **«Նամակ ռուսաց թագավորին»** (Բակունցի հայտնի պատմվածքի վերնագիրը): Իհարկե, կարող ենք այդպիսի կապակցություն գործածել նախադասության մեջ. ասենք՝ «Նա գրեց **նամակ ռուսաց թագավորին**», բայց այդ ընդգծված բառակապակցության իմաստը տարբերվում է վերը բերված վերնագրային բառակապակցության իմաստից: Եթե վերջինս հասկացվում է որպես լեզվական ինքնուրույն արտահայտություն (նամակ, որ գրվել է ռուսաց թագավորին), ապա նախադասության մեջ նույն կապակցությունը այդ յուրահատկությունը չունի: Գրելու իմաստն արտահայտվում է ստորոգյալով, որի հետևանքով ընդգծված բառերը չեն հասկանցվում որպես մեկ ամբողջական բառակապակցություն, այլ նրանցից յուրաքանչյուրը որոշակի հարաբերությամբ կապվում է իր լրացյալի հետ (**նամակ-ը՝ գրեց** բայի ուղիղ խնդիր, **թագավորի ձևը՝ գրեց-ի** հանգման խնդիր, **ռուսաց-ը թագավորին** բառի որոշիչ): Նշված յուրահատկության պատճառով **նամակ ռուսաց թագավորին** բառակապակցությունն ունի որոշակի, կայուն շարադասություն ու կառուցվածք, իսկ նախադասության մեջ նույն կապակցությունը ենթակա է որոշ փոփոխության: Ինչպես՝ *Նա նամակ գրեց ռուսաց թագավորին*: *Նա ռուսաց թագավորին նամակ գրեց* և այլն:

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Բառակապակցությունները կազմվում են երկու կամ ավելի բառերից: Երկբառ (կամ երկանդամ) բառակապակցությունը կարող է ստանալ նոր լրացում կամ լրացումներ. **ինչպես՝ գրքի թերթերը, իմ գրքի թերթերը, իմ սիրելի գրքի թերթերը** և այլն. **հաճախել դպրոց, միշտ հաճախել դպրոց, միշտ հաճույքով հաճախել դպրոց** և այլն: Ստորադասական բառակապակցություններն ունենում են մեկ գերադաս անդամ և մեկ կամ մեկից ավելի ստորադաս անդամներ, որոնք իրար հետ կապված են ենթաստորադասությամբ: Բերված օրինակների գերադաս անդամներն են **թերթերը** և **հաճախել**: Երկու խմբի բառակապակցությունները կազմվել են այս բառերից յուրաքանչյուրի վրա լրացումների ավելացնելու միջոցով:

Բառակապակցության գերադաս բառի տեսակով (խոսքիմասային պատկանե-

լությամբ) որոշվում է բառակապակցության տեսակը: Այսպես՝ եթե բառակապակցության գերադաս անդամը արտահայտված է գոյականով, բառակապակցությունը կկոչվի **գոյականական**, եթե այն արտահայտված է բայով, կկոչվի **բայական** և այլն: Գոյականական բառակապակցություններն են՝ **աշակերտի վարքի կանոնները, խոսքի զարգացում, ծառի ճյուղերը**, որոնցում գլխավոր անդամն արտահայտված է **կանոնները, զարգացում, ճյուղերը** գոյականներով: Բայական բառակապակցություններ են՝ **գեղեցիկ արտասանել, մոտենալ ճշմարտությանը, օգնել ընկերներին**, որոնցում գլխավոր անդամն արտահայտված է **արտասանել, մոտենալ, օգնել** բայերով: Գերադաս անդամի խոսքիմասային պատկանելությունը կարևորություն է ստանում ոչ միայն ինքնին վերցրած, այլև նրանով, որ այդ անդամով, որպես կանոն, պայմանավորվում են լրացումների բնույթը, բառակապակցության անդամների կապակցման եղանակները (մասնավորապես այն անդամի, որն անմիջականորեն կապված է գերադասի հետ):

Բառակապակցության գերադաս անդամի դերով գերազանցապես հանդես են գալիս գոյականներն ու բայերը, համեմատաբար քիչ չափով՝ նաև ածականները (չառ **բարձր**, միանգամայն **հիանալի**, բոլորովին **անհաջող**), մակբայները (համարյա **միաժամանակ**, բավականին **շուտ**, քիչ **հետո**), առավել սակավ դեպքերում՝ թվականները և որոշ դերանուններ: Թեև այս վերջին կարգի բառակապակցություններն իրենց կազմության մեջ ունեն գերադաս և ստորադաս անդամներ, բայց բուն խոսքի մեջ դրանք մեծ մասամբ դառնում են գոյականական ու բայական բառակապակցությունների լրացումներ: Այսպես՝ **չառ բարձր** ածականական բառակապակցությունը և **համարյա միաժամանակ** մակբայական բառակապակցությունը կարող են դրրվել այլ խոսքի մասերի վրա (ինչպես՝ **չառ բարձր աշտարակ, համարյա միաժամանակ պատասխանել**) և այդպիսով մտնել գոյականական ու բայական բառակապակցությունների մեջ՝ որպես նրանց ստորադաս անդամ: Սա նշանակում է, որ գոյականն ու բայը նշված մյուս խոսքի մասերից տարբերվում են ոչ միայն բառակապակցություն կազմելու հաճախականությամբ, այլև խոսքի մեջ, որպես օրինաչափություն, բառակապակցություններում գրաված իրենց գերադաս դիրքով մյուսների համեմատությամբ:

ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ

ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Լեզվական յուրաքանչյուր միավոր իր ուրույն տեղն ունի լեզվի կառուցվածքում և յուրահատուկ դեր է կատարում նրա հաղորդակցական գործառության մեջ: Այսպես՝ հնչույթը արտասանական (նյութական) միավոր է, բառը՝ իմաստային, նախադասությունը՝ մտքի:

Լեզվի կառուցվածքի տարբեր մակարդակներն ուսումնասիրվում են առանձին-առանձին, ըստ հնարավորին անկախաբար, բայց իրականում լեզվի ամեն մի հաջորդ մակարդակ ու նրա ուսումնասիրության հիմնական միավորը իրենց մեջ ներա-

ռում են նախորդ մակարդակներն ու նրանց հիմնական միավորները: Դա վերաբերում է նաև շարահյուսական կառուցվածքին և նախադասությանը՝ որպես նրա միավորի: Թեև նախադասությունը դիտվում է որպես մեկ ինքնուրույն միավոր և որպես այդպիսին՝ հակադրվում է մյուս միավորներին, բայց բուն լեզվի մեջ նա ոչ թե մյուսների կողքին, նրանցից դուրս և նրանց զուգահեռ գոյություն ունեցող միավոր է, այլ իր մեջ ներառում է լեզվի կառուցվածքի նախորդ բոլոր աստիճանները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով, առանց միջնորդավորման կամ միջնորդավորված՝ դեր կատարում են նախադասության մեջ՝ ձևավորելով այն միավորը, որով իրացվում է լեզվի հաղորդակցական գործառնությունը:

Երբ ասում ենք, որ մարդ իր մտքերը հաղորդում է նախադասությունների միջոցով, դա, իհարկե, չի նշանակում, թե նախադասությունը ծառայում է պատրաստի մտքերը խոսակցին (կամ ընթերցողին) սոսկ հաղորդելու համար: Քանի որ լեզուն մտածողության միջոց է, և նա իր այդ հասարակական դերը կատարում է հենց նախադասությունների միջոցով, նախադասությունների ձևով, ուստի և մարդու ուղեղում միտքը կարող է ձևավորվել միայն նախադասությունների մեջ, եթե նույնիսկ դա ներքին միտք է և չի հաղորդվում: Այնպես որ նախադասությունը ոչ միայն մտքի հաղորդման միավոր է, այլև մտքի ձևավորման միավոր, մտքի միավոր:

Նախադասությունը կարելի է համարել մտքի նվազագույն միավոր: Ինչ խոսք, որոշ տեսակի նախադասությունների (պարզ ընդարձակ, բարդ) առանձին անդամներ, մասեր հանելով և միայն ենթական ու ստորոգյալը թողնելով՝ ևս արտահայտվում է միտք: Օրինակ՝ «*Երեկ մեր խմբի ուսանողները մեկնեցին ճամբար*» նախադասությունից իսկապես կարելի է հանել մի քանի անդամ, թողնել միայն «*ուսանողները մեկնեցին*», որը ևս միտք է արտահայտում: Թեև նախադասությունից մի քանի բառ պակասեց, բայց դրանով նախադասությունը չբաժանվեց միտք արտահայտող մեկից ավելի միավորների. այդ և նման նախադասություններում միտք արտահայտող մեկ միավոր կա միայն: Իսկ սա նշանակում է, որ բերված և նման փաստերը չեն բացառում նախադասության՝ մըտքի նվազագույն միավոր լինելը:

Ինչ վերաբերում է բարդ նախադասության մեջ մեկից ավելի միտք լինելուն, ապա պետք է նկատի ունենալ, որ միևնույն բարդ նախադասության կազմի մեջ մտնող բաղադրիչ նախադասությունները չեն արտահայտում ինքնուրույն մտքեր, դրանք առանձին միավորներ չեն, և ամեն մեկն առանձին ամփոփ միտք չի արտահայտում: Այդպիսի բաղադրիչ նախադասությունները քերականական ու իմաստային տեսակետից միաձուլված են ամբողջի մեջ և պայմանավորում են այդ ամբողջը: Ուստի բարդ նախադասության՝ որպես մեկ ամբողջության համար կարևոր են ոչ թե բաղադրիչ նախադասությունները՝ առանձին վերցրած, այլ նախադասություններն իրենց փոխադարձ կապի մեջ, կարևոր է նրանց՝ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունը: Չէ՞ որ հենց այդ կապով, հարաբերությամբ է որոշվում բարդ նախադասության տեսակային հատկանիշը, իսկ վերջինս էլ նրա էության արտահայտությունն է: Բարդ նախադասության բաղադրիչների կապն այնքան էական է, որքան որ պարզ նախադասության համար՝ նրա անդամների կապը:

Այս տեսակետից տեղին է նկատի ունենալ հնչույթի՝ որպես լեզվական-նյութա-

կան նվազագույն միավորի համանման հատկանիշը: Խոսքը վերաբերում է բարդ հնչյունների յուրահատկությանը: Բարդ հնչյունները, որքան էլ բաղկացած լինեն մեկից ավելի հնչյունական բաղադրիչներից, այնուամենայնիվ չեն դադարում մեկ միավոր լինելուց: Ի վերջո, նվազագույն միավոր լինելու տեսակետից որքան էլ բարդ հնչյունները առաջին հայացքից տարակուսանքի տեղիք տան, այնուամենայնիվ, քանի որ հնչյունից փոքր լեզվական-նյութական նվազագույն միավոր չկա, ուստի այդպիսին պետք է համարել, և այդպիսին է համարվում հնչյունը: Նույնը պետք է ասել նաև նախադասության վերաբերյալ: Քանի որ նախադասությունից ավելի փոքր միավորով միտք արտահայտել հնարավոր չէ, ուստի նախադասությունը պետք է դիտել որպես մտքի ամենափոքր կամ նվազագույն միավոր:

Այժմ տեսնենք, թե ինչպես է ձևավորվում նախադասությունը՝ որպես մտքի նվազագույն միավոր: Միտքը կարելի է արտահայտել մեկ բառով կամ մեծ մասամբ բառերի կապակցությամբ, սակայն ամեն մի բառ կամ բառերի ամեն մի կապակցություն չի կարող միտք արտահայտել: Այսպես՝ **մեծ քաղաք, գեղեցիկ այգի, բարձր լեռ** և նման բառակապակցությունները, իհարկե, իմաստ ունեն, բայց միտք չեն արտահայտում: Դրանք չի կարելի գործածել առանձին և որևէ մեկին հաղորդել իր մտածածը: Ուրեմն դրանք նախադասություններ չեն: Սակայն **քաղաքը մեծ է, այգին գեղեցիկ է, լեռը բարձր է** կապակցությունները կարելի է գործածել առանձին, քանի որ դրանք միտք են արտահայտում, հետևապես դրանք նախադասություններ են:

Ինչո՞վ են երկրորդ շարքի կապակցությունները հանդես գալիս որպես մտքի միավորներ, և ո՞րն է այդ երկու շարքի կապակցությունների էական տարբերության պատճառը: Վերը բերված առաջին շարքի բառակապակցությունների միջոցով փաստը չի արձանագրվում, դրանցով ոչինչ չի հաստատվում կամ ժխտվում: Մինչդեռ երկրորդ շարքի կապակցություններում խոսողը **մեծ** հատկանիշը վերագրում է **քաղաքին, գեղեցիկ** հատկանիշը՝ **այգուն, բարձր** հատկանիշը՝ **լեռանը**, դրանով իսկ հավաստում, հաստատում քաղաքի մեծ լինելը, այգու գեղեցիկ լինելը, լեռան բարձր լինելը: Եվ այսպես՝ թե՛ արձանագրվում է փաստը, և թե՛ դրանով իսկ խոսողի վերաբերմունքն է արտահայտվում (տվյալ դեպքում՝ հաստատական վերաբերմունքը) երևույթի նկատմամբ: Հատկանիշի այդպիսի վերագրումը առարկային կոչվում է **ստորոգում**, որը՝ նախադասություն կազմելու, միտք արտահայտելու հիմնական միջոցներից մեկն է: Նշենք, որ ստորոգման էությունը ակնհայտորեն դրսևորվում է հատկապես երկկազմ նախադասություններում, որոնցում կան ենթական և ստորոգյալը՝ որպես իրար հակադրվող բևեռներ:

Վերը բերված նախադասություններում խոսողի վերաբերմունքը հաստատական է, սակայն այն կարող է տարբեր լինել տարբեր դեպքերում, նայած թե նախադասության բովանդակությունը ինչպես է հարաբերում իրականությանը ըստ խոսողի հայեցակետի: Նախադասությամբ արտահայտվածը կարող է ոչ միայն հաստատվել խոսողի կողմից, այլև վերջինի համար անհայտ լինելու կամ այլ պատճառով հարցվել, կարող է դա լինել մի չկատարված գործողություն և հրամայվել, պարտադրվել կատարելու համար, այն կարող է լինել խոսողի հիացմունքի, զարմանքի առարկա և արտահայտվել բացականչումով և այլն: Այսպես՝ *Ես հայ ուսուցիչ եմ: Դուք ո՞վ եք:*

*Ախ, ինչքան ես երջանիկ կլինեի իմ սիրով, ինչքան երջանիկ: Իշխանուհի՛, իշխանուհի՛...
Օգնեցե՛ք ինձ, օգնեցե՛ք (ՆԳ):*

Անկախ նախադասությունների կառուցվածքի տարբերությունից՝ նրանց բոլորի մեջ էլ առկա է խոսողի վերաբերմունքը և դրանով իսկ նախադասության մտքի հարաբերումը իրականությանը:

Այժմ տեսնենք, թե ինչ միջոցներով է արտահայտվում ստորոգումը: Ստորոգման դերն առավել որոշակիությամբ երևում է բաղադրյալ ստորոգյալների մեջ, ինչպես և բայի վերլուծական կազմությամբ ժամանակներով արտահայտված ստորոգյալներում: «*Ծաղիկը հոտավետ է*», «*Գնացքը մեկնում է*» նախադասություններում է բաղադրիչով **հոտավետ** և **մեկնել** հատկանիշները վերագրվում են համապատասխանաբար **ծաղիկ** և **գնացք** առարկաներին:

Ստորոգումը կարող է արտահայտվել ոչ միայն օժանդակ բայով, այլև բայի քերականական վերջավորությունների միջոցով: Օրինակ՝ *Ծառը ծաղկեց: Դաշտը կկանաչի*: Այս երևույթը լինում է բայի համադրական ժամանակներով արտահայտված ստորոգյալների մեջ, երբ և՛ հատկանիշը, և՛ ստորոգումը արտահայտվում են մեկ բառով, ըստ որում վերագրվող հատկանիշն արտահայտվում է բառի հիմքով, իսկ ստորոգումը՝ բայական վերջավորությամբ:

Մենք կսպասենք գիշերվան ու կեյնենք, կգարթեցնենք դիակներին անթիվ ու կքայլենք դեպի քաղաքները քարահատակ (Աբ.): Մարգարը ծիծաղեց (Աբ.):

Ստորոգումը կարող է արտահայտվել նաև **դառնալ**, **լինել** և այլ վերացական բայերի միջոցով, ինչպես՝ *Հեղուկը գոլորշի դարձավ (հմմտ. Հեղուկը գոլորշիացավ)*: Իր հերթին վերացական բայն էլ կարող է դրսևորվել ոչ միայն համադրական, այլև վերլուծական ձևով:

Անկախ նրանից, թե ստորոգումն ինչպիսի ձևերով ու միջոցներով է արտահայտվում, նրա էությունն ու դերը միշտ նույնն են:

Նախադասությունների ճնշող մեծամասնության մեջ լեզվականորեն տարրորոշված կերպով արտահայտվում են թե՛ գործող կամ եղող առարկան (քերականորեն՝ ենթական), թե՛ նրան վերագրվող հատկանիշը և թե՛ հատկանիշը առարկային վերագրող միջոցը՝ հանգույցը, օժանդակ բայը կամ քերականական վերջավորությունը՝: Դրանք երկկազմ նախադասություններ են, որոնցում ստորոգումը իր հետ կապված բոլոր բաղադրիչներով իրեն որոշակիորեն զգալ է տալիս, և դժվար չէ դրանք դիտել, վերլուծել:

Մակայն միակազմ նախադասությունները այսպիսին չեն: Նրանցում երկկազմ նախադասությանը հատուկ երկու բևեռներ չկան. այդպիսի նախադասություններն ունեն մեկ մաս՝ անկախ այն բանից՝ նրանք մե՞կ, թե՞ մեկից ավելի բառերից են կազմված, ինչպես՝ *Լուսացավ: Ինչի՞ց սկսել: Պահպանե՛լ պերական գույքը: Բարձրացնե՛լ աշխատանքի արդադրողականությունը*:

Անշուշտ, սրանք և սրանց նմանները ևս լիարժեք նախադասություններ են, քանի

¹Այս միտքը չի հակասում գեղջված անդամներով նախադասությունների, այլև որոշ թերի նախադասությունների (որոնք գործածվում են հատկապես երկխոսությունների ժամանակ) գոյության փաստին, քանի որ տվյալ նախադասության մեջ գեղջված անդամը մեծ մասամբ արտահայտված է լինում կից նախադասության մեջ և կամ, համեմայն դեպս, որոշակիորեն հասկացվում է:

որ մտքի ինքնություն միավորներ են, արտահայտում են ամփոփ, ավարտված միտք. դրանցով մենք հաստատում ենք մի բան, մեր վերաբերմունքն ենք արտահայտում եղած, լինելիք իրողության նկատմամբ: Սակայն այստեղ մտքի, ստորոգման ձևավորումը այլ կերպ է կատարվում: Միակազմ նախադասություններում թե՛ եղող առարկան, թե՛ հատկանիշը, թե՛ ստորոգող քերականական բաղադրիչը կարող են արտահայտվել մեկ բառով: **Լուսացավ:** *Դադարեց Արտակի գիշերամարտը (ԳԳ): Մթնեց:* *Անտառի խորքում մի թռչուն սկսեց տխուր կանչել (ՎԱ):*

Երբ միակազմ նախադասությունն արտահայտված է խոնարհված բայով կամ իր կազմի մեջ ունի խոնարհված բայ, բնականաբար, նայած թե բայը որ ժամանակով է գործածված, ստորոգումը կարող է արտահայտվել օժանդակ բայով: Օրինակ՝ «**Լուսանում է, - հանկարծ շնջաց Արտակը**» (ԳԳ): Այս և վերը բերված միակազմ նախադասություններում ստորոգումն ունի իր քերականական դրսևորումը, այն է՝ մի դեպքում արտահայտվում է խոնարհման վերջավորությամբ (**մթնեց, լուսացավ** բայաձևերում), մյուս դեպքում՝ է օժանդակ բայով:

Որքան էլ ստորոգման ձևավորման միջոցները իրենց դրսևորման ձևերով տարբեր են, այնուամենայնիվ դրանց միջև կա շատ էական ընդհանրություն, այն է՝ դրանք բոլորն էլ բայական ձևեր են: Եթե սովորաբար նախադասության մեջ արտահայտվում է, որ մի առարկա մի բան կատարում է, լինում է և այլն, այդ նշանակում է, որ նախադասության մեջ արտահայտվում է առարկայի գործողության, եղելության գաղափար. սրանք էլ հատկանիշներ են, որոնք հատուկ են բային՝ որպես խոսքի մասի:

Ավելին, գործողության, եղելության որոշ (թեկուզև տարտամ) իմաստ կա նույնիսկ միակազմ անվանական նախադասություններում, թեև վերջիններիս մեջ բայ չկա: **Փարիզ:** **Մշուշ ու ահ:** *Ես՝ պոետս, պատի՛ն կոթնած, ահա լսում եմ նրանց ձայնը, շշուկը (ԵԶ):*

Ընդգծված նախադասություններում ենթադրվում է գործողության կամ եղելության իմաստ, թեև նրանցում բայական բաղադրիչ չկա: Այդ իմաստը կարելի է արտահայտել մոտավորապես հետևյալ կերպ. «*Այդ Փարիզն էր*», «*Փարիզում էր*», «*Մշուշ ու ահ է տիրում*», «*Մշուշ ու ահ կա*» և այլն, որոնք, իհարկե, կազմությամբ տարբեր են նախորդներից:

Որքան էլ բայի, գործողության իմաստը կարևոր է ստորոգման համար, այնուամենայնիվ միայն այդ իմաստը, ինքնին վերցրած, ստորոգում չի ձևավորում: Դրա լավագույն ասպացույցը բայական միակազմ նախադասությունն է, որը կամ որի գերադաս անդամն արտահայտվում է բայով, բայց, այնուամենայնիվ, այդ բայով ստորոգում չի արտահայտվում:

-Կանգնե՛լ, - գոռում է հրամանատարը ցնցվելով (ԳՄ): *Ինչպե՞ս սկսել նոր ուսումնական տարին, ինչպիսի՞նք նոր միջոցներ ու ձևեր կիրառել ուսուցումը ներկա խնդիրների մակարդակին բարձրացնելու համար (լր):*

Ստորոգումը սերտորեն կապված է բայի որոշ քերականական կարգերի հետ: Բայի սեռի կարգը ստորոգման ձևավորման համար կարևոր չէ: Ստորոգման համար կարևոր են բայի մասնավորապես եղանակային ձևերին հատուկ քերականական

կարգերը, որոնք են՝ եղանակ, դեմք, ժամանակ, թիվ: Եվ ստորոգումը՝ որպես շարահյուսական կարգ, ձևավորվում է բայի ձևաբանական այս հատկանիշների հիմքի վրա:

Բերենք մի քանի օրինակներ: *Կատարվել էր նրա ցանկությունը (ՄԽ): Ծաղիկը եկավ: Ինձ համար տեղ պահիր: Գինին խանութից կբերեմ: Ոմանք կնախանջեն, ոմանք էլ կչարսխոսեն: Թող այնքան չարսխոսեն, որ պայթեն: Այդ նախապես պիտի ասեիր (ՄԽ):*

Կասկածի ենթակա չէ, որ բայի եղանակի, ժամանակի, թվի, դեմքի կարգերը կան հիշյալ նախադասություններում՝ դրսևորված ժամանակային ձևերի մեջ: Այդ կարգերը որոշ յուրահատկությամբ հատուկ են նույնիսկ անվանական ստորոգյալներին և արտահայտված են նրանց հանգույցի մեջ:

Մարգարյանը լուռ էր (ՄԽ): Դա հին, շատ հին պատմություն է (ՄԽ): Դա մի մեծ ու երկարատև ծես էր (ԴԴ): Նա բավական խելացի էր (ԴԴ):

Նախադասության մեջ ստորոգման մշտական զուգակցումը բայի դիմային ձևերի կարգերին պատահական չէ: Վերջիններս ձևաբանական միջոց են ստորոգման ձևավորման համար: Սակայն պետք է ասել, որ դրանք բոլորը հավասար դեր չունեն: Այս հարցում առավել զգալի դերը պատկանում է եղանակի կարգին: «Այն (եղանակի կարգը -Ս.Ա.) արտահայտում է գործողության և նրա սուբյեկտի կապի իրականության գնահատականը խոսողի տեսակետից կամ խոսողի կամքը այդ կապի իրականացման կամ ժխտման վերաբերյալ: Այսպիսով՝ եղանակի կարգը քերականական կարգ է բայի համակարգում, որը որոշում է գործողության եղանակայնությունը (МОДАЛЬНОСТЬ), այսինքն՝ ցույց է տալիս գործողության հարաբերությունը իրականությանը, որ որոշվում է խոսողի կողմից»¹:

Եվ իրոք, եղանակի կարգով արտահայտվող՝ խոսողի վերաբերմունքը գործողության, եղելության նկատմամբ շատ կարևոր է ստորոգման և դրանով իսկ նախադասության ձևավորման ու նրանով արտահայտվող վերաբերմունքի համար: Սակայն այդ ձևաբանական կարգի և ստորոգման շարահյուսական կարգի միջև հավասարության նշան դնել չի կարելի:

Եվ այդ՝ հետևյալ պատճառներով:

Նախ՝ նախադասության մեջ վերաբերմունքն ավելի բարդ է ու ավելի բազմազան ձևերով է արտահայտվում, քան թե բայի եղանակային ձևերին հատուկ վերաբերմունքը: Ստորոգման կամ, ավելի ընդհանուր ձևով ասած, նախադասության մեջ արտահայտվող վերաբերմունքը դրսևորվում է տարբեր ու բազմազան միջոցներով ու ձևերով՝ նախադասության հնչերանգով (որն իր հերթին ունենում է բազմազան երանգներ), եղանակավորող բառերով, այդպիսի դեր կատարող բառակապակցություններով և այլն:

Հմմտ. եկել է եղանակային ձևը հետևյալ օրինակներում.

Նա եկել է: Գո՞ւցե եկել է: Ըստ երևույթին, եկել է: Երևի եկել է: Ենթադրենք՝ եկել է: Նա եկե՞լ է: Նա եկե՞լ է:

Այնուհետև՝ ստորոգման ձևավորման հարցում, բայի եղանակի կարգից բացի, դեր ունեն նաև դեմքի, թվի, ժամանակի կարգերը, որոնք տարբեր կողմերով որոշա-

¹В.В. Виноградов, Русский язык, М., 1947, стр. 581:


կիացնում են տվյալ գործողության կամ հատկանիշի կապը սուբյեկտի հետ, հետևապես և որոշ դեր են կատարում ստորոգման, ուրեմն և նախադասության ձևավորման խնդրում:

Բայի սեռի կարգը ստորոգման ձևավորման համար կարևոր չէ: Այսպիսով՝ երկկազմ նախադասության, ինչպես և անենթակա նախադասության մեջ ստորոգումը ձևավորվում է բայի եղանակային ձևերին հատուկ կարգերի հիմքի վրա:

Պատահում է նաև, որ ստորոգումը քերականական-ձևային դրսևորում չի ունենում, բայց, ըստ էության, նա գոյություն է ունենում: Այդպիսին է անդեմ նախադասությունների ստորոգումը: Ինչպե՞ս է ձևավորվում անդեմ նախադասությունը: Եթե դիմավոր միակազմ նախադասության մեջ հատկանիշն ու կրող առարկան միասնաբար են հանդես գալիս, բայց, այնուամենայնիվ, դիմային վերջավորությունը ձևավորում է ստորոգումը, ապա անդեմ նախադասությունները, ինչպես երևում է անվանումից, գուրկ են նաև քերականական դեմքից, և այդ պատճառով էլ նախադասության՝ որպես ամփոփ միտք արտահայտող լեզվական միավորի ձևավորումը վերևում նրշված քերականական միջոցներով չի կատարվում: Անդեմ նախադասության ձևավորման առանձնահատկությունները քննելուց առաջ անհրաժեշտ է կանգ առնել նախադասության մեկ այլ հիմնական հատկանիշի վրա:

Նախադասության հիմնական հատկանիշներից մեկն էլ, բացի ստորոգումից, հատուկ հնչերանգն է: Եթե ստորոգումը հատկանիշը վերագրում է առարկային, մի բան, որ շատ էական է նախադասության համար, ապա նախադասության հնչերանգը ձևավորում է մտքի ավարտվածությունը: Չէ՞ որ կարող է մի հատկանիշ վերագրվել որևէ առարկայի, բայց դեռ դրանով չավարտվել խոսողի միտքը: Որպեսզի բառերի տվյալ կապակցությունը ամփոփ միտք արտահայտի, այսինքն՝ լինի ինքնուրույն նախադասություն, այն պետք է նաև ավարտված լինի: Դա ցույց տանք պատմողական նախադասության օրինակով:

Աշտոր ուսման առաջավոր է: Մա, անշուշտ, մի ավարտված նախադասություն է, որովհետև և՛ ստորոգում ունի, և՛ պատմողական նախադասությանը հատուկ՝ բարձրացող-իջնող հնչերանգ, որը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով:



Բառերի այդ նույն կապակցությունն արտաբերենք այլ հնչերանգով, ասենք՝ ոչ թե բարձրացող-իջնող, այլ միայն բարձրացող.



Աշտոր ուսման առաջավոր է:

Այստեղ թեև կա ստորոգում, բայց նախադասությունն ավարտված չէ, այն մտքի ինքնուրույն միավոր չէ: Բարձրացող հնչերանգը ցույց է տալիս, որ բառերի այդ կապակցությունը ամփոփ նախադասության վերածվելու համար դեռ պետք է շարու-

նակվի, և բարձրացած հնչերանգը պետք է իջնի ու հանգի դադարի: Շարունակենք այդ կիսատ նախադասությունը.

Աշտուղ ուսման առաջավոր է, որովհետև նա բարեխիղճ է:

Կամ

Աշտուղ ուսման առաջավոր է՝ սկսած առաջին դասարանից:

Եվ այսպես՝ երբ ստորոգմանն ավելանում է նաև նախադասության հատուկ հնչերանգը, դրանով ավարտվում է նախադասության ձևավորումը, այն դառնում է ավարտված: Համեմատենք հետևյալ նախադասությունների հնչերանգը:

Արամը վերադարձավ:

Արամը վերադարձավ, որ գրադվի այդ հարցով:

Թեև երկու նախադասություններում էլ, հայերենի բառական շեշտի օրենքների համաձայն, «վերադարձավ» բառի վերջին վանկը շեշտված է, բայց դրա հետ միասին նախադասության ընդհանուր հնչերանգը առաջին նախադասության մեջ իջնում է **վերադարձավ** բառի վերջում ու հանգում դադարի, իսկ երկրորդ նախադասության մեջ նույն բառի վրա տոնը, ընդհակառակը բարձրանում է: Այս վերջին նախադասության մեջ տոնի իջեցումը, բնականաբար, ընկնում է վերջին բառի վրա: Եթե փորձելու լինենք «հարցով» բառով չվերջացնել նախադասությունը, այլ շարունակել այն, համապատասխանաբար կփոխվի նախադասության այդ հնչերանգը. իջեցումը և դադարը կտեղափոխվեն նոր նախադասության վերջին մասը: Այսպես՝

Արամը վերադարձավ, որ գրադվի այդ հարցով և անպայման լուծի այն:

Հնչերանգն այնքան կարևոր նշանակություն ունի նախադասության համար, որքան բառի համար՝ բառական շեշտը: Վերջինս բառի ամբողջությունը միասնական, միաձույլ դարձնող և պահպանող լեզվական կարևոր միջոց է: Նույնպիսի կարևոր դեր ունի հնչերանգը նախադասության ամբողջականության ձևավորման համար:

Հնչերանգ ասելով՝ պետք է հասկանալ ամբողջ նախադասության արտաբերման ընթացքում արտասանական ելևէջների (այդ թվում նաև տրամաբանական շեշտի) ամբողջությունը, որը մի յուրահատուկ ներդաշնակություն է կազմում:

Այսպիսով՝ հատուկ հնչերանգը նախադասության հիմնական հատկանիշներից է, որ կարևոր է նախադասության ամբողջականությունն ու մտքի ավարտվածությունը ձևավորելու համար:

Հայտնի է, որ յուրաքանչյուր նախադասություն ունի իր տրամաբանական շեշտը: Տրամաբանական շեշտը կարելի է համարել նախադասության հնչերանգի ամենաբարձր տոնը և որպես այդպիսին՝ հնչերանգի կենտրոնական առանցքը, որի շուրջը ծավալվում են մյուս առավել ցածր ելևէջները: Սովորական շարադասություն ունեցող պատմողական նախադասության տրամաբանական շեշտը դրվում է ստորոգյալի վրա:

Պատմողական հնչերանգով կարդանք հետևյալ նախադասությունները: *Աշակերտները հավաքվել են ժողովի: Տիեզերանավը վերադարձավ երկիր:* Սովորական լսողության համար էլ զգալի է, որ այս նախադասություններից յուրաքանչյուրի մեջ ստորոգյալը համեմատաբար ավելի է շեշտված, արտասանվում է ավելի բարձր տոնով (**հավաքվել են, վերադարձավ**), քան որևէ այլ անդամ:

Բայց, իհարկե, տրամաբանական շեշտը կարող է փոփոխվել նախադասության մեջ, և շրջուն շարադասության դեպքում այն կարող է դրվել տարբեր անդամների վրա՝ նայած խոսողի նպատակին: Այսպես՝ *Աշակերտներն են հավաքվել ժողովի (և ոչ թե ուսուցիչները): Աշակերտները ժողովի՝ են հավաքվել (և ոչ թե դասի):* Որոշ դեպքերում նախադասության շարադասությունը կարող է պահպանվել սովորականի պես, բայց տրամաբանական շեշտը կարող է փոխել իր տեղը: Օրինակ՝ վերոհիշյալ նախադասության մեջ կարող է շփոխվել «ժողովի» բառի տեղը, և հենց այդտեղ էլ այն կարող է ստանալ տրամաբանական շեշտ: Այսպես՝ *Աշակերտները հավաքվել են ժողովի՝ (և ոչ թե դասի):* Այս դեպքում «ժողովի» բառը համեմատաբար պակաս շեշտված է, քան թե նույն բառը «*Աշակերտները ժողովի են հավաքվել*» շարադասական տարբերակի մեջ: Այդ պատճառով էլ նման դեպքերում, եթե անհրաժեշտ է հատկապես խիստ շեշտել սովյալ բառը, փոխվում է նրա շարադասությունը, և դրա հետ կապված՝ նաև ամբողջ նախադասության շարադասությունը:

Հրամայական, հարցական և բացականչական նախադասությունների շեշտը և ընդհանրապես հնչերանգը իրենց բնույթով ունեն և՛ նմանություններ պատմողական նախադասության նույն հատկանիշի հետ, և՛ տարբերություններ նրանից: Տարբերություններով հանդերձ՝ յուրաքանչյուր նախադասության հատուկ է անդամների շեշտերի ներդաշնակ համակարգ, ամբողջ նախադասության հնչերանգի ներդաշնակություն:

Անդամ նախադասությունների ձևավորման գործում գլխավոր դերը պատկանում է հնչերանգին: Երկկազմ նախադասություններին հատուկ քերականական ձևավորում՝ ստորոգում, չունենալով՝ անդամ նախադասություններն ունեն նախադասության հատուկ հնչերանգ. վերջինս բառերի կապակցությանը կամ բառին տալիս է ամփոփ, ավարտված լինելու հատկանիշ (մի բան, որ հատուկ է նախադասությանը) և այդպիսով ձևավորում նախադասությունը: *Կանգնեցնել ըստ հասակի, նշանակել ազգանունները: Վերցնել իրերը (Մ.Մանվ.): Երեկո: Դրսում՝ հորդ անձրև (Մ.Մանվ.):*

Անդամ նախադասությունները ստորոգում ունե՞ն, թե՞ ոչ: Ամեն մի անդամ նախադասության արտահայտած միտքը, վերաբերությունը որոշակիորեն հասկացվում է: Բայց ստորոգման արտաքին ձևային կողմը չկա, քերականորեն ձևավորված, որոշակիորեն տարրոշված ստորոգում նրանում չկա: Այնուամենայնիվ, անդամ նախադասությունների մեջ կա այն, ինչին որ ծառայում է ստորոգումը: Եթե կա հետևանքը, արդյունքը, չի կարող չլինել նաև նրա պատճառը:

Համեմատենք հետևյալ նախադասությունները. *Լռել... Չայնների կտրե՛ք (Մ.Մանվ.):* «Լռել» նախադասությունը նույն հաջողությամբ է արտահայտում խոսողի միտքը, թեև քերականորեն արտահայտված ստորոգում չունի, որքան որ ստորոգում ունեցող «Չայնների կտրե՛ք» նախադասությունը, որը, ըստ էության, հանդիսանում է նախորդի յուրահատուկ կրկնությունը և միայն ոճական՝ միտքը շեշտելու

նպատակով է գործածված, առանց որի էլ խոստողի միտքը հասկանալի ձևով արտահայտված է առաջին՝ անդեմ նախադասության մեջ: Այդ նախադասություններում, ինչպես և ամեն մի նախադասության մեջ, կա ստորոգում: Հարց կարող է առաջանալ ստորոգման արտահայտության, նրա ձևավորման վերաբերյալ միայն: Պետք է ընդունել, որ անդեմ նախադասությունները, ամբողջական ամփոփ նախադասության հատուկ հնչերանգ ունենալով, դրանով իսկ տվյալ բառակապակցությանը կամ բառին օժտում են նախադասության հատկանշով, և ստորոգումն արտահայտվում է քերականական գրո միջոցով, այսինքն՝ առանց քերականական վերջավորության կամ այլ միջոցի: Հնչերանգը, ուրեմն, այդպիսի նախադասություններում պայմանավորում է ոչ միայն մտքի ավարտվածություն, այլև անուղղակի կերպով՝ ստորոգում: Ինչպես երևում է, եթե հնչերանգը առհասարակ նախադասության ձևավորման գործում էական դեր ունի, ապա անդեմ նախադասության մեջ նրա դերը բացառիկ է:

Այսպիսով՝ նախադասությունը ստորոգումով և հնչերանգային ավարտվածությամբ ձևավորված լեզվական նվազագույն միավոր է, որով հաղորդվում է թե՛ միտք, թե՛ խոստողի վերաբերմունքը:

Միակզմ և մասնավորապես անդեմ նախադասությունների՝ որպես ինքնուրույն նախադասությունների, ընկալման հարցում անհրաժեշտ է նշել նաև խոսքի և խոսելու պայմանների դերը:

Նախադասության էությունը ճիշտ հասկանալու, նախադասությունը՝ որպես շարահյուսության ուսումնասիրության առարկա, ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է գոնե համառոտակի համեմատել նախադասությունն ու դատողությունը: Այս երկու կարգերը անցյալում երբեմն նույնացվել են մասնագետների կողմից կամ, համեմայն դեպս, որոշակիորեն չեն սահմանազատվել միմյանցից: Նախադասությունն ու դատողությունը ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ:

Այդ ընդհանրություններն ու տարբերությունները ուղիղ համեմատական են գիտության այն բնագավառների ընդհանրություններին ու տարբերություններին, որոնց ուսումնասիրության առարկան են դրանք: Գիտության այդ բնագավառներն են քերականությունն ու տրամաբանությունը:

Բոլորովին պատահական չէ, որ տրամաբանության կարևորագույն կարգերն ունեն իրենց համապատասխանությունները քերականության և ընդհանրապես լեզվաբանության մեջ: Այս տեսակետից կարևոր են հատկապես հետևյալ համապատասխանությունները՝ հասկացություն-բառ, սուբյեկտ-ենթակա, պրեդիկատ-ստորոգյալ, դատողություն-նախադասություն: Այդ ընդհանրության հիմքն այն է, որ տրամաբանությունն ուսումնասիրում է մարդկային մտածողության օրենքները, իսկ մտածողությունը կատարվում, դրսևորվում է լեզվի միջոցով, լեզվական կարգերի միջոցով: Այս զուգահեռ կարգերի ու մասնավորապես նախադասության ու դատողության յուրահատկությունները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ ի տարբերություն տրամաբանության, որն ուսումնասիրում է մտածողության օրենքները, քերականությունն ուսումնասիրում է բառերի քերականական հատկանիշները, բառերի փոփոխությունները, բառերի միջոցով կապակցություններ կազմելը միտք արտահայտելու նպատակով:

Մասնավորելով մեր խոսքը նախադասության ու դատողության հարաբերության և նախադասության յուրահատկությունների վերաբերյալ՝ նշենք, որ նախ՝ դրանք սերտորեն կապված են միմյանց հետ: Լեզվից դուրս, առանց լեզվական թաղանթի, դատողություն գոյություն չունի: Դատողությունն արտահայտվում է հենց նախադասության միջոցով, նախադասության մեջ: Նշանակում է՝ նույն օբյեկտը (բառերի այն կապակցությունը, որ միտք է արտահայտում) իր տարբեր կողմերով կարող է վերաբերել և՛ քերականությանը, և՛ տրամաբանությանը, այլ կերպ՝ բառերի միևնույն կապակցությունը, որ քննվում է տրամաբանության կողմից որպես դատողություն, կարող է քննվել նաև քերականության կողմից որպես նախադասություն: Քերականության համար նախադասության մեջ կարևոր է մտքի ոչ թե հատկապես ընդհանուր տրամաբանության կողմը, այլ ամենից առաջ կարևոր են մտքի արտահայտման լեզվական կողմը, մտքի ձևավորման լեզվական միջոցները: Իհարկե, տրամաբանությունն էլ քննում է դատողության կառուցվածքը: Սակայն դատողության կառուցվածքի քննությունը սահմանափակվում է նրանով, որ տրամաբանությունը որոշում է նրա ընդամենը երկու անդամները, քանի որ դատողությունը՝ որպես տրամաբանական կարգ, երկու անդամից է կազմված՝ անկախ այն բանից, թե նրանում քանի բառ կա: Այդ անդամներն են սուբյեկտը և պրեդիկատը, ըստ որում սրանցից յուրաքանչյուրը կարող է արտահայտվել մեկ կամ մի քանի բառով: Նշենք նաև, որ տրամաբանությունը չի քննում թեկուզ և այդ երկու անդամների կապակցման միջոցները: Մինչդեռ նախադասության կառուցվածքը քննելիս որոշվում են յուրաքանչյուր բառի տեղն ու դերը նախադասության մեջ, այդ բառերի կապակցությունները, վերջիններիս քերականական հատկանիշները:

Բերենք մեկ օրինակ: *Երեք միլիոն աշխատավորներ անհնարին տանջանքներով, իրենց արյունով, մկաններով և ոսկորներով շինեցին տիտանյան Շանգ-Շենգը, հաստախարխիսի հիմքերով և ամեհի վեմերով, խղական Շանգ-Շենգը (Իս.):* Թեև այս դատողությունը կազմված է 19 բառից, այնուամենայնիվ տրամաբանությունը նրա մեջ ճանաչում է երկու անդամ՝ սուբյեկտ, որն է՝ *երեք միլիոն աշխատավորներ*, և պրեդիկատ՝ *անհնարին տանջանքներով, իրենց արյունով, մկաններով և ոսկորներով շինեցին տիտանյան Շանգ-Շենգը, հաստախարխիսի հիմքերով և ամեհի վեմերով, խղական Շանգ-Շենգը*: Ի՞նչ միջոցներով են կապվում դատողության այդ երկու մասերն իրար հետ, ի՞նչ հարաբերություններ կան յուրաքանչյուր մասի բաղադրիչ բառերի միջև. այս հարցերը տրամաբանությանը չեն հետաքրքրում:

Մինչդեռ այս նախադասության կառուցվածքը քննելու դեպքում նրանում մենք տեսնում ենք 17 անդամ: Քերականությունը քննում է նաև այդ անդամների կապակցման քերականական միջոցները: Կառուցվածքային հիշյալ տարբերությունն ստեղծում է ենթակայի ու ստորոգյալի և սուբյեկտի ու պրեդիկատի միջև նաև ծավալի տարբերություն: Բացի այս տարբերությունից՝ ենթական ու ստորոգյալը տարբերվում են սուբյեկտից ու պրեդիկատից նաև իրենց էությանը: Դատողության մեջ սուբյեկտը այն առարկայի, երևույթի հասկացությունն է, որը դարձնում ենք մեր դատողության օբյեկտը: Իսկ դատողության այդպիսի օբյեկտը, թեև կարող է հաճախ համընկնել ենթակային, այնուամենայնիվ, որպես կանոն, չունի քերականական որո-

շակի ձև: Այն կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերով, երբեմն էլ՝ թեք հոլովներով, որոշ դեպքերում՝ նույնիսկ բայի դիմավոր ձևով: Քննվող կարգերի տարբերության տեսակետից առանձնապես հետաքրքրական է այս վերջին ձևն ունեցող սուբյեկտներով դատողության և նախադասության համեմատությունը:

Գ. Բրուտյանը, խոսելով դատողության և նախադասության տարբերության մասին, բերում է հետևյալ օրինակը: «Սրվակը ջարդվեց» նախադասության ենթական բոլոր դեպքերում էլ «սրվակ» բառն է, իսկ ստորոգյալը՝ «ջարդվեց» բառը: Մինչդեռ, կախված տրամաբանական շեշտից՝ փոխվում են «Սրվակը **ջարդվեց**» դատողության սուբյեկտը և պրեդիկատը: «Սրվակը **ջարդվեց**» դատողության սուբյեկտը «սրվակ» հասկացությունն է, պրեդիկատը՝ «ջարդվեց» հասկացությունը: «Սրվակը ջարդվեց» դատողության սուբյեկտը «ջարդվեց» հասկացությունն է, պրեդիկատը՝ «սրվակ» հասկացությունը¹:

Տրամաբանական շեշտը, որ կարևոր դեր է կատարում սուբյեկտի և պրեդիկատի որոշման խնդրում, ունի իմացաբանական հիմք, պայմանավորված է նրանով, թե որ հասկացությունը նախապես կա խոսողի մտածողության մեջ, և որ հասկացությունն է, որ նորություն է հաղորդում խոսողի մտածողության մեջ նախապես եղած այդ առարկայի մասին և վերագրվում նրա հասկացությանը:

Նախադասության՝ որպես լեզվական միավորի էությունը բացահայտող մի այլ արտահայտություն է միևնույն դատողությունը տարբեր լեզուներով և, վերջինների յուրահատկությամբ պայմանավորված, տարբեր կառուցվածքի նախադասություններով արտահայտելու փաստը: Մտածողության օրենքները, որոնք տրամաբանության ուսումնասիրության առարկան են, այդ թվում նաև դատողության վերաբերյալ օրենքները ընդհանուր են, համամարդկային, մինչդեռ յուրաքանչյուր լեզու ունի իր քերականական, այդ թվում և շարահյուսական կառուցվածքը:

Նախադասության և դատողության միջև կա մի շատ էական տարբերություն ևս: Դա այն է, որ, ինչպես հայտնի է, բոլոր նախադասությունները չեն, որ դատողություն են արտահայտում: Դատողությունն արտահայտում է հաստատում կամ ժխտում, ավելի կոնկրետ՝ դատողությունը հաստատում և կամ ժխտում է առարկայի՝ որևէ հատկանիշ ունենալը: Սակայն կան շատ նախադասություններ, որոնք ոչ այդպիսի հաստատում են արտահայտում, ոչ էլ ժխտում, ուրեմն և դատողություններ չեն:

Դատողություն են արտահայտում պատմողական նախադասությունները և հարցական ու բացականչական նախադասությունների մի փոքր մասը: Իսկ հրամայական նախադասությունները, հարցական ու բացականչական նախադասությունների մեծ մասը դատողություն չեն արտահայտում: Մա նշանակում է, որ նախադասությունն ավելի մեծ ընդգրկում ունի, քան դատողությունը. տրամաբանության տերմինով ասած՝ նախադասությունն ավելի լայն հասկացություն է, քան դատողությունը:

Այսպիսով՝ նախադասությունն ու դատողությունը, իրենց ընդհանրություններով հանդերձ, ունեն էական տարբերություններ, դրանք տարբեր կարգեր են՝ իրենց առանձնահատուկ հատկանիշներով:

¹Գ. Ա. Բրուտյան, Չևական տրամաբանության դասընթաց, Երևան, 1967, էջ 209:

ՆԱԽԱՊԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

Նախադասությունն ըստ կազմության լինում է երկու տեսակ՝ պարզ և բարդ: Պարզ նախադասությունը բաղկացած է մտքի մեկ միավորից և, բնականաբար, ունի համապատասխան կառուցվածք. այսինքն՝ նրանում տվյալ առարկային վերագրվում է մեկ հատկանիշ, կա մեկ ստորոգում:

Աշոտը գերազանցիկ է: Ուսման առաջավորները պարզևատրվեցին: Ժողովուրդները պայքարում են խաղաղությունը պահպանելու համար:

Չնայած այս երեք նախադասություններում գործածված բառերի տարբեր քանակին, արտահայտած մտքերի տարբեր չափերի մանրամասներին՝ սրանք բոլորն էլ պարզ նախադասություններ են, քանի որ արտահայտում են մեկական միտք, ունեն մեկական ստորոգում: Նախադասության գնահատության մեջ նրա տրամաբանական կազմի հաշվառումը կարևոր է այնչափով, որչափով այն ունի իր համապատասխան քերականական ձևավորումը, ըստ որում նախադասության կառուցվածքային տեսակը որոշելիս ելնում ենք քերականական կառուցվածքային հատկանշից, որը, բնականաբար, ձևավորում է համապատասխան միտք: Այդ պատճառով էլ նախադասության տեսակն ըստ կազմության որոշելիս պետք է ելնել տվյալ նախադասության կառուցվածքից:

Այսպես՝ «*Ուսման առաջավորները պարզևատրվեցին*» նախադասությունը պարզ է, որովհետև տվյալ կառուցվածքում պարզևատրվելը՝ որպես մեկ հատկանիշ, մեկ ստորոգումով վերագրված է ուսման առաջավորներին: Այլ բան է և նշված նախադասության կառուցվածքի հետ կապ չունի այն իրողությունը, որ այդ նույն նախադասության միտքը կարող էր նշանակել, ասենք, «*Գերազանցիկներն ստացան գովասանագրեր, իսկ հարվածայինները պարզևատրվեցին գրքերով*» և այլն: Թեև որոշ պարագայում այս նախադասությունները կարող են գործածվել որպես միևնույն իրողությունն արտահայտող ճշգրիտ համարժեքներ, սակայն քերականական տեսակետից դրանք համարժեք չեն և ունեն բոլորովին տարբեր կառուցվածքներ: Երկրորդ նախադասությունը բարդ է իր կառուցվածքով: Այս հակադրության մեջ մենք չունենք նույնիսկ քերականական տարբերակներ. այստեղ առկա է միևնույն իրողությունը ընդհանրացված ձևով մեկ նախադասությամբ արտահայտելու (ուսման առաջավորները պարզևատրվեցին) և մանրամասնությամբ ներկայացնելու (գերազանցիկները ստացան գովասանագրեր, իսկ հարվածայինները պարզևատրվեցին գրքերով) փաստ:

Պետք է նկատի ունենալ նաև, որ նախադասության կառուցվածքային տեսակը չի կարելի որոշել՝ նկատի ունենալով նրա կառուցվածքային մի այլ տարբերակը, թեկուզ և դրանք լինեն քերականական համանիշներ: Վերը բերված երրորդ պարզ նախադասությունն ունի կառուցվածքային այլ տարբերակ՝ «*Ժողովուրդները պայքարում են, որպեսզի պահպանեն խաղաղությունը*», որը, թեև նույն միտքն է արտահայտում, ինչ որ նախորդը («*Ժողովուրդները պայքարում են խաղաղությունը պահպանելու համար*»), բայց կառուցվածքով բարդ է: Նման դեպքերում և առհասարակ բոլոր դեպքերում նախադասության կազմությունը որոշելիս, ինչպես ասվեց վերը, պետք է ելնել միայն տվյալ կառուցվածքից:

Բարդ նախադասությունը կազմված է մեկից ավելի մտքի միավորներից, որոնք, սակայն, ինքնուրույն չեն, այլ քերականորեն կապված են իրար հետ ու հանդես են գալիս որպես մեկ ամբողջի բաղադրիչներ: *Աշուղը գերազանցիկ է, իսկ Արամը՝ հարվածային: Երբ պարապմունքները վերջացան, դպրոցականներն սկսեցին աշխատել դաշտում:* Այս նախադասությունները բարդ են, որովհետև դրանցից յուրաքանչյուրում տարբեր հատկանիշներ վերագրված են տարբեր առարկաների, և դրանցից ամեն մեկը կազմված է մտքի մեկից ավելի (երկուական) միավորից:

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պարզ նախադասությունը կառուցվածքային երկու հիմնական տեսակի է բաժանվում՝ **երկկազմ** և **միակազմ**: Երկկազմ նախադասության մեջ գործող կամ եղող առարկան ու նրան վերագրվող հատկանիշը կարող են ունենալ կամ ունեն իրենց քերականական արտահայտությունը: Օրինակ՝ «Աշուղը սովորում է» նախադասությունը երկկազմ է, որովհետև կազմված է իրար հակադրվող երկու մասերից՝ բևեռներից, որոնցից մեկը գործող առարկան է ցույց տալիս (տվյալ դեպքում՝ անձ՝ Աշուղը. քերականորեն՝ ենթակա), մյուսը՝ նրան վերագրվող հատկանիշը՝ վերագրումով հանդերձ (տվյալ դեպքում՝ գործողություն՝ սովորում է. քերականորեն՝ ստորոգյալ):

Ահա երկկազմ նախադասության օրինակներ. «*Հայ ժողովուրդը ստեղծել է հոյակապ դասական լեզու*», «*Հայ ճարտարապետությունը սքանչելիորեն ներդաշնակում է երկրի պեյզաժի հետ*», «*Միջնադարյան գրականությունը հիմնականում քնարական է*», «*Ես ծնվել եմ Հայաստանի պատմական Շիրակի գավառում*», «*Նայելով Աթենքի սքանչելի կոթողներին՝ ես տեսնում էի միայն Անին*» (Իս.):

Երկկազմ նախադասության երկու բևեռների փաստացի արտահայտությունը պարտադիր չէ, այնպես որ նրանցից որևէ մեկի չգործածվելը կամ զեղչումը տվյալ դեպքում չի խանգարում այն երկկազմ համարելուն:

«*Մեքենաբար, անգիտակցորեն մխրճվեց հոսող բազմության մեջ*», «*Սպասեցե՛ք, սրա պատվին բաժակաճառ ասեմ*» (Իս.):

Այս նախադասություններում ենթական թեև արտահայտված չէ, բայց հասկացվում է և կարող էր արտահայտվել, ուստի սրանք երկկազմ նախադասություններ են:

Միակազմ նախադասության մեջ գործող կամ եղող առարկան ու նրան վերագրվող հատկանիշը չունեն ու չեն կարող ունենալ քերականական արտահայտություն. ինչպես՝ *Անձրևում է: Մթնեց: Աշուն: Անձրև: Տերևաթափ. և գեղեցիկ է, և տխուր:*

ԵՐԿԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր բնութագիրը

Երկկազմ կոչվում է այն նախադասությունը, որի մեջ գործող կամ եղող առարկան և նրան վերագրվող հատկանիշն ունեն կամ կարող են ունենալ իրենց քերականական տարբերակված արտահայտությունը՝ հանձինս ենթակայի և ստորոգյալի:

Ենթական և ստորոգյալը կարող են հանդես գալ միայնակ, առանց լրացումների. այդպիսի նախադասությունը կոչվում է պարզ համառոտ նախադասություն:

Արամը ուսանող է: Անահիտը երգում է: Ծառերը կանաչել են: Ծիծեռնակները վերադարձան:

Իսկ այն պարզ նախադասությունը, որի գլխավոր անդամները կամ որևէ գլխավոր անդամն ունի լրացում կամ լրացումներ, կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն. *Արամը/ լավ ուսանող է: Իններորդ դասարանի աշակերտուհի Անահիտը/ երգում է Կոմիտասի «Գարուն ա»-ն: Ծառերը/ վաղուց կանաչել են: Ծիծեռնակները, վերադարձան տաք երկրներից:*

Բերված օրինակներում թեք գծերով ցույց է տրված երկկազմ նախադասության երկու մասերի սահմանը:

Սակայն ոչ միշտ է, որ երկկազմ նախադասության բաղադրիչ երկու մասերը կարելի է նշված ձևով բաժանել իրարից՝ մեկ մասում ունենալով ենթական (կամ ենթակայի խումբը), մյուս մասում՝ ստորոգյալը (կամ ստորոգյալի խումբը): Դրա պատճառն այն է, որ քերականորեն մեկ խմբին պատկանող անդամը հաճախ կարող է գտնվել ոչ թե այն խմբի անդամների շրջանում, որին պատկանում է ինքը, այլ մյուս խմբին պատկանող անդամների շրջապատում: Օրինակ՝ «Մի տարի մեծ դժբախտություն պատահեց» (**Իս.**) նախադասության երկու բաղադրիչ մասերն են՝ «մեծ դժբախտություն» և «մի տարի պատահեց»: Ինչպես երևում է, ժամանակի պարագան (*մի տարի*) գտնվում է ոչ թե ստորոգյալի խմբի շրջանում, որին վերաբերում է, այլ ենթակայի խմբի շրջանում, որի հետ կապված չէ քերականորեն:

Մեկ այլ օրինակ. *Նրանց մետաքսե տերևների վրա մշտամրմունջ շատրվանների ցողերն էին շողշողում (Իս.)*: Այս նախադասության մեջ «նրանց մետաքսե տերևների վրա» կապակցությունը թեև ընկած է ենթակայի խմբի շրջանում, բայց վերաբերում է ստորոգյալի խմբին: Դա ակնհայտորեն երևում է նույն նախադասության հետևյալ շարադասական տարբերակից. *Մշտամրմունջ շատրվանների ցողերը շողշողում էին նրանց մետաքսե տերևների վրա:*

Այս երևույթը չի հակասում համապատասխան նախադասությունների երկկազմ կառուցվածքին, այլ խոսում է այդպիսի կառուցվածքի դրսևորման բազմազանության մասին՝ կապված ոճական, շարադասական և այլ երևույթների հետ:

Երկկազմ նախադասության որևէ եզրը, մասնավորապես ենթակայի եզրը կարող է տվյալ դեպքում արտահայտված չլինել: Դրանից երկկազմ նախադասությունը չի դադարում այդպիսին լինելուց. այն մնում է երկկազմ, բայց զեղչված անդամով կամ որպես թերի երկկազմ նախադասություն: «Հաջորդ գարնանը մեր արագիլը դարձավ-եկավ մեն-մենակ: Բույնը դիպելուց հեպո գնաց, կանգնեց ճահճում» (**Իս.**): Այստեղ կա երկու երկկազմ նախադասություն. միայն թե ոճական նկատառումով երկրորդ նախադասության ենթական (*արագիլը*) արտահայտված չէ նույն նախադասության մեջ, քանի որ հասկացվում է նախորդից: Այդպիսի նախադասությունները էապես տարբեր են միակազմից:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՆՄԵՉԱԿԱՆ ԿԱԶՄԻՉՆԵՐ ԵՎ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Պարզ նախադասության կառուցվածքը քննելիս սովորաբար նկատի են առնվում նրա անդամները. նախադասությունը վերլուծվում է ըստ անդամների: Պետք է նկա-


տի ունենալ, սակայն, որ երկկազմ նախադասության (մանավանդ եթե այն բազմաբառ է) կառուցվածքի մեջ կա որոշ աստիճանականություն, այսինքն՝ նախադասությունը միանգամից չի բաժանվում բառ-անդամների, այլ նախ բաժանվում է նախադասության անդամների որոշ խմբերի՝ կապակցությունների, վերջիններս՝ իրենց ենթախմբերին (եթե այդպիսիք կան), սրանք էլ՝ բաղադրիչ անդամների: Այդ աստիճանականությունը ցույց տանք հետևյալ նախադասության վերլուծումով.

Սպա Գելաձեն նստել էր բրեզենտով ծածկված մեքենայի թափքում:


Այս նախադասությունն ամենից առաջ կազմված է երկու բևեռից կամ երկու մասից՝ ենթակայի խումբ՝ **սպա Գելաձեն**, և ստորոգյալի խումբ՝ **ստեղավորվել էր բրեզենտով ծածկված մեքենայի թափքում**: Ենթակայի խումբը կազմված է ենթակայից՝ **Գելաձեն**, և նրա լրացումից՝ **սպա**: Ստորոգյալի խումբը կազմված է ստորոգյալից՝ **ստեղավորվել էր**, և լրացական բազմանդամ բառակապակցությունից՝ **բրեզենտով ծածկված մեքենայի թափքում**: Այս բառակապակցությունը կազմված է երկու անդամից՝ լրացյալից՝ **մեքենայի թափքում**, և լրացումից՝ **բրեզենտով ծածկված** (այսպիսի բաժանումով նկատի ունենք, որ բրեզենտով ծածկվածը ոչ թե մեքենան է, այլ մեքենայի թափքը): Սրանցից յուրաքանչյուրը բաղկացած է երկուական անդամից՝ լրացումից և լրացյալից. **թափքում**՝ լրացյալ, **մեքենայի**՝ լրացում, **ծածկված**՝ լրացյալ, **բրեզենտով**՝ լրացում:

Այսպիսով՝ նախադասության կազմի բաժանման ամեն մի աստիճանում մենք ստանում ենք նախորդ աստիճանի (բաժանվող միավորի) անմիջական կազմիչները: Տվյալ բաժանման վերջին աստիճանում ստանում ենք նախադասության անդամը:

Ահա հիշյալ նախադասության կառուցվածքի գծապատկերն ըստ աստիճանական կազմիչների.




Այս նախադասության կառուցվածքի գծապատկերը կարելի է տալ նաև հետևյալ կերպ:



Թեք գիծը բաժանում է երկկազմ նախադասության երկու մասերը, ո-

րոնք լրացական հարաբերության մեջ չեն, իսկ սլաքներով ցույց է տրվում, թե որ լրացումը (կամ լրացումների խումբը) որ լրացյալի (կամ լրացյալների խմբի) հետ է կապվում:

Անմիջական կազմիչների այս բաժանումը կարելի է ներկայացնել նաև հետևյալ գծապատկերով.



Այս մեկ սխեմայով, հասկանալի է, չեն ապառվում նախադասությունների անմիջական կազմիչների բաժանման հնարավորությունները, որոնք կարող են շատ բազմազան լինել: Բայց այդ մեկ վերլուծումից ու սխեմայից էլ երևում է նախադասության ըստ անմիջական կազմիչների բաժանման անհրաժեշտությունն ու սկզբունքը:

Վերը բերված օրինակում ամեն մի բառ հանդես է գալիս նախադասության մեկ անդամի դերով: Բայց ոչ միշտ է նախադասության անդամը արտահայտվում մեկ բառով, և նախադասության ըստ անմիջական կազմիչների բաժանումը ոչ միշտ է հանգում մեկական բառի: Այսպես՝ «Մի անգամ մի արագիլ ուղիղ երեք օր դարպաս արեց մեր արագիլին» (Իս.) նախադասության մեջ **մի անգամ, ուղիղ երեք օր** բառակապակցությունները մեկական անդամի դեր են կատարում. պարագաներ են: Հետևյալ նախադասության մեջ ժամանակի պարագան արտահայտված է 5 բառերի կապակցությամբ: *Մեր բազմաբովանդակ դյուցազնավեպը իր տարբերակներով, ինչպես հայտնի է, գրի է առնվել 19-րդ դարի վերջին քստորդից սկսած (Իս.):* **Դարպաս արեց** ստորոգյալը այդ կարգի անդամների շարքում չենք տալիս, որովհետև թեև բաղկացած է երկու առանձին բաղադրիչներից, բայց մեկ բայ է՝ հարադրական բարդություն: Այսպիսով՝ նախադասության անդամը նախադասության կառուցվածքային միավոր է՝ կազմված մեկ բառից կամ մեկից ավելի բառերից, որ շարահյուսական ինքնուրույն պաշտոն է կատարում:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ.

ԵՆԹԱԿԱ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼ

Նախադասության գլխավոր անդամներն են ենթական ու ստորոգյալը: Դրանք մյուս անդամների նկատմամբ գերադաս դիրք ունեն, լրացում չեն լինում ոչ այլ անդամների, ոչ միմյանց:

Օժանդր գայրացավ: Գյուղի գրկված մասը լմբոստացավ: Գանգատը հասավ քաղաք (Իս.):

Ենթակայի և ստորոգյալի քերականական հարաբերությունը յուրահատուկ է: Երբեմն այդ հարաբերությունը համարում են համագոր: Սակայն դա սովորական համագոր հարաբերություն չէ: Համագոր անդամները սովորաբար զուգահեռ կերպով գոյություն են ունենում կողք կողքի՝ իբրև նախադասության կամ բառակապակցության նույն կարգի անդամներ:

Արամը գնեց գիրք, գրիչ, մապիկ:

Արամի, Աշոփի, Անահիտի վարքագիծը օրինակելի է:

Բերված օրինակներում և նման դեպքերում բառերի համադասական հարաբերությունն ստեղծվում է միևնույն լրացյալի նկատմամբ ունեցած միատեսակ հարաբերության շնորհիվ:

Ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը, ստորադասական կամ լրացական չլինելով, միաժամանակ համադասական չէ բառիս հայտնի իմաստով: Դրանք, լինելով նախադասության երկու գլխավոր անդամները, երկուսն էլ գլխավոր են հավասարապես (իրար լրացում չեն), իրար հետ կապված են հավասարական հարաբերությամբ: Բայց դա այնպիսի հավասարական հարաբերություն է, որի հիմքում ընկած է վերագրումը: Ուրեմն խոսքը չի վերաբերում ստորադասական վերագրմանը. դա երկու **քերականորեն հավասարարժեք անդամների փոխադարձ հավասարական-վերագրման հարաբերություն է:** Այսպիսով՝ ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը կարելի է համարել **հավասարական-վերագրման հարաբերություն:**

Ենթակայի և ստորոգյալի փոխհարաբերության այսպիսի գնահատումը, ինչպես կարելի է նկատել, համապատասխանում է ստորոգման էության մեկնաբանմանը: Եվ բնական է, որ այլ կերպ լինել չի էլ կարող: Չէ՞ որ ստորոգումը նախադասության էությունը բնորոշող երևույթ է, և երկկազմ նախադասության մեջ այն հանդես է գալիս ենթակայի ու ստորոգյալի կապակցության մեջ: Սա միաժամանակ նշանակում է՝ նախադասության գլխավոր անդամների՝ ենթակայի ու ստորոգյալի բնորոշումները պետք է տալ հենց ստորոգման շարահյուսական կարգին իրենց ունեցած մասնակցության, այդ կարգի դրսևորման մեջ ունեցած իրենց քերականական դիրքի ու դերի հաշվառումով: Այսինքն՝ քերականական այդ (և ոչ միայն այդ) կարգերը պետք է սահմանել քերականական տեսակետից:

Հայտնի է, որ ենթական սահմանվում է որպես գործող կամ եղող առարկա ցույց տվող անդամ: Մինչդեռ գործող կամ եղող առարկա կարող է ցույց տալ ոչ միայն ենթական, այլև ուրիշ անդամներ: Ըստ որում ենթակային՝ որպես գործող առարկայի անվան, վերագրվող ակտիվ դերը վերաբերում է նրա գործածությունների միայն մի մասին, և դա՝ որպես հատկանիշ, բնորոշ չէ ընդհանրապես ենթակային: Ենթակայի էությունը բնենք մի քանի օրինակների հիման վրա.

1. *Արամը կարդում է:*
2. *Տերևը դեղին է:*
3. *Սա գրիչ է:*
4. *Շենքը կառուցվել է երկրորդ շինվարչության կողմից:*
5. *Նա ունի երեք երեխա:*
6. *Առարկա անվանող բառը կոչվում է գոյական:*

Այս բոլոր նախադասությունների ենթականերից, այսպես ասած, տրամաբանորեն ակտիվ է միայն 1-ինը, որը գործող սուբյեկտ է: Մյուս նախադասությունների ենթակաները հատկանիշը պարզապես կրող են կամ, ավելին, ուրիշի կատարած գործողությունն իրենց վրա կրող առարկա (4-րդ օրինակ): Ենթակայի տրամաբանական սահմանման դեպքում անհասկանալի է մնում, թե ինչու ենթական «շինվարչության կողմից»-ը չէ, այսինքն՝ գործողության իսկական տերը, կատարողը: Այստեղ

(և ոչ միայն այստեղ) ենթակայի հարցը «եղող առարկա» անվանումով չի կարող լուծվել, քանի որ ներգործական կառուցվածքի նախադասության կրող խնդիրը այնպիսի հաջողությամբ կարելի է համարել «եղող առարկա», ինչպիսի հաջողությամբ՝ կրավորական կառուցվածքի ենթական: **Հմնտ. Երկրորդ շինվարչությունը այս տարի կառուցվել է 12 շենք: Երկրորդ շինվարչության կողմից այս տարի կառուցվել է 12 շենք:**

Շարունակենք վերը բերված օրինակների քննությունը: 5-րդ և 6-րդ օրինակների ենթակաները ո՛չ գործողություն կատարող են, ո՛չ եղող առարկա: 5-րդ օրինակում գործողություն կատարելու մասին խոսք լինել չի կարող, իսկ եթե եղող առարկայի տեսակետից մոտենալու լինենք, ապա այդ հատկանիշն ավելի շուտ կարելի է վերագրել «երեք երեխա» -ին, քան թե «նա» ենթակային:

Հապա ո՞րն է այն ընդհանուր ու բնորոշ հատկանիշը, որ ունեն բերված նախադասությունների բոլոր ենթակաները և առհասարակ ենթական՝ որպես նախադասության անդամ: Ենթակայի՝ որպես նախադասության գլխավոր անդամի բնորոշ գիծն այն է, որ, ինչպես երևում է բերված օրինակներից, նրան վերագրվում է որևէ հատկանիշ, ըստ որում վերագրվում է ոչ թե լրացական կամ ստորադասական հարաբերությամբ (ինչպես՝ կարդացող Արամ, դեղին տերև), այլ ստորոգումով կամ հավասարական-վերագրման հարաբերությամբ: Այսպիսով՝ **ենթական նախադասության այն անդամն է, որին ստորոգումով վերագրվում է որևէ հատկանիշ:**

Հատկանիշը տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ լայն առումով. բերված օրինակներում ենթակայի հետ քերականորեն կապված անդամը՝ ստորոգյալը, անկախ իր բառական իմաստային տարբերություններից ու յուրահատկություններից, հատկանիշ է ցույց տալիս. և իրոք, հատկանիշ են Արամի կարդալը, տերևի դեղին լինելը, տվյալ առարկայի՝ գրիչ լինելը, շենքի կառուցվելը, նրա՝ երեխա ունենալը, բանի՝ գոյական կոչվելը:

Ըստ որում ենթակայի ցույց տված առարկան կարող է լինել գործողություն կատարող սուբյեկտ (**Արամը** կարդում է), գործողությունն իր վրա կրող առարկա (**շենքը** կառուցվել է) կամ պարզապես տվյալ հատկանիշն ունեցող առարկա (**տերևը** դեղին է) և այլն: Նախադասության կառուցվածքի մեջ ենթակայի քննարկված դիրքն իր քերականական-ձևային արտահայտությունն է գտնում նրանով, որ այն միշտ և միայն հանդես է գալիս բայ ստորոգյալի հետ, որի հետ էլ կապվում է քերականորեն (դեմքով, թվով): Դա երևում է վերը բերված և առհասարակ բոլոր նախադասություններում. հասկանալի է, որ հատուկ պետք է նկատի ունենալ զեղչման դեպքերը, որոնցում նախադասության գլխավոր անդամները կարող են իրար հետ ձևականորեն հանդես չգալ, չգործածվել. դրանցից մեկն ու մեկը կարող է զեղչվել ոճական նկատառումով, բայց, միևնույնն է, ձևականորեն զեղչված անդամը հասկացվում է, և հենց որոշակիորեն հասկացվելու պատճառով է, որ նրա գործածվելը դառնում է ավելորդ:

Ենթակայի քննության առիթով որոշ չափով անուղղակիորեն անդրադարձանք նաև ստորոգյալին: Ստորոգյալով մի հատկանիշ հավասարական հարաբերությամբ վերագրվում է ենթակային: Այս «հավասարական հարաբերությամբ»-ը կարևոր է նկատի ունենալ, որովհետև ենթակային ոչ հավասարական հարաբերությամբ վերագրվող հատկանիշը ստորոգյալ չէ, այլ լրացում: Հայերենի ստորոգյալն ունի իր

ճևային ոլորտակի հասականիչը բայական դիմայնություն, որով տարբերվում է նախադասության մյուս բոլոր անդամներից (դեմքի զեղչման մասին պետք է նկատի ունենալ այն, ինչ որ ասվեց վերը գլխավոր անդամների զեղչման կապակցությամբ): Այսպիսով՝ ստորոգյալը բայական դիմայնությամբ (դիմավոր բայով) ձևավորված անդամ է, որով հատկանիշը վերագրվում է առարկային: Որովհետև խոսքը վերաբերում է դիմավոր բայով ձևավորված անդամի վերագրմանը, պարզ է, որ դա ոչ թե լրացական, այլ հավասարական վերագրում է:

Քանի որ ստորոգյալն ունի ձևային որոշակի տարբերիչ հատկանիշ, ուստի նպատակահարմար է նախ որոշել ստորոգյալը և հետո՝ ենթական՝ որպես նախադասության մի անդամ, որը որոշակի հարաբերությամբ կապված է ստորոգյալի դեմքի հետ, և որին վերագրվում է ստորոգյալով արտահայտված հատկանիշը:

ԵՆԹԱԿԱՅԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ ենթական առարկա է ցույց տալիս, որին վերագրվում է հատկանիշ, ուստի նրա դերում ամենից առաջ գործածվում են առարկա ցույց տվող բառերը, այսինքն՝ գոյականները և դերանունների մի մասը:

Փոքորկվել էր ծովը: Վիթխարի ալիքները արշավում էին գետի հոսանքին հակառակ, գեղըն ուռչում էր, խփում ավերի գրանիտին (Քակ.): Սա ի՞նչ անկարգություն է: Գուրք պետք է ոտքով գնաք: - Գիտե՞ք ես ով եմ, - ձայնը բարձրացրեց նա, - ես մինիստր Պրոկոպովիչն եմ (Քակ.):

Ենթական սովորաբար դրվում է բուն ուղղականով: Այդպիսիք են վերը բերված բոլոր օրինակները: Ենթական երբեմն դրվում է նաև բացառական հոլովով. այդպիսի ենթական կոչում ենք **մասնական ենթակա**: Մասնական ասելով՝ նկատի ունենք, որ տվյալ բառի ցույց տված առարկան վերցվում է ոչ թե իր ամբողջ ծավալով, այլ մի մասով, մասամբ:

Հմնտ. *Երեկոյի ընթացքում կատարվեցին Կոմիտասի սրեղծագործությունները:*

Երեկոյի ընթացքում կատարվեցին Կոմիտասի սրեղծագործություններից:

Առաջին օրինակից պետք է ենթադրել, թե կատարվեցին Կոմիտասի բոլոր ստեղծագործությունները, իսկ երկրորդից հասկացվում է, որ կատարվեցին Կոմիտասի որոշ ստեղծագործություններ, Կոմիտասի ստեղծագործությունների մի մասը, որ տվյալ իմաստի արտահայտման առավել ճիշտ ձև է:

Բերենք մասնական ենթակայի այլ օրինակներ. *Ապա հաղորդվեցին Ալ. Հարությունյանի, Առնո Բարաջանյանի և Էդ. Միրզոյանի սրեղծագործություններից (լր.): Ամենայն երկյուղածությամբ ու հավատով ասում է, որ այս սրվակի մեջ լցված է այն շոշափելի խավարից, որով աստիված սրտովեց եգիպտացիներին (Իս.): Ստուգումները ցույց տվեցին, որ այդ նույն ծխախոտից կա նաև մյուս խանութներում (լր.): Շնորհակալ եմ, մեր տանն էլ սրանից կծալվի (ՄԳ): Արխիվում պահպանվել են շուրջ 600 նամակներ: Կան նաև հեղինակի գրքերից (լր.): Կատարվում են Մոցարտի, Ռավելի և այլ կոմպոզիտորների սրեղծագործություններից (լր.): Երեկոյին արտասանվեցին Շիրազի բանասրեղծություններից (լր.):*

Ենթական կարող է արտահայտվել նաև մյուս խոսքի մասերով՝ նրանց փոխանվանական կիրառությամբ: Առավել տարածված է այն խոսքի մասերի՝ ենթակայի

դերով հանդես գալը, որոնք կարող են գործաձվել որպես իմաստային- գործառական փոխանուններ: Այդպիսիք են ածականը, թվականը և բայական ձևերից անորոշ, ենթականայական, հարակատար անկախ դերբայները: Ինչպես երևում է, սրանք այնպիսի բառեր են, որոնց համար սովորական է գոյականի հետ որպես որոշիչ գործաձվելը, և երբ որոշյալ- ենթական այլևս չի գործաձվում, ու որոշիչն իր մեջ է ներառում առարկայի իմաստը, դրանով իսկ նա իր վրա է վերցնում ենթականի դերը: **Հմմտ. Լավագույն աշխատողները պարգևատրվեցին: Լավագույնները պարգևատրվեցին:**

Ահա հատկանիշ ցույց տվող բառերի փոխանվանական գործածությամբ արտահայտված ենթակաների օրինակներ.

Լավը միշտ հիշվում է հաճույքով: Առաջադիմականը կգտնի իր ճանապարհը: Երկուսս էլ լուռ էինք (Իս.): Տեսնում է սեղանի վրա դրած երեք աման ապուր. առաջինը՝ հոր ամանը, մեծ է լինում, երկրորդը՝ մոր ամանը՝ միջակ, երրորդը՝ քոթոթի ամանը՝ փոքրիկ (Թում): Ռայաթի հետ խաղալը հեշտ բան չէ (Իս.): Կարդալը զարգացնում է մարդուն: Նրա վերադասույթը հետաձգվեց: Երգողը մոտեցավ մեզ: Ուշադիր կարդացածը լավ է հիշվում:

Շատ դերանուններ, նույնպես գործաձվելով որպես իմաստային-գործառական փոխանուններ, կարող են հանդես գալ ենթականի դերով:

Քոլորը գոհ են իրենց վիճակից: Յուրաքանչյուրը կատարում է իր պարտականությունը: Հրավիրվածներից մի քանիսը բացակայում են:

Մյուս խոսքի մասերը, ինչպես և նշված խոսքի մասերի մյուս կարգի բառերը (ասենք՝ բայերից՝ դիմավոր ձևերը, կախյալ դերբայները, հարակցական դերբայը, շատ դերանուններ) ենթականի դեր կարող են կատարել՝ գործաձվելով որպես անվանողական-գործառական փոխանուններ:

Գիշերվա խաղաղության ու լուռյան մեջ լսվեց Քնարիկի այո-ն (ՍԶ): Արագ-արագ-ը կլրվեց մալոր բարություն է: Ու-ն համադասական շողկապ է: Վայ-ը բազմիմաստ ճայնարկություն է:

Որպես անվանողական-գործառական փոխանունով արտահայտված ենթակա՝ կարող է գործաձվել լեզվական ամեն մի միավոր, արտահայտություն:

Ի՞նչ է նշանակում «վայր է» (ՍԽ): Բ-ն պայթական բաղաձայն է: Եկա-ն զալ բայի անցյալ կատարյալի ձևն է:

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերն ասվեց, որ հայերենի ստորոգյալին հատուկ է բայական դիմայնությունը, այսինքն՝ բայական դեմքը: **Երեխաները երգեցին: Խոմբը պարում է: Նա լավ երգող է: Մասիսը չյունապար է: Բերքն առաք է: Նրանք քսանվեցն էին: Մեր գյուղն այն է:**

Ինչպես երևում է, ենթականին վերագրված հատկանիշներն արտահայտված են տարբեր խոսքի մասերով՝ բայով, գոյականով, ածականով, թվականով, դերանունով: Չնայած վերագրվող հատկանիշի արտահայտության միջոցների բազմազանությանը՝ բոլոր ստորոգյալների մեջ առկա է բայական բաղադրիչը, ուրեմն և բայականությունը: Բայց նրանց մի մասն ամբողջությամբ է բայական, իսկ մյուս մասը՝ մասնակիորեն. բայով արտահայտված է միայն հատկանիշը առարկային վերագրող բաղադրիչը՝ հանգույցը: Ըստ այդմ՝ ստորոգյալները պայմանականորեն համարվում են **բայական և անվանական:**

Բայական կոչվում է այն ստորոգյալը, որն ամբողջությամբ կազմված է բայից: Անվանական (ոչ բայական) ստորոգյալն այն ստորոգյալն է, որի մեջ վերագրվող հատկանիշն արտահայտված է ոչ բայով, այլ ուրիշ խոսքի մասերով՝ մեծ մասամբ անուններով:

Վերը բերված օրինակներում բայական ստորոգյալ են՝ **երգեցին, պարում է, երգող է:** Անվանական ստորոգյալ են՝ **ձյունապատ է, առատ է, քսանվեցն էին, այն է:**

Բայական ստորոգյալները կամ խոնարհված բայեր են՝ բայի դիմավոր ձևեր, ինչպես՝ **գրեց, գրում է, գրել է, գրելու է, գրելիս է լինում** և այլն, կամ կազմվում են անկախ դերբայից ու հանգույցից: *Դա կարդալ չէ, որ կարդում ես: Չեմ տեսել այն Պենյանին, սակայն լսել եմ, և լսելը հաճախ փեսանել է, երբ մարդը լսել գիտե (Վ. Փափ.): Իսկ պատմաբանը հուսախաբված չէր (ՀՔ): Նա հեշտ հիասքափվող ու հուսահափվող չէ:*

Անվանական բաղադրիչ ունեցող հարադրական բայով արտահայտված ստորոգյալը բայական է համարվում, որովհետև այդպիսի ամբողջ հարադրությունը մեկ բայ է, և նրա անվանական բաղադրիչը ինքնուրույն խոսքիմասային կամ բառական արժեք չունի: *Նրանք շատ առաջ ընկան: Մենք նրանց սիրտ փվեցինք: Երեխաներն անմիջապես ոտքի կանգնեցին: Վերջապես նա գլխի ընկավ:*

Բայական ստորոգյալները հաճախ կազմվում են անորոշ դերբայով և եղանակիչի արժեք ունեցող բայական այնպիսի դիմավոր ձևերով, ինչպիսիք են՝ **կարող է, ուզում է, սկսում է, ձգտում է** և այլն: *Ամպել է. հանկարծ կարող է անչրևել: Նա ուզում է արդասավել: Նա դարձյալ սկսում է խոսել նույն հարցի մասին:*

Անվանական ստորոգյալը, ինչպես տեսանք, բաղկացած է երկու մասից՝ անվանական բաղադրիչից, որ կոչվում է **ստորոգելի**, և բայական բաղադրիչից, որ կոչվում է **հանգույց**:

Ստորոգելին կարող է արտահայտվել՝

1. գոյականով. **ա)** մեծ մասամբ բուն ուղղականով. *Սա իրենց փառքն էր (Բս.): Միրոն հերոսներ էին նրանք (Բս.): Ուժը նախարարներս ենք (ԳԳ): Մեր արեգակն է մայրս (ՀԸ):*

բ) թեք հոլովներով. *Վաղն արվեստակցիդ մոտ ընթրիքի ենք (Բս.): Օհաննեսի լեզուն, ոճը, պայծառությունն այս չքնաղ երկրի անհուն, դարավոր բանահյուսությունից է (Բս.): Նա ամբողջ ընտանիքով Դսեղում էր (Բս.): Իմ սիրտը լեռներում է: Մարտիրոս Սարյանի արվեստը բովանդակ աշխարհիկն է (Բս.):*

2. դերանունով. *Ուժը մենք ենք (ԳԳ): Այսպես էին բոլոր ոտանավորները (Բս.): Առանց քեզ ի՞նչ է անմահությունը (Բս.): Վերջնական հաղթությունը մերն է (Բս.):*

3. Ածականով. *Դու վերջինն ես (ՍՏ): Ամեն ինչ անորոշ է (ԳԳ): Արդյունքները գոհացուցիչ են: Նա շատ բարեխիղճ է: Որոշումը վերջնական է: Դու շատ վախկոտ ես: Եղանակը փաթ է:*

4. թվականով. *Սրտերով մեկ էին (ՍՏ): Իններորդ դասարանի աշակերտների քանակը քսան է: Ըստ հերթական համարի՝ նա հինգերորդն է:*

5. սակավաթիվ մակբայներով. *Մեքենայի ընթացքը շատ արագ էր: Արդեն ուշ է այդ մասին մտածելը: Մեր լեռներում տարվա ամենալավ ժամանակը հիմա է:*

6. կապական կապակցություններով. *Անկասկած, երազանքի մեջ էին քասկերը (Բս.): Այն ժամանակ անտառների մեջ կորած այն գյուղը..., մոլորած պախրայի պես էր (Բակ.): Հեքիաթի նման է գեղեցիկ Լոռին (Բս.): Փարիզը մի տոն է, որը միշտ քեզ հեպ է (Է. Հեմ.): Խոսքը անցյալ տարվա կերուխումի մասին է (Բակ.):*

Բերված անվանական ստորոգյալների անվանական բաղադրիչի հետ հանդես է

գալիս **եմ** հանգույցը (իր քերականական տարբեր ձևերով), որով հատկանիշը վերագրվում է ենթակային: Այդ դերի համար **եմ**-ը ամենատարածված ու գլխավոր միջոցն է:

Կան, սակայն, մի քանի վերացական բայեր, որոնք հաճախ հանդես են գալիս հանգույցի դերով՝ դրսևորելով որոշ յուրահատկություն իմաստային ու ձևային տեսակետից: Այդպիսիք են՝ **լինել, դառնալ, հանդիսանալ, թվալ** և այլն: Եթե **եմ**-ը՝ որպես հանգույց, ունի սահմանափակ քերականական ձևեր, ապա նշված բայերն ունեն բազմազան ձևեր, որոնք հարստացնում են նրանց քերականական բովանդակությունը եղանակային, ժամանակային, դիմային տեսակետից: **Հմնտ. դարձալ, դարձել է, դարձել էր, դառնում է, դառնում էր, դառնալու է, կդառնա, պիտի դառնա** և այլն:

Այս հատկանիշը, միանալով նրանց բառական իմաստին, ավելի է նպաստում նյութական իմաստի պահպանմանը նրանցում, ինչի հետևանքով վերացականությունն այդ բայերի մեջ ավելի պակաս է. այդ պատճառով էլ դրանք՝ որպես հանգույց, ունեն համեմատաբար սահմանափակ, բայց և յուրահատուկ կիրառություններ: Եթե **եմ**-ը միայն վերագրման դեր է կատարում, ապա նշված մյուս բայերը դրա հետ միասին արտահայտում են իմաստային այլևայլ երանգներ՝ վերածման ու փոփոխության (դառնալ), թվացողության ու անհաստատության (թվալ) և այլն:

Օսեփը դարձալ գիշերապահ (Բակ.): Դուք ինձ համար դարձաք օտար (ՍԽ): Դու այսօր ինձ պիտուր ես թվում:

ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Ենթակայից ու ստորոգյալից բացի՝ նախադասության մյուս բոլոր անդամները երկրորդական անդամներ են: Դրանք այլ կերպ կոչվում են լրացումներ, լրացման լրացումներ: Առաջինները լրացնում են գլխավոր անդամներից, երկրորդները՝ լրացումներից:

Քարակուռ բարձունքի վրա կանգնել էր կրակուր երիտասարդը (Իս.) նախադասության գլխավոր անդամներն են **երիտասարդը** և **կանգնել էր**, մյուս բոլորը երկրորդական անդամներ են: Գլխավոր անդամների անմիջական լրացումներն են՝ **կրակուռ** (լրացնում է ենթակային), **բարձունքի վրա** (լրացնում է ստորոգյալին). **քարակուռ**-ը լրացման (**բարձունքի վրա**) լրացում է:

Երկրորդական անդամների այս տարբերակումը (լրացում և լրացման լրացում) ոչ միշտ է լինում անհրաժեշտ, և սովորաբար դրանք քննվում են իբրև իրենց լրացյալի (անկախ այն բանից՝ լրացյալը գլխավո՞ր, թե՞ երկրորդական անդամ է) լրացում. այլ կերպ՝ երկրորդական անդամները քննվում են լրացման և լրացյալի կապակցության մեջ: Ամեն մի տվյալ նախադասության մեջ կարող է անհրաժեշտ լինել որոշել, թե տվյալ երկրորդական անդամը նախադասության որ անդամին է լրացնում, ասենք՝ ենթակայի՞ն, խնդրի՞ն, պարագայի՞ն: Բայց ընդհանրապես երկրորդական անդամների դասակարգման ու տեսակների որոշման համար կարևոր չէ, թե նա հատկապես որ անդամին է լրացնում: **Հինգերորդ դասարանը ամենատաջադեմն է դպրոցում:** Դասդեկը շատ է սիրում **հինգերորդ դասարանը:** Նա դասավանդում է **հինգերորդ դասարանում:** Թեև **հինգերորդ** բառը այս տարբեր օրինակներում լրացնում է տարբեր անդամների

(ենթակա, խնդիր, պարագա), բայց բոլոր դեպքերում նա որոշիչ է, որովհետև դրված է գոյականով արտահայտված անդամի վրա և ցույց է տալիս համապատասխան առարկայի՝ դասարանի հատկանիշը՝ անկախ նրանից, թե **դասարանը** ինչ հարաբերության մեջ է վերցված սովորական դեպքում:

Երկրորդական անդամների ընդհանուր դասակարգման համար կարևոր է նրանց լրացյալի խոսքիմասային բնույթը. լրացնում են առարկա՞ ցույց տվող խոսքի մասերով (գոյական, որոշ դերանուններ), թե՞ բայով արտահայտված լրացյալների: Ըստ այդմ՝ երկրորդական անդամները կամ լրացումները լինում են **գոյականական անդամի լրացումներ** և **բայական անդամի լրացումներ**: Մա նշանակում է , որ այլ խոսքի մասերի՝ լրացում առնելը սովորական հարցում կարևոր չէ. դրանք նախ՝ սակավ դեպքերում են լրացում առնում, և երկրորդ՝ դրանց լրացումը, որպես կանոն, իր լրացյալի (ածականով, թվականով, մակբայով արտահայտված) հետ միասին է հանդես գալիս որպես շարահյուսական մեկ անդամ: **Շար դժվար լեզու է բասկերենը (Բս): Չեխովն իր համեմատաբար կարճ գրական կյանքի ընթացքում բախտյան շար է գրել (Իս):** Այս նախադասություններում **շատ**-ը դրված է **դժվար**-ի, **համեմատաբար**-ը՝ **կարճ**-ի, **բավական**-ը՝ **շատ**-ի վրա, սակայն **դժվար**, **համեմատաբար**, **շատ** բառերը այդ նախադասություններում ինքնուրույն պաշտոն չեն վարում, այլ նշված մյուս բառերի հետ ձևավորում են որոշիչ (**շատ դժվար լեզու**, **համեմատաբար կարճ գրական կյանք**) կամ պարագա (**բավական շատ է գրել**):

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԳԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Այս լրացումները, ինչպես երևում է նրանց անունից, լրացնում են այնպիսի անդամների, որոնք արտահայտված են գոյականով, ինչպես և գոյականական կիրառություն ունեցող այլ բառերով: Այս վերջին բառերի շարքում ամենից առաջ պետք է հասկանալ առարկա ցույց տվող դերանունները (**սա, դա, ես, դու** և այլն) և այնուհետև՝ այլ բառերի (ածականի, թվականի և այլն) փոխանվանական կիրառությունները: Այս լրացումները կարելի էր կարճ անվանել «գոյականի լրացումներ», որպիսի անվանումը, սակայն, որոշ անհարմարություն ունի նախ՝ այն պատճառով, որ գոյականը խոսքի մաս է՝ ձևաբանական կարգ, և գոյականի լրացում ասելով կհասկացվի խոսքի մասի լրացում, մինչդեռ նախադասության երկրորդական անդամ լրացնում է նախադասության մի ուրիշ անդամի՝ լրացյալի, որը կարող է արտահայտված լինել գոյականով կամ այլ խոսքի մասով:

Մյուս անհարմարությունն այն է, որ, ինչպես ասվեց վերը, քննարկվող երկրորդական անդամները լրացնում են ոչ միայն գոյականին, այլև առարկա ցույց տվող և շարք դերանունների, ինչպես և գոյականաբար գործածվող այլ բառերի: Այս վերջի երկու կարգի բառերը գոյական չեն, բայց գոյականական գործածություն ունեց բառեր են կամ բառերի գոյականական գործածություններ: Այդ բոլոր բառերով և արտահայտված անդամները կարելի է համարել **գոյականական անդամ**, որ նշանակում է՝ գոյականով կամ գոյականական կիրառություն ունեցող բառերով արտահայտված անդամ:

Գոյականական անդամի լրացումներն են՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտ

ՈՐՈՇԻՉ

Որոշիչը լրացնում է գոյականական անդամին և արտահայտում է վերջինիս ցույց տված առարկայի այս կամ այն հատկանիշը:

Որոշիչը կարող է արտահայտվել՝

Ա. ածականով. *Է՛յ կանանց ախպեր, Է՛յ ճանանց ախպեր, Արի՛, քեզ հետ քեր Արևի շոդեր, Բեր անուշահոտ Ծիլ, ծաղիկ ու խոտ. Կարկաչուն վրտակ, Երկինք կապույտակ, Խափուրիկ հավքեր, Չորնգան երգեր, Գառների մայուն, Խաղ, ուրախություն (Թում):* Բայց փխուր նաիրյան քամին իմ սրտում քախիծ է բարդել (ԵՉ):

Բ. քվականով. *Թումանյանի երկերը հրատարակվեցին վեց հատորով. առաջին հատորում գետեղված են բանաստեղծությունները, երկրորդ հատորում՝ պոեմները, երրորդ հատորում՝ գեղարվեստական արձակը: Հին աշխարհը ամեն օր հազար մարդ է մըտնում նոր, Հազար տարվա փորձն ու գործ Ըսկսվում է ամեն օր (Թում):*

Գ. դերանունով. *Այս լեռները, այս անտառները ինձ շատ հարազատ են: Այսպիսի բնություն ուրիշ տեղ ես չեմ տեսել: Այդ գործը նա ձեռնարկեց մի քանի ընկերների հետ միասին: Յուրաքանչյուր մարդ պետք է լավ գիտակցի իր մարդկային պարտականությունները:*

Դ. ենթակայական, հարակատար դերբայներով, անորոշ դերբայի տրական հոլովով. *Հոսող ջուրը մաքուր է լինում: Վերադարձող խաչակիրներից մեկը իր հետ բերում է անթափանցելի մի սրվակ (Իս): Հոգնած կենդանիները ոտները փոխնեփոխ բարձրացնում էին: Այտի վրա պարզ երևում էր ցեխի շորացած շիթը (Բակ):* Ընամփորդները խմելու ջուր խընդրեցին:

Ծանոթություն: Խմելու ջուր, աշխատելու հարմարություն և նման կապակցությունների բայածեր երբեմն շփոթում են ապառնի դերբայի հետ, որ ճիշտ չէ. ապառնի դերբայը հանդես է գալիս միայն բայի դիմավոր ձևերի կազմության մեջ:

Ե. գոյականով (հատկապես ուղղական, ինչպես և այլ հոլովներով). *Ինչպես՝ Խանութի առաջ նստած՝ խանութպան Համոն մտածում էր (ԵՉ):*

Թրջված մի ճամփորդ էմ ես, ամպի պես թափառական,

Հայրենի իմ հողից մի բուռ՝ իմ տրնակ մորս էմ կարտտել.

Անցել էմ ես ծովերն օտար, ծարավ էմ նորից մնացել,

Մանկությունս ինձ միշտ ետ բերող իմ վրակ մորս էմ կարտտել,

Ա՛խ, մեր հին կոունկի նման դեպի տուն թևերս էմ բացել.

Հայրենի իմ երկրի բաց փուռ, իմ դրնակ մորս էմ կարտտել...

Ձեր թողած ողջ այս լույսերը, աստղերն ու արևները,

Ես սրտիս յոթը երկնքով իմ ճրագ մորս էմ կարտտել (ՀՇ):

Մեզ օգնեցին այդ փարիքով ու խղճով մարդու խորհուրդները: Նա շատ ճաշակով տնտեսուհի է: Մեզ մոտ ժամավճարով աշխատանք կա:

Գեղարվեստական խոսքում և մասնավորապես չափածոյում հաճախ են հանդիպում այնպիսի գոյական որոշիչներ, որոնք համարժեք են և փաստորեն փոխարինում են նույն գոյականից կազմված հարաբերական ածականին: *Կայարանի մոտից մեզ քչեցին դաշտը: Երկաթ բառեր տվին (ԵՉ):* Իսկ երբ մայրս մագերին իր ջյուն Դնում է ոսկեմուգ հինա - Թվում է՝ մագերի միջով Ես կարող եմ Թեհրան գնալ (ԵՉ): Դիմացը բացվեց ողջ Տարունո դաշտավայրը՝ եզերված լեռնապարերով և համակված լիալուսնի քախմալի ար-

ծաք շողերով (ԳԳ): Ներս մտավ որսորդապետը՝ արևատ ու ցորնագույն դեմքով, **երկաթ մկաններով (ԳԳ):**

Չ. մակբայով. *Նրանց հաճախակի հանդիպումները այժմ էլ շարունակվում են: Հագիվ էր լսվում նրանց ցածրաձայն խոսակցությունը: Մեքենայի այդպիսի արագ ընթացքը զարմացրել էր բոլորին:*

Է. կապական կապակցություններով. *Նա վաքսունհին մոպ, ջլապինդ տղամարդ էր (Ար.): Սաարի վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը կկայանա հոկտեմբերի կեսերին (լր.): Օրվա նիստն ամբողջովին նվիրված էր օրակարգի վերաբերյալ փիճաբանություններին (լր.): Ներկայումս հանրապետությունում աշխատում են ավելի քան 4 հազար բժիշկներ և միջին բժշկական անձնակազմի ավելի քան 10 հազար աշխատողներ (լր.):*

Ը. բառակապակցություններով. *Քնարիկի մայրը հիստոնն անց կին էր՝ տակավին քարոն դեմքով ու սև մազերով, բայց հանդարտ նայվածքով ու շարժումներով (ՍԶ): Դուք ո՞ր երկրից կգաք, հովե՛ր, Այսքան քնքուշ ու մեղմ այսքան (ՀԸ):*

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Հատկացուցիչը սեռական տրականով արտահայտված լրացում է, որ դրվում է գոյականական անդամի վրա և ցույց է տալիս պատկանելություն, վերաբերում, սերում: **Արամի գրիչը, գնացքների չվացուցակը, Թումանյանի բանաստեղծությունները:** Առաջին օրինակում հատկացուցիչը պատկանելություն է արտահայտում, երկրորդում՝ վերաբերում, երրորդում՝ սերում:

Հատկացուցիչը, ինչպես երևում է, ունի իր հոլովական որոշակի արտահայտությունը. այնպես որ հատկացում արտահայտող ոչ ամեն լրացում է, որ հատկացուցիչ է. ավելացնենք նաև՝ սեռական տրականով դրված ոչ ամեն բառ է, որ հատկացուցիչ է: Այսպես՝ **դպրոցին պատկանող** գրքեր, **հանրային** սեփականություն, **ճամփորդական** պայուսակ օրինակներում ընդգծված լրացումներից առաջին երկուսը պատկանելություն են արտահայտում, իսկ վերջինը՝ հատկացում: Բայց դրանցից և ոչ մեկը հատկացուցիչ չէ, որովհետև նշված իմաստները նրանք արտահայտում են ոչ հատկացուցչային ձևով, այսինքն՝ ոչ սեռական տրականով, և դա, անշուշտ, իր հետ բերում է իմաստային յուրահատկություն: Սեռական տրականով արտահայտված լրացումը կարող է լինել կողմնակի ենթակա, որոշիչ և այլն. ինչպես՝ **Արամի երգերը անսպասելի էր: Բրոնզի դարի շատ գաղտնիքներ դեռևս բացահայտված չեն:**

Լինելով գոյականական անդամի լրացում՝ հատկացուցիչը ևս իր բնույթով գոյականական է: Այն արտահայտվում է՝

Ա. գոյականով. *Քամին խաղացնում է մառախուղի թանձր քուլաները (Բակ.): Արևը չորացնում է ժայռերի խոնավությունը: Գեղի ափին կանաչը ցորեն են լվանում: Վայրի աղավանհների երանք փռոցով անյունդից դուրս է թռչում և գլորվող քարի աղմուկից վախեցած՝ ճախրում արևի տակ (Բակ.):*

Բ. առարկա ցույց տվող դերանունով. *-Մակայն չեք մայրերն անհամեմատ ավելի բախտավոր են, որ իրենց որդիների գերեզմաններն ունեն. իսկ մեր մայրերը այդ սփոփանքն էլ չունեն. կոտորվեցին մեր երիտասարդները, բոլորը գիշատիչներին ու հողմերին կեր գնացին, - կտրեցի նրա խոսքը (Իս.):*

Գ. գոյականաբար գործածված բառով.

*Ո՛հ, իմ դատրիկ, խաղաղ մնա,
Կեղծավորի մի աստղ էր,
Որ ձևացավ ամբողջ կյանքում
Առաքինի, ազգասեր (Թում):*

Ես տաղավարում կանգնել էի Մ.Սարյանի նկարների մոտ, ուզում էի լսել այցելողների կարծիքները (Բս.):

ԲԱՅԱՀԱՅՏԻՉ

Բացահայտիչը գոյականական անդամի լրացում է, որով բացահայտվում, պարզաբանվում է լրացյալի ինչ լինելը. դա սովորաբար կատարվում է լրացյալին համապատասխան քերականական միջոցով:

Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը, օրեցօր ծաղկում է: Նրանից՝ որպես ուսուցչից, բոլորը գոհ են:

Այս օրինակներում ընդգծված կապակցությունները բացահայտիչ են: Նրանք բացահայտում, պարզաբանում են բացահայտյալի իմաստը: Բացահայտիչը իր դերով ավելի մոտ է որոշչին, բայց և որոշչից տարբերվում է իր էությամբ: Եթե որոշիչը գոյականական անդամի հիմնականում ածականական բնույթի լրացում է, ցույց է տալիս նրա որևէ հատկանիշը, և նույնիսկ գոյականով արտահայտված որոշիչը, կարելի է ասել, ածականին բնորոշ դեր է ստանում, ապա բացահայտիչը իր բնույթով, իսկ հաճախ էլ իր նույնիսկ մասնավոր քերականական հատկանիշներով համապատասխանում է բացահայտյալին: Դա երևում է վերը բերված օրինակներից, որոնցից առաջինում այդ համապատասխանությունը լիակատար է, իսկ երկրորդում թեև բացահայտիչն ու բացահայտյալը տարբեր խոսքի մասերի պատկանող բառերով են արտահայտված, այնուամենայնիվ դրանք հարաբերակից բառեր են, քանի որ թե՛ այդ դերանունը և թե՛ գոյականը առարկայական իմաստ ունեն և մասնավորապես անձ են ցույց տալիս:

Բացահայտիչը լինում է երեք տեսակ՝ բուն բացահայտիչ, մասնական բացահայտիչ, մասնավորող պարագայական բացահայտիչ:

Բուն բացահայտիչը սովորաբար լինում է ետադաս և քերականորեն համաձայնում է բացահայտյալին: *Վանաձորը՝ նրա ծննդավայրը, շրջապատված է անտառապատ սարերով: Մեր հերոսների նախամայրը՝ Ծովյան Խաթունը կամ Ծովինարը, ջրային տարերքի՝ ծովի անձնավորումն է (Բս.):* Բուն բացահայտչի շարադասական այսպիսի հատկանիշ ունենալն է պատճառը, որ բացահայտչի ու բացահայտյալի տեղերը փոխելիս փոխվում է դրանց հարաբերությունը. բացահայտիչը դառնում է բացահայտյալ, և հակառակը: Բուն բացահայտչի պարզաբանող, բացահայտող դերը պայմանավորված է ոչ թե հատկապես համապատասխան բառի բառական իմաստով լեզվի մեջ, այլ շարահյուսական տվյալ կապակցությամբ:

Բացահայտիչը իր կազմում կարող է ունենալ լրացումներ՝ արտահայտված տարբեր խոսքի մասերով: *Ժողովրդական լեզվի անսպառ զանձարանից նա (Պուշկինը) իր լեզվի ատաղձը մաքրեց, մշակեց, ներդաշնակեց, բյուրեղացրեց և ստեղծեց իր անքերի*

արվեստի գործիքը՝ **հակիրճ, պարզ, պարկերավոր, կենդանի, երաժշտական մի հռչակապլեզու, որով սնվեցին, կրթվեցին հետագա գրական հսկաները՝ Գոգոլ, Լերմոնտով, Տոլստոյ և այլն (Բս): Փառք Միրայել Նալբանդյանին՝ մեծ հայրենասերին, անմահ բանաստեղծ հրապարակախոսին, ազատության անչնվեր զինվորին (Բս):**

Երբեմն բացահայտյալը կրկնվում է բացահայտչի մեջ, և այդ դեպքում լրացյալի բացահայտումը ըստ էության կատարվում է մասնավորող, բնորոշող լրացումներով: **Շորան ինքը Վրաստանն է՝ հին, նոր և ապագա Վրաստանը, հավերժական Վրաստանը (Բս): Նա հեռացավ իրենից առաջ կիրառվող գրական մեռած լեզվից՝ կեղծ կլասիկ, սերևեր, չինձու, փրուն լեզվից (Բս):** Բուսի այդպիսի կրկնությունից խուսափելու համար բուն բազահայտյալը երբեմն չի գործածվում, եթե լրացում ունի. լրացման հետ միասին ենթադրվում է նաև բացահայտյալը: **Այս ինստիտուտի պատմությունը ընդհանուր շատ բան ունի և համարյաբանի, և իրեն հասակակից մյուս երկու՝ բժշկական ու գյուղատնտեսական ինստիտուտների հետ (լր):** Եթե բացահայտյալը վերականգնենք, հիշյալ կառուցվածքը կստանա հետևյալ տեսքը՝ **...իրեն հասակակից մյուս երկու ինստիտուտների՝ բժշկական ու գյուղատնտեսական ինստիտուտների հետ:** Նշված կրկնությունից խուսափելու այլ միջոց ևս կա. կարող է չգործածվել բացահայտիչը, և վերջինիս փոխարեն նրա լրացումը՝ գործածվել գոյականաբար. ասենք՝ **...մյուս երկու ինստիտուտների՝ բժշկականի ու գյուղատնտեսականի հետ:**

Բուն բացահայտիչը բացահայտյալին սովորաբար միանում է առանց բառական միջոցի, այլ դադարով, որ գրության մեջ արտահայտվում է բութով: Այդպիսիք են վերը բերված բոլոր օրինակները: Երբեմն, սակայն, բուն բացահայտիչը բացահայտյալի հետ կապվում է կապակցվող բառական միջոցներով՝ **այն է, այսինքն, որ է:** **Բայց հանգուցյալ տեր Օհանեսը... կարողացավ համոզել նրան, որ յուր մոր ցանկության համեմատ շարունակել յուր հոր՝ Ղազարի արհեստը, այն է՝ դարբնություն (Մուր):** **Վերջին օրերս նրան զբաղեցնում էր միայն մի միտք՝ այն, որ չիանդիսի «այն աղջկան», այսինքն՝ Լիզային (ՍԶ):** **Իսկ այդ դեպքը պատահեց հենց ջրօրհների երեկոյան, այսինքն՝ ճրագալույցին (ՍԶ):**

Երբեմն բացահայտիչը հեռանում է բացահայտյալից, և մի այլ անդամ, մանավանդ ստորագյալը, կարող է ընկնել բացահայտյալի ու բացահայտչի կապակցության միջև: **Հին հասկացությամբ կայծակը և թուրը հոմանիշներ են, միևնույն նյութից են կուսած՝ երկաթից (Բս):** **Դեհ, ես էլ էն եմ ուզում ասել, որ նրանց գործի հետ ծանոթանալով տեսա, որ մենք ոչինչ ենք՝ լումպեններս (Բս):** Բուն բացահայտչի այսպիսի հեռացումը բացահայտյալից ավելի հատուկ է ժողովրդախոսակցական ոճին:

Լրացյալի իմաստը բացահայտիչով պարզաբանվում ու բացահայտվում է տարբեր եղանակներով, որոնք են՝

1. ընդհանուր հասկացության մասնավորում, որ կատարվում է՝

ա) բացահայտյալի ընդհանուր իմաստը մասնավորեցնող բազմակի բացահայտիչներով. **Ամուսնացել էր, ուներ երկու զավակ՝ մի տղա և մի աղջիկ (Բս):** **[Պուշկինը] մոտեցավ ոռո ժողովրդի փարերքին՝ գյուղացիներին, աշխատավորներին, նոր պատկերներով. ճշմարտությամբ վերարտադրեց նրանց ներաշխարհը փոթորկող ապրումները՝ նրանց փառասանքները, հոգսերը, նրանց զայրույթը, իղջերը, նրանց մաքառումները (Բս):**

բ) հասարակ անունով կամ դերանունով արտահայտված բացահայտյալը մեկ հատուկ անունով մասնավորելով. **Նրանց սենյակը շատ բան էր ասում իր փիրոջ՝ քեռի**

Գավոյի նկարագրի մասին (Քակ.): Ժողովուրդը իր հին ասարծուն՝ ծովային ամպրոպային Վահագնին, նոր անվան տակ է վերականգնել և նույնությունը անթերի լինելու համար նրան՝ Սանասարին էլ է դարձրել վիշապաքաղ (**Իս**):

զ) ընդհանուր հասկացությունը մեկ մասնավորով բացահայտելով. **Իր մեծ նպաստակը՝ հայրենիքի ազատությունը, ամբողջ հասակով երևաց նրա աչքին (Ար.):** Սեդանի վրա Օրին նկարում էր իրենց օջախի հին նշանը՝ քանդակագարդ խոշոր սիւնին, որով փլավ էին մատուցում (**Ար**):

2. հատուկ անվան կամ առավել մասնավոր իմաստ ունեցող հասկացության բացահայտումը ընդհանուր հասկացությամբ. **Նա երբեք չէր մոռանում իր ուսուցչին՝ այդ հիանալի բյուրեղյա մարդուն:**

3. բացահայտյալի ցույց տված առարկայի այս կամ այն հատկանշի բացահայտումով. **Արամը՝ դասարանի երեխաներից ամենափոքրը, շատ ժիր երեխա է: Այդ վեպը՝ նրա երկերից ամենաձեռքաբերականը, երկրորդ անգամ կարդացի:**

Բացի անվանական բացահայտիչից, որ քննվեց վերը, կա նաև բայական բացահայտիչ, որ արտահայտվում է անորոշ դերբայով (հաճախ լրացումներով հանդերձ): **Գալիս էին գործասերի պատվիրակներ, որոնք հայտնում էին իրենց կամքը՝ կոճել ապստամբող բանվորների հետ կողք կողքի (Քակ.):** Այժմ նա կամաց-կամաց մոտենում էր ցանկացած նպատակին, այն է՝ ազատել մորը լվացարանում օրնիբուն շարաշար աշխատելուց (**Մուր**): Նա տեսնում էր, թե ինչպես անդուր է Դենշապուհին իր բռնած տիրակալ դիրքը՝ խոսքը բանալ, խոսքը փակել, իր կարծիքը թելադրել և իրեն ներկայացնել բոլոր պետական գործերի գլուխ ու շարժիչ անշն (**ԳԳ**):

Երբեմն միևնույն նախադասության մեջ լինում են քերականական համագոր բացահայտյալներ, որոնք ունենում են իրենց տարբեր բացահայտիչները. նման դեպքում բացահայտիչները կամ անջատաբար դրվում են իրենց բացահայտյալի մոտ, կամ հաջորդում են իրար՝ բացահայտյալներից համապատասխան հերթականությամբ: **Ընդառաջ եկան փանտերն ու փանտիրուհին՝ մի կարմրաթուշիկ արծաթե ծերուկ և հոգևոր աշխույժ մի պատավուկ (ԳԳ):** Հմմտ. **Ընդառաջ եկան փանտերը՝ մի կարմրաթուշիկ արծաթե ծերուկ, և փանտիրուհին՝ հոգևոր աշխույժ մի պատավուկ:**

Միևնույն նախադասության մեջ բացահայտիչը կարող է միաժամանակ լինել բացահայտյալ և իր հերթին ունենալ մի այլ բացահայտիչ. **Գլուղի հոբելյանը մեծ շուքով նշվեց ոչ միայն Թբիլիսիում, որտեղ նա ապրել էր երկար տարիներ, այլև այստեղ՝ Հայաստանում՝ նրա հայրենիքում:**

Գոյություն ունի նաև նախադաս բուն բացահայտիչ: **Աշխատանք և հայ ժողովուրդ՝ ահա իմ դավանանքը (ՀՔ):** Հառաջադիմություն, լուսավորություն, երջանկություն բոլորի համար, անհատի ազատություն, զարգացում կուլտուրայի և տեխնիկայի, գիտության նվաճումները՝ ահա նրա իդեալը (**Իս**): Հմմտ. **Ահա նրա իդեալը՝ հառաջադիմություն, լուսավորություն, երջանկություն բոլորի համար, անհատի ազատություն, զարգացում կուլտուրայի և տեխնիկայի, գիտության նվաճումները: Թումանյան, Իսահակյան, Տերյան, Դուրյան՝ սրանք են Աշոտի ամենասիրելի բանաստեղծները:** Չի կարելի կարծել, թե բացահայտիչն է սրանք-ը. սրանք են-ը քերականական տեսակետից ուղղակիորեն կապված է ենթակայի հետ, այսինքն՝ ստորոգյալ է, որի ստորոգելիի՝ սրանք-ի իմաստը բացահայտվում է թվարկված անուններով: **Հմմտ. Աշոտի ամենասիրելի բանաստեղծները սրանք են՝ Թումանյան, Իսահակյան, Տերյան, Դուրյան:**

Մասնական բացահայտիչը բուն **բացահայտիչից** տարբերվում է ձևային ու իմաստային հատկանիշներով: Չևային տեսակետից այն բնորոշվում է բացահայտյալի հետ կապակցվելու բառական միջոցներով՝ **որպես, իբրև, ինչպես**, և անկայուն շարադասությամբ: Իմաստային տեսակետից մասնական բացահայտիչի յուրահատկությունն այն է, որ նա բացահայտյալի իմաստը բացահայտում, պարզաբանում է ոչ լրիվ ընդգրկումով, այլ մասնակիորեն, այս կամ այն տեսակետից: **Դա՛ որպես հեղինակի առաջին գործ, կարելի է համարել գոհացուցիչ: Հակոբյանը՝ որպես ուսուցիչ, իրեն արդարացնում էր, իսկ որպես փնտրեն՝ ոչ:**

Մասնական բացահայտիչը կարող է դրվել բացահայտյալից և՛ հետո, և՛ առաջ: Ետադաս գործածության օրինակներ են բերվածները: Ահա նախադաս գործածության օրինակ. **Առաջին օրը, իբրև նորածանոթներ, մենք խոսեցինք քաշվելով ու կցկտուր (ՍԶ):**

Պարագայական մասնավորող բացահայտիչը գործածվում է պարագաների հետ և մասնավորում է նրանց ընդհանուր բովանդակությունը: **Կանգնեց փողոցում՝ դարպասի առաջ (Ար.): Օրու հայրական տունը գտնվում էր գյուղի ծայրին՝ մի բարձրադիր փեղ (Ար.):**

Չպետք է կարծել, թե պարագաների հետ կապված բոլոր բացահայտիչները պարագայական մասնավորող են: Պարագան կարող է ունենալ բուն բացահայտիչ, եթե բացահայտվում է ամբողջ ծավալով: **Երեկ՝ հոկտեմբերի 28-ին, բացվեց ուսանողների հանրապետական հավաքը: Հոկտեմբերի 28-ին-ը** լրիվ համարժեք է **երեկ** բացահայտյալին և բուն բացահայտիչ է:

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Այս լրացումները, ինչպես երևում է նրանց անունից, լրացնում են նախադասության այնպիսի անդամների, որոնք արտահայտված են բայով:

Չիով դանդաղ գնում եմ այն գյուղը, ուր ջրադաց ունեինք և ընդարձակ հողեր, Ախուրյանի ափին, բարդիներով և ուռիներով պարսպած, և պարտեզներ՝ վարդենիներով վառ (Իս.): Ընդգծված անդամները լրացնում են բայով արտահայտված անդամների: Ըստ որում այս նախադասության մեջ բայով արտահայտված երկու կարգի անդամ կա՝ **գնում եմ, ունեինք**, որոնք ստորոգյալ են, և **պարսպած, որը որոշիչ է:** Ուրեմն քըննարկվող երկրորդական անդամները կարող են լրացնել բայական ստորոգյալին և բայով արտահայտված այլ անդամի: Բերված օրինակում **ձիով, դանդաղ, գյուղը** լրացնում են **գնում եմ** բայական ստորոգյալին, **ուր, ջրադաց, հողեր, պարտեզներ** լրացնում են **ունեինք** բայական ստորոգյալին, իսկ **ափին, բարդիներով, ուռիներով** լրացնում են **պարսպած** բայական որոշիչին:

Բայական ստորոգյալի լրացումները բուն երկրորդական անդամ են՝ բուն խնդիրներ ու պարագաներ, բայական մյուս անդամների լրացումները՝ կողմնակի անդամներ:

Անվանական ստորոգյալի լրացումը սովորաբար լինում է գոյականական անդամի լրացում: **Աշխարհը նրա համար ընդարձակ բանգարան էր (Բակ.): Մի ուրույն աշխարհ է Մթնածորը (Բակ.):** Ընդգծված բառերը լրացնում են ստորոգյալներին, մասնավորապես նրանց ստորոգելիներին, որոնք արտահայտված են գոյականով. ուրեմն դրանք հանդես են գալիս որպես գոյականական անդամի լրացում. տվյալ դեպքում որոշիչ են:

Բայական անդամի լրացումը երբեմն լրացնում է նաև այնպիսի անվանական ստորոգյալի, որի ստորոգելին ոչ թե առարկայի, այլ հատկանշի իմաստ ունի:

Նա շարք խելոր է: Այդ ժամանակ արդեն բոլորովին մութ էր:

Բայական անդամի լրացումները լինում են երկու տեսակ՝ **խնդիր** և **պարագա**:

ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիրները բայական անդամի այն լրացումներն են, որոնք ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաներ կամ որպես առարկա մտածվող երևույթներ, հատկանիշներ: Սա նշանակում է, որ խնդրի դերով հանդես են գալիս՝

Ա. առարկա ցույց տվող բառերը (գոյականներ և մի շարք դերանուններ). **ա)** *Գոմ գալուց առաջ Տիգրանը իրենց բակից նայեց գյուղին, խտտի սևացած դեզերին, աթարի բուրգերին, շնչեց գյուղի օդը (Բակ.): Կաթողիկոսը չէր սպասում այդ առաջարկին. նրան թվում էր, թե մեծ իշխանը ինքը կուղարկի փողերն իր մարդկանց միջոցով (Ար.):*

Բ. այլ խոսքի մասերի պատկանող բառեր՝ փոխանվանական կիրառությամբ. *Անհամբեր սպասում էր մութն իջնելուն (Իս.): Վիրավորեց իսլամներից մեկին (Իս.): Հրաշեկ երկաթով կղաղենք այդպիսիներին (ԳԳ): Անահիտը գլխով «այո» ասաց (ԳԳ):*

Խնդիրները քերականական տարբեր կարգի կապի մեջ են լինում բայի հետ, որով արտահայտվում են առարկաների տարբեր հարաբերությունները գործողության նկատմամբ: Ընդունված է խնդիրները բաժանել երկու տեսակի՝ **ուղիղ** և **անուղղակի**: Այս բաժանման մեջ կա որոշ պայմանականություն, որ պետք է հաշվի առնել: Այս հակադրության մեջ ուղիղ խնդրի հատկանիշը հասկանալի է. այն ներգործական սեռի բայերի արտահայտած գործողության կրող խնդիրն է. իսկ մյուս խնդիրները չունեն որևէ ընդհանուր քերականական հատկանիշ, որով բնորոշվելին: Դրանք ավելի շատ բնորոշվում են ուղիղ խնդրի հատկանշի բացառումով: Իսկ այդպիսի սկզբունքով միշտ էլ բոլոր խնդիրները կարելի է հակադրել ցանկացած որևէ խնդրի: Այսպես՝ բոլոր խնդիրները (այդ թվում և ուղիղ խնդիրը) կարելի է բաժանել երկու տեսակի, ասենք, ներգործող և ոչ ներգործող (կամ չներգործող), որոնցից ներգործողը կարելի է բնորոշել իր հոլովական ձևով, բայ-ստորոգյալի քերականական հատկանշով, իսկ մյուս բոլոր խնդիրները՝ այս հատկանիշների բացասումով: Ըստ որում բացասումը այս հակադրության մեջ ավելի հեշտ կարելի է ցույց տալ, քան թե ուղիղ և անուղղակի խնդիր հակադրության մեջ: **Հմմտ.** *Նա սլատմում է դասը (ուղիղ խնդիր) և Նա սլատմում է Ավարայրի ճակատամարտի մասին (անուղղակի խնդիր): Նա սիրում է Արամին (ուղիղ խնդիր) և Նա խփում է Արամին (անուղղակի խնդիր):*

ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

Ուղիղ խնդիրը ներգործական սեռի բայի խնդիրն է, որ ցույց է տալիս գործողությունն ուղղակիորեն իր վրա կրող առարկան: *Արամը սովորում է դասերը: Նրանք մշակում են հողը: Աշակերտները սիրում են ուսուցչին: Գրադարանավարը դասավորում է գրքերը:*

Ընդգծված բառերը ուղիղ խնդիր են, որոնք տարբեր կերպ անմիջականորեն իրենց վրա են կրում գործողությունը:

Ուղիղ խնդիրը սովորաբար դրվում է հայցական ուղղականով կամ հայցական տրականով: Հայցական ուղղականով ուղիղ խնդիրը սովորաբար լինում է իրի անուն կամ մտածվում է որպես իր, այսինքն՝ այն ունենում է իրի կարգ: *Տեսա երազ մի վառ. Ոսկի մի դուռ տեսա, Վերան փերուզ կամար. Սյունեքը հուր տեսա. Տեսա ծաղկած այգին, Սուսի սուրբ ծառ տեսա (ՎՏ): Ա՛յ թե ով է հավաքում խնչորը (ՍՁ): Դեսպաններ կառաքենը յուրաքանչյուրին իր ժամանակին և սլատշածին (ԳԳ):*

Հայցական տրականով ուղիղ խնդիրը սովորաբար լինում է անձ ցույց տվող բառ, անձի անուն կամ մտածվում է որպես անձ, այսինքն՝ այդ բառն ունենում է անձի կարգ: *Մարիամին տարան ներս և աշխատեցին ուշքի բերել (ՍՁ):*

Սակայն չեմ կարող ես նրան ատել-

Սիրում եմ նրան.

- Իմ կյանքը մի նուրբ մշուշ է պատել.

Գուրգուրում է ինչ մի լույս-հանգրվան (ՎՏ):

Ես տեսա քեզ մի ճամփի մոտ

Իմ մտերիմ, իմ անձանոթ (ՎՏ):

Սիայն թե գտնեմ իմ շիուն (ԲՀ):

Ուղիղ խնդրի ցույց տված առարկան գործողությունն իր վրա է կրում տարբեր կերպ. ըստ այդմ ուղիղ խնդիրը ցույց է տալիս՝

ա) այն առարկան, որ տվյալ գործողության արդյունքն է, ստեղծվել, առաջացել է նրա շնորհիվ. *Երևանում այժմ կառուցում են բազմահարկ շենքեր:* Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանը» գրել է շուրջ քառասուն տարում:

բ) այն առարկան, որ իր վրա կրելով գործողությունը՝ փոփոխվում է այդ գործողությունից. *Աշակերտների մի մասը մշակում է դպրոցամերձ հողամասը, մյուս մասը վերանորոգում է դպրոցական շենքը, սպիտակեցնում է պատերը, մաքրում հատակը, ներկում նստարանները, ասպակեսպատում պատուհանները:*

գ) այն առարկան, որ ֆիզիկապես ենթարկվում է տվյալ գործողությանը (շարժում, տեղափոխություն և այլն)՝ առանց փոփոխություն կրելու. *Ես ստացա ուղարկածդ նամակը: Նա թերթում է նոր գնած գիրքը: Երեխային անցկացրեց փողոցով:*

դ) այն առարկան, որ իր վրա է կրում մտավոր, բարոյական և նման կարգի գործողություն. *Նա շատ է սիրում բնությունը: Երեխաները պետք է հարգեն մեծերին: Ես արտագրեցի այդ գեղեցիկ քառյակը: Նա լուսանկարեց մեզ:*

Երբեմն դժվար է որոշակի սահման դնել ուղիղ խնդրի նշված իմաստների միջև, ըստ որում քերականական տեսակետից առանձնապես էական չէ կրող առարկայի փոփոխվելու աստիճանը: Հիշյալ վերլուծությամբ ավելի շուտ բացահայտվում են «կրող առարկա» հասկացության իմաստը, այդ իմաստի ընդգրկման սահմանները: Հիշյալ բաժանման քերականական կողմը ավելի շուտ արտահայտվում է խնդրառու բայի բայական իմաստի բնույթի մեջ:

Քննված ուղիղ խնդիրը կարելի է կոչել բուն ուղիղ խնդիր՝ ի տարբերություն այդ անդամի մի այլ արտահայտության, որ կոչվում է մասնական ուղիղ խնդիր: Մասնա-

կան ուղիղ խնդիրը դրվում է բացառական հոլովով և ցույց է տալիս, որ տվյալ առարկան գործողությունն իր վրա է կրում մասնակիորեն, իր մի մասով:

Մի ձեռքով բռնեց ձեռնակ մազերից (ՀԾ): Ելիշտ է, հուր աչքեր անհամար են մեզանում, անհամար թվով տեսել են ինքս նրանցից՝ այդ հուր աչքերից, բայց այն, ինչ Հրաչյայիսն էր, ոչ ոք չի տեսել (Վ. Փափ.):

ՀԱՆԳՄԱՆ ԽՆԴԻՐ

Հանգման խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է գործողությունը: Հանգումը պետք է հասկանալ բառիս լայն իմաստով: Հանգում են և՛ «մոտենալ մեկին», և՛ «հասնել մեկին», և՛ «կաչել մեկին», և՛ «դիպչել մեկին», և՛ «ծանոթանալ մեկին», և՛ «հաղթել մեկին», և՛ «աջակցել մեկին», և՛ «տալ մեկին», և՛ «հանձնել մեկին», և՛ «նվիրել մեկին», և՛ «մի բան վաճառել մեկին», քանի որ ընդգծված բառերով արտահայտվում է այն օբյեկտը, որին հանգում են մոտենալու, հասնելու, կաչելու, դիպչելու, ծանոթանալու, հաղթելու, աջակցելու, տալու, հանձնելու, նվիրելու, վաճառելու գործողությունները: Անշուշտ, այստեղ տարբեր են հանգման աստիճաններն ու երանգները, բայց շարահյուսական և առհասարակ քերականական հարաբերության գնահատման ժամանակ պետք է վերանալ բայիմաստի մասնավոր հատկանիշներով պայմանավորված երկրորդական երանգներից և հաշվի առնել քերականական այն ընդհանուրը, որ առկա է նույն բնույթի տարբեր փաստերի մեջ. հակառակ դեպքում մենք գնահատած կլինենք ոչ թե խնդիրը՝ որպես քերականական կարգ, այլ բայիմաստը՝ որպես բառական կարգ: Իսկ բառական կարգի բաժանումները կարելի է անվերջ մասնատել և հանգեցնել այնպիսի մանրամասների, որոնք քերականական արժեք չունեն:

Այս կապակցությամբ նշենք, որ չի կարելի նախադասության տվյալ անդամի (և ընդհանրապես քերականական ամեն մի կարգի) էությունը, ընդգրկման սահմանները որոշել նրա անվան սովորական իմաստով: Բանն այն է, որ քերականական բարդ վերացություններ, ընդհանրական իմաստներ արտահայտելու համար գիտությունը հաճախ դիմում է լեզվի մեջ եղած, այսպես ասած, սովորական բառերին և դրանք դարձնում տերմիններ: Ըստ պահանջի ու անհրաժեշտության՝ տվյալ տերմինը իր իմաստային յուրահատկությամբ և ընդգրկումով կարող է զգալիորեն տարբեր լինել նույն բառի առօրյա գործածության իմաստից: Եվ դա բնական է: Ըստ որում այդ տարբերությունը կարող է լինել հենց սկզբից և կարող է ստեղծվել հետո՝ պայմանավորված տվյալ տերմինի և նրա ցույց տված լեզվական կարգի գիտական գնահատությամբ ու ճշտումով:

Հանգման խնդրից դուրս մատուցման խնդրի ընդունումն ավելի շուտ հենված է խնդրառու բայի իմաստային յուրահատկության, քան թե խնդրի արտահայտած հարաբերության վրա: Ինչ խոսք, **տալ, հանձնել, նվիրել, վերադարձնել, մատուցել, վճարել, կտակել, վաճառել** և նման բայերը սովորաբար երկու խնդիր են առնում. **տալ մի բան մեկին, նվիրել մի բան մեկին**, և դա պարզապես այդ բայերի իմաստա-

յին յուրահատկությունն է: Մինչդեռ հարցին տրականով դրված խնդրի կողմից մոտենալու դեպքում այդ կրկնակի խնդրառությունը կարևորություն չի ստանում: Այս տեսակետից ավելորդ չէ նկատի ունենալ բուն հանգման խնդիր պահանջող բայերի պատճառականի կրկնակի խնդրառությունը. մոտեցնել **մի բան մի բանի**, կպցնել **մի բան մի բանի**, հանգեցնել **մի բան մի բանի**, որտեղ **մի բանի**-ն այնքան է հանգման խնդիր, որքան նույն **մի բանի**-ն «մոտենալ մի բանի», «կպչել մի բանի», «հանգել մի բանի» կապակցություններում: Խնդրի բնույթի համար կարևոր է այն, որ նրա ցույց տված առարկային հանգում է, հասնում է մի բան, իսկ ենթակա՞ն է իր շարժումով հասնում, հանգում նրան, թե՞ ենթակայի համապատասխան գործողությամբ մի այլ առարկա է հանգում, հասնում նրան (**համտ. տալ մի բան մեկին**)՝ կարևոր չէ. դա վերաբերում է բայի իմաստային յուրահատկությանը: Իհարկե, խնդիրների էության հարցում կարևոր դեր են կատարում բայի սեռն ու իմաստը, բայց և այնպես խնդրի էությունն ու խնդրառու բայի էությունը չպետք է նույնացնել, և մանավանդ չպետք է բայի յուրահատկությունները վերագրել խնդրին:

Որոշ բայերի հանգման խնդիրը իմաստով շատ մոտենում է ուղիղ խնդրին: Այդպիսի բայեր են՝ **տիրապետել, դավաճանել, օգնել, խնդրել** և այլն: Նման դեպքերում խնդրի բնույթը որոշելիս պետք է ելնել հոլովից. եթե խնդիրը դրված է հայցական տրականով կամ հայցական ուղղականով, ուրեմն ուղիղ խնդիր է, իսկ եթե դրված է բուն տրականով, հանգման խնդիր է: Նշված բայերի խնդիրը դրվում է բուն տրականով, ուրեմն դրանք հանգման խնդիր են. ինչպես՝ տիրապետել **ռուսերենին**, դավաճանել **ընկերոջը**, օգնել **կարիքավորին**, խնդրել **վարչությանը**:

Հանգման խնդիրը կարող է արտահայտվել նաև կապական կապակցություններով: *Գնում ենք, մորն ասաց, մենք լեհերի վրա (ԵՉ): Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այդպիսի «մանրությունների» վրա (լր.):*

ԱՆՁԱՏՄԱՆ ԽՆԴԻՐ

Անջատման խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից անջատվում, հեռանում է մի առարկա, և արտահայտվում է բացառական հոլովով:

Այս խնդրի բուն էության տեսակետից կարևոր չէ՝ հեռացող առարկան ելակետային առարկայի հետ կապված է իբրև նրա անմիջական բաղադրիչ մա՞ս, թե՞ մի այլ ձևով: Կարևորն այն է, որ մի առարկայի շարժումը կամ գործողությունը սկսվում է մի այլ առարկայից, որը հանդիսանում է հեռացող առարկայի ելման, հեռացման, անջատման համար սկզբնակետ, բայց ոչ թե տեղի, այլ առարկայի իմաստով: Այս առումով, ներքին որոշ տարբերություններով հանդերձ, բերականական ընդհանուր հարաբերությամբ նույն արժեքն ունեն, նույն պաշտոնն են կատարում հետևյալ օրինակներում բացառականով արտահայտված խնդիրները.

Արամը բաժանվեց ընտանիքից:

Արամը հեռացավ ընկերներից:

Արամը հեռացավ ընկերոջից:

Առաջին օրինակում Արամը ընտանիքի բաղկացուցիչ մասն է, որից անջատվել,

բաժանվել է: **Ընկերներից, ընկերոջից** խնդիրներին հատուկ չէ նշված յուրահատկությունը. Արամը ընկերոջ կամ ընկերների բաղկացուցիչ մասը չէ բնականաբար: Սակայն ընդգծված բոլոր բառերին հատուկ է քերականական մեկ ընդհանուր հարաբերություն. դրանք ցույց են տալիս անձեր կամ անձ, որոնք Արամի գործողության համար հանդիսանում են բաժանման, անջատման, ելման առարկա:

Անջատման խնդիրը ցույց է տալիս՝

ա) այն առարկան, որից անջատվում, բաժանվում է նրա բաղկացուցիչ մասը. **Տեղրից մի թերթ պոկեցի: Արամը հացից մի կտոր կտրեց ու տվեց ընկերոջը: Հայրենիքի հորդից մի բուռ իր հետ տարավ:**

բ) այն առարկան, որից բաժանվում, հեռանում է նրա հետ որևէ ձևով կապված առարկա. **Վագոններն անջատեցին իրարից՝ վերանորոգման նպատակով: Գառներին առանձնացրին մայրերից:**

գ) այն առարկան, որից ելնում է, ստացվում է, վերցվում է առարկան.

Ընկերոջից նամակ ստացա: Որսորդից որսի թաղամ միս գնեցինք:

դ) այն առարկան, որից ծագում, սերում է մի բան. **Հովհաննեսը ծնվեց պատմական բնագավառում մի հին ընտանիքից (Իս): Նա այդ դրական գծերը ժառանգել է հորից:**

ՄԻՋՈՑԻ ԽՆԴԻՐ

Միջոցի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որով կատարվում, արվում է մի բան. այս խնդիրը դրվում է գործիական հոլովով:

Միջոցի խնդիրը իմաստային տեսակետից միօրինակ չէ. այն ցույց է տալիս՝

ա) այն առարկան, որով՝ որպես գործիքով, կատարվում է գործողությունը.

Մենք վերադարձանք օդանավով: Աշոտը արքանով հանեց մեխերը: Այս գյուղի մարդիկ չեռով են փայտ կտրատում (Թում):

բ) այն առարկան, երևույթը, հնարը, որի գործադրումով կամ ներգործումով կատարվում է գործողությունը. **Նա իր խելացիությամբ հաղթեց մրցակցին: Լուսինեն իր չաչնով գերեց բոլորիս: Դու քո գոռգոռոցով մեզ համբերությունից հանեցիր: Նա մարմնամարզությամբ վերականգնեց առողջությունը:**

գ) այն առարկան, որի՝ որպես նյութի, գործադրման միջոցով կատարվում է մի բան. **Շենքի ճակատը երեսապատեցին մարմարով: Աշոտը գրում է կապույտ քանաքով: Բենը զարդարված էր ծաղկեփնջերով:**

Միջոցի խնդիրն արտահայտվում է գոյականի, դերանվան, այլև գոյականաբար գործածված բառի գործիական հոլովով, ինչպես և համապատասխան բառի սեռականի ու գործիականով դրված կապական բառի կապակցությամբ: Վերը բերված միջոցի խնդիրներն արտահայտված են հոլովվող բառի գործիականով: Բերենք կապական բառի կապակցությամբ արտահայտված միջոցի խնդրի օրինակներ. **Հիվանդը բուժվեց դեղերի ու հանքային ջրի միջոցով: Նա այդ գործը կատարեց ուրիշի միջոցով:**

ՆԵՐԳՈՐԾՈՂ ԽՆԴԻՐ

Ներգործող խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի կատարած գործողությունը կամ որի ներգործությունն անցնում է ենթակային. այն գերազանցապես դրվում է բացառա-

կան, երբեմն գործիական հոլովով: *Արամյանը շատ սիրված է աշակերտների կողմից: Նա վիրավորվեց ընկերոջից:* Ներգործող խնդիրը տրամաբանորեն գործողություն կատարողն է, ներգործողը, բայց քերականորեն ձևավորված է որպես խնդիր և ոչ ենթակա. ենթակայի դերում հանդես է գալիս գործողության կրողը, որը նախադասության կառուցվածքում ոճական-քերականական նկատառումով առաջին պլան է ընկել: Սա հատկապես վերաբերում է այն ներգործող խնդիրներին, որոնք հանդես են գալիս որպես կրավորական սեռի պատկանող բայի լրացում:

Ներգործող խնդիր ունեցող նախադասության ստորոգյալը սակավ դեպքերում կարող է արտահայտվել չեզոք սեռի բայով: Այս դեպքում խնդրի ներգործության աստիճանն ավելի թույլ է լինում: Այդպիսի բայեր են՝ **ամաչել, գոհանալ, վախենալ, նեղանալ, սարսափել, սոսկալ, ձանձրանալ** և այլն: Օրինակ՝ **վախենալ օձից, նեղանալ ընկերոջից, ձանձրանալ հարևանից** և այլն:

Կրավորական ու չեզոք սեռերի բայերի ներգործող խնդիրների հարաբերակցության և ընդհանրության մասին է խոսում այն իրողությունը, որ հաճախ միևնույն ներգործող խնդիրը կարող է գործածվել թե՛ կրավորական և թե՛ չեզոք բայերի հետ՝ պահպանելով միևնույն քերականական իմաստը: **Հմնտ. Չեկուցողի ելույթը միասնամոտ հավանության արժանացավ նիստի բոլոր մասնակիցների կողմից: Չեկուցողի ելույթը հավանությամբ ընդունվեց նիստի բոլոր մասնակիցների կողմից:**

Ծանոթություն: Ներգործող խնդրի հետ չպետք է շփոթել բացառականով դրված պատճառի պարագան. ինչպես՝ **վախից գունատվել, պարապությունից ձանձրանալ, երկար սպասելուց հուսահատվել, պարտվելուց ամաչել** և այլն: **Վախը, պարապությունը, երկար սպասելը, պարտվելը** տվյալ դեպքում հանդես են գալիս որպես **գունատվելու, ձանձրանալու, հուսահատվելու, ամաչելու** պատճառ: Ինչպես կարելի է նկատել, ներգործող խնդրի ու պատճառի պարագայի տարբերությունը պայմանավորված է լրացման դերով հանդես եկող բառի բնույթով, որից էլ բխում է քերականական հարաբերությունների տարբերությունը: Անձը, կենդանին, իրը հանդիսանում և դիտվում են որպես ներգործող առարկաներ, իսկ երևույթը, գործողությունը՝ որպես մի այլ գործողության պատճառ:

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Վերաբերության խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է տվյալ գործողությունը: Վերաբերության խնդիր սովորաբար ստանում են այսպես կոչված ասացական ու մտածական իմաստով բառերը. ինչպես՝ **ասել, արտահայտել, խոսել, պատմել, գեկուցել, հայտարարել, հաղորդել, երգել, մտածել, խորհել, դատել** (դատողություն անել), **պայմանավորվել, գրել, վկայել** և այլն:

Վերաբերության խնդիրն արտահայտվում է՝

Ա. հոլովվող բառի սեռական տրականի ու վերաբերության իմաստ ունեցող կապերի կապակցությամբ. **Գործի մասին մի ուրիշ անգամ երկար կայստմեն (Թուռ): Մի քանի քաղցր խոսք ասաց պրոֆեսոր Ազատյանի խմբի մասին (ԲՎ): Որոշել էր չմտածել ուրիշ ոչ մի բանի մասին (ԲՎ): Այդ հարցի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Չեկուցման շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն (լր.):**

Վրա կապով վերաբերության խնդրի ձևավորումը գրական հայերենի արդի վիճակի համար հնացած է, մինչդեռ այն տարածված էր մեկ դար առաջ. ինչպես՝ **Մենք այդ բոլորը պետք է անցած համարենք և մտածենք գործերի այժմյան դրության վրա (Բ):**

Նա միշտ երիտասարդի վրա է մտածում (Բ): Նա ինչ-որ ճանապարհորդության կամ հեռավոր ազգակիցների վրա է մտածում (Մուր.):

Վրա կապը այժմ վերաբերության խնդիր կարող է ձևավորել **կանգ առնել** բայ-ստորոգյալի հետ գործածվելիս. ինչպես՝ *Ապա զեկուցողը կանգ առավ երկրի քաղաքական կյանքի պրոբլեմների վրա (լր.):*

Բ. բացառական հոլովով. *Ու պատմում էր նա Հուրի փերիներից, Չմրուխար Ղուշից, Լիս ու Մուր աշխարհից (Թում):* Խոսում էր նախապատմական ժամանակներից, նրանց բարբերից (Վ. Փափ.): Խոսում էինք անվերջ մեր երջանիկ կյանքից Եվ երգերից մեր նոր, որ պիտի գան (ՎՏ): Բողոք ունեն մեր փնօրենից:

Գ. գործիական հոլովով. *Նրանք հետաքրքրվեցին Երևանում կատարվող բնակարանային շինարարությամբ, Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքով, գիտահետազոտական հիմնարկների գործունեությամբ, ժողովրդական կրթության գործի դրվածքով, արվեստի զարգացմամբ (լր.):*

ՄԱՍՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐ

Մասնավորման (կամ սահմանափակման) խնդիրը նախադասության այն անդամն է, որով մասնավորվում է ստորոգյալի արտահայտած հատկանշի վերաբերությունը:

Նա վիրավորվել է շեռքից: Չեռքից անդամով համապատասխան առարկայի վրա է մասնավորվում վիրավորվելու գործողությունը:

Մասնավորման խնդիրն արտահայտվում է՝

Ա. բացառական հոլովով. *Լողից առաջին տեղը* գրավեց Վ. Չաքարյանը (լր.): Այդպիսիները գրավոր քննություններ հանձնելու են V-VI դասարաններում մայրենի լեզվից և քվարանությունից, VII դասարանում՝ մայրենի լեզվից և հանրահաշվից, VIII-X դասարաններում՝ մայրենի գրականությունից և հանրահաշվից (լր.): Ուզո՞ւմ եք ձեզ հետ սլարասլեն հայերենից (ՆԳ):

Բ. գործիական հոլովով. *Մրտերով մեկ էին, մտքերով մեկ էին (ԳՄ):* Այս գիրքը իր ծավալով զիջում է մյուսին, իսկ արժեքով ու կարևորությամբ՝ ոչ: Այդ բառը գործածված է ուղիղ խնդրի պաշտոնով:

Գ. ներգոյական հոլովով. *Սկզբունքային հարցերում նա անզիջող է, իսկ երկրորդական հարցերում՝ հանդուրժող:* Արամը սովորելում այնքան էլ չի փայլում, իսկ հասարակական աշխատանքներում շատ ակտիվ է: Դրանում նա իրավացի է:

Դ. կապական կապակցություններով. *Աշխատանքի կողմից* նա շատ հանգիստ է և ապահով: Այդ բառը գործածված է որպես ենթակա:

ՊԱՐԱԳԱՆԵՐ

Պարագաները ցույց են տալիս գործողության կամ եղելության հատկանիշներն ու հանգամանքները:

Ինչպես երևում է սահմանումից, պարագաներն ամենից առաջ լրացնում են միայն բայով արտահայտված անդամին: Այսպես՝ «Երեխաները երեկ վերադարձան ճամբարից, որ նրանք մեկ ամիս խելացիորեն հանգստացել են և շատ բան սովորել» նախադասության մեջ ընդգծված բառերը պարագաներ են, որոնք լրացնում

են բայով արտահայտված անդամների՝ **վերադարձան և հանգստացել են** բայական ստորոգյալներին:

Սահմանման մեջ, «եղելություն» ասելով, նկատի ունենք այն ստորոգյալների բովանդակությունը, որոնք արտահայտված են հատկանիշ ցույց տվող ստորոգելիով ու հանգույցով: Քանի որ այդպիսի ստորոգյալն ունի բայական բաղադրիչ, որով հատկանիշը վերագրելով ենթակային՝ ցույց է տրվում նրա ինչպիսին լինելը, այդ պատճառով էլ դրանց էությունն արտահայտելու առավել հաջող անվանումը «եղելություն» բառն է: Կարևոր է նկատի ունենալ նաև, որ «եղելություն» տերմինը մոտ է «գործողություն» տերմինին այնչափով, որչափով նշված ստորոգյալները, իրենց մեջ բայական բաղադրիչ ունենալով, մոտենում են բայական ստորոգյալին: *«Սևանն ախսոր շապ խաղաղ է», «Երևանը երեք անգամ մեծ է Գյումրիից», «Աշոտը երկու փարով փոքր է Հակոբից»* նախադասություններում ընդգծված պարագաները լրացնում են անվանական ստորոգյալների, որոնց վերադիրը հատկանիշ է ցույց տալիս (խաղաղ է, մեծ է, փոքր է): Բաղադրյալ ստորոգյալների հետ պարագաների գործածությունն ավելի բնորոշ է, քան թե խնդիրներինը:

Պարագաները կարելի է բաժանել երկու խմբի՝ բուն պարագաներ և հատկանշային պարագաներ:

Բուն պարագաները ցույց են տալիս գործողության հետ կապված հանգամանքները՝ տեղը, ժամանակը, պատճառը, հիմունքը, պայմանը, նպատակը, միասին գործելը կամ լինելը, և ըստ այդմ՝ լինում են տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի, պայմանի, նպատակի, զիջման, միասնության պարագաներ:

Հատկանշային պարագաները ցույց են տալիս գործողության ձևային ու չափի հատկանիշները և ըստ այդմ՝ լինում են ձևի ու չափի պարագաներ:

Բոլոր պարագաները հակադրվում են խնդիրներին նրանով, որ եթե խնդիրները ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաները, ապա պարագաները բնութագրում են գործողությունը՝ նրա ձևի, չափի, պատճառի, պայմանի, նպատակի և այլ տեսակետներից: Ըստ որում պարագաների երկու խմբերից յուրաքանչյուրը յուրահատուկ է բնութագրում գործողությունը: Հատկանշային պարագաներն ուղղակիորեն բնորոշում են ձևի (այդ թվում և որակի), չափի տեսակետից, իսկ բուն պարագաները գործողությունը բնութագրում են նրա կատարման պատճառական ու նպատակային շարժառիթների և այլ հանգամանքների տեսակետից:

Պարագաների այս ընդհանուր բնույթը սերտ կապի մեջ է նրանց արտահայտության հետ: Պարագայի պաշտոնով ամենից ավելի հանդես են գալիս այն խոսքի մասերը և որոշ խոսքի մասերի քերականական այն ձևերը, որոնք կարող են բնութագրել գործողությունը նշված առումներով:

Պարագաները արտահայտվում են՝

Ա. հատկանշային իմաստ արտահայտող մի քանի խոսքի մասերով՝ **ա)** մակբայով, **բ)** ածականով (հատկապես որակական), **գ)** մի շարք դերանուններով, **դ)** դերբայական որոշ ձևերով:

ա) Հիմա կարող են խոսել այնպես կամացուկ (ՀԸ): Այսուհետ մի՛ վրդովիր իմ երջանկավետ անդորրը (Իս):

Ջրերը մեղմիվ երգում են օրոր (ՎՏ): Ու չենք դառնա կրկին տուն (ԵՉ):

բ) Գլուխը խորհրդավոր շարժեց (Քակ.): Արտաշի հետ փողոցի մեջտեղով մտազբաղ գնում էր Լևոնը (Քակ.):

գ) Վասակն այնպես հարվածեց Ներսիկին...(ԳԳ): Խորհուրդ են անում, թե ինչպես փրկել (ՆՁ): Որտեղի՞ց են կրակում (ՀՔ):

դ) Վերադառնալիս մենք հանդիպեցինք իրար: Մաղխտա մայրիկը առավոտ կանուխ զարմացած նայում էր Լևոնի շինելին (Քակ.):

Բ. առարկա ցույց տվող խոսքի մասերի այնպիսի բառերով ու բառաձևերով, որոնք, լրացական հարաբերությամբ կապվելով բայական անդամի հետ, բնութագրում են գործողությունը, եղելությունը. *Ձյունը գալիս էր սաստկությամբ (ՆԳ): Որտտանի եզերքին կա մի ուռենի (ՀՍ): Նրա սիրտը թրթռում էր ուրախությունից (ՎԱ): Գարեգինը դուրս էր գալիս արշրուականջին (ՍԽ): Ծանր կորստի պատճառած վիշտը տարել էր համառ համբերությամբ (ՍԽ):*

Գ. կապական կապակցություններով. *Ծերունին քրի փակ ժպտաց (ՔԹ): Փոքր անց գավթի խորքում դուփեցին նժույգների սմբակները (ԳԳ): Երգում էին մեջտեղ նստած Մարիին հրապուրելու համար (Իս.): Աշխատել էր առանց դադարների (ՀՔ): Վերիլյանից հեկո նրանք դեռ երկար աշխատեցին (ՔՎ): Մենք պարտավոր ենք մտածել Քարակերպի մասին (ՍԽ):*

Դ. նյութական իմաստ ունեցող բառերի կապակցություններով. *Օրը ցերեկով տեսնում է, որ իրենց լուսամուտները վերանորոգված են (ՔԹ): Քանի գնաց վատացավ (ՔԹ): Փարիզում մի երկու անգամ հանդիպումներ ունեցա Թեոդորի հետ (Իս.): Հինգշաբթի օրը մենք հանդիպեցինք (ՀՔ): Ղազարոս Աղայանի անունը յոթ-ութ փարեկան հասակից գիտեի ես (Իս.):*

Ե. տարբեր խոսքի մասերի, լեզվական արտահայտությունների փոխանվանական կիրառություններով. *Նրանք երեքով ուռկանն ափ հանեցին (ՎԱ): Տաղով եկավ, Ախով գնաց Մայաթ-Նովան (Թում.): Եկել ենք մնաք բարևի (ԳԳ):*

Պարագաների արտահայտության յուրահատկությունը, ի տարբերություն խընդիրների, կարելի է ընդհանուր առմամբ բնութագրել այսպես. եթե խնդիրներն արտահայտվում են առարկա ցույց տվող խոսքի մասերով, ինչպես և այլ խոսքի մասերի փոխանվանական կիրառությամբ, որի դեպքում հատկանիշ ցույց տվող բառը առարկայի անվան կիրառություն է ձեռք բերում, ապա պարագաներն արտահայտվում են **հատկանիշի** իմաստ ունեցող խոսքի մասերով և առարկա ցույց տվող խոսքի մասերի պատկանող այնպիսի բառերով, բառաձևերով ու կապակցություններով, որոնք սովյալ դեպքում հանդես են գալիս գործողության հատկանշային և այլ կարգի բնութագրման արժեքով:

Այժմ քննենք պարագաների տեսակները:

ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

Տեղի պարագան նախադասության այն անդամն է, որը ցույց է տալիս գործողության, եղելության տեղը:

Տեղի պարագաները, շարահյուսական հարաբերության ընդհանրությամբ հանդերձ, ունեն որոշ ներքին տարբերություններ: Ըստ այդմ նրանք ցույց են տալիս՝

Ա. այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը, կա սովյալ հատկանիշը.

Ամենուրեք ծառերը ծաղկել են, դաշտերը՝ կանաչել: Արամը սովորաբար սխառապում է գրադարանում, իսկ կիրակի օրերին՝ փանը: Դրսում օղը շատ սառն է: Մեզ մոտ ամեն ինչ կարգին է:

Բ. այն տեղը, դեպի ուր ուղղված է գործողությունը. *Ո՞ր են գնում երեխաները: Յու-գարարների շարքերը շարժվեցին դեպի քաղաքի կենտրոնական հրապարակը: Սփյուռքա-հայերի մի մեծ խումբ ևս վերադարձավ հայրենիք:*

Գ. այն տեղը, որտեղից սկսվում է գործողությունը, առարկայի շարժումը. *Նրանք վերադարձան Եգիպտոսից: Նա ջերմ նամակ ստացավ հայրենի գյուղից:*

Դ. առարկայի նկատմամբ տարբեր հարաբերությամբ տեղ, տարածություն, որով (որի վրայով, միջով, մոտով, վերևով) կատարվում է առարկայի շարժումը, գործողու-թյունը. *Մեքենան շարժվում է կամուրջի վրայով (տակով, մոտով): Ռոռզման ջուրը հորդաց նորակառույց ջրանցքով: Սավառնակներ անցան մեր վերևով:*

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության, եղելության ժամանակը:

Ժամանակի պարագան ունի իմաստային հետևյալ տարբերակները, որոնք Վ. Ա-ռաքելյանը անվանում է գործողության կատարման, սկզբնավորման, վախճանի ժա-մանակի պարագաներ¹: Այն ցույց է տալիս՝

Ա. գործողության կատարման կամ եղելության ժամանակը.

Գործարանը ներկայումս թողարկում է 7 տարբեր տեսակի արտադրանք (յր.): Մլացիկ սոսիներն ու ցարասիները գիշեր-ցերեկ ստապիում էին այնտեղ (Իս.): Ծաղկելու է էգուց վար-դերով իր (ԵՉ): Ինչո՞ւ աչքերդ միշտ այդպես կարմիր են (ՆԴ):

Բ. գործողության ժամանակային սկզբնակետը, այն ժամանակը, որից սկսվում է գործողությունը. *Վաղուց նա չէր տեսել այդպիսի տեսարան (Շիրվ.): Այսուհետև պիտի ապրեն հանքերում (Շիրվ.): Այժմվանից սկսած ամեն գիշեր դուրս կգա (Լեռ): Հոկտեմբերի մեկից ինքնաթիռների չվացուցակը փոխվելու է: Վաղ առավորվանից ամենքը շտապում էին թռփխանե հրապարակը (ՎՓ):*

Գ. այն ժամանակը, մինչև որը տևում է գործողությունը.

Ու ես ցմահ կսարծենամ երկրե-երկիր, Իմ ժողովուրդ, քո անունով՝ վեհ և հեզ (ՀԾ): Ցրտե-րը կտևեն մինչև մարտի կեսը (յր.): Գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն մինչև նոյեմբերի 10-ը: Դեռ մի քանի ժամ մնում էր մինչև ճաշը (Բ):

ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ

Պատճառի պարագան ցույց է տալիս գործողության կամ եղելության պատճառը:

Պատճառի պարագան արտահայտվում է գերազանցապես բացառական հոլը-վով, երբեմն գործիականով, ինչպես և կապական կապակցություններով:

Խորենը մի վայրկյան հիացմունքից չկարողացավ քայլ առնել (ՎՓ): Նուռն է ճեղքվում քաղցրությունից (ՀՄ): Կամոն եփվում էր անհամբերությունից (ՎԱ): Աչքերը հոգնածու-թյունից թեթևակի կկոցվել են (ՍԽ): Խեղճն իմ պարճառով ճանապարհին այնքա՛ն է տանջվել (ՍԽ): Հետո դուրս ճոնչաց հարվածների փակ (ՎՓ):

¹ Վ.Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 1, էջ 351:

Բացառական հոլովով արտահայտված պատճառի պարագան չպետք է շփոթել այդ հոլովով դրված ներգործող խնդրի հետ: Բացառականով արտահայտված պատճառի պարագան սովորաբար ցույց է տալիս գործողություն, երևույթ, որոնց պատճառով կատարվում է տվյալ գործողությունը կամ առաջանում է տվյալ վիճակը, մինչդեռ ներգործող խնդիրը ցույց է տալիս այն առարկան, անձը, որոնց կողմից կատարվում է տվյալ գործողությունը: **Հմմտ.** *Եվ պարտություն կրեց արքայական զորքից (ՀՄ): Եվ պարտություն կրեց անփորձ լինելուց (ուժերի քչությունից): Չորքից* ներգործող խնդիր է, զորքն է պարտության մատնողը, իսկ **անփորձ լինելուց, ուժերի քչությունից** պարտության պատճառներն են՝ պատճառի պարագա: **Հմմտ.** *Անփորձ լինելու պատճառով պարտություն կրեց արքայական զորքից:*

ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ

Հիմունքի պարագան ցույց է տալիս գործողության կամ եղելության հիմունքը:

Նա եկավ այստեղ բժշկի խորհրդով (Աբ.): Իր տիրոջ հրամանով եկավ, գտավ ինձ (Վ. Փափ.): Նա այդ կատարեց հասուկ քույրվորյամբ: Ըստ օրենքի՝ դա արգելված է: Ծուխ ու մոխիր դարձան աշտարակն ու դիտարանը՝ քո աստվածային հրամանի համաչայն (Իս.): Ընդունված սովորության համաչայն՝ նրանց չի կարելի ոչնչացնել (ՎԱ): Ըստ նրա վկայության ու փաստարկումների՝ Գրիգորն արդարացի է:

Երբեմն հիմունքի պարագան շփոթում են պատճառի պարագայի հետ, մինչդեռ դրանք էապես տարբեր են իրարից: Ի տարբերություն պատճառի պարագայի, որ գործողության, եղելության պատճառն է ցույց տալիս, հիմունքի պարագան ցույց է տալիս գործողության, եղելության իրավական, սովորության հիմունքը, ինչպես և դատողության, մտքի գիտական, փաստական հիմունքը:

ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ

Պայմանի պարագան ցույց է տալիս գործողության կամ եղելության պայմանը:

Պայմանի պարագան արտահայտվում է **դեպքում, պարագայում, պայմանով** բառերով կազմված կապակցություններով, ինչպես և անորոշ դերբայի գործիական հոլովով: *Դա կկատարենք հնարավորության դեպքում: Այդպիսի պարագայում ես էլ նույնը կանեի: Մենք համաձայնեցինք զնալ հեռավոր գրոսանքի երեկոյան վերադառնալու պայմանով:*

ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Նպատակի պարագան ցույց է տալիս գործողության կամ եղելության նպատակը:

Այն արտահայտվում է բուն տրականով, **համար, հանուն, հոգուտ** և այլ կապերով կապակցություններով: *Երեխաները զնացին այգի՝ ծնողներին օգնելու: Տղաները պատրաստվեցին նոր արշավի: Եկել են նորից այս վայրերն այցի (ՀՄ): Հիմա ամեն իտի և գործ՝ հաղթանակի համար, միայն և միմիայն հայրենիքի պայքի և հաղթանակի համար (Իս.): Պետք է, ուրեմն, կռվել և հաղթանակել հանուն իր նորանվաճ ազապության, հանուն իր հին հայրենիքի պահպանման, հանուն իր մեծ հայրենիքի (Իս.):*

ՉԻՉՄԱՆ ՊԱՐԱԳԱ

Չիջման պարագան ցույց է տալիս, որ մի բան կատարվում կամ լինում է՝ հակառակ կամ փոխանակ մի այլ բանի:

Այս պարագան սովորաբար ձևավորվում է **չնայած, հակառակ, հանդերձ, փոխանակ, փոխարեն** բառերով կազմված կապակցություններով:

Չիջման պարագան երկու հիմնական արտահայտություն ունի.

Ա. Ցույց է տալիս, որ տվյալ գործողությունը կատարվում է, կամ իրողությունը լինում է՝ հակառակ այս կամ այն պատճառի, հիմունքի, պայմանի:

Նա այդ արեց՝ հակառակ գործող օրենքի: Վարդանը, հակառակ Վոանի ցանկության, քաղեց խորդենին (ՔԹ): Այդ բոլորը իմանալով հանդերձ՝ նա լռեց: Չնայած վաղ եղանակին՝ գյուղում սկսվեցին գյուղատնտեսական աշխատանքները: Չնայած չեղբ բերված պայմանավորվածության՝ հանդիպումը տեղի չունեցավ:

Բ. Ցույց է տալիս, որ մի գործողության փոխարեն կատարվում է մի այլ գործողություն: *Փոխանակ դասերը սովորելու՝ խաղում էր բակում: Հանձնարարված գրքերը կարդալու փոխարեն՝ արկածային վեպեր է կարդում:*

ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱ

Միասնության պարագան ցույց է տալիս, որ ենթական գործողությունը կատարում է այլ առարկայի հետ միասին:

Միասնության պարագան արտահայտվում է գործիական հոլովով, **հետ, հանդերձ** կապերով կազմված կապակցություններով: *Քույրս իր ընդհանրով թողեց Սևանի ափերը և տեղափոխվեց Երևան (ՎԱ): Ես էլ ուզում էի ասել, որ ընդհանրով գնաս առողջարան (ՄԽ): Երեկոյան զեփյուռն իր հեպ բերում է վարդի, մեխակի ու սուսամբարի սուր բույրմունքը (ԲՎ): Ու այտի ժողովրդի հեպ գնա դեպի հեռու-հեռավոր ժամանակները (ՀԲ): Արդ, եթե դու ևս, արքա՛, քո ժողովրդով հանդերձ կմերժեք և կվանեք չարանենգ հրամանը, ապա և ամենափույթ պատասխանով տեղյակ կացուցիր մեզ ձեր վճիռն ու անելիքը (ԳԳ):*

Հաճախ **հետ** կապով կազմված կապակցությանն ավելանում է **միասին** բառը, որով ավելի է շեշտվում միասնության իմաստը:

Երեխաները մեծերի հեպ միասին մասնակցում են դաշտային աշխատանքներին: Առաջին անգամ նրա անունը լսեցի «Սոս և Վարդիթեր» անվան հեպ միասին (Իս):

ՉԵՎԻ ՊԱՐԱԳԱ

Չևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը:

Չև ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ գործողության արտաքին ու ներքին հատկանիշները:

Չևի պարագան արտահայտվում է ձևի մակբայով, գոյականի գործիական հոլովով, կապական կապակցություններով, սակավ դեպքերում՝ բացառական հոլովով:

Չգուշորեն նստում էր գետնին, կամաց-կամաց այս ու այն կողմ քաշվում (ԿՁ): Նա քայլում էր միաժկուր և դանդաղ (ԿՁ): Մերենագրուտիին տենդագին արագությամբ գրամեքենայի վրա ինչ-որ գրություն էր տպում (ՄԽ): Վիշտը տարել էր համառ համբերությամբ (ՄԽ): Անցյալը երազի նման արթնացավ նրա մեջ (ԲՎ): Միքմրթում էր քքի փակ (ՄԽ): Այդտեղ նա

իրեն զգում էր, ինչպես հարազատ հարկի տակ (ՍԽ): Մազս տակից կտրեմ (ՀՀակ.): Ծառը արմատից պոկեցին:

Միևնույն կապակցությունը կամ հոլովածը կարող է մի դեպքում կատարել ձևի պարագայի, մի այլ դեպքում՝ այլ անդամի պաշտոն, և դա կախված է նրանից, թե տվյալ լրացումը ինչ հարաբերությամբ է կապվում լրացյալի հետ: *Ոմանք փոփել էին գետնին կողքի կամ մեջքի վրա կամ բերանքսիվայր (Իս.): Վերքը սպաքինվելուց հետո սպիներ էին մնացել նրա կողքի և մեջքի վրա:* Միևնույն կապակցությունը առաջին օրինակում ձևի պարագա է, երկրորդ օրինակում՝ տեղի:

Պարագայի բնույթի տեսակետից ուշագրավ է հետևյալ երևույթը: Տվյալ հոլովածի (մասնավորապես գործիականի) վրա հատկանիշ բնորոշող որոշիչ՝ ավելացնելով՝ կարող է կազմվել ձևի պարագա, իսկ առանց այդպիսի որոշիչի՝ տվյալ հոլովածը կարող է ըմբռնվել որպես խնդիր: *Մարիամ Մարին հարազատի հայացքով խոր գննեց պատանյակին (ԳԳ): Այստեղ հարազատի (հարազատական) հայացքով ձևի պարագա է, նշանակում է՝ հարազատաբար, մինչդեռ այդ կամ այդպիսի նախադասության մեջ հայացքով բառածը առանց հիշյալ որոշիչի կարող է ըմբռնվել որպես միջոցի խնդիր: Ասենք՝ նա հայացքով գննեց պատանյակին: Հմնպ. Նա գործիքով գննեց (նայեց) հիվանդին:*

ՉԱՓԻ ՊԱՐԱԳԱ

Չափի պարագան ցույց է տալիս գործողության, եղելության չափը:

Չափի պարագան արտահայտվում է չափի մակբայով, թվականի ու գոյականի կապակցությամբ, մի շարք դերանուններով (**այսքան, այդքան, այնքան, որքան, ինչքան և այլն**):

Օրը բավական սառն էր (Շիրվ.): Բոլորովին հույս չունեի (Շիրվ.): Նա սովորականից ավելի բարի էր (ԱՄ): Բազմիցս գրվել է այդ մասին (ՀՄ): Օձերի հետ գործ ունենալը փոքր-ինչ դժվար է (Բ): Դպրոցական շենքերի վերանորոգումը հիմնականում ավարտվել է (լր.): Օ՛, Մատա՛, որ տեսնեիր՝ ինչքան սարսափելի էր նա այդ րոպեին (ՆԴ): Երկու անգամ կարդաց այդ նամակը:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՁԵՂՉՈՒՄԸ. ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նախադասության անդամները հաճախ զեղչվում են, այսինքն՝ տվյալ կապակցության մեջ հասկանալի անդամները չեն գործածվում: Ձեղչում ունեցող նախադասությունը կոչվում է թերի նախադասություն:

Նախադասության անդամի զեղչման հիմքը նրա հասկանալի լինելն է խոսքի կառուցվածքից, խոսքում մի այլ առիթով հիշատակված լինելուց կամ խոսելու պայմաններից:

Նախադասության անդամների զեղչման չափը տարբեր է լինում. կարող են զեղչվել մեկ անդամի միայն մեկ բաղադրիչը, մեկ անդամն ամբողջությամբ, մեկից ավելի անդամներ:

«Աշոտն ուսանող է, իսկ Արամը՝ աշակերտ» նախադասության մեջ զեղչված է բաղադրյալ ստորոգյալի մեկ բաղադրիչը՝ հանգույցը (է): *«Ես նրան գիրք նվիրեցի, իսկ նա*

ինձ՝ ծաղիկներ» նախադասության մեջ զեղչված է ստորոգյալը (**նվիրեց**): «Արամը շա-
րադասություն գրեց իր սիրելի ուսուցչի մասին, իսկ Աշոտը՝ ճամբարի» նախադասության
մեջ զեղչված է «**շարադրություն գրեց... մասին**» կապակցությունը, այսինքն՝ ստորո-
գյալը, ուղիղ խնդիրը և վերաբերության խնդիրը ձևավորող կապը:

Նախադասության անդամների օրինաչափ զեղչման դեպքում նրա միտքը բնավ
չի խաթարվում, բայց և այնպես ստացվում է ձևականորեն թերի նախադասություն:
«Հր. շա՞տ են տանում» նախադասությունը, որ վերցված է Ա. Բակունցի « Սև ցեղերի
սերմնացանից», որպես մտքի ինքնուրույն միավոր, առանձին վերցրած, թերի է, քա-
նի որ նրա մեջ չեն գործածված որոշ անդամներ՝ ենթական (**ովքե՞ր են տանում**) և ու-
ղիղ խնդիրը (**ի՞նչ են տանում**), թեև բնագրից հասկացվում է, որ ենթական է «իշխա-
նավորները», իսկ խնդիրը՝ (գյուղացիների) «ձիերը»:

Չնայած որ, ինչպես ասվեց, զեղչվել կարող են տարբեր անդամներ, բայց քանի
որ նախադասության (խոսքը վերաբերում է երկկազմ նախադասությանը)՝ որպես
մտքի նվազագույն միավորի, ամբողջության համար անհրաժեշտ են մասնավորա-
պես ենթական և ստորոգյալը, ուստի ամենից առաջ աչքի է ընկնում և սովորաբար
քննվում է դրանց զեղչումը:

ԵՆԹԱԿԱՅԻ ՉԵՂՉՈՒՄԸ

Ենթական կարող է զեղչվել՝

1. երբ նախադասության ստորոգյալն արտահայտված է առաջին դեմքով.

*Սրտապնդված և վճիռովս աշխուժացած՝ երեկոյան գնացի սյարտեզ: Ուրախ-ուրախ
բարևեցի խմբված ընկերներին ու ընկերուհիներին: Անսհիտից ներողություն խնդրեցի ա-
ռանց մնաս բարևի հեռանալու համար: Ասյա զվարթ տրամադրությամբ մասնակցեցի ընդ-
հանուր խոսքին ու կատակին (Իս.):*

2. երբ նախադասության ստորոգյալն արտահայտված է երկրորդ դեմքով.

*Իրար աչքերի մեջ տեսեք ձեր պատկերը և իրար սրտերի մեջ սիրեցեք միմյանց: Աճեցեք
և բազմացեք: Ադամ, ըո բոլոր օրերիդ մեջ հետևիր Լիլիթին (Իս.):*

3. երբ ենթական հայտնի է նախորդ նախադասությունից կամ նախադասություն-
ներից. *Ադամ զամբյուղը լցրած պտուղներով ու ծաղիկներով՝ քայլեց դեպի Լիլիթի տաղա-
վարը և հեռվից ձայնեց Լիլիթին: Պատասխան չտալով: Նորից ձայնեց, նորից ոչ մի պատաս-
խան: Անհամբեր՝ մի քանի անգամ անցավ ու դարձավ աղբյուրի շուրջը, հայացքը մի կողմ
լարած: Լիլիթ չերևաց: Գնաց լճափ, թափառեց սյուրակներում, սրբապետով ամեն թուփ ու մա-
ցառ: Կրկին դարձավ աղբյուրի մոտ (Իս.):*

4. երբ ենթական հասկացվում է խոսելու պայմաններից.

Երկու բարակ ձեռքեր ձգվում են դեպի ինձ և խնդրում.

- Ինձ էլ գրիր:

Նուշիկն է (Բակ.):

Խցի դուռը ճռնչաց.

- Առաքել Էլոյան, դու՛րս արի:

Նույն զինվորներն էին (ՀՔ):

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՁԵՂՉՈՒՄԸ

Նախադասության ստորոգյալը հաճախ զեղչվում է ամբողջությամբ կամ մասամբ: Ձեղչումը լինում է այն դեպքում, երբ ստորոգյալն ամբողջությամբ կամ նրա մի մասը առանց գործածվելու հասկանալի են լինում:

Ստորոգյալն ամբողջությամբ կարող է զեղչվել, եթե նույն ստորոգյալը տվյալ նախադասության մեջ արդեն գործածված է՝ այլ ենթակայի հետ կապված.

1. *Տղայի անունը դրել էր Վարուս, աղջկա անունը՝ Շողակաթ (Իս.):*
2. *Մենք վերադարձանք օդանավով, իսկ նրանք՝ գնացքով:*
3. *Ես գիրք էի կարդում, իսկ նա՝ թերթ:*
4. *Մենք անցյալ տարի հանգստացել ենք Սևանում, այս տարի՝ Վանաձորում:*

Ինչպես երևում է բերված օրինակներից, զեղչման այս դեպքը լինում է այնպիսի նախադասություններում, որոնցում արտահայտված են տարբեր ենթակաների միևնույն գործողությունը կամ հատկանիշը կամ միևնույն ենթակայի՝ տարբեր պարագաներում կատարած միևնույն գործողությունը: Ձեղչված ստորոգյալը արտահայտված ստորոգյալի հետ նույնն է լինում իր նյութական իմաստով (եթե զեղչված է ամբողջությամբ) և սովորաբար՝ քերականական ժամանակով: Դեմքով և թվով նրանք կարող են չհամապատասխանել. զեղչված ստորոգյալի դեմքն ու թիվը հասկացվում են ենթակայից: Այսպես՝ վերը բերված բոլոր օրինակներում զեղչված ստորոգյալը իր նյութական իմաստով ու ժամանակով համապատասխանում է արտահայտված ստորոգյալին: 1-ին նախադասության զեղչված ստորոգյալն է՝ **դրել էր**, 2-րդ նախադասությանը՝ **վերադարձան**, 3-րդինը՝ **կարդում էր**, 4-րդինը՝ **հանգստացել ենք**: Չի կարելի զեղչել ստորոգյալը, օրինակ, հետևյալ նախադասություններում, քանի որ այն արտահայտված է տարբեր ժամանակներով: *Մենք վերադարձանք օդանավով, իսկ նրանք կվերադառնան գնացքով: Մենք անցյալ տարի հանգստացել ենք Սևանում, իսկ այս տարի հանգստանալու ենք Վանաձորում:*

Մակալ ղեպքերում անցյալ անկատարով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասության մեջ կարող է զեղչվել ներկայով արտահայտվելիք ստորոգյալը, մանավանդ եթե ներկան նշող որևէ բառ կա նաև նախադասության մեջ: *Նա քիչ առաջ գիրք էր կարդում, իսկ այժմ՝ թերթ (է կարդում):*

Ասվեց, որ զեղչված ստորոգյալը դեմքով ու թվով կարող է չհամապատասխանել նույն նախադասության մեջ արտահայտված ստորոգյալին: Բերենք օրինակներ. *Մենք թատրոն էինք գնացել, իսկ նա՝ կինո (էր գնացել): Նրանք կեսօրին վերադարձան, իսկ ես՝ երեկոյան (վերադարձա): Պատերը զարդարվեցին գորգերով ու նկարներով, սեղանը՝ զարդարվեց ճերմակ սփռոցով ու ծաղկեփնջերով (ՍԶ):*

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՄԱՍԵՐԻ ՁԵՂՉՈՒՄ ՁԵՂՉՈՒՄԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախադասության մեջ հաճախ են զեղչվում ոչ միայն գլխավոր, այլև երկրորդական անդամները, ինչպես և բարդ նախադասության բաղադրիչ նախադասություն-

ներ: Սովորաբար երկրորդական անդամները զեղչվում են գլխավոր անդամներից մեկի և մասնավորապես ստորոգյալի հետ միասին:

Արանը թվաբանության և հայոց լեզվի դասագրքերը գնել է 1-ին գրախանութից, իսկ Աշոտը՝ 3-րդ գրախանութից: Քեզ այն գիրքն է դուր գալիս, իսկ ինձ՝ այս: Առաջին օրինակում (երկրորդ մասում) զեղչված է «թվաբանության և հայոց լեզվի դասագրքերը գնել է» կապակցությունը, իսկ երկրորդ օրինակում զեղչված են «դուր է գալիս» ստորոգյալը և «գիրքը» ուղիղ խնդիրը:

Այսպիսի զեղչումները լինում են ոչ միայն սովորական պատմողական խոսքում, հեղինակային խոսքում, այլև երկխոսությունների մեջ: Սակայն զեղչումը երկխոսության մեջ հաճախ այնպիսի չափեր և բնույթ է ունենում, որ նախադասությունը չի պահպանում իր կառուցվածքային յուրահատուկ բնույթը.

- Ուրեմն ներու՞մ ես:

- Հանուն մեր երեխաների (ՍԶ):

Բերված օրինակի առաջին նախադասության մեջ առկա է սովորական զեղչում. ենթական զեղչված է, քանի որ ստորոգյալը դրված է երկրորդ դեմքով: Երկրորդ նախադասության մեջ զեղչված են թե՛ ենթական, թե՛ ստորոգյալը, և փաստորեն նախադասությունն արտահայտված է պարագայով:

- Ո՞ր ես գնում, տղա՛, - հարցրեց լրագիր կարդացող մարդը Արշոյին:

- Երևան, - պատասխանեց Արշոն լացակոմած:

- Ինչի՞:

- Գործի (ՍԶ):

Առաջին նախադասության մեջ ունենք սովորական զեղչում, իսկ մյուսներում առկա է մասնավորապես երկխոսությանը հատուկ զեղչում. զեղչված են թե՛ ենթական, թե՛ ստորոգյալը, և կա միայն պարագան: Հետևյալ օրինակում թերի նախադասությունն արտահայտված է միայն ժամանակի պարագայով:

- Բայց, Լիլիթ, հազար ցանկալի Լիլիթ, եթե տեսնեինք իրար, և ե՞րբ...

- Վաղը (Իս):

Երկխոսության մեջ կարող է զեղչվել բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասությունը:

- Ինչո՞ւ ուրեմն հայտնեն նրան, թե ինչ պատճառով կործանման սուրը մերկացրիր:

- Որպեսզի... նա իմանա, թե որ անարգանաց վրեժը լուծեց Ամրանը իրանից (Մուր):

- Որդի՛, ինչո՞ւ այդպես տխուր ես:

- Որովհետև քո վարմունքը ինչ չափից դուրս վրդովել է (Շիրվ):

Երկրորդական նախադասությունը՝ որպես թերի ինքնուրույն նախադասություն, գործածվում է ոչ միայն երկխոսության մեջ, այլև երբեմն հեղինակային խոսքում, ուր գրողը (կամ խոսողը) հոետորական նկատառումով երկրորդական նախադասությունն անջատում է, գործածում առանձին, որով ավելի է շեշտում նրանով արտահայտված միտքը:

Այդպիսի հմուտ գործածություն ունի Ավ. Իսահակյանը.

Երանի նրանց, որ սալն են ծեծում հզոր բազկով:

Երանի նրանց, որ ակոս են քաշում և ցորենն քաղում:

*Երանի նրանց, որ քար են կտրում և տուն շինում,
Երանի նրանց, որ ծառ են տնկում և առու փորում:
Երանի նրանց, որոնք սովորում են և սովորեցնում:
Որովհետև նրանք են շինում մեր նյութական և հոգեկան հացը:
Որովհետև նրանք են կերպում բոլորի համար արդար հայրենիքը:
Որովհետև նրանք են դարբնում մեր վաղն ու իրականը:
Որովհետև նրանք են սրում մեր զենքերը՝ բնության ուժերը ծառայեցնելու և գեպին
դասպալելու գիշարիչ անասունին, որ ոռնում է մեր մեջ:*

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Շարադասությունը նախադասություն կազմող միավորների դասավորությունն է:
Սա վերաբերում է բոլոր տեսակի նախադասությունների իրար հետ կապված բո-
լոր կարգի բաղադրիչ միավորներին:

Դա ցույց տանք մեկ օրինակի վրա. *Հետո իմ աչքի առաջ հառնում է մի հաղթանդամ
սերմնացան, որը մեր սև ցեղերի վրա ցանում է ոսկեհատ սերմեր (Բակ.):*

Այս բարդ նախադասության շարադասությունը քննելիս պետք է նկատի ունենալ
ամենից առաջ նրա անմիջական կազմիչների, այսինքն՝ բաղադրիչ նախադասու-
թյունների շարադասությունը՝ այն, որ ստորադաս նախադասությունը դրված է գե-
րադասից հետո:

Այդ նախադասության շարադասության քննության հաջորդ աստիճանը նրա
կազմիչներից (բաղադրիչ նախադասություններից) յուրաքանչյուրի բաղադրիչների
դասավորության քննությունն է:

Այսպիսով՝ շարադասություն ասելով հասկացվում է՝ ա) բարդ նախադասության
շարադասություն և բ) պարզ նախադասության շարադասություն: Այստեղ մենք հա-
մառոտակի քննում ենք պարզ նախադասության շարադասական համակարգը:

Պարզ նախադասության շարադասությունը նույնպես պետք է քննել ըստ նրա
անմիջական կազմիչների: Վերը բերված բարդ նախադասության առաջին բաղադ-
րիչն է *Հեղո իմ աչքի առաջ հառնում է մի հաղթանդամ սերմնացան*, որը՝ որպես երկ-
կազմ նախադասություն, կազմված է երկու անմիջական կազմիչներից՝ ա) *հեղո իմ
աչքի առաջ հառնում է* և բ) *մի հաղթանդամ սերմնացան*, որոնցից երկրորդը՝ ենթակա-
յի խումբը, ետադաս է առաջինի՝ ստորոգյալի խմբի համեմատությամբ: Այսպես կա-
րելի է մինչև վերջ շարունակել յուրաքանչյուր միավորի անմիջական կազմիչների
շարադասության քննությունը:

Պարզ նախադասության շարադասությունը հաճախ քննվում է առավել պարզ մո-
տեցումով՝ ըստ նախադասության անդամների:

Այստեղ էլ, այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ որոշ աստիճանականու-
թյուն՝ ըստ անմիջական կազմիչների: Ըստ այդմ՝ պետք է նկատի ունենալ՝

Ա. իրար հետ քերականորեն կապված անդամների դիրքը միմյանց նկատմամբ՝ ենթակա
և ստորոգյալ, լրացում և լրացյալ.

Նշված *Հեղո իմ աչքի առաջ հառնում է մի հաղթանդամ սերմնացան* նախադասու-
թյան մեջ, օրինակ, պետք է նկատի ունենալ **հառնում է** ստորոգյալի ու **սերմնացան**

ենթակայի, ինչպես և **աչքի առաջ** լրացման ու **հառնում է** լրացյալի (ստորոգյալի), **իմ** լրացման ու **աչքի առաջ** լրացյալի, **հաղթանդամ** լրացման ու **սերմնացան** լրացյալի և այլ կապակցությունների անդամների դասավորությունը:

Բ. մեկից ավելի անջատ միավորներով արտահայտված անդամի բաղադրիչների դասավորությունը.

Վերևի օրինակում այդպիսիք են՝ **աչքի առաջ, հառնում է**, որոնցից առաջինն արտահայտված է երկու բառերի, երկրորդը՝ ձևակազմիչ դերբայի և օժանդակ բայի կապակցությամբ: Ըստ որում **աչքի առաջ** կապակցության բաղադրիչների դասավորությունը միշտ կայուն է. **առաջ** կապը միշտ հաջորդում է կապվող բառին, իսկ **հառնում է** կապակցության բաղադրիչների շարադասությունը կարող է փոխվել:

Գ. միևնույն լրացյալի ունեցած տարբեր լրացումների դասավորությունը.

Բերված օրինակում **սերմնացան** լրացյալն ունի երկու լրացում՝ **մի** և **հաղթանդամ**, որոնցից **մի**-ն նախորդում է **հաղթանդամ**-ին: Այս դեպքում երկու լրացումների դասավորությունը որոշակի է, կայուն, բայց այլ դեպքերում կարող է այդպես չլինել: Տվյալ կապակցության անդամների շարադասությունը նախադասության մեջ հաճախ փոխհարաբերության մեջ կարող է լինել այլ կապակցության անդամների շարադասության հետ: Մասնավորապես ենթակայի և ստորոգյալի շարադասությունը հաճախ այս կամ այն չափով ազդում է մյուս անդամների շարադասության վրա: Վերը բերված նախադասության մեջ ստորոգյալը ենթակայի համեմատությամբ նախադաս է: Եթե փոխենք դրանց շարադասությունը, ապա համապատասխանաբար կփոխվի դրանց լրացումների տեղը նախադասության մեջ:

Հմմտ. 1. Հետո իմ աչքի առաջ հառնում է մի հաղթանդամ սերմնացան:

2. Մի հաղթանդամ սերմնացան հետո հառնում է իմ աչքի առաջ:

Ինչպես երևում է, 2-րդ օրինակում ենթական նախադաս դարձավ իր լրացումներով հանդերձ, իսկ ստորոգյալը դրվեց ենթակայից հետո իր լրացումների հետ միասին: Ըստ որում, եթե 1-ին օրինակում ստորոգյալի բոլոր լրացումները նախորդում էին նրան, ապա 2-րդ շարադասական տարբերակում լրացումներից մեկը (**հետո**) ընկել է ստորոգյալից առաջ, իսկ մյուսը՝ հետո: Մա բերված օրինակի ստորոգյալի ետադաս գործածության դեպքում լրացումների առավել սովորական դասավորությունն է. հնարավոր են դրանց դասավորության այլ տարբերակներ ևս:

Վերցնենք մեկ այլ օրինակ. **Ճանապարհի երկու եզրին բուսել էին ալպիական մանուշակներ (Բակ.):** Այս նախադասության ստորոգյալի ետադաս գործածության դեպքում նրա լրացումների շարադասությունը նույնպես պետք է փոխվի. այսպես՝ **Ալպիական մանուշակները բուսել էին ճանապարհի երկու եզրին:** Իսկ ենթակայի անորոշ առումը պահպանելու դեպքում նախադասության շարադասությունը կլինի այսպես՝ **Ալպիական մանուշակներ էին բուսել ճանապարհի երկու եզրին:**

Ինչպես երևում է, **ճանապարհի երկու եզրին** կապակցությունը բնագրային օրինակում դրված է **բուսել էին** ստորոգյալից առաջ, իսկ մյուս տարբերակներում (որոնք ստեղծվել են ենթակայի ու ստորոգյալի շարադասությունը փոխելու հետևանքով) ընկել է ստորոգյալից հետո: Նրա նախադաս կիրառությունը կարելի է պահպանել ստորոգյալի բաղադրիչների շարադասության մեջ փոփոխություն կատարելու դեպքում

միայն: Այսպես՝ **Այսօրվա մանուշակները ճանապարհի երկու եզրին էին բուսել**, որտեղ բայ-ստորոգյալի օժանդակ բայը դրվել է նախադաս՝ ի տարբերություն բնագրային օրինակի, որում այն ետադաս է, այսինքն՝ սովորական շարադասությամբ է գործածված:

Այս համառոտ վերլուծումներն իսկ ցույց են տալիս, որ մասնավորապես բազմաբառ նախադասության շարադասությունը մի բարդ համակարգ է ներկայացնում:

Սովորաբար հայերենի շարադասությունը համարում են ազատ: Այսպիսի գնահատությունը պետք է ընդունել զգալի վերապահությամբ: Բանն այն է, որ տարբեր կապակցությունների անդամների շարադասությունը ժամանակակից հայերենում տարբեր վիճակ է ներկայացնում: Շարադասության, այսպես կոչված, ազատության կամ կայունության տեսակետից կարելի է տարբերել կապակցությունների հետևյալ երեք խմբերը՝

- ա) գոյականի¹ և նրա լրացման շարադասություն,
- բ) ենթակայի և ստորոգյալի շարադասություն,
- գ) բայի և նրա լրացման շարադասություն:

Գոյականի և նրա լրացումների շարադասությունը առավել կայունն է հայերենում: Դրա մեջ մտնում են որոշի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի, բացահայտչի և բացահայտյալի կապակցությունները:

Սովորական պատմողական խոսքի մեջ որոշիչը, հատկացուցիչը նախադաս են լինում, բացահայտիչը՝ ետադաս²:

Մրանց տնօրենները՝ Գևորգ Տոնապետյանը և Էդվարդ Էրոյանը, նույնպես եղել էին Հայաստան այցելող ուսուցչական պատվիրակության մեջ (ՄԿ): Մրանց հատկացուցիչը, այցելող, ուսուցչական որոշյալները դրված են և այստեղ կարող էին դրվել միայն նախադաս, իսկ Գևորգ Տոնապետյանը և Էդվարդ Էրոյանը բացահայտիչները ետադաս են, ու այլ կերպ լինել չէր կարող:

Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը չունի նախորդ անդամների դասավորության կայունությունը, թեև սովորական շարադասության դեպքում ենթական նախադաս է լինում: **Տղաները ոգևորվում են, և դասը շարունակվում է նույն թափով (ՄԶ):** Բայց ի տարբերություն նախորդ անդամների (գոյականի և նրա լրացումների) շարադասության՝ այս և նման դեպքերում կարելի է համեմատաբար հեշտությամբ ստորոգյալը գործածել նախադաս. ինչպես՝ **Ոգևորվում են տղաները, և նույն թափով շարունակվում է դասը:**

Ահա այսպիսի շրջուն շարադասության բնագրային օրինակներ. **Շոգից ու հողմածությունից ծանրանում են իմ կոպերը... Հետո սաստիկանում է այդ խշշոցը... Աղմկում են եղեգները... Երևի գետի հունով լեռներից իջնում է սառը հոսանքը (Բակ.):**

Բայի և նրա լրացումների շարադասությունն ավելի ազատ է (թեև ոչ բացարձակ), ըստ որում հաճախ նույնիսկ դժվար է որոշել, թե որն է սովորական շարադասությունը, որը՝ շրջուն: **Հմմտ.՝ Վերադարձան երեկ և երեկ վերադարձան, ծաղիկներ փնջեցին և փնջեցին ծաղիկներ, մոտեցան անտառին և անտառին մոտեցան, մեկնեցին գնացքով և գնացքով մեկնեցին:**

¹ Նկատի ունենք նաև այլ բառերի գոյականաբար գործածություններն ու համապատասխան դերանունները:

² Խոսքը հիմնականում վերաբերում է բուն բացահայտչին և մասնավորող պարագայական բացահայտչին, բացահայտչի և բացահայտյալի շարադասության մանրամասնությունները տես բացահայտչի բաժնում:

Շարադասությունն ունի քերականական ու ոճական կարևոր դեր: Նա նախադասության կառուցվածքի մեջ կարևոր քերականական միջոց է: Նրա ոճական դերը դրսևորվում է հատկապես շրջուն շարադասության դեպքում: Դա է պատճառը, որ այն հանդես է գալիս գեղարվեստական և հատկապես բանաստեղծական խոսքի մեջ:

*Հիշում եմ դեմքը քո ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին,
Լույս խորշումներ ու գծեր, մա՛յր իմ անուշ ու անգին...*

Մտորում ես դու տխուր և օրրում է քրեկին

Տխրությունը քո անծիր, մա՛յր իմ անուշ ու անգին (ԵՉ):

Շրջուն շարադասությունը կարող է ստեղծվել նաև քերականական նպատակով: *Գործար կենսորոնն էր Չանգեգորի ընդարձակ գավառի, որտեղ ապրում էին այլացեղ և այլադավան բազմաթիվ ժողովուրդներ (Քակ.):* **Գավառի** հատկացուցիչը **կենտրոնն** հատկացյալի համեմատությամբ ետադաս է դրված՝ քերականական որոշակի պատճառով՝ այն բանի համար, որ **գավառի** բառին անմիջապես հաջորդի երկրորդական նախադասությունը, որի բովանդակությունը վերաբերում է այդ հատկացուցչին՝ **գավառի**-ին:

Այլ կարգի օրինակ՝ *Նրա հետևից դուրս եկավ նաև Մխոն, որին անվանում են «կես կոիվ», որովհետև նա հանդարտ չի կարողանում խոսել և նույնիսկ, երբ ժողովում խոսք է առնում, նույնիսկ այդ ժամանակ թնդում է նրա ահագնադողոր ջայնը, և թվում է, թե գոռում է մի ամբողջ լեռ (Քակ.):* Այս օրինակում գլխավոր նախադասության ենթական՝ **Մխոն**, ետադաս է, այսինքն՝ ստորոգյալի համեմատությամբ ունի շրջուն շարադասություն: Ոճական նկատառումից բացի՝ այստեղ կա նաև կարևոր քերականական պատճառ. դա այն է, որ ընդգծված ծավալուն կապակցությունը լրացնում է **Մխոն** ենթակային և պետք է անմիջականորեն դրվի նրա մոտ: Ստորոգյալի ետադաս գործածության դեպքում ստորոգյալը պետք է դրվեր նշված ծավալուն կապակցությունից հետո, և դրանով իսկ պիտի կտրվեր այն անմիջական կապը, որ սովորաբար լինում է ենթակայի և ստորոգյալի միջև: Այդպիսի անցանկալի կառուցվածքից խուսափելու և ստորոգյալի ու ենթակայի, ինչպես և որոշիչ-երկրորդական կապակցության ու որոշյալ-ենթակայի անմիջական կապը պահպանելու նպատակով գլխավոր նախադասության ստորոգյալը դրվել է ենթակայից առաջ:

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միակազմ նախադասությունը հակադրվում է երկկազմ նախադասությանը նրանով, որ չունի նրան հատուկ երկբևեռ կամ երկկազմ կառուցվածք. հատկանիշը և վերջինս կրող առարկան միակազմ նախադասության մեջ տարբերակված ձևով չեն արտահայտվում ենթակայի և ստորոգյալի միջոցով: Նախադասության գլխավոր անդամները՝ որպես այդպիսիք, չկան միակազմ նախադասություններում: Այսպիսով՝ միակազմ նախադասության էական հատկանիշն այն է, որ այն կազմված է մեկ մասից, միաբևեռ է:

Այսպես՝ «Մթնեց» նախադասությունն արտահայտված է մեկ բառով, որը միայնակ ամփոփ, հասկանալի միտք է արտահայտում: Մինչդեռ, ասենք, «հայտնեց», «գրեց» ձևերը որպես նախադասություններ ընկալելու դեպքում գիտակցվում են որպես թերի նախադասություններ. դրանցում արտահայտված է ամբողջական նախա-

դասության միայն մեկ մասը՝ ստորոգյալը, իսկ մյուսի՝ ենթակայի բացը զգացվում է, և այն կարող է հասկացվել խոսքից կամ խոսելու պայմաններից: Այդ պատճառով էլ զեղչված ենթակայով նախադասությունը երկկազմ է, բայց թերի, իսկ անենթակա նախադասությունը միակազմ է և լրիվ: Միակազմ նախադասությունը կարող է լինել նաև անդեմ: - **Լռե՛լ, - հրամայեց Ալեքսիանու ավագը (ԳԳ):**

Այս և նման նախադասությունները, կազմված լինելով միայն մեկ մասից, նույնպես ամփոփ միտք են արտահայտում:

Միակազմ նախադասությունները բաժանվում են երկու ենթատեսակների՝ **անդեմ միակազմ նախադասություններ և դիմավոր միակազմ** (կամ անենթակա) **նախադասություններ**: Ինչպես երևում է անվանումներից, այս բաժանման հիմունքը նրանց քերականական կառուցվածքն է և մասնավորապես դեմք ունենալու կամ չունենալու հատկանիշը. դրանք իրար հակադրվում են նրանով, որ անդեմ միակազմ նախադասությունները քերականական դեմք չունեն, իսկ դիմավոր միակազմ նախադասությունները քերականական դեմք ունեն: Այսպես՝ դիմավոր միակազմ նախադասություններ են՝ **Մթնեց: Լուսացավ: Անչրևում է:** Անդեմ միակազմ են՝ **Կովե՛լ և Կեղի՛ չլալ (ԳԳ): Ընդունե՛լ մրցահրավերը (լր.): Պատերազմ: Մարդկանց և արժեքների անհիմաստ ոչնչացում (Ս. Միկոյան):**

Միակազմ և հատկապես անդեմ նախադասության համար կարևոր նշանակություն ունեն խոսքը, խոսելու պայմանները, որոնցում գործածվում է տվյալ նախադասությունը: Նախադասության ինքնուրույնությունը բացարձակ չէ, այլ որոշ չափով հարաբերական: Միակազմ և հատկապես անդեմ նախադասություններին դա վերաբերում է մի փոքր ավելի, քան երկկազմ նախադասություններին:

Այսպես՝ *«Ձգտե՛լ և հասնե՛լ առաջավորներին»* նախադասությունը ամփոփ միտք է արտահայտում: Սակայն ձգտելու և առաջավորներին հասնելու այդ խնդրի վերաբերությունը որոշակիորեն կարող է հասկացվել խոսքից, խոսելու պայմաններից: Այդ նախադասությունը կարող է մի դեպքում վերաբերել հենց իրեն՝ խոսողին, այդ նախադասությունը նաև կարող է մեկը գործածել դիմելով ուրիշներին՝ ետ մնացողներին, իբրև պահանջ, կոչ, և, վերջապես, մի այլ պարագայում այն կարող է վերաբերել թե՛ խոսողին, թե՛ միաժամանակ խոսակիցներին: Եվ դա կարող է պարզվել խոսքից, խոսելու պայմաններից:

Ոչ բոլոր միակազմ նախադասություններն են, որոնց ճիշտ ու որոշակի ըմբռնման համար խոսքը կարևոր դեր է կատարում: Հաճախ միակազմ նախադասության միտքը միանգամայն որոշակի ու ճշգրիտ կերպով հասկացվում է խոսքից դուրս:

Մտքի ինքնուրույն միավոր լինելու և այդ հիման վրա ինքնուրույն գործածվելու տեսակետից զգալի տարբերություն կա անդեմ և դիմավոր միակազմ նախադասությունների միջև: Դիմավոր նախադասություններն ավելի ինքնուրույն են, քան անդեմ նախադասությունները: Այսպես՝ *«Լուսացավ»* նախադասության միտքը միանգամայն հասկանալի է թե՛ խոսքի մեջ և թե՛ նույնիսկ խոսքից դուրս: Մինչդեռ անդեմ նախադասություններն այդպես չեն, պակաս ինքնուրույն են:

Վերցնենք այսպիսի օրինակներ. **պատմե՛լ, պատերազմ, մենակ, անընկեր:**

Այս բառերը բայի, գոյականի կամ ածականի ուղիղ ձևեր են և խոսքից դուրս ար-

տասանվելով՝ դժվար կարող են ըմբռնվել որպես նախադասություններ: Այս բառերի և «մթնեց» բայաձևի միջև այդ տարբերության պատճառն այն է, որ վերջինս բայի դիմավոր ձև է և ունի ինքնուրույն գործածության լրիվ հնարավորություն: Ուրեմն ինքնուրույն գործածության այդ տարբերությունը բխում է նրանց կառուցվածքային ու իմաստային տարբերությունից:

Վերևում բերված բառերը նախադասություն կարող են ձևավորել ավելի շուտ խոսքի մեջ, այլ նախադասությունների հետ ունեցած կապակցության մեջ կամ խոսելու որոշ պայմաններում: **Պապմե՞ր... Բայց որի՞ մասին: Պարզապես անընդգրկելի է այս բաղամասի պատկերը (լր.): Մենակ, անընկեր:** Հսկա բուրի պես ավազե մատներն աչքերիս հատած՝ ոռնում էր քամին (ԵՉ): Աղետ եղավ: **Պապերազն:** Ու ժողովուրդը անտեր գավակներին իր հեռու բշնամու դեմ ուղարկեց (ԵՉ):

Ինքնուրույնության տեսակետից տարբերություն կա բայական և անվանական միակազմ նախադասությունների միջև: Բայական նախադասություններն ավելի ինքնուրույն են, քան անվանականները: Այստեղ վերևում բերված օրինակներից **պատմել** բայը ավելի հեշտ կարող է գործածվել որպես նախադասություն, քան թե **պատերազմ, մենակ, անընկեր** բառերը: Դա գալիս է համապատասխան խոսքի մասերի յուրահատկությունից:

Բայական նախադասության ինքնուրույնության մեջ դեր է կատարում բայի իմաստը՝ գործողության, վիճակի իմաստը, որի հարաբերությունն իրականությանը ավելի հեշտ է նշել և ընկալել, քան թե որևէ առարկայի, հատկանիշի անվան հարաբերությունը: Այնպես որ անենթակա միակազմ նախադասությունները այդ տեսակետից ինքնուրույն են և կարող են մրցել երկկազմ նախադասությունների հետ: Ամեն մի խոսքից դուրս էլ հասկացվում է «Մթնեց», «Լուսացավ», «Անձրևում է» նախադասությունների որոշակի միտքը:

Միակազմ նախադասությունները մեծ մասամբ լինում են առանձին ինքնուրույն նախադասություններ: **Պատրաստ գտնվել պատերազմի, բայց չսխտերազմել (ԴԴ):** Այս նախադասությունն ամբողջությամբ վերցրած մի միակազմ նախադասություն է: Բայց քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ նախադասության մի մասն է միակազմ, իսկ մյուս մասը երկկազմ է: Այսպես՝ «Հեղեղ՞ նրան, ներողություն՞ն խնդրե՛լ, բացապրե՞լ, որ մոլորվեց, կուրացավ (Շիրվ.):

Այստեղ միակազմ են ընդգծվածները, որոնցից վերջինը (**բացապրե՞լ**) կատարում է գլխավոր նախադասության դեր: Համեմատաբար սակավ դեպքերում միակազմ նախադասությունը հանդես է գալիս նաև որպես երկրորդական:

Այն հարցը, թե ինչպես ավելի արագ և ավելի լավ կարարե՞լ այդ պահանջը, քննարկվում էր կիևոյի աշխատողների ժողովում (լր.): Շնորհքն էլ հենց սրա մեջն է, որ էս ժանգոյր երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար (Թում.):

Պատահում է նաև, որ միակազմ նախադասությունը մտնում է այնպիսի համադասական նախադասության կազմի մեջ, որի մյուս նախադասությունը կամ նախադասությունները երկկազմ են: **Չիուն պայտում են, իսկ գորտը ոտն է պարզում (առած):**

Միակազմ նախադասությունն ունենում է մեկ գերադաս կամ գլխավոր անդամ, և, եթե նախադասությունն ընդարձակ է, վերջինս ունենում է իր լրացումը կամ լրացում-

ները: Կառուցվածքի, անդամների տեսակետից տարբեր տեսակի միակազմ նախադասություններ ունեն տարբեր յուրահատկություններ: Այդ յուրահատկությունների մեջ որոշիչ դեր է կատարում այն հանգամանքը, թե գլխավոր անդամն ինչ խոսքի մասով է արտահայտված:

Այսպես՝ «*Ժամանակին կատարել ստանձնած պարտավորությունները*» նախադասության մեջ գլխավոր անդամն է **կատարել**, որը, իհարկե, ո՛չ ենթակա է, ո՛չ ստորոգյալ, բայց իր քերականական դիրքով, հարաբերությամբ գերադաս դերում է մյուսների համեմատությամբ, որոնք լրացնում են նրան: Եվ քանի որ գլխավոր կամ գերադաս անդամը բայով է արտահայտված, այդ պատճառով էլ նա ունի բայական անդամի լրացումներ՝ պարագա, խնդիր: **Ժամանակին** բառը ժամանակի պարագա է, **պարտավորությունները**՝ ուղիղ խնդիր, **ստանձնած** բառը որոշիչ է **պարտավորությունները** բառի համար:

Մի այլ օրինակ՝ *Որտե՞ղ գտնել մի այդպիսի սիրտ (Շիրվ.)*: Այս նախադասության գլխավոր անդամն է **գտնել**-ը, **որտեղ** բառը տեղի պարագա է, **սիրտ**-ը՝ ուղիղ խնդիր, **մի** և **այդպիսի** բառերը՝ որոշիչ:

Ծանոթանանք անվանական նախադասության կառուցվածքին:

«*Գյուղի հրապարակը և Նավասարդի տան պատշգամբի մի մասը*» նախադասության մեջ (որ վերցված է թատերական պատկերի նկարագրությունից) գլխավոր անդամներն են **հրապարակը** և **մասը** (կարելի է գլխավոր անդամ համարել նաև **մի մասը** կապակցությունը): **Գյուղի** բառը հատկացուցիչ է **հրապարակը** բառի համար: Հատկացուցիչներ են նաև **Նավասարդի, տան, պատշգամբի** բառերը: **Մասը** բառը առանձին գլխավոր անդամ համարելու դեպքում **մի**-ն կլինի որոշիչ նրա համար:

Լինում են անվանական նախադասություններ, որոնցում գոյականով արտահայտված գլխավոր անդամն ունենում է նաև ստորոգյալին հատուկ լրացում և հատկապես տեղի պարագա, որը ցույց է տալիս գլխավոր անդամով արտահայտված առարկայի գտնված տեղը: *Սեղանի քով՝ պարի կողմում, մի մեծ բազկաթոռ, մյուս կողմում մի հասարակ աթոռ: Խորքի պարի մեջ երկու դռներ (Շիրվ.): Բենի խորքում՝ աջ լուսամտուրի առջև, դաշնամուր, ձախ լուսամտուրի առջև մի կլոր սեղան, վրան վայրի ծաղիկների մի փունջ (Շիրվ.): Խորքում՝ ընդհանուր ֆոնի վրա, գյուղի տեսարան՝ հողե կտուրներով մի հարկանի տներ, խոտի, աթարի դեզեր և այլն (Ա.Վարդանյան):*

Միակազմ նախադասությունների կառուցվածքային առանձին հատկանիշները պայմանավորված են նրանց ընդհանուր բնույթով և գերադաս անդամի խոսքիմասային պատկանելությամբ:

ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Դիմավոր միակազմ նախադասությունը հայերենի գործող դասագրքերում հայտնի է «անենթակա նախադասություն» անունով: Այդ անվանումը, որը համապատասխան գնահատության արտահայտություն է և բխում է այդպիսի նախադասությունները զեղչված ենթակայով նախադասությանը հակադրելուց, այդ առումով կարող է արդարացվել: Բայց հարցի ներկա դրվածքով, ըստ որի՝ անենթակա և անդեմ նա-

խաղասութիւնները՝ որպէս միակազմ նախաղասութիւններ, բնորոշվում են մեկ ընդհանուր հատկանշով (միակազմ կառուցվածքով) և դրանով տարբերվում են երկկազմից, «անենթակա» կոչվող նախաղասութեան բնորոշ հատկանիշը պետք է որոշել՝ ի հակադրութիւն անդեմ նախաղասութեան: Իսկ այդ հակադրութեան մեջ այն կարող է բնորոշվել դիմավոր լինելու հատկանշով: Օրինակ՝ «Անձրևում է» դիմավոր միակազմ է, իսկ «Լռելի»՝ անդեմ միակազմ: Այս հակադրութեան մեջ «Անձրևում է» նախաղասութիւնը հարմար չէ համարել անենթակա, որովհետև այն, ինչին հակադրվում է («Լռելի»), նույնպէս ենթակա չունի, անենթակա է: Ուրեմն քննարկվող նախաղասութիւնը «անենթակա» կամ «դիմավոր միակազմ» համարելու հարցը սոսկ տերմինի հարց չէ, այլ ամենից առաջ քերականական իրողութեան ճանաչման ու գնահատման հարց: Լեզվաբանութեան մեջ տերմինների փոփոխումը չի խրախուսվում, և դա առհասարակ ճիշտ է ու պատճառաբանված: Դա պատճառաբանված է հատկապէս այնպիսի տերմինների վերաբերմամբ, որոնք դարերի կյանք ունեն, իրենց ստուգաբանական իմաստով վաղուց չեն համապատասխանում տվյալ քերականական իրականութեանը և պարզապէս դարձել են պայմանական անուններ. ինչպէս՝ նախաղասութիւն, ենթակա, ստորոգյալ, դերբայ և այլն: Սակայն կան տերմիններ, որոնք այսօր իսկ բնութագրող, նկարագրող արժեք ունեն տվյալ երևոյթի համար: Ասենք՝ «պարզ բառ», «բարդ բառ», «անենթակա նախաղասութիւն» և այլն, որոնց տակ չի կարելի այլ բան հասկանալ, քան այն, ինչ որ արտահայտվում է տվյալ անունով: Նման դեպքերում անվան ճշտումը ցանկալի է և անհրաժեշտ, մանավանդ եթէ այն համեմատաբար նոր է: Քննարկվող նախաղասութիւնները դիմավոր համարելով՝ նկատի ունենք բայական դեմքի կարգի առկայութիւնը նրանցում սոսկ ձևական-քերականական իմաստով: Այդպիսի անվանմանը չի հակասում այն իրողութիւնը, որ դիմավոր միակազմ նախաղասութիւնները սովորաբար միայն մեկ դեմքով են արտահայտվում (գերազանցապէս՝ 3-րդ, որոշ դեպքերում՝ 2-րդ), և որ այդ դեմքը չի մասնավորվում այս կամ այն առարկայի վրա, հաճախ մնում է անորոշ կամ ընդհանրական արժեք ունի: Կարևորը դեմքի ձևային արտահայտութիւնն է տվյալ դեպքում:

Դիմավոր միակազմ նախաղասութիւնների դիմային իմաստը վերաբերութեան տեսակետից տարբեր է լինում: Համեմատենք հետևյալ օրինակները. **Մթնեց: Ասում են, թէ կար ժամանակ, շատ առաջ երկրի վրա գտնու ոչխար չկային (Իս.) Մարդուն ընկերով են ճանաչում (առած):** **Մթնեց**-ը ցույց է տալիս ինքնին եղող երևոյթ, որը ո՛չ քերականորեն, ո՛չ էլ իրականութեան մեջ չի կապվում որևէ դեմքի հետ՝ իբրև կատարողի, եղողի: Ուստի այս և նման նախաղասութիւնների մեջ դեմքի հատկանիշը սոսկ ձևական հատկանիշ է: Այս բայերի և համապատասխան նախաղասութիւնների դիմային արժեքի գնահատման տեսակետից ուշագրավ է այն երևոյթը, որ ոմանք դրանք համարում են անդեմ նախաղասութիւն¹: Սակայն դա ճիշտ չէ: Երբեմն այդպիսի անճշտութեան հետևանքով ստացվում են այսպիսի անհարմար ձևակերպումներ. «Անդեմ նախաղասութեան գլխավոր անդամը արտահայտվում է անդեմ բայի եզակի 3-րդ դեմքով²» (ընդգծումները իմն են - Ս.Ա.): Բայի դեմքը քերականական հատ-

¹ Տե՛ս, օրինակ, Грамматика русского языка, т. II, ч. II, 1954, стр. 13.

² Նույն տեղում:

կանիչ է, իսկ քերականական տեսակետից **մթնեց, անձրևում է, լուսացավ** բայերն ունեն երրորդ դեմք. այլ բան է, որ այդ դեմքը ձևական է. դա էլ հենց նրա յուրահատկությունն է:

Այս տեսակետից այլ է «Ասում են» նախադասությունը, որը թեև ենթակա չունի, բայց, համեմայն դեպս, ունի դիմային անորոշ վերաբերություն: Նրանով արտահայտված գործողությունը ինքնին եղող չէ, ի տարբերություն նախորդ՝ նրա կատարումը իրականության մեջ կապվում է սուբյեկտի հետ, միայն թե քերականորեն այն արտահայտված է անորոշ կերպով, առանց որոշակի մասնավորման:

Վերը բերված օրինակներից վերջինը՝ «Մարդուն ընկերով են ճանաչում», դիմային վերաբերության տեսակետից բնորոշվում է ընդհանրական հատկանշով, քանի որ նրանով արտահայտված գործողությունը վերաբերում է ընդհանուրին, բոլորին. այն մարդկային հարաբերությունների փորձի հիման վրա կատարված ընդհանրացում է:

Այսպիսով՝ դիմավոր միակազմ նախադասությունները, ըստ դիմային իմաստի յուրահատկության, լինում են երեք տեսակ՝

- 1) ձևական դիմավոր միակազմ նախադասություն.
- 2) անորոշ դիմավոր միակազմ նախադասություն.
- 3) ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություն:

Նախքան այս տեսակներն առանձին-առանձին քննելը՝ համառոտակի կանգ առնենք դիմավոր միակազմ նախադասությունների կառուցվածքին վերաբերող մեկ հարցի վրա ևս:

Դիմավոր միակազմ նախադասությունները գերազանցապես պարզ են: Ըստ որում պարզ նախադասությունները լինում են համառոտ և ընդարձակ: **Համառոտ կոչվում է այն միակազմ նախադասությունը, որը կազմված է միայն գերադաս անդամից, ինչպես՝ «Մթնեց», «Լուսացավ», «Անձրևում է»: Եթե գլխավոր անդամն ունենում է լրացում կամ լրացումներ, այդպիսի նախադասությունը պարզ ընդարձակ նախադասություն է:**

Կարծես թե այսօր շուտ մթնեց: Երեկ անընդհատ անձրևում էր:

Բարդ միակազմ նախադասությունները քիչ են. *Ասում են՝ հացը պետք է էժանացնեն (Ար.):*

Համեմատաբար տարածված են միակազմ միավորյալ նախադասությունները: *Իմաստունի հետ քար քաշի՛ր, հիմարի հետ փլավ մի՛ ուտի (առած):*

Առաջ կե՛ր, վերջը գոհացի՛ր (առած):

Հաճախ դիմավոր միակազմ նախադասությունը երկկազմ նախադասության հետ միասին հանդես է գալիս միևնույն նախադասության մեջ, ձևավորում մեկ բարդ նախադասություն:

Այսպես՝ մեկ բարդ համադասական նախադասությունը կարող է կազմված լինել միակազմ և երկկազմ նախադասություններից: *Աշուն է արդեն, և ձյունը նորից ծածկել է լանջերը սեզ Արարատի (Իս.):* Միակազմ և երկկազմ նախադասությունները կարող են միաժամանակ հանդես գալ բարդ ստորադասական նախադասության կազմում, որի գլխավոր նախադասությունը կարող է լինել միակազմ, իսկ երկրորդականը՝ երկկազմ, կամ հակառակը: *Մթնեց, երբ նրանք մոտեցան ամրոցին (ԳԳ):* *Երեկո էր արդեն, երբ նա հողմած գիրքը դրեց մի կողմ (ԵԶ):* *Մութն էր, երբ Սիմոնը տուն եկավ (Բակ.):* *Մենք կարծեցինք, թե արդեն լուսացել է:*

Միակազմ դիմավոր նախադասությունները սովորաբար ճանաչվում են հեշտությամբ: Սակայն երբեմն նրանք խոսքից դուրս կարող են շփոթվել երկկազմ նախադասությունների հետ. միևնույն նախադասությունը տարբեր կապակցություններում կարող է գործածվել որպես և՛ միակազմ, և՛ երկկազմ նախադասություն: Իհարկե, նման դեպքերում յուրաքանչյուր նախադասությունը պետք է դիտել որպես տարբեր նախադասություն և ոչ թե միևնույն նախադասության տարբեր կիրառություն:

Այսպես՝ «*Էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար*» նախադասությունը Հ. Թումանյանը հետևյալ հատվածում գործածում է որպես միակազմ նախադասություն:

- *Հապա ինչպե՞ս է, որ մի կարգին թոր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել:*

- *Շնորհքն էլ հենց դրա մեջ է, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար, թե չէ լավ բրով ի՞նչ կա որ, սովորական քաջերն էլ են ջարդում (Թում):*

Սակայն այլ կապակցության մեջ այն կարող է հանդես գալ որպես երկկազմ նախադասություն: Ասենք՝ «*Կզնաս և էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար*» կամ «*Երևի ուզում ես, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար*» և այլն:

Վերջին նախադասություններում գործողությունը մասնավորվում է երկրորդ դեմքի վրա, և հասկացվում է, որ ենթական դու-ն է, որը պարզապես զեղչված է:

Այսպիսի շփոթությունների, ավելի ճիշտ զուգադիպությունների հնարավորությունները շատ չեն, բայց, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նկատի ունենալ դրանց հնարավորությունը:

ՉԵՎԱԿԱՆ ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Չևական դիմավոր միակազմ նախադասությունը բնորոշվում է նրանով, որ նրանում դեմքը դիմային վերաբերության տեսակետից ձևական է, և նրանով արտահայտված երևույթը, գործողությունը դիմային տեսակետից որևէ ձևով չի կապվում եղողի, կատարողի հետ:

Ըստ գլխավոր անդամի արտահայտության՝ ձևական դիմավոր նախադասությունները լինում են **բայական** և **անվանական**:

Բայական է այն ձևական դիմավոր նախադասությունը, որը կամ որի գլխավոր անդամն արտահայտվում է բայի դիմավոր ձևով: *Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով մի քանի կոճղեր դրեց կրակին (Թում): Արդեն կամաց-կամաց լուսանում է: Մուրն ընկավ: Լուսացավ: Մեր սարերում սեպտեմբերին սկսում է ցրտել:*

Անվանական է այն ձևական դիմավոր նախադասությունը, որը կամ որի գլխավոր անդամն արտահայտվում է անվանական բաղադրիչով և հանգույցով: *Ամառ է, քննությունները վերջացել են (Մուր): Իրիկնադեմ էր: Հյուրատան դուռը կանգնեց մի երիտասարդ հեծյալ (ԳԳ): Մուր էր դրսում (Բ):*

Ըստ արտահայտած բովանդակության և կիրառության ոլորտի՝ ձևական դիմավոր միակազմ նախադասությունները կարելի է բաժանել հետևյալ տեսակների.

1. բնության երևույթներ արտահայտող նախադասություններ.

Անչրևում է: Գրսում ուժեղ քամի է: Արդեն լեռներում չյունել է: Լուսանում է, - հանկարծ շճնջաց Արտակը (ԳԳ): Մթնեց: Անտառի խորքում մի թռչուն սկսեց տխուր կանչել: Մասրիկ

մութ էր: Չէր երևում ոչ մի աստղ (**ՔԹ**): **Յեխ է հիմա, առանց կոշիկ նա ո՞ր գնա (ՍԿ):**

Ինչպես դիմավոր միակազմ նախադասությունների մյուս տեսակների, նույնպես և այս նախադասությունների էության տեսակետից հետաքրքրական ու կարևոր է նրանց՝ ենթակա շունենալու պատճառի հարցը: Լեզվաբանության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե այսպիսի նախադասությունները հնից են գալիս և արտացոլում են մարդու նախնական մտածողության տարրերը այն իմաստով, որ մարդ, դիտելով բնության այդ երևույթները և չիմանալով դրանց պատճառը, այսինքն՝ թե ո՞վ կամ ի՞նչն է գործողության կատարողը, այդպիսի նախադասությունները կազմել է անենթակա ձևով, որոնք և այժմ մնում են որպես այդպիսին: Օրինակ՝ Ն. Մառը գտնում էր, որ այդպիսի անենթակա նախադասությունների և միադիմի բայերի գործողության կատարողը չիմանալու պատճառով հնում մարդը այն վերագրել է, այսպես կոչված, «տոտեմին», որ իր արտահայտությունը այժմ էլ, ըստ Ն. Մառի, պահպանում է այնպիսի լեզվական ձևի մեջ, ինչպիսին է es regnet: Առհասարակ հնարավոր է, որ մարդու նախնական մտածողությունն իր հետքը թողած լինի քերականական այս կամ այն կարգի վրա, և այդ հետքը պահպանվի մինչև այժմ: Արդ, եթե խոր անցյալում բնության այդ երևույթների պատճառը չիմանալու հետևանքով իբր ստեղծվել են այնպիսի անենթակա նախադասություններ, ապա այժմ, երբ հասկանալի են այդ բոլոր երևույթները, դրանց պատճառները, կարելի՞ է պատկերացնել լեզվական այլ, ավելի հարմար ձև այդ նույն երևույթներն արտահայտելու համար: Ո՛չ: Բանն այն է, որ լուսանալու, մթնելու և նման երևույթները իրենց էությամբ այնպիսի բնությունն են, որ անցյալում չէր կարող լինել և այժմ էլ չկա որևէ անհրաժեշտություն դրանք որևէ առարկայի վերագրելու համար: Այդ երևույթների բնույթն այնպիսին է, որ մարդ պարզապես կարիք է զգացել և այժմ էլ կարիք է զգում դրանք արտահայտել իբրև ինքնակա երևույթներ և այդպես էլ արտահայտվում են: Հենց դա է պատճառը, որ բնության այդպիսի երևույթները անենթակա նախադասություններով են արտահայտվում ոչ միայն հայերենում, այլև ուրիշ լեզուներում:

Վերոհիշյալ երևույթները կարող են արտահայտվել նաև հարադիր բայերով, ինչպես՝ **մութն ընկավ, լույսը բացվեց** և այլն, սակայն պետք է նկատի ունենալ, որ «մութն ընկավ» տեսակի հարադրությունները, թեև ձևով ենթակայի և ստորոգյալի կապակցություններ են, բայց, ըստ էության, դրանք լինելով մեկ հարադրական բայ, առանձին գործածվելիս անենթակա նախադասության արժեք ունեն: Չի կարելի ասել՝ ի՞նչը ընկավ և պատասխանել՝ մութը, մութը ի՞նչ արեց՝ ընկավ:

2. Ժամանակ արտահայտող նախադասություններ. Կեսօր էր: Մերուժանի ընդարձակ. երկնագույն վրանում արդեն հավաքված էին հյուրերը (Ք): Ուշ երեկո է (ՍԽ): Առավուր էր: Հայ նախարարները նստած էին Սրվանձառյա իշխանի վրանում (ԳԳ): Օգոստոսի կեսին սարերում արդեն աշուն է (Լեռ): Ամառ է: Մեր ամբողջ գյուղը գտնվում է կալերում (Լեռ):

3. հասարակական, անհատական և այլ կարգի երևույթների ինքնին առկա լինելն արտահայտող նախադասություններ. Փողոցում խաղաղություն է (Քակ.): Իսկ գյուղում այդ ժամանակ իրարանցնում էր (Քակ.): Ծանր օրեր էին Իվան քեյի համար (Քակ.): Տոնականորեն զարդարված փողոցում մարդկանց հոժ բազմություն է (լր):

ԱՆՈՐՈՇ ԴԻՄԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս նախադասությունների դիմային վերաբերության իմաստն անորոշ է: Անորոշությունը ոչ միայն այն իմաստով է, որ չի արտահայտվում, թե հատկապես ով է գործողություն կատարողը, այլև այն իմաստով, որ հաճախ հայտնի չէ՝ գործողություն կատարողը մե՞կն է, թե՞ մի քանիսը: Այսպես՝ «*Նրան կանչեցին քաղաքապետարանից*» նախադասության մեջ ոչ միայն հայտնի չէ, թե ով է կանչել, այլև հայտնի չէ, թե քանի՞ հոգի են կանչել նրան: Ըստ որում հաճախ է պատահում, որ գործողություն կատարողը մեկ անձ է, բայց որովհետև հայտնի չէ, թե ով է, կամ կարևորություն չի տրվում, թե ով է, բայց գործածվում է հոգնակի թվով, որ անորոշություն արտահայտելու համար լավագույն քերականական միջոց է:

«*Չանգ տվեցին: Քեզ հեռախոսով կանչում են*» (երբ մեկն է կանչում): Եթե ասվի «*Քեզ հեռախոսով կանչում է*», ապա այս նախադասությունը կհասկացվի իբրև զեղչված ենթակայով նախադասություն, և կստեղծվի այն տպավորությունը, որ հայտնի է, թե ով է կանչողը:

Անորոշ դիմավոր նախադասությունները կամ նրանց գլխավոր անդամը արտահայտվում են քայի հետևյալ խոնարհված ձևերով՝

Ա. սահմանական եղանակի անցյալ կատարյալի հոգնակի երրորդ դեմքով.

*Յարիս փարան, ջանիս փարան,
Հոնգուր-հոնգուր կուլամ ես (Իս.):
Միրեցի, յարս փարան,
Յարա փվին ու փարան.
- Էս ինչ գուլում աշխարի է,
Միրտս պոկեցին փարան (Իս.):
Ինչո՞ւ քերեցին այս թերթն այսօր ինձ,
Ինչո՞ւ հուզեցին հոգին իմ խաղաղ,
Ինչո՞ւ ուզեցին, որ վիշտ ու թախիծ
Այս ահեղ ժամին սրտիս հետ խաղան (Ղ. Կոմունի):*

Բ. սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքով.

*Ասում են, թե դու այնպես,
Մոռացել ես ինձ այնպես,
Որ երբ անունս են տալիս,
Հազիվ միտդ եմ գալիս (Իս.):*

Ասում են, թե կար ժամանակ, շատ առաջ երկրի վրա գառ ու ոչխար չկային (Իս.): Այժմար, քեզ հայերեն ասում են՝ չկա՛, չկա՛, քեռի Խեչան (Թում.):

Գ. սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի երկրորդ դեմքով.

Միտք ես անում, միտք, մեր էս աշխարհի բանը՝ ճարում ես, տրարվում, թե ախար էս բանը ո՞նց է լինում: Չեմ իմանում, բախտ է, էլի (Գ.Գ.):

Դ. սահմանական եղանակի վաղակատար ժամանակի հոգնակի երրորդ դեմքով.

*Հիմի Մուկուչին բանվոր են ընդունել (Ար.):
- Ընկեր Ջամայան, այդ ո՞ր, - հարցրեց նա:
- Կենտկոմ են կանչել, շտապում են (ՔԹ):*

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳԻՄԱՎՈՐ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ

Այս միակազմ նախադասությունները, թեև արտահայտվում են բայի որևէ դեմքով, բայց չեն վերաբերում միայն տվյալ դեմքին, այլ վերաբերում են բոլորին, ունեն ընդհանրական իմաստ:

Այս նախադասություններով արտահայտված գործողությունները ընդհանրապես կատարվում են, խորհուրդ է տրվում կատարել այնպես, ինչպես որ ասվում է տվյալ նախադասության մեջ: Այս խմբի նախադասությունները մեծ մասամբ առածներ են կամ իրենց նշանակությամբ մոտենում են առածներին:

Ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունները կամ նրանց գլխավոր անդամը արտահայտվում են՝

Ա. ենթադրական եղանակի հոգնակի երրորդ դեմքով.

Ճուկը պոչից չեն բռնի, գլխից կբռնեն (ՎԱ): Մարդուն ընկերով կճանաչեն (առած): Արյունը արյունով չեն լվանա (առած): Շիտակ խոսքը հանաքով կասեն (առած): - Ես ... մնում եմ... հյուր եմ: - Այդքան ժամանակ հյո՞ւր կլինեն (Շիրվ.): Պտղատու ծառին շատ քար կգցեն (Թում.): Հին դարմանը քամուն չեն փա (առած): Մի ձեռքով երկու ձմերուկ չեն բռնի (առած):

Այս նախադասությունների միջև կան իմաստային տարբերություններ: Նախ՝ էական տարբերություն կա պատմողական և հարցական բնույթի նախադասությունների միջև: Եթե պատմողական բնույթի նախադասությունը այս կամ այն բանի, երևույթի հաստատումն է արտահայտում, ապա հարցական նախադասությունը ժխտական իմաստով է գործածվում: Այսպես՝ «Ճուկը պոչից չեն բռնի, գլխից կբռնեն» նախադասությամբ հաստատվում է այն միտքը, որ ձուկը պոչից չեն բռնում, այլ բռնում են գլխից, և միաժամանակ, որ ձուկը պետք է բռնել ոչ թե պոչից, այլ գլխից: «Այդքան ժամանակ հյո՞ւր կլինեն» նախադասությունը, որը հարցական բնույթի է, հարցում չի արտահայտում, այլ նշանակում է «այդքան ժամանակ հյուր չպետք է լինել», «այդքան ժամանակ չի կարելի հյուրընկալության մեջ լինել»:

Տարբերություն կա նաև պատմողական բնույթի նախադասությունների միջև: Ի տարբերություն վերևի օրինակների առաջին նախադասության, որը գործողության և՛ հաստատումն է արտահայտում, և՛ անհրաժեշտությունը, «Պտղատու ծառին շատ քար կգցեն» նախադասությունը արտահայտված երևույթի միայն հաստատման իմաստով է գործածվում: Այս նախադասության մեջ չկա անհրաժեշտության իմաստ:

Բ. սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքով.

Մարդուն ընկերով են ճանաչում (առած): Գայլին սապկեցնում են ոչ թե նրա համար, որ նա ունի գորշ ազի, այլ նրա համար, որ կերել է մաքի (առած):

Այսպիսի նախադասություններն իրենց նշանակությամբ ու կիրառությամբ նման են Ա կետում նշված կառուցվածքային առանձնահատկությունն ունեցող նախադասություններին:

Գ. հրամայական եղանակի եզակի թվով.

Այսպիսի նախադասությունները սովորաբար արտահայտում են խորհուրդ՝ ընդհանրական նշանակությամբ, այսինքն՝ ուղղված բոլորին և ոչ միայն հատկապես երկրորդ դեմքին.

Խարխուլ մակույկով հանչնվի՞ր ծովին, քան թե հավաքա՛ կնոջ երդումին (Իս.): Առաջ կե՛ր, վերջը գոհացի՛ր (առած): Շան հետ ընկերացի՛ր, փետը ձեռքիցդ մի՛ գցի (առած): Տարը չափիր, մեկ կտրի՛ր (առած): Բարեկամի հետ կերուխո՛ւմ արա, առ ու փուր մի՛ անի (առած): Ամառվա անձրևին, ձմեռվա արևին մի՛ հավաքա (առած):

Դ. ըձական եղանակի եզակի երկրորդ դեմքով.

Որտեղ որ գնաս, էն երկրի գրակը ծածկիր (առած):

Ե. սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով.

Հարուստի հագին շոր փեսան, ասին շնորհավոր, աղքատի հագին փեսան, հարցրին՝ որտեղի՞ց է (առած):

Չ. չեզոք սեռի բայից կազմված կրավորականով.

Այստեղ չի նստվում: Նրա հետ չի խոսվում (շատ վրդովված է): Մեր հեռախոսով չի խոսվում (փշագած է): Այս գետում չի լողացվում (ջուրը շատ սառն է): Այսպիսի նախադասությունները, որոնք շատ տարածված չեն, արտահայտում են տվյալ գործողության կատարման հնարավորությունը կամ անհնարիությունը:

Ինչո՞ւ չեզոք բայերի կրավորականներով անենթակա նախադասություններ են կազմվում, և ինչո՞ւ այդպիսի կազմությունները շատ տարածված չեն: Կրավորական բայերը, որպես կանոն, կազմվում են ներգործականից, և նախադասության ներգործական կառուցվածքը կրավորականի վերածվելիս ներգործական կառուցվածքի ենթական վերանում է, բայց նախադասությունը այլ ենթակա է ձեռք բերում հանձին ներգործական բայի ուղիղ խնդրի: Այսպես՝ *Ես լսում եմ նրա ձայնը: Լսվում է նրա ձայնը:* Առաջին նախադասության **ես** ենթական վերացավ, բայց դրա փոխարեն **ձայնը** ուղիղ խնդիրը երկրորդ նախադասության մեջ դարձավ ենթակա:

Վերցնենք չեզոք սեռի բայի օրինակ: *Մենք միշտ այստեղ ենք նստում:* Բայց՝ *Այժմ այստեղ չի նստվում՝ Մենք* ենթական վերացավ, բայց դրա փոխարեն այլ ենթակա հանդես չի գալիս բայի սեռի (չեզոք) պատճառով: Այսպիսով՝ ստացվում է դիմավոր նախադասություն, որը ենթակա չունենալու և այն վերականգնելու անհնարիության պատճառով հանդիսանում է դիմավոր միակազմ նախադասություն:

Ինչ վերաբերում է այդպիսի նախադասությունների սակավ գործածությանը, ապա դա այն պատճառով է, որ չեզոք սեռի քիչ բայեր կարող են գործածվել կրավորաձև:

Սակավ դեպքերում այս նպատակով գործածվում են ներգործական սեռից կազմված կրավորականներ: *Այս գրիչով չի գրվում:*

Պատահում է նաև, որ բայի խոնարհման տարբեր ձևերը միաժամանակ գործածվում են միևնույն միակազմ դիմավոր նախադասության մեջ: Դա վերաբերում է հատկապես բարդ նախադասություններին:

Նրա հայացքից, հետո խոսակցության տոնից այնպիսի մի բան ես զգում, որ կարծես թե խտրվում եմ կռներիդ տակ. համ ախորժեղի է, համ անախորժ, համ ծիծաղում ես, համ գայրանում, բայց ընդհանրապես գժի պես ուրախ ես զգում քեզ (ՆԳ): Ինչքան որ գիտուն լինես, չիմացածդ մի անգետից հարցրու: Վարը նստիր, վերևը քեզ փեղ կտրան: Շատ գիտես, քիչ խոսիր: Շատ փեսանում ես, քիչ ասա: Մտնելուց առաջ միտք արա, թե ինչպես դուրս գաա:

¹Այստեղ ամբողջ նախադասության լիակատար շրջում հնարավոր չէ, որովհետև նստել բայը չեզոք է, և նախադասությունը ներգործական կառուցվածք չունի:

ԱՆՂԵՄ ՆԱԽԱՊԱՍՈՒԹՅՈՒՆ

Անդեմ կոչվում է այն միակազմ նախադասությունը, որը չունի քերականական դեմք:

Սա նշանակում է, որ նրա կազմությանը չեն մասնակցում բայի դիմավոր ձևերը, այդ թվում նաև օժանդակ բայը կամ հանգույցը:

Անդեմ նախադասության՝ դեմք չունենալու առանձնահատկությունը բնականաբար որոշ դժվարություն ստեղծում է նրա որպես մտքի միավորի, ըմբռնման և գործածության հարցում: Այդ պատճառով նրա էության դրսևորման ու ճանաչման հարցում առանձնապես էական դեր են կատարում հնչերանգային ավարտվածությունը և խոսքը:

Անդեմ նախադասություններն իրենց կազմությամբ միատեսակ չեն: Նայած թե անդեմ նախադասության գլխավոր անդամը ինչ խոսքի մասով է արտահայտվում, ըստ այդմ՝ այն կոչվում է **բայական** կամ **անվանական**: Երբ այդպիսի նախադասության գլխավոր անդամն արտահայտվում է բայով, նախադասությունը կոչվում է **բայական**, իսկ եթե գլխավոր անդամն արտահայտվում է անունով (գերազանցապես գոյականով), կոչվում է **անվանական**:

Այսպես՝ բայական նախադասություններ են՝ *Հանգստացնել գյուղը (ԳԳ): Բարձրացնել աշխատանքային կարգապահությունը: Իսկ ինչպե՞ս վարվել: Ինչպե՞ս լուծել այդ դժվարին խնդիրը (լր):* Այսպիսի նախադասությունների գերադաս անդամը սովորաբար արտահայտվում է անորոշ դերբայով:

Անվանական նախադասությունների օրինակներ՝

Հոկտեմբերյան քաղաք: Ապրիլյան ջինջ առավուր: Երկնքի լազուրում՝ կայարանի վրա թևատարած ճախրում են գարնան հետ իրենց բույնը վերադարձած արագիլները (լր): Կարմիր բանակ: Հորդել են հեղեղները սև: Անսահման դաշտերի վրա շաշում են քո թևերը լուսե: Կայարան: Չորքեր: Չինվորներ կարմիր: Գիշեր (ԵՉ):

Անդեմ նախադասության գլխավոր անդամի այդպիսի տարբերությունն իրենով պայմանավորում է նաև լրացումների բնույթի տարբերություններ, քանի որ բայը այլ լրացումներ է պահանջում, գոյականը՝ այլ: Դա որոշակիորեն երևում է հենց վերևի օրինակներում: Բայական նախադասության մեջ գլխավոր անդամի լրացումներն են խնդիրներն ու պարագաները, իսկ անվանական նախադասության լրացումները ուրոշիչ են: Սա նշանակում է, որ անդեմ նախադասությունների գերադաս անդամի՝ բայով թե անունով արտահայտված լինելը մասնավոր հատկանիշ չէ, այլ ընդհանուր կառուցվածքային հատկանիշ:

Այդ կառուցվածքային հատկանիշն էլ պայմանավորում է երկու տեսակի նախադասությունների ընդհանուր իմաստային հատկանիշներ:

Բայական միակազմ նախադասությամբ արտահայտվում է գործողության կատարված լինելը, կատարելու անհրաժեշտությունը, հարցում, հրաման կատարելու մասին և այլն, իսկ անվանական նախադասությամբ արտահայտվում է առարկայի, երբեմն էլ հատկանշի գոյությունը, առկայությունը տվյալ պայմաններում, տեղում:

Հմմտ. 1. *Ուրեմն բռնակա՞ղ դատնալ: Փակե՞ղ Սեյանյային տանը, գոռա՞ղ, հայիոյե՞ղ, ծեծե՞ղ (Շիրվ): Հավաքել գնդացիները (ԲՀ): Անհատնում կրակ: Արևաքամ վերքեր կարեվեր (ԵՉ):*

Անդեմ նախադասությունները կառուցվածքի տեսակետից չունեն այն բազմազանությունները, որ հատուկ են դիմավոր միակազմ նախադասություններին: Անդեմ նախադասությունները սովորաբար լինում են պարզ, ըստ որում պարզ համառոտ և պարզ ընդարձակ:

Պարզ համառոտ անդեմ նախադասությունները կազմված են լինում միայն մեկ անդամից, որը և գերադաս անդամ է: **Բաժանվե՞լ (Շիրվ.): Լո՞ւն՝ (ԳԳ): Իրակլին կրկնեց այն բոլորը, ինչ մտածել էր ասելու: - Հասարակե՛ն, - կանչեց Միկոյա Բուրդենկոն (ՀՔ): Երևան: Աստաֆյան փողոց: Նստած է խանութպան Համոն (ԵՉ):**

Պարզ ընդարձակ անդեմ նախադասությունները բաղկացած են լինում մեկ գրված խավոր անդամից և լրացումից կամ լրացումներից:

Ո՞ր գնալ (Շիրվ.): Բայց ինչո՞ւ հուզվել (Շիրվ.): Բոլոր տեսակի գեները հանչեն՝ (Միրաս): Ամբողջ ամբողջ սարքավորումը ներկա վիճակով նույնությամբ հանչեն՝ մեր ներկայացուցչին (Միրաս): Մայիսյան առավոտ: Առաջին բերրության և Առաջին ուկրաինական ռազմաճակատի գործերը արդեն մտել էին Բեռլին (ՀՔ):

Բարդ ստորադասական անդեմ նախադասություններ չեն լինում, քանի որ ստորադասական նախադասության կառուցվածքի մեջ կարևոր դեր են կատարում այնպիսի բերականական կարգեր, ինչպիսիք են դեմքը և թիվը, որոնք, սակայն, բացակայում են անդեմ նախադասության մեջ:

Համադասական հարաբերությամբ կապված անդեմ նախադասությունները բարդ համադասական անդեմ նախադասություններ են: **Հայոց ժամը: Սպիտակ կամարներ և նկարներ՝ ոսկեգօծ շրջանակների մեջ: Նուշիկի մայրը լալիս է (Բակ.): Մի բույս հետո եղավ երկրորդ հրամանը. - Յրվե՛ն, պատկե՛լ... (ՀՔ):**

Երբեմն անդեմ նախադասությունը մտնում է բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ, որպես գլխավոր նախադասություն, ունենալով երկկազմ երկրորդական նախադասություն:

Գավառական մի քաղաք. լայն և ուղիղ փողոցներ, կանաչ խոտ մայքերի վրա, տների առաջ բոստաններ և քարշր, սրվերախիպ ծառեր, որոնց շվաքի տակ իրիկվա հովին նստած են հարևանի կանայք, գրուցում են, մինչև նախիրը հանդից գա, կիթ անեն, թեյ զցեն ու թեյից հետո խաղան նարդի, հետո՝ խոր քուն, մինչև լուսաբաց, մինչև նոր կիթ (Բակ.):

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱՍԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բայական անդեմ միակազմ նախադասությունների գերադաս անդամը սովորաբար արտահայտվում է անորոշ դերբայով: Այդ նախադասություններն ունեն բազմազան կիրառություններ: Բայական անդեմ միակազմ նախադասություններն արտահայտում են հրաման, կարգադրություն, ցուցում, որոնցով պահանջվում է կատարել որևէ գործողություն կամ որով արգելվում է գործողության կատարումը:

Պահե՛լ այս ռազմակարգը, չշփոթվել իր՝ Վարդանի շարժումներից: Բաթը կոացավ, գրկեց Պապին և հրամայեց ներսը գտնվող իր զինվորներին. - Կոպորե՛լ բոլորին... ողջ չթողնե՛լ ոչ մեկին: Պահակներ դնել, դուռը փակել և փախչել ցանկացողին սապակել անմիջապես: Կանգնեցնե՛լ ըստ հասակի: Հեծյալները, որ Վարդանի կողմից էին՝ հրաման բերին նրանից. - Կովով քաշվե՛լ աջակողմյան լեռնակիրճը (ԳԳ):

Այսպիսի նախադասություններն իրենց բնույթով մտնում են հրամայական նախադասությունների շարքը, բայց, իհարկե, չունեն այն լայն, բազմապիսի կիրառությունները, ինչ որ դիմավոր բայով արտահայտված հրամայական նախադասությունները:

Անդեմ բայական նախադասությունները կարող են արտահայտել նաև պահանջ, առաջարկություն, կոչ:

Հրատարակել մասնագիտական բառարաններ, այդ թվում՝ առևտրացանցի աշխատողների համար: Կազմակերպել լեզվի հարցերին նվիրված հաղորդումներ հեռուստատեսությամբ ու ռադիոյով (լր.):

Զննարկվող տեսակի նախադասությունները, հարցական հնչերանգով գործածվելով, արտահայտում են հարցում տարբեր նպատակներով:

Ավելի հաճախ նրանք հարցական երանգով գործածվում են այս կամ այն գործողությունը կատարելու վերաբերյալ երկմտություն, կասկածանք, երկրնորանք և նման այլ վերաբերմունք արտահայտելու համար:

Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիշտ, ո՞րն է բարվոքը- չգրկվել հարուստ տնից, մնալ հավատարիմ տեսականին և անգե՞ն, թե՞ լինել հարուստ, գորավոր, ինքնիշխան (Շիրվ.): Ի՞նչ խելք գտնել վերջ տալու յուր անտանելի վիճակին: Բաժանվե՞՛ր, ո՞ր գնալ... Ինքնասպանություն՞ն գործել: Նա այդքան քաջություն չունի: Մեռնել մի ծելումու պատճառով և մեռնել այդ երիտասարդ հասակո՞ւմ... Գանգատվե՞՛ր : Ո՞ւմ, ինչպե՞ս (Շիրվ.): Առարկե՞՛ր: Չհավատա՞՛ր նրան: Հայտնե՞՛ր Խորիտոունյաց նախարարին որևէ վստահություն (ԳԳ):

Հարցական բնույթի անդեմ բայական նախադասությունները երբեմն արտահայտում են բացասական, մերժողական վերաբերմունք այն գործողության նկատմամբ, որն արտահայտված է բայով: Այդ բացասական վերաբերմունքը կարող է տարբեր աստիճանի լինել՝ սկսած նրա կատարումը, կատարման անհրաժեշտությունը կասկածի տակ առնելուց, վերջացրած կատարման ժխտումով:

Ինչո՞ւ կեղծել և ստել, ինչո՞ւ խաբել և մի ուրիշ, ավելի վատ սխալ գործել (Շիրվ.): Ինչո՞ւ երկար մտածել, մի՞թե ամենքի վերջը այդ չէ... Տանջվե՞՛ր, հալածվե՞՛ր, չարչարվե՞՛ր և ինչո՞ւ, միայն մի անո՞ւն թողնելու համար (Շիրվ.):

Այս միակազմ բայական նախադասությունները, թեև արտահայտված են անորոշ դերբայով, բայց և այնպես վերաբերում են որևէ դեմքի. մեծ մասամբ դրանք վերաբերում են հենց իրեն՝ խոսողին, ինչպես երևում է բնագրից:

Սակայն միակազմ բայական նախադասությունները հաճախ այնպիսի գործողություն են ցույց տալիս, որի կատարումը հատկապես չի վերաբերում որևէ դեմքի, այլ վերաբերում է ընդհանուրին՝ և՛ խոսողին, և՛ խոսակցին, և՛ ուրիշներին: Եթե վերոհիշյալ դեպքերում և երկկազմ նախադասությունների միջև ոճական տարբերությունն է կարևոր խոսքի սեղմության և կամ այլ պատճառով, ապա այստեղ միտքը անդեմ նախադասությամբ արտահայտելու հարցում կա որոշակի անհրաժեշտություն, այն է՝ գործողությունը հատկապես որևէ դեմքին չվերաբերելու հանգամանքը արտահայտել լեզվական միջոցներով, որի լավագույն միջոցը, իհարկե, գործողության արտահայտումն է բայի անդեմ ձևով:

Այսպես՝ Հր. Աճառյանը, նշելով Համշենի բարբառում եզն բառի հոգնակիի ան-

կանոնությունը, հարցնում է. «Ինչպե՞ս բացատրել այս անկանոնությունը»: Այստեղ բացատրելու գործողությունը արտահայտված է առանց վերագրելու որևէ դեմքի, ընդհանուր ձևով: Խոսքը վերաբերում է լեզվական այդ երևույթը ընդհանրապես բացատրելուն, բացատրելու հնարավորությանը և ոչ թե մասնավորապես այս կամ այն անձի, այս կամ այն դեմքի կողմից բացատրվելուն:

Բերենք մեկ այլ օրինակ՝ Ինչպե՞ս ուղղել այս դրությունը: - *Եղբայրական ժողովուրդների գեղարվեստական արձակի թարգմանության սյրակտիկան ինչպե՞ս ներդաշնակել այդ գործի պետական նշանակությանը (լր):* Ինչպես երևում է բերված օրինակներից, այսպիսի անդեմ բայական նախադասությունները գործածվում են հասկապես հռետորական նպատակներով, այս կամ այն խնդիրը հարցման ձևով առաջադրելու դեպքում:

Միակազմ բայական անդեմ նախադասությունները հաճախ արտահայտում են իդձ, ցանկություն, տենչանք: *Հայացքը հասել ձեռունին՝ նա մի քաղցր արթնություն է ապրում... Չքնե՛ լ, չքնե՛ լ, միայն «նրան» պեսնեկ արթուն աչքերով, զգալ նրա հմայիչ դեմքի, սլացիկ հասակի, խոր հայացքի վայելքը (ԳԳ):* *Չոքեցի և սլապակված առաջ մեկնվեցի, ուր խմեմ... Այդ րուպեին ոչինչ, ոչինչ, ոչ կյանք, ոչ մահ, ոչ աշխարհ ինձ համար գոյություն չունեի, բացի ջրից: Խմե՛ լ, խմե՛ լ, հագե՛նա՛ լ, կյանք առնել և թուղթը տեղ հասցնել (ՎԱ):*

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանական անդեմ միակազմ նախադասությունները գործածվում են հասկապես գեղարվեստական խոսքի մեջ՝ թե՛ արձակում, թե՛ չափածոյում: Այս նախադասությունները կարող են հեշտությամբ փոխարինվել երկկազմ նախադասություններով և գործածվում են խոսքի սեղմության, միտքը ավելի խտացված արտահայտելու նպատակով:

Ուրք հարյուր ութսունմեկ թիվ: Էջմիածին:

Միրզ ու փոշի: Անխիդձ արև:

Շողամբցում Մասիսների, Արագածի:

Մրբագործված հին-հին քարեր:

Եվ մայր Արաքս, և Մայր տաճար:

Տաճարի շուրջ սուրբ-սուրբ վանքեր:

հնչող,

շնչող,

կանչող զանգեր...

Եվ ճեմարան: Մտքի կաճառ-

Ուտումնատենչ երազների

Սառցակալում և տաքացում...

Ճեմարանի բակում արձակ՝

Խոսվածքների, տալուսզների

Խայտաբղետ հավաքածու

(ՊՍ):

Ընդամենը մի քանի տողում այսպիսի հարուստ և բազմակողմանի նկարագրություն տալու հարցում կարևոր դեր ունի միակազմ նախադասությունների օգտագործումը, բայց, իհարկե, վարպետ օգտագործումը: Վերոհիշյալ հատվածում եղած նկարագրությունը կարելի է արտահայտել մաս երկկազմ նախադասություններով, և այդ երկու նկարագրությունների միջև կլինեն միայն ոճական տարբերություններ:

Մեկ օրինակ էլ բերենք Ե. Չաբենցից, որը միակազմ անվանական նախադասությունները գործածում է մեծ վարպետությամբ՝ խոսքը դարձնելով սեղմ, դիպուկ, միտքը՝ խտացված: *«Ամեն ինչ գորշ, առօրյա: Ինչպես միշտ գորշ փոշուր փողոց: Սառը*

ցուր: Խաղող: Քինի: Մարդիկ: Կառքեր: Մարդիկ: Եվ ոչ ոք չգիտեր, որ հիմա Աստաֆյան փողոցի վրա հրաշք պիտի լինի»:

Անդեմ անվանական նախադասությունները, ինչպես երևում է վերևի օրինակներից, գերազանցապես գործածվում են արտահայտելու համար առարկայի եղելությունը, գոյությունը տվյալ տեղում, պայմաններում, նշելու տվյալ տեղը: Այդպիսի անվանական նախադասությունների գլխավոր անդամն արտահայտվում է առարկա ցույց տվող գոյականով:

Անվանական միակազմ նախադասությունը կամ նրա գերադաս անդամը կարող է արտահայտվել նաև գործողության իմաստ ունեցող գոյականով: Այդպիսի անվանական նախադասությունը ցույց է տալիս գոյականով արտահայտված գործողության, վիճակի, երևույթի գոյությունը, այդ գործողության կատարված լինելը, կատարվելը:

Թփփոց: Պետը թնդաց տեղից (ԳԳ): 144 բարձունքի դիմաց ոչ մի փոփոխություն: Ամսի 5-ին հաջող հետախուզություն ունեցանք (ԳԳ):

Անվանական նախադասությունների կազմության մեջ որոշ դեր կատարում է այժմյանարկությունը ցուցական իմաստով: Այս ձայնարկությունը, դրվելով գոյականի վրա, հաճախ ցույց է տալիս առարկայի գոյությունը, գտնվելը տվյալ տեղում:

Այ ձեևի դե՞ դ, այ լավ ձեևի դե՞ դ (Թում): Դե որ չես ուզում, վկաներդ բե՛ր, գործը շարունակում եմ: Միմոնը չփախեցավ: - Այ վկա, - համարձակ ցույց տվավ Մարուշին (Թում): Այ Չորածառը: Արահետով որ գնաք, մի տասը բոսյեից կհասնեք (ԱԳ):

Որոշ անվանական նախադասությունների ձևավորման խնդրում դեր կատարում է նաև **ահա** եղանակավորող բառը՝ ցուցական իմաստով, որ, դրվելով գոյականի վրա, ցույց է տալիս այդ գոյականով արտահայտված առարկայի գտնվելը, գոյությունը տվյալ տեղում:

Ահա բուն հարցմունքը (ԳԳ): Ահա մի խումբ օրինակներ լեհահայոց բարբառից (ԱՃ): Ահա ասպդերը.. Նրանք մեծանում են, նրանք շարժվում են (Բակ.): Ահա մեր գեպը, մեր գուլալ գեպը (Բակ.): Ահա մի ծերուկ, առողջ, ալեգարդ (Հ. Հակ.):

Նման դեպքերում **ահա** եղանակավորող բառի հետ երբեմն գործածվում է նաև և շաղկապը: **Ահա և փիկին Մարիա Մելյանը (ՎԱ): Ահա և նրա ջայնը, մի՞թե խելագարի ձայն չէ (Շիրվ.): Ահա և կյանքը այն կարոպալից (Հ. Հակ.): Ահա և ձեր բարեկամները: Սեդան մի բոսյե շեմում կանգնեց, նայեց Արշակյանին ու Արզամին (ՀՔ):**

Ինչպես **ահա** բառը, այնպես էլ **ահա և** կապակցությունը երբեմն կիրառվում են թվարկումների ժամանակ՝ գործածվելով նախադասության թվարկվող անդամների հետ:

Ահա և նրանք՝ գործարանները

Նոր սերունդների,

Ահա և նրանք՝ ստեղծողները

Այս նոր աշխարհի...

Ահա և նրանք - ճախարակները

Չուզահեռ շարքով (Հ. Հակ.):

Տարածված են նաև ժխտական բնույթի անվանական նախադասություններ, որոնք ցույց են տալիս անունով արտահայտված առարկայի, երևույթի գոյություն չունենալը: Ժխտական միակազմ անվանական նախադասությունների ժխտական

բնույթը ձևավորվում է, նախ, **ոչ մի** դերանունով, որ դրվում է այն գոյականի վրա, որի ցույց տված առարկայի, երևույթի գոյությունը ժխտվում է:

Ոչ մի ծառ: Նույնիսկ խոտը այնտեղ քիչ է, դեղնած ու չորացած (ՎՓ):

Երբ ժխտական միակազմ անվանական նախադասության գլխավոր անդամն արտահայտվում է գործողության իմաստ ունեցող կամ այդպիսի իմաստ ենթադրող գոյականով, նախադասությունն արտահայտում է գործողության չկատարում, տվյալ գործողության բացարձակ բացասում:

«Ոչ մի զիջում: Բոլորս կկործանվենք, եթե չմիանանք (ԳԳ): - Ոչ մի արյունահեղություն այստեղ, - եզրափակեց Ներշապուհը Ատոմին լսելուց հետո (ԳԳ): Սահակը ուժեղացրեց դարբասի բակոցը: Ոչ մի ջայն (ԳԳ): Իսկ Բյուզանդիայից և Հոնքից դեռ ոչ մի լուր (ԳԳ):

Տարածված են նաև ժխտման կրկնություն ունեցող կամ բազմակի ժխտում արտահայտող միակազմ նախադասությունները: Ժխտումն այս դեպքում արտահայտվում է **ո՛չ...ո՛չ** շաղկապով: **Երբեմն շրջվում էր և նայում ետ: Ոչ որ, ոչ մի շունչ, ո՛չ գազան, ո՛չ քոչուն (ԳԳ): Այլևս ոչ սարսափ, ոչ մահ (ԳԳ): Ու լռություն: - Ոչ լաց և ոչ կական (ՍՏ):**

Որպես միակազմ նախադասությունների յուրահատկություն պետք է նշել, որ ոչ բոլոր միակազմ նախադասությունների ժխտականը կարելի է կազմել: Մինչդեռ, ինչպես հայտնի է, յուրաքանչյուր երկկազմ նախադասության հաստատական ձևը հեշտությամբ կարելի է վերածել ժխտականի: Այս տարբերության պատճառն այն է, որ երկկազմ նախադասությունը, ավելի ճիշտ՝ նրա ստորոգումն արտահայտվում է որոշակի քերականական միջոցով՝ օժանդակ բայով, բայի խոնարհված ձևով, որոնց ժխտականը հեշտությամբ կարելի է կազմել և դրանով իսկ՝ հաստատական նախադասությունը վերածել ժխտականի: Մինչդեռ միակազմ նախադասությունները ձևավորվում են, ինչպես տեսանք, այլ եղանակներով, որոնք դժվարացնում են կամ անհրճանարին են դարձնում կառուցվածքային այդպիսի փոփոխություն կատարելը:

Միակազմ անդեմ որոշ նախադասություններ արտահայտում են գործողություն կատարելու հրաման, թելադրանք:

Առա՛ջ, դեպի ջախ, մտնե՛լ գլխավոր փողոցը (ՀՔ): - Լսում ենք: - Լռությո՛ւն (ՔԹ): Աթո՛յի հարսը մեռնում է. օգնությո՛ւն, օգնությո՛ւն (Իս.): - Հարգա՛նք, ո՛վ անգո՞, դեպի մարդկային ուղեղը (Ար.): Չգա՛սս: Այդ բառը կրկնվեց վաշտ առ վաշտ (ԱՀ):

ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միակազմ նախադասությունների մի հատուկ տեսակ է բառ-նախադասությունը, որն արտահայտվում է մեկ բառով: Այս նախադասությունների ամբողջ բովանդակությունը հանգում է արտահայտվածի հաստատման կամ ժխտման, համաձայնության կամ անհամաձայնության կամ եղանակավորող արտահայտիչ գնահատման¹:

- Ուզում ես տեսնել՝ ինչպես է տոհմդ մեծանո՞ւմ:

- Այո՛ (ՀՔ):

- Բայց դրանք Տուրգենևի խոսքերն են, - նկատեցի ես:

- Այո՛, - անհասկանալի հպարտությամբ հաստատեց նախկին ջութակահարը (ՀՔ):

- Դու սկսում ես ծաղրել:

¹ См и Грамматика русского языка, М., 1954, т. II, ч. I, стр. 79-80.

- **Բնավ (ԱԳ):**

- **Ինչպե՞ս թե ինչ: Մի՞թե պարզ չէ...**

- **Ո՛չ, Կո՛նկին, ո՛չ (ԲՀ):**

Բառ նախադասությունները չպետք է շփոթել այն անդամ կամ դիմավոր միակազմ նախադասությունների հետ (պարզ համառոտ միակազմ նախադասություններ), որոնք նույնպես արտահայտվում են մեկ բառով, բայց բառ-նախադասություններ չեն, ինչպես՝ **Մթնեց: Լուսացավ:** Այս նախադասությունները, ինչպես տեսանք վերևում, հեշտությամբ կարող են ստանալ լրացումներ և դառնալ պարզ ընդարձակ նախադասություններ, իսկ բառ-նախադասությունները լրացումներ չեն կարող ստանալ և միտքն արտահայտում են միայնակ:

Առանձին դեպքերում սրանք կարող են արտահայտվել կայուն կապակցություններով, որոնք մեկ բառի արժեք ունեն:

- **Ի՞նչ ես կարծում, այսօր անձրև կգա՞:** - **Հազիվ թե: Իսկ նա հիշո՞ւմ է այնպիսի ջրառատ տարիներ, երբ գետի ամբողջ հունով լիքը ջուր հոսեր:** - **Ինչպե՞ս չէ (Ա. Սահ.):**

Բառ-նախադասությունների հետ կարող են գործածվել եղանակավորող բառեր՝ **իհարկե, անշուշտ, հարկավ** և այլն, որոնք նախադասության անդամ չեն, այլ համապատասխան երանգ են հաղորդում նրան:

Մալիչևը զգացված լոեց, ապա անձայն շշնջաց. - Այո՛, իհարկե (ՀՔ):

Բառ-նախադասությունների հետ հաճախ գործածվում է կոչական, որ հանդիսանում է խոսակցի անունը՝ հանձին նրա հատուկ անվան, կոչման և այլն:

- **Դու տակավին նրան հա՞յր ես համարում, Սամվել... - Այո՛, Աշխեն (Բ):** - **Դու ծանո՞թ ես մեր կողմերի հետ: - Այո՛, օրինոր:** - **Դու տեսե՞լ ես Մանակերտը: - Այո՛, օրինոր:** - **Քեզ ծանո՞թ է այն աղբյուրը, որ բխում է Մանակերտի ստորոտից: - Այո՛, օրինոր (Բ):** - **Այժմ որտե՞ղ է Ռշտունյաց նահապետը՝ Գարեգին իշխանը: Երևի գերեցի՞ն նրան: - Ո՛չ, րե՛ր իմ (Բ):**

Վերջապես՝ բառ-նախադասության հետ վերջինիս միտքը պարզաբանելու նպատակով կարող է գործածվել երկկազմ կամ միակազմ նախադասություն:

- **Ուրեմն դու մի քիչ կեղտոտ շապիկս և հնացած սյուրտուկս վերագրում ես այն բանին, որ ես ժլա՞տ եմ: - Այո՛: Չես ուզում մաքուր ու լավ հագնվել, որ փող ծախսած չլինես (ՆԳ):**

Բառ-նախադասությունները կարող են կրկնվել՝ հաստատումը, ժխտումը և այլն ավելի շեշտելու համար:

Լսիր, Մանե, - հավատա, ես վատ եղբայր չեմ, որ ուզենաս, կարող եմ շատ պիտանի լինել քեզ: Արի՛ գնանք գյուղ: - Ո՛չ, ո՛չ, - կրկնեց Մանեն (ՆԳ): Մի՛ շաղակրատիր: **Հրամանը չի կատարի: Քեզնից ուժեղ և քեզնից խելոք մարդիկ են այն կողմը գնում: Նա ցույց տվեց արևելքը: - Այո՛, այո՛, - հաստատեց Ուլիտա Դիմիտրովնան իր ամուսնու խոսքերը (ՀՔ):**

Բառ-նախադասությունները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ **հաստատական, ժխտական, հարցական:**

ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հաստատական բառ-նախադասությունները ամենից շատ գործածվում են երկխոսությունների մեջ, մասնավորապես հարց ու պատասխանի դեպքում: Խոսողը այս նախադասություններով հաստատական պատասխան է տալիս խոսակցի այս կամ այն հարցին:

- Դուք ինձ ասացե՛ք՝ այն երկու երիտասարդը, որ ձեզ հետ էին, գավառացիներ էին, չէ՞: - Այո՛ (ՆԳ): - Դու Բաղամյանի մասին ես ուզում խոսել, չէ՞, - հարցրեց Վահանը երկար սպասելուց հետո: - Այո՛ (ՆԳ):

Բուն պատասխանական բառերից բացի՝ հաստատական բառ-նախադասություններն արտահայտվում են նաև մի շարք այլ եղանակավորող բառերով ու կայուն կապակցություններով, ինչպես՝ **իհարկե, անշուշտ, ինչպես չէ, հարկավ** և այլն:

- Համաձայն ե՞ք: - Անշուշտ (ԵՉ): Վստահ լինե՞մ, որ որոշված ժամին տեղում կլինե՞ք: - **Իհարկե (ԴԴ):**

Հաստատական բառ-նախադասությունները կարող են գործածվել երկխոսության մեջ, բայց ոչ որպես հարցի պատասխան, այլ որպես համաձայնություն խոսակցի արտահայտած մտքին:

- Ես հավատացած եմ, որ երբ դրությունը բարվոքվի, կաշխատես ավելին անել: - Անշուշտ (Մուր.): - Այդ կողմերում Արաքսի ափերը, ասում են, խիստ հարուստ են վայրենի երեւներով: - Այո՛ (Բ): Եվ ամենից խելոքը դու ես... - Անշուշտ (ՆԴ):

Վերջապես՝ հաստատական բառ-նախադասությունները կարող են գործածվել ոչ միայն երկխոսության, այլև մենախոսության մեջ և վերաբերել իր իսկ՝ խոսողի արտահայտած մտքին:

-Սիրելի՛ ընթերցող: Ների՛ր, որ այս հարցերի պատասխանը չես գտնի այս գրքում: Այս հարցերի պատասխանը քո սրտում, քո հոգում պիտի գտնես: Պիտի ցանկություն զգաս գտնելու, ուրիշ ոչինչ: Այո՛: Ուրիշ ոչինչ (ԵՉ):

ԺԽՏԱԿԱՆ ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բուն ժխտական բառ-նախադասությունները, ամենից առաջ, արտահայտում են ժխտական պատասխան խոսակցի տված հարցին և, իհարկե, գործածվում են երկխոսությունների մեջ:

- Անցե՛ղ ես դու այդ ճանապարհով: - Ո՛չ (Մուր.): - Դու քեզ վիրավորվա՞ծ ես համարում: - Ո՛չ (Բ): - Դու այսօր ճաշին մեզ մոտ չե՞ս լինի, - հարցրեց Սամվելը: - Ո՛չ (Բ): Երեկ երազիս տեսա քեզ... - Ինչպե՞ս տեսար, սպանվե՞ղ էի... - Չէ՛: Քաղաքացիական կյանք էր (ՀՔ):

Ժխտական բառ-նախադասությունները երկխոսություններում կարող են գործածվել ոչ իբրև հարցի պատասխան, այլ արտահայտելու համար ժխտական վերաբերմունք խոսակցի մտքի նկատմամբ:

- Գիտեմ, թե՛ ինչու այդպես վաղ արթնացրի՛ր ինձ, սիրելի՛ մայրիկ, - ասաց նա ուրախանալով: - Գիշերը պայման դրեցիք, որ այսօր մենք գնանք որսի, և ոչ Շուշանիկն ու Հասմիկը: - Ո՛չ, սիրելի Որմիզդուխտ (Բ): - Դու սկսում ես ծաղրել: - Բնա՛վ (ԱԴ):

Ժխտական բառ-նախադասությունները գործածվում են նաև մենախոսության մեջ՝ իր իսկ՝ խոսողի արտահայտած այս կամ այն միտքը ժխտելու համար:

Ո՞վ գիտե Դրոյին... Ինչքա՞ն է նա
Այդպես գաղտագողի հնձել...
Մեկը Թևիկն էր, Եգորի եղբայրը.
Եգորը Դրոյին կների՞: - Ո՛չ (ԵՉ):

Նաիրի՛, ես սիրում եմ քեզ.
Քեզ սիրում եմ, իմ Իրան,
Ես հիմա հեռո՞ւ եմ... Օ, ո՛չ.
Քեզ մոտիկ եմ հիմա ավելի (ԵՉ):

*Եվ մի՞թե մարդիկ այստեղ չեն նայել
Երբեք հեռուներն այս լավ աշխարհի,
Ուր արևը բյուր հրաշք է վառել,
Որ մարդու հոգին խանդավառ, բարի՝
Գգվի մի անմար հիացքով ջահել
Ամեն մի խոտի, ամեն մի քարի:
Ա ի, ո՛չ (ԵԶ):*

Հարցական բառ-նախադասություններ

Ինչպես ասվեց վերը, բառ-նախադասությունները կարող են ունենալ հարցական բնույթ, արտահայտել հարցում:

- *Ես չեմ բնորոնում ձեր որոշումը: - Այո՞: - Այո՛ (Շիրվ.): - Եվ ուրախ էիր: - Ո՛չ: - Ո՞չ (Շիրվ.): - Գո՞հ ես իմ օգնությունից: Այո՞ (ՀՔ): - Բոլորովին անփորձ եմ: - Իսկապե՞ս (ԲՀ):*

Ինչպես կարելի է նկատել բերված օրինակներից, բառ-նախադասություններով արտահայտված հարցումը տարբեր նպատակներով կարող է լինել բուն հարցական, զարմացական-հարցական և այլն:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԵՐԱՆԳԻ

Ինչպես ասվել է նախադասության բնորոշ հատկանիշների բնության առիթով, յուրաքանչյուր նախադասության մեջ առկա է նախադասության բովանդակության հարաբերումը իրականությանը, իսկ դա, վերջին հաշվով, խոսողի վերաբերմունքն է:

Տարբեր նախադասությունների մեջ դրսևորված վերաբերմունքների տարբերությունը հանդիսանում է խոսողի տարբեր նպատակների արտահայտություն: Եվ իրոք, մտքերի հաղորդակցումը տարբեր նպատակներով է լինում. մի դեպքում խոսողի նպատակը կարող է լինել հաղորդել որևէ միտք, պատմել իրողություն, մի այլ դեպքում նա կարող է հարցնել որևէ բանի մասին, մի երրորդ դեպքում՝ իր հիացական, զարմացական և այլ վերաբերմունքն արտահայտել այս կամ այն երևույթի, առարկայի և այլնի մասին, վերջապես՝ չորրորդ դեպքում՝ իր կամքը թելադրել՝ կատարելու այս կամ այն գործողությունը: Եվ ըստ այդմ՝ ամեն մի նախադասություն ունենում է համապատասխան երանգ:

Ուրեմն նախադասության երանգով արտահայտվում է խոսողի համապատասխան վերաբերմունքը: Այժմ տեսնենք, թե ինչպես է ձևավորվում այն:

Խոսողի վերաբերմունքի դրսևորման հարցում կարևոր դեր են կատարում հիմնականում երկու գործոն, լեզվական երկու միջոց՝ նախադասության հնչերանգը և ստորոգյալի բնույթը: Նախադասության յուրաքանչյուր տեսակ ունի յուրահատուկ հնչերանգ, որ կարելի է կոչել նախադասության համապատասխան տեսակի անունով՝ պատմողական, հարցական, բացականչական, հրամայական հնչերանգ: **Հմնտ. Շատ գեղեցիկ են մեր լեռները: Շատ գեղեցիկ են մեր լեռները: Շատ գեղեցիկ են մեր լեռները:**

Նախադասության երանգի ձևավորման մյուս գործոնը, ինչպես ասվեց, ստորոգյալի բնույթն է: Ստորոգյալի բնույթ ասելով՝ նկատի ունենք ստորոգյալի դերում հանդես եկող բայի եղանակը, վերջինիս հատկանիշները և բաղադրյալ ստորոգյալի

հանգույցի առանձնահատկությունն այդ նույն տեսակետից:

Նախ՝ պարզ ստորոգյալի բնույթի, հատկանիշների մասին: Պարզ ստորոգյալի բնույթը կարևոր նշանակություն ունի նախադասության բնույթի որոշման հարցում, քանի որ այն արտահայտվում է բայի եղանակային ձևերով, իսկ վերջիններիս մեջ արտահայտվում է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ:

Այսպես՝ *Կայծակի շրացնող լույսով Գարեգինը տեսավ, որ իրենք կանգնել են ճանապարհի վրա կախված մի վիթխարի ժայռի մոտ:*

- Ձեղ քչի՛ր այս ժայռի տակ, շո՛ւտ (ՄԽ):

Առաջին նախադասությունը պատմողական է, երկրորդը՝ հրամայական: Եվ նախադասությունների մեջ արտահայտված այդ երանգները համապատասխանում են այն եղանակային ձևերի հիմնական հատկանշի, որոնք գործածված են որպես ստորոգյալ, այն է՝ առաջին նախադասության մեջ ստորոգյալն արտահայտված է բայի սահմանական, երկրորդում՝ հրամայական եղանակով:

Սակայն նախադասության մեջ արտահայտված այն վերաբերմունքը, որով որոշվում է նրա բնույթը, լրիվ չի համընկնում, չի նույնանում եղանակային ձևի մեջ արտահայտվող վերաբերմունքի հետ: Եվ իսկապես, եթե նրանք նույնանային, դրանց միջև տարբերություն չլիներ, ապա լեզվի մեջ պետք է լինեին այնքան բնույթի նախադասություններ, որքան որ բայի եղանակ գոյություն ունի տվյալ լեզվում:

Բայի եղանակային ձևերի և նախադասությունների բնույթի միջև կա այդպիսի զգալի, բայց ոչ լրիվ համապատասխանություն: Այսպես՝ հրամայական եղանակը հիմնականում համապատասխանում է հրամայական երանգի նախադասությանը այն իմաստով, որ այս նախադասությունների ստորոգյալը գերազանցապես արտահայտվում է նույնանում եղանակով:

Ընդհանրապես եղանակը գերազանցապես մտնում է բացականչական բնույթի նախադասության կազմության մեջ: Ուրեմն այս երկուսի միջև ևս կա զգալի համապատասխանություն: Մինչդեռ սահմանական, պայմանական, հարկադրական բնույթի նախադասություններ չկան: Այդ բոլոր եղանակային ձևերը մեծ մասամբ հանդես են գալիս պատմողական բնույթի նախադասության կազմության մեջ: Իսկ մյուս կողմից՝ հարցական նախադասությունները չեն կազմվում հատկապես մի որևէ եղանակային ձևով, այլ համարյա բոլոր եղանակային ձևերով: Այս տեսակետից յուրահատուկ է հրամայական եղանակը, որը միայն մի յուրահատուկ կիրառության դեպքում կարող է հանդես գալ հարցական հնչերանգով:

Այս երկու գործոնները սովորաբար միասնաբար են հանդես գալիս, թեև առանձին դեպքերում դրանցից որևէ մեկի դերը կարող է առավել զգալի լինել:

Նախադասությունների երանգները բազմազան են, եթե հաշվի առնենք մանրամասներն ու նրբերանգները: Բայց ըստ երանգային հիմնական հատկանիշների՝ նախադասությունները սովորաբար չորս խմբերի կամ տեսակների են բաժանվում՝ **պատմողական, հարցական, հրամայական, բացականչական**: Սակայն ոչ միշտ է, որ նախադասությունն ունենում է այս հատկանիշներից միայն մեկը: Հաճախ է պատահում, որ միևնույն նախադասության մեջ տեղ են գտնում տարբեր երանգներ: Այդպիսի նախադասությունները մենք անվանում ենք **խառը երանգի նախադասություններ**:

ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատմողական կոչվում է այն նախադասությունը, որով հաստատվում կամ ժխտվում է այս կամ այն իրողությունը, այս կամ այն եղելությունը, հատկանիշը վերագրվում է առարկային:

Պատմողական նախադասությունը ամենալայն տարածված, ամենաշատ գործածական նախադասությունն է: Դա բնական է, քանի որ խոսելիս սովորաբար ավելի շատ կարիք է լինում հաղորդելու, պատմելու, քան թե հարցնելու, կարգադրելու, բացականչելու: Իհարկե, նախադասությունների այս տեսակները խոսքի տարբեր բնագավառներում տարբեր չափով են գործածվում: Օրինակ՝ գիտական նույնիսկ մեծածավալ աշխատության մեջ կարող է չլինել հրամայական նախադասության նույնիսկ մեկ օրինակ: Մինչդեռ գեղարվեստական երկերում և հատկապես երկխոսությունների մեջ հրամայական, ինչպես և հարցական նախադասությունները շատ են գործածվում: Այնուամենայնիվ, պատմողական նախադասությունների գործածության ոլորտը լայն է բոլոր մյուս տեսակի նախադասությունների համեմատ: Այնուհետև. պատմողական նախադասության կազմությանը մասնակցում են բայի սահմանական, հարկադրական, ենթադրական, մասամբ նաև ըղձական եղանակները, մինչդեռ, օրինակ, հրամայական նախադասության ստորոգյալը գերազանցապես մեկ եղանակով է արտահայտվում՝ հրամայական եղանակով:

Պատմողական նախադասության էության համար կարևոր նշանակություն ունի պատմողական հնչերանգը:

Պատմողական նախադասության տրամաբանական շեշտը սովորաբար դրվում է ստորոգյալի վրա: Սա բացարձակ կանոն չէ, բայց, համենայն դեպս, վերաբերում է բննարկվող նախադասությունների մեծ մասին, հատկապես երբ նրանք ունեն սովորական շարադասություն:

Բայց, օրինակ, հետևյալ պատմողական նախադասություններում, որոնք ունեն շրջուն շարադասություն, տրամաբանական շեշտն ընկած է **հիվանդանոց, ձորում, շուտ, նոր** պարագաների վրա: *Հիվանդանոց են տարել... Չորումն է պատահել (ԳԳ): Այդ առավոտ շուտ էի գարթնել: Արևը նոր էր ծագել (ՎՓ):*

Քանի որ նախադասության բոլոր անդամների համեմատությամբ ստորոգյալն է կարևոր դեր կատարում ինչպես այլ, այնպես էլ պատմողական նախադասության բնույթի դրսևորման հարցում, այդ պատճառով էլ նախադասությունների բնույթը քննելիս առանձնապես կարևորություն է ստանում ստորոգյալի արտահայտության հարցը: Ուստի քննենք պատմողական նախադասության ստորոգյալի արտահայտությունը:

Պատմողական նախադասության պարզ ստորոգյալը կարող է արտահայտվել սահմանական, ենթադրական, հարկադրական, ըղձական եղանակներով:

Հնագետը մի անգամ էլ պտույտ արեց բերդի չորս կողմը, տեսրում մի բան նշանակեց և ապա արագ քայլերով հասավ ձիերին (Բակ.): Ես հենց այս թույլիս կհեռանամ այս տնից և կգամ քեզ հետ գյուղը (ՆԳ): Չեռները Չեր պիտի հար երգեմ մոլեռանդ (ՎՏ): Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կռանա, մատներով տորթի քաց հողը (Բակ.): Հավքը բռնեմ թռիչքի մեջ, Տամ եղբորս, որ տանի տուն, Իսկ ես խաղամ ջրերի հետ, Ու չարչարվեմ մինչ իրիկուն (ՀՄ): Քանի եղանակը լավ է, շուտ անենք, մի սել տաշտ ու թի շինենք, տանենք կողմի երկիրը (ՎԱ):

Ըղծական եղանակը պարզ նախադասության մեջ (մանավանդ եթե հետո կան մի շարք եղանակավորող բառեր, ինչպես՝ **թող, գուցե, երևի, հազիվ թե, թերևս** և այլն) գործածվելիս համեմատությամբ սակավ դեպքերում է ձևավորում պատմողական նախադասություն: Առաջին նախադասությունները հեշտությամբ ընկնում են բացականչական հնչերանգի տակ և փոխում իրենց բնույթը՝ վերածվելով բացականչականի:

Սակայն որոշ դեպքերում ըղծական եղանակը այնքան հաստատուն կերպով է մասնակցում պատմողական նախադասությունների կազմությանը, որքան, օրինակ, սահմանական եղանակը: Դա, նախ, լինում է այն ժամանակ, երբ ըղծական եղանակը հանդես է գալիս բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասությունների կազմում: Հասկանալի է, որ այդպիսի դեպքերում ըղծական եղանակը պատմողական նախադասության մի մասի կազմության մեջ է դեր կատարում և ոչ թե ամբողջ նախադասության մեջ:

Քիչ է մնում՝ ինձ ներքև շարտեմ ու կտոր-կտոր անեմ իմ ընկերոջ դուշմանին (ՎԱ): Դիտմամբ սարսափելի բաներ եմ ասում, որ վախեցնեմ մորս, հրացանը վերցնեմ (ՎԱ):

Այնուհետև, ըղծական եղանակը հատկապես կարող է գործածվել այնպիսի պարզ նախադասությունների, բարդ համադասական նախադասությունների, ինչպես և բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասության մեջ, որոնք ունեն մի շարք եղանակավորող բառեր, ինչպես՝ **թող, գուցե, թերևս, երևի, հազիվ թե** և այլն:

Թող մի քիչ իրեն կարգի բերի, տուն-տեղ դառնա (ՎԱ): Երևի հենց նա լինի (ՎԱ): Գուցե մեր բախտից Քարկապում մի քարի տակ մտած լինի (ՎԱ):

Պատմողական նախադասության ստորոգյալը հաճախ լինում է բաղադրյալ:

Ես տգետ մարդ չեմ (ՆԳ): Անդրոն մշակ է (Բակ.): Անդրոյի աշխարհը ավելի հետաքրքիր է, ավելի խորը (Բակ.):

Պատմողական նախադասության արտահայտության վերաբերյալ բերված հիշյալ բոլոր օրինակները բոլորովին գուրկ են հարցական, բացականչական երանգից: Այդպես են պատմողական նախադասությունները հիմնականում: Սակայն նրանք երբեմն կարող են ունենալ հարցման, բացականչման որոշ թույլ երանգ, որը, սակայն, ամբողջ նախադասության երանգի համար բնորոշ ու հատկանշական չէ:

Շքեղ մի դրյակ կար, բարձր, բարձր, արծվի թևերի վրա (Բս.): Հոյակապ մի դրյակում ապրում էր մի չքնաղ աղջիկ՝ այնպես՝ ս գեղեցիկ, այնպես գեղեցիկ, ինչպես շուշանագեղ կարապը լճակի ոսկեվառ ալիքների վրա (Բս.):

Այս նախադասությունների մեջ բացականչական հնչերանգի տարրը, իհարկե, որոշ դեր խաղում է: Այսպես՝ դրանցից առաջինի մեջ պատմվում է մի դրյակի գոյության, նրա բարձր դիրք ունենալու մասին, և նախադասության ընդհանուր հնչերանգի տարրը միայն ընդգծում է դրյակի դիրքի բարձր լինելը, բայց նախադասության երանգի բնույթի մեջ էական փոփոխություն չի մտցնում: Նախադասությունը թե՛ առանց այդ բացականչման երանգի, թե՛ այդ երանգն ունենալու դեպքում մի բան պատմելու նպատակով է գործածվում, ուրեմն և պատմողական է: Նույնը պետք է ասել նաև հաջորդ նախադասության մասին. այն պատմողական է, թեև ունի բացականչական հնչերանգի որոշ տարր:

Վերջապես՝ պետք է նշել նաև, որ պատմողական բնույթ կարող են ունենալ նաև միակազմ նախադասությունները: **Երևան: Աստվածաբանական փոքրիկ դասընթաց: Նստած է խանութայան Համոն: Աշուն է: Մշուշ, քաղց, խոնավ-անչրևոյ իրիկուն (ԵՉ):**

Մի դիտողություն ևս՝ պատմողական նախադասությունների բնույթի և կառուցվածքի վերաբերյալ: Եթե պատմողական նախադասություններով սովորաբար հաստատվում կամ ժխտվում է մի բան, դա չի նշանակում, թե դրանք միշտ ունենում են որոշակիորեն հաստատական բովանդակություն: Դրանց իմաստը կարող է լինել երկրայական, ենթադրական և այլն:

Այս հարցում դեր կատարում են ոչ միայն որոշ եղանակային ձևեր, այլև եղանակավորող և նման ուրիշ բառեր, ինչպես՝ **երևի, հավանաբար, գրեթե, կարծես, կարծես, ասես, հազիվ թե, ըստ երևույթին** և այլն:

Սա գրեթե կատարելություն է (Թում):

Կարծես թե ես եմ այդ երգը հյուսել,

Կարծես թե ես եմ լալիս այդ երգում,

Կարծես թե քեզ եմ կարտուով երգում (ՎՏ):

Հազիվ թե դյուրին լինի սլատասխան տալ այս հարցին (ԱՀ): **Թվում է, թե Պատկանյանի որոտրնդաստ քարոզների մեջ էր մշակվել հատուկ պարզ, առաջավոր ու պատկերավոր, հեզնող ու մտրակող հրապարակախոսական հետազա նրա (Նայրանդյանի) խորհրդածությունների լեզուն (Ա Հովհ):**

Վերջին օրինակում **թվում է**-ն եղանակավորող արժեք ունի:

ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հարցական կոչվում են այն նախադասությունները, որոնք արտահայտում են հարցում:

Հարցական նախադասությունների ստորոգյալը քերականական տեսակետից որևէ առանձնահատկություն չունի. այն կարող է արտահայտվել բայի համարյա բոլոր եղանակներով: Այս նախադասությունների առավել բնորոշ ու ընդհանուր հատկանիշը հարցական հնչերանգն է, հարցումը: **Չե՞ք ճանաչում Էմմային, չե՞ք ճանաչում հենց իրեն (ՆԳ):** **Ո՞րն վրա էին հարձակվում՝ մի չնչին գորամասի՞, թե՞ բանակի (ԳԳ):**

Սովորաբար պարզ հարցական նախադասությամբ միայն մեկ հարց է տրվում, հետևապես և նախադասության միայն մեկ անդամ է արտահայտվում հարցականով: Այսպես, «Արամը քո ամենամոտիկ ընկերն է» նախադասության մեջ, որտեղ ստորոգյալն առնված է հարցականի տակ, հնարավոր չէ միաժամանակ մեկ այլ անդամ ևս արտահայտել հարցումով: Այլ անդամ հարցական հնչերանգով արտահայտելու դեպքում ստորոգյալը և մյուս անդամները հարցումով չեն արտահայտվի: Այսպես՝ **Արամը քո ամենամոտիկ ընկերն է: Արամը քո՞ ամենամոտիկ ընկերն է: Արա՞մն է քո ամենամոտիկ ընկերը:**

Մինչդեռ, օրինակ, բացականչական հնչերանգով կարող են արտահայտվել միևնույն նախադասության մեջ մեկից ավելի անդամներ:

Ի՞նչ որսի օր էր բացվե՞լ (ՎԱ): **Պակասությունից ինչքա՞ն վեճեր են առաջ գալիս մեր հարևանների տներո՞ւմ (ՎԱ):** **Ի՞նչ որս է... Ո՞նց բերե՞ց (ՎԱ):**

Մեկից ավելի հարցում կարող է լինել բազմակի անդամներ ունեցող պարզ նա-

խաղասություններում: Մի ծանր հավիտենական հոտ կար նրա խանութում՝ պանրի՞ ա- սես, թթմաների՞, տեղաշորերի՞, կեղտոտ փալասների՞, մի կատարյալ նեխարան (ԳԳ): Եվ այս բոլորը ոչնչի՞ համար, չեկուրի՞ համար (Վ. Շեքսպիր, քարզմ.):

Բարդ, ինչպես և միավորյալ նախադասություններում կարող են լինել հարցում արտահայտող մեկից ավելի բառեր: Ի՞նչ ես կարծում, նա լսո՞ւմ է Արմիկին (ԱՍ): Սա ի՞նչ բան է, ինչո՞ւ մինչև հիմա քիմիայի առաջին քառորդի արդյունքները չկան (ԱՍ): Իսկ դու ո՞ր էիր այս քանի օրը, ինչո՞ւ դպրոց չէիր գալիս (ԱՍ): Նա քեզ վիրավորե՞ց, սպառնա՞ց (ԱՍ): Ի՞նչ ունիս, Խաչատուր, ինչո՞ւ չես խոսում (ԱՍ):

Հարցումը համընկնում է նախադասության տրամաբանական շեշտի հետ. այն դառնում է տրամաբանական շեշտի դրսևորման ձև և հաճախ դրվում է ստորոգյալի վրա: Արդյոք այրվե՞ց, ծուխ ու մոխիր դարձա՞վ ոգիների աշտարակի վրա հոխորտացող աստղադիտարանը (Իս.): Հիշո՞ւմ են արդյոք քեզ այնտեղ, Անունդ տալի՞ս են արդյոք (ՎՏ):

Տրամաբանական շեշտի տեղափոխության պատճառով հարցման տակ կարող են առնվել նախադասության ենթական, ինչպես և այլ անդամներ:

Արդյոք նորից երազնե՞րն են թափառում, Սիրո անուշ նվազնե՞րն են ինձ կանչում (ՎՏ): Ամե՞ն զարկն է արդյոք հղկում իմ երգերը (ԳԷ): Ի՞նչ վարձ էին ստանում նրանք (Բակ.): Ին- չի՞ մասին Եվ ինչո՞ւ են վիճում Ծիծեռնակներն այս մայիսին Որոտանի կիրճում (ՀՍ): Հագ- լո՞ւ, դու լա՞վ էիր ապրում քո գյուղում (Բակ.):

Հարցման տակ կարող են առնվել նաև նյութական իմաստ չունեցող, հետևապես և նախադասության անդամ չհանդիսացող մի շարք բառեր: Դրանցից ամենաբնորոշները երկբայական-հարցական եղանակավորող բառերն են, ինչպես՝ **միթե, ար- դյոք, գուցե, չլինի, չլինի թե** և այլն: Մի՞թե պիտի ետ մնա (Բակ.): Չլինի՞ թե հիմար բան ա- սացի (ՆԳ): Բայց արդյո՞ք կսթափվի (ԳԳ): Չլինի՞ դու ես այն քաղաքից եկած մարդը (ՎՓ):

Ի վերջո, հարցումով կարող են արտահայտվել մի քանի շաղկապներ, կապեր և նույնիսկ լեզվական այնպիսի միավորներ, ինչպիսիք են վանկը, հնչյունը, բայց վեր- ջիններս, իհարկե, փոխանվանաբար գործածվելիս:

Գարշելիների հե՞տ պիտի քնեն (ԳԳ): Մեր գլխի վրա՞ են փորձում հավատարմությունը (ԳԳ): Սա «տ՛ւ» է, թե՞ «տ»: «Սենյակ» բառի երկրորդ վանկը դու համարում ես **նյա՞կ-ը, թե՞ յակ-ը**:

Սակայն նախադասության տարբեր անդամների, տարբեր բնույթի բառերի՝ հարց- ման հնչերանգով գործածվելու միջև հավասարության նշան չի կարելի դնել: Ինչպես ասվեց, նախադասության անդամներից այս տեսակետից առանձնանում է ստորո- գյալը, որը համեմատաբար ավելի շատ հանդես է գալիս որպես հարցում կրող: Այնու- հետև, լեզվի մեջ կան մի շարք բառեր, հատկապես եղանակավորող բառեր և հարցա- կան-հարաբերական դերանունները, որոնք ևս բնորոշ են այդ տեսակետից:

Այս առումով հետաքրքրական են այնպիսի նախադասությունները, որոնցում հարցումը հնչերանգային տեսակետից մեկ բառի վրա է ընկնում, իսկ հարցման բուն էությունը՝ այլ բառի վրա. վերջինս սովորաբար լինում է բացարձակ անորոշ իմաստ ունեցող բառ, որն իր այդպիսի հատկանիշի պատճառով հակված է լինում հաճախ որպես հարցական բառ գործածվելու: - Իսկ ա՞յս նախարարը ում կողմն է, - հարցրեց նրանցից մեկը Ռշտունյաց նախարարին (ԳԳ): Այս նախադասության մեջ հարցական հնչերանգով արտասանվում է **այս** բառը, բայց հարցը տրված է նախարարի «ուն

կողմ» լինելը իմանալու համար, որի պատճառով էլ այդ հարցի պատասխանն է. «-Վարդանի՛ կողմն է, - պատասխանեց Ռշտունյաց նախարարը» (ԳԳ): Նման դեպքերում նախադասության մեջ հարցական հնչերանգով գործածված բառը փաստորեն տրամաբանական շեշտ կրողն է, այդ շեշտը դրված չէ այն բառի վրա, որով կատարված հարցումով պիտի պարզվի իրողությունը:

Բերենք այդ կարգի այլ օրինակներ:

- Իսկ այն երիտասա՞րդն ով էր, - հանկարծ հարցրեց Ռուբենը...

- Էն երիտասարդը ընկերուհուս եղբայրն էր (ԳԳ): Սա ի՞նչ բան է (ԳԳ): Դո՞ւք ինչ կասեք սրա համար (Մուր.): Իսկ քո՞ ինչն է (ԳԳ):

Հարցումը ոչ թե հարցական-հարաբերական դերանվան, այլ ուրիշ բառի վրա կարող է դրվել նաև այն դեպքում, երբ երկխոսության ժամանակ հարցական նախադասության արտահայտած միտքը նորից խոսողի կողմից առնվում է հարցման տակ՝ այն լավ լսած, հասկացած չլինելու կամ այլ պատճառով:

Բայց մարդ է ու հիվանդացավ հանկարծ, ի՞նչ կանես, - ասաց նա: Ինչ կանե՞մ, - բարկացավ Ռշտունյաց նախարարը (ԳԳ): Լավ, ի՞նչ կարող են անել հոները: - Հոներն ինչ կարող են անել... Հոները շատ բան կարող են անել (ԳԳ):

Միշտ չէ, որ նախադասության մեջ հարցման առկայությամբ նախադասությունը դառնում է հարցական: Երբեմն մեկ բառի վրա ընկնող հարցումը էական չի լինում ամբողջ նախադասության բնույթի համար, և նախադասության բնույթի կամ երանգի մեջ այն տեղ է գտնում որպես մի մասնավոր տարր: *Շղթաների ձայնի՞ց, թե՞ ոստիկանների տարօրինակ հագուստից, ճանապարհի պոնկին արածող ոչխարները խրտնեցին, իսկ դեղնավուն գույնի փափլիկ շնիկն սկսեց տազնապով հաչել (ԳԳ): Իմ ձենի՞ց, թե՞ սարսափած տեսքից դա կանգ առավ, զարմացած վերև է մտիկ անում ու իրեն-իրեն մրթմրթում (ՎԱ): Նա մենակ էր, և դեմքից կախ էր ընկել և պարտություն էր մի գոլորշու քուլա՞, թե՞ մորուք (ԳԳ):*

Հարցական նախադասությունների ստորոգյալն իր արտահայտության միջոցներով ու ձևերով բազմազան է: Այն լինում է պարզ և բաղադրյալ:

Հարցական նախադասությունների պարզ ստորոգյալն արտահայտվում է բայի սահմանական, ենթադրական, հարկադրական, ըղձական եղանակներով: *Չե՞ս ամաչում... չե՞ս ամաչում... չե՞ս ամաչում... Դու գժվե՞՞ր ես, թե... Ինչո՞ւ էիր դուրս փակել և չէիր ուզում ինձ ներս թողնել. ինչո՞ւ էիր փակել (ՆԳ): Երկու օրից կհասնե՞նք (ԳԳ): Ո՞ր փախչեմ, ինչպե՞ս ազատվեմ այս դրությունից (ՆԳ): Պիտի մաքրե՞ս փողոցը (ԳԳ): Դու պիտի լռե՞ս (ԳԳ):*

Հրամայական եղանակով, որպես կանոն, հարցական նախադասություն չի արտահայտվում, և կարծես թե սպասելի էլ չէ, որ այդ եղանակի բայաձևն առնվի հարցման տակ: Սակայն երբեմն հրամայական եղանակի բայաձևը կրում է հարցում: *Դա լինում է այն դեպքում, երբ խոսողը ցանկանում է որևէ պատճառով (չիմանալու, չհամաձայնվելու, զարմանքի և այլն) հարց տալ խոսակցի, որևէ մեկի կամ իր արտահայտած հրամայական եղանակի բայաձևի մասին: Է՞, եղբայր, որ կռիվ գա, բա աշխարհը կվերցնես կտաս, թե առ տա՞ր (ԳԳ): Նա ասաց՝ գնա՞: Դու նրան ասացիր՝ արի՞:*

Հարցական նախադասությունների ստորոգյալը կարող է բաղադրյալ լինել: *Ո՞րն է ճշմարիտը, Ո՞րն է սուտը: Ի՞նչն է ճշմարիտը, Ի՞նչն է սուտը (Իս): Անահիտ, հիվա՞նդ ես (ԳԳ):*

Վերջապես, հարցական բնույթ կարող են ունենալ անդեմ նախադասությունները, ինչպես և սակավ դեպքերում՝ անենթակա նախադասությունները:

Ի՞նչ ասել նրանց, ինչպե՞ս շնորհակալ լինել մեր գոհված ընկերների փոխարեն (ՀՔ): Էլ ի՞նչ երազի պատրանքով խաբվել, Եվ ի՞նչ խոսքերով գրուցել հիմա (ՎՏ):

Հարցական նախադասության մեջ արտահայտված հարցման էությունը, նպատակը միօրինակ չեն: Այդ նախադասություններն ունեն բազմապիսի կիրառություններ:

Հարցական նախադասությունը գործածվում է, նախ, չինացածի վերաբերյալ հարց արտահայտելու համար, հարցումն արվում է չինացածն իմանալու նպատակով: Այդպիսի դեպքերում սովորաբար հարցին պատասխան է սպասվում:

- Սա ի՞նչ բան է, - հետաքրքրվեց նա: - Չիարշավ է, - ասաց Ատոմը: - Տղաներ են (ԳԳ): Մի՞թե մենք գորական ենք դառնալու: - Այո, գորական: Դա է ձեր ուղին (ԳԳ):

Հարցական նախադասությունների կիրառությունների շարքում որոշակի տեղ են գրավում հոռետրական նպատակով կիրառությունները: Դրանք այնպիսի նախադասություններ են, որոնք կազմությանբ, հնչերանգով հարցական են, բայց արտահայտում են հաստատական միտք:

Առանց մարտունակության ինչի՞ է պետք սպառազենքը (ԳԳ): Այս նախադասությամբ խոսողի նպատակն է արտահայտել այն միտքը, որ առանց մարտունակության սպառազենքը պետքական լինել չի կարող: Թերևս պետք է հասկանալ նաև հետևյալը. սպառազենքի հետ միասին պետք է ապահովել մարտունակությունը:

Այլ օրինակներ՝ *Մենակ մարդն ի՞նչ կարող է անել աշխարհքի սարքի դեմ: Չարկես, զարկվես, օգո՞ւտն ինչ (Իս):* Հա՞րկ կա ասել, որ արևմտյան համբավված «պոետը» սլարգապես բախում էր բաց դռներ (Ա. Հովհ.):

Հարցական նախադասությունները հաճախ գործածվում են հանդիմանություն կամ որևէ երևույթից դժգոհություն, որևէ գործողության կատարման մերժում արտահայտելու նպատակով: *Քե՞զ ինչ, ուր եմ գնում, ինչո՞ւ ես հետևում ինձ, - բարկացալով պատասխանեց՝ Լիլիթը (Իս):* Չեզ հետ չե՞մ, - սպառնաց Վասակը (ԳԳ): Է, ի՞նչ եք նստել, - հանկարծ գայրացավ Մարկոսը (ԳԳ): Ի՞նչ եք ծիծաղում, - չարացավ Մարիամը (ՄԽ): Չգիտես, ո՞ւմ էր հարկավոր այս արդյուզարդը, այս անմիտ ցույցը, - մրթմրթաց Սյունյաց նախարարի կողքով դուրս ելնող Ուրծնա նախարարը (ԳԳ): Նժույզդ տամ, տանեք թաղեք մորուսներո՞ւմ, - մերժեց Մարկոսը (ԳԳ):

Այսպիսի նախադասությունները սովորաբար, եթե ունեն հաստատական բնույթի կազմություն, մտքով ժխտական են լինում, ժխտում են արտահայտում, և, ընդհակառակը, եթե ձևով ժխտական են, մտքով լինում են հաստատական:

Հարցական նախադասությունները երբեմն արտահայտում են խորհուրդ, ցուցում, խնդրանք խոսակցին՝ կատարելու այս կամ այն գործողությունը:

Նեղություն չէի՞ք կրի օգնել ինձ: - Կարելի՞ է մի թերթ խնդրել, - ասաց նա և փողը տվեց լրագրավաճառին: Լավ չէ՞ր լինի՝ ձեր տեղը զիջեիք այն ընկերոջը:

Երբեմն հարցական նախադասության մեջ հոռետրականությունն ու հանդիմանությունը տեղ են գտնում միաժամանակ. հարցական նախադասությունն ունենում է և՛ մեկի, և՛ մյուսի հատկանիշը: *Ի՞նչ հարկավորություն ունիս էլի նահատակ լինելու: Այդ ի՞նչ խելագարություն է, որ ես ուրիշից պարտք անեմ ապրեմ, Հյուսիսսփայլի համար տիվ և գիշեր աշխատեմ, բայց Հյուսիսսփայլից մի կուպեկ չստանամ, այդ ո՞ր գրքի մեջ գրված է: Եվ ո՞ր մար-*

¹ Մենք այս և հաջորդ օրինակներում դիտմամբ ընդգծում ենք հեղինակային խոսքի որոշ բառեր, որոնք բնութագրում են տվյալ հարցական նախադասության էությունը, նպատակը:

դը, որ չուներ բնակություն, կերակուր և զգեստ, կարող է գործ կատարել և այն ձրի (Նալբ) :

Հարցական նախադասությունները երբեմն գործածվում են որևէ գործողության, երևույթի մասին զարմանք արտահայտելու համար:

Այ մարդ, ճիշտ ես ասում (Ա Վարդանյան): (Ուստիան) - Վա՞յ, էս ո՞նց եղավ: Էս դուստ է՞, թե՞ երագ է: (Առաջ է գալիս և զարմացած նայում Նազարին) Էս ի՞նչ բանի ես, ա՛յ մարդ (ԳԳ):

Հարցական նախադասությունները գործածվում են բարդ նախադասության մեջ՝ զուգակցվելով հրամայական, երբեմն էլ պատմողական երանգի նախադասությունների հետ, կարող են արտահայտել պայման: Մարդ պետք է խելացի լինի: Մի փոքր նվաստացնո՞ւմ են՝ համբերիլ, ծաղրո՞ւմ են՝ տար, գլուխդ խոնարի պահիր՝ կրարձրանաս մի օր (ԳԳ): Այս օրինակը կարելի է արտահայտել նաև նախադասության թե՛ հարցական և թե՛ հրամայական տարրը վերածելով պատմողականի: Կազմենք այդպիսի մեկ տարբերակ: «Մարդ պետք է խելացի լինի: Եթե մի փոքր նվաստացնում են, պետք է համբերել, եթե ծաղրում են, պետք է տանել, գլուխը խոնարի պահել, և մարդ կրարձրանա մի օր»: Բերենք մեկ օրինակ ևս. Իշխանություն կա՞ ձեռքումդ, հարո՞ւստ ես, ուրեմն ամենալավ, ամենապատվելի մարդն ես դու հայերի մեջ (Նալբ) : Այս նախադասությամբ արտահայտվում է ոչ թե խոսակցին ուղղված հարցում, այլ քննադատական ընդհանրացնող միտք՝ ժամանակի վերնախավերի հասցեին:

Սակայն միշտ չէ, որ հարցական նախադասությունը կամ նախադասության հարցական մասը պայման արտահայտելիս ունենում է այդքան լայն ընդհանրացնող նշանակություն:

- Մաթո՛ս, գիշերահան ագռավի պես կռավիլ մի, բա իսկի քո ոչխարիցը մեկն ու մեկը քարափիցը վեր չի ընկնո՞ւմ...

- Վեր է ընկնո՞ւմ՝ արբշումի պես բուրդը պետությանն ենք տալիս, միսն էլ խորոված ենք անում... (ՎԱ):

«Արամ ասածս էլ մարդ հո չի, կրակ է, կրակ: Խոսքը բերանիցը դուրս եկա՞վ՝ չի թողնի սառչի, կկատարի»՝ (ՎԱ):

Հարցական նախադասությունները կարող են արտահայտել խոսողի երկբայական վերաբերմունքը: Իսկ ինչպե՞ս պարզել Չգնա՞լ տուն (ՍԱ):

Այդպիսի նախադասություններին մոտ են երկընտրանք արտահայտող հարցական նախադասությունները:

Արդյո՞ք թույլ տալ, որ հայ ժողովուրդը և, առաջին հերթին, նրա միջից ելած երիտասարդությունը, զենք դառնա ցարիզմի նպատակների համար, թե՞, ընդհակառակը, թեքել ժողովրդի և երիտասարդության համակրանքն ու մարտական կարողությունը դեպի ռուս և համաեվրոպական ռևոլյուցիան, որը կոչված է խորտակելու ոչ միայն ցարիզմի, այլև արևմտյան պետությունների արտաքին ագրեսիան և ներքին ռեակցիան: Այսպես էր դնում հարցը հայ հեղափոխական դեմոկրատիայի ղեկավար Մ. Նալբանդյանը (Ա Հովհ) :

Հարցական նախադասությամբ երբեմն արտահայտվում է իրեն՝ խոսողին ուղղված հարցում, որ գործածվում է ոճական հատուկ նպատակով: (Պեսյո) Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն, ի՞նչ մարթահետաբումն իս դուն, ի՞նչ անում ունիս դուն... ի՞նչ հաջաթ, ջիանճվելի վրա ինչո՞վ իս ավել... Դուն խո մարդ չիս, մարթկերանց համար կերակուր է ստեղծի քիզ աստուծ (Գ Մունդուկյան): Ո՞ր եմ գնում ես, ո՞ր պիտի հանգչեմ, Ո՞րը պիտի լինի կայանս վերջին (Իս) :

¹ Սրանք մոտենում են պատմողական բնույթի նախադասություններին:

Այսպիսի նախադասությունների ստորոգյալն արտահայտվում է կամ առաջին դեմքով, և կամ խոսողն իրեն պայմանականորեն դիտում է որպես իր խոսակից, և այս դեպքում ստորոգյալն արտահայտվում է երկրորդ դեմքով:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հրամայական նախադասություններն արտահայտում են խոսողի թելադրանքը խոսակցին՝ կատարելու որևէ գործողություն:

Հրամայական նախադասություններն իմաստային տեսակետից շատ բազմազան են: Նրանցով կարելի է արտահայտել հրաման, կարգադրություն, առաջարկ, ցուցում, հորդոր, նույնիսկ խնդրանք: Ինչպես երևում է այս փվարկումից, չնայած «հրամայական» հորջորջմանը, քննարկվող նախադասությունների կիրառության սահմանները լայն են, և այդ նախադասությունները հաճախ շատ հեռու են հրաման արտահայտելուց: Հետևյալ կարգի օրինակներից հեշտությամբ կարելի է եզրակացնել, որ քննարկվող նախադասությունների «հրամայական» հորջորջումը զգալի չափով պայմանական է:

Ուրախ կաց, տիկին, մի՛ տանջիր սիրտդ այդ դառն հիշողություններով (Բ): Աղա՛ Նազար, դու քո աղայությանդ վայել, հանգիստ մտի՛ր (Իս): Իմ կողմից ներողություն խնդրիր (Բ): Արամ, հոգուդ մատաղ, էն բանի մասին մտածիր... և հետևիր առողջությանդ (ՍԱ):

Իսկ ինչի՞ հիման վրա են այդպիսի տարբերություններ ունեցող նախադասությունները միավորվում մեկ տեսակի մեջ, ո՞րն է ընդհանուրը այդ բոլորի մեջ: Ընդհանուրն այն է, որ չնայած մտքի տարբերություններին, այդ բոլոր դեպքերում էլ խոսողը դիմում է խոսակցին՝ այս կամ այն գործողությունը կատարելու թելադրանքով:

Հրամայական նախադասության կառուցվածքի մեջ վճռական դերը պատկանում է ստորոգյալին: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է երկկազմ նախադասություններին:

Հրամայական նախադասության ստորոգյալն արտահայտվում է հետևյալ եղանակային ձևերով՝

1. գերազանցապես բայի հրամայական եղանակով.

Որպես փոքորիկ, իջե՛ք ավերիչ Եվ խորրակեցե՛ք աշխարհն այս զազիր, Փոշի դարչրե՛ք այստեղ ամեն ինչ (ՎՏ): Երգի՛ր, սեր երգիր (ՍԱ):

2. ենթադրական եղանակի ապառնի ժամանակի երկրորդ դեմքով.

Էգուց տավարը Միմոնին պահ կդասս, կգաս բակատեղ, համ հետդ հաց կբերես, համ մեզ կօգնես (ՎԱ): Բոլորդ կգաք իմ գունդը (ԳԳ): Կկրակես անընդհատ քշնամու ուշադրությունը գրավելու համար (ՍԱ):

3. ըղձական եղանակով.

Իշխաններ, չծախե՛ք մեր հողիները, - գոչեց համարյա հրամայական ձայնով մուսլ զինվորը: - Չանե՛ք ձեզ անպատիվ (ԳԳ): Չշարժվե՛ս, - խստորեն պատվիրեց նա (ԱՀ):

Ըղձական եղանակի հաստատական ու ժխտական ձևերի համեմատությունից երևում է, որ հրամայական բնույթի նախադասության կազմության մեջ ըղձականի ժխտական ձևը ավելի լայն գործածություն ունի, քան թե հաստատական ձևը:

4. սահմանական եղանակի ներկա ժամանակի երկրորդ դեմքով. - *Հենց այս րոպեին գնում ես նրա մոտ և հայտնում այդ մասին: Այսպես, ահա՛, այսպես, հետո պտտվում եք, շարքով, շարքով... - լսվում է բալետմեյստեր Ջ. Մուրադյանի ձայնը (լր):*

5. ըղձական եղանակի հոգնակի առաջին դեմքով՝ հատկապես կոչ արտահայտող հրամայական նախադասություններում:

Բայի առաջին դեմքով արտահայտված ստորոգյալով հրամայական նախադասությունները, ի տարբերություն երկրորդ դեմքով արտահայտվածների, այն յուրահատկությունն ունեն, որ առաջինների մեջ չկա խոսողի և խոսակցի՝ առաջին ու երկրորդ դեմքերի հակադրությունը, և խոսողը խոսակցին թելադրած գործողությունը չի համարում որպես միայն ու միայն խոսակցին վերաբերող գործողություն, այլ այն դիտում է որպես նաև իրեն՝ խոսողին, վերաբերող: Այսպիսով՝ հրամայական նախադասության ստորոգյալի՝ բայի առաջին դեմքով դրվելն ունի ռճական նշանակություն:

Հրամայական երանգի նախադասությունների շարքը պետք է դասել նաև այնպիսի միակազմ դիմավոր նախադասություններ, որոնց ստորոգյալն արտահայտված է բայի երկրորդ դեմքով (հիմնականում՝ հրամայական եղանակով): *Մի՛ լինի ուրազի պես՝ Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, Այլ եղի՛ր սողցի պես՝ Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:*

Անդեմ նախադասություններից հաճախ որպես հրամայական են գործածվում այնպիսիները, որոնց գերադաս անդամն արտահայտված է անորոշ դերբայով, ունենում է շեշտ, արտահայտում է հրաման, կոչ, կարգադրություն և այլն:

Թերվել՛ դեպի ձախ, դեպի Փոքր Ղարաքիլիսա, այնտեղից՝ Կազաչի պոստ (ԱՀ): Թևանցել՛ գերեզմանատան ճանապարհով և հարձակվել՛ ճակատից ու կողքից (ԱՀ): Խթանել՛, խթանել՛... (ԱՀ): Շեշտակի հարված, տրորել՛ ձիերի տակ (ԱՀ):

Հրամայական բնույթի կարող են լինել նաև որոշ անվանական նախադասություններ:

Ո՛չ մի խոսք (ՔԹ): Լուսթյուն (Մուր.): Սո՛ւս, հեթանո՛ւս (Մուր.): - Առա՛ջ, առա՛ջ. - որոտաց բազմությունը (Մուր.): Զայլերով առաջ... մա՛րջ (ԳԳ):

Հրամայական նախադասության յուրահատկություններից է, որ նա սովորաբար իր վրա կրում է շեշտ:

Հրամայական նախադասության բնորոշ հնչերանգի ուժգնությունը պայմանավորված է խոսողի վերաբերմունքով, նպատակով. բնականաբար, վճռական հրամանի, կարգադրության բովանդակություն ունեցող նախադասության հնչերանգը զգալի չափով տարբերվում է հորդորանքի բովանդակություն ունեցող նախադասության հնչերանգից:

Երբեմն շեշտը թույլ է լինում այնքան, որ գրավոր խոսքի մեջ չի նշվում: Դրանից չի փոխվում նախադասության բնույթը դարձյալ վերևում նշված պատճառով:

Հրամայական նախադասության մեջ շեշտադրության տեսակետից հետաքրքրական կարող է լինել Նար-Դոսի «Պայքար» վեպից բերված հետևյալ երկխոսությունը, որի մեջ գործածված են հրամայական նախադասություններ, սակայն հեղինակը ոչ բոլոր հրամայական նախադասություններում է նշանակել շեշտ: Երկխոսությունը սառնասիրտ, անվրդով Վահանի և հավասարակշռությունից դուրս եկած, Վահանի նկատմամբ վրդովմունքով լցված Մանեի միջև է: Նար-Դոսը գրավոր խոսքի մեջ շեշտադրությամբ կարողացել է ներկայացնել նրանցից յուրաքանչյուրի խոսելու տոնի բարձրությունը մյուսի համեմատությամբ, իսկ դրանով էլ՝ ավելի ամբողջական դարձնել նրանց հոգեվիճակի պատկերը այդ պահին: Բերում ենք երկխոսությունը՝ քննարկվող հարցի համար ոչ կարևոր որոշ նախադասությունների կրճատումներով:

- *Լռի՛ր, օձ, - աղաղակեց նա (Մանեն) անզուսպ կատաղությամբ: - ...Հեռացի՛ր, գնա՛, հանգիստ թող ինձ...*

- *Մանեն՛, բաց արա:*

- *Հեռացի՛ր, - լսվեց ներսից Մանենի ջղային կատաղի աղաղակը:*

- *Խելագարվե՛լ ես, ի՞նչ է:*

- *Այո՛, խելագարվել եմ, հեռացի՛ր:*

- *Բաց արա, ասում եմ:*

- *Չեմ բանայ, հեռացի՛ր:*

- *Բան եմ ուզում ասել:*

- *Չեմ ուզում, հեռացի՛ր:*

- *Դու հիմարություն մի անիր, բաց արա:*

- *Ախ, չեմ ուզում քեզ տեսնել, լսո՞ւմ ես, չե՛մ ուզում, չե՛մ ուզում, չե՛մ ուզում...*

- *Մանեն, բաց արա, խնդրում եմ (ՆԳ):*

Այս փաստն իսկ ցույց է տալիս, որ հրամայական նախադասությունների շեշտը գրավոր խոսքի մեջ ոչ միշտ է անհրաժեշտ. դա պայմանավորված է նախադասության երանգային նրբին հատկանիշներով:

Դա վերաբերում է մասնավորապես հրամայական եղանակի բայաձևով արտահայտված ստորոգյալ ունեցող որոշ նախադասությունների: Այս դեպքում նախադասության երանգը որոշող դերը կատարում է եղանակի քերականական կարգը:

Իսկ երբ նախադասության ստորոգյալն արտահայտվում է այլ եղանակային ձևերով, և կամ նախադասությունը միակազմ է, նախադասության հրամայական բնույթի ձևավորման համար շեշտը համեմատաբար ավելի անհրաժեշտ է դառնում: *Չսարսափես՝ դու ամենի երթից այդ (ԵԶ): - Խուճալի չմատնվել, - դարձավ նա մարտիկներին: - Կրակ բացելով դո՛ւրս գալ Գեղուտը և այնտեղից ուղիղ դեպի Ղզլախչախս (ԱՀ): Ամբոսները սվինները, առաջ, իմ ետևից (ԱՀ):*

Նման պարագաներում նախադասության շեշտը ճիշտ չգործածելու դեպքում կարող է փոխվել նախադասության միտքը, հետևապես և բնույթը: Օրինակ՝ «Ոչ մի պատասխան» նախադասությունը պատմողական առոգանությամբ կնշանակեր «Ոչ մի պատասխան չեղավ (չտրվեց, չտվեց, չլսվեց և այլն)»:

Բախեց դուռը: Ոչ մի պատասխան (ԳԳ): Մինչդեռ նույն նախադասությունը հրամայական հնչերանգով կնշանակի՝ «Ոչ մի պատասխան մի՛ տա, մի՛ տվեք»:

Մի այլ օրինակ. *Սուրենը հրամայեց. «Կրակ» (ԱՀ):* Այստեղ «Կրակ» հրամայական նախադասություն է և արտահայտում է «կրակիր, կրակ բաց (բացեք)» միտքը: Մինչդեռ «Կրակը» -ը մի այլ դեպքում կարող է գործածվել նկարագրության նպատակով, որով հաստատվի մի տեղում կրակ լինելը, կրակի գոյությունը, հետևապես և նախադասությունն այս դեպքում կլինի պատմողական:

Հրամայական նախադասության շեշտը, ինչպես տեսանք, սովորաբար դրվում է ստորոգյալի վրա: Եթե հրամայական նախադասության ստորոգյալն արտահայտված է հարադիր բայով, շեշտը դրվում է հարադիր բայի անվանական բաղադրիչի վրա: *Անձնատո՛ր եղեք (ԱՀ): Դո՛ւրս արեք սրան (ԱԴ): Նե՛րս եկեք, իշխանիկներ՛ (ԳԳ):*

Անդեմ հրամայական նախադասություններում շեշտը, որպես կանոն, դրվում է գլխավոր անդամի վրա: *Ու վերջապես հեռագիր... Դիմավորել, վազոն յոթ (ՀՍ):*

Եթե հրամայական նախադասության ստորոգյալը արտահայտված է հրամայական եղանակի արգելականով կամ այլ եղանակների ժխտական խոնարհումով, ապա շեշտը դրվում է արգելական մասնիկի կամ ժխտական օժանդակ բայի վրա (եթե այդպիսին կա): *Մի՛ լար, նագելիս, մի՛ լար (Իս): Մի՛ կանչեք ինձ, հույսի նոր խոսքերով ինձ մի՛ դյուքեր (ՎՏ): Դու չե՛ս գնա և չե՛ս անի այդ:*

Շեշտադրության այս դեպքերը վերաբերում են հրամայական նախադասության սովորական շարադասությանը: Իսկ շրջուն շարադասության դեպքում շեշտը բնականաբար ընկնում է նախադասության այն անդամի վրա, որը տրամաբանորեն առանձնացվում և ուշադրության է առնվում: Վերցնենք մեկ նախադասություն. «*Հիմա կատարի՞ր այս հանձնարարությունը*»:

Այս նախադասությունն ունի սովորական շարադասություն, որի պատճառով շեշտը դրված է ստորոգյալի վրա: Սակայն, նայած խոսքի նպատակին, կարող է այդ նախադասությունը գործածվել շրջուն շարադասությամբ, և համապատասխանաբար կփոխվի տրամաբանական շեշտի տեղը: Այսպես՝

Այս հանձնարարությունը հիմա՛ կատարի՞ր (և ոչ թե հետո):

Հիմա՛ այս հանձնարարությունը կատարի՞ր (և ոչ թե այն) և այլն:

Հրամայական նախադասությունները իմաստային տեսակետից բազմազան են: Իմաստային այդ տարբերությունները հաճախ միանգամայն բացահայտ են նույնիսկ խոսքից դուրս: Սակայն հաճախ էլ նրանց երանգային տարբերությունները որոշակիորեն կարող են հասկացվել միայն խոսքի մեջ՝ կից նախադասությունները հաշվի առնելու դեպքում կամ խոսելու կոնկրետ պայմաններում:

Համեմատենք հետևյալ երկու օրինակներն իրար հետ այդ տեսակետից:

*Չարդեցե՛ք անդուլ, անգութ, անխնա,
Չնջեցե՛ք աշխարհն ապական ու հին,
Թող քարը քարի վրա չմնա,
Ողջը մատնեցե՛ք հրրին ու մահին:*

Գինի՛ բերեք, է՛յ, գինի՛ բերեք:

Առանձին վերցրած՝ կարող է թվալ, թե առաջին օրինակը հրաման է, այն էլ շատ խիստ հրաման, իսկ երկրորդը սովորական պահանջ է կամ նույնիսկ խնդրանք: Բայց երբ նկատի ենք առնում, որ առաջին քառատողը Վ. Տերյանինն է, գրված է հեղափոխության տարիներին և ուղղված է բանվոր դասակարգին, հասկանալի է դառնում, որ այդ ոչ թե հրաման է, այլ կոչ: Իսկ մյուս նախադասությունը, որ սովորական պահանջի կամ խնդրանքի տեղ կարելի է ընդունել, վերցված է Իսահակյանի «Չինգիզ-խանը» լեգենդից, փաստորեն դաժան Չինգիզ խանի անառարկելիորեն և անմիջապես կատարում պահանջող հրամանն է: Այնպես որ նախադասությունների երանգային նրբությունները որոշելիս անհրաժեշտ է ունենալ կոնկրետ մոտեցում:

Պետք է նկատի ունենալ նաև, որ հրամայական նախադասությունների երանգների միջև որոշակի սահմանագիծ դնելը երբեմն դժվար է: Այնուամենայնիվ, մենք դրանք խմբավորում ենք՝ նկատի ունենալով յուրաքանչյուր նախադասության առավել բնորոշ, առավել էական հատկանիշը:

Հրամայական նախադասություններն արտահայտում են՝

1. հրաման, կարգադրություն.

Տարեք սրանց ամենին գլխատման հրապարակը (Իս): Շուտ հարկային մնացորդ հացը, կրելու պարկերը, գրաստը հանեցեք և չափերը բերեք (ԳԳ): Վա՛շտ, կանգնի՛ր (ԳԳ): Միսա- կը հասնելով նահանգող ջոկատների հրաման տվեց. - Ո՛չ մի քայլ ետ: Դիրքավորվել (ԱՀ):

2. պահանջ, դիմում որևէ բան կատարելու վերաբերյալ.

Աղջի՛, չա՛յ բերեք, հաց բերեք, արաղ բերեք բեռի Խեչանի համար (Թում): Մի երկու հաստ լեհեք բերեք, մի չորս ու հինգ ուժով տղեք էլ եկեք էստեղ (Թում):

3. հանդիմանություն, որն արտահայտում են և՛ ժխտական կամ արգելական, և՛ հաստատական կառուցվածքի հրամայական նախադասությունները.

Մի՛ խոսիր այդպես խրատական ոգով, տե՛ս Վահևունյաց, - խստորեն հանդիմանեց Կա- րողիկոսը (ԳԳ): Աղջի՛, ձայնդ բեզ պահիր (ՍԽ): Վե՛րջ տուր, - գուցե մինչև սրտի խորքը վի- ռավորված Արևիկը: - Ընկե՛ր Ասլան, ձեզ պահել իմացեք (ԲԹ):

4. կոչ.

Տիրապետեցե՛ք տեխնիկային և այն ավելի լավ օգտագործեցե՛ք արտադրողականություն- նը բարձրացնելու և ձեր աշխատանքը բեթևացնելու համար (լր.):

*Ե՛լ դեմոկրատիա, խոր ու խնդուն աղմկիր ամեն կողմ,
Դու՛րս թափվիր մութ խուցերից և որոտա որպես հողմ:*

*Արթնացի՛ր, երկրի դարավոր մշակ,
Վառվեցե՛ք ջահեր, փողե՛ր, հնչեցե՛ք:
Շողա՛, նոր կյանքի արյունավառ ծեզ,
Ծածանվի՛ր ազատ, կարմիր դրոշակ (ՎՏ):*

5. ցանկություն, հորդոր.

Ե՛րգ իմ, ծուլվի՛ր խորխտ այս շարքերին ահա, Իմ մանկությունն էլ քո տողերում տար... Շեփո՛ր դարձիր նրանց շրթունքների վրա Եվ նրանց հետ քայլի՛ր դեպի ճամբար (ՀՍ): Լա՛ց վերջին լացող, սիրտ իմ մենավոր, վերջին արցունքող հեկեկա՛, թափի՛ր. Երազ, երգ ու սեր, օ- լոր ու օրոր, Մի՛րտ իմ, հանդարտի՛ր (ՎՏ): Լա՛վ հանգստացիր, - հորդորեց Գյուտը (ԳԳ):

6. խնդրանք, աղերսանք.

Օհ, խնայեցե՛ք, մի՛ հիշեցնեք ինձ (Թում): Լիլի՛թ, կյանքս, ինձ ների՛ր: Լիլի՛թ, հոգո՛ւս հո- գի, այդպես լուռ ու տխուր մի՛ նայիր ինձ: Ժպտա՛, խոսի՛ր (Իս): Վե՛ր կաց, նանի՛, հաց տուր մեզ (Թում): Վա՛յ, չկտրես, Աստված սիրես, էս մինն ահա, տար քեզ ծառա, Միայն թե էդպես մի՛ ջնջիկ մեզ բնով-տեղով, Ամբողջ ցեղով (Թում):

7. խորհուրդ.

Դու մի՛ հավատա ժպտուն աչքերին... Դու շատ մի՛ խաբվիր ժպտուն աչքերից (Թում): Մի՛ վախենար, սիրուն բուրիկ... Փախիր, գնա... ինչպես մորիկ (Թում): Վերջը ոտքդ քարին կգա, հորդ խոսքից մի՛ անցնիր, Հոր անեծքը մոր անեծք չէ, հոր անեծքից վախեցիր (ՀՇ):

8. առաջարկ, հրավեր.

Համեցե՛ք, դարի՛ք ախայեր, նստի՛ր, հաց բերեն, հաց անուշ արա (Թում): Լավ, համեցե՛ք գնանք (Թում): Եկե՛ք մեր բրուտանոցը, ընկե՛ր Գարեգին, հայրս շատ ուրախ կլինի (ՍԽ):

Հրամայական նախադասության այս իմաստը մոտ է նրա խնդրանքի իմաստին, քանի որ սրա մեջ ևս խնդրանքի որոշ տարր կա, բայց իշխողը, բնորոշը, իհարկե, առաջարկի, հրավերի իմաստն է:

9. առաջադրանք.

Այս բովանդակությամբ հրամայական նախադասություններ շատ են հանդիպում մանավանդ դպրոցական դասագրքերում. *Դիտի՛ր նկարները և մի պատմվածք կազմի՛ր: Արտագրի՛ր. ընդգծի՛ր ամեն մի տողի առաջին բառի սկզբի տառը: Կազմե՛լ նախադասություն և բացատրական հոլովով գործածե՛լ հետևյալ բառերը: Գտնե՛լ անձնական դերանունները, ցո՛ւյց տալ նրանց դեմքը և թիվը, կազմե՛լ մյուս հոլովները:*

ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բացականչական նախադասություններն արտահայտում են հիացմունք, զարմանք, կոչ, ցանկություն, բարեմաղթություն և այլն:

Բացականչական նախադասությունը, բնականաբար, միտք է արտահայտում, բայց այդ միտքը չի արտահայտվում որպես, այսպես ասած, օբյեկտիվորեն արված դատություն, այլ շեշտված կերպով կրում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի կնիքը:

Բացականչական նախադասությունը, հատուկ հնչերանգից բացի, ունի կառուցվածքային որոշ այլ հատկանիշներ ևս:

Այսպես՝ նրա ստորոգյալը մեծ մասամբ արտահայտվում է բայի ըղձական եղանակով, այլ կերպ՝ ըղձական եղանակի ամենատարածված կիրառությունը (պարզ նախադասության մեջ) բացականչական նախադասության ստորոգյալի դերն է: Դա բացատրվում է ըղձական եղանակի եղանակային իմաստով:

Ա՛խ, թե այստեղ լինե՛ր, ինձ օգնե՛ր (Ար.): Թաղե՛մ սրանց թագավոր գլուխը (ԳԳ): Իմ արցունքներն արևն առնե՛ր, Հանե՛ր երկինք, դարձնե՛ր ամպ, Քամին նրան տանե՛ր, տանե՛ր, Հենու՛ր երկիր տխրությամբ (Գ Սար.):

Հարցական-հարաբերական դերանունները բացականչական նախադասություններում հաճախ են գործածվում բացականչական հնչերանգով: *Ի՛նչ լավ էր, որ տեսա (ԳԷ): Քանի՛-քանի՛ անգամ սպասե՛լ ես դողով, որ այս դուռը բանան (ԳԷ): Ինչպե՛ս դու համարձակվում ես... Ինչպե՛ս դու համարձակվում ես, - աղաղակեց Հեղինեն ցավագին (ՆԳ):*

Բացականչական նախադասությունների ձևավորման մեջ կարևոր դեր են կատարում ձայնարկությունները:

Եվ վերջալույսին մի օր, օ՛, մի օր Մանիշակագույն սարերի լանջին Բացվեինք իրար խոսքերով չնչին. Բայց ուխտը լինե՛ր անխարդախ ու խոր (ՎՏ): Այստեղ բայի ըղձական եղանակը ևս որոշ դեր կատարում է նախադասության բացականչական երանգի ձևավորման հարցում:

Բացականչական նախադասությունների կառուցվածքի քննարկումից երևում է, որ հաճախ պատմողական նախադասությունը, արտահայտվելով բացականչական հնչերանգով, վերածվում է բացականչականի: Այս դեպքում բացականչական նախադասությունը՝ որպես այդպիսին, ձևավորվում է հնչերանգի միջոցով միայն:

Այսպես. «Շատ լա՛վ է, շատ լա՛վ» (ՔԹ) նախադասությունն առանց բացականչական հնչերանգի կլինե՛ր պատմողական: Նշենք, որ, ինչպես ասվեց վերևում, պատմողական նախադասության որևէ անդամը բացականչումով արտահայտելիս դեռևս կարող է նախադասությունը չվերածվել բացականչականի:

Սակայն կան բացականչական նախադասություններ, որոնց բացականչական հնչերանգը հնարավոր չէ վերածել պատմողականի, քանի որ նրանց կազմության

մեջ որոշ բաղադրիչներ, հատկանիշներ թույլ չեն տալիս այդ անել: Հենց սրանք էլ բուն բացականչական նախադասություններն են: Դրանք, ամենից առաջ, այն նախադասություններն են, որոնց կառուցվածքի մեջ կարևոր դեր են կատարում հարցական-հարաբերական դերանունները (ոչ հարաբերականի դերով):

Ի՞նչ լավն էր էն աղջիկը, ի՞նչ լավն էին նրա ժայտուն, գվարթ աչքերը, ի՞նչ լավն էր էն ապահով տաք սենյակը (Թու՛մ): *Օ՛, ինչպե՛ս քաղցր է երկինք վերանալ, Վիշտ, հոգս մոռանալ, Լուսնի փայլի մեջ լողալ, սավառնել, Աստղերը գրկել (ՀՀակ):* *Ինչպիսի՞ հերոս ընկերներ մեռան, Մեռան՝ չկորան (ՀՀակ):* *Այս ի՞նչ կրակի մեջ է ընկել Մուկուչը (Ար):*

Բացականչական նախադասությունների ձևավորման մեջ դեր ունեն նաև որոշ եղանակավորող բառեր. *Երանի՛ և քեզ, որ եզերքին Կանաչ խնդություն, սեր պիտի երգես...քե երգդ էլ անմահ լինի մեր երգին՝ Երանի՛ և քեզ, երանի՛ և քեզ (ՄՎ):*

Թող կայծեր ցայտեն քո սմբակներից,

Թող շանթեր տեղան մեզ վրա վերից (ՄՎ):

Հաճախ է պատահում, որ վերևում թվարկված տարբեր հատկանիշները հանդես են գալիս միասնաբար:

Ա՛խ, ինչքա՛ն վիշտ, ինչքա՛ն տանջանք, ինչքա՛ն անհույս գանգատ կար այդ քաղցր ու դաժան հնչյունների մեջ (Բս): *Ա՛խ, երանի չէ՞ր բյուր և բյուր անգամ, Որ կույր ու անգետ լինեի կրկին (ՎՏ):* *Է՛, ի՞նչ չարչարանք քաշեց գյուղը, քանի՛ մարդու ծեծեցին (Բակ):*

Բացականչական նախադասությունների շարքում կարևոր տեղ են գրավում անդեմ նախադասությունները՝ հատկապես բայական կազմություն ունեցող, համեմատաբար քիչ չափով՝ նաև անվանականները:

Ա՛հ, այս ցուրտ երկրի անհայտում անհուն

Ընկնել և՛ կորչել, և՛ ննջել հավետ,

Ոչնչանալ ու մոռացվել քեզ հետ,

Ավերված երազ-հայրենական տո՛ւն...(ՎՏ):

Հիշենք, որ բայական այսպիսի կառուցվածք ունեցող անդեմ նախադասությունները ակտիվ դեր են կատարում հրամայական նախադասության կազմության մեջ: Բայց եթե հրամայական նախադասությունը ինչպես առհասարակ, այնպես էլ նման դեպքերում արտահայտում է թելադրանք խոսակցին՝ կատարելու բայով արտահայտված գործողությունը, ապա այստեղ անորոշ դերքայով արտահայտված գործողությունը կատարելը հենց իր՝ խոսողի, ցանկությունն է և իրեն է վերաբերում:

Բերենք այլ օրինակներ:

Միրել ու կրկին սիրել խնդագին,

Փայփայել բնքուշ, լինել հարազատ,

Հեռանա՛լ, դառնա՛լ կրկին ու կրկին,

Անհուն աշխարհում բացսիրտ և ազատ (ՎՏ):

Ռայսթին գռել են, գոփել են, քալանել են, հոգին հանել են, միսը շներին տվել: Չուլո՛ւմ, գուլո՛ւմ, գուլո՛ւմ (Բս):

Բացականչական նախադասության հնչերանգի համար բնորոշը բացականչումն է, որը կարող է լինել նախադասության տարբեր անդամների վրա: Մեծ մասամբ բացականչական հնչերանգն ընկնում է այն բառերի վրա, որոնք առավել բնորոշ են բա-

ցականչական նախադասության համար: Այդպիսի բառեր են, ինչպես տեսանք վերևում, ձայնարկությունները, եղանակավորող բառերը, ըղձական եղանակի բայաձևերը, հարցական-հարաբերական դերանունները (տե՛ս վերևի օրինակները): Բայց, իհարկե, դա բացարձակ կանոն չէ, և երբեմն շեղումներ լինում են նախադասության տրամաբանական շեշտի տեղափոխության պատճառով:

Բացականչական նախադասությունները երբեմն արտահայտվում են ոչ թե սովորական բացականչությամբ, որ գրության մեջ արտահայտվում է բացականչական նշանով, այլ շեշտով:

«Լահ, ինչքան նման է (Թում): Մեր դաշտերում համայնական թող ինչի՛ երգը լիաթոր, Փող ինչի թող իմ հաղթական, իմ նոր երկրում արևաշող (ՉՍ): Բարև՛, ընկերներ (ԵՉ): Փառք և երկրպագություն նրա լուսեղեն անվան (ՎՏ):

Թեև բացականչական նախադասությունների մեջ բացականչական հնչերանգը ընկնում է մեկ-երկու, համեմայն դեպս, սահմանափակ թվով բառերի վրա, բայց այն իր էությամբ վերաբերում է ամբողջ նախադասությանը:

Պետք է նկատի ունենալ, որ ամեն մի նախադասության մեջ բառի՝ բացականչական առոգանություն ունենալը դեռևս հիմք չէ այդ նախադասությունը բացականչական համարելու:

Հետևյալ նախադասություններում բացականչական հնչերանգի տակ են մեկական անդամ, և այդ առոգանության դերն էլ այդքանով սահմանափակվում է, չի տարածվում նախադասության մյուս անդամների, ամբողջ նախադասության վրա, ուստի և դրանք մնում են պատմողական նախադասություններ:

Գեղը փնչացնում է, վերևից սկսում է ծիկրատել, քաքուն մայել դեպի ներքև, վիզը ձգում է, ձգո՛ւմ է, էնքան ձգո՛ւմ է, որ էլ չի կարողանում իրան սլահի, թրք՛մփ, ընկնում է (Թում): Ուներ գանգու ՚ր, գանգու ՚ր մազեր, Փայտե փոքրիկ նժույգ ուներ, Սիրում էր նա խաղալ, վազել, Մինչև մթին տուն գար քներ (ՄՎ):

Նստեց տղան ճամփի քարին, Նայե՛ց, մայե՛ց նա շարունակ, Չէր երևում ճանապարհին ո՛չ ձիավոր, ո՛չ արեգակ (ՄՎ):

Բացականչական նախադասություններն իրենց իմաստներով ու կիրառություններով բազմազան են: Դրանք արտահայտում են՝

1. առարկայի, երևույթի, սրանց հատկանիշների նկատմամբ խոսողի դրական վերաբերմունքը, առավելապես հիացմունքը.

Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրա Անցնում օրերն, անո՛ւշ, անո՛ւշ, Անրջային թեթևասա՛հ, Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ... Ա՛խ, ի՛նչ հեշտ են սարի վրա Մահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ, Ըվին փչեց հովիվն ահա- Աղջիկն ու սերն անո՛ւշ, անո՛ւշ (Թում): Ա՛խ, որքա՛ն փարթամ կյանքը ծաղկում է Մատաղ կրծքի տակ (Թում): Այս ի՛նչ քաջ տղա է, այս ի՛նչ լավ ցրիչ (ԵՉ): Օ՛հ, ի՛նչ գեղեցիկ էր նա (Իս): Այդ օձաձև ապարանջանները որքա՛ն գեղեցիկ են, որքա՛ն խորհուրդ կա դրանց մեջ (Բ):

2. ցանկություն, իղձ, տենչանք.

Ա՛խ, ես երանի

Կայծա կ լինեի,

Որոտ-ճայթյունով

Մյուսյլ ամպերից

Ժայթքեի ըմբոստ,

Չարկեի ուժգին,

Պատռեի խավար

Կամարը երկնի (Թում):

Օ՛, երկինք մոխրակուտակ, օ՛, անձրև, երկնի արցունք.
Օ՛, գեփյուռ, մաքուր համբույր, օ՛, երկինք մոխրակուտակ,
Ա՛խ ծագե՛ր արփին հանկարծ, վառվռուն որպես արբունք,
Ոչ մոխիր լինե՛ր երկնում, ոչ տեղար անձրև արցունք (Ք.Սար):

Սրանց մոտ են մեկի կամ մի բանի նկատմամբ խոսողի երանական վերաբերմունքն արտահայտող նախադասությունները:

Երանի՛ նրան, որ արդար ձեռքով Փորել է այս խոր ջրանցքն ու առուն... Երանի՛ նրանց, որ սրտով զվարթ Դեռ նոր պիտի գան, նոր հուններ փորեն (ՍՎ): Երնե՛կ ծըտին ճյուղքի միջին ծղլվում է, բրոքոում (Թում):

Այդպիսի նախադասությունները որոշ չափով հարում են նաև առաջին կետում նշված նախադասություններին:

3. հաճելի հիշողություններ, վերապրումներ.

Եվ ինչքա՛ն ծիծաղեցին էն գիշեր ամենքն էլ, ինչքա՛ն ծիծաղեց Չանոն... Ի՛նչ ուրախ գիշեր էր, ի՛նչ ուրախ գիշեր (Թում): Քանի՛ անգամ է արտահայտվել Այս հայելու մեջ պատկերը քո, Քանի՛ անգամ ես դու վրդավել Եվ սպասել ինձ մինչև երեկո (ՀՍ):

4. ողջույն, բարեմաղթություն, որոնք մեծ մասամբ արտահայտվում են միակազմ նախադասություններով.

Ողջո՛ւյն քեզ, անհայտ, անծանոթ ընկեր, Խաղաղությո՛ւն քեզ, հեռավոր եղբայր, - Ողջո՛ւյն ձեզ, վաղվա չծնված կյանքեր (ԵԶ): Այրե՛ս, Նալ (ԳԳ): Գնաս բարով, ա՛յ ուխտավոր (Թում): Արագի՛լ, բարով եկար, Հա՛յ արագի՛լ, բարով եկար (Թում):

5. ցավակցական վերաբերմունք, անցանկալի երևույթների նկատմամբ ափսոսանքի և նման զգացումներ.

Ինչքա՛ն, ինչքա՛ն թշվառներ մեռել են անողոր ծեծի տակ (Իս): Խե՛ղճ կին... Ի՛նչ կսկիծի հանդիպեց (Իս): Որքա՛ն անփորձ, որքան հիմա՛ր եմ եղել առաջ (ՆԳ):

6. կանչ, գոչ, հրավեր՝ որևէ գործողություն կատարելու, օգնության և այլն.

Գնա՛նք, գարկե՛նք, Ջարդե՛նք, կրակե՛նք... Հա՛յ, հա՛յ, առա՛ջ, դե ձեզ տեսնե՛մ (Թում): Հա՛յ, օգնեցեք, Մեռած հո չեք (Թում):

7. երևույթների, առարկաների, անձանց նկատմամբ խոսողի բացասական վերաբերմունք, չարամաղթություն, անեծք և այլն.

Ա՛յ ամոթ ձեզ, Չղջիկ ու Ճայ, Ի՛նչ ենք լսում. վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, Անուններդ վաճառական, Ու ես տեսակ խայտառակ քա՞ն... Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, Չղջիկ ու Ճայ (Թում): Տունդ քանդվի, ա՛յ խանութպան, Անխիղճ, լիրք, չար, ֆրան-ֆստան (Թում): Ամա՛ն, հողեմ գրուխը Շահի, Աստված Շահից հետո պահի (Թում): Թաղե՛մ սրանց թագավորի գրուխը (ԳԳ): Անե՛ծք հարամանիին (ԳԳ):

8. հուսահատության, տրտմության, դժգոհության զգացում.

Մռանա՛լ, մռանա՛լ ամեն ինչ, Ամենին մռանալ, Չսիրել, չխրիել, չափսոսալ, Հեռանալ (ՎՏ): Նայում եմ, նայում, դեռ չի լուսանում, Ա՛խ, այս գիշերներն ինչքա՛ն են երկար (Թում):

9. հեզմանք, արհամարհանք, հանդիմանություն.

Ի՛նչ մեծ հաճույք է շրթաների այս առնական շատաչը (Իս): Եվ դու ինտելիգե՛նտ մարդ ես անվանում քեզ, և դու հողվածներ ես գրում բռնությունների, անարդարությունների դեմ, և դու պաշտպա՛ն ես ցույց տալիս քեզ ճնշվածներին, հալածվածներին, և քեզ արմատական հայացքների տեր հրապարակախո՛ս են անվանում, քե՛զ, քե՛զ... (ՆԳ):

ԽԱՌԸ ԵՐԱՆՊԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմողական, հարցական, հրամայական, բացականչական նախադասությունները խստորեն սահմանազատված չեն միմյանցից: Ինչպես վերը տեսանք, երբեմն որևէ երանգի նախադասության մեջ տեղ է գտնում մի այլ երանգի որոշ տարր, բայց որովհետև վերջինս լինում է համեմատաբար երկրորդական, այդ պատճառով էլ նախադասության երանգը որոշելիս հիմք ենք ընդունում առավել բնորոշ հատկանիշը:

Սակայն լինում են նախադասություններ, որոնց մեջ տարբեր երանգներն այնպես են համատեղվում, որ հնարավոր չի լինում այդ նախադասությունները դասել վերոհիշյալ տեսակներից հատկապես որևէ մեկի շարքը: Այսպես՝ *Օգնիր, որդյակ իմ: Օգնեցե՛ք, սինյոր Բաստիստա (Շեքսպիր):* Օրինակի առաջին նախադասությունը հրամայական է, իսկ երկրորդը թեև ծառայում է նույն նպատակին, ինչ որ նախորդը, և թեև նրա ստորոգյալն արտահայտված է նույնպես հրամայական եղանակի բայաձևով (որ կառուցվածքային կարևոր հատկանիշ է հրամայական նախադասությունների համար), բայց ունի նաև ընդգծված բացականչական հնչերանգ, որը նրան տալիս է նաև բացականչական բնույթ: Եվ որովհետև թե՛ հրամայական, թե՛ բացականչական հատկանիշները տվյալ նախադասության համար կարևոր են, ուստի այդ նախադասությունը պետք է համարել խառը բնույթի նախադասություն:

Բերենք խառը բնույթի նախադասությունների այլ օրինակներ. *Ջա՛ն, հայրենի անտառներ, Դուք եք կանչում ինձ ձեր քով (Թում):* Հավատացե՛ք, ընկերներ, հավատացե՛ք (ՔԹ): *Ջարդի՛ր քեզ մաշող բանտի փականքը, խեղդի՛ր քո դահճին Դարդանելում (ՊԷ):*

Առաջին նախադասությունն իր մեջ ունի բացականչականի ու պատմողականի, մյուսները՝ բացականչականի ու հրամայականի հատկանիշներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Բարդ նախադասությունը գնահատելու համար անհրաժեշտ է այն բնութագրել ի տարբերություն թե՛ պարզ նախադասության և թե՛ ինքնուրույն նախադասությունների կապակցության:

Ակտենք պարզ և բարդ նախադասությունների ձևի և բովանդակության փոխհարաբերության խնդրից և այդ կապակցությամբ անդրադառնանք հետևյալ հարցին. ի՞նչ չափով են պարզ և բարդ նախադասությունները՝ որպես լեզվական նշաններ, արտահայտում, արտացոլում արտալեզվական նշանակյալը: Լեզվականի և արտալեզվականի համապատասխանությունը զգալի չափով ակնհայտ է նախադասության այս տեսակներում: Ակնհայտ է Ա. «Անահիտը պարեց» և Բ. «Անահիտը պարեց, իսկ Գոհարը երգեց» նախադասությունների տարբերությունը:

Ա օրինակում մեկ ենթակայի հետ կապված է մեկ ստորոգյալ (պարզ նախադասություն): Այս նախադասությունը՝ որպես լեզվական նշան, համապատասխանում է իր նշանակյալին. մեկ առարկային վերագրված է մեկ հատկանիշ:

Բ օրինակում երկու տարբեր ենթակաների հետ կապված են երկու տարբեր ստորոգյալներ. երկու նախադասությունների կապակցությամբ ձևավորվել է մեկ բարդ նախադասություն: Այս նախադասության կառուցվածքը նույնպես համապատասխանում է իր նշանակյալին. երկու տարբեր առարկաների վերագրված են երկու տարբեր հատկանիշներ: Ինչպես տեսնում ենք, յուրաքանչյուր բաղադրիչ նախադասություն ձևավորված է ստորոգման միջոցով:

Այսպիսով՝ բերված պարզ և բարդ նախադասություններն իրենց կառուցվածքով արտահայտում են համապատասխան արտալեզվական իրականությունը: Պարզ նախադասությունն արտահայտում է մտքի մեկ նվազագույն միավոր, իսկ բարդ նախադասությունը կազմված է երկու բաղադրիչ նախադասություններից, որոնք թե՛ հնչերանգով, թե՛ մտքի սերտ կապով հանդես են գալիս որպես մեկ բարդ նախադասության բաղադրիչներ:

Այլ է պարզ և բարդ նախադասությունների հարաբերությունը հետևյալ հակադրություններում.

1. *Նրանք եկան մեզ օգնելու: Նրանք եկան, որ մեզ օգնեն:*
2. *Նրանք եկան ժամը իննից առաջ: Նրանք եկան, երբ ժամը ինը չկար:*
3. *Նրանք ստիպված եկան: Նրանք եկան, որովհետև ստիպված էին:*

Բերված զուգահեռ պարզ և բարդ նախադասություններից յուրաքանչյուրում արտահայտված է միևնույն արտալեզվական իրողությունը (նշանակյալը): Սակայն, ինչպես երևում է, դրանք դրսևորված են տարբեր կառուցվածքներով: Սա նշանա-

կում է, որ պարզ և բարդ նախադասությունների տարբերությունը հաճախ սուկ լեզվական-կառուցվածքային է և ոչ թե իրադրական, արտալեզվական: Քերականական-կառուցվածքային տեսակետից այդպիսի բարդ և համապատասխան պարզ նախադասության հիմնական տարբերությունը ստորոգման, ուրեմն և ստորոգյալի քանակի մեջ է. պարզ նախադասության մեջ կա մեկ ստորոգյալ, բարդի մեջ՝ մեկից ավելի (տվյալ դեպքում՝ երկու): Ինչ խոսք, տվյալ հատկանիշը քերականորեն ստորոգյալի ձևով արտահայտվելու դեպքում հնարավոր լրացումների հարաբերությունը և գնահատումը համապատասխանաբար փոխվում են (լրացման լրացումները դառնում են գերադաս անդամի լրացում):

Բարդ նախադասությունն էապես տարբերվում է նաև ինքնուրույն նախադասությունների կապակցությունից: Բարդ նախադասությունը կառուցվածքային տեսակետից մեկ ամբողջություն է կազմում, և դրա հետ կապված՝ նրա բաղադրիչները չունեն պարզ նախադասության ինքնուրույնությունը իմաստային ու ձևային տեսակետից:

Գիտենք հետևյալ բարդ նախադասությունը. *Խավար միջանցքների քարերի վրա լրացվեց սասյոզների մետաղյա ձայն, աղմկեցին երեք բեռնատար մեքենա, և գինվորների խմբերը սրացան դեպի «Ավորա» (Քակ.):* Սա մի բարդ նախադասություն է, որի բաղադրիչները կարող էին մի այլ պարագայում գործածվել որպես ինքնուրույն պարզ նախադասություններ՝ արտահայտելով նույն միտքը: Այսպես՝ *Խավար միջանցքների քարերի վրա լրացվեց սասյոզների մետաղյա ձայնը: Աղմկեցին երեք բեռնատար մեքենա: Զինվորների խմբերը սրացան դեպի «Ավորա»:*

Բերված երկու տարբերակներում արտահայտված է միևնույն արտալեզվական իրողությունը, ուրեմն և միևնույն բովանդակությունը: Գրանցից առաջինում բաղադրիչ նախադասությունները բովանդակային, արտասանական սերտ կապի մեջ են, զուրկ են ինքնուրույն նախադասությանը հատուկ հնչերանգային ավարտվածությունից, միավորվում են մեկ ընդհանուր հնչերանգով, և այս բոլորի շնորհիվ բաղադրիչ նախադասությունները միանում են մեկ ամբողջի մեջ իբրև մեկ բարդ նախադասության բաղադրիչներ:

Երկրորդ տարբերակում առկա են երեք ինքնուրույն նախադասություններ, որոնք, թեև մտքով կապված են իրար հետ, որքանով մեկ խոսք են կազմում, բայց քերականորեն ինքնուրույն են, ունեն իրենց ինքնուրույն ավարտված հնչերանգը, ինքնուրույն նախադասություններին հատուկ մեծ դադարները, որոնք լինում են խոսքի բաղադրիչների միջև:

Չուգադրված հնարավոր շարահյուսական կառույցներից հեղինակը նախընտրել է նախադասությունը: Նույն հեղինակը մի այլ պարագայում կամ մի այլ հեղինակ հնարավոր տարբերակներից կարող էր նախընտրել նախադասությունների կապակցությունը: Այսպես է վարվել խոսքի մեծ վարպետ Հ.Թումանյանը «Գիքորը» պատմվածքի առաջին տողերում.

Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել:

Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք, մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում:

Այս երեք ինքնուրույն նախադասությունները կարելի է միավորել և գործածել որ-

պես մեկ նախադասության բաղադրիչներ:

Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել, որովհետև Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք, մի գործի տա, որ մարտ դառնա, աշխատանք անի, բայց կինը չէր համաձայնում:

Այս երկու կառույցներն ունեն միևնույն բովանդակությունը, արտահայտում են միևնույն արտալեզվական իրականությունը: Սակայն այս կառույցները նույնանիշ չեն, այլ համանիշ: Դրանց միջև կա ոճական, հաղորդակցային տարբերություն: Փաստերը ցույց են տալիս, որ միևնույն միտքն ինքնուրույն նախադասությամբ արտահայտելիս վերաբերմունքային առումով ավելի է կարևորվում, քան բարդ նախադասության բաղադրիչով: Գործնականորեն ինչպե՞ս են ձևավորվում այդ երկու վերաբերմունքները: Այս առումով արժե ուշադրություն դարձնել մի փաստի վրա ևս, որ կա Հ. Թումանյանի գրածի մեջ: Թումանյանը քննարկվող երեք նախադասությունները բաժանել է երկու պարբերության: Առաջին նախադասությամբ, որը ներկայացված է որպես առանձին պարբերություն, արտահայտում է Համբոյի տունը կռիվ ընկնելու իրողությունը: Հաջորդ երկու նախադասություններով, որոնք հեղինակը դարձրել է մեկ պարբերություն, ներկայացրել է կռվի էությունը, պատճառը: Նույն հիմնախնդրի վերաբերյալ Համբոյի և կնոջ հակառակ դիրքերը ինքնուրույն նախադասություններով արտահայտելը, այլև երկու պարբերության փաստը, ի տարբերություն մեկ բարդ նախադասության, ունի հնչերանգային, այդ թվում և արտասանական տրոհումների (դադարների) հատուկ համակարգ: Պարբերությունն ապահովում է համեմատաբար մեծ դադարի անհրաժեշտություն, որը, միանալով նախորդ նախադասության հնչերանգային ավարտվածության հետ, հուշում է նոր ասվածի և հաջորդ նախադասությամբ ասելիքի կարևորությունը, որի պատճառով այն ներկայացվել է որպես ինքնուրույն նախադասություն: Նույնը մի փոքր պակաս չափով վերաբերում է երկրորդ պարբերության նախադասությունների տրոհմանը:

Նախադասությունների կապակցության տարբերակի մեջ շաղկապ չկա. առանց շաղկապի էլ նախադասությունների հարաբերությունը հասկացվում է: Շաղկապի գործածությունը տվյալ կառույցում ոչ միայն ավելորդ կլիներ, այլև կվնասեր ոճական նպատակայնությանը. կփոքրացներ դադարների տևողությունը, որը, ինչպես նշվեց, շատ կարևոր է բաղադրիչ նախադասությունների ձևավորման և նրանց կարևորությանը նպաստելու առումով: Շաղկապն այն դեպքում է շեշտում հարաբերության իմաստը, երբ վերջինս խոսքի մեջ հստակ չէ:

Ավելի հաճախ բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները չեն ունենում իրենց ինքնուրույնությունը ձևային տեսակետից, և նրանց արտահայտած միտքը հասկանալի է լինում բարդ նախադասության մյուս բաղադրիչի կամ բաղադրիչների հետ ունեցած կապի մեջ:

Երբ դասածանը վերջացավ, ու աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ շատ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչից, որ աշակերտները մի երգ ասեն (Իս.): Արամը գնաց դպրոց, իսկ Աշոտը՝ գրադարան:

Ընդգծված նախադասություններն այն ձևով, ինչպես որ կան բարդ նախադասության մեջ, ինքնուրույն չեն կարող գործածվել, հետևապես և դրանք տվյալ կա-

նուցվածքով չեն կարող հավասարեցվել պարզ նախադասությանը: Այսպիսով՝ բարդ նախադասության բաղադրիչները պարզ նախադասություն համարելը պետք է ընդունել վերապահությամբ ու պայմանականությամբ:

Այդ օրինակներում բաղադրիչ նախադասությունները կապի սերտության, ինքնուրույնության կորստի այլ միջոց ևս ունեն հանձին ընդհանուր անդամի առկայության՝ բաղադրիչ տարբեր նախադասություններում (վերջին օրինակում՝ *զնաց*, իսկ առաջին օրինակում՝ *ընկերս*):

Բարդ նախադասությունը բնութագրելիս մենք ներկայացրինք երկկազմ նախադասություններ, որոնք անհամեմատ շատ գործածական են: Բայց ներկայացված հիմնական հատկանիշներով են բնութագրվում նաև միակազմ նախադասություններով ձևավորված բարդ նախադասությունները: Հիմնական յուրահատկությունը ստորոգման դրսևորման մեջ է:

Պատրաստ գտնվել պատերազմի, բայց չպատերազմել (ԳԳ): Հետևե՛լ նրան, ներողությո՛ւն խնդրել, բացատրե՛լ (Շիրվ.):

Այսպիսով՝ բարդ կոչվում է այն նախադասությունը, որը կազմված է քերականորեն և իմաստով իրար հետ կապված բաղադրիչ նախադասություններից:

ՀԱՄԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Բարդ նախադասության բաղադրիչներն իրար հետ կապվում են երկու տեսակ շարահյուսական հարաբերությամբ՝ **համադասական և ստորադասական**:

Համադասական կոչվում է շարահյուսական այն հարաբերությունը, որով կապվող միավորները քերականորեն համազոր են:

Մեղմիկ սոսափում էր ոտենին, և ջրադացն անուշ մտմտալով ասես հին օրերից մի հին հեքիաթ էր պատմում (Բս.): Շահյանը երբեք չէր սիրել մոր համբույրները, իսկ մայրն այդ կողմից միշտ շռայլ էր եղել դեպի նա (ՆԳ):

Այս բարդ նախադասությունները կազմված են երկուական բաղադրիչներից, որոնք քերականորեն համազոր են իրար, միմյանց միտք չեն լրացնում, արտահայտում են, այսպես ասած, զուգահեռ գոյություն ունեցող երևույթներ: Սա նախադասությունների հարաբերության համադասական եղանակն է:

Ստորադասական կոչվում է այն հարաբերությունը, որով կապվող նախադասություններից մեկը գերադաս է, մյուսը՝ ստորադաս, այսինքն՝ նրանք գտնվում են քերականական լրացման ու լրացյալի կապի մեջ:

Այդ օրվանից զգաց, թե որ աստիճան գերել է Բազենյանն իր սիրտը (ՆԳ): Խոսքերս, որ ամեն օր կրկնում էի զանազան ձևերով, դյուրակլան ազդեցություն ունեին նրա վրա (Բս.):

Բերված օրինակներում կապակցության համադասական և ստորադասական բնույթները միանգամայն ակնհայտ են:

Սակայն ոչ միշտ է, որ համադասությունն ու ստորադասությունը ունենում են հըստակ, միանշանակ դրսևորում: Դիտենք հետևյալ նախադասությունը. *Անձրև սկսվեց, մենք հետաձգեցինք զբոսանքը: Շարահարությամբ (անշաղկապ) ձևավորված այս նա-*

խաղասությունը կարող է ընկալվել թե՛ որպես ստորադասական, թե՛ որպես համադասական: Բանավոր խոսքում այդ տարբերությունն զգացվում է հնչերանգից: Տրամաբանական առումով այս նախադասությունն ավելի շուտ կընկալվի որպես ստորադասություն, որը կարող է ձևավորվել շաղկապով կամ շաղկապական բառով:

Քանի որ (երբ) անձրև սկսվեց, մենք հետաձգեցինք գրոսանքը:

Այդ նույն նախադասությունը կարելի է ձևակերպել նաև որպես համադասական.

Անձրև սկսվեց, և մենք հետաձգեցինք գրոսանքը:

Բանն այն է, որ համադասական կապակցություններում նույնպես կարող են արտահայտվել պատճառի, հետևանքի, ժամանակի հարաբերություններ: Այսպիսի դեպքերում ճիշտ կողմնորոշվելու համար ելակետ պետք է ընդունել նախադասության քերականական կառուցվածքը և ոչ թե տրամաբանական կողմը: Իսկ ինչ վերաբերում է շարահարական կապակցությանը, ապա բանավոր խոսքում համադասական և ստորադասական հարաբերություններն ունենում են տարբեր հնչերանգային յուրահատկություններ. համադասության դեպքում կապակցվող բաղադրիչները արտաբերվում են միատեսակ, թվարկման հնչերանգով ու դադարով, իսկ ստորադասության դեպքում առաջին բաղադրիչի վերջին վանկն արտաբերվում է հատուկ շեշտումով, այդ բառից հետո դադարը լինում է այնպես, ինչպես գրավոր խոսքում բութի դեպքում: Այսպիսի կառույցի տրոհումը գրավոր խոսքում կատարվում է բութով, իսկ համադասության դեպքում՝ ստորակետով:

Հմնտ. Անձրև սկսվեց, մենք հետաձգեցինք գրոսանքը: Անձրև սկսվեց՝ մենք հետաձգեցինք գրոսանքը:

Տարածված են նաև հետևյալ զուգահեռ կառույցները, որոնք կարելի է համարել փոխակերպեր, ըստ որում մեկը որոշակիորեն համադասական է, մյուսը՝ ստորադասական: Նման դեպքերում կողմնորոշիչը քերականական կառուցվածքն է, ոչ թե բովանդակությունը:

Ապրում է՝ տարին բոլոր ուտելով ցամաք հաց, և այդ ցամաք հացն էլ հանկարծ կտրվում է (ՀԹ):

Ապրում է՝ տարին բոլոր ուտելով ցամաք հաց, որն էլ հանկարծ կտրվում է:

Այս երկու կառույցներն արտահայտում են միևնույն միտքը. տարբերությունն այն է, որ համադասական տարբերակն ավելի է շեշտում նկարագրվող երևույթը:

Այսպիսի շարահյուսական կառույցները ոճական տարբեր արժեք ունեն:

Բարդ նախադասության բաղադրիչների հարաբերության բնույթը երբեմն միանշանակ չէ նույնիսկ քերականական ձևավորման պարագայում: Միևնույն բարդ նախադասության մեջ կարող են տեղ գտնել և՛ համադասություն, և՛ ստորադասություն արտահայտող քերականական միջոցներ, կամ հարաբերությունը կարող է արտահայտվել քերականական այնպիսի եղանակով, որից տվյալ կապակցությունն ստանում է երկակի բնույթ. իր մեջ ունենում է թե՛ համադասության, թե՛ ստորադասության տարրեր, և միայն ըստ առավել իշխող հարաբերության՝ պետք է որոշել այդպիսի կապի բնույթը: Այդ երկակիությունը առանձնապես հատուկ է այնպիսի բարդ նախադասությունների, որոնց մի մասի հետ գործածվում է զիջական, իսկ մյուս մասի հետ՝ ներհակական շաղկապ, ինչպես և շարահարական կապակցությամբ կազմված շատ բարդ նախադասությունների:

Թեև պիեսը շատ հետաքրքրական էր, **սակայն** որոշ դերասանների անհաջող խաղի պատճառով այն ցանկալի տպավորություն չթողեց: **Չնայած** զարնանացանն ուշ սկսեցինք, **բայց** այն հաջողությամբ է ընթանում և կախարտվի ժամանակին:

Այստեղ **թեև**, **չնայած** զիջական շաղկապները զուգակցված են **սակայն**, **բայց** համադասական շաղկապների հետ: Եթե առաջինները չլինեին, նախադասությունների հարաբերությունը որոշակիորեն կլիներ համադասական, սակայն զիջական շաղկապները առաջին նախադասություններին տալիս են համապատասխան երանգ և նրանց հարաբերության մեջ մտցնում ստորադասության զգալի տարր:

Համադասական և ստորադասական հարաբերությունների արտահայտության տեսակետից յուրահատուկ դիրք են զբաղում մի քանի այլ շաղկապներ՝ **եթե... ապա**, **թե**, **մինչդեռ**, **թե չէ**: Այս շաղկապները տարբեր կիրառություններում կարող են արտահայտել ստորադասական և համադասական հարաբերություններ:

Եթե...ապա զուգադրական շաղկապը գերազանցապես ստորադասական իմաստով է գործածվում. ըստ որում **եթե**-ով սկսվող նախադասությունը պայմանի ստորադաս նախադասություն է ձևավորում:

Եթե թագավորը հանդիպած չլիներ անհաջողության, **ապա** Գևորգ իշխանն այստեղ կլիներ (**Մուր.**): Եթե այս մտածությունը մի հանցանք է եղել, **ապա** հրամայի՛ր պատժել ինձ ամենաձանր կերպով (**Մուր.**):

Եթե...ապա զուգադրական շաղկապը երբեմն արտահայտում է նաև համադասական հարաբերություն՝ իրար կապելով հանդիպադրական ներհակության մեջ գտնվող նախադասություններ:

Եթե 1913 թ. Հայաստանի քաղաքային բնակչության տոկոսը կազմում էր 10,4, **ապա** 1926 թ. այն հասավ 19,0-ի, իսկ 1939 թ. կազմեց 28,6 տոկոս (**ՀԺՊ**): **Եթե** Պավլիկյան շարժումը սոցիալական և միաժամանակ ազատագրական շարժում էր՝ ուղղված արաբական ու բյուզանդական լծի դեմ, **ապա** Թոնդրակյան շարժումը ուներ միայն սոցիալ-դասակարգային բնույթ (**ՀԺՊ**):

Թե շաղկապը սովորաբար արտահայտում է ստորադասական հարաբերություն և կապակցում է ստորադաս նախադասությունը գերադասի հետ. ինչպես՝ Հյուսիսային Դոնի ժայռերը տեսան, **թե** ինչպես գունավոր գորգերը հանեցին քարանձավներից, շալակով տարան և փոխարենը քաղաքից ստացան նավթ, շաքար (**Բակ.**): Թերևս հարուստները կարծում են, **թե** աղքատները ցավ չեն զգում (**Իս.**):

Սակայն այդ շաղկապը հատկապես հարցական բնույթի նախադասություններում արտահայտում է համադասական հարաբերություն՝ կապակցելով համապատասխան նախադասություններ:

Աղջկա հոր բարեկամնե՞րն էին օգնում, **թե՞** հենց ինքը՝ մակարապետը ուղարկում էր մի նշան... (**Բակ.**): Նա՞ է գրում ինձ, **թե՞** ես եմ գրում իմ հարազատին (**ՊՍ**): Մարդկա՞նց աղմուկ էր, դարբնոցների՞ց էր գալիս, **թե՞** փողոցներից անցնում էին բեռնած ֆուրգոններ (**Բակ.**):

Մինչդեռ շաղկապը սովորաբար գործածվում է որպես հակադրական հարաբերություն արտահայտող համադասական շաղկապ՝ կապելով համապատասխան համադաս նախադասություններ:

Հագարացիները այդ տեսներով հուսահատության աղաղակ բարձրացրին, մինչդեռ հայերն ուրախության ու ցնծության ձայներ էին արձակում (Մուր.): Այդ գիշեր թշնամու բանակը կարծես սուզի մեջ էր. մինչդեռ Բյուրականը, ջահերով ու դամբարներով լուսավորված, հաղթության տոն էր կատարում (Մուր.):

Այդ շաղկապը, սակայն, երբեմն հանդես է գալիս ստորադասական հարաբերությանը՝ մասնավորապես ժամանակի ստորադաս նախադասությունը կապելով գերադասի հետ:

Մինչդեռ ամենքը հիացած նայում էին դյուցազնուհուն, նա հանեց նրան աստիճանների վրա և դառնալով ժողովրդին, բարձրաձայն հայտարարեց (Մուր.): Մինչդեռ Երազգատրսում այս պատրաստություններով էին զբաղված, տեղի ունեցավ մի անակնկալ դեպք (Մուր.):

Թե չէ շաղկապը նույնպես կապում է ստորադաս նախադասությունը գերադասի հետ՝ արտահայտելով ստորադասական հարաբերություն: Այդ դեպքում այն դրվում է ստորադաս նախադասության վերջում:

Լուսնյակը մեր է մտնում քե չէ, դարձյալ արեգակն է դուրս գալիս (ՀԹ): Տաք գոմի դուռն են հասնում քե չէ, իրար ետևից ներս են քափում (ՀԹ):

Այս շաղկապը արտահայտում է նաև համադասական հարաբերություն. դրվելով կապակցվող նախադասություններից հաջորդի սկզբում՝ կազմում է հակադրական կապակցություն:

Դե գնանք, ես քեզ կուղեկցեմ, քե չէ մեր շունը ուրիշ մարդ տեսնելիս շղթան էլ է սոկում (ՄԽ): Հասարթյանի բախտից Թագուհու հաշվապահ հայրը գնացել էր այլ քաղաք, քե չէ նա էլ իր անհամ խրատներով ու ակնոցի տակից նայող սուր աչքերով բոլորովին կտանջեր նրան (ՄԽ):

Սակայն միևնույն բառերի կապակցությունը հանդիսացող նախադասության այսաստիճան երկակիությունը հատուկ է գրավոր խոսքին, և հենց, ըստ երևույթին, դրանից ելնելով են շատ լեզվաբաններ շարահարական կապակցությամբ բարդ նախադասությունները դուրս թողնում համադասական և ստորադասական կապակցություններից: Իսկ երբ նկատի ենք ունենում բանավոր խոսքը, որը, անշուշտ, բուն լեզվի կենդանի արտահայտությունն է՝ յուրահատուկ հնչերանգով, հիշյալ հարաբերությունները հանդես են գալիս զգալիորեն տարբերակված կերպով: Միևնույն կապակցությունը համադասական հարաբերություն արտահայտելու դեպքում այլ հնչերանգով է արտահայտվում, իսկ ստորադասական հարաբերություն արտահայտելու դեպքում՝ այլ: Պետք է նկատի ունենալ, որ հնչերանգը նախադասության ձևավորման միջոցներից մեկն է, նախադասության կառուցվածքային էական հատկանիշ, ուստի այն ևս պետք է հաշվի առնել քննարկվող հարցում: Ինչ վերաբերում է գրավոր խոսքում այդ հարաբերությունների տարբերակմանը, ապա այդ հնարավոր է լինում կապակցված խոսքի մեջ:

Համադասական հարաբերության դեպքում բաղադրիչ նախադասությունները տրոհվում են ստորակետով, իսկ ստորադասական և մասնավորապես պայմանի, հիմունքի, ժամանակի հարաբերության դեպքում՝ բութով: *Ինձ տեսավ՝ դեմքն իսկույն մյուս կողմը դարձրեց (Բակ.): Ճանապարհը բաց է՝ գնում ենք: (Եթե (քանի որ) ճանապարհը բաց է, գնում ենք):*

Այսպիսով՝ չնայած համադասության և ստորադասության միջև անջրպետ չկա,

և մի շարք կապակցություններում այդ հարաբերությունների սահմանն աղոտանում է, այնուամենայնիվ բարդ նախադասության բաղադրիչների կապը բնորոշվում է կապակցության այդ երկու եղանակով, և ըստ այդմ՝ բարդ նախադասությունները լինում են երկու տեսակ՝ բարդ համադասական և բարդ ստորադասական:

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բարդ նախադասության բաղադրիչ մասերի կապը արտահայտվում է երկու եղանակով՝ բառական և շարահարական:

1. Բառական կոչվում է այն եղանակը, որի դեպքում բաղադրիչ միավորների հարաբերությունն արտահայտվում է բառերով: Այդպիսի դեր կատարում են շաղկապներն ու շաղկապական (հարաբերական) բառերը:

ա) Բոլոր շաղկապները մասնակցում են նախադասությունների կապակցմանը, ըստ որում համադասական հարաբերությունն արտահայտվում է համադասական շաղկապներով, ստորադասականը՝ ստորադասական շաղկապներով:

Երկնքից հրաշեկ արևը կրակ էր մաղում, և առավոտը կիզող էր, ինչպես միջօրեին (Իս.): Դուք պաշարման ժամանակ մտածում եք՝ ձեր կյանքը ազատելու, իսկ ես՝ իմ պատիվը փրկելու վրա (Մուր.): Հարևաններից յուրաքանչյուրը գտնում էր, որ ծուռ տեղը պետք է ուղղվի հարևանի հաշվին, ուստի և ոչ մեկը չէր զիջում (ՍԶ): Ասում են, թե դու այնպես, Մոսացել ես ինձ այնպես, Որ երբ անունս են տալիս, հագիվ միտքդ եմ գալիս (Իս.):

բ) Հարաբերական բառերը գործածվում են միայն ստորադասական հարաբերություններ արտահայտելու համար:

Սիրում եմ ես նրանց, որոնք խենթ են ու անտուն, նրանց, որոնք կայան չունեն և չունեն խնդրում (ՎՏ): Ականջս դրեցի խցիս այն դռնակին, որպեղից կերակուր էի ստանում (Իս.): Յուրահատուկ մի թովչանք կա այդ մենության ու լռության մեջ, երբ ինքդ քեզ հետ ես ու բնության հետ:

Հարաբերական ունեցող նախադասությունների մեծ մասում հանդես են գալիս նաև հարաբերյալներ (վերջինս՝ գերադաս նախադասության մեջ), որոնցով բաղադրիչ նախադասությունների կապն ավելի սերտ է դառնում: Որպես հարաբերյալներ հանդես են գալիս սովորաբար ցուցական դերանունները, մասամբ նաև՝ որոշյալները. ինչպես՝ **այն...ինչ, նա... որը, նրանք...որոնք, այնքան...որքան, այնտեղ...որտեղ, այնպես...ինչպես** և այլն:

Հարաբերյալները հաճախ գործածվում են նաև շաղկապների զուգորդումով. ինչպես՝ **այն...որ, այն...թե, այնպես...որ, այնքան...որ** և այլն:

Հասմիկն արտասանեց այնպես, որ բոլորը հուզվեցին:

2. Նախադասությունների կապակցման մյուս եղանակի՝ շարահարության դեպքում շարահյուսական կապն արտահայտվում է առանց բառական միջոցի:

Կապակցման շարահարական եղանակի մեջ դեր են կատարում բաղադրիչ միավորների միջև փոքրիկ դադարը, հնչերանգը, շարադասությունը, իմաստը: Կապակցման այս միջոցները դեր կատարում են նաև շաղկապավոր կապակցություններում,

բայց նրանց դերն առավել ակնհայտորեն երևում է շարահարության դեպքում:

Հնչերանգի դերը մեծ է ոչ միայն առհասարակ նախադասության ձևավորման գործում, այլև մասնավորապես բարդ նախադասության կառուցվածքում՝ որպես նրա բաղադրիչները մեկ ամբողջի մեջ միավորող միջոց: Հնչերանգը իր այդ կապակցող դերի հետ միասին քերականական հարաբերության արտահայտման միջոցի դեր է կատարում. ըստ որում հաճախ շարահարական կապակցության դեպքում հնչերանգով կարելի է տարբերել համադասական և ստորադասական հարաբերությունները: *Եղանակը լավ կլինի, կզնանք* շարահարական կապակցությունը կարող է ընկալվել որպես թե՛ համադասական և թե՛ ստորադասական նախադասություն: Այդ նախադասությունը թվարկման հնչերանգով արտասանելիս կընկալվի որպես համադասական կապակցություն (**հմմտ.** *Եղանակը լավ կլինի, և կզնանք*), իսկ պայմանի հնչերանգով արտասանվելիս, կլինի ստորադասական նախադասություն՝ պայմանի հարաբերությամբ (**հմմտ.** *Եթե եղանակը լավ կլինի, կզնանք*):

Տարբեր կարգի նախադասություններում շարադասությունը տարբեր դեր է կատարում: Այսպես՝ սոսկ թվարկում արտահայտող բաղադրիչներով կազմված բարդ համադասական նախադասություններում շարադասության դերը նվազագույնի է հասնում: Այսպես. *Արամը դաս է սովորում, Գոհարը նվագում է, Աշոտը խաղում է* օրինակի բաղադրիչ նախադասությունների շարադասությունը փոխելու դեպքում էլ կարտահայտվի միևնույն միտքը, և կպահպանվի նրանց ներքին կապի բնույթը:

Շարադասությունը, սակայն, հաճախ մեծ դեր է կատարում բարդ նախադասության բաղադրիչ մասերի իմաստային փոխհարաբերության հարցում: Շարադասության այդ դերը կարելի է տեսնել հետևյալ օրինակներում:

Բացվում է ինքնաթիռի դուռը, և վայրկենապես ներս է լցվում երկրային փոշեխառն օդն ու հողաբույր արևը (ՄԿ): Հանկարծ մեր ինքնաշարժը սկսում է սուլել, նրան արձագանքում են մեզ ուղեկցող մյուս մեքենաները, և ամբողջ փողոցը լցվում է բազմերանգ ու բազմաթիվ սուլելով (ՄԿ):

Այս օրինակներում համադասական հարաբերությամբ կապված բաղադրիչներն ունեն ժամանակային, պատճառահետևանքային կապ, և ժամանակային տեսակետից հաջորդող ու պատճառ կամ հետևանք հանդիսացող գործողությունները որոշակիորեն ըմբռնվում են որպես այդպիսիք՝ ըստ բաղադրիչ նախադասությունների շարադասության: Շարադասության փոփոխությունը մնան դեպքերում կարող է կամ փոխել բարդ նախադասության բաղադրիչ մասերի ներքին իմաստային-քերականական փոխհարաբերությունը կամ աղավաղել այն:

Բարդ նախադասության բաղադրիչների փոխհարաբերության ձևավորման մեջ շարադասության դերը հաճախ հավասարվում է շղկապների կամ հարաբերական բառերի դերին: Այսպես՝ *Երբ դուրս եկա առանձնասենյակից, ինչ-որ մանկական հայարտություն զգացի (Էբս.)* նախադասության առաջին բաղադրիչը ժամանակի հարաբերություն է արտահայտում հաջորդի (գլխավորի) համար. այդ իմաստը կարտահայտեր նաև այն դեպքում, երբ այն հաջորդեր գլխավոր նախադասությանը. *ինչպես՝ Ինչ-որ հայարտություն զգացի, երբ դուրս եկա առանձնասենյակից*: Իսկ եթե բերված միտքը ձևավորվեր առանց ստորադասական հարաբերությունը նշող բառի, այսինքն՝

շարահարական կապակցությամբ, նշված ժամանակային հաջորդականության հարաբերությունը կարտահայտվեր շարադասությամբ: **Հմտ.** *Դուրս եկա առանձնասենյակից, ինչ-որ մանկական հայարտություն զգացի: Ինչ-որ մանկական հայարտություն զգացի, դուրս եկա առանձնասենյակից:*

ՀԱՄԱՍԵՌ ԵՎ ՏԱՐԱՍԵՌ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համադասական և ստորադասական հարաբերությունները բարդ նախադասության կառուցվածքում կարող են հանդես գալ միայնակ և զուգորդված: Ըստ այդմ՝ բարդ նախադասությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ **համասեռ** և **տարասեռ**: Մա վերաբերում է բարդ նախադասության երկու տեսակներին՝ թե՛ համադասական և թե՛ ստորադասական նախադասություններին: Հասկանալի է, որ երկբաղադրիչ բարդ նախադասությունները կարող են լինել միայն համադասական կամ ստորադասական: Ուրեմն՝ հիշյալ բաժանումը կարող է վերաբերել բազմաբաղադրիչ (երեք և ավելի բաղադրիչ ունեցող) բարդ նախադասություններին:

Ահա համասեռ հարաբերությամբ կազմված բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ:

Ես անտառում էի, որտեղ էր երկինք ու երկիր, ամպերը քարի ծանրությամբ կախվել էին զլխիս, և հանկարծ անեղ կայծակը հզոր սրի պես զարկեց ծառի կատարին (Իս.): Մանեն նայեց եղբորն այնպիսի հայացքով, որից երևում էր, որ չհասկացավ, թե ինչ ասաց Վահանը (ՆԳ):

Բերենք տարասեռ բարդ նախադասությունների օրինակներ:

*Ես շատ էի նման այն հեքիաթի կատվին,
Որ երբ մինչև անգամ չքանում է աչքից,
Վառ ժպիտը նրա դեռ մնում է երկար:*

(Պ. Սևակ)

Երջանկության իմաստը դու անկարող ես ըմբռնել, քո զգացող գոյությունը չարժե իր ձգտումին, և ոչ մի նպատակ չարժե, որ նրան ըղձաս (Իս.):

Առաջին նախադասությունը բարդ ստորադասական է, կազմված է մեկ գերադաս նախադասությունից և նրան ստորադասված երկու համազոր նախադասություններից: Երկրորդ նախադասությունը բարդ համադասական է, որի բաղադրիչները կապված են թե՛ համադասությամբ և թե՛ ստորադասությամբ. այն կազմված է երեք նախադասություններից, որոնցից առաջին երկուսը կազմությամբ պարզ են, իսկ երրորդը բարդ ստորադասական է, որն իր կազմում ունի ստորադաս բաղադրիչ (որ նրան ըղձաս): Այս նույն կառուցվածքը կարելի է ներկայացնել նաև հետևյալ կերպ. նախադասությունը կազմված է չորս բաղադրիչներից, որոնցից առաջին երեքը համադաս են իրար, իսկ վերջինը ստորադաս է նախավերջինին:

Քննարկվող հարցի տեսակետից այս երկու մոտեցումներն ըստ էության հանգեցնում են նույն եզրակացությանը, երկուսն էլ ճիշտ են:

Ինչպես ասվել է և ինչպես երևում է այս վերլուծությունից, տարասեռ բարդ նա-

խաղասությունները լինում են բարդ համադասական և բարդ ստորադասական: Սա նշանակում է, որ բարդ համադասական նախադասության մեջ տեղ է գտնում, բացի համադասական հարաբերությունից, նաև ստորադասական հարաբերություն, և հակառակը՝ բարդ ստորադասական նախադասությունն իր կազմի մեջ կարող է ունենալ համադասական հարաբերության դրսևորում(ներ):

Այդ դեպքում ինչպե՞ս որոշենք այդպիսի կառույցների տեսակը և ի՞նչ հիմունքով: Այս հարցում մեզ օգնում է նախադասության (կառույցի) **անմիջական բաղադրիչներ** հասկացությունը՝ ի տարբերություն **միջնորդավորված բաղադրիչների**:

Նշված երևույթը առկա է լեզվի նաև այլ մակարդակներում: Այս առումով վերլուծենք *անցուդարձ անել* կառույցը: Նրանում եղած իմաստային մի քանի բաղադրիչները վերլուծում, գնահատում ենք երկու աստիճանով. **ա.** որոշում ենք կառույցի անմիջական բաղադրիչները, որոնք են՝ *անցուդարձ* և *անել*, որոնք կապված են ստորադասական հարաբերությամբ. **բ.** վերլուծում ենք այդ բաղադրիչներից յուրաքանչյուրի անմիջական բաղադրիչները առանձին-առանձին՝ որպես ինքնուրույն միավորներ. դրանք են՝ *անցուդարձ*-ը համադաս բաղադրիչներով կազմված կցական բարդություն՝ գոյական, *անել*-ը բայական հիմքով և *ել* երկրորդական ձևությամբ կազմված բայ է:

Երկրորդ աստիճանի վերլուծումներով ստացված անմիջական բաղադրիչները ամբողջ կառույցի համար միջնորդավորած բաղադրիչներ են և նրա տեսակը որոշելու համար հիմք չեն ծառայում:

Նույն սկզբունքը վերաբերում է նաև շարահյուսական կառույցներին, և դա բխում է լեզվի կառուցվածքի աստիճանակարգության ընդհանուր սկզբունքից, որ կարևոր դեր է կատարում լեզվի համակարգում՝ նպաստելով լեզվի ընդհանուր համակարգայնության ապահովմանը և բխելով այդ համակարգայնությունից: Այսպիսով՝ լեզվական կառույցի գնահատման խնդրում հիմք պետք է ընդունել կառույցի անմիջական բաղադրիչների փոխհարաբերությունը: Սա վերաբերում է բազմաստիճան կառույցների յուրաքանչյուր աստիճանին: Լեզվական բազմաստիճան կառույցը համակողմանի գնահատելու համար հաշվի է առնվում այս ամենը՝ գերակայությունը տալով ընդհանուր կառույցի գերադաս աստիճանի հարաբերությանը:

Համաստորադասությունը վաղուց հայտնի է բարդ ստորադասական նախադասության կազմում: Ինչ վերաբերում է այն կառույցին, որի դեպքում համադասությանն է զուգորդվում ստորադասությունը, այն դեռևս կարիք ունի վերլուծման ու գնահատության: Ի դեպ, բազմաբաղադրիչ նախադասությունների այս երկու տեսակի կառույցները սկզբունքային առումով ունեն էական ընդհանրություն, որին և համառոտ անդրադառնում ենք:

Համադասական և ստորադասական հարաբերությունները միևնույն տարասեռ բարդ նախադասության մեջ անհավասար դեր ունեն: Զերականորեն դրանցից մեկը լինում է գերակա, ելակետային, առաջնային, մյուսը՝ երկրորդային, հավելյալ: Այս հարցում կարևոր դեր է կատարում նույն կառույցում հանդես եկող տարբեր հարաբերությունների **ստորակարգությունը**, որն օգնում է վեր հանելու կառույցի ամեն մի աստիճանի անմիջական բաղադրիչները:

Բարդ համաստորադասական նախադասության բաղադրիչների հարաբերությունների մեջ գերական, իշխողը, իհարկե, ստորադասությունն է, որի պատճառով նախադասությունը ստորադասական է, իսկ համադասական հարաբերությունը համեմատաբար երկրորդային հատկանիշ է. այն վերաբերում է ստորադաս նախադասությունների կապին: Իսկ ստորադասությունը գերակա դեր ունի համադասության համեմատությամբ:

Այս առումով դիտարկենք մի այլ նախադասություն:

Արամը զնաց գյուղ՝ մի քանի օր հանգստանալու, բայց նրան հետ կանչեցին մի անհետաձգելի հարց լուծելու համար:

Սա բարդ համադասական նախադասություն է, քանի որ նրա անմիջական բաղադրիչները կապված են համադասական հարաբերությամբ. նրա բաղադրիչները կապված են **բայց** համադասական շղկապով: Համադասական նախադասության առաջին բաղադրիչը վերածենք բարդ ստորադասական նախադասության:

Արամը զնաց գյուղ, որպեսզի մի քանի օր հանգստանա, բայց նրան հետ կանչեցին մի անհետաձգելի հարց լուծելու համար:

Փոփոխությունը կատարվել է բարդ կառույցի առաջին բաղադրիչի մեջ, և դրանից չի փոխվել նախադասության *ընդհանուր* կառուցվածքը (համադասական): Դա նշանակում է՝ այդ նախադասության մեջ համադասությունը գերակա դիրք ունի ստորադասության համեմատությամբ: Նույնպիսի փոփոխություն կարելի է կատարել նաև բերված նախադասության մյուս բաղադրիչ նախադասության կառուցվածքում և դարձնել ստորադասական կառույց:

Արամը զնաց գյուղ, որպեսզի մի քանի օր հանգստանա, բայց նրան հետ կանչեցին, որպեսզի լուծի մի անհետաձգելի հարց:

Դարձյալ ամբողջ նախադասության կառուցվածքը մնաց համադասական, քանի որ այն գերակայություն ունի առանձին բաղադրիչների ներքին հարաբերության նկատմամբ:

Այսպիսով՝ բազմաբաղադրիչ նախադասություններում տարբեր հարաբերությունների առկայությունը բնավ չի նշանակում, թե դրանք խառը նախադասություններ են: «Խառն» անվանումը ճիշտ չի արտահայտում այդ նախադասությունների կառուցվածքը: Պարզապես անհրաժեշտ է ճիշտ որոշել տարբեր հարաբերությունների ստորակարգությունը, հարաբերությունների մեջ գերադասն ու ստորադասը և նրանց զուգորդումը: Լեզվի մեջ խառը ոչինչ չկա: Ամեն ինչ օրինաչափական է:

Այս դեպքում պարզապես պետք է ճիշտ որոշել համադասության և ստորադասության ստորակարգությունը և դրանց տարբեր զուգորդումները նույն նախադասության մեջ:

Դրանք կամ ստորադասական են՝ համադասության զուգորդումով (զուգորդումներով), կամ համադասական են՝ ստորադասության զուգորդումով (զուգորդումներով):

Առաջին տեսակը կոչվում է **բարդ համաստորադասական նախադասություն** (հարաբերություն): Թերևս նույն սկզբունքով երկրորդ տեսակը կարելի է կոչել **բարդ ստորահամադասական նախադասություն** (հարաբերություն), նկարագրական ձևակերպումով՝ բարդ համադասական նախադասություն՝ ստորադասության զուգորդումով:

Տարասեռ բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների ներքին օղակներում (ենթակառույցներում) գործում են համադասական և ստորադասական հարաբերությունների օրինաչափությունները, որոնք բննարկված են համասեռ բարդ նախադասությունների բաժիններում:

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ **Ընդհանուր բնութագիր**

Բարդ համադասական կոչվում է այն բարդ նախադասությունը, որը կազմված է քերականորեն համագոր հարաբերությամբ կապված բաղադրիչ նախադասություններից:

Բարդ համադասական նախադասության պարզագույն տեսակը բաղկացած է լինում երկու նախադասություններից:

Հոգնել եմ սիրելուց ես արդեն, և տաղտուկ է պատճառում ինձ սիրային վեպը (Բս): Միշտ էլ սիրածին պատահարար եմ պատահում կյանքում, Ու հրածեշտ եմ տալիս սիրածին անհրաժեշտարար (ՊՍ): Մարդիկ սիրտս են զնում, իսկ դուք աղավարի նստել եք պատշգամբում (ՍԽ):

Բարդ համադասական նախադասությունը կարող է կազմված լինել նաև երեք ու ավելի նախադասություններից:

Առաջին դրոշները դառնում են սրբություն, հերոսները անմահանում են, և զալիս են նորոգ գուտաններ՝ նրանց և այն հերոսական օրերի մեծարման երգերով (Բակ): Դռնակն անդադար բացվում էր, նոյեմբերյան քամին ներս էր փչում, օրորվում էին եղեգները, և ճրագների լույսը դողում էր (Բակ): Այսօր բոլորը ժպտում են, այսօր վերելակի հայելին ժպիտով է լքցված, սենյակիս բանալին էլ ինչ-որ ուրախ է զնգում, իսկ լայն լուսամտից գիշերային Բեյրութի հանդարտած լույսերը մտերիմ աչքի են նման (ՍԿ):

Բարդ համադասական նախադասություններն ունենում են, այսպես կոչված, փակ և բաց կառուցվածքներ, որ արտահայտվում է բաղադրիչ նախադասությունների քանակի սահմանափակության կամ դրանց ավելացման հնարավորության մեջ:

Փակ կոչվում է այնպիսի համադասական կառուցվածքը, որը բաղկացած է երկու բաղադրիչներից, որոնց վրա այլ բաղադրիչներ ավելացնել հնարավոր չէ: Փակ կառուցվածքները սովորաբար ունենում են ներհակական հարաբերություն, որն արտահայտվում է համապատասխան շաղկապներով:

Այդ գիշեր թշնամու բանակը կարծես սուգի մեջ էր, մինչդեռ Բյուրականը ջահերով ու դամբարներով լուսավորված հաղթության տոն էր կատարում (Մուր): Նա վստահ առաջ գնաց, բայց սրտում կասկած ծագեց (ՎԱ): Վասակյանը նրան շտապեցնում էին, իսկ Վարդանանը և չեզոքները կաշկանդում էին գործի անցնել (ԳԳ):

Փակ կառուցվածքի համադասական նախադասության մեջ հակադրության մեկ եզրը (ավելի հաճախ՝ առաջին եզրը) կարող է բաղկացած լինել մեկից ավելի բաղադրիչ նախադասություններից, որոնց բոլորին հարաբերում է (սովորաբար ներհակությամբ) մյուս եզրը: *Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում ուրիշ պոետներ կան, բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության (ԵՉ): Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում ուրիշ պոետներ կան միավորական կապակցությունը վերոհիշյալ բարդ համադասական նախադասությանը բնորոշ ներհակական կապակցության համար*

մեկ եզր է (թեև բազմանդամ), և այդ ամբողջին, որպես մեկ բաղադրյալ բաղադրիչի, հակադրված է վերջին բաղադրիչը (*Բայց թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության*):

Բաց կառուցվածքի բարդ համադասական նախադասությունները կազմված են լինում երկու կամ ավելի հավասարաթեք բաղադրիչ նախադասություններից և իրենց կազմի մեջ կարող են ընդունել այլ բաղադրիչ նախադասություններ ևս: Այսպիսի կառուցվածքներն առավելապես ունենում են միավորական ու տրոհական հարաբերություն: Այսպես. *Աշուն էր, դաշտերը դեղնել էին (ՀՔ)* նախադասությունը, որ բաղկացած է երկու միավորից, բաց կառուցվածքի է, և նրա կազմի մեջ կարելի է ավելացնել եղածներին համարժեք այլ նախադասություն կամ նախադասություններ ևս: Ասենք. *Աշուն էր, դաշտերը դեղնել էին, եղանակը աստիճանաբար ցրտում էր, ծառերը կամաց-կամաց սկսում էին մերկանալ իրենց գույնզգույն զգեստից*: Բաց կառուցվածքի հետևյալ բարդ նախադասությունը բաղկացած է չորս նախադասությունից, սակայն այդ քանակը կարելի է ավելացնել՝ շարունակելով գարնան նկարագրությունը: *Գարունը եկավ, եղանակն աստիճանաբար տաքանում է, ծաղիկները բացվում են, թռչունները վերադառնում են տաք երկրներից*:

Բարդ համադասական նախադասության բաղադրիչները մեկ ամբողջի մեջ միավորվում են իմաստային հիմքով ու քերականական միջոցներով (շաղկապներով, շարահարությամբ): Այս հարցում դեր են կատարում նաև հատկապես հնչերանգը, ինչպես նաև շարադասությունը: Բաղադրիչ նախադասությունների իմաստային կապն ու սերտությունը տարբեր չափի ու բնույթի են լինում: Առավել սերտ են զուգադրական շաղկապներով կապված բաղադրիչները:

Ոչ միայն տրամադրություն չունենք ուղևորության գնալու, այլև եղանակն էր վատ ու աննպաստ: Ոչ քե նրանք ձախողեցին նախաձեռնության իրագործումը, այլ ուղղակի այն իրագործելու սյայմաններ չկային:

Այլ շաղկապներով ևս միանում են սերտորեն կապված բաղադրիչ նախադասությունները:

Այդպես խոսիր, Պետրե՛, ապա քե ոչ ես կխելագարվեմ (Մուր.): Ետ ուղարկիր սրանց բանտ, տեր մարգայան...եքե ոչ մենք կկոպենք (ԳԳ): Հինգ-վեց օրվա ընթացքում պետք է ավարտել սիրուսի կուտակումը, այլապես ուշ կլինի (ՍԽ):

Միավորական հարաբերությամբ կապված բարդ համադասական նախադասության բաղադրիչները հաճախ թվարկում են արտահայտում, և այդ դեպքում բարդության բաղադրիչները կարելի է լինում նույնիսկ դարձնել անկախ նախադասություններ:

Բոլորս ելանք, ոտքի կանգնեցինք, մի ընկեր լամպի պատրույզը բարձրացրեց, խուցն ավելի լուսավորվեց (Իս.): Հմմտ. Բոլորս ելանք, ոտքի կանգնեցինք: Մի ընկեր լամպի պատրույզը բարձրացրեց: Խուցն ավելի լուսավորվեց:

Բարդ համադասական նախադասության բաղադրիչների կապը կարող է ավելի պակաս սերտ լինել, քան նախորդ օրինակներինն է: Այս դեպքում բաղադրիչ նախադասությունները բաժանվում են համեմատաբար տևական դադարով, իսկ գրավոր խոսքում նրանք բաժանվում են միջակետով:

Այս վիթխարի խաչի ձախ թևի վրա մեր խցերն էին գտնվում. ես միայնակ էի իմ խցում քանդված. մի փոքրիկ լուսամուտ նայում էր Արագածին (Իս.): Երկու ընկերով գնում էինք հինա-

վորց Արմավիրի բլրի տակով, մեր գլխի վրա ծփում էր մեհենական ստահների խորհրդավոր առափքը. երկուսս էլ լուռ էինք, տարված մեր տեսիլներով (Իս.):

Համադասական նախադասության բաղադրիչների կապի սերտության օբյեկտիվ չափանիշ հաճախ չի լինում, այլ դա կարող է կախված լինել խոսողից (հեղինակից): Դա է հաստատում այն իրողությունը, որ միևնույն կարգի նախադասությունները մի հեղինակ (կամ խոսող) կարող է դիտել որպես մեկ բարդության սերտորեն կապված բաղադրիչներ (կապելով համապատասխան շաղկապներով կամ շարահարության դեպքում գրավոր խոսքում գործածելով ստորակետ), մեկ այլ հեղինակ (երբեմն էլ նույն հեղինակը մեկ այլ դեպքում) այդ նույն կամ նույն կարգի միավորները կարող է պակաս սերտությամբ կապված դիտել՝ բանավոր խոսքի մեջ արտասանելով ավելի տևական դադարով, իսկ գրավոր խոսքում գործածելով միջակետ: Մի երրորդ հեղինակ կարող է այդպիսի նախադասությունները գործածել որպես ոչ թե բարդ նախադասության բաղադրիչներ, այլ որպես ինքնուրույն նախադասություններ: Պ.Սևակի հետևյալ ինքնուրույն նախադասությունները մեկ ուրիշը կարող էր գործածել որպես բարդ համադասական նախադասության բաղադրիչներ: *Օ՛, իմ հոգի: Ա՞մսդ ես թռչում: Թե՞ երկրից ես դու սարսափում: Ո՞ւմ հետ ես դու: Ո՞ր է ճամփադ: Ո՞ր ես գնում: Չուր մի՛ փախիր (ՊՍ):*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՆԹԱԿԱՅՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ համադասական նախադասության մեջ տարբեր ստորոգումները կարող են վերաբերել տարբեր ենթակաների կամ միևնույն ենթակային:

Բարակ հովը մեղմիկ սվավում էր խոզանների վրայով, ծղրիդները ...ռիթմիկ ծղրփում էին, անտեսանելի հավքերը հնձած արտերի մեջ անուշ ճպճփում էին, իսկ ոչխարները մնչում էին անհուն բարությանը...

Ես պառկել էի մեջքիս՝ գլուխս ձեռներիս վրա դրած, և նայում էի երկնքին (Իս.):

Առաջին բարդ համադասական նախադասությունը կազմված է չորս բաղադրիչ նախադասություններից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթական և ստորոգյալը: Երկրորդ համադասական նախադասությունը կազմված է երկու բաղադրիչ նախադասությունից, որոնցում տարբեր ստորոգյալները (*պառկել էի, նայում էի*) ունեն մեկ ենթակա (*ես*):

Այն բարդ համադասական նախադասությունը, որի բաղադրիչներն ունեն մեկ ենթակա, կոչվում է ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասություն:

Երբ նույն ենթական կրկնվում է բարդ համադասական նախադասության յուրաքանչյուր բաղադրիչի հետ, այսպիսի նախադասությունը չի համարվում ընդհանուր ենթակայով:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,

Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ,

Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ:

Հ.Սահյան

Այդպիսին է Հ.Սահյանի՝ Պարույր Սևակին նվիրված բանաստեղծության հետևյալ քառատողը.

Դու մի բանակ, դու մի գործ,

Դու մի տոհմի շյուղ,

Դու հրթիռի հրացույթ

Ու երդիկի ծուխ:

Բազմակի ստորոգյալներով (ու իր լրացումներով) նախադասությունները էապես տարբերվում են բազմակի ենթականերով նախադասություններից: Քանի որ բարդ նախադասությունը՝ որպես այդպիսին, որոշում ենք նրա կազմի մեջ մեկից ավելի բաղադրիչ նախադասություն լինելու կառուցվածքային հատկանիշով, ապա այդ տեսակետից բազմակի ստորոգյալներով և բազմակի ենթականերով նախադասությունները հավասարաթեք չեն, նույն կառուցվածքային տեսակին չեն պատկանում: Նախադասության կառուցվածքը որոշվում է ոչ թե նրանից բխող կամ ենթադրվող բովանդակությամբ, այլ առկա կառուցվածքով: Այն հանգամանքը, որ *Արամը և Աշոտը եկան* նշանակում է *Արամը եկավ և Աշոտը եկավ*, փաստարկ չէ այդ նախադասությունը բարդ համարելու: Ճիշտ այնպես, ինչպես *Արամը գնեց գրիչ և մատիտ* նախադասությունը, թեև նշանակում է *Արամը գնեց գրիչ և Արամը գնեց մատիտ*, բայց բարդ չէ:

Լեզվական միջոցի լեզվական արժեքավորման համար կարևոր է լեզվական, կառուցվածքային կողմը և ոչ թե նշանակյալը (դեմոտատը)՝ արտալեզվական նշանակությունը: Ուրեմն՝ բարդ նախադասության կառուցվածքը պետք է որոշել նրա մեջ **առկա՝** քերականորեն ձևավորված բաղադրիչ նախադասության առկայությամբ: Իսկ ստորոգումը նախադասության կառուցվածքային հիմնական հատկանիշ է, հետևապես և ստորոգման ամեն մի արտահայտություն նախադասության կառուցվածքային հատկանիշ է:

Այնպես որ բազմակի ենթականերով և բազմակի ստորոգյալներով նախադասությունները կառուցվածքային նույն տեսակին չեն պատկանում: Բազմակի ենթակայով նախադասությունը, եթե ունի մեկ ընդհանուր ստորոգյալ, բարդ չէ, ինչպես կարծում են ոմանք:

Այդ տեսակետից ստորոգյալի և ենթակայի դերի տարբերությունը երևում է թեկուզև նրանից, որ բազմակի ստորոգյալների գծային հատույթավորումից ստացված միավորներն ունեն նախադասության հատկանիշ՝ ի տարբերություն բազմակի ենթակաների հատույթավորման, որի դեպքում չենք ստանում նախադասության հատկանիշ ունեցող միավոր:

Համտ. *Մենք դուրս եկանք բացատ ու ազատ շունչ քաշեցինք:*

Արամն ու իր ընկերները դուրս եկան բացատ:

Թեև առաջին օրինակում **մենք**-ը ընդհանուր անդամ է նախադասության երկու բաղադրիչ մասերի համար, այնուամենայնիվ, այդ նախադասությունը կարելի է հատույթավորել երկու մասի, որոնցից ամեն մեկը նախադասություն է՝ 1) *Մենք դուրս եկանք բացատ*, 2) *ազատ շունչ քաշեցինք*: **Մենք**-ը ենթակայի դեր է կատարում նաև երկրորդ նախադասության համար:

Վերը բերված երկրորդ նախադասությունը (բազմակի ենթականերով) այդպիսի բաժանման չենք կարող ենթարկել: Եթե բազմակի ենթակաների սահմանից հատույթավորենք, կստացվի մեկ նախադասություն (իր ընկերները դուրս եկան բացատ) և մեկ առանձին բառ (Արամ), որ նախադասության հատկանիշ չունի: Այսպիսով՝ բազմակի ստորոգյալներով և բազմակի ենթականերով նախադասությունները կառուցվածքային տարբեր տեսակներ են:

Ի դեպ, ընդհանուր ենթակա ունենալը հատուկ է նաև բարդ ստորադասական շատ նախադասությունների, բայց դա չի խանգարում դրանք բարդ համարելուն:

Դու խոստացել էիր, որ կգաս: Նրանք ամեն ինչ անում են, որ տարեվերջին ավարտեն այդ աշխատանքը: Աշտուղ համաձայնություն է տվել, որ մասնակցի այդ աշխատանքին: Հենց որ ժամանակ ունենամ, կգամ: Այս բարդ ստորադասական նախադասություններից յուրաքանչյուրի բաղադրիչների ենթական նույնն է: Դիշտ չէր լինի նույն ենթակայով երկու բաղադրիչ նախադասությունները, եթե ստորադասական հարաբերությամբ են կապված, համարել բարդ, իսկ եթե կապված են համադասական հարաբերությամբ, համարել պարզ (**հմմտ. Նրանք խոստացան, որ զան: Նրանք խոստացան և կգան**):

Միևնույն նախադասության՝ նույն ենթակայով միավորված բաղադրիչները հաճախ կարող են գտնվել շարահյուսական տարբեր հարաբերության մեջ՝ համադասական և ստորադասական:

Իսկ դու ո՞ր օրը սիրեցիր ինձ, ո՞ր հանդիպումին զգացիր, որ սիրում ես, պատմի՛ր անկեղծորեն (ՀԲ):

Այս նախադասության չորս բաղադրիչ նախադասություններն ունեն միևնույն ընդհանուր ենթական (**դու**):

Տարբեր ստորոգյալների՝ նույն ընդհանուր ենթակա ունենալը որոշ չափով սահմանափակում է այսպիսի բարդ նախադասության կառուցվածքը, բաղադրիչ համադաս նախադասությունների շարահյուսական հարաբերությունը:

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բարդ համադասական նախադասության բաղադրիչները կապակցվում են երկու հիմնական եղանակով՝ **շաղկապներով** ու **շարահարությամբ**: Հասկանալի է, որ այս դեպքում խոսքը վերաբերում է համադասական շաղկապներին՝ **և, ու, նաև, ևս, բայց, իսկ, սակայն, այլ, կամ, կամ թե** և այլն: Կան, սակայն, շաղկապներ, որոնք հանդես են գալիս թե՛ ստորադասական և թե՛ համադասական հարաբերություններ արտահայտելու համար, ուրեմն և կապակցում են թե՛ բարդ ստորադասական և թե՛ բարդ համադասական նախադասությունների բաղադրիչներ: Այդպիսիք են՝ **եթե...սպա, մինչդեռ, թե, թե չէ** և այլն:

Համադասական նախադասության կառուցվածքում կարևոր դեր է կատարում նաև շարահարությունը: Շարահարությամբ կապակցումը կարող է լինել **լրիվ** կամ

մասնակի չափով: Տվյալ բարդ համադասական նախադասության բոլոր բաղադրիչները կարող են կապվել միայն շարահարությամբ (**լրիվ** շարահարական կապակցում):

Կեսգիշեր է արդեն, փողոցները խաղաղ են, լուսառեկամները՝ հանդարտած (ՄԿ): Հարթենի գինետունը ճոխ լուսավորված էր, բոլոր սեղանները գրավված էին հաճախորդներով, խոսակցության ձայներով, ծիծաղով, քրքիջով լցված էր ընդարձակ սրահը (Բս.):

Լրիվ շարահարությունը սովորաբար գործածվում է այն դեպքում, երբ նկարագրվող երևույթները նկարագրվածով չեն սահմանափակվում, և կարելի է շարունակել: Մասնավորապես միավորիչ շաղկապներն ունեն նաև սահմանափակող դեր, ուստի և շաղկապը չգործածելը իմաստային, ոճական այդ երանգն արտահայտելու միջոց է:

Արտագերս բերդը զվարճանում էր ընդհանուր ցնծության մեջ, փողոցները զարդարված էին, գույնզգույն դրոշները ծածանվում էին աշտարակների բարձրության վրա, բնակիչների խումբ բազմությունը լցվել էր հրապարակները (Բ):

*Գարունը հայերեն է գալիս,
Ձյուներդ հայերեն են լալիս,
Հայերեն են հարդում ջրերդ:*

*Ձորերդ հայերեն են շնչում,
Ձոհերդ հայերեն են ննջում,
Հայերեն են տանջում ցավերդ:*

Հ. Սահյան

Լրիվ շարահարությամբ կապակցությունը սովորաբար ձևավորվում է միավորական հարաբերության դեպքում:

Ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասությունների բաղադրիչներին հատուկ են այն հարաբերությունները, որ ունի բարդ համադասական նախադասությունների մյուս տեսակը (որի ենթական ընդհանուր չէ): Պետք է նկատի ունենալ, սակայն, որ այդ հարաբերությունները ընդհանուր ենթակայով նախադասություններում դրսևորվում են համեմատաբար սահմանափակ կերպով:

Շարահարական կապակցությունը **մասնակի** է կոչվում այն դեպքում, երբ երեք կամ ավելի համադաս նախադասությունների մի մասը կապվում է շարահարությամբ, մյուսը՝ շաղկապով: Շաղկապով կապվում են սովորաբար վերջինը և նախավերջինը:

Աստղերը չքացան, արշալույսը վառեց իր խարույկները լեռների զագաթներին, թռչունները զարթնած ճախրում են օդում, և գեղջկուհիները ձորն ի վար աղբյուրն էին շտապում (Բս.): Երկար անձրևը ծեծում էր դուրսը, երկար օդի մեջ շտապում քամին, սակայն Պետրոսը քնած էր հանգիստ (Մուր.): Տարիներ անցան, տարիների հետ ջահելությունն էլ անցավ, և աշնան խոտի պես չորացավ տուն դնելու, կնիկ առնելու միտքը թաքուն (Բակ.):

Պատահում է նաև, որ շաղկապով կապակցվում են բարդ համադասական նախադասության ոչ թե վերջին, այլ առաջին բաղադրիչները:

Սարդը ուստայն հյուսեց, և մի ձմեռ էլ մարագի երկու գերանը ձյունի ծանրությունից կրեցին, հող թափվեց մարագում (Բակ.):

Շարահարությունը և շաղկապավոր կապակցումը տարբեր դեպքերում տարբեր

հարաբերակցության մեջ են գտնվում: Միավորական հարաբերություն արտահայտելիս դրանց քերականական դերը իրար շատ մոտ է լինում: Երբեմն նույնիսկ կարելի է շաղկապավոր կապակցությունը դարձնել անշաղկապ, և հակառակը՝ պահպանելով հանդերձ նախադասության հիմնական միտքը:

Արշալույսը ամենից շուտ ողջունում էր նրան, և լեռների բուրալից գեփյուղը գուրգուրում էր նրա մազերի հյուսքը (Խ.): Վայրի կանեփը փարթամորեն աճում էր տան ավերակների վրա, և հարևանի հավերթը քուջուջ անելուց հետո սլառկում էին կանեփի շվաքում (Բակ.):

Այս նախադասությունների մեջ գործածված և շաղկապը հեշտությամբ կարելի է վերացնել, և այդ դեպքում կստանանք սովորական շարահարական կապակցություն, որն արտահայտում է նույն քերականական հարաբերությունը, ինչ որ բերված շաղկապավոր կապակցությունը: **Հմմտ.** *Արշալույսը ամենից շուտ ողջունում էր նրան, լեռների բուրալից գեփյուղը գուրգուրում էր նրա մազերի հյուսքը:*

Այսպիսի դեպքերում գործածվող շաղկապավոր կապակցությունն ունի հետևյալ յուրահատկությունը. շաղկապը շեշտում է տվյալ հարաբերությունը և սահմանափակում է կապակցվող միավորները: Առանց շաղկապի՝ թվարկումը չի սահմանափակվում, ենթադրվում է այլ միավորների թվարկման հնարավորություն:

Շաղկապական և շարահարական կապակցությունները երբեմն հեշտությամբ չեն ըմբռնվում որպես շարահյուսական համանիշներ: Դա վերաբերում է ներհակական շատ կազմությունների: Այսպես՝ «Եփա» էին հնչում նրա շրթները, սակայն «Լիլիթ» էր արձագանքում նրա հոգին (Խ.): Եթե սակայն շաղկապը վերացնենք և վերանանք բնագրից, ապա այս կառուցվածքը կարող է հասկացվել թե՛ հակադրական և թե՛ միավորական հարաբերությամբ:

Կան շաղկապավոր կապակցություններ, որոնք շարահարական համարժեքներ չունեն, այսինքն՝ տվյալ հարաբերությունը արտահայտվում է միայն շաղկապավոր կառուցվածքով:

Այսանքը պետք է խաղաղության վերադառնա բոլոր իր վերքերը բուժած, այլսպես անիմաստ կլինի ապրելը (ՎԽ): Ժողովրդական հերոսները ժողովրդի ավանդույթների մեջ ոչ թե մեռնում են, այլ դարերի ընթացքում հետզհետե աճում են, մեծանում են (Բ):

Բարդ համադասական նախադասության բաղադրիչների կապի արտահայտության մեջ հաճախ դեր է խաղում **ընդհանուր անդամը**, որը գործածվում է որևէ բաղադրիչ (գերազանցապես առաջին) նախադասության մեջ, բայց վերաբերում է նաև մյուս նախադասությանը կամ նախադասություններին:

Մեր Լուսինեի տրամադրությունն ընկած է, բայց երգը հնչում է սովորականի պես կատարյալ ու վարակիչ: Այս օրինակի մեջ **մեր Լուսինեի** հատկացուցիչները, որոնք գործածվում են առաջին նախադասության մեջ, վերաբերում են նաև երկրորդին: Հատկացուցիչների այդ կապակցությունը (մեր Լուսինեի) ըստ էության նույնպիսի դեր կատարում է երկրորդ նախադասության **երգը** ենթակայի համար (մեր Լուսինեի երգը):

Որպես ընդհանուր անդամ կարող են հանդես գալ նախադասության տարբեր անդամներ: Հետևյալ նախադասություններում ընդհանուր են ժամանակի, տեղի պարագաները, հատկացուցիչը:

Հինա սենյակիս լուսամտից բացվում է հարազատ բնակար՝ լեռներ են, բարդիներ, իսկ լուսամտի տակ, կանաչների մեջ կորած ուրախ ծորակում աղմկում է փոքրիկ, մտերիմ

մի գետակ (ՄԿ): Այսպես էլ մշուշը հոսում է կտուրների վրայով, մաղում է զարնանամուտի տաք շաղը (Քակ.): Կնոջ դեմքի մկանները լարված են, ձայնը ելևէջում է՝ ամեն սյահ սպառնալով խզվել (ՄԿ):

Ընդհանուր կարող է լինել ոչ միայն մեկ անդամը, այլև անդամների կապակցությունը կամ մեկից ավելի անդամներ: Հետևյալ օրինակներից առաջինում ընդհանուր են ժամանակի ու տեղի պարագաները, իսկ երկրորդում՝ հիմունքի, ժամանակի ու տեղի պարագաները: *Այժմ լեռներում դեռ ձյուն է նստած, ձնծաղիկը դեռ քնած է գետնի տակ, բայց արդեն օդի մեջ զգացվում է մոտալուտ զարնան հաճելի ջերմությունը: Քաղաքապետարանի որոշումով այս տարի քաղաքում պիտի սկսվեն երեք բազմահարկ շենքերի շինարարական աշխատանքները, և այետք է ավարտվի մշակույթի տան կառուցումը:*

Առանձին դեպքերում ընդհանուր անդամն ավելի շատ անդամներ է ընդգրկում և իր կազմում կարող է ունենալ նաև դերբայական դարձված: *Մելջուկյան կրկնվող արշավանքների հեղևանքով հայ ժողովրդի որոշ հատվածներ բռնում են գաղթի ուղին, իսկ մի մասը հարթավայրից քաշվում է դեպի լեռնային շրջանները (ՀԺՊ):*

Ինչպես երևում է, ընդհանուր անդամը կամ անդամները վերաբերում են բարդ համադասական նախադասության տարբեր բաղադրիչների և դրանով իսկ ծառայում են որպես այդ բաղադրիչների կապի յուրահատուկ միջոց:

ԲԱՐԳ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարդ համադասական նախադասության բաղադրիչները իրար հետ կապվում են շարահյուսական տարբեր հարաբերություններով՝ **միավորական, ներհակական, տրոհական, հավելական:**

ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Միավորական կոչվում է այն հարաբերությունը, որի դեպքում բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները միավորվում են մեկ նախադասության մեջ՝ նույն կարգի, համասեռ երևույթներ արտահայտելու իմաստային հիմքի վրա:

Միավորական հարաբերությունը կարող է արտահայտվել երկու կամ ավելի նախադասություններով: Համադասության մյուս տեսակների համեմատությամբ կարող է ավելի բազմաբաղադրիչ լինել:

Բոլորն ուրախ էին, փայլում էին նրանց աչքերը (Իս.): Աստղերը չքացան, արշալույսը վառեց իր խարույկները լեռների գագաթներից, թռչունները զարթնած ճախրում էին օդում, և գեղջկուհիներ ծորն ի վար աղբյուրն էին շտապում (Իս.):

Միավորական բարդ համադասական նախադասություններն իրարից հիմնականում տարբերվում են ժամանակային հարաբերությամբ, որն ունենում է երկու հիմնական դրսևորում՝ **համաժամանակություն և տարժամանակություն:**

Ժամանակ ասելով՝ նկատի ունենք ոչ միայն պարզ ստորոգյալների, այսինքն՝

խոնարհված բայերի, այլև անվանաբայական բաղադրյալ ստորոգյալների ժամանակը, որ արտահայտվում է հանգույցով:

Ժամանակային հարաբերությունն արտահայտվում է երկու հիմնական եղանակով՝ **քերականական** և **բառական**: Այս երկուսից առավել կարևորն ու բնորոշը քերականական միջոցն է՝ հանձինս բայ-ստորոգյալի քերականական ժամանակների: Ինչ վերաբերում է բառական միջոցներին, դրանք ժամանակի իմաստ արտահայտող բառերն են, որոնք հաճախ ճշտում կամ նշում են բայ-ստորոգյալների ժամանակային նույնությունը կամ տարբերությունը:

Դասերը վերջացան, և աշակերտները պատրաստվում են մեկնելու ճամբար: Հմմտ. Դասերը երեկ վերջացան, և այսօրվանից աշակերտները պատրաստվում են մեկնելու ճամբար: Հինգ օր առաջ դասերը վերջացան, իսկ այժմ աշակերտները պատրաստվում են մեկնելու ճամբար:

Թեև առանց ընդգծված բառերի էլ բայ-ստորոգյալի տարբեր ժամանակներով արտահայտվում է ժամանակի հաջորդականությունը, բայց և այնպես այդ բառերը ավելի որոշակի են դարձնում բաղադրիչ նախադասությունների ցույց տված գործողությունների կատարման ժամանակը:

Սակայն պատահում է, որ բաղադրիչ նախադասությունների ստորոգյալն արտահայտված է լինում միևնույն ժամանակով, և տարժամանակությունն արտահայտվում է ժամանակ ցույց տվող բառերով:

Հմմտ. Նա քնելուց առաջ նայում է օրվա թերթերը և լսում երաժշտություն:

Նա քնելուց առաջ նայում է օրվա թերթերը և միաժամանակ լսում երաժշտություն:

Նա քնելուց առաջ նախ նայում է օրվա թերթերը և ապա լսում երաժշտություն:

Ինչպես երևում է, ժամանակային հարաբերության արտահայտման համար բառական միջոցների դերն աճում է քերականական միջոցի դերի նվազմանը զուգընթաց. դրանք իրենց դերով հակադարձ համեմատական են միմյանց:

Միաժամանակությունն ու տարժամանակությունը երբեմն ունենում են յուրահատուկ դրսևորումներ՝ պայմանավորված գործողությունների բնույթով և այլ հանգամանքներով: Պատահում է նաև, որ երկուսից ավելի բաղադրիչ ունեցող բարդ համադասական նախադասություններում տեղ է գտնում և՛ միաժամանակություն, և՛ տարժամանակություն:

Գուսանը մեղմիկ զարկում էր լարին, և հեծկլտում էր լարը, և պատմում էր լարը սիրո մի փոքրիկ վեպ (Իս.):

Բարդ նախադասության առաջին բաղադրիչ նախադասությունը մյուսների հետ տարժամանակային հարաբերության մեջ է գտնվում, բայց նշված գործողություններն այնպիսին են (զարկել և հեծկլտալ, պատմել) և այնպիսի կապի մեջ, որ չի կարելի կարծել, թե առաջին գործողությունը (զարկել) լրիվ վերջանում է, և հետո միայն սկսվում են մյուսները: Սա մի տարժամանակություն է, որ մոտենում է միաժամանակությանը: Ինչ վերաբերում է վերջին երկու բաղադրիչների գործողությունների ժամանակային հարաբերությանը, ապա այստեղ առկա է համաժամանակություն. սա՝ քերականական տեսակետից, իսկ նշանակյալի առումով դրանք արտահայտում են միևնույն երևույթը տարբեր գնահատումներով:

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Համաժամանակության հարաբերությամբ կապվող համագոր նախադասություններով արտահայտված երևույթները, գործողությունները տեղի են ունենում նույն ժամանակում, այսինքն՝ գործողությունների կատարման կամ եղելությունների ժամանակները համընկնում են այս կամ այն չափով:

Համաժամանակության հարաբերությունը պայմանավորում է կապակցվող նախադասությունների կառուցվածքային որոշ ընդհանրություն, հատկապես ստորոգյալների արտահայտության հարցում: Այդպիսի նախադասությունների ստորոգյալները արտահայտվում են կամ բայի միևնույն ժամանակով, կամ այնպիսի տարբեր ժամանակներով, որոնց ժամանակային իմաստների (բուն կամ երկրորդական) միջև կա որոշ ընդհանրություն:

Համաժամանակության արտահայտումը բայի միևնույն ժամանակով ինքնին հասկանալի է: Բերենք օրինակներ:

Ամեն առավոտ թռչունը կարդում էր յուր նախարշալույսյան մեղեդին, և նրա հետ լսելի էր լինում ժրաջան մշակի երգը (Բ):

Այնտեղ Վարուժանը իր եղեգնյա գրչով ցասման խոսք էր կռում, Կարմիր մեր աբյունն էր Սիամանթոն երգում իր սպիտակ տողով (ՊՍ):

Բայի տարբեր ժամանակներով համաժամանակություն արտահայտելու իրողության մեջ դրսևորվում են բայի ժամանակային ձևերի բարդ փոխհարաբերություններն ու նրբերանգները, որոնք հաճախ զուգակցվում են խոնարհվող բայի բառական իմաստի յուրահատկություններով: Այսպես՝ ներկա ժամանակը կարող է զուգակցվել անցյալի ժամանակաձևերի հետ և արտահայտել համաժամանակություն, քանի որ ներկա ժամանակաձևը երկրորդաբար նաև պատմական անցյալի իմաստ է արտահայտում: Ինչպես՝ *Մարտին ախպերը... ընտիր բեռներով նավ է նսարել հայրենիք վերադառնալու համար. մնաս բարև է ասում Օդեսային (Բս.):* Անցյալ կատարյալը երբեմն կարող է զուգակցվել ապառնի ժամանակի հետ քերականական այն հիմունքով, որ անցյալ կատարյալը կարող է երկրորդաբար արտահայտել անվերապահորեն և շուտ կատարվելիք գործողություն: Ինչպես՝ *Դեհ, մենք գնացինք, ցանկացողները մեզ հետ գան:*

Մինչդեռ, ասենք, վաղակատար և ապառնի ժամանակները չեն կարող արտահայտել համաժամանակություն, քանի որ դրանք ժամանակային ընդհանրություն չունեն իրենց ո՛չ հիմնական և ո՛չ էլ երկրորդական իմաստներով:

Համաժամանակությունը կարող է լինել **լիակատար և մասնակի:**

Լիակատար համաժամանակության դեպքում բարդ համադասական նախադասության բաղադրիչների ստորոգյալների արտահայտած գործողությունների կատարման ժամանակն ամբողջությամբ նույնն է, այսինքն՝ գործողությունները կատարվում են միևնույն ժամանակահատվածում:

Այս հանգամանքը հաճախ առաջացնում է նախադասության կառուցվածքային (մասնավորապես ստորոգյալի արտահայտության) յուրահատկություններ: Լիակատար միաժամանակության դեպքում սովորաբար ստորոգյալներն արտահայտվում են միևնույն ժամանակաձևերով:

Խնճորենիների նոր բացված բողբոջները խամրել ու կծկվել են, կացնի հարվածներից արյան պես հոսել է ծառերի հյութն ու չորացել վերքերի վրա (ՀՔ): Տխուր ժամանակը և տըխրագույն դեպքերը վաղուց իմ գրիչը դապապարտել էին անգործության, և լռությունն ինձ համար դարչել էր հաճելի հիվանդություն (Մուր.):

Մասնակի համաժամանակությունը հաճախ արտահայտվում է միևնույն ընդհանուր ժամանակին վերաբերող տարբեր ժամանակաձևերով:

Նրանք բայլում էին անտառի միջով, և անսպասելիորեն նրանց դեմը դուրս եկավ մի արջ: Նախկին ճակատայինը պատմում էր Հայրենական պատերազմի դրվագներից ու, հիշելով իր գոհված ընկերներին, խիստ հուզվեց:

Մասնակի միաժամանակությունը կարող է արտահայտվել նաև միևնույն ժամանակաձևերի գուգակցումով. այս դեպքում օժանդակ դեր կատարում են որոշ բառեր, որոնք նշում են գործողություններից մեկի կամ կարճատևությունը, տևականության սահմանափակությունը, կամ ուշ սկսվելը մյուսի համեմատությամբ:

Երեխաները խաղում են դաշտում, և հանկարծ սկսվում է հորդ անձրևը:

Բայ-ստորոգյալները գործածվում են պատմական ներկայի իմաստով. մասնակի համաժամանակությանը նպաստում է **հանկարծ** բառը: Համեմատել նաև՝ *Երեխաները խաղում են դաշտում և խաղի կեսին (խաղը սկսելուց քիչ հետո, խաղը չվերջացած) սկսվում է անձրևը:*

Համաժամանակության հարաբերությունը կարող է արտահայտվել երեք ընդհանուր ժամանակներից յուրաքանչյուրում՝ ներկայում, անցյալում, ապագայում:

Համաժամանակությունը ներկա ժամանակում գերազանցապես արտահայտվում է խոնարհված բայի ներկայով:

Քալիս է, գուրգուրում, գզվում են իրար, սիրում են իրար, սիրելով էլ իրար հետ կապում են իրենց կյանքը (ՀԹ):

Չյուն է մաղում կամաց, հրդեհվում է մի տուն (ՊՄ):

Շրջում է մի աղջիկ կանաչ ծաղկանոցում,

Թախծում է նա տրտում ու մեմ-մեմակ.

Նրան բոլոր ծաղիկներն են լսում,

Եվ օրորվում են լուռ ու գլխահակ (ՊՄ):

Ներկայի համաժամանակության հարաբերությունն արտահայտվում է նաև բաղադրյալ ստորոգյալներով, եթե, իհարկե, հանգույցը դրված է ներկա ժամանակով:

Ծով է իմ վիշտն, անափ ու խոր, Լիքն ակունքով հազարավոր. Իմ գայլույթը լիքն է սիրով, Իմ գիշերը՝ լիքն աստղերով (ՀԹ): Ես ուրախության գործակալար եմ Եվ խոր խնդրության վաճառորդ եմ ես (ՊՄ):

Հողն անուշ է, Երզն անուշ է, Կյանքը ուրախ էս տարի,

Հողի մարդու Աչքը կուշտ է, Ան չունի նա էս տարի,

Երգ ու խնդում Մեր սրտերում, Կյանքը մերն է էս տարի (ՊՄ):

Համաժամանակության հարաբերությունը ներկայում կարող է արտահայտվել պարզ և բաղադրյալ ստորոգյալներով միաժամանակ՝ երկուսն էր արտահայտված բայի ներկա ժամանակով:

Նրա հոգին սառույց-սառնամանիք է, և արևը չի հալում նրան (Իս.): Անտառում մառա-

խող է, կաթում է խոնավությունը մամուռների վրա, ծառերի վրա և քարափների լանջին (Քակ.): Գյուղը մոտ է, ձին փոռացնում է ունգերը (Քակ):

Համաժամանակություն արտահայտելու համար բայի ներկա ժամանակի հետ երբեմն զուգակցվում է վաղակատար ժամանակը: Միաժամանակություն արտահայտելու համար այսպիսի տարիմաստ ժամանակների զուգակցումը երկու դեպքում կամ երկու պայմանով է հնարավոր: Երբ գործողությունը վերաբերում է անցյալին, այդ դեպքում ներկան ըմբռնվում է որպես պատմական ներկա: Իսկ երբ գործողությունը վերաբերում է ներկա պահին, այդ դեպքում վաղակատար ժամանակը ըմբռնվում է հարակատար ներկայի իմաստով:

Կանգնել են քարի այն գերման զինվորները, Խոժոռ սպառնում է սպան. Ու հողմը հեծում ու ծեծում է ծառերը, Թափում փաթիլները ձյան (ԳՄ):

Չնայած որ Սարյանի բանաստեղծության թեմայից ու նկարագրությունից գիտենք, որ բերված միաժամանակությունը վերաբերում է անցյալին, հետևապես և բերված օրինակի ներկա ժամանակաձևերը գործածված են պատմական ներկայի արժեքով, բայց մի այլ դեպքում այդպիսի կառուցվածքը կարող է հասկացվել հենց բուն ներկայի իմաստով: Այս դեպքում «կանգնել են» վաղակատարը կնշանակի «կանգնած են»: Ըստ որում նշենք, որ հենց բերված օրինակն էլ կարող է հասկացվել նաև բուն ներկայի իմաստով: Դա այժմ է, որ ըմբռնվում է որպես անցյալին վերաբերող նկարագրություն: Իրականում այն բանաստեղծությունը, որից կատարված է հիշյալ մեջբերումը, գրված է Հայրենական պատերազմի ժամանակ, և բանաստեղծը նրանում նկարագրել է ժամանակակից դեպքեր: Նշված ժամանակաձևերի զուգակցումը սովորական է նաև առտնին խոսակցության դեպքում:

Մանուկ ու պատանի դայրոցականները շարվել են բեմում, և մենք դահլիճից հաճույքով նայում ենք նրանց կենսուրախ ու խելացի հայացքներին:

Համեմատաբար սակավ դեպքերում ներկա ժամանակի միաժամանակությունը արտահայտվում է նաև ներկա հարակատարով՝ զուգակցվելով կամ սահմանական ներկայի, կամ հարակատար ներկայի հետ:

Ղարա-Ղորումի պարիսպների ստվերները աշխարհներ են ծածկում, և աշխարհների աչքն ու ականջը դեպի Ղարա-Ղորում են դարձած (Իս.):

**Գիշերվա մթնում նեղ լուսամուտից
Երևում է լույսն աղոտ լամպերի,
Յուր անձուկ խցում նստած է հանգիստ
Ծեր վերակացուն հին սրբավայրի (ՀԹ):**

Բայի ներկա ժամանակով արտահայտված միաժամանակությունը երբեմն չի վերաբերում հատկապես խոսելու պահին, այլ կարող է ունենալ ընդհանրական իմաստ ու վերաբերել բոլոր ժամանակներին:

**Աղբյուրները հրնչում են ու անց կենում,
Ծարավները փեկչում են ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներին երազուն՝
Պոետները կանչում են ու անց կենում (ՀԹ):**

*Միանգամից ոչ մի կարպետ և ոչ մի գորգ չի պատրվում,
Միանգամից բերդ չի շինվում ու չի քանդվում միանգամից,
Միանգամից ծյուն չի գալիս և չի փչում անգամ քամին (ՊՄ):*

Անցյալ ժամանակին վերաբերող համաժամանակության հարաբերությունն արտահայտվում է անցյալի բայական ժամանակներով: Այս նշանակությամբ շատ հաճախ գործածվում է անցյալի անկատար ժամանակը:

Չմենն անցնում էր, հալոցքի հետ խոտ էր կանաչում, կանաչի հետ ջահելանում էր Պետին, եռում էր արյունը (Բակ.): Օդի մեջ ճովողում էին արտույտները, մեր ոտքերի տակից թռչում էին յորեր (ՀՔ):

Անցյալ ժամանակում համաժամանակություն արտահայտելու հաճախականության տեսակետից բայական մյուս ժամանակը վաղակատարն է:

Առատ, անհատ՝ աստծու նման միշտ տեղալուց հոգնել էմ ես. Հոգիս ծարավ՝ սրաննրան մըտիկ տալուց հոգնել էմ ես. Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շոալլ անհաշիվ, Ամեն ճամփում ըսպասելուց ու փնտրելուց հոգնել էմ ես (ՀԹ): Առաջ էլ սով է եղել, հապա ո՞նց են արել (Բակ.):

Համաժամանակությունը հաճախ արտահայտվում է նաև անցյալ կատարյալ ժամանակով:

*Ծաղկանոցով անցավ աղջիկն առավոտյան,
Ու ծաղիկներն ամեն ելան բնից,
Եվ նայեցին՝ լացած մանուկների նման
Յողի շիթեր կախված աչիկներից (ԳՄ):*

Մելիքների բանտում սարդը ոստայն հյուսեց, ժանգը դեղին սերմեր մաղեց բանտի երկաթ բանալիների վրա (Բակ.):

Անցյալի համաժամանակությունը սակավ դեպքերում արտահայտվում է նաև անցյալ վաղակատար ժամանակով:

Իր հայրական հին տունը խախտվել էր, կտուրը խոնարհվել, գերանները օջախի ծխից սևացած կախվել էին, կտուրի հողն ու քարը թափել ներսում (Բակ.): Արևը բավական բարձրացել էր, ցողի կաթիլները գոլորշիացել էին (Բակ.): Մեջքը կարծես շիկացած շամփուրներով խանչել էին, աչքի տակը հարվածից փաքացել էր (Բակ.):

Անցյալ ժամանակում համաժամանակությունն արտահայտվում է նաև տարբեր ժամանակների զուգակցումով: Նշված հարաբերությունն արտահայտելու համար իրար հետ գործածվում են՝ ա) անցյալ կատարյալը և անցյալ անկատարը, բ) վաղակատար և ներկա ժամանակները, դ) անցյալի անկատարը և անցյալի հարակատարը և այլն:

Անցյալ կատարյալը և անցյալ անկատարը համաժամանակություն արտահայտելիս, բնականաբար, դրսևորում են իրենց իմաստային յուրահատկությունները. անցյալ անկատարն արտահայտում է անցյալում ընթացքի մեջ գտնվող գործողություն, իսկ անցյալ կատարյալը՝ այդ նույն ժամանակում կատարված ավարտված գործողություն:

Աշակերտները լուռ ու ինքնուրույն կապարում էին դասարանական աշխատանքը, միայն

Արամը երկու անգամ **դիմեց** ուսուցչի օգնությանը: Նվազն ավելի **քնդեց**, **դողում էին** կտուրները, կարծես իրար վրա **արշավում էին** բանակներ (**Քակ.**):

Ներկա և վաղակատար ժամանակները ևս որոշակի պայմաններում կարող են արտահայտել միաժամանակություն անցյալ ժամանակում: Այս դեպքում ներկան գործածվում է պատմական ներկայի իմաստով:

Ականջս փվել եմ նրանց գրույցին և աչքերիս տակից նայում եմ նրանց (Իս.):

Անցյալ ժամանակում համաժամանակություն արտահայտելու համար անցյալ անկատարի հետ երբեմն գործածվում է անցյալի հարակատարը:

Աստղերը՝ երկնքի այդ վառ-վառ ծաղիկները, բուրում էին եթերային ոլորտում, և հիասքանչ բույրը ծավալվում էր երկրի վրա, արքայադուստրը զգում էր այդ երկնային բուրմունքը, արքեցած էր նրանով (Իս.): Անի միջնաբերդը գտնվում էր քաղաքի հարավարևմտյան մասում..., նրանից դեպի հյուսիս-արևելք ընկած էր բուն քաղաքը (ՀԺՊ):

Անցյալ ժամանակում համաժամանակության հարաբերությունն արտահայտվում է նաև բաղադրյալ ստորոգյալներով, որոնց հանգույցը դրվում է անցյալ ժամանակով:

Երգդ քեքև էր, - ասում ես, - և կյանքդ միայն դժվարին էր (ԵՉ): Թարմ, քեքև էր մեր ճամփողի հոգին, Ուրախ էինք մենք և մեր սիրտը՝ բաց (ԵՉ): Հողն անուժ էր, փողն անուշ էր, Կյանքը դառն էր են տարի, Հողի մայրը աչքի փուշ էր, Ահը սրտում են տարի (ԳՍ):

Նշված նպատակով անվանական բաղադրյալ ստորոգյալը կարող է զուգակցվել պարզ ստորոգյալների հետ:

Վահե Վահյանը ամռանը այստեղ էր, ամեն ինչ համաչայնեցրել է (ՍԿ): Օհան ծերունու մարմինն անշարժ էր, մեջքը՝ կորացած, ճակատը հպված տաք սալաքարին (ՀԲ): Նոր գյուղի խնդիրը Հյուսիսի ձորի համար երջանիկ աշխարհի առասպելի պես էր, նրանք իրենց հանդերի անուններն էին փալխս, մեկի ջուրը գովում, մյուսի՝ խտրը (Քակ.):

Ապառնի ժամանակահատվածում համաժամանակության հարաբերությունն արտահայտվում է բայի ապառնի ժամանակով:

Շուտով կգա զարունը, բնությունը կարթնանա ձմեռային խոր քնից, մարգագետինների կիսանաչեն, կբացվեն գույնզգույն ծաղիկները: Հազար շեփոր հնչեն թող այս առավոտ, Հազար թմբուկ խփեն թող Այս առավոտ (ԳՍ):

Համաժամանակության հարաբերության հետ երբեմն զուգակցվում է պատճառահետևանքային հարաբերությունը, որը բխում է նախադասությունների արտահայտած իմաստից:

Օդ չկա այստեղ, խեղդվում է հիվանդը (Իս.): Խեղդվում է հիվանդը, օդ չկա այստեղ:

Հասկանալի է, որ օդ չլինելը հիվանդի խեղդվելու պատճառն է:

ՏԱՐԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Տարժամանակություն կոչվում է այն երևույթը, երբ համադասական նախադասության բաղադրիչների արտահայտած գործողությունները կատարվում, եղելությունները տեղի են ունենում տարբեր ժամանակներում:

Տարբեր ժամանակ ասելով՝ տվյալ դեպքում նկատի են առնվում թե՛ երեք ընդհանուր ժամանակները (անցյալ, ներկա, ապառնի) և թե՛ միևնույն ընդհանուր ժամա-

նակի տարբեր մասնավոր ժամանակահատվածները կամ պահերը:

Տարբեր ընդհանուր ժամանակներով արտահայտվող տարժամանակությունը կարող է ունենալ ժամանակների տարբեր հերթականություն՝ անցյալ և ներկա, անցյալ և ապառնի, ներկա և ապառնի, անցյալ, ներկա և ապառնի:

Անապատում, միրաժի մեջ մի բեղվին Շողքն է փեսեւ մի աղջկա գեղեցիկ, Եվ փնտրում է հոգեսլաց, տենդագին Ծով-կարոտով այն աղջկան գեղեցիկ (Իս.): Երեկ ավարտվեցին շենքի վրա տարվող աշխատանքները, և վաղվանից նորաբնակները կմտնեն իրենց բնակարանները: Գնում են ես կռիվ հայրենիքի համար, Կլիներ ես համառ, անահ ու անձնուրաց (ԳՍ):

Հաճախ տարժամանակությունն արտահայտվում է միևնույն ժամանակի տարբեր ժամանակաձևերով՝ նշելով գործողությունների հաջորդումը միևնույն ընդհանուր ժամանակում: Դա վերաբերում է հատկապես անցյալ ժամանակին:

Կանաչը հերվա չոր խոտի տակ ծլել էր արդեն, գետինը ձմռան ամբարած խոնավությունն էր գոլորշիացնում (Բակ.): Բողբն արդեն հավաքվել էին դալիժ, և նախագահողը բաց արեց խորհրդակցությունը:

Տարժամանակությունը կարող է արտահայտվել նաև միևնույն բայական ժամանակաձևով: Այս դեպքում ժամանակային հաջորդության դրսևորման հարցում կարևոր դեր է կատարում բաղադրիչ միավորների շարադասությունը. բաղադրիչ նախադասությունների հաջորդմամբ սովորաբար արտահայտվում է համապատասխան երևույթների, գործողությունների հաջորդականությունը, եթե հատուկ բառական ու իմաստային-տրամաբանական միջոցներով այլ հարաբերություն չի արտահայտվում:

Հմնտ. *Նա պատմեց ինձ այդ դեպքերի մասին և մոտեցավ հեռախոսին:*

Նա մոտեցավ հեռախոսին և պատմեց ինձ այդ դեպքերի մասին:

Այս օրինակներում շարադասությունը պայմանավորում է գործողությունների համապատասխան հաջորդականություն: Մինչդեռ հետևյալ օրինակում բառական միջոցով (միաժամանակ բառով) արտահայտվում է միաժամանակության հարաբերություն:

Նա պատմեց ինձ այդ դեպքի մասին և միաժամանակ մոտեցավ հեռախոսին:

Միևնույն ժամանակաձևով տարժամանակություն արտահայտվում է թե՛ ներկա, թե՛ անցյալ և թե՛ ապառնի ժամանակում:

Հոգնած արևը թեքվում է դեպի Աբուլ լեռը, գազաթները հրդեհվում են և դժգունանում, անրջային կիսալույսերով կամաց-կամաց իջնում է մթնշաղը, նախալըր տուն է դառնում հանդից, վատվում են տների ճրագները, գյուղի աղմուկները լուռ են սակավ-սակավ, հանգչում են բոլոր շշուկները (Իս.): Չորերից ու քարափներից հանկարծ հայտնվում էին զինված խրմբեր, վայրի գազանների պես մոնչալով հարչակվում էին մեզ վրա, ջոկում փանում էին ջահել հարսներին ու աղջիկներին (ՀՔ): Լոնգին Հայրենական մեծ պատերազմի համազարկերը, և սովետական ժողովուրդը կրկին վերադարձավ խաղաղ աշխատանքի (ՀԺՊ):

Տարժամանակությունը երկու կարգի դրսևորում ունի: Մեծ մասամբ այն արտահայտվում է բնական ժամանակի սովորական հաջորդումով. այսինքն՝ անցյալ, ներկա, ապառնի հաջորդականությամբ:

Արևը արդեն բավական ճանապարհ է կտրել և գնում է դեպի այն սառը ամպը (Բակ.):

Չյուն է նստել, և ճյունի վրա նա տեսնում է զազանների հետքեր (Քակ.): Մեռնողը մեռնում է, ապրողը պիտի ապրի (Իս.):

Ժամանակային հաջորդականություն է առկա նաև այն դեպքում, երբ թեև տարբեր ստորոգյալներն արտահայտված են միևնույն քերականական ժամանակով, բայց դրանք ցույց են տալիս իրար հաջորդող գործողություններ: Նման դեպքերում նախադասությունների շարադասությունը համապատասխանում է գործողությունների իրական հաջորդականությանը:

Սպիտակ և բարձրահասակ եզները ահա քաշում են արորը, պարարտ սևահողը ծալվում է իրար վրա, երգում է մշակը պարզ երգեր, հետո աղջիկները հաց են քերում, մշակ ու սերմնացան նստում են սև հողերի վրա (Քակ.): Նանի՛, Սահակն առավոտը կանուխ է գալու, միասին տեղ պիտի գնանք (Քակ.): Շինականը շապաքսով, իշխանական անտառի ծառերը դարչան մարագի գերան, մարագները վատվեցին, բնակչությունը պահվեց քարանձավներում (Քակ.):

Ժամանակային հաջորդականության հարաբերությունը երբեմն զուգակցվում է պատճառահետևանքային իմաստով: Այս դեպքում սովորաբար հաջորդ նախադասությամբ արտահայտվում է նախորդից բխող մի հետևանք, երևույթ:

Սուլթանը խորհրդավոր ծայնով շնջաց նրան, և ներքինապետը աչքերին քսեց սուլթանի ջուպայաի քղանցքը գոհունակ ժպիտով և հեպ-հեպ քաշվեց (Իս.): Մեղմում է կոճակը, չազարը սկսում է պտտվել (ՍԿ): Բաժակը լցվել էր, ու ջուրը քափվում էր սեղանին (Քակ.):

Պատճառահետևանքային հարաբերությունն արտահայտվում է նաև այնպիսի միավորական բարդ համադասական նախադասություններում, որոնք քերականական միաժամանակություն են արտահայտում, և հաջորդ բաղադրիչ նախադասությունը պարզապես նախորդի հետևանքն է:

Տեղի ունեցան կատաղի կռիվներ, թուրքական զորքերը մեծ կորուստներ կրեցին (ՀԺՊ): Հեղեղը փորել է տան հիմքերը, կրապատը կախվել է խորխորատի վրա (Քակ.): Թեյամանի մեջ ջուրը եռաց, կափարիչը ծայն հանեց (Քակ.):

Տարժամանակային հարաբերությունն արտահայտվում է նաև ոչ նշված հաջորդականության ձևով, այլ նախորդմամբ, այսինքն՝ հաջորդ նախադասությունում արտահայտված գործողությունը ոչ թե հաջորդում, այլ նախորդում է նախորդ նախադասության գործողությանը:

Վաղը մենք պիտի մեկնենք հեռավոր ուղևորության, և այդ պատճառով որոշել ենք այսօր վերջացնել նախապատրաստական բոլոր աշխատանքները: Ես մեր ծերերիցն եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից, նրանց պապերն էլ իրենց մեծերից: (ՀԹ): Ապրելու իրավունք ունեն ես, և ո՞վ է քեզ իրավունք տվել սայանել ինձ (Իս.):

Այսպիսի տարժամանակությունը, երբ հաջորդ նախադասության գործողությունը կամ եղելությունը նախորդում է նախորդ նախադասության գործողությանը կամ եղելությանը, կարող է լինել նաև միևնույն ժամանակի սահմաններում:

Երեկ մենք գնացել ենք մասնակցելու խորհրդակցությանը, և, այդ մասին իմանալով, մեր գործընկերները եկել էին մեզ դիմավորելու:

Ինչպես երևում է, այս օրինակի բաղադրիչ նախադասություններով արտահայտված գործողությունները վերաբերում են անցյալ ժամանակին:

ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ

Ներհակական կոչվում է այն հարաբերությունը, որի դեպքում բարդ համադասական նախադասության բաղադրիչները ներհակ, հակադիր են միմյանց:

Այդ ներհակությունը տարբեր չափերի է հասնում՝ սկսած տարբեր առարկաներին տարբեր հատկանիշներ վերագրելուց, վերջացրած ժխտական հարաբերությամբ: **Հմմտ.** *Մենք գնալու ենք իրենց մոտ, իսկ իրենք՝ գալու են մեզ մոտ: Մենք չենք գնալու իրենց մոտ, այլ իրենք են գալու մեզ մոտ: Ոչ թե մենք ենք գնալու իրենց մոտ, այլ իրենք են գալու մեզ մոտ:*

Ներհակական հարաբերությունն արտահայտվում է գերազանցապես ներհակական շաղկապներով, մասամբ և շարահարությամբ: Այս հարաբերության տարբեր տեսակների բոլոր նրբերանգների արտահայտման առավել տարածված միջոցը ներհակական շաղկապներն են՝ **իսկ, բայց, սակայն, այլ, մինչդեռ, այնինչ, ապա (հապա), բայց և այնպես, և սակայն, այնուամենայնիվ (այսուամենայնիվ, այդուամենայնիվ), թե չէ, եթե ոչ, և ոչ թե, այլ ոչ թե, բայց ոչ, եթե... ապա, ոչ թե...այլ և այլն:**

Շաղկապական կապակցությունների համար բնորոշ է հարաբերության որոշակիությունը: Ճիշտ է, որոշ շաղկապների բազմիմաստությունը թույլ է տալիս նրանցով կազմել տարբեր հարաբերություններով բարդ նախադասություններ, բայց և այնպես շաղկապները զգալի չափով որոշակիորեն են դրսևորում քերականական հարաբերությունները: *Աշոտը մարագից քթոցով դարման էր կրում, պառավը վառում էր օջախը և լվանում ընթրիքի ձավարը (Բակ.)* շարահարական կապակցությամբ նախադասությունը կարող է հասկացվել թե՛ ներհակական և թե՛ միավորական իմաստով: Եթե խոսողի նպատակն է՝ հակադրել Աշոտի և պառավի տարբեր գործողություններ կատարելը, այդ դեպքում բերված նախադասությունը կհասկացվի որպես ներհակական կապակցություն. ըստ որում այս դեպքում հնչերանգը յուրահատուկ է. բնորոշվում է ստորոգյալների վերջին վանկի տոնի բարձրացումով: Այդպիսով՝ ներհակական հարաբերության դեպքում հակադրվող ստորոգյալներն արտասանվում են տարբեր հնչերանգային յուրահատկությամբ: Այս դեպքում հարաբերությունը համարժեք է **իսկ** ներհակական շաղկապով արտահայտված տարբերակին: Ինչպես՝ *Աշոտը մարագից քթոցով դարման էր կրում, իսկ պառավը վառում էր օջախը և լվանում ընթրիքի ձավարը:*

Բայց երբ խոսողի նպատակը ոչ թե բաղադրիչ նախադասություններով արտահայտվածի հակադրումն է, այլ դրանց թվարկումը, այդ դեպքում բաղադրիչների ստորոգյալներն արտասանվում են միատեսակ հնչերանգային յուրահատկությամբ, որպես մեկ բաղադրյալի հավասարաբեք, թվարկվող բաղադրիչ միավորներ: Շարահարական այսպիսի կապակցության մեջ թվարկման հարաբերությունն ու համապատասխան հնչերանգը հատկապես ակնհայտ են այն դեպքում, երբ շարահարությամբ կապակցված են երկուսից ավելի բաղադրիչ միավորներ: **Հմմտ.** *Աշոտը մարագից քթոցով դարման էր կրում, պառավը վառում էր օջախը, հարսը բակն էր մաքրում, փոքրիկը խաղում էր ընկերների հետ:*

Ներհակական հարաբերությունն իր հերթին բաժանվում է հետևյալ տեսակների՝ ա) **հանդիպադրական հակադրություն**, բ) **հակասման հակադրություն**, գ) **ժխտման հակադրություն**, դ) **պայմանաներհակական հակադրություն:**

Հանդիպադրական հարաբերություն

Հանդիպադրական կոչվում է այն ներհակական հարաբերությունը, որի դեպքում իրար հանդիպադրվում են տարբեր երևույթներ, իրողություններ:

Հանդիպադրական հակադրությունն արտահայտվում է **խսկ, եթե... ապա** շաղկապներով և շարահարությամբ:

Հանդիպադրությամբ կապված միավորների միջև հակադրությունը քերականական տեսակետից ունենում է տարբեր ընդգրկումներ: Ըստ այդմ՝ այն լինում է **լրիվ և մասնակի**:

Լրիվ կոչվում է այնպիսի հակադրությունը, որը վերաբերում է կապակցվող նախադասություններին՝ ամբողջությամբ վերցրած, և տարածվում նրանց բոլոր անդամների վրա:

Արամն ուսանող է, իսկ Աշոտը՝ աշակերտ: Աշակերտներն աշխատում են դպրոցամերձ հրդանասում, իսկ ուսուցիչները նրանց հետևում են իրենց խորհուրդներով ու դիտողություններով:

Մասնակի կոչվում է այն հակադրությունը, որի դեպքում հակադրվում են ոչ թե ամբողջական նախադասություններ, այլ նրանց որևէ անդամ կամ մի քանի անդամներ:

Սկզբունքորեն հնարավոր են բոլոր անդամների հակադրությունները, միայն թե տարբեր հաճախականությամբ ու ոչ հավասար չափով: Սովորաբար բարդ համադասական նախադասության մեջ հանդիպադրական հակադրության դեպքում ենթակաների հակադրությունն անհրաժեշտ է այն իմաստով, որ նախադասության տարբեր բաղադրիչները սովորաբար նույն ենթական չեն ունենում: Բայց միայն ենթակայի հակադրությամբ բարդ նախադասություն չի կարող կազմվել. դրա հետ միասին անհրաժեշտ է եթե ոչ ստորոգյալի, ապա վերջինիս հետ կապված որևէ անդամի հակադրություն:

Առավել հաճախադեպ են ենթակաների և պարագաների հակադրություններով բարդ համադասական նախադասությունները:

Արամը պարասյում է ընթերցարանում, իսկ Աշոտը՝ փանը: Մենք երեկոյան ճանապարհվեցինք, իսկ նրանք՝ առավոտյան: Հակորը մրցույթով է ընդունվել աշխատանքի, իսկ Գրիգորը՝ առանց մրցույթի: Արամը արագ է կարդում, իսկ Աշոտը՝ դանդաղ: Հասմիկը կարմրել էր շոգից, իսկ Անահիտը՝ ամաչելուց: Արամը գնաց ջրի, իսկ Աշոտը՝ հացի:

Հանդիպադրական հակադրության դեպքում ենթակա ունեցող բաղադրիչ նախադասությունը կարող է հակադրվել անենթակա նախադասությանը:

Լուսացել է, իսկ դու դեռ պատկած ես անկողնում: Մթնել է, իսկ դու չես մտածում տում գնալու մասին: Պետք է սկսել զարնանացանը, իսկ դուք նախապատրաստված չեք:

Միևնույն ենթական ունեցող նախադասության մեջ հնարավոր է արտահայտել հանդիպադրական հակադրություն, բայց այդ դեպքում նախադասությունը կլինի միավորյալ:

Հակորը ցերեկն աշխատում է, իսկ երեկոյան՝ սովորում: Նա լավ բանաստեղծություններ է գրում, իսկ արտասանել չի սիրում: Նրանք մի քիչ առաջ զվարճանում էին, իսկ հիմա լռեցին և զարմացած սկսեցին նայել անսպասելի այցելուներին (ՍԽ): Արշակ քազավորը հայի հողով անցնելիս խրոխտանում էր, հայիոյում Շապուհին, իսկ Պարսկաստանի հողի վրա՝ խեղճանում (ԳԳ):

Հակադրության մեջ կարող են մտնել նաև խնդիր լրացումները, ըստ որում սրանց հետ միասին կարող են հակադրության մեջ մտնել նաև ստորոգյալները:

Արամը շարադրություն է գրում, իսկ Աշոտը՝ քելադրություն: Գավիթ որդիս առաջնորդում է աղվանցի զնդերին, իսկ Գրիգորը՝ զարդմանաջիններին (Մուր): Ամենաուժեղ տղամարդիկ մեծ քլունգներով սկսեցին փորել կիրճի քարոտ լանջը, իսկ մյուսները բահերով սկսեցին մաքրել ապագա ճանապարհի առաջին մեպրը (Սև):

Երբեմն իրար հակադրվում են ոչ նույն շարահյուսական անդամները, այլ տարբեր անդամներ, և դա արտահայտվում է նախադասության կառուցվածքային յուրահատկությամբ: Այսպիսի հակադրությունը, այսինքն՝ երբ իրար հակադրվում են բերականական տարբեր միավորներ, կառուցվածքներ, կարելի է կոչել **բերականական անհամասեռ հակադրություն:**

Անհամասեռ հակադրությունը կարող է արտահայտվել տարբեր բերականական կառուցվածքներով: Թվենք մի քանիսը.

ա) Ենթակա+ստորոգյալ+պարագա ↔ ենթակա+ստորոգյալ:

Մենք եկանք ձեզ մոտ, իսկ դուք գնում եք:

բ) Ենթակա+ստորոգյալ+խնդիր ↔ ենթակա+ստորոգյալ+պարագա:

Մենք օգնում ենք ձեզ, իսկ դուք նստել եք սյարապ:

գ) Ենթակա+ստորոգյալ+պարագա ↔ ենթակա+ստորոգյալ+խնդիր+պարագա:

Մենք գալիս ենք տուն, իսկ դուք դուռը պինդ փակում եք:

Ավելի մանրամասն քննենք այս և այլ անհամասեռ հակադրություններ:

Հանդիպադրական հարաբերությամբ կապված նախադասությունների մեջ գործողություն կատարողը կամ եղողը (բերականական ենթակա) կարող է լինել նույն անձը (կամ առարկան), որի անունը կարող է տարբեր բառերով նշվել երկու բաղադրիչներում կամ չգործածվել առաջինում: Այս դեպքում հակադրությունը բնականաբար ստեղծվում է ոչ թե ենթակաների միջև, այլ երկրորդ նախադասության ենթակայի ու նրա որևէ գործողության (հատկանիշի, դրության) և առաջին նախադասության մեջ արտահայտված նրա մի այլ գործողության, նրա հետ կապված առարկայի մի այլ գործողության (հատկանիշի, դրության) միջև:

Անահիտը խնդրեց ընկերներին հյուրասենյակում ուրախանալ, իսկ ինքը գնաց խոհանոց՝ սուրճ պատրաստելու:

Ինքը դերանունով ցույց է տրվում Անահիտը, ուրեմն առաջին ու երկրորդ նախադասությունների ենթակաների միջև հակադրություն չկա: Հակադրությունը մի կողմից՝ երկրորդ նախադասության ենթակայի (**ինքը**) ու նրա կատարած գործողության (խոհանոցում սուրճ պատրաստել) և մյուս կողմից՝ առաջին նախադասության հանգման խնդրի (**ընկերներին**) ու նրանց գործողության (հյուրասենյակում ուրախանալու) միջև է: **Հմմտ.** *Ընկերները հյուրասենյակում ուրախանում են, իսկ ինքը խոհանոցում սուրճ է պատրաստում:*

Այսպիսի կառուցվածքներում հակադրության երկրորդ եզրի ենթական արտահայտվում է **ինքը** դերանունով, որը դրվում է **իսկ** շաղկապից անմիջապես հետո: Այս նույն կիրառությամբ երբեմն գործածվում են ներհակական **բայց, սակայն, մինչդեռ, շաղկապները:**

Բայց ահա գալիս է ամառը, և նա թագուհուն ուղարկում է Մյունյաց ամառանոցները, իսկ ինքը գնում է Ուտիք, շաբաթներով նստում Սևորդյաց լեռներում Յլիկ Ամրամի վրաններ:

րի տակ, Ասարամ իշխանուհու զրոսավայրում (**Մուր.**): Բավական կոկիկ կահավորված և զարդարված տաք առանձնասենյակում սյանի Չղանկիչին բազմեցրեց մութաքաներով և ասեղնագործ թավշյա բարձիկներով զարդարված փոքրիկ բազմոցի վրա, **իսկ ինքը դարձյալ մի աթոռ առավ, մոտ բերեց, բայց դարձյալ չնստեց (ՆԳ)**: Բրուտը երկու բաժակ դրեց հյուրերի առաջ, **իսկ ինքը վերցրեց փոքրիկ կավե գավաթ (ՍԽ)**:

Վերջապես՝ հնարավոր են ավելի մեծ ծավալի անհամասեռ հակադրություններ, որոնցում հակադրության մեկ եզրի սահմանափակ անդամներին հակադրվում են մյուս եզրի բազմաթիվ ու տարաբնույթ անդամներ կամ նույնիսկ երկու և ավելի բաղադրիչ նախադասությունների կապակցություն:

Նա սովոր է միայնակության, իսկ ընկերոջ ներկայությունը իրենց տանը ճնշող դրության մեջ էր դրել նրան (ՆԳ): Կաշխատեմ գալ երեկոյան, իսկ եթե երեկոյան չկարողացա գալ, կգամ վաղն անպատճառ (ՆԳ):

Այսպիսի քերականորեն անհամասեռ ու անհավասար հակադրությունը հնարավոր է այն պատճառով, որ տրամաբանական երկու հակադիր երևույթները արտահայտվում են բառաքերականական անհավասար միջոցներով: Երբեմն միևնույն բարդ համադասական նախադասության մեջ գործածվում են երկու կամ ավելի հանդիպարական հարաբերությամբ բաղադրիչներ:

Ուրեմն հայրս պիտի սլառկի, իսկ նա ազատ ման գա, ուրեմն մենք՝ մայրս ու երեխաները, տխուր պիտի նստենք հորս անկողնու մոտ, իսկ նրա լավ հագնված երեխաները օղեր ու զնդակներ խաղան (ՍԶ):

Չուզադրական կազմությամբ **եթե... ապա** համադասական շաղկապի իմաստը հիմնականում նման է **իսկ** շաղկապի հակադրական իմաստին: Տարբերությունը գործածության ոլորտի սահմանափակության մեջ է: **Եթե... ապա** շաղկապը հիմնականում գործածվում է գիտական, հրապարակախոսական ոճերի մեջ:

Եթե վերոհիշյալ երկերում նա հերոսների անձնական կյանքի, հակումների բնութագրման համար օգտագործում է նաև նրանց արտաքին նկարագիրը, ապա «Քաղաքավարության վնասների» հերոսների սլատկերման մեջ գրեթե երբեք չի դիմում նրանց արտաքին բնութագրման (ՀՆԳՊ, 3): **Եթե** բուրժուական և մանրբուրժուական կուտակությունները ցարիզմի տապալումից հետո հեղափոխությունը համարում էին ավարտված և գործակցում էին ժամանակավոր կառավարության հետ, **ապա** արմատական հեղափոխական կուտակությունը դրեց հեղափոխությունը շարունակելու և վերջնական հաղթանակի հասնելու հարցը (ՀԺՊ):

Եթե... ապա շաղկապով միացած բաղադրիչների **կապը** համեմատաբար սերտ է, որ բացատրվում է շաղկապի զուգադրական բնույթով, որի ամեն մի բաղադրիչը գործածվում է հանդիպարվող միավորներից յուրաքանչյուրի սկզբում:

Հակասման հարաբերություն

Հակասման կոչվում է այն ներհակական հարաբերությունը, որի դեպքում կապակցվող միավորների արտահայտած երևույթները միմյանց նկատմամբ հակասական են:

Այս դեպքում կապակցության երկրորդ մասում արտահայտվող երևույթը տրամաբանորեն չի բխում առաջինից, այլ հակասում է նրան:

Հակասման հարաբերությունն արտահայտվում է համանուն շաղկապներով՝

բայց, սակայն, մինչդեռ, բայց և, և սակայն, սակայն և, բայց և այնպես, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այդուամենայնիվ, այնուհանդերձ, այսուհանդերձ և այլն: Այս շաղկապներից յուրաքանչյուրը բերում է իմաստային ու կիրառական յուրահատկություն: **Բայց, սակայն** շաղկապներով կապակցվող նախադասությունների շարահյուսական տեսակետից հավասարաթեք են, բայց նրանց միջև կա որոշ տարբերություն. **բայց-ը** ավելի հաճախակի է գործածվում, քան **սակայն-ը**: Վերջինիս հակասման իմաստն ավելի շեշտված է: **Այնուամենայնիվ, այսուամենայնիվ, բայց և այնպես** շաղկապների մեջ ուժեղ է զիջականության իմաստը (իհարկե, հակասման հարաբերության հետ միասին):

Բայց և, սակայն և, և սակայն բաղադրյալները յուրահատուկ կերպով համատեղում են իրենց բաղադրիչների իմաստը: Չնայած սրանց միջև կան իմաստային նուրբ տարբերություններ, սակայն հակասման հարաբերությունն արտահայտելն ընդհանուր և բնորոշ է այս բոլոր շաղկապներին:

Հակասման հարաբերությունն ունի տարբեր դրսևորումներ, իսկ հաճախ էլ զուգակցվում է իմաստային այլ երանգներով:

Հակասման հարաբերության առավել բնորոշ դրսևորման դեպքում հակասումն արտահայտվում է բաղադրիչ նախադասությունների բովանդակությունների միջև, երբ առաջին նախադասության բովանդակությունից բխող մի այլ երևույթի փոխարեն երկրորդ նախադասության մեջ արտահայտվում է առաջինին անհամապատասխան, նրանից չբխող երևույթ:

Տիկին Էրիզը յոթ տարով մեծ էր Արմենիերից, սակայն նա խնամքով էր պահել իրեն և տարիքից ավելի երիտասարդ էր (Բակ): Նա սիրում էր իր զավակներին, սակայն Ազնիվից բաժանվելուց հետո հազվադեպ էր հանդիպում նրանց(ՍԽ): Անցյալ տարի երաշտային է եղել, սակայն մենք կարողացանք ստանալ հարուստ բերք: Շատ ժամանակ է անցել մեր բաժանումից, բայց ես նրան չեմ մոռանում:

Հակասման հարաբերության այս իմաստին սովորաբար զուգակցվում է զիջականության իմաստային երանգը: Դա է պատճառը, որ նշված կարգի նախադասությունների իմաստը սովորաբար կարելի է լինում արտահայտել նաև զիջական շաղկապներով ձևավորված կառուցվածքով. ինչպես՝ **Թեև անցյալ տարի երաշտային է եղել, (սակայն) մենք կարողացանք ստանալ հարուստ բերք: Չնայած որ շատ ժամանակ է անցել, (բայց) ես նրան չեմ մոռացել:**

Հակասման հարաբերությունը հաճախ արտահայտվում է գործողության կատարման ցանկության և վերջինիս հակադիր որևէ երևույթի միջև, որը կարող է խանգարել կամ չխանգարել առաջին նախադասությամբ արտահայտված գործողության կատարումը:

Մենք ուզում ենք ամեն ինչ ժամանակին հասցնել, բայց աննպաստ պայմանները կարող են խանգարել մեզ: Չիատերը փորձում էր գնալ ծիռ ետևից, սակայն քղափում էին նրա վրա (Բակ.): Մենեկապետը ներս էր ուզում մտնել վարագույրի ճեղքից, սակայն նրան կանխեց և առաջը կտրելով արագ ներս մտավ Ատոմը (ԳԳ):

Այսպիսի հակասումը երբեմն կարող է հասնել ժխտման, այսինքն՝ առաջին նախադասության մեջ արտահայտված գործողության կատարումը կարող է բացառվել,

ժխտվել երկրորդ նախադասությամբ արտահայտված երևույթով: Այդ ժխտումը կարող է դրսևորվել նախադասության ժխտական կառուցվածքով կամ այնպիսի հաստատական նախադասությամբ, որն ունի ժխտման նշանակություն:

Կանայք կապոցներ են ուզում տալ Վառոյին, բայց պահակները թույլ չէին տալիս մոտենալ, բան հանձնել (ՄՁ): Նա սկսեց Գարեգինի ռազմական քաջագործությունների մասին նոր գովասանքներ շռայլել, բայց Գարեգինը զգուշությամբ ընդհատեց (ՄԽ): Վաղուց էր նա ցանկանում գնալ Քարակեթտ, բայց գործերն այնպես էին դասավորվել, որ ստիպված հետաձգել էր (ՄԽ):

Հակասման հարաբերությունը շատ է շեշտվում, երբ բարդ նախադասության առաջին բաղադրիչն արտահայտում է որևէ գործողություն, երևույթ, իսկ երկրորդը՝ դրա ժխտումը:

Գյուղում շատ էին խոսել Որոտանի կիրճում ճանապարհ կառուցելու մասին, բայց մինչև հիմա էլ չէին սկսել կառուցել (ՄԽ): Նա ցանկացավ անխոով մնալ, բայց չհաջողվեց (ՄԽ):

Հակասման հարաբերությունը հաճախ կրում է սահմանափակման երանգ. առաջին նախադասությամբ արտահայտված ընդհանուր միտքը սահմանափակվում է հաջորդ նախադասությամբ արտահայտված մի մասնավոր երևույթով, որը որոշ վերապահում է մտցնում նախորդ նախադասության արտահայտած երևույթի, իրողության մեջ:

Քաղաքում ամեն ինչ գրեթե գրավում է, հրապուրում, բայց այս ջոկատները շատ անախորժ են ինձ (ՄՁ): Երբեմն էլ հավատում էր նրա ասածներին, բայց և այնպես սրտի խորքում ցանկանում էր, որ սուտ լինեին Մարիամի ասածները (ՄԽ): Ատոմը լավ գիտեր զինվորային բարոյական անսահման իրավունքը, բայց և այնպես նրան ուղղակի կաշկանդեց, խեղդեց ոչ այնքան զայրույթը, որքան ապշեցումը, զարմանքը այս անլուր հանդգնությունից (ԳԳ):

Հակասման հարաբերությունը կարող է արտահայտվել միևնույն երևույթի, առարկայի կամ տարբեր երևույթների, առարկաների՝ տարբեր ժամանակներում ունեցած անհամապատասխան, հակասական վիճակների միջև:

Երկինքն այսօր պարզ է, բայց վաղը կարող է ծածկվել ամպերով և նորից ձյուն տեղալ (ՄԽ): Քարայծերի հոտը հիմա մակաղում է պնդոցներում, բայց ուր որ է՝ դուրս կգան ջուր խմելու (ՄԽ): Տարիներ առաջ ես էնտեղ հնձանի փլատակներ եմ տեսել, առվի հետքն էլ կա ժայռերի վրա, բայց հիմա գետը խորացել է, դժվար է ջուր հասցնել (ՄԽ):

Ինչպես երևում է, հակադրվող ժամանակների տարբերությունն արտահայտվում է թե՛ բայի ժամանակային ձևերով և թե՛ ժամանակ ցույց տվող բառերով. **հիմա, առաջ, այսօր, վաղը** և այլն:

Բայց և, սակայն և, և սակայն բաղադրյալ շաղկապներն իրենց ներհակական ու միավորական բաղադրիչներով յուրահատուկ երանգ են տալիս արտահայտված հարաբերությանը: Սրանց կապակցած նախադասությունները կարող են միավորվել թե՛ և, թե՛ բայց, սակայն շաղկապներով. նշանակում է՝ նրանց հարաբերության մեջ կա թե՛ միավորական և թե՛ հակասման ներհակության իմաստ:

Բանտապետի օգնականը գնաց, բայց և իսկույն ետ դարձավ (ԳԳ):

Կարելի էր ասել նաև՝ ա) Բանտապետի օգնականը գնաց և իսկույն ետ դարձավ,

բ) Բանտապետի օգնականը գնաց, բայց իսկույն ետ դարձավ:

Առաջին նախադասության բաղադրիչները թվարկվում են պարզապես որպես

քերականորեն համագոր, իրար հաջորդող գործողություններ արտահայտող միավորներ (միավորական հարաբերություն): Երկրորդ նախադասության մեջ շեշտվում է գնալու ու ետ գալու գործողությունների հակադրությունը (հակասման ներհակություն): **Եվ, բայց** շաղկապների համատեղ գործածությամբ նշված երկու իմաստները համատեղվում են:

Ջոհրակը, անկախ իր կամքից, դարձյալ վիրավորվեց այս կարգադրող ձևից, բայց և զրուպեց իրեն (ԳԳ): Ծանոթ է եղել յուր վշտերին և սակայն նրանց մասին ոչինչ չի հայտնել նրան (Մուր.): Ընկած քաջերին հաջորդում էին քաջագույնները, և սակայն ավիսագաց թագավորը դեռ կանգուն էր, ինչպես քարածայր (Մուր.):

Ժխտման հարաբերություն

Ժխտման կոչվում է այն ներհակական հարաբերությունը, որի դեպքում համադասական նախադասության բաղադրիչներից մեկով կամ մեկ մասով ժխտում է արտահայտվում, իսկ մյուսով կամ մյուս մասով հաստատվում է ժխտվածի հակառակ երևույթը:

Այն ժամանակ ոչ թե Բագենյանի պես անխիղճ կերպով կվարվեր այնպիսի մի հրաշալի կնոջ հետ, այլ կաստվածացներ նրան, մինչև վերջին շունչը կսաշտեր նրան, ուրախությամբ կմեռներ նրա համար (ՆԳ): Վասակը արագ...այս անգամ չձևացրեց, այլ խմեց ողջ գինին (ԳԳ):

Ժխտման հարաբերությունը գերազանցապես մասնական ժխտում է արտահայտում, և այն ավելի հաճախ տարածվում է ստորոգյալի ու նրա լրացումների վրա: Այսպիսի հարաբերությամբ կապված նախադասություններում ենթական մեծ մասամբ ընդհանուր է լինում:

Հիրանի աչքերն էլ չէին ճպճայում, այլ բացվում էին, անթարթ սևեռում նորեկի սեղմած բռունցքին (Բակ.): Գյուղի շատ հարսերի մեան նա ծամ չէր պահում, այլ կտրում էր ու գեղեցիկ խոսյուպներ դարձնում (ՍԽ):

Ժխտման ներհակությունը կարող է վերաբերել միայն ստորոգյալներին:

Բարդիներն ասես ոչ թե խշշում, այլ հատաչում էին (ՍԽ): Ծառուկենց ծերուկը Բարսեղի խոսքին չսպասասխանեց, այլ միայն բազմիմաստ ժպտաց (ԱՍ): Քշողը հայրս չէ, այլ մեր հարևանի տղա Ալեքը (ԱԶ):

Ժխտման ներհակությունը կարող է վերաբերել ստորոգյալին իր լրացումով կամ լրացումներով հանդերձ:

Ջուրը չի ընկել, այլ ինքն է իրեն նետել հեղեղի բերանը (ՍԽ): Վահանը այս անգամ չխտուրեց ճամփան դեպի Լազարովների սյարխապները, այլ սանձը քաշելով՝ սովորական կարճատուտ շավղով մտավ գյուղ (ԱՍ): Ոչ թե շատ ես աշխատել, այլ սյարգապես դու շուտ ես հոգնում:

Երբեմն ժխտումը կարող է վերաբերել ստորոգյալի լրացումներին:

*Մի՛ լինի ուրագի պես՝
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ,
Այլ եղի՛ր սղոցի պես՝
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:*

Հ. Թումանյան

Ես ինչ համար չեմ մտածում, այլ քեզ համար, քո ապագայի համար (ՍԽ):

Ժխտման ներհակությունը կարող է լինել լիակատար և վերաբերել ամբողջ նախադասությանը:

Այլևս արահետը չկա, այլ կանաչ բլուր է՝ գագաթին մի քար (**Բակ**): Ոչ թե երաժշտությունն է վատ, այլ ուղղակի դու չես հասկանում այն: Ոչ թե ժամանակը պարբերաբար մաշել, տրորել էր այդ գեղեցիկ ամբողջը, այլ նա միանգամից սոսկալի կործանման գոհ էր դարձել (**Բ**):

Ժխտման ներհակության դեպքում կարող է ժխտվել բարդ համադասական նախադասության առաջին բաղադրիչը: Այդ ժխտումն արտահայտվում է առավելապես երկու ձևով՝ **ա) ոչ թե... այլ** զուգադրական շաղկապի առաջին բաղադրիչով (**ոչ թե**) և **բ)** ստորոգյալի ժխտական բնույթով:

ա) Ոչ թե նա է աշխատանք խնդրել, այլ մենք ենք նրան հրավիրել: Նա **ոչ թե** լսել է ինչ-որ տեղից, այլ անձամբ կարդացել է և գիտի ամբողջ եղելությունը:

բ) Երազ չէր դա, այլ դաժան, այլանդակված իրականություն (ՀՔ**): Ոչինչ չկարողացա արտասանել, այլ միայն որքան ուժ ունեի, ամուր բռնեցի ձեռքից և գրեթե քարշ տվի հետևիցս (**ՆԳ**):**

Ոչ թե...այլ զուգադրական շաղկապի շարադասությունը պայմանավորված է ժխտման ծավալով և ժխտվող անդամի կամ անդամների շարադասությամբ: **Ոչ թե** բաղադրիչը դրվում է առաջին լրիվ նախադասության սկզբում այն դեպքում, երբ ժխտումը լիակատար է, այսինքն՝ վերաբերում է ամբողջ նախադասությանը: Իսկ **այլ** բաղադրիչը միշտ դրվում է երկրորդ նախադասության սկզբում:

Ոչ թե լույսն աղոտ է, այլ դու վատ ես տեսնում: **Ոչ թե** գիրքն է անհետաքրքրական, **այլ** պարզապես դու տրամադրված չես կարդում:

Եթե ժխտումը վերաբերում է ստորոգյալին (և նրա լրացումներին), ապա սովորական շարադասության դեպքում **ոչ թե** բաղադրիչը դրվում է ստորոգյալից կամ նրա խմբից առաջ, այսինքն՝ ենթակայից (եթե այն կա, զեղչված չէ) և չժխտվող լրացումից հետո:

Դեռ ոչ թե անտեղի բծախնդրություն է, այլ անհրաժեշտ բարեխղճություն ու պահանջկոտություն: Նա դժվար գործը **ոչ թե** ուրիշներին է հանձնարարում, **այլ** ինքն է կատարում:

Ինչպես երևում է, **ոչ թե**-ից առաջ դրված են չժխտվող ընդհանուր անդամներ:

Ծանոթություն: Եթե ժխտումը վերաբերում է որևէ երկրորդական անդամի կամ ենթակային, ապա սովորական շարադասության դեպքում դրանք դրվում են նախադասության վերջում, և **ոչ թե** -ն նախորդում է դրանց:

Նրանք հանդիպել են ոչ թե մայիսին, այլ հունիսին: Եկել է **ոչ թե** Արամը, **այլ** Աշոտը:

Այսպիսի նախադասությունները բազմակի անդամներով նախադասություններ են և ոչ թե բարդ: **Հմմտ.** **Նրանք հանդիպել են մայիսին և հունիսին:** Եկել են Արամն ու Աշոտը: Այսպիսի նախադասության անդամների շրջուն շարադասության դեպքում **ոչ թե**-ն կարող է դրվել առաջին նախադասության սկզբում: Այս դեպքում օժանդակ բայը (կամ հանգույցը) դրվում է ժխտվող անդամից անմիջապես հետո, որն իր վրա է կրում տրամաբանական շեշտը: **Հմմտ.** **Ոչ թե մայիսին են նրանք հանդիպել, այլ հունիսին:** **Ոչ թե** Արամն է եկել, **այլ** Աշոտը:

Բարդ համադասական նախադասության առաջին բաղադրիչի ժխտումը կարող է արտահայտվել նաև **ոչ** բառի գործածումով ժխտվող անդամի մոտ:

Նա այժմ ոչ միշտ (ոչ ամեն օր) է այցելում մեզ, այլ գալիս է միայն խիստ անհրաժեշտության դեպքում:

Այսպիսի նախադասությունների առաջին բաղադրիչում ժխտումը կատարվում է

երբեմն **ոչ...ոչ** կրկնադիր շաղկապի միջոցով, եթե, իհարկե, առկա են ժխտվող բազմակի անդամներ:

Բայց Առանը ոչ այս արավ, ոչ այն, այլ գլուխը քաշ գցեց և սկսեց ցուցամատը գորգի նախշերով սահեցնել (ՂԱ): Նա ոչ տեսել է, ոչ լսել, այլ ամեն ինչ ինքն է հորինում և պատմում:

Ժխտման հարաբերությունը կարող է արտահայտվել նաև բարդ համադասական նախադասության երկրորդ մասի վերաբերմամբ: Այդպիսի հարաբերությունն արտահայտվում է **ոչ թե, և ոչ թե, այլ ոչ թե** շաղկապներով, որոնք դրվում են երկրորդ նախադասության սկզբում:

Այդ հերոսներն արժանի են, որ թագավորը նրանց ընդառաջե, և ոչ թե իրենք զան նրա կոչին (Մուր.): Դու պետք է նրանց օգնեիր, այլ ոչ թե սպասեիր, որ նրանք այդ խնդրեին: Դու պիտի գնայիր նրա մոտ, ոչ թե սպասեիր նրա հատուկ հրավերին:

Ինչպես երևում է, ժխտման ներհակությամբ բարդ համադասական նախադասությունների յուրահատկությունն այն է, որ նրանցում **պարտադիր** կերպով առկա է հակադրվող եզրերից մեկի ժխտում և մյուսի հաստատում: Իհարկե, հաստատում և ժխտում կարող են արտահայտվել համապատասխան այլ նախադասություններում ևս (**հմմտ. Եղանակը դեռ չի տաքացել, շարունակում են տեղալ անձրևներ, զարմանային աշխատանքները չեն սկսել: Արամը չի սովորում, Աշոտը ընդունվել է և սովորում է հաջող):** Սակայն դրանցում այն պարտադիր չէ, իսկ քննարկվող նախադասություններում այն կառուցվածքային պարտադիր հատկանիշ է:

Պայմանաներհակական հարաբերություն

Պայմանաներհակական կոչվում է այն հարաբերությունը, որի դեպքում ներհակությունը զուգակցվում է որոշ պայմանականությամբ, կախված է որոշ պայմանից:

Այդ պայմանը արտահայտվում է ոչ թե նախադասությամբ, այլ շաղկապով. բայց շաղկապի իմաստային վերաբերությունից որոշակիորեն հասկացվում է պայմանը: Որպես երկրորդ նախադասության արտահայտած գործողության կատարման պայման՝ ենթադրվում է առաջին նախադասությամբ արտահայտված գործողության չկատարումը: Այսպես՝ *Բաց արա, թե չէ նժույգովս դուռը կկտրեն (ՂԴ)* նախադասության մեջ որպես դուռը կտրելու պայման կամ պատճառ հասկացվում է առաջին նախադասությամբ արտահայտված գործողության չկատարումը: **Հմմտ. Բաց արա, եթե չքացես, նժույգովս դուռը կկտրեն:**

Պայմանաներհակական հարաբերությունն արտահայտվում է համապատասխան շաղկապներով ու շաղկապական կապակցություններով՝ **թե չէ, եթե ոչ, ապա թե ոչ, այլապես, հակառակ դեպքում: Չէ -ով (թե չէ, ապա թե չէ)** բաղադրված ձևերը **ոչ-ով** բաղադրվածների (**թե ոչ, եթե ոչ, ապա թե ոչ**) համեմատությամբ ոճական կիրառության տարբերություն ունեն, հատուկ են խոսակցական ոճին, իսկ **ոչ-ով** ձևերը շեշտված գրական երանգ ունեն: **Ապա-ով** սկսվող շաղկապները ավելի ուժեղ են շեշտում հակադրության իմաստը: **Այլապես-ն** ունի նույն **թե չէ-ի** իմաստը, միայն ավելի գրական ոճում է գործածվում: Այնպես որ, մասնակի ոճական, կիրառական տարբերություններով հանդերձ, վերոհիշյալ բոլոր շաղկապներն արտահայտում են

պայմանաներհակակա հարաբերություն:

Պայմանաներհակակա հարաբերությունն ունենում է տարբեր նրբերանգներ, որ արտահայտվում է տարբեր նախադասություններում դրսևորված գործողությունների հակադրության բնույթով ու փոխհարաբերությամբ: Հիմնական հակադրությունները հետևյալն են.

1. Պայմանաներհակակա հարաբերությամբ կապված նախադասություններից առաջինում արտահայտվում է պայման, որի չկատարման դեպքում սպասվում է մեկ այլ՝ անցանկալի գործողության կատարում:

Հեռացիր, թե չէ արյունդ կթափեմ, դավաճան (ԳԳ): Ուղիղն ասա, ապա թե ոչ իսկույն քեզ կփռնդեմ (ՆԳ): Մարգարանը հրամայեց շտապել, ապա թե ոչ ասաց՝ պարսից գործը շարժվում է Հայաստան (ԳԳ):

2. Պայմանաներհակակա հարաբերությամբ կապված նախադասություններից առաջինում արտահայտվում է պայման, որի չկատարման, չլինելու դեպքում սպասվում է տվյալ գործողության չկատարում, եղելության բացառում: Այս դեպքում երկրորդ նախադասությունն ունենում է ժխտական կառուցվածք:

Դու պետք է գաս, այլապես մենք չենք սկսի այդ աշխատանքը: Անհրաժեշտ է նախապատրաստվես, այլապես ոչինչ անել չենք կարող:

ՏՐՈՒՀԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Տրոհական կոչվում է այն հարաբերությունը, որի դեպքում համադաս նախադասությունների արտահայտած երևույթներից մեկն է իրական կամ հնարավոր դիտվում:

Կամ պետք է ապրել այնպես, ինչպես ուրիշներն են ապրում, կամ պետք է չապրել ամենևին:

Խոսողը կամ... կամ շաղկապով կապակցված այս երկու բաղադրիչներից մեկն է համարում հնարավոր, իսկ մյուսը բացառում է:

Տրոհական հարաբերությունը գերազանցապես արտահայտվում է կամ շաղկապով, նրանով բաղադրված կամ թե, կամ էլ, և կամ, կամ թե չէ բաղադրյալ շաղկապներով, ինչպես և թե շաղկապով (հարցական կիրառությամբ):

Տրոհական հարաբերությունը երկու հիմնական դրսևորում ունի՝ ընդհանուր կամ բացարձակ տրոհում և մասնակի-իրադրական տրոհում:

Ընդհանուր կամ բացարձակ կոչվում է այն տրոհական հարաբերությունը, որ բնութագրվում է կապակցվող միավորներից մեկի լրիվ բացառումով և մյուսի բովանդակության իրական լինելու հնարավորության նշումով:

Կբերես հոների դեսպանին նրա մոտ կամ նրա հետ կգնաս հոների թագավորի մոտ (ԳԳ): Պետք էր մեծ գոհերի գնով գրավել դիմացի բարձունքը և թշնամուն ետ շարտել, կամ պետք էր մնալ պաշտպանական դիրքերում և սպասել նոր ուժերի:

Այս նույն հարաբերությունն ավելի շեշտված կերպով արտահայտվում է կամ շաղկապի կրկնության միջոցով յուրաքանչյուր նախադասության սկզբում: Եթե բաղադրիչ նախադասություններն ունեն ընդհանուր ենթակա և այլ անդամներ, ապա կամ շաղկապի առաջին գործածությունը հաջորդում է ընդհանուր ենթակային և մյուս ընդհանուր անդամին (անդամներին):

Կամ մենք պիտի այցելենք ձեզ, կամ դուք պիտի նախապես գաք մեզ մոտ:

Վաղ թե ուշ նրանք պետք է կամ օտարության գնալին, կամ ետ վերադառնալին հայրենի տունը (Քակ.): Հիվանդը կամ լավանում է, կամ մեռնում (Քակ.): Ես կամ դասի չէի գնում, կամ դասերից անմիջապես հետո վազում էի տուն՝ իմանալու տատիկի վիճակը (ՀԹ):

Տրոհվող միավորների քանակով պայմանավորված՝ կամ շաղկապը կարող է կրկնվել երկուսից ավելի անգամ:

Կամ ուշ էր եկել, կամ կարողալուց կմկմացել էր և կամ պարզ չէր ասել (Քակ.):

Կամ մարդ է մեռել, կամ սոված են, կամ տանտիրոջ ձեռքը նեղ տեղն է (Քակ.):

Կամ շաղկապի կրկնության դեպքում վերջին կամ-ից առաջ կարող է գործածվել սահմանափակող և շաղկապը՝ կազմելով և կամ շաղկապական կապակցությունը:

Գորգերի վրա նստած մարդիկ կամ քաշում էին դայանը և կամ դանդաղ գրուցում՝ թեյի բաժակները դատարկելով նույն դանդաղկոտությամբ (Քակ.):

Այսպիսի կապակցություններում հարաբերությունը զգալի չափով մոտենում է պայմանաներհակական հարաբերությանը: Ճիշտ է, տարբեր նախադասություններում արտահայտված իրողություններից մեկը բացասում է մյուսը, մի բան, որ հատուկ է տրոհական կապակցությանը, բայց միաժամանակ առաջին նախադասությամբ արտահայտված գործողության չկատարումը պայման է դառնում երկրորդ նախադասությամբ արտահայտված գործողության կատարմանը:

Կամ պետք է գյուղն անհապաղ տեղափոխել Արարատյան դաշտ, կամ ես այստեղ երկար չեմ մնա (ՍԽ): Կամ հող տվեք, հաց տվեք, կամ մենք մորեխի պես կոչնչացնենք ձեր քաղաքները (Քակ.):

Կրկնվող կամ շաղկապներից երկրորդի մոտ էլ ավելացնելով՝ ավելի է շեշտվում տրոհության հարաբերության իմաստը: Այսպես՝ *Կամ գելի բերան են ընկել, կամ էլ հուտից կտրվել են, ընկել Հասոյի ոչխարների մեջ (ՍԽ):* Էլ բաղադրիչը միաժամանակ խոսքին տալիս է ժողովրդախոսակցական ոճի որոշ երանգ:

Մասնակի-իրադրական կոչվում է այն տրոհական հարաբերությունը, երբ տրոհումը առկա է ոչ թե բացարձակ առումով, այլ միայն տվյալ համադաս նախադասությունում ներկայացվող այս կամ այն երևույթի, գործողության տեսակետից:

Այսպես՝ *Ամեն օր նոր ու նոր լուրեր էին հասնում Արաքսի ափի գյուղը, կամ հենց այդ գյուղում էին լուրեր հորինվում Առաքելի մասին (ՀՔ)* նախադասության երկու բաղադրիչների տրոհվելը բացարձակ չէ, այլ իրադրական: Կամ-ով շաղկապվող երևույթներն էլ իրական են ընդհանրապես: Բայց այստեղ ևս կա տրոհում, բացասում, միայն թե տրոհման հարաբերությունն իրադրական է, հասկացվում է՝ նշված երկու երևույթների տեսակետից մոտենալով. *Առաքելի մասին ամեն մի նոր լուր կամ դրսից էր հասնում Արաքսի ափի գյուղը, կամ հենց այդ գյուղում էր հորինվում:* Ուրեմն ամեն մի մասնավոր դեպք հասկացվում է մյուսի բացասումով, այսինքն՝ տրոհական հարաբերությամբ: Սակայն բանի որ տրոհումը բացարձակ չէ, ընդհանրապես նշված երկու գործողությունները հնարավոր են ու իրական, ուստի այդ գործողությունները մի այլ դեպքում ընդհանուր հնարավորության տեսակետից կարող են կապակցվել նույնիսկ միավորական հարաբերությամբ՝ մասնավորապես արտահայտելով թվարկում:

Վերլուծենք այդպիսի մի փաստ ևս. *Հիվանդությունը ավելի հաճախ էր նրան գցում անկողին, և օրեր շարունակ նա նստում կամ պառկում էր փայտե հնամյա մահճակալին, գրքեր կարդում կամ թախծոտ աչքերը երկար հառած սրահում սրատուհանին (ՍԽ):* Այս նա-

խաղասության մեջ կամ-ով կապակցված միավորների արտահայտած գործողություններն իրական են, կատարվում են, և հարցին ընդհանուր ձևով մոտենալու դեպքում կարելի էր դրանք կապակցել նույնիսկ միավորական շաղկապներով: Տրոհումն այստեղ հասկացվում է տվյալ պահի, տվյալ գործողության տեսանկյունից: Այդ պատճառով էլ այսպիսի բաղադրիչները տարժամանակություն են ցույց տալիս՝ անկախ նրանց ունեցած քերականական ժամանակից:

Պատկում էր ծիրանի տակ կամ քնում ժայռի շվարում, կամ էլ մեջքի վրա դառնում, ոտքերը ձգում հսկա մկրատի պես (Քակ.): Անգործությունից ձանձրացած մարդիկ կամ գնում էին բրուտանոց՝ նարդի խաղալու ու մեկ-մեկ էլ գինի խմելու, կամ բարձրանում էին գյուղ (ՍԽ): Պատավր... հին ժողովուրդներ էր բերում կամ թե բրինձ էր տալիս ջուկելու (Քակ.):

Տրոհական հարաբերության իմաստը երբեմն ավելի թույլ կերպով է արտահայտվում ու որոշ առումով մոտենում միավորական հարաբերությանը: Այս դեպքում կամ շաղկապի հետ գործածվում է և միավորական շաղկապը՝ և կամ:

Ամիսներով նոր գիրք չէր ավելանում կրպակում եղած գրքերին, և կամ չէր պակասում նրանցից մեկը (ԱՍ): Արդյունաբերողները վայրենաբար կտրտում էին անտառները և կամ օգտագործում բանկ գնով գնվող նավթ, բարձրորակ ածուխ (ԱՍ):

Տրոհական հարաբերության մի այլ տեսակը կարելի է անվանել բնութագրման կամ արտահայտական տրոհում, որի դեպքում միևնույն իրավիճակը, երևույթը ներկայացվում են հնարավոր տարբեր արտահայտություններով: Այսպիսի տրոհական կառուցվածքներով խոսողը կարողանում է առավել ճիշտ ու դիպուկ ներկայացնել տվյալ երևույթը:

(Հսկայական գրոյի) դատարկ շրջագծի միջով իր սարսմորտալներն է կատարում կամ, հայերեն ասենք, իր գլուխկոնձին է անում համաշխարհային կրկեսի այն միմոսը, որի անունն է մարդկություն (ՆԳ): Մի քանի թուպից հետո այլևս չեմ լինիլ կամ, այլ խոսքով ասած, կլինեմ գալիք անգոյության մեջ (ՆԳ): Մեռնելուց հետո ժամանակը գոյություն չունի, կամ, ուրիշ խոսքով, գոյություն ունի այն, ինչ որ մենք անվանում ենք հավիտենություն (ՆԳ): Ոչ երեկ և ոչ այս գիշեր չեմ քնել կամ, ավելի ճիշտը, չեմ կարողացել քնել (ՆԳ): Այդ բանը չէի տեսնում կամ, ավելի ճիշտն ասած, չտեսնելուն էի տալիս (ՆԳ):

Ինչպես երևում է օրինակներից, արտահայտական տրոհման հարաբերության դեպքում կամ շաղկապի մոտ հաճախ գործածվում են հարաբերության տվյալ տեսակն ակնարկող արտահայտություններ, ինչպես՝ **ավելի ճիշտ, այլ կերպ ասած, այլ արտահայտությամբ, այլ բառերով ասած, ուրիշ խոսքով** և այլն:

Կան նաև **հարցական ու երկբայական տրոհական համադասություններ**, որոնք ունեն իրենց կառուցվածքային յուրահատկությունները: Այսպիսի նախադասությունների բաղադրիչների կապակցման հիմնական միջոցը **թե** շաղկապն է:

Բայց դահիճներն արդեն հոգնե՞լ էին, թե՞ նրանց չար հոգիներում խղճահարություն էր ծնել Օհան ծերունու մահը (ՀՔ): Չարի՞կը ներեց արդյոք, թե՞ Սերգոն էր՝ վրիպեց (ԱՍ): Գարեգինին հանդիպելու սաստիկ ցանկություն՞ն ուներ նա, թե՞ որոշել էր տեսնել իր հսկաուկորդին (ՍԽ): Մե՞ծ տիկին, դո՞ւրս գամ, թե՞ ներս գնամ (ԳԳ): Բամի՞ն էր, թե՞ ծանրությունից էր, գերանները ճռճում էին (Քակ.):

Սակավ դեպքերում հարցական կամ երկբայական նշանակությամբ գործածվում են **կամ** (ու նրանով բաղադրված) շաղկապներով կապակցված նախադասություն-

ները: Այս դեպքում նրանց մեջ տրոհական իմաստը նկատելիորեն թուլանում է, և զգալի է դառնում թվարկման նշանակությունը:

Խոջա Բաղիրի ժառանգներն ի՞նչ հայ են, կամ Ավագիմովներն ի՞նչ հայ են, ասենք նրանց պապի անունը հայ է (Բակ.): Պապս էլ նրանց պիտի հարցներ, թե վարը պրծա՞ն, կամ թե այսինչ սարի խոտը ինչպես է (Բակ.):

Ինչպես երևում է, վերջին օրինակում համադաս նախադասությունները համաստորադասական կառուցվածքի մեջ են մտնում:

ՀԱՎԵԼԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ

Հավելական կոչվում է այն հարաբերությունը, որի դեպքում նախադասության հիմնական մասին ավելանում է մի բաղադրիչ նախադասություն, որը իմաստային ու կառուցվածքային տեսակետից հիմնական մասի հետ չի ձուլվում, չի գտնվում նույն մակարդակի վրա, այլ մի տեսակ հավելում է նախորդ՝ հիմնական մասի վրա:

Այդ հավելական բաղադրիչով նախադասության նախորդ մասի վերաբերյալ տրվում է մի լրացուցիչ բացատրություն, արվում է իմաստային, վերաբերմունքային հավելում:

Արամը մրցման մեջ գրավեց առաջին տեղը, և դա շար ուրախացրեց ընկերներին: Երեխաները հաճությամբ խաղում էին բակում, բայց արդեն շար ուշ էր: Հակորը պատվոգիր ստացավ, և դա նրա երկրորդ պատվոգիրն էր:

Բարդ համադասական նախադասության կառուցվածքում¹ հավելական հարաբերությունն արտահայտվում է մի շարք շաղկապներով՝ **և, ու, իսկ, բայց, սակայն, և այնուամենայնիվ, բայց և այնպես, ըստ որում, ընդ որում և այլն:**

Թվարկված շաղկապներից երևում է, որ հավելական կապակցությունների մեջ առկա է միավորականության և ներհակության որոշ իմաստ, սակայն այդ իմաստները էապես տարբերվում են բուն միավորական ու ներհակական հարաբերություններից, որոնցում նույն կարգի երկու (կամ ավելի) շարահյուսական միավորներ զրոնդվում են հավասարազոր հարաբերության մեջ: Մինչդեռ քննարկվող կապակցության մեջ բնորոշը հավելման հարաբերությունն է, որին կարող են զուգակցվել միավորականության, ներհակության որոշ տարրեր: Հավելական նախադասությունը սովորաբար դրվում է հիմնականից հետո:

Ես ուզում էի խաբված լինել չհիասթափվելու համար, իսկ հիասթափումն այդ դեպքում մահ կլինեք ինչ համար (ՆԳ): Շահյանը շարունակ լուռ էր և ինքն էլ էր զարմանում, թե ինչ է պատահում իրեն (ՆԳ):

Սակավ դեպքերում հավելական նախադասությունը դրվում է միջադաս. ընկնում է հիմնական նախադասության մեջ: *Դու նրան ներել ես մի անգամ, իսկ նա դրա կարիքը շար էր զգում, ների՛ր այս անգամ ևս, եղի՛ր մեծահոգի:*

Միջադաս հավելական նախադասությունը սովորաբար ունենում է միջանկյալ նախադասության արժեք:

Հավելական կապակցության դեպքում հավելական նախադասությամբ հաճախ

1. Հավելական հարաբերությամբ կապվում են մաս նախադասության անդամներ, ինքնուրույն նախադասություններ:

արտահայտվում է հիմնական նախադասությանը մտքով լրացնող, ամբողջացնող, լրացուցիչ տեղեկություն հաղորդող հավելյալ միտք:

Դա ավելի հարմար կլիներ, քանի որ ձեր համեմատությունն ինձ է վերաբերում, իսկ օչ անունը հենց կանանց համար են գործածում (ՆԳ): Բոլորովին մեղմ հարցրեց երիտասարդը, սակայն այդ մեղմությունը ավելի զարհուրելի էր, քան առաջին ճիշը (Քակ.):

Հավելյալական նախադասությամբ կարող է արտահայտվել խոսողի վերաբերմունքը հիմնական նախադասությամբ արտահայտված երևույթի նկատմամբ:

Միքելիս, նա չափից դուրս մեծ քան է երևակայում իրեն, իսկ պարծենկոտներին ես չեմ սիրում (ՆԳ): Բնությունն այստեղ շատ գեղեցիկ է, այս լեռները, անտառները ուղղակի հրաշք են, իսկ ես բնությունը, մանավանդ լեռնային բնությունը իսկնքի պես եմ սիրում:

Հավելյալական նախադասությամբ հաճախ արտահայտվում է որևէ ընդհանրացում, ընդհանրական միտք:

Այն գործը, որին նվիրված եմ ես, պահանջում է անձնուրացություն, իսկ սիրո մեջ իր շնորհանակից դուրս չկա այդպիսի անջնուրացություն (ՆԳ): Տեսնո՞ւմ ես, ծառի վզիկի ամբողջ կեղևը պոկել են քո այդ թշնամիները, իսկ ծառն առանց կեղևի չի ապրի (ՄԽ):

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՏԵՂՈՒՄԸ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեծ մասամբ յուրաքանչյուր համադասական նախադասության մեջ դրսևորվում է այս կամ այն շարահյուսական հարաբերությունը՝ միավորական, ներհակական, տրոհական, հավելյալական: Բնականաբար, դա այդպես է երկանդամ (երկու նախադասությունից բաղկացած) համադասական նախադասության մեջ, որտեղ միայն մեկ հարաբերություն կարող է լինել:

Մեկ բնույթի հարաբերություն կարող է արտահայտվել նաև երկուսից ավելի բաղադրիչ ունեցող նախադասություններում: Այսպես՝ միայն միավորական հարաբերությամբ են կապված հետևյալ նախադասությունների բոլոր բաղադրիչները:

Այժմ լերկ են լանջերը, արևը խանձել է ժայռերի մամուռը, անտառի հետ անհետացել են ծառերի ստվերում բսնող խոտերը, կուրացել են աղբյուրները (Քակ.): Ամեն տարի մի քար է ընկել պատից, մահը թեթև է թվացել, բողոք չի եղել, ոչ մի թաղ չի տեսել հրդեհ, քարերը չեն շիկնել կրակից:

Երկուսից ավելի բաղադրիչներով նախադասությունները կարող են կապված լինել տրոհական հարաբերությամբ:

Ամբողջ օրը եռուզեռ է ճամբարում, կամ հրապարակներում երգում, արտասանում են աշակերտները, կամ կազմակերպում են տարբեր խաղեր ու մրցումներ, կամ բարձրաձայն պատմում են արշավներից տպավորությունները: Մարդկանց աղմուկ էր, դարբնոցների՞ց էր գալիս, թե՞ փողոցներից անցնում էին բեռնած ֆուրգոններ (Քակ.):

Հաճախ միևնույն բարդ նախադասության մեջ տեղ են գտնում տարբեր կարգի համադասական հարաբերություններ, որոնցից մեկը սովորաբար իշխող դիրք է ունենում:

Միևնույն բարդ համադասական նախադասության մեջ կարող են համատեղվել միավորական և ներհակական հարաբերությունները:

Նորից խոսում էինք և խոսում էինք ուրիշ բաների մասին, բայց նա արդեն պատրաստ էր, իրականությունը չքացել էր նրա համար, մոտալուտ մահվան սպառնալից դեմքը անհետացել (Բս.): Երգի բառերը պարսկերեն էին, բան չէի հասկանում, սակայն մեղեդին հասկանալի լեզվով խոսում էր սրտիս հետ (Բս.): Բայց ահա գալիս է ամառը, և նա թագուհուն ուղարկում է Սյունյաց ամառանոցները, իսկ ինքը գնում է Ուտիք, շարաթներով նստում Սևորդյաց լեռներում Ցիկ Ամրամի վրաների տակ, Ասպրամ իշխանուհու զբոսավայրերում (Մուր.):

Միևնույն բարդ համադասական նախադասության մեջ կարող են համատեղվել տրոհական և միավորական հարաբերությունները:

Կամ ինքը գորավոր է և պետք է փրկի իրեն, հասնի գորագնդին, հասցնի նրան տեղ, կամ ինքը ևս մնում է և ոչնչանում (ԳԳ): Գալիս է մեր հողը, մեր երկիրը, մեր իրավունքը խլի, մեզ կամ ստրուկ շինի, մեզ մեր իշխանից ավելի ճգմի, կամ երկրից դուրս քշի (ԳԳ): Սուր-սուր քարերը կտրտում էին մերկ ոտքերը, փշերը կախվում էին շալվարի ծվեններից, կամ պոկում ծվենները, կամ իրենք մնում ծվենների վրա (ԱՍ):

Հավելական հարաբերությունը կարող է հանդես գալ մյուս՝ միավորական, ներհակական, տրոհական հարաբերությունների հետ միասին:

Եղանակը տաքացել է, գարնանացանը սկսվել է, ըստ որում այս տարի սկսվել է ժամանակին ու լավ նախապատրաստված: Մենք մնում ենք այստեղ, իսկ նրանք գնում են Մոսկվա, և այդ մասին ես հենց նոր լսեցի: Կամ պետք է նրան ընդունել աշխատանքի, կամ պետք է անմիջապես պատասխանել գրավոր՝ հիմնավորելով մերժումը, իսկ մերժելու հիմք, կարծում եմ, չունենք:

Համադասական հարաբերության բոլոր տեսակների իրար հետ հանդես գալը սկզբունքորեն հնարավոր է: Այս հարցում սահմանափակումը երկու պատճառով է լինում: Նախ՝ տարբեր հարաբերություններ տարբեր չափով կարող են զուգակցվել իրար հետ: Երկրորդ՝ միևնույն նախադասության մեջ բազմազան հարաբերությունների գործածումը երբեմն հանգեցնում է ոճական անհարթության ու խրթինության:

ՏԱՐԱՍԵՌ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Տարասեռ բարդ համադասական նախադասություններն ունեն բազմաստիճան կառուցվածք, որը բնավ էլ խառը չէ, այլ ձևավորվում է որոշակի օրինաչափությամբ՝ ներկայացնելով հստակ համակարգ: Դրանք սովորաբար կազմվում են երկու կամ ավելի բաղադրիչ համադաս նախադասություններից:

1. Երկու բաղադրիչից կազմված տարասեռ բարդ համադասական նախադասությունն իր կազմի մեջ ունենում է՝

Ա. մեկ երկբաղադրիչ բարդ ստորադասական և մեկ պարզ նախադասություններ.

Անահիտը, որը տարված է հայրենի չքնաղ բնությամբ, պատմում է նրա հրաշքների մասին, իսկ Հասմիկը կլանված լսում է:

Բ. երկու երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններ.

Անահիտը, որը տարված է հայրենի չքնաղ բնությամբ, պատմում է նրա հրաշքների մասին, իսկ Հասմիկը, որը չի եղել այդ լեռնաշխարհում, կլանված լսում է նրան:

9. մեկ երկբաղադրիչ բարդ ստորադասական և մեկ համաստորադասական բարդ նախադասություններ. *Անահիտը, որը տարված է հայրենի շքնաղ բնությամբ, պատմում է նրա հրաշքների մասին, իսկ Հասմիկը, որը չի եղել այդ լեռնաշխարհում, և նրա մասին իրեն ոչ ոք չի պատմել, կլանված լսում է նրան:*

10. մեկ երկբաղադրիչ բարդ ստորադասական և մեկ ենթաստորադասական նախադասություն. *Անահիտը, որը տարված է հայրենի շքնաղ բնությամբ, պատմում է նրա հրաշքների մասին, իսկ Հասմիկը, որը չի եղել այդ լեռնաշխարհում, որի մասին շատ է կարդացել, կլանված լսում է նրան:*

2. Երեք բաղադրիչներից կազմված տարասեռ բարդ ստորադասական նախադասությունն իր կազմում կարող է ունենալ երեք համադաս նախադասություններից կազմված կառույց, որոնցից յուրաքանչյուրը կարող է ներկայացնել նախորդ կետերում նշված կառույցները, որոնց ավելանում է ևս մեկ բաղադրիչ բարդ նախադասություն: Բերենք միայն մեկ օրինակ. *Լիլիթը կլանված գիրք է կարդում, որը նրա սիրած գրադմունքն է, Անահիտը, որը տարված է հայրենի շքնաղ բնությամբ, պատմում է նրա հրաշքների մասին, իսկ Հասմիկը, որը չի եղել այդ լեռնաշխարհում, կլանված լսում է նրան:*

Ուշադրությունը նախադասությունների հատկապես կառուցվածքային օրինաչափության վրա կենտրոնացնելու նպատակով բերել ենք այնպիսի նախադասություններ, որոնք բովանդակությամբ ու կառուցվածքով ունեն նույն հիմքը, որի որևէ բաղադրիչը (կամ բաղադրիչները) ծավալվում է (են)՝ ավելի ընդլայնելով կառույցը գործող օրինաչափության սահմաններում:

Կարելի է և շարունակել կառույցների ծավալումը և կազմել ավելի շատ բաղադրիչներով նախադասություններ: Բայց կարևորը կառույցների ծավալման, եղածի հիման վրա նրա ծավալումով նոր կառույցներ ստեղծելու օրինաչափությունն է, որը դժվար չէ ընկալել: Հիմնական օրինաչափությունը հետևյալն է: Տրված համասեռ նախադասության բաղադրիչներին ավելացվում է (են) ստորադաս նախադասություն(ներ), որին (որոնց) կարելի է ավելացնել նոր բաղադրիչներ, ըստ որում ստորադասական կամ համադասական հարաբերությամբ: Վերը բերված բարդ համադասական նախադասության համադաս բաղադրիչ նախադասությունների քանակը ևս կարելի է ավելացնել, որը նույնպես կարող է լրացվել ստորադաս նախադասությամբ (նախադասություններով):

Թեև քերականորեն շատ հստակ օրինաչափությամբ կարելի է այդ հավելումների քանակն ավելացնել և բազմապատկել բաղադրիչների քանակը, բայց ոճական առումով նման բաղադրիչների քանակը պետք է սահմանափակ լինի, որպեսզի խոսքը լինի հեշտ ընկալելի, դյուրըմբռնելի:

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր բնութագիր

Բարդ ստորադասական կոչվում է այն բարդ նախադասությունը, որի անմիջական բաղադրիչ նախադասությունները կապված են ստորադասական հարաբերությամբ:

Բարդ ստորադասական նախադասությունը կարող է կազմված լինել երկու կամ ավելի բաղադրիչ նախադասություններից:

Հաճախ սիրում են, երբ մարդկայնորեն սիրտս գերում են (ՊՍ): Նա ինձ չթողեց, որ հարցների այդ դեպքի ու նրա անջնջելի տպավորության մասին, որ այդ րուպեին լույս էր տալիս նրա հիշողության մեջ, ինչպես արևի ոսկե շողը՝ ծառերի ետևում (Բակ.): Մի՞թե կարող ենք ստոնասիրտ լինել մենք, երբ այժմ դրված է այդ հարցը, և մենք կանգնած ենք նրա այս կամ այն լուծման հանդեպ (ՎՏ):

Բերված երեք նախադասություններից առաջինը կազմված է երկու, երկրորդը և երրորդը՝ երեք նախադասություններից: Միայն թե երկրորդ նախադասության բաղադրիչները կապված են միայն ստորադասական հարաբերությամբ, իսկ վերջին նախադասության մեջ կա և՛ ստորադասություն, և՛ համադասություն: Այստեղ ստորադաս նախադասությունները միմյանց նկատմամբ համադաս են: Այս նախադասության կառուցվածքը համարվում է ստորադասական, որովհետև նրա անմիջական կազմիչները կապված են ստորադասական հարաբերությամբ. դրանք են՝ 1) *Մի՞թե կարող ենք ստոնասիրտ լինել մենք,* 2) *երբ այժմ դրված է այդ հարցը, և մենք կանգնած ենք նրա այս կամ այն լուծման հանդեպ:*

Համադասական հարաբերությունն այսպիսի կառուցվածքներում մասնակի դեր է կատարում և հաշվի է առնվում ոչ թե բարդության ընդհանուր կառուցվածքային տեսակը որոշելիս (համադասական, ստորադասական), այլ տվյալ տիպի ենթատեսակը որոշելիս (համաստորադասություն):

Ծանոթություն: Լեզվական կառուցվածքային բարդ միավորի տեսակը ըստ նրա անմիջական բաղադրիչների որոշելու անհրաժեշտության հարցում ավելի համոզվելու համար բառակազմությունից հիշենք այնպիսի բառական միավորների գնահատումը, ինչպիսիք են՝ 1) արմատահան անել, 2) պատառ-պատառ անել, 3) անհանգիստ լինել: Այս բառական միավորները ըստ կազմության հարադրություններ են՝ հարադրական բայեր, և դա մենք որոշում ենք՝ հաշվի առնելով ամբողջի անմիջական բաղադրիչների կապի բնույթը: Այն հանգամանքը, որ դրանց անվանական բաղադրիչներից առաջինը (արմատահան) հողակապով բարդություն է, երկրորդը (պատառ-պատառ)՝ կրկնավոր, երրորդը (անհանգիստ)՝ ածանցավոր բառ, չի խանգարում ամբողջ բարդության վերոհիշյալ գնահատությանը, քանի որ դրանք անվանական բաղադրիչի անմիջական կազմիչների կառուցվածքային հատկանիշն են, ճտորին օղակն են բնորոշում և ոչ թե ամբողջ բարդությունը:

Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների քերականական ու իմաստային կապն ավելի սերտ է, քան համադասական նախադասության բաղադրիչներինը: Բաղադրիչ նախադասությունների քերականական, իմաստային սերտությունը զուգակցվում է նրանց կառուցվածքաքերականական ինքնուրույնության պակասով: Սա հատկապես վերաբերում է ստորադաս նախադասություններին, մասամբ և որոշ գերադաս նախադասությունների:

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է երկու եղանակով՝ բառական և շարահարական: Բառական եղանակի մեջ մտնում են հետևյալ միջոց-

ները՝ **շաղկապներ, շաղկապական բառեր, հարաբերյալներ**: Շաղկապներից ստորադասական հարաբերություն ձևավորում են ստորադասական շաղկապները: Որպես շաղկապական բառեր գործածվում են հարաբերական դերանունները, որոշ վերաբերականներ (**ասես, կարծես** և այլն): **Շարահարության** մեջ դեր են կատարում, ինչպես նշվել է վերը, հնչերանգը, քերականական արժեք ունեցող յուրահատուկ դադարը (տրոհումը):

Շաղկապներն ու շաղկապական բառերը սովորաբար դրվում են ստորադաս նախադասության սկզբում՝ անկախ վերջինիս շարահարությունից:

Որքան պրպտում եմ, չեմ կարողանում որոշել, թե երբ եմ տեսել մթին ձորի լուսավոր փք (Քակ.): Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին ծնկները, թվում էր քրմուհի՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող (Քակ.):

Երբեմն, հատկապես ժողովրդախոսակցական ոճում կամ վերջինիս ազդեցությամբ նաև բուն գրական լեզվում շաղկապից, հարաբերական բառից առաջ կարող են դրվել ստորադաս նախադասության որևէ անդամ կամ անդամներ:

Գյուղի երեխաները երբ հրաժեշտ են տալիս, ո՛չ համբուրում են իրար, ո՛չ ձեռք են սեղմում (Քակ.): Աշխատանքդ որ վերջացնես, կգաս մեզ մոտ: Արամին եթե բան պատահած չլիներ, արդեն եկած կլիներ: Շոգը որ սկսվում է, աշխատել չի լինում: Պարտաճանաչ մարդը որպեղ էլ աշխատի, իրեն կարդարացնի:

Շաղկապական բառերը կապակցման դերով նման են ստորադասական շաղկապներին: Դրանց միջև կան հետևյալ տարբերությունները. նյութական իմաստ ունենալու շնորհիվ շաղկապական (հարաբերական) բառերը կապակցման դերի հետ միասին, ի տարբերություն շաղկապների, կատարում են նաև նախադասության անդամի դեր:

Շենքի ներսը՝ այս ձորերին անձանոթ եռուզեռով խլրտում են մարդիկ, որոնք հերոսական ջանքերով հաստատեցին լույսի այն ամլուցը (Քակ.): Երբ լույսի վրա մայեց աղջկան, զարմանքից քարացավ (ՆԳ): Դավիթը կանգ առավ այդ դռներից մեկի առջև, որի ծակոտիներից և ճեղքերից ծրագի լույս էր երևում (ՆԳ):

Ընդգծված հարաբերականները կատարում են համապատասխանաբար ենթակայի, պարագայի, հատկացուցիչի դեր:

Ստորադաս և գերադաս նախադասությունների կապակցման դեր են կատարում նաև հարաբերյալները: Հարաբերյալի դերով հանդես են գալիս հիմնականում ցուցական դերանունները, երբեմն էլ՝ որոշյալ դերանուններ և համապատասխան իմաստ արտահայտող բառակապակցություններ. ինչպես՝ **այն, այնպիսի, այնպես, այնքան, այնչափ, այնտեղ, ամենը, այն ամենը** և այլն:

Ինչպես երևում է, ցուցական դերանուններից հարաբերական դեր կատարում են **և** արմատական հնչյուն ունեցող բառերը, որոնք տվյալ դեպքում հանդես են գալիս վերացական ցուցականության իմաստով, այսինքն՝ ցույց են տալիս ոչ թե տարածականորեն խոսողից և խոսակցից հեռու գտնվող առարկա (հատկանիշ), այլ այն առարկան (հատկանիշը), որ բնորոշվում է ստորադաս նախադասությամբ: Ուրեմն, ի տարբերություն ցուցական **այդ** և այլ դերանուններին բնորոշ հարաբերության իմաստի, ցուցական հարաբերյալը գործածվում է երկրորդական նախադասության իմաստն ակնարկելու համար:

Հմնտ. ա. Վերցրո՛ւ այս գրիչը: Վերցրո՛ւ այն գրիչը, որ իմ ձեռքին է: Բ. Տո՛ւր այդ գրիչը: Տո՛ւր այն գրիչը, որ քո ձեռքին է:

Ինչպես երևում է **ա** և **բ** շարքերից յուրաքանչյուրում զույգ օրինակներով ցույց է տրված նույն առարկան: Սակայն եթե առարկան **այս, այդ** դերանուններով ցույց է տրված տարածական որոշակի հարաբերությամբ, ապա զուգահեռ բարդ նախադասություններում տարածական տարբեր առարկաները ակնարկված են միայն **այն** դերանունով, որովհետև վերջինս ոչ թե որոշակի առարկա է ցույց տալիս, այլ իր առարկայական իմաստով բնորոշում է խոսողի և խոսակցի ձեռքին գտնվող գրիչը:

Այսպիսով՝ հարաբերյալի կապակցական դերն իրացվում է նրանով, որ այն ակնարկում է երկրորդական նախադասության իմաստը, ինքն ունենալով վերացական իմաստ՝ շարահյուսական այն դերն է կատարում, ինչ որ երկրորդական նախադասությունը, որը որոշակիորեն արտահայտում է հարաբերյալի ակնարկված իմաստը:

Ստորադաս և գերադաս նախադասության կապակցման մյուս միջոցը, որ հակադրվում է վերոհիշյալ՝ բառական միջոցներին, **շարահարությունն է**: Այս դեպքում ստորադաս նախադասությունը գերադասին չի միանում շաղկապով, շաղկապական բառով, այլ միանում է առանց այդպիսի միջոցների՝ յուրահատուկ հնչերանգով, իմաստային հարաբերությամբ:

Ասում են՝ շուտով գալու են: Համաձայն եք՝ եկեք միասին աշխատենք:

Շարահարական կապակցությունն ավելի շատ հատուկ է ժողովրդախոսակցական ոճին: Այս տեսակետից բարդ ստորադասական նախադասությունը տարբերվում է բարդ համադասականից, որտեղ շարահարությունը, ի տարբերություն շաղկապվոր կապակցության, սովորաբար թվարկումը չսահմանափակելու դեր է կատարում: Պետք է նշել նաև, որ շարահարությունը շաղկապվոր կապակցության համեմատությամբ հարաբերությունն ավելի անորոշ է արտահայտում, և հաճախ հնչերանգային հատկանիշից ու խոսքային հանգամանքներից է հասկացվում տվյալ հարաբերության իմաստը:

Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցման միջոց է նաև **ընդհանուր անդամը**, որը, վերաբերելով տարբեր բաղադրիչների, դրանով իսկ ընդհանրություն է ստեղծում դրանց միջև և նպաստում կապին:

Նա կարծես մտքումը դրել էր, որ այդ հանդիսի լավ կողմերը չնկատե (ՂԱ): Երբ որ ջուրը Վարարում է, ելնում ավից, Թույլություն չի վերցնում Իրեն հսկող նեղ քարափից (ՊԱ):

Այս օրինակներում ընդհանուր անդամ են **նա, ջուրը** ենթակաները, որոնք, վերաբերելով բարդ նախադասության նաև երկրորդ բաղադրիչին, դրանով իսկ կապակցական դեր են կատարում երկու բաղադրիչների համար:

Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցման հարցում երկրորդական որոշ դեր կատարում են նաև մի շարք բառեր, բաղադրիչ նախադասությունների ստորոգական հատկանիշները (մասնավորապես ժամանակը) և այլն:

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ

Բարդ ստորադասական նախադասությունը կարող է կազմված լինել երկու և ավելի բաղադրիչներից, և ըստ այդմ՝ դրանք կոչվում են **երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններ**:

Երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունները միատարր ստորադասություն են արտահայտում. դրանցում կա մեկ ստորադասություն:

Գեթ մխիթարվիր, որ նույն համն ունեն Քրտինք ու արցունք (ՊՍ): Եվ հայերուց պիտի կոչիկ կարել, Որ ոտնատակն անգամ հողը արտացուլի (ՊՍ):

Այս օրինակներից յուրաքանչյուրում կա մեկ գերադաս և մեկ ստորադաս նախադասություն:

Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունների մեջ կարող են լինել՝ ա) հարաբերության անմիատարրություն, բ) հարաբերության անհամասեռություն, գ) ստորադասության բազմաստիճանություն:

ա) Ես վախենում էի, որ կգարթենս դարձյալ, Որ մոռացման ձյունս կհալչի դանդաղ, Եվ դու ճնճաղիկի պես կելնես հողից (ՍԿ):

բ) Արծվին, որ քաջ ձիավարող էր, ըստ երևույթին ջանում էր իր նժույզին ևս հարկադրել պահպանելու այն համեստ միջոցը, որ կար իր և իր տիրոջ միջև (ԳԳ):

գ) Մարդիկ լավ չէին պատկերացնում, թե այն նոր արտասովոր դեպքը, որ անհանգրստացրել է այսօր ամբողջ բնակիչներին, ինչով կվերջանա (ԳԳ):

ԵՐԿԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երկբաղադրիչ կոչվում է այն բարդ ստորադասական նախադասությունը, որը կազմված է երկու բաղադրիչներից:

Այդ բաղադրիչ նախադասություններից մեկը լինում է գերադաս, մյուսը՝ ստորադաս: *Երջանիկ ես դու, հայր Ջիովաննի, որ Գարիբադիի բազեններից ես (Խս): Ջրի նման դու աշխարհ եկ, Որ ջուրը քեզ չտանի, ե՛րգ (ՀՍ): Երբ հերկածիս համար Ինձ հատուցող չկա, Էլ խոսպանն ու խութը Ինչպե՞ս հերկեմ (ՀՍ):*

ԳԵՐԱԴԱՍ ՈՒ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գերադաս կոչվում է բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող այն նախադասությունը, որը քերականորեն գերադաս (լրացյալ) է և ունի ստորադաս նախադասություն:

Որ ժամի ձեր սիրտը կուզի, Իմ դուռը բաց է: Մի՛ նայեք, որ պատուհանիս Լույսը հանգած է (ՀՍ): Ես չեզ ասում եմ՝ կգա ոգու սով (Խս):

Այս օրինակներում ընդգծված նախադասությունները գլխավոր են:

Բաղադրիչ նախադասության գերադաս կամ ստորադաս լինելը որոշվում է ոչ թե բարդ նախադասությամբ արտահայտված մտքի մեջ նրա իմաստային ծանրաբեռնվածությամբ, այլ միայն քերականական հարաբերությամբ:

Գերադաս նախադասությունը բնորոշվում է կառուցվածքային ու իմաստային հարաբերական ինքնուրույնությամբ, մյուսի նկատմամբ գերադաս դիրքով ու լրացյալի հարաբերությամբ: *Չարմանալի է, որ մարդ այսպիսի ահեղ տեսարանի մեջ կարող է դիտել և մտածել (Իս.): Մի վայրկյան նկատեցի, որ ընթերցման ընթացքում նա քանի գնում, ավելի ու ավելի մռայլվում էր (Իս.):*

Թեև այս նախադասություններում արտահայտված մտքի կշռի տեսակետից առաջնությունը պատկանում է երկրորդ նախադասություններին, սակայն դրանք ստորադաս են իրենց բերականական կախյալ, լրացական դիրքի, ոչ ինքնուրույնության պատճառով: Բերենք մեկ ակնառու օրինակ ևս. *Աշուն էր, երբ լուր բերեցին, թե մոտակա շրջանում հայ, թուրք խառնվել են իրար, գյուղեր են կրակում, երկուստեք խմբերը դարձել են հրձիգներ վայրագ, արյուն են որում արանքում գյուղերի (Քակ.):* Այս բարդ նախադասության ստորադաս նախադասություններն արտահայտում են մի ամբողջ պատմական բարդ իրադարձություն, իսկ գերադաս նախադասությունը նշում է այդ իրադարձության ժամանակը միայն, բայց, այդուամենայնիվ, բերականորեն գերադաս է, գլխավոր: Գերադաս նախադասության ինքնուրույնությունը հարաբերական է և տարբեր չափի է լինում:

Գերադաս նախադասության ինքնուրույնության աստիճանը կախված է նրա բառաբերականական արտահայտությունից, ինչպես և ստորադաս նախադասության լրացական բնույթից:

Գլխավոր նախադասությունը պակաս ինքնուրույն է լինում՝

1) երբ նրանում կա հարաբերյալ (որից ենթադրվում է ստորադաս նախադասության առկայություն համապատասխան հարաբերականով հանդերձ)։

Եվ իրար վրա կրկնվող այս հրամանը մահապարտի հոգու մեջ այնպիսի սև հուսահատություն առաջ բերեց, որ ես զգում էի այն նրա բազուկների միջից իմ հոգուն փոխանցվելը (Իս.): Մերում են նրանք և այն վայրենուց, որ էլ չէր կարող ապրել քարայրում (ՊՍ):

2) եթե ստորոգյալն արտահայտված է ներգործական սեռի բայով, բայց գերադաս նախադասության մեջ չկա նրա ուղիղ խնդիրը (և ենթադրվում է, որ այն պիտի արտահայտվի ստորադաս նախադասությամբ)։

Առաջին օրը կարծում էի, որ նա ներում չի ստանա (Իս.): Բայց պեսեղ ենք, որ չունեն ես ոչ մի երգ առանց ձեզ (ՀՄ):

3) եթե նրանում կա այնպիսի ստորոգյալ, կամ հենց ինքն ամբողջությամբ արտահայտված է այնպիսի ստորոգյալով, որի ենթական դրսևորված է ստորադաս նախադասությամբ:

Չարմանալի է, որ մարդ այսպիսի ահեղ տեսարանի մեջ կարող է դիտել և մտածել (Իս.): Ա՛ի, քվում է, թե այնտեղ եմ հիմա (ՀՄ):

Պակաս ինքնուրույն գերադաս նախադասությունների ընդհանուր բնութագիրը կարելի է տալ հետևյալ կերպ. դրանք կամ թերի նախադասություններ են, որոնց բաց թողնված անդամն արտահայտված է ստորադաս նախադասությամբ, կամ եթե լրիվ են, ապա որևէ անդամն արտահայտված է հարաբերյալով, որի իմաստը որոշակիորեն արտահայտվում է ստորադաս նախադասությամբ:

Ստորադաս կոչվում է բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող այն նախադասությունը, որը քերականորեն ստորադաս է և լրացնում է գերադաս նախադասության միտքը:

Ստորադաս նախադասությունը բնորոշվում է կառուցվածքային ու իմաստային ոչ ինքնուրույնությամբ, գերադասի նկատմամբ ստորադաս դիրքով ու լրացական հարաբերությամբ: Այն լրացնում է գերադաս նախադասության որևէ անդամին, երբեմն՝ ամբողջ գերադաս նախադասությանը:

Ստորադաս նախադասության ոչ ինքնուրույնությունը պարզ պատկերացնելու համար պետք է նկատի ունենալ, որ գերադասի հետ նրա կապակցման քերականական միջոցները (ստորադասական շաղկապներ, շաղկապական բառեր) մտնում են նրա կազմի մեջ, և հաճախ հենց դրանցով է արտահայտվում նրանց լրացական էությունն ու բնույթը:

Հմնտ. Նրանք համաձայնեցին, որովհետև ոչինչ անել չէր կարելի:

Նրանք համաձայնեցին, որ ոչինչ անել չէր կարելի:

Նրանք համաձայնեցին, երբ ոչինչ անել չէր կարելի:

Նրանք համաձայնեցին, թեև ոչինչ անել չէր կարելի:

Որ ստորադաս նախադասությունները որպես այդպիսիք են հանդես գալիս և գնահատվում նրանց կապակցող բառերի հետ միասին, հստակորեն երևում է բերված օրինակներից, որոնցում կապակցման տարբեր բառական միջոցները տարբեր լրացական հարաբերություն են ձևավորում. առաջին օրինակում ստորադաս նախադասությունը պատճառի հարաբերություն է արտահայտում, երկրորդում՝ խնդրի, երրորդում՝ ժամանակի, չորրորդում՝ զիջական: Նշված հարաբերություններով պայմանավորված՝ տարբեր է ստորադաս նախադասությունների և նույնիսկ ամբողջությամբ վերցրած համապատասխան բարդ ստորադասական նախադասությունների հաղորդակցական արժեքը: **Ոչինչ անել չէր կարելի** նախադասությունը, անշուշտ, կարելի է առանձին գործածել որպես ինքնուրույն նախադասություն, բայց դա չէր լինի այն ստորադաս նախադասությունը, որ մենք ունենք բերված օրինակներում: Դրանցում առկա են ոչ թե **ոչինչ անել չէր կարելի**, այլ **որովհետև ոչինչ անել չէր կարելի**, **որ ոչինչ անել չէր կարելի** և այլն, իսկ այդ և նման ձևով ու կառուցվածքով, իրոք, ստորադաս նախադասությունները ինքնուրույն չեն և այդպիսին լինել չեն կարող:

Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքի հարցում կարևոր դեր են կատարում ստորադաս նախադասության՝ գերադասի հետ ունեցած քերականական կապն ու նրա արտահայտման միջոցները: Այս հարցում դեր ունեն նաև գերադաս նախադասության կառուցվածքի որոշ հատկանիշներ, որոնք սերտորեն կապված են ստորադասի բնույթի ու կառուցվածքի հետ:

Այսպիսով՝ ստորադաս և գերադաս նախադասության կապակցության բնությունն իր մեջ ներառում է՝

ա) ստորադաս նախադասության շարահյուսական հարաբերությունը գերադասի նկատմամբ, նրա շարահյուսական դերը և կառուցվածքային յուրահատկությունները՝ պայմանավորված շարահյուսական տվյալ կապակցությամբ.

բ) ստորադաս և գերադաս նախադասությունների կապակցման միջոցները.

գ) գերադաս նախադասության կառուցվածքային յուրահատկությունները՝ պայմանավորված շարահյուսական տվյալ կապակցությամբ:

Ծանոթություն: Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները պարզ նախադասություն համարելը պետք է ընդունել որոշ պայմանականությամբ և վերապահությամբ: Անկախ գործածվող պարզ նախադասությունն ավելի մոտ է գերադաս նախադասությանը, քե՛ս սա ես չի նույնանում պարզի հետ իր ոչ ինքնուրույնության պատճառով:

ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ստորադաս նախադասություններն իրենց բնույթով բազմազան են: Նրանք հիմնականում համապատասխանում են պարզ նախադասության անդամներին, բայց և տարբերվում են նրանցից որոշ հատկանիշներով:

Կառուցվածքային հատկանիշով պայմանավորված՝ ստորադաս նախադասությունը պարզ նախադասության համապատասխան անդամի համեմատությամբ ավելի հարուստ բովանդակություն է արտահայտում: Եթե պարզ նախադասության անդամը հիմնականում անվանողական կարգի հարաբերություններ է արտահայտում, ապա ստորադաս նախադասությամբ ձևավորված անդամն իր ստորոգական եղանակավորական ու ժամանակային հատկանիշներով արտահայտում է օբյեկտիվ (ժամանակային և այլ) և սուբյեկտիվ (եղանակային և այլ) հարաբերություններ, որոնք միայն նախադասությամբ կարող են արտահայտվել:

Չկա բուն ստորոգյալին համապատասխանող երկրորդական նախադասություն. ստորոգելի երկրորդական նախադասությունը համապատասխանում է ստորոգելիին:

Վերջապես, կա նախադասություն, որի համապատասխան անդամը պարզ նախադասության մեջ չկա. այն լրացնում է ոչ թե գերադաս նախադասության որևէ անդամին, այլ ամբողջ գերադաս նախադասությանը:

Ըստ պարզ նախադասության անդամների համապատասխանության՝ ստորադաս նախադասությունները լինում են՝ ա) գլխավոր անդամներին համապատասխանող (վերը նշված վերապահությամբ) ստորադաս նախադասություններ, բ) ստորադաս անդամներին համապատասխանող ստորադաս նախադասություններ՝ իրենց երկու ենթատեսակներով՝ 1) գոյականական անդամի լրացում նախադասություններ, 2) բայական անդամի լրացում նախադասություններ, գ) ամբողջ գերադաս նախադասությանը լրացնող ստորադաս նախադասություններ:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԵ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ենթակա ստորադաս նախադասությամբ կապակցություն

Ենթակա ստորադաս նախադասությունը գործածվում է երկու դեպքում. 1) երբ գերադաս նախադասության մեջ չկա ենթակա, 2) երբ գերադաս նախադասության մեջ կա հարաբերյալով արտահայտված ենթակա:

1) Մինա բիրուն բվաց, թե փուլ եկան մապուռի պապերը, և պապից մի քար ընկավ գլխին (Բակ.): 2) Հանձնարարվել է այն, ինչ նախապեսված է եղել:

Ենթակա ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության հետ գերազանցապես կապվում է **որ, թե** շաղկապներով, **ինչ, որ(ը), ով** հարաբերականներով:

Շաղկապներով կապակցվելու դեպքում գերադաս նախադասության մեջ սովորաբար հարաբերյալ չի լինում:

Քննվող կապակցության մեջ շաղկապներից հաճախակի են գործածվում **որ-ը** և **թե-ն**, որոնք իրարից տարբերվում են վերաբերմունքային-ճանաչողական հատկանիշով: **Որ** շաղկապը հաստատական, իսկ **թե-ն** երկբայական-անհավանականության վերաբերմունքի իմաստային երանգ է արտահայտում, որ քերականորեն դրսևորվում է հետևյալում. **թե** շաղկապի գործածության դեպքում ստորադաս նախադասության մեջ կիրառվում են հարցահարաբերական դերանուններ, ըստ որում գերադաս նախադասության ստորոգյալը կարող է լինել ժխտական կամ հաստատական բնույթի: **Հմմտ. Հայտնի է (պարզ է, հայտարարվել է), որ աշակերտները գնալու են Ծաղկածոր:**

Բայց՝ Հայտնի է (պարզ է, հայտարարվել է), թե ուր են գնալու աշակերտները:

Հայտնի չէ (պարզ չէ, չի հայտարարվել), թե ուր են գնալու աշակերտները:

Թե շաղկապը գործածվում է նաև այն դեպքում, երբ ստորադաս նախադասության մեջ չկա հարցահարաբերական դերանուն, բայց խոսողը անհավանական է դիտում տվյալ միտքը: Այս դեպքում ստորոգյալը սահմանափակ կիրառություն է ունենում. լինում է պարզ-բայական և իմաստով թեականության հնարավորություն պարունակող: Ինչպես՝ *Ենթադրվում է (հայտարարվել է), թե աշակերտները պիտի գնան Ծաղկածոր:* Բացառվում է այսպիսի թեական-երկբայական նախադասության հետ **հայտնի է, պարզ է** և նման հաստատական իմաստ ունեցող բառերի գործածությունը:

Գերադաս նախադասության մեջ սովորաբար հարաբերյալ գործածվում է այն դեպքում, երբ ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է հարաբերականով: Այս դեպքում լինում են հարաբերյալի և հարաբերականի հետևյալ զուգորդումները՝ **նա...ով, այն...ինչ, այն...որը, նա...որը, այն ամենը...ինչ** և այլն: Հարաբերականների հետ հաճախ գործածվում է **որ** թարմատարը. **ինչպես՝ ով որ, ինչ որ** և այլն: Այս զուգորդումները կարող են հանդես գալ նաև հակառակ շարադասությամբ (**ով...նա, ինչ...այն, որը...այն** և այլն), որ պայմանավորված է գերադաս ու ստորադաս նախադասությունների շարադասությամբ:

Ով բախտավոր է իր տանը, նա բախտավոր է նաև դրսում (ՍԽ): Ով որ կոչված է գյուղում գործելու, նա պետք է իմանա... (Մուր.):

Հարաբերականների գործածությունը կարող է չզուգակցվել հարաբերյալների առկայությամբ. վերջիններս կարող են չգործածվել:

Ով քնած է, արթուն կացեք (ՀԹ): Աշխարհում ով մոռանա, ջուխտ աչքով թող քոռանա (ՊՍ): Ինչ լինում է, թող որ լինի միանգամից (ՊՍ):

Ենթակա ստորադաս նախադասությունը գերադասի հետ երբեմն կապվում է շա-

րահարությամբ. այսպիսի կառուցվածքը առավելապես հատուկ է ժողովրդախոսակցական ոճին, որից և անցնում է գրականին:

Պատահում է՝ տարեկան մի անգամ գալիս է իր հայրենի գյուղը: Թվում է՝ այդ բոլորը ճիշտ են: Երևում է՝ այս անգամ չարդարացրեց մեր հույսերը:

Ենթակա ստորադաս նախադասության հետ երբեմն շփոթում են ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը. դա լինում է այն դեպքում, երբ ստորադաս նախադասությունը՝ որպես լրացում, պատասխանում է **ի՞նչ** հարցին: Այդպիսի դեպքում ստորադաս նախադասության բնույթի որոշման հարցում դեր են կատարում գերադաս նախադասության ստորոգյալի քերականական հատկանիշները: Նման դեպքերում ենթակա ստորադաս նախադասությամբ կապակցության գերադաս նախադասության ստորոգյալն արտահայտվում է՝

ա) Չեզոք սեռի բայով. **ինչպես՝ Ինչ որ ցրտադիմացկուն չէ, ցրտահարվել է: Վերանում է այն, ինչ որ հակասում է ժամանակի պահանջներին:**

Ենթակա ստորադաս նախադասությունները կարող են գործածվել նաև չեզոք սեռի միադիմի բայերի հետ. **ինչպես՝ քվում է, երևում է, պատահում է, մնում է և այլն:**

Ինձ քվում է, թե դեռ պիտի ես վերստին դառնամ ջահել (ՊՍ): Երևում է, որ ամեն ինչ բարեհաջող է ընթանում:

բ) Կրավորական սեռի բայով.

Հաղորդվել է, որ շուտով եղանակը ցրտելու է: Արդեն որոշվել է, թե երբ պիտի սկսվի նոր շինարարությունը: Այսպիսի կառուցվածքներում որպես բայ-ստորոգյալ առանձնապես հաճախակի գործածվում են ասացական, մտածական բայերը. **ինչպես՝ ասվել, հաղորդվել, հայտնվել, գեկուցվել, ենթադրվել, հայտարարվել, նկարագրվել, պատմվել և այլն:**

Եթե ասացական ու մտածական բայերը ստորոգյալի դեր կատարելու դեպքում ստորադաս նախադասությունը գերադասի հետ կարող է կապվել ոչ միայն հարաբերական բառով, այլև շաղկապով (ըստ որում շաղկապով կապակցությունն ավելի սովորական է), ապա այլ բայերի կրավորականը նշված դերով գործածվելու դեպքում կապակցումը կատարվում է միայն հարաբերական բառով: Ավելացնենք նաև, որ շաղկապով կապակցվելու դեպքում գերադաս նախադասության մեջ հարաբերյալ չի լինում, իսկ հարաբերականով կապակցվելու դեպքում գերադասի մեջ հարաբերյալ կարող է գործածվել կամ չգործածվել:

Հմմտ. Ասվել է, որ բոլորը պետք է գան (թե ովքեր պետք է գան):

Հաղորդվել է, որ (թե)...: Ենթադրվում է, որ (թե)...

Բայց՝ **Կառուցվել է (այն), ինչ որ նախատեսված էր: Թյուրիմացաբար ուղարկվել է (այն), ինչի կարիքը չէր զգացվում:**

գ) Անվանական բաղադրյալ կառուցվածքով.

Մեծ բարեբախտություն է, որ նա կարողացավ ազատվել այդ ծանր կացությունից: Բարի է նա, ով չի հիշեցնում իր բարությունը: Այսպիսի կիրառությամբ հաճախ են հանդես գալիս մի շարք բաղադրյալ կազմություններ, որոնք մոտենում են միադիմի ձևերին. **ինչպես՝ անհայտ է, հայտնի է, հասկանալի է, զարմանալի է, լավ է, հաճելի է, ցավալի է, հնարավոր է, անսպասելի է և այլն:**

Հանելի է, որ մենք դարձյալ հանդիպեցինք: Հասկանալի է, որ այդ ամենը ձեռք է բերվել մեծ ջանքերի շնորհիվ: Չարմանալի է, թե ինչու այդ փոքրիկ հարցին այդքան մեծ նշանակություն են տալիս:

Ենթակա ստորադաս նախադասության մեջ կարող են տեղ գտնել ժամանակի, պայմանի և այլ իմաստներ, որոնք, սակայն, չեն փոխում տվյալ ստորադաս նախադասության շարահյուսական բնույթը:

Այդպիսի ստորադաս նախադասությունները կապակցվում են համապատասխան իմաստ ունեցող շաղկապներով ու բառերով:

Ժամանակի իմաստ ունեցող ենթակա ստորադաս նախադասությունները գերադասի հետ կապակցվում են **եբբ** հարաբերականով, որին կարող է միանալ **որ** թարմատարը: *Պատահմամբ է, երբ մարդ տեսնում է այլ մարդու (ՊՍ):*

Պայմանի իմաստային երանգով ենթակա ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է **եթե, թե, թե որ** շաղկապներով:

Բոլորովին հանելի չէ, եթե մարդ պիտի այդ նույն բաներն ամեն անգամ կրկնի:

Կա նաև հավելադրությամբ կազմվող ենթակա ստորադաս նախադասությամբ կապակցություն. այս դեպքում խոսողի նպատակն է լինում շեշտել այս կամ այն առարկայի, հատկանիշի իմաստը: Այդ նպատակով պարզ նախադասության որևէ անդամը (իր լրացումներով կամ առանց դրանց) առանձնացվում է, դարձվում բաղադրիչ նախադասություն (քերականորեն՝ գերադաս), և այդպիսով ունենում ենք ենթակա ստորադաս նախադասությամբ բարդ ստորադասական նախադասություն, որն իր պարզ փոխակերպից տարբերվում է ոճական յուրահատկությամբ:

Ընդամենը հինգ տարի առաջ էր, որ այս թաղամասում առաջին շենքի հիմքն է դրվել (իմնտ. Ընդամենը հինգ տարի առաջ այս թաղամասում առաջին շենքի հիմքն է դրվել): Մեր բոլոր կենսական խնդիրների շարքում այսօր ամուսնական խնդիրն է, որ գայթակղության քար է դարձել (ՆԴ):

Ստորոգելի ստորադաս նախադասությամբ կապակցություն

Ստորոգելի ստորադաս նախադասությամբ կապակցությունը բնորոշվում է նրանով, որ գերադաս նախադասության մեջ լինում է ձևականորեն արտահայտված ստորոգելի՝ որպես հարաբերյալ, իսկ համապատասխան ստորադաս նախադասությունն արտահայտում է նրա բուն բովանդակությունը, այն է՝ բացահայտում է գերադաս նախադասության ենթակային հարաբերյալով վերագրված հատկանիշի էությունը:

Լավ ընկերը նա է, ով դժվար օրերիդ քեզ հեյր է (իմնտ. Լավ ընկերը դժվար օրերիդ քեզ հեյր եղողն է): Ողբալին այն է, որ գյուղերն ավերվում են, արտերը՝ փրորվում, այգիները՝ կփրորվում (ՂԱ): Երկրորդ պատճառն այն է, որ կյանքը կորցրել է իմ աչքում իր արժեքը (Մուր.):

Ստորոգելի ստորադաս նախադասությամբ կապակցությունն ունի հետևյալ կառուցվածքային հատկանիշները:

1. Սա, իհարկե, բարդ նախադասության իմաստյին փոխակերպն է և ոչ թե քերականական, որը կլինի հետևյալ կերպ. *Այս թաղամասում առաջին շենքի հիմքը դրվելը ընդամենը հինգ տարի առաջ էր:*

1. Ստորոգելի ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է **ինչ, ով, որը, ինչպես, ինչպիսին, ինչքան** և այլ հարաբերական բառերով, որ, թե շաղկապներով: Նշված հարաբերականներին կարող է միանալ **որ** թարմատարը՝ կազմելով **ինչ որ, ով որ, որը որ, ինչպես որ, ինչպիսին որ, որքան որ** և նման հարադասություններ:

2. Գերադաս նախադասության մեջ անպայման գործածվում է հարաբերյալ, որը հանդես է գալիս որպես այդ նախադասության ստորոգելի:

Իսկական գրողը նա է, ով քայլում է ժամանակի հետ: Նրա ամենամեծ սխալն այն է, որ չի ուզում հասկանալ իր սխալները:

Այս կառուցվածքում հարաբերյալի պարտադիր լինելը, ի տարբերություն այլ կառուցվածքների, բացատրվում է նրանով, որ գլխավոր նախադասության մեջ անհրաժեշտ է թեկուզև ձևականորեն արտահայտված ստորոգյալ (իսկ ուրիշ անդամ կարող է և չարտահայտվել, այլ դրսևորվել միայն ստորադաս նախադասությամբ):

Որպես հարաբերյալ գործածվում են ցուցական դերանունները՝ հարաբերականների ու շաղկապների հետ կազմելով հետևյալ զուգորդումները. **նա...ով (որ), այն... ինչ(որ), այնպես ... ինչպես (որ), այնպիսին... ինչպիսին (որ), այնքան...որքան (որ), այն... որ, այնքան... որ** և այլն:

Հարաբերյալներն իրենց բառական ու քերականական էությամբ հաճախ կանխորոշում են ստորադաս նախադասության քերականական բնույթը: Դա է պատճառը, որ միևնույն կառուցվածքի ստորադաս նախադասությունը մի կապակցության մեջ ստորոգելի ստորադաս կարող է լինել, մի այլ կապակցության մեջ՝ այլ: **Հմմտ. Մեր ցանկությունն այն է, որ աշխարհում լինի կայուն խաղաղություն (ստորոգելի):**

Մենք ուզում ենք, որ աշխարհում լինի կայուն խաղաղություն (ուղիղ խնդիր):

Մենք պայքարում ենք, որ աշխարհում լինի կայուն խաղաղություն (նպատակի պարագա):

3. Ստորոգելի ստորադաս նախադասությունը սովորաբար լինում է հետադաս և դրվում է հարաբերյալի մոտ: Այդպիսիք են վերոհիշյալ բոլոր օրինակները: Մակայն երբեմն ստորոգելի ստորադաս նախադասությունը գործածվում է նախադաս:

Հմմտ. Մեր ուզածը հենց այն է, ինչ որ դուք եք ասում: Ինչ որ դուք եք ասում, հենց այն է մեր ուզածը:

Մրցույթի հաղթողը նա է, ով շուր կհասնի վերջնակետին: Ով շուր կհասնի վերջնակետին, նա է մրցույթի հաղթողը:

Նկատելի է, որ երկրորդ տարբերակներում (որոնցում ստորոգելի ստորադաս նախադասությունը նախադաս է) առկա է շրջուն շարադասություն: Նախադաս կիրառությամբ ավելի քիչ են գործածվում շաղկապով կապակցվող ստորոգելի նախադասությունները:

Ստորոգելի ստորադաս նախադասությունը գերադաս նախադասությունը բնորոշում է տարբեր տեսակետներից՝ առարկայական, հատկանշային, պարագայական:

Առարկայական իմաստ ունեցող ստորոգելի ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության ենթակայի ով կամ ինչ լինելը:

Խելոքը նա է, ով կարողանում է հասկանալ իր թերությունները և վերացնել դրանք: Երջմարտությունն այն է, որ բոլոր ժողովուրդները ստեղծել են առակներ (Թս.):

Հատկանշային իմաստ ունեցող ստորոգելի նախադասությունը արտահայտում է գերադաս նախադասության ենթակայի ցույց տված առարկայի որակական ու քանակական հատկանիշներ:

Մեր քաղաքն այնպիսին է, ինչպիսին կուզեինք լինել: Կուրսի ուսանողների քանակն այնքան է, որքան նախապեսված է:

Պարագայական իմաստ ունեցող ստորոգելի ստորադաս նախադասությունները արտահայտում են պատճառական, տարածական և այլ հատկանիշներ:

Այս երևույթների արագ տարածվելը նրանից է, որ դրանք ժամանակին չեն կանխվել: Նա ծագումով այնտեղից է, որտեղից և դու ես:

Պարագայական իմաստ և մասնավորապես նպատակային հարաբերության երանգ արտահայտելու դեպքում հաճախ ստորադաս նախադասությունը փոխարինում է գերադաս նախադասության ստորոգյալի կազմում եղած կապվող բառին միայն: Դա այն պատճառով է, որ գերադաս նախադասության մեջ արտահայտված է լինում այն կապը, որով ձևավորվում է նաև պարագայական տվյալ իմաստը. այդ նույն կապը պահպանվում է նաև բարդ նախադասության պարզ փոխակերպի մեջ: **Հմմտ.** *Այս ամենը նրա համար է, որ մեր երեխաները լավ զգան: Այս ամենը մեր երեխաների լավ զգալու համար է:*

Ստորոգելի ստորադաս նախադասությամբ կապակցություններն են նաև **եթե ոչ** հարադրությամբ կապակցվող կազմությունները, որին գերադաս նախադասության մեջ համապատասխանում է **ոչ այլ ոք** (անձ ցույց տալու դեպքում) և **ոչ այլ ինչ** (իր ցույց տալու դեպքում)¹:

Դրանք ոչ այլ ոք էին, եթե ոչ ոստիկանի կողմից Դվնո սահմանում կարգած պահնորդները (Մուր.): Դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի ահազին գերան (Մուր.): Դրանց վրա եղողները ոչ այլ ոք էին, եթե ոչ մնացորդ երեսուն զինվորները (Մուր.):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԴԱՍ ԱՆԳԱՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր բնութագիր

Կան ստորադաս նախադասություններ, որոնք լրացնում են գերադաս նախադասության մեջ գործածված գոյականական անդամին: Գոյականական անդամ ասելով՝ նկատի են առնվում գոյականով, առարկա ցույց տվող դերանունով, գոյականաբար գործածված բառով արտահայտված անդամները:

¹ Տե՛ս Ն.Ա.Պատմասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, 1961, էջ 72:

Լուսնյակը շողշողում էր գետի մանրիկ ալիքների վրա, որոնք ասես արծաթափուլ անթիվ ձկներ լինեին՝ դեպի ծովը խայտացող (Բս.): Դուք, որ ձեր ամբողջ կարողությունն ու եռանդը ավիրել էք այդ մեծ գործին, արժանի եք ամենաջերմ վերաբերմունքի և ուշադրության: Քաղաքի փողոցներից ոչ մեկը չունի այն առանձնահատուկը, միակ և անկրկնելի, ինչ որ այս քյորինացաբար փողոց կոչվող տարածությունը (Բակ.):

Գերադաս նախադասության գոյականական անդամին լրացնում են **որոշիչ, բացահայտիչ, հատկացուցիչ** ստորադաս նախադասությունները:

Այս ստորադաս նախադասությունների լրացյալները գերադաս նախադասության մեջ կարող են կատարել շարահյուսական տարբեր պաշտոններ: Դա երևում է նաև վերոհիշյալ օրինակներից. առաջին օրինակում լրացյալ գոյականական անդամը (վրա կապի հետ միասին) տեղի պարագա է, երկրորդ օրինակում՝ ենթակա, երրորդում՝ ուղիղ խնդիր:

ՈՐՈՇԻՉ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՐ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Որոշիչ ստորադաս նախադասությունը լրացնում է գերադաս նախադասության գոյականական անդամին և այն բնութագրում է այս կամ այն տեսակետից՝ որակի, չափի և այլն:

Ահա Մատենադարանը, որը իր մեջ ամփոփում է դարերի ընթացքում ստեղծված ձեռագիր գանձերը: Նա այնպիսի ընկեր է, որին բոլորն են սիրում: Տիեզերանավի թռիչքը տևեց այնքան ժամանակ, որքան որ նախատեսված էր:

Որոշիչ ստորադաս նախադասությունը ունի հետևյալ կառուցվածքային հատկանիշները:

1. Որոշիչ ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է առավելապես հարաբերական բառերով՝ **որ(ը), ինչպիսի, որպիսի, ինչ, որքան, ինչքան, երբ, որտեղ, ուր, ինչպես և որ, թե** շաղկապներով:

2. Գերադաս նախադասության մեջ մեծ մասամբ գործածվում են հարաբերյալներ, որպես ձևական որոշիչներ, որոնք են՝ **այն, այնպիսի, նույն, նույնպիսի, այնքան, այնչափ, նույնքան, նույնչափ, մի**: Սրանք, վերաբերելով համապատասխան հարաբերականներին, կազմում են զուգորդումներ (**այն...որ(ը), այնպիսի... ինչպիսի, այնքան...որքան, նույնքան...որքան** և այլն), որոնցով սերտանում է բարդ նախադասության գերադաս և ստորադաս բաղադրիչների կապը:

Նա այժմ իրեն զգում է այն զինվորի պես, որն ավարտել էր մի անսպասելի ու ահավոր գոտենարտ (ՍԽ): Նրա գրածն այնպիսի ստեղծագործություն չստացվեց, ինչպիսին ինքն էր ցանկանում: Ինչ էք ուզում մի մարդուց, որին խայտառակեցիք ամբողջ շրջանում և նույնիսկ տնից դուրս արիք (ՍԽ):

Երբեմն հարաբերյալները զուգորդումներ են կազմում շաղկապների հետ:

Գարեգին Մովսիսյանը այնպիսի մարդ չէր, որ ընդունակ լիներ սողոսկել ուրիշի ընտանիքը (ՍԽ): Այնքան զիրք պատվիրեք, որ բոլոր աշակերտներին մեկական օրինակ հասնի:

Երբեմն հարաբերյալի ու հարաբերականի զուգորդումը ձեռք է բերում որոշակի յուրահատկություն՝ պայմանավորված ստորադաս նախադասության որոշիչային

բնույթով: Այսպես՝ **որտեղ** հարաբերականին որոշիչ ստորադաս նախադասության մեջ համապատասխանում է ոչ թե **այնտեղ**-ը (հմմտ. պարագայական կապակցության դեպքում **այնտեղ...որտեղ** գուգորդումը), այլ **այն** (**նույն** և **այլն**) հարաբերյալը՝ **այն...որտեղ**:

Նա շտապեց բանալ այն սենյակի դուռը, որտեղից ուրախ խոսակցության և կանացի ծիծաղի ձայներ էին լսվում (Մուր.): Ջրուցելով նրանք հասան այգիներով շրջապատված այն փոքրիկ տունը, որտեղ ապրում էր Մարգարյանը (ՄԽ):

Այսպիսի կապակցություններում հարաբերականը ըստ էության վերաբերում է ոչ թե հարաբերյալին՝ առանձին վերցրած, այլ հարաբերյալին ու նրա լրացյալի կապակցությանը՝ միասին վերցրած: Ինչպես՝ **այն սենյակը... որտեղից, այն տունը...որտեղ**:

Որոշիչ ստորադաս նախադասությամբ կապակցության մեջ հարաբերյալի գործածությունը ոչ միշտ է անհրաժեշտ: Հարաբերյալ չի գործածվում հատկապես այն դեպքում, երբ՝ **ա)** որոշվող գոյականը ցույց է տալիս միակ առարկան (առհասարակ կամ տվյալ պարագայում), **բ)** որոշվող գոյականը հատուկ անուն է, **գ)** խոսողը չի ցանկանում առանձնապես շեշտել, համանման մյուս առարկաներից առանձնացնել տվյալ առարկան:

ա) Մեր ավտոմատ կայանը առաջինը հասավ Լուսին, որը մինչ այդ անմատչելի էր մարդու համար: Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես (ԵՉ): Արտակը դեմքը դարձրեց դեպի դաշտը, որտեղից լսվում էին կատաղի կանչեր (ԳԳ): բ) Միջանցքում հանդիպեց Էմմային, որը նույնպես պատրաստվում էր դուրս ելնել (ՍԶ): Նա դժգոհ էր Գարեգինից, որը... հեռացված նախազահին մի այդպիսի կարևոր գործ է առաջարկում (ՄԽ): գ) Եղել են մարդիկ, որ զարմանքից ու հիացմունքից չեն կարողացել խոսել (ԵՉ): Հմմտ. Եղել են այնպիսի մարդիկ, որոնք զարմանքից ու հիացմունքից չեն կարողացել խոսել:

Չի բացառվում, որ նշված առաջին ու երկրորդ դեպքերում ևս երբեմն հատուկ շեշտելու նպատակով գործածվի հարաբերյալ: **Հմմտ. Սա այն Լուսինն է, որին տասնյակ դարեր շարունակ մարդ խորհրդավորությամբ նայել է միայն հեռավոր երկրից, իսկ այժմ արդեն նվաճել է այն:**

3. Որոշիչ ստորադաս նախադասությունը սովորական շարադասությամբ գործածվում է իր լրացյալից հետո: Այն սովորաբար լինում է հետադաս. հաջորդում է գերադաս նախադասությանը:

Ռուբենը գնաց դեպի այն ժայռը, որտեղ Գարեգինը մի խումբ կոմերիպականների հեպ պայքեցնող ուժանակներ էր դնում ժայռի լանջին փորած անցքի մեջ (ՄԽ): Նա թողնում էր այն զնդանը, ուր ամբողջ յոթ փարի փանջվել էր (Բ):

Որոշիչ ստորադաս նախադասությունը լինում է նաև միջադաս, երբ ստորադաս նախադասության լրացյալ գոյականական անդամը գործածված է գերադաս նախադասության սկզբում կամ մեջտեղում, և ոճական կամ քերականական տեսակետից անհրաժեշտ է, որ լրացնող նախադասությունը դրվի լրացյալին մոտ:

Հյուրանոցի այն սլախատում, ուր հերքապահություն էր անում նա, վիրավորներից ոչ մեկը այնքան նամակներ չէր գրել տալիս, որքան այդ երիտասարդը (ՍԶ): Այն օրից, երբ հրշակվեց հայրենիքի պաշտպանությունը, Գարեգինն այլ աչքով էր նայում զինվորին և այլ գին էր տալիս նրա կյանքին (ԳԳ):

Համեմատաբար սակավ դեպքերում որոշիչ ստորադաս նախադասությունը գործածվում է նախադաս:

Ինչպիսի վերաբերմունք նա ցուցաբերում էր մեր նկատմամբ, մենք նույնպիսի ջերմ վերաբերմունքով էինք պատասխանում նրան:

Որոշիչ ստորադաս նախադասությունն իմաստային տեսակետից շատ բազմազան է: Նրա արտահայտած բերականական հիմնական իմաստներն են՝ **առարկայի բուն հատկանիշ, պարագայական հատկանիշ, խնդրային հատկանիշ:**

Առարկայի բուն հատկանիշ (ներքին ու արտաքին, որակական ու քանակական) արտահայտող որոշիչ ստորադաս նախադասությունները բնութագրում են առարկան որակի, ձևի, չափի և նման այլ առումներով:

Բնության ծոցում մեծացած Մանուշի գեղեցկությունն այնպիսի թովչանք ուներ, որ մեկ անգամ տեսնողն այլևս չէր մոռանա (ՍԽ): Տեսնում է Աշխենին ու Եվային այն դրությամբ, ինչպես որ դրանք ներկայանում էին նրան այդ երեկո (ՆԳ): Հորիզոնի վրա կախված էր մի վիթխարի ամպ, որը հեղափոխեց կաթի գույն սպացավ (ՍԽ): Այնքան մտերմություն էր ցույց տալիս, որ մինչև անգամ պատմում էր իր անձնական ամենամոտերական գաղտնիքը (ՆԳ):

Որոշիչի այս տեսակին է հարում, այսպես կոչված, **անվանողական որոշիչը**, որի դեպքում ստորադաս նախադասությամբ տրվում է որոշյալի անվանումը (հատուկ կամ հասարակ անունով):

Բայց նույնն է հղիացած այս քաղաքը, որ կոչվում է Պոլիս (ԵՉ): Ի՞նչ է այն զգացումը, որ սեր էր կոչվում (ՆԳ):

Պարագայական որոշիչ ստորադաս նախադասության մեջ արտահայտվում են պարագայական տարբեր իմաստներ՝ տեղի, ժամանակի, նպատակի և այլն: Իհարկե, այսպիսի որոշիչ ստորադաս նախադասությունները ևս վերջին հաշվով բնութագրական արժեք ունեն, բայց դրանք ոչ թե բնորոշում են որոշյալի ցույց տված առարկայի բուն էությունը, այլ այն որոշում են պարագայական առումով:

Այսպիսի որոշիչ ստորադաս նախադասության և լրացյալի միջև գոյություն ունի իմաստային-բերականական որոշակի համապատասխանություն ու կապ: Այսպես՝ ժամանակային որոշիչ ստորադաս նախադասությունը լրացնում է ժամանակի անուններին կամ այնպիսի բառերի, որոնց մեջ կա, կարող է ենթադրվել ժամանակի իմաստ:

Այստեղ ամեն բան հիշեցնում է այն օրերը, երբ ինքը Քարեգինի հեկ սովորում էր գյուղում (ՍԽ): Դա այն ժամանակ էր, երբ նա դեռ կյանքից ոչինչ չէր հասկանում: Նրանք ցավով են հիշում այն հանդիպումը, երբ իրար այլևս ասելու ոչինչ չունեին:

Ժամանակային իմաստ արտահայտող ստորադաս նախադասություններից առաջին երկուսի լրացյալը ժամանակի անուն է (օր, ժամանակ), իսկ վերջինինը՝ այնպիսի գոյական (հանդիպում), որի իմաստը առնչվում է ժամանակի հետ: Այսպիսի լրացյալ կարող են դառնալ, օրինակ, **ժողով, դաս, պատերազմ, ուղևորություն, երթևեկություն, զբոսանք, ընթացք, ճաշկերույթ** և գործընթացային իմաստ ունեցող շատ գոյականներ:

Այսպիսի լրացյալներն այլ դեպքում կարող են ընդունել բուն հատկանիշը բնութագրող ստորադաս նախադասություն: **Հմտ. Ա. Նա երանությամբ է հիշում այն օրը, երբ առաջին անգամ ոտք դրեց դպրոց: Բ. Նա երանությամբ է հիշում այն օրը, որը նրա կյանքում շար որոշիչ դեր է կատարել:**

Նույնը վերաբերում է նաև պարագայական (տեղի և այլ) որոշիչ ստորադաս նա-

խաղասություններին: **Հմտ. Մենք մտանք այն փունը, որտեղ ապրել ու սրեղծագործել է մեծ գրողը: Մենք մտանք այն փունը, որը կառուցվել է վերջերս և քաղաքի զարդն է:**

Այժմ առանձին-առանձին բնութագրենք պարագայական որոշիչ նախադասությամբ կապակցությունները:

Ժամանակի իմաստ ունեցող որոշիչ ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության գոյականական անդամը բնորոշում է այնպիսի գործողությամբ կամ եղելությամբ, որ կատարվում է, լինում է լրացյալի ցույց տված ժամանակում, դրանից առաջ կամ հետո:

Ժամանակային որոշիչ ստորադաս նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է **երբ, երբ որ, որի ժամանակ, որի ընթացքում, որից առաջ, որից հետո** բառերով ու կապակցություններով:

Նա երանությամբ ու միաժամանակ թախիծով է հիշում իր կյանքի այն տարիները, երբ նա եղել է գյուղում, գեղեցիկ բնության ծոցում: Նա միշտ ցավով է հիշում այն օրը, որից հետո այլևս չեն հանդիպել:

Տեղի իմաստով որոշիչ ստորադաս նախադասությունն արտահայտում է գործողություն, եղելություն, որ կատարվում, լինում է լրացյալով կամ նրա հետ տարածական որևէ հարաբերությամբ ցույց տրվող տեղում: Այսպիսի կապակցությունը ձևավորվում է հետևյալ բառերով ու կապակցություններով՝ **որտեղ** (որտեղից, որտեղով և այլն), **ուր, որով, որի մոտ, որից հետո, որի վրա, որի տակ** (առհասարակ որ դերական և տեղի իմաստ ունեցող կապերի կապակցություններով):

Ես նորից կուզեի լինել Արցախի լեռներում, որտեղ անց են կացրել իմ մանկությունն ու պատանեկությունը: Գարեգինը բացեց ծրարը, որի մեջ մի ուրիշ եռանկյունի ծրար էլ կար (ՄԽ): Մի թիթեղե ցուցանակ ունի, որի վրա գրված է ռուսերեն «հաշտարար դատավոր» (ԵԶ): Խոտ չի բուսնի այլևս այն երկրում, որով անցել է Աթիլի հին ձին (ԵԶ):

Տեղի որոշիչ ստորադաս նախադասությունը գլխավորի հետ կարող է կապվել նաև շաղկապով, և այդ ժամանակ ստորադաս նախադասության մեջ գործածվում են լրացյալի հետ կապված տարածական հարաբերություն նշող բառեր կամ կապակցություններ (**մեջ, վրա, տակ, նրա մեջ, նրա վրա** և այլն):

Բա սա գո՞ւմ է, որ մենք մեջն ապրանք ենք սլահում (ՄԽ):

Այս վերջին կառուցվածքն ավելի շատ հատուկ է ժողովրդախոսակցական ոճին:

Նպատակային որոշիչ ստորադաս նախադասությունը ցույց է տալիս այն նպատակը, որին ծառայում է (ծառայեցվում է) լրացյալի ցույց տված առարկան:

Մի քանի երկրներ հանդես են եկել համատեղ բանաձևով, որով պահանջվում է անկախություն փալ բոլոր գաղութներին: Գիտնականներն ստեղծել են նոր արբանյակ, որը պետք է կապարի օդերևութաբանական հեղափոխություններ:

Խնդրային որոշիչ ստորադաս նախադասությունն արտահայտում է խնդրային տարբեր հարաբերություններ (անջատման, միջոցի, վերաբերության և այլն): Ինչպես՝

Մա մի հոյակապ ծառ է,

}

որից մի ճյուղ էի պոկել:

որով մենք միշտ հիացել ենք:

որի մասին շատ էի լսել:

Այսպիսի ստորադաս նախադասությունները չեն շոշափում լրացյալի ցույց

տված առարկայի էությունը, նրա ներքին ու արտաքին հատկանիշները, այլ արտահայտում են նրա՝ որպես խնդրային հարաբերության մեջ գտնվող առարկայի հետ տարբեր առնչություններ ունեցող գործողություններ, եղելություններ:

Հասրաթյանը նստեց Գարեգինի դիմաց՝ կողքը դեպի Մաշտոյանը, որին ասես չէր նկատել (ՄԽ): Յամաթել է երջանկության այն աղբյուրը, որին պապական ժարդու պես այնքան կարոպով դիմում է ինքը (ՄԽ): Ու տեսա մի երկիր, որը դու լքեցիր խուժումից մեր սև (ԵԶ):

Ինչպես երևում է վերոհիշյալ օրինակներից, խնդրային որոշիչ ստորադաս նախադասությունների իմաստային տարբեր հարաբերությունները դրսևորվում են հարաբերական բառերով, ավելի ճիշտ՝ սրանց ու ստորադաս նախադասությունների ստորոգյալի հարաբերությամբ: Այդ հարաբերությունն էլ անցնում է գերադաս նախադասության այն անդամին (լրացյալին), որին վերաբերում է հարաբերականը:

ՀԱՏԿԱԳՈՒԳԻՉ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿԳՈՒԹՅՈՒՆ

Հատկացուցիչ ստորադաս նախադասությունն արտահայտում է գլխավոր նախադասության մեջ ունեցած լրացյալի ցույց տված առարկայի պատկանելությունը, վերաբերությունը:

Այս հողվածը նրանց աշխատանքի մասին է, ովքեր դասարանում սրացած գիրելիքները մարմնավորել են դպրոցի համեստ լաբորատորիայում և արհեստանոցում և իրենց հմուտ չեղբերով սրեղծում են հոյակապ սարքեր (ՄՀ): Ովքեր ժամանակին չեն ներկայացել, նրանց քննությունը հետաձգվում է:

Հատկացուցիչ ստորադաս նախադասությամբ կապակցությունը ունի կառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Ստորադաս նախադասությունը գլխավորի հետ կապվում է **ով, որ, ինչ** հարաբերականներով, **որ, քե** շաղկապներով:

Գերադաս նախադասության մեջ գործածվում է հարաբերյալ, որը ձևականորեն կատարում է հատկացուցիչի դեր, և որի բովանդակությունն ըստ էության արտահայտվում է ստորադաս նախադասությամբ: Հարաբերյալի դերով սովորաբար հանդես է գալիս **նա** դերանվան սեռականը, ինչպես և **այն բանի** կապակցությունը: Հարաբերյալի սեռական ձևով և համապատասխան իմաստով որոշվում է ստորադաս նախադասության քերականական բնույթը:

Ովքեր աշխատում են գյուղական պայմաններում, նրանց կենսաթոշակի հարցը լուծվում է այլ սկզբունքներով (ՄՀ): Այնուհետև հրապարակվում են նրանց անունները, որոնց աշխատանքներն արժանացել են մրցանակի (ՄՀ): Սա նրա պարզևն է, ով կհաղթի մրցության բոլոր ձևերում: Սա այն բանի անմիջական հետևանքն է, ինչի մասին մենք խոսում էինք: Այս ամբողջ դրականը նրա արդյունքն է, որ բոլորդ աշխատել եք անձնվիրաբար: Ինչ որ մենք պետք է ստանայինք, ձեր տեղափոխածը նրա մի փոքր մասն է միայն:

Ինչպես երևում է, եթե հատկացուցիչ ստորադաս նախադասությունն անձ է ցույց տալիս, այդ դեպքում գործածվում են սովորաբար **նա** հարաբերյալը և **ով** հարաբերականը: Իսկ եթե ստորադաս նախադասությունն իր, երևույթ է ցույց տալիս, գործածվում են **այն բանի, նրա** (ցուցական դերանվան արժեքով) հարաբերյալները, **ինչ (որ)** հարաբերականը: Վերջին դեպքում կապակցման դերով գործածվում են նաև շաղկապներ:

Հարաբերականները կարող են գործածվել տարբեր հոլովածներով, և դա պայմանավորված է ոչ թե ստորադաս նախադասության քերականական դերով, այլ ստորադաս նախադասության մեջ հարաբերականի շարահյուսական կապով: Դա կարելի է նկատել հետևյալ օրինակում.

Հատուկ նշվեցին նրանց անունները, } **որոնք ճամբարում աչքի են ընկել կարգապահությամբ:**
որոնց վարքագիծն օրինակելի է եղել:
որոնցից գոհ են եղել բոլորը:

Հատկացուցիչ ստորադաս նախադասությունը սովորաբար ունենում է հետադաս շարադասություն: Սակայն այն կարող է դրվել նաև նախադաս:

Հմմտ. Մեծ էր մանավանդ նրանց ուրախությունը, ովքեր աշխատել էին ճանապարհի վրա, (Մեծ): Ովքեր աշխատել էին ճանապարհի վրա, նրանց ուրախությունը մեծ էր:

Գոհացուցիչ են նրանց պատասխանները, ովքեր ուսումնական փարվա ընթացքում աշխատել են սխտեմադիկարար: Ովքեր ուսումնական փարվա ընթացքում աշխատել են սխտեմադիկարար, նրանց պատասխանները գոհացուցիչ են:

Ինչպես կարելի է նկատել, բերված զուգահեռ օրինակներից ավելի սովորական ու նախընտրելի են նախադաս շարադասվածները, թեև հետադասները չեն հակասում օրինաչափությանը:

Հատկացուցիչ ստորադաս նախադասությունը նախադասության անդամ հատկացուցիչի պես ունի քերականական լայն իմաստ: Այն արտահայտում է՝

ա) պատկանելություն. ինչպես՝ Մենք որոշեցինք գիշերել նրա տանը, ով առաջինը մեզ հրավիրեց:

բ) վերաբերություն. ինչպես՝ Դա այն բանի ապացույցն է՝ որ մեզ մոտ ամեն ինչ կարգին է:

գ) սերում. ինչպես՝ Այս օրիորդը նրա դուստրն է, որի հեղքը քեզ նոր ծանոթացրի:

դ) ամբողջի և մասի հարաբերություն. ինչպես՝ Մեր դիտածը նրա դեռ մի փոքր մասն է, ինչին որ պիտի ծանոթանանք այսօր:

Հատկացուցիչ ստորադաս նախադասության հետ երբեմն շփոթում են որոշ կարգի որոշիչ նախադասություններ: Ահա շփոթության տեղիք տվող կառուցվածքի մեկ բնորոշ օրինակ. *Ես ճանաչեցի նրան այն օրից, երբ մենք գտնվում էինք դժվարին պայմաններում:* Թեև այս և նման նախադասությունների փոխակերպման դեպքում մենք ունենում ենք սեռական հոլովով լրացում (*Ես ճանաչեցի նրան դժվարին պայմաններում մեր գտնվելու օրից*), բայց և այնպես այդպիսի ստորադաս նախադասությունը ոչ թե հատկացուցիչ է, այլ որոշիչ. իսկ պարզեցված փոխակերպում առկա է սեռականով որոշիչ: Դա երևում է ոչ միայն ստորադաս նախադասության քերականական հարաբերությունից, այլև հարաբերյալից (**այն**), որը կատարում է որոշիչի դեր:

Այսպիսի դեպքերում որպես օժանդակ միջոց կարող է օգտագործվել նաև հարցումը: Եթե կասկած հարուցող ստորադաս նախադասությունը պատասխանում է **ինչպիսի՞, ո՞ր** հարցերին, ապա այն որոշիչ է, իսկ եթե այն պատասխանում է **ինչի՞, ո՞ւմ** հարցերին, ուրեմն հատկացուցիչ է: Վերոհիշյալ օրինակում ստորադաս նախադասությունը պատասխանում է **ո՞ր** հարցին. սա նույնպես հաստատում է, որ իսկապես այն որոշիչ է:

ԲԱՅԱՀԱՅՏԻՉ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բացահայտիչ ստորադաս նախադասությունը բացահայտում է գերադաս նախադասության գոյականական անդամի արտահայտած առարկայի ով կամ ինչ լինելը:

Եթե պարզ նախադասության անդամ բացահայտիչն իր շարադասական-շարահյուսական հատկանիշներով որոշակիորեն տարբերակված է որոշիչից, բարդ նախադասության կառուցվածքում բացահայտիչ ու որոշիչ ստորադաս նախադասությունները այդպիսի որոշակիությամբ սահմանազատված չեն:

Դիտենք հետևյալ օրինակները:

Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը, օրեցօր ծաղկում է.

Հայաստանի մայրաքաղաք Երևանը օրեցօր ծաղկում է:

Երևանը, որ Հայաստանի մայրաքաղաքն է, օրեցօր ծաղկում է:

Առաջին ու երկրորդ օրինակների տարբերակված բացահայտիչն ու որոշիչը չունեն զուգահեռ շարահյուսական տարբերակված համանիշներ բարդ նախադասության մեջ: Միևնույն ստորադաս նախադասությունը (*որ Հայաստանի մայրաքաղաքն է*) կարող է ընկալվել թե՛ որպես որոշիչ, թե՛ որպես բացահայտիչ. թեև ավելի բացահայտիչ կարելի է համարել:

Այնուամենայնիվ, բացահայտիչ ստորադաս նախադասությունն ունի որոշ յուրահատկություններ, որոնցով տարբերվում է որոշիչ ստորադաս նախադասությունից:

Առհասարակ բացահայտիչ ստորադաս նախադասության հարցում կարևոր դեր ունեն թե՛ լրացում հանդիսացող նախադասության էությունն ու արտահայտությունը, թե՛ լրացյալի արտահայտությունը: Այստեղ կարևորություն է ստանում այդ երկուսի ոչ միայն տրամաբանական հարաբերությունը, այլև քերականական արտահայտությունը: Ընդհանրապես բացահայտիչ երկրորդական նախադասությունը ավելի առարկայական բնույթի լրացում է, իսկ որոշիչն ավելի հատկանշային լրացում է:

Դպրոցի տնօրենը, որը միաժամանակ հայոց լեզվի մեր ուսուցիչն է, շատ սիրված է բոլորիս կողմից:

Դպրոցի տնօրենը, որը միաժամանակ մեզ հայոց լեզու է դասավանդում, շատ սիրված է բոլորիս կողմից:

Միևնույն միտքն արտահայտող այս երկու օրինակներից առաջինի ստորադաս նախադասությունը առարկայական իմաստ ունի, որ դրսևորված է **ուսուցիչն է** անվանական բաղադրյալ ստորոգյալով, և բնույթով բացահայտիչ է: Մինչդեռ երկրորդ օրինակի ստորադաս նախադասությունը հատկանշային (գործողության) իմաստ ունի, որ դրսևորված է **դասավանդում է** բայական ստորոգյալով, և բնույթով որոշիչ է:

Սակայն հատկանշային բնույթի ստորադաս նախադասությունը, որ բերված օրինակում որոշիչ է, մի այլ դեպքում կարող է լինել բացահայտիչ՝ պայմանավորված բացահայտյալի խոսքիմասային, բառական-կապակցելիական յուրահատկությամբ:

Չեզ, որ մեզ հայոց լեզու եք ուսուցանել տարիներ շարունակ, մենք շատ բանով ենք պարտական:

Այս օրինակի ստորադաս նախադասությունը բացահայտիչ է, և դա պայմանավորված է նրանով, որ լրացյալն արտահայտված է դերանունով. դերանունն իր

չտարբերակված, ընդհանուր իմաստի պատճառով որոշիչ չի ընդունում, նրա իմաստը կարիք ունի ոչ թե որոշիչով բնութագրվելու, այլ բացահայտիչով բացահայտվելու: Այսպիսով՝ եթե լրացյալն այսպիսի կառուցվածքում արտահայտված է լինում դերանունով, ստորադաս նախադասությունը, որպես կանոն, լինում է բացահայտիչ:

Մենք, որ նոր էինք եկել քաղաք, մեզ զգում էինք անծանոթ, բայց ցանկալի միջավայրում: Դու, որ այն ժամանակ նորավարտ մասնագետ էիր, նկատելիորեն վստահ էիր քո ուժերի վրա: Նորեկներից մեկը, որը միակ անծանոթն էր, անվստահ քայլերով մոտեցավ մեր խմբին:

Նշված երևույթը վերաբերում է ոչ միայն դերանուններին, այլև ուրիշ բառերի, որոնք կամ առհասարակ որոշիչ չեն ընդունում, կամ որոնց վրա չի կարող դրվել ստորադաս նախադասության ստորոգելին՝ որպես որոշիչ:

Ընթերցարանում պարապում էին աշակերտներից երկուսը, որոնք դասարանի ամենալավ սովորողներն են (հմմտ. Ընթերցարանում պարապում էին այն աշակերտները, որոնք դասարանի ամենալավ սովորողներն են): Արանը պատմեց ճանապարհին իր հետ պատահածը, թե ինչպես է հանդիպել ճանապարհը կորցրած անծանոթների և օգնել է նրանց:

Այսպիսով՝ բուն բացահայտիչ ստորադաս նախադասությամբ կապակցության կառուցվածքի մեջ որոշիչ դեր են կատարում ստորադաս նախադասության ստորոգյալի կառուցվածքն ու լրացյալի բառաբերականական բնույթը: Բացահայտիչ ստորադաս նախադասության ստորոգյալը մեծ մասամբ լինում է բաղադրյալ՝ արտահայտված առարկա նշանակող բառերով (գոյականով, դերանունով): Բայով ու հատկանիշ ցույց տվող բառերով արտահայտված ստորոգյալ ունեցող ստորադաս նախադասությունը սովորաբար լինում է բացահայտիչ այն դեպքում, եթե լրացյալն արտահայտված է դերանունով կամ որոշիչ չընդունող այլ բառերով:

Բուն բացահայտիչ ստորադաս նախադասությունները գլխավորի հետ կապվում են գերազանցապես **որ**, **ինչպես** և **թե** շաղկապներով **որ (ը)**, **ինչ**, **ով** հարաբերականներով: Գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ չի գործածվում:

Բուն բացահայտիչ ստորադաս նախադասությունը լինում է հետադաս:

Մասնավորող պարագայական բացահայտիչ ստորադաս նախադասությունը լրացնում է հատկապես ժամանակի ու տեղի պարագաներին: Իր ընդհանուր քերականական արժեքով այսպիսի նախադասությունը նման է պարզ նախադասության համապատասխան լրացումներին (մասնավորող պարագայական բացահայտիչին), միայն թե լրացյալի իմաստը բացահայտելու ավելի լայն քերականական հնարավորություններ ունի:

Ավելի լայն տարածում ունի ժամանակի պարագային լրացնող մասնավորող բացահայտիչը, որի լրացյալը սովորաբար լինում է ժամանակի անուն:

Ուշ գիշերին, երբ աքաղաղները կանչել սկսեցին, նախարարները անկողին մտան (ԳԳ): Իրիկնադեմին, երբ աղջամուղջը մոխրագույն շղարշի նման ծածկեց երկիրը, Վարդանը ցանկություն հայտնեց մեկնելու (ԳԳ):

Ինչպես երևում է բերված օրինակներից, մասնավորող պարագայական բացահայտիչը գերադաս նախադասության հետ կապվում է **երբ** հարաբերականով:

Ժամանակի իմաստ ունեցող ստորադաս նախադասությունը ոչ միշտ է ժամանակի պարագային լրացնելիս կատարում բացահայտիչի դեր. այդ դեպքում այն կարող է հանդես գալ որպես որոշիչ ստորադաս նախադասություն, եթե լրացյալն ունի որոշիչ հարաբերյալ:

Հմնտ. Այն օրից, երբ նա եկավ մեզ մոտ, ամեն ինչ կարգի ընկավ: (Նրա մեզ մոտ գալու օրից ամեն ինչ կարգի ընկավ. որոշիչ ստորադաս նախադասություն):

Երկուշաբթի օրից, երբ նա եկավ մեզ մոտ, ամեն ինչ կարգի ընկավ: (Երկուշաբթի օրից՝ նրա մեզ մոտ գալուց, ամեն ինչ կարգի ընկավ. մասնավորող պարագայական բացահայտիչ նախադասություն):

Տեղի պարագային լրացնող մասնավորող պարագայական բացահայտիչները համեմատաբար քիչ են գործածվում: Դրա պատճառն այն է, որ տեղի անունները առարկա ցույց տվող գոյականների պես լրացյալի դերում հանդես գալիս ավելի հաճախ որոշիչ են ընդունում: Այնուամենայնիվ, տեղի պարագաները հաճախ են ունենում մասնավորող բացահայտիչ:

Արտերից դեմը, որտեղ իրար թև թևի փակած կանգնած էին մայրամուտի շողերից հրավառված սարերը, երևում էին այն փոքրիկ ամրոցների հետքերը (ՍԽ): Հրազդանի աջ ափին, որտեղ այժմ բնակելի մի մեծ քաղամաս է կառուցվել, տարիներ առաջ ամայի անապատ էր: Նրանց տունը գտնվում էր գյուղի ծայրամասում, ուր այժմ գյուղական ակումբն է:

Տեղի մասնավորող պարագայական բացահայտիչը գերադաս նախադասության հետ կապվում է որտեղ, ուր հարաբերական բառերով:

Մասնավորող պարագայական բացահայտիչ ստորադաս նախադասությունը չունի այն տարբերակվածությունը, ինչ որ պարզ նախադասության մասնավորող պարագայական բացահայտիչը: Այդ անդամի՝ ստորադաս նախադասությամբ արտահայտված տարբերակը (մանավանդ տեղի հարաբերություն արտահայտելու դեպքում) հաճախ նման է լինում որոշիչ ստորադաս նախադասությանը, մինչդեռ պարզ նախադասության համապատասխան անդամը այդպիսի շփոթության տեղիք չի տալիս:

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր բնութագիր

Բայական անդամի լրացում ստորադաս նախադասությունները լրացնում են թե՛ միայն բայով արտահայտված, թե՛ իր կազմի մեջ բայական բաղադրիչ ունեցող անդամի: Մաքուր բայական լրացյալներ են խոնարհված բայով արտահայտված պարզ ստորոգյալը, բայական բաղադրյալ ստորոգյալը, դերբայով արտահայտված անդամը:

Սրանց լրացնող ստորադաս նախադասություններն ընդհանուր առմամբ համապատասխանում են պարզ նախադասության բայական անդամի լրացումներին՝ խընդիրներին ու պարագաներին:

Շարմաղ Բիբին շլսեց, թե զանգերն ինչպես լոնցին (Բակ.): Երբ սկսում են պարել իրենց սիրամարզի պարը, երկնքում լուսնյակն է երևում (ՎՏ): Մենք ուզում ենք, որ ազապ հողի վրա ազապ լինի աշխատանքը (ՎՏ): Դեռ չի սասած ընկույզներից կաղաղ լցրեց կարասի մեջ՝ Գարեգինին բացատրելով, որ դա օղին ծիրանագույն է դարձնում (ՍԽ):

Առաջին օրինակում ստորադաս նախադասությունը լրացնում է բայական պարզ ստորոգյալի (չլսեց), երկրորդ օրինակում՝ բայական բաղադրյալ ստորոգյալի (սկըսում են պարել), երրորդում՝ դերբայով արտահայտված լրացման (բացատրելով):

Բայական անդամի լրացում հանդիսացող ստորադաս նախադասությունները, բացի պարզ նախադասության համապատասխան լրացումների հետ ունեցած նըշված համապատասխանությունից, ունեն նաև տարբերություն. բայական անդամն ունի նաև ենթակա ստորադաս նախադասություն լրացումը, որը քերականորեն կապվում է գերադաս նախադասության ստորոգյալի հետ և լրացնում է նրան:

Ով որ սարանա չէր, նրա կարծիքով հիմար էր (Բ): Անհրաժեշտ է, որ ամեն մարդ լավ գիտակցի իր ոչ միայն իրավունքները, այլև պարտականությունները: Նրան քվաց, թե աղջիկն ինքը մի գունավոր նախ է գորգի վրա (Բակ.):

Անվանական բաղադրյալ ստորոգյալները նույնպես կարող են ունենալ բայական անդամի լրացումներ՝ խնդիրներ ու պարագաներ:

Այդ մասին մտածելն արդեն ուշ է, քանի որ բոլորն արդեն գնացել են: Այժմ ամեն ինչ բարեհաջող է, որովհետև նախապարտապահան ամեն մի աշխատանք կատարվել է: Նա լավ մարդ է, որովհետև լավ դաստիարակություն է ստացել:

Սակայն բաղադրյալ ստորոգյալը կարող է ստանալ նաև գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասություն, որը մասնավորապես վերաբերում է ստորոգյալի գոյականական բաղադրիչին:

Սա իմ ուսուցիչն է, որին ես շատ եմ պարտական: Սա այնպիսի գիրք է, որ միանգամից կլանում է ընթերցողին:

Բայական անդամի լրացում ստորադաս նախադասությունը իմաստով կարող է վերաբերել նաև ոչ այնքան բուն ստորոգյալին, որքան նրա և լրացման կապակցությանը: *Նա վազում է հեղուկ, որովհետև շատ է հոգնել:* Այս պատճառի պարագա ստորադաս նախադասությունը, ըստ էության, իմաստով վերաբերում է ոչ թե վազելուն (քանի որ հոգնելը հեղցի պատճառն է և ոչ թե վազելու), այլ հեղցին, ավելի ճիշտ՝ հեղցով վազելուն: Որ իսկապես ստորադաս նախադասությունը ուղղակիորեն չի վերաբերում ստորոգյալին՝ առանձին վերցրած, երևում է նաև այդ նախադասության՝ առանց **հեղցով** լրացման տարբերակից, որը տրամաբանորեն անիմաստ է: *Հմմտ. Նա վազում է, որովհետև շատ է հոգնել:*

Այս երևույթը վերաբերում է ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ ստորոգյալի համապատասխան լրացումներին: Բաղադրյալ անվանական ստորոգյալի՝ բայական անդամի լրացումներ առնելու հարցում հաճախ դեր են կատարում լրացյալի լրացումները գերադաս նախադասության մեջ: Այսպես՝ *Սա գիրք է* նախադասությունը չի կարող ընդունել խնդիր կամ պարագա երկրորդական նախադասություն: Սակայն **գիրք** բառի՝ որոշ լրացումներ ունենալու դեպքում բերված նախադասությունը բայական անդամի լրացումներ կարող է ստանալ:

Սա պատատուոված գիրք է, որովհետև անխնամ են վարվել հետը (պատճառի պարագա): *Սա երևի հետաքրքրական գիրք է, քանի որ շատերն են կարդում* (հիմունքի պարագա): Ուշագրավ է, որ վերջին օրինակի՝ հիմունքի պարագա ընդունելու հարցում դեր կատարում է ոչ միայն **հետաքրքրական** որոշիչը, այլև **երևի** եղանակավորող բառը:

ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը լրացնում է բայական լրացյալին և արտահայտում է որևէ երևույթ, գործողություն և այլն, որ դիտվում է որպես գերադաս նախադասության բայական անդամի ցույց տված գործողության անմիջական առարկա:

Արտակն զգում էր, որ սա երկար տևել է չի կարող (ԳԳ): Նա բաց արեց աչքերը և տեսավ, որ արդեն լուսացել է (ՆԳ):

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցությունն ունի կառուցվածքային մի շարք հատկանիշներ:

1. Ստորադաս նախադասությունը գերադասի հետ սովորաբար կապվում է **որ, թե** շաղկապներով, **ինչ, որ(ը), ով** հարաբերականներով:

Պետք է ամենից առաջ իմանալ, թե ով է թղթակցության հեղինակը (ՍԽ): Ծերունին գիտեր, որ նա մի անգուր, անխիղճ և ցած հարստահարիչ է (Բ): Ինձանից մի՛ պահանջեք այն, ինչ որ չեմ կարող անել (ՆԳ): Ով ինչ կամեցել է, արել եմ (ՍԽ):

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը գերադասի հետ երբեմն կապվում է շարահարությամբ:

Տեսնում ես՝ ես խոսում եմ անկեղծորեն (ՆԳ): Ասում եմ՝ հիվանդ է (ՆԳ): Ջգում եմ՝ հաղթել ես, հաղթում ես (ՍԿ): Հույս ունիմ՝ ինձ հասկանում ես (ՆԳ):

2. Գերադաս նախադասության ստորոգյալը լինում է՝ ա) պարզ՝ արտահայտված ներգործական սեռի բայով, բ) բայական բաղադրյալ, որի՝ բուն գործողություն դրսևորող բաղադրիչը արտահայտված է լինում դարձյալ ներգործական սեռի բայով: Պարզ բայական ստորոգյալի օրինակներ բերվեցին վերը: Այստեղ բերենք միայն բաղադրյալ բայական ստորոգյալի օրինակներ. *Ուզում եմ ասել, որ նա շատ մեծահոգի անձնավորություն է: Նա ջանում էր իմանալ, թե ինչով կվերջանա այդ ամենը:*

3. Գերադաս նախադասության մեջ հարաբերյալ հաճախ է գործածվում: Հարաբերյալի գործածության հարցում նկատելի է հետևյալ օրինաչափությունը: Հարաբերյալ գործածվում է այն դեպքում, երբ գերադաս նախադասության մեջ լրացյալ-բայի գործողությունն անցնում է առարկայի, իսկ եթե գործողությունը չի անցնում առարկայի, այլ մի ուրիշ գործողության, այդ դեպքում հարաբերյալ չի գործածվում: Իհարկե, կարող է գործողությունն էլ առարկայացվել և դիտվել որպես ներգործական բայի անմիջական առարկա:

Հմնտ. 1. *Բերել եմ այն, ինչ որ խնդրել ես:*

2. *Ես զգում եմ, որ եղանակը ցրտում է:*

3. *Ես տեսնում եմ, որ դու քեզ լավ ես զգում:*

1-ին տիպի կառուցվածքում, ինչպես ասվեց, հարաբերյալի գործածությունը պարտադիր չէ (այն կարող է և չգործածվել), բայց հարաբերականի գործածությունը տվյալ դեպքում անհրաժեշտ է:

Հմնտ. *Մենք տեսել ենք այն, ինչ եղել է այնտեղ:*

Մենք տեսել ենք, ինչ եղել է այնտեղ:

Որպես հարաբերյալ գործածվում են **այն, նա, բոլորը, այն ամենը, ամեն բան, այն բոլորը** բառերն ու կապակցությունները: Մակայն սրանք հավասարապես գործածական չեն նշված դերով: Ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կապելու համար ամենաշատ գործածվող հարաբերյալներն են **այն և նա** (տե՛ս վերևի օրինակները):

Նշված մյուս հարաբերյալների հետ գործածվող միևնույն ստորադաս նախադասությունը կարող է գիտակցվել ոչ միայն որպես ուղիղ խնդիր, այլև որպես որոշիչ ստորադաս նախադասություն: Այսպես՝ *Մենք տեսանք բոլորին, ովքեր եկել էին* նախադասության ստորադաս բաղադրիչը ուղիղ խնդիր է, եթե մենք այն ընկալում ենք որպես **բոլորը** հարաբերյալին փոխարինող լրացում (**հմմտ. Մենք տեսանք եկածներին**): Բայց այդ ստորադաս նախադասությունը կարող է նաև ըմբռնվել որպես **բոլորը** բառի լրացում (**հմմտ. Մենք տեսանք եկած բոլորին**), և այդ դեպքում այն կլինի որոշիչ ստորադաս նախադասություն:

Հմմտ. նաև՝ *Նրանք դուրս հանեցին ամեն բան, ինչ իրենց ձեռքն ընկալ:*

Նրանք դուրս հանեցին իրենց ձեռքն ընկածը:

Նրանք դուրս հանեցին իրենց ձեռքն ընկած ամեն բան:

Հարաբերյալներին համապատասխանում են հարաբերականները, վերջիններիս էլ հաճախ միանում է **որ** թարմատարը: Այսպիսով կազմվում են հարաբերյալի ու հարաբերականի զուգորդումներ, ինչպես՝ **այն...ինչ (որ), նա...(նրան)...ով (որ), բոլորը...ինչ(որ), ովքեր (որ), ամենը...ինչ(որ)** և այլն:

Հարաբերյալները բնականաբար դրվում են հայցական հոլովով, իսկ հարաբերականի հոլովը պայմանավորված է նրա և ստորադաս նախադասության ստորոգյալի կամ այլ լրացյալի քերականական հարաբերությամբ:

Հմմտ. Ես տեսա նրանց, ովքեր քայլում էին հրապարակով:

Ես տեսա նրանց, որոնց ձեռքերով է ստեղծվել այս հոյակապ կոթողը:

Ես տեսա նրանց, որոնցով մենք միշտ հպարտանում ենք:

Ես տեսա նրանց, որոնցից դուք նոր էիք բաժանվել:

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասության և գերադաս նախադասության կապակցման միջոցների հարցում որոշակի դեր ունեն գերադաս նախադասության խնդրառու բայը, նրա քերականական-իմաստային բնույթը:

Այնպիսի բայերի հետ, ինչպիսիք են՝ **կառուցել, նորոգել, պատրաստել, քանդել, դասավորել, ներկել, եփել, վառել, կերակրել, տեղափոխել, սղոցել, հարթեցնել** և այլն, որոնց արտահայտած գործողությունը սերտորեն առնչվում է առարկայի հետ, սովորաբար գործածվում է հարաբերյալ. իսկ հարաբերականի գործածությունը այս դեպքում խիստ անհրաժեշտ է:

Մենք կառուցել ենք այն, ինչ որ նախատեսված էր: Նրանք քանդեցին այն, ինչ որ արդեն պիտանի չէր օգտագործման: Կերակրեցինք նրանց, ովքեր դրա կարիքն զգում էին: Նրանք վառեցին բոլորը, ինչ բոլորովին պիտանի չէր:

Այսպիսի կառուցվածքում շաղկապներ չեն գործածվում, ինչպես և բաղադրիչ նախադասությունները շարահարությամբ չեն կապակցվում:

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է շաղկապով հատկապես այն դեպքում, երբ գերադաս նախադասության մեջ որպես խընդ-

րառու բառ գործածվում են մտածական, ասացական բառեր: Այսպիսի կապակցություններում հանդես են գալիս **որ, թե** շաղկապները: Այս շաղկապներն իրարից տարբերվում են նրանով, որ առաջինը (**որ**) արտահայտում է հաստատական իմաստ, իսկ **թե**-ն՝ երկբայական, ոչ հաստատական իմաստ:

Հմտ. Մենք որոշել ենք, որ ամեն կերպ օգնենք: Մենք չգիտենք, թե ինչպես օգնենք:

Նրանք մտածում են, որ իրենք ճիշտ են: Նրանք մտածում են, թե ով է ճիշտ:

Նա զգում է, որ այդ գործը գլուխ կգա մեծ դժվարությամբ: Նա զգում է, թե ինչպիսի դժվարությամբ գլուխ կգա այդ գործը:

Այսպիսի նախադասությունները, ի տարբերություն վերը քննվածների, երբեմն կապակցվում են շարահարությամբ:

Ասում են՝ մի չար պատավ ուզում է ճերմակեղենը օսլայի (ՀԹ): Ուզում են՝ ես էլ գամ քեզ հետ (ՀԹ): Չգաց՝ Վարդանանք պառակտվեցին: Չգաց՝ կարելի էր օգտվել (ԲԲ):

Չի բացավում, որ իմացական, մտածական խնդրառու բայերով կապակցություններում գործածվի հարաբերյալ: *Մենք որոշել ենք այն, ինչ որ ճիշտ ենք համարել: Մենք ուզում ենք այն, ինչի կարիքը չատ է զգացվում:* Այսպիսի դեպքում նշված բայերի լրացումները ձեռք են բերում առարկայականության որոշ յուրահատուկ իմաստ:

Հարաբերականների ընտրության հարցում կարևոր է նաև այն հանգամանքը, թե ինչն է հանդես գալիս ուղիղ խնդրի դերում՝ ա՞նձ, թե՞ առարկա: Եթե խնդիրը անձ է ցույց տալիս, գործածվում է **ով** դերանունը, երբեմն՝ **որը**:

Նրանցից մեկը ցուցակագրում էր նրանց, ովքեր եկել էին մասնակցելու այդ օրվա անսովոր ժողովին (ՄԽ): Մենք ընդունեցինք նրանց, ովքեր (որոնք) ունեին աշխատանքի անհրաժեշտ փորձ: Այս տարի ուղեգիր տվեցին նրանց, ովքեր դրա կարիքը խիստ զգում էին (որոնց անցյալ տարի չէին կարողացել բավարարել):

Երբ խնդիրն առարկա է ցույց տալիս, գործածվում են **որ, ինչ (որ)** հարաբերականները:

Սկզբում տեղափոխեցին այն, ինչ որ իրենց համար խիստ անհրաժեշտ էր: Այսօր վերջացրի այն, ինչ որ չէի հասցրել երեկ ավարտել:

Առանձին դեպքերում հարաբերականի դեր կատարում են նաև **երբ, որտեղ** դերանունները:

Նա սիրում է, երբ իրեն գտվում են: Ամբողջ ճանապարհը վերանորոգելու հնարավորություն չկար. շտապ վերանորոգեցին միայն, որտեղ շատ էր քանդվել:

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը սովորաբար ունենում է հետադաս շարադասություն: Սակայն այն ոչ քիչ դեպքերում գործածվում է նախադաս: *Հմտ. Ասացե՛ք այն, ինչ որ մտածում եք: Ինչ որ մտածում եք, այն էլ ասացե՛ք:*

Ներս հրավիրեք նրանց, ովքեր սպասում են դրսում: Ովքեր սպասում են դրսում, ներս հրավիրեք նրանց:

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությամբ յուրահատուկ կապակցություն պետք է համարել նաև ուրիշի ուղղակի խոսքի կապակցությունը հեղինակային խոսքի հետ՝ այն դեպքում, երբ հեղինակային խոսքում խնդրառու բայն արտահայտված է ներգործական սեռի բայով: Հասկանալի է, որ այսպիսի կապակցության մեջ չեն գործածվում շաղկապներ, հարաբերական բառեր, այլ կապակցումը կատարվում է շարահարությամբ:

Կաթողիկոսը մոլեզմեց, այլայլվեց մտայլ լռության մեջ և գոչեց.

- Պապրասպվեցե՞ք սխրագործության (ԴԴ):

Արքան վստահության հայացքով նայեց Վարդանին և ասաց.

- Դու գորքի մարդ ես և բաջ մարդ (ԴԴ):

ՀԱՆԳՄԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանգման խնդիր ստորադաս նախադասությունը ցույց է տալիս, թե ինչի է հանգում լրացյալ բայի արտահայտած գործողությունը:

Հանգման խնդիր (և առհասարակ խնդիր) տերմինը հասկացվում է լայն իմաստով. նկատի է առնվում ոչ միայն բուն առարկան, այլև ամեն մի երևույթ, գործողություն և այլն, որ կարող է մտովի պատկերացվել որպես մի բան, որին հանգում, հանգեցվում է մի գործողություն:

Հանգումը նույնպես պետք է հասկանալ լայն իմաստով: Քերականական հանգում է թե՛ ենթակայի որոշակի շարժումով մոտենալը մի բանի, թե՛ մի բան մոտեցնելը և հանգեցնելը մի այլ բանի, թե՛ մտածական բոլոր հանգումներն ու հանգեցումները, ըստ որում անկախ այն բանից՝ դա արվում է ի շա՞հ, ի վնա՞ս մեկին, թե՞ չեզոք է այդ տեսակետից:

Մենք մոտեցանք նրանց, ովքեր սպասում էին մեզ:

Մենք հուշանվերների փվեցիկնք նրանց, ում որ տեսանք:

Արամն ընկերացավ նրանց, ովքեր արշավի էին գնում Արագած:

Մեծ արքունություններ են փրվում նրանց, ովքեր կմասնակցեն ստորգետնյա այդ կարևոր ջրանցքի կառուցմանը:

Հանգման խնդիր ստորադաս նախադասություն են պահանջում նաև մտավոր, հոգեկան երևույթներ արտահայտող շատ բայեր:

Պետք է հավատալ նրան, ով անկեղծ է: Վստահիր նրան, ով քեզ հավատարիմ է եղել քո մեղ օրերին: Արամն ունկնդրում է նրան, ում խորհուրդները խելացի են ու բարի:

Հանգման խնդիր ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է գերազանցապես **ով, ինչ, որ(ը)** հարաբերականներով, **որ, թե** շաղկապներով: Բուն հանգման հարաբերության դեպքում, մանավանդ շարժում արտահայտող բայերի հետ, սովորաբար գործածվում են հարաբերականներ:

Հանդիպեցի նրան, ում վարուց էի ոլոմում: Մոտեցանք նրանց, ովքեր դեռ շարունակում էին աշխատանքը: Նա անզգուշաբար կպավ նրան, ինչի որ չէր կարելի դիպչել:

Այս և նման բայերի հետ կապակցվող ստորադաս նախադասություններում սովորաբար շաղկապ չի գործածվում:

Ստորադաս նախադասությունը շաղկապներով կարող է կապակցվել հետևյալ և նման բայերի հետ կապակցվելիս՝ **սպասել, հավատալ, ունկնդրել, նայել, համաձայնել, ուշադրություն դարձնել** և այլն: Ավելացնենք, որ այդ նույն բայերի հետ կապակցումը կարելի է կատարել նաև հարաբերականներով:

Հմմտ. Ես սպասում եմ, որ նա գա:

Ես սպասում եմ, թե ով պիտի գա:

Ես սպասում եմ նրան, ով որ պիտի գա:

Ես սպասում եմ այն բանին, ինչ որ պիտի լինի:

Հանգման խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցության գերադաս նախադասության մեջ մեծ մասամբ գործածվում են հարաբերյալներ՝ դրված տրական հոլովով. **նրան, այն բանին**: Այդ նպատակով գործածվում են նաև **նրա վրա, այն բանի վրա** կապակցությունները: *Նրանք ուշադրություն դարձրին այն բանի վրա, որ իրենք աննկատելիորեն փոխվում են:*

Հանգման խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցությունը երբեմն ձևավորվում է շարահարությամբ. սա հատուկ է հատկապես ժողովրդախոսակցական ոճին: *Մենք սպասում ենք՝ նրանք գան:*

Ավելացնենք, որ հաճախ շարահարական կապակցությունը կարող է արտահայտել քերականական տարբեր հարաբերություններ, և դա վերաբերում է նաև այս կապակցությանը: Բերված վերջին օրինակի ստորադաս նախադասությունը, բացի հանգման խնդրից, կարող է արտահայտել նաև նպատակի հարաբերության իմաստ: **Հմտ.** այդ նախադասության հնարավոր երկու փոխակերպները. *Մենք նպաստում ենք, որ նրանց արդարացի պահանջները կատարվեն: Մենք նպաստում ենք նրանց արդարացի պահանջների կատարմանը (պահանջները կատարվելուն): Մենք նպաստում ենք, որպեսզի նրանց արդարացի պահանջները կատարվեն:* Ավելացնենք, որ այս կառուցվածքում առավել իշխող հարաբերությունը հանգման խնդրի հարաբերությունն է:

ԱՆՋԱՏՄԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անջատման խնդիր ստորադաս նախադասությունը ցույց է տալիս երևույթ, առարկա և այլն, որից սկզբնավորվում է գերադաս նախադասությամբ արտահայտված գործողությունը կամ անջատվում է մի բան:

Անջատման խնդիր ստորադաս նախադասությունը գլխավորի հետ կապվում է **ով, որ(ը), ինչ** հարաբերականներով, **որ, թե** շաղկապներով: Այսպիսի կապակցության գերադաս նախադասության մեջ հարաբերյալ կարող է գործածվել կամ չգործածվել: Որպես հարաբերյալ գործածվում են հետևյալ դերանուններն ու դերանվանական կապակցությունները՝ դրված բացառական հոլովով. **նրանից, այն բանից**:

Անջատման խնդիր ստորադաս նախադասությունները սովորաբար դառնում են անջատման, սկզբնավորման իմաստ ունեցող այնպիսի բայերի լրացում, ինչպիսիք են՝ բաժանել (բաժանվել), անջատել (անջատվել), կտրել (կտրվել), հեռանալ, մեկուսանալ, առանձնանալ, սկսել (սկսվել), զատել (զատվել) և այլն:

Արանը բաժանվեց (հեռացավ) նրանցից, որոնց հետ իրեն հաճելի չէր քայլել: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ նա լուրջ չվերաբերվեց այդ շատ լուրջ գործի նկատմամբ:

Անջատման խնդիր ստորադաս նախադասությունն արտահայտում է իմաստալից տարբեր հարաբերություններ: Այն ցույց է տալիս՝

ա) այն առարկան, որից անջատվում, բաժանվում է նրա բաղկացուցիչ մասը.

- Ո՞ր ծառից է այդ ծառիկը:

- Այս ծառիկը սրկել են նրանից, որ դու ես պատվաստել:

Այսպիսի հարաբերությամբ անջատման խնդիր ստորադաս նախադասություն քիչ է գործածվում: Համապատասխան հարաբերությունն արտահայտվում է ավելի

շատ կամ որոշիչ ստորադաս նախադասությամբ, կամ պարզապես պարզ նախադասությամբ: **Հմմտ.** *Այս ծաղիկը պոկել են այն ծառից, որ դու ես սլատվաստել: Այս ծաղիկը պոկել են քո սլատվաստած ծառից:*

բ) այն առարկան, երևույթը, որից սկսվում, սկզբնավորվում է գերադաս նախադասության արտահայտած գործողությունը, եղելությունը.

Նա պատմությունն սկսեց այն բանից, թե ինչպես է առաջին անգամ որսի գնացել: Արամը արագ քայլերով հեռացավ նրանից, ում հեղբու երկար կանգնած խոսում էր:

գ) այն առարկան, երևույթը, որից ծագում, սերում, առաջանում է գերադաս նախադասության մեջ արտահայտված երևույթը, առարկան:

Նա այդ շնորհակալագիրն ստացավ նրանից, ումից այդպիսի վերաբերմունք, չգիտես ինչու, չէր սպասում: Նա այդ գծերը ժառանգել է նրանից, որին պարտական է իր ամեն ինչով, որին, սակայն, չէր ուզում հայր կոչել (Շիրվ.):

ՄԻՋՈՑԻ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջոցի խնդիր ստորադաս նախադասությունը ցույց է տալիս մի երևույթ, առարկա և այլն, որի միջոցով, օգնությամբ կատարվում է գերադաս նախադասության՝ բայով արտահայտված լրացյալի արտահայտած գործողությունը:

Միջոցի խնդիր ստորադաս նախադասությունը գլխավորի հետ միանում է **որ, թե** շաղկապներով, **որ(ը), ինչ, ով** հարաբերականներով: Գերադաս նախադասության մեջ մեծ մասամբ գործածվում է գործիականով դրված հարաբերյալ՝ **նրանով, այն բանով:**

Հայարտանում ենք նրանցով, ովքեր գտնվում են առաջավոր շարքերում և պայքարում են անչնվիրարար: Նա ելույթը վերջացրեց նրանով, որ անհրաժեշտ է ամեն կերպ օգնել դպրոցին:

Միջոցի խնդիր ստորադաս նախադասությունը ցույց է տալիս՝

ա) այն առարկան, որով, որի միջոցով կատարվում է գլխավոր նախադասության բայական անդամի արտահայտած գործողությունը.

Գրիր, ինչով որ ուզում ես: Շտապ կտրատեցեք վառելիքայտը, ինչով և ինչպես կարող եք:

բ) այն առարկան, երևույթը, հնարը, որի գործադրումով, ներգործումով կատարվում է գլխավոր նախադասության բայական անդամի արտահայտած գործողությունը:

Նա ունկնդիրներին գերեց նրանով, ինչը որ կոչվում է դերասանական փառանդ: Շամամ մայրիկին հուսադրում էին նրանով, որ նրա որդին կենդանի է և անպայման կվերահասնա (ՄԽ): Սպասնում են, թե նրանց կղարեն պատերազմի ժամանակվա օրենքով (ՄՀ):

ՆԵՐԳՈՐԾՈՂ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ներգործող խնդիր ստորադաս նախադասությունը ցույց է տալիս մի առարկա, երևույթ և այլն, որից գործողությունն անցնում է գերադաս նախադասության ենթակային:

Այսպիսի ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է **ով, որ(ը), ինչ** հարաբերականներով, **որ, թե** շաղկապներով: Գերադաս նախադասության մեջ հաճախ գործածվում է բացառականով, երբեմն գործիականով դրված հարաբերյալ՝ **նրանից, նրանով:** Երբեմն **նրանից** հարաբերյալի իմաստով գործածվում է **նրա կող-**

մից կապակցությունը: Հարաբերյալները, ինչպես այլ դեպքերում, կատարում են (ձևականորեն) այն անդամի դերը, ինչ որ ստորադաս նախադասությունը, այսինքն՝ տվյալ դեպքում՝ ներգործող խնդրի դեր:

Անահիտը սիրված է բոլոր նրանցից, ովքեր (որոնք) նրան ճանաչում են: Նա վիրավորվել է նրանից, ումից չպիտի վիրավորվեր:

Ներգործող խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցության գերադաս նախադասության լրացյալ բայը, ինչպես և պարզ նախադասության համապատասխան բայը, լինում է մեծ մասամբ կրավորական (այդպիսիք էին վերը բերված օրինակները), իսկ հաճախ էլ՝ չեզոք սեռի բայ: Չեզոք սեռի այդպիսի բայեր են՝ **ամաչել, գոհանալ, նեղանալ, սարսափել, սոսկալ** և այլն, որոնք սովորաբար պահանջում են բացառականով ներգործող խնդիր:

Արամը սարսափում է նրանից, որին առաջ իր բարեկամն էր կարծում: Մարդ ավելի նեղանում է նրանից, ով մոտ է իրեն, ումից ավելի շատ սպասելիք ունի:

Եթե կրավորական սեռի բայերի ներգործող խնդիր հարաբերյալը կարող է արտահայտվել նաև **նրա կողմից** կապակցությամբ, ապա չեզոք սեռի բայերի հետ այդպիսի կապակցություն սովորաբար չի գործածվում: **Հմտ. Մեր շենքը կառուցվել է նրանց կողմից, ովքեր այժմ աշխատում են հարևան շենքի վրա: Նա միշտ հարգվել է նրանցից (նրանց կողմից), ում հեպ աշխատել է:**

Նրանց կողմից հարաբերյալը երբեմն գործածվում է չեզոք սեռի այնպիսի բայերի հետ, որոնք համարժեք են կրավորական սեռի բայերին: Ինչպես՝ ընդունելություն գտնել-ընդունվել, վիրավորանք ստանալ-վիրավորվել, պարտություն կրել-պարտվել և այլն: *Այդ առաջարկությունը ջերմորեն ընդունվեց (ջերմ ընդունելություն գտավ) նրանց կողմից, որոնց համար թանկ է խաղաղությունը: Նա վիրավորանք ստացավ (վիրավորվեց) նրա կողմից (նրանից), որից այդպիսի բան երբեք չէր սպասում:*

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՐ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերաբերության խնդիր ստորադաս նախադասությունը ցույց է տալիս այն առարկան, երևույթը և այլն, որին վերաբերում է գերադաս նախադասության մեջ գործածված լրացյալի արտահայտած գործողությունը:

Վերաբերության խնդիր ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է **որ, թե** շաղկապներով, **որ(ը), ով, ինչ** հարաբերականներով: Գերադաս նախադասության մեջ հաճախ գործածվում է հարաբերյալ՝ արտահայտված **այն մասին, նրա մասին, այն բանի մասին** կապակցություններով, նա դերանվան բացառական, իսկ երբեմն՝ գործիական հոլովով:

Որպես ստորադաս նախադասության լրացյալ անդամ սովորաբար գործածվում են ասացական և մտածական բայեր. ինչպես՝ **ասել, արտահայտել, խոսել, պատմել, գեկուցել, գրուցել, մտածել, խորհել, գրել** և այլն:

Մենք գրուցում էինք այն մասին, թե ինչպես պետք է զուգակցել միտքն ու սիրտը: Մենք մտահոգված էինք, թե ինչպես փրկենք կյանքի ուղուց շեղված այդ պատանուն:

Շատ հաճախ գերադաս նախադասության մեջ հարաբերյալ չի գործածվում: Ինչպես՝ *Մենք խոսում էինք, ինչի մասին ուզում էինք: Նա դատողություններ էր անում, ինչի վերաբերյալ կամենում էր:*

Որպես վերաբերության խնդիր նախադասության լրացյալ շատ հաճախ հանդես է գալիս ասացական ու մտածական իմաստ ունեցող գոյականի (**նամակ, դիմում, հայտարարություն, բողոք, շարադրություն, պատմվածք, պատմություն** և այլն) և որևէ բայի (**գրել, անել** և այլն) կապակցությունը. **նամակ գրել, հայտարարություն անել** և այլն:

Նա դիմում է գրել, թե իբր իր հետ վարվում են անարդարացի: Աշակերտներին հանձնարարվել է շարադրություն գրել, թե ով ինչպես է զգում բնությունը:

Այսպիսի ստորադաս նախադասությունները որոշ չափով մոտենում են որոշիչ ստորադաս նախադասությանը, նայած թե ինչպես են ընկալվում: Եթե ստորադաս նախադասությունն ընկալվում է որպես **դիմում գրել, շարադրություն գրել** բայական կապակցությունների լրացում, այն կլինի վերաբերության խնդիր, իսկ եթե դիտվի որպես այդ կապակցությունների միայն գոյականական բաղադրիչի լրացում, կընկալվի որպես որոշիչ:

Համեմատենք վերը բերված օրինակների հետևյալ ընկալումները.

Նա դիմում է գրել իր հետ իբր անարդարացի վարվելու մասին: Նա գրել է իր հետ իբր անարդարացի վարվելու մասին դիմում:

Տվյալ բարդ ստորադասական նախադասության ստորադաս նախադասությունն ավելի վերաբերության խնդիր է, քան որոշիչ:

ՄԱՍՆԱՎՈՐՄԱՆ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սահմանափակման խնդիր ստորադաս նախադասությունը ցույց է տալիս այն առարկան, երևույթը և այլն, որոնցով սահմանափակվում է գերադաս նախադասության բայական անդամի արտահայտած գործողությունը, եղելությունը:

Սահմանափակման խնդիր ստորադաս նախադասությունները լայն կիրառություն չունեն: Այսպիսի ստորադաս նախադասությունները գերադասի հետ կապվում են **որ(ը), ինչ** հարաբերական բառերով, **որ, թե** շաղկապներով: Գերադաս նախադասության մեջ սովորաբար գործածվում են հարաբերյալներ՝ դրված բացառական, գործիական, ներգոյական հոլովներով:

Դա լավ է նրանով, որ վերականգնեց իր վարկը: Նա անգիջող է նրանում, ինչ որ իր համար սկզբունքային նշանակություն ունի:

Մասնավորման խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցության գերադաս նախադասության մեջ հարաբերյալի հետ կարող են գործածվել մասնավորման իմաստ ունեցող որոշ կապական բառեր՝ **տեսակետից, առումով** և այլն:

Հարցը քննվեց միայն այն տեսակետից, ինչ առումով որ մտցված էր օրակարգի մեջ: Այդտեղ արդյունաբերությունը պետք է զարգացնել այն ուղղությամբ, ինչպիսի հումք դրա հնարավորությունն ընձեռում է:

ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Պարագա ստորադաս նախադասությունները ցույց են տալիս գերադաս նախադասության բայական անդամի գործողության, եղելության հանգամանքները, հատկանիշները:

Հանգամանքներ արտահայտող պարագաներն են՝ **տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի, պայմանի, զիջման, հետևանքի**: Հատկանիշ կամ հատկանշային պարագաներ արտահայտող պարագա ստորադաս նախադասություններն են՝ **ձևի, չափի**: Ինչպես երևում է, պարագա ստորադաս նախադասությունները հիմնականում համապատասխանում են պարզ նախադասություն պարագա լրացումներին: Սակայն ստորադաս նախադասությունների շարքում ունենք հետևանքի ստորադաս նախադասություն ևս, թեև այդպիսի պարագա չունենք նախադասության անդամների մեջ: Ինչպես ստորադաս նախադասությունների բովանդակության հարուստ ու բազմազան լինելը, այնպես էլ հետևանքի ստորադաս նախադասության գոյությունը պայմանավորված է լրացումը նախադասությամբ արտահայտելու բառաքերականական լայն հնարավորություններով:

ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Տեղի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության բայական անդամի արտահայտած գործողության, եղելության տեղը:

Տեղի պարագա ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության հետ կապվում է **որտեղ, ուր** հարաբերականներով. գերադաս նախադասության մեջ կարող է գործածվել **այնտեղ** հարաբերյալը (ուղիղ կամ հոլովված ձևով):

Նա միշտ հայտնվում էր այնպե՛տ, որպե՛տ որ աշխատանքները ետ էին մնում (ՍԽ): Ծանձնե՛րն այնպե՛տ են հավաքվում, որպե՛տ որ մեղը կա (Բ): Գրի՛ր, որպե՛տ որ հարկն է (ՍԽ):

Տեղի պարագա ստորադաս նախադասությունը տեղի հարաբերությունն արտահայտում է իմաստային որոշ տարբերություններով՝ պայմանավորված տեղային հարաբերության բնույթով: Վերջինս որոշվում է ստորադաս նախադասության արտահայտած տեղի ու գերադաս նախադասության բայական անդամի միջև եղած հարաբերությամբ: Այդ հարաբերությունը սովորաբար ձևականորեն դրսևորվում է գերադաս նախադասության մեջ արտահայտված հարաբերյալի հոլովական ձևով և իմաստով:

1. Տեղի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասությամբ արտահայտված գործողության կամ եղելության տեղը (բուն տեղի պարագա): Այդպիսի կապակցության գերադաս նախադասության մեջ սովորաբար գործածվում է **այնտեղ** հարաբերյալը (ուղիղ ձևով) և արտահայտում է ներգոյականի իմաստ: Տեղի իմաստով այսպիսի ստորադաս նախադասությամբ կապակցության գերադաս նախադասության ստորոգյալն արտահայտվում է՝ **ա)** տեղաշարժ չարտահայտող բայով (**լինել, գտնվել, նստել, պառկել, աշխատել, զբաղվել, կարդալ, գրել, զեկուցել, պարապել** և այլն), **բ)** շարժում արտահայտող այնպիսի բայերով, որոնց

ցույց տված գործողությունը վերցվում է ոչ ուղևորման և նման երանգով, այլ շարժումը վերցվում է տվյալ տեղի, տարածության սահմաններում. **ինչպես՝ վազել, քայլել, շարժվել (հմնտ. վազել բակում և վազել բակ, քայլել միջանցքում և քայլել դեպի միջանցքը, շարժվել տեղում և շարժվել դեպի դուրս), գ** բաղադրյալ ստորոգյալով:

Երեխաները խաղում են այնտեղ, որտեղ հաճելի է: Մենք գտնվում ենք այնտեղ, որտեղից ավելի լավ է երևում քաղաքը: Նա սիրում է հաճախ լինել այնտեղ, որտեղ անցկացրել է իր մանկությունը: Միշտ հաճելի է այնտեղ, որտեղ քեզ լավ են հասկանում:

2. Տեղի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գործողության վերջնակետը (վերջնակետի տեղի պարագա ստորադաս նախադասություն): Այսպիսի կապակցության գերադաս նախադասության մեջ սովորաբար գործածվում է **այնտեղ** հարաբերյալը հայցականի (ուղևորման հայցականի) իմաստով: Գերադաս նախադասության ստորոգյալը լինում է բայական և արտահայտվում է շարժման, ուղևորման իմաստ ունեցող բայերով, **ինչպես՝ գնալ, հասնել, ժամանել, իջնել, տանել, բերել, տեղափոխել, փոխադրել, ուղարկել, առաքել, գործուղել** և այլն:

Շրջանավատներին ուղարկել են այնպեղ, որտեղ նրանց կարիքը շատ է զգացվում: Լեռնագնացները, բարձրանալով լեռը, հասան այնպեղ, ուր մարդու ոտք չէր դիպել մինչ այդ:

Գերադաս նախադասության մեջ կարող է չգործածվել հարաբերյալ:

Գնացե՛ք, ուր ուզում եք: Ուղարկե՛ք, ուր ուր պետք է: Իջե՛ք, որտեղ հարմար եք համարում:

3. Տեղի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս այն տեղը, որտեղից սկսվում է լրացյալի արտահայտած գործողությունը (ելման տեղի պարագա ստորադաս նախադասություն): Այսպիսի կապակցության գերադաս նախադասության մեջ սովորաբար գործածվում է **այնտեղից** հարաբերյալը: Գերադաս նախադասության ստորոգյալը գերազանցապես արտահայտվում է շարժում արտահայտող (ելման երանգով) բայերով. **ինչպես՝ հեռանալ, ուղևորվել, մեկնել, ճանապարհավել, փախչել, դուրս գալ** և այլն:

Նա հեռացավ այնպեղից, որպեղ իրեն չէին հասկանում: Նրանք ուղևորվեցին այնպեղից, ուր հասել էին մեկ ժամ առաջ:

Այսպիսի կառուցվածքում հարաբերյալի գործածությունը պարտադիր է:

Երկրորդ և երրորդ կետերում նշված բայերի խմբավորումը կատարված է նրանց ոչ բոլոր իմաստների հաշվառումով: Հաճախ է պատահում, որ տվյալ հիմնական իմաստն ունեցող բայը գործածվում է նաև այլ իմաստով: Այսպես՝ **թեև գնալ, տանել, փոխադրել** և այլ բայեր բերված են գործողության վերջնակետի հարաբերություն արտահայտելու կապակցությամբ, բայց դրանք կարող են կապվել նաև գործողության ելակետ նշող բայերի հետ: Ինչպես՝ **գնալ տնից, տանել պահեստից, փոխադրել տեղից, առաքել Երևանից** և այլն:

Երրորդ կետում նշված որոշ բայեր էլ իրենց հերթին կարող են կապակցվել գործողության նաև վերջնակետ արտահայտող բառերի հետ: Ինչպես՝ **ուղևորվել Մոսկվա, դուրս գալ փողոց, փախչել անտառ** և այլն:

Այնպես որ բայերի հիշյալ խմբավորումը կատարված է զգալի վերապահությամբ. երբեմն դժվար է հստակորեն սահմանազատել բայերի իմաստային այդ խմբերն իրարից:

4. Տեղի պարագա ստորադաս նախադասությունը կարող է ցույց տալ, որ լրացյալի արտահայտած գործողությունը, շարժումը կատարվում է առարկայի նկատմամբ տարածական այլևայլ հարաբերություններով արտահայտված տեղով (մոտով, վրայով, տակով և այլն):

Այսպիսի կապակցության գերադաս նախադասության մեջ սովորաբար գործածվում է **այնտեղով** հարաբերչալը: Գերադաս նախադասության ստորոգյալն արտահայտվում է շարժում արտահայտող բայով:

Ավտոմեքենաները շարժվում էին միայն այնտեղով, որտեղով որ նախատեսված է: Նրանք քայլում էին այնտեղով, որտեղով որ ավելի շուտ կհասնեին:

Այսպիսի կառուցվածքում գերադաս նախադասության մեջ հարաբերչալը երբեմն չի գործածվում: **Հմմտ. Նրանք քայլում էին, որտեղով որ ավելի շուտ կհասնեին:**

Ծանոթություն: Գերադաս նախադասության մեջ երբեմն **այնտեղ** հարաբերչալի փոխարեն հանդես է գալիս **այն տեղը (տեղում)** բառակապակցությունը: Օրինակ՝ *Մենք հասանք այն տեղը, որտեղից ավտոմեքենայով այլևս անկարելի էր անցնել:* Այսպիսի ստորադաս նախադասությունը լրացնում է գերադաս նախադասության հարաբերչալ դերանվան լրացյալին (տվյալ դեպքում՝ **տեղը** գոյականին) և որոշիչ է: **Հմմտ. Մենք հասանք այն վայրը (այն բարձունքը, այն չորը), որտեղից հետո պիտի ոտքով գնայինք:**

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության բայական անդամի և մասնավորապես ստորոգյալի արտահայտած գործողության կամ եղելության ժամանակը:

Հասկանալի է, որ գերադաս նախադասության ստորոգյալն ունի ժամանակ, որը դրսևորվում է թե՛ պարզ և թե՛ բաղադրյալ ստորոգյալներում: Դա քերականական ժամանակ է, որ արտահայտվում է խոնարհված բայով. սա վերաբերում է նաև բաղադրյալ ստորոգյալի հանգույցին: Ստորադաս նախադասությունը գերադասի գործողության ժամանակը մասնավորում է քերականական-իրադրական առումով: Սա կատարվում է՝ գերադաս նախադասության գործողությանը զուգադրելով ստորադաս նախադասության գործողությունը, և գերադասի ժամանակը, այսպիսով, մասնավորվում է ստորադասի քերականաիրադրական եզրի համեմատությամբ: Այս եզրի քերականական կողմը դրսևորվում է հատկապես ստորադաս նախադասության ստորոգյալի ժամանակում, իսկ իրադրական ասելով՝ նկատի ունենք այն գործողությունը, վիճակը, իրադրությունը և այլն, որոնք կազմում են ստորադաս նախադասության բովանդակությունը: Օրինակ՝ *Մենք ճանապարհիվեցինք, երբ լույսը բացվեց: Դճանապարհիվեցինք* ստորոգյալի քերականական ժամանակը որոշակի է՝ անցյալ կատարյալ, որ իրադրական տեսակետից շատ ընդհանուր է, իսկ *երբ լույսը բացվեց* ստորադաս նախադասությամբ անցյալ կատարյալ քերականական ժամանակը մասնավորվում է օրվա որոշակի ժամանակի հարաբերությամբ:

Ժամանակի պարագա ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության հետ կապվում է հետևյալ հարաբերական բառերով ու շաղկապներով՝ **երբ (որ), հենց (որ), մինչև (որ), մինչ, քանի, քանի դեռ, թե չէ, նախքան, ինչ որ:** Ի տարբերու-

թյուն ենթակա, ստորոգելի, խնդիր, ինչպես և տեղի պարագա ստորադաս նախադասություններով կապակցությունների՝ ժամանակի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցությունը սովորաբար հարաբերյալ չի ունենում: Եթե մենք ունենք առարկա, անձ, հատկանիշ (**նա, այն, այնպիսի** և այլն) ցույց տվող հարաբերյալներ, ապա ժամանակի իմաստ արտահայտող հարաբերյալ չկա ժամանակակից հայերենում: Այդպիսի հարաբերյալի արժեքով գործածվում է **այն ժամանակ** կապակցությունը, որում բուն հարաբերյալը, ըստ էության, **այն** դերանունն է (հմմտ. **այն պահին, այն օրը, այն բուսեին, այն հունիսին** և այլն), որ ժամանակի իմաստ չունի: Հարաբերյալի գործածության բնորոշ շիճուկն այսպիսի կապակցություններում այն բանի արտահայտությունն է, որ ժամանակի պարագա ստորադաս նախադասությունը սովորաբար ոչ թե գերադաս նախադասության մեջ հարաբերյալով ակնարկված ժամանակ է բացահայտում (մի բան, որ լինում է որոշիչ, հատկացուցիչ, ենթակա և այլ ստորադաս նախադասությունների դեպքում), այլ մի որևէ ժամանակում կատարվող գործողություն կամ եղող հատկանիշ:

Ստորադաս նախադասության արտահայտած ժամանակը գերադասի համեմատությամբ ունենում է տարբեր հարաբերություններ՝ համաժամանակության և տարժամանակության: Տարժամանակությունն իր հերթին երկու տեսակ է լինում՝ ժամանակային նախորդման ու հաջորդման հարաբերություն: Այս բոլոր դեպքերում հարաբերությունը որոշվում է ստորադաս նախադասության տեսակետից՝ գերադաս նախադասության ժամանակի հարաբերությամբ:

Համաժամանակությունը այն հարաբերությունն է, որի դեպքում ստորադաս ու գերադաս նախադասությունների ժամանակները համընկնում են, այսինքն՝ համապատասխան գործողությունները կատարվում են կամ եղելությունները լինում են միևնույն ժամանակում:

Երբ աշակերտները հավաքվեցին դպրոցի բակում, նրանց ջերմորեն ողջունեցին ուսուցիչները: Անձրևն սկսվեց այն ժամանակ, երբ երեխաները դեռ չէին հասել պատասպարանին:

Համաժամանակությունը լինում է երկու տեսակ՝ **լիակատար** և **մասնակի**:

Լիակատար համաժամանակության դեպքում ստորադաս ու գերադաս նախադասությունների ժամանակները լիովին համընկնում են. գործողությունները սկսվում և ավարտվում են միաժամանակ: *Միշտ, երբ նա խոսում է, բոլորը լսում են լարված ուշադրությամբ: Երբ նա լինում է բնության գրկում, իրեն զգում է երանության մեջ:*

Մասնակի համաժամանակության դեպքում ստորադաս ու գերադաս նախադասությունների արտահայտած գործողությունների ու եղելությունների ժամանակները համընկնում են մասնակիորեն:

Երբ հողագործները աշխատում էին դաշտում, հանկարծ հայտնաբերեցին հնագույն ժամանակաշրջանի մի սափոր: Երբ Արևիկը դարձյալ մեն-մենակ նստել էր իր սենյակում ու գիրք էր կարդում, մորաքույրը մտավ նրա մոտ (ՄԽ):

Համաժամանակության տարատեսակների դրսևորման մեջ հաճախ դեր են կատարում բառական որոշ միջոցներ: Լիակատար համաժամանակության դեպքում գերադաս նախադասության մեջ հաճախ գործածվում են համաժամանակության լիակատարությունը նշող բառեր ու բառակապակցություններ, ինչպես՝ **ամբողջ ժա-**

մանակում, այն ամբողջ ժամանակաընթացքում, ամբողջ ժամանակ, սկզբից մինչև վերջ, այդ ամբողջ ընթացքում, միշտ և այլն:

Երբ զինվորականները պայքարում էին աղետի հետևանքների դեմ, այդ ամբողջ ժամանակ տեղի բնակչությունը օգնում էր նրանց: Երբ Գոհար Գասպարյանի համերգին նա լինում է դահլիճում, սկզբից մինչև վերջ լսում է անասելի կլանվածությամբ:

Մասնակի համաժամանակության դեպքում հաճախ գործածվում են համաժամանակության մասնակիությունը նշող որոշ բառեր. **ինչպես՝ մի պահ, հանկարծ, անսպասելիորեն, միանգամից** և այլն:

Հմմտ. Երբ նա խոսում է, մենք միշտ նայում ենք նրա արտահայտիչ աչքերին: Երբ նայում է, մենք մի պահ (երբեմն) նայում ենք նրա արտահայտիչ աչքերին:

Համաժամանակության հարաբերությունը հաճախ դրսևորվում է միևնույն գործողության կամ եղելության պարբերական կրկնումով կամ ընդհանրական լինելով (ընդհանուր ներկա):

Ամեն անգամ, երբ հիշում եմ մեր լեռներն ու անտառները, սիրտս լցվում է թախծոտ կարտոտով: Երբ մենք միասին ենք լինում, միշտ վերհիշում ենք մեր մանկությունն ու պատանեկությունը:

Տարժամանակության հարաբերության դեպքում ստորադաս և գերադաս նախադասությունների արտահայտած գործողությունների ու եղելությունների իրական ժամանակները չեն համընկնում, այլ մեկը հաջորդում կամ նախորդում է մյուսին (թեկուզ և դրանք արտահայտված լինեն քերականական միևնույն ժամանակաձևով): Ըստ այդմ՝ տարժամանակությունը ունենում է երկու հիմնական դրսևորում՝ ժամանակային հաջորդման և ժամանակային նախորդման հարաբերություն (ստորադաս նախադասության տեսակետից):

Ժամանակային հաջորդման դեպքում ստորադաս նախադասության արտահայտած գործողությունը կամ եղելությունը հաջորդում է գերադաս նախադասության արտահայտած գործողությանը կամ եղելությանը:

Երբ գնացքը ժամանեց, դիմավորողները հավաքվել էին կառամատույցին:

Ժամանակային նախորդման հարաբերության դեպքում ստորադաս նախադասության արտահայտած գործողությունը կամ եղելությունը նախորդում է գերադաս նախադասության գործողությանը կամ եղելությանը:

Անչրևը դադարեց թե չէ, երեխաները դուրս եկան խաղալու:

Ժամանակային հաջորդումը քերականորեն արտահայտվում է բայի ժամանակակերպային հնարավորություններով: Այստեղ հատկապես դեր կատարում են՝ **ա)** միևնույն ընդհանուր ժամանակում ժամանակային տարբեր ձևերն իրենց համապատասխան իմաստներով, **բ)** բայի տարբեր ժամանակներն իրենց տարբեր ժամանակային իմաստներով:

Այդպիսին են, օրինակ, անցյալ վաղակատարը վաղակատարի ու անցյալ կատարյալի համեմատությամբ, անցյալի վաղակատարը, մասամբ նաև վաղակատարը, անցյալ կատարյալը անցյալ անկատարի համեմատությամբ, անցյալի կերպային իմաստ ունեցող ձևերը ապառնի ժամանակի համեմատությամբ և այլն: Ինչպես՝ *Երբ մենք եկանք (եկել ենք), դուք գնացել էիք: Երբ մենք գալիս էինք, դուք գնացել էիք: Երբ մենք կգանք, դուք գնացած կլինեք:*

Բառական միջոցները, զուգակցվելով քերականական միջոցներին, հնարավորություն են տալիս արտահայտելու ժամանակային ավելի բազմազան փոխհարաբերություններ:

Հմմտ. *Երբ նա խոսեց, ես գրեցի նրա ասածները:* Այս նախադասությունը կարող է հասկացվել թե՛ համաժամանակային և թե՛ տարժամանակային իմաստով: Խոսողը հատուկ կարևորություն չի տալիս ժամանակային հարաբերությանը:

Երբ նա խոսեց, վերջացրեց, ես նոր միայն գրեցի նրա ասածները (տարժամանակություն):

Երբ նա խոսեց այդ թեմայի մասին, ես գրեցի նրա ասածները խոսելու ամբողջ ընթացքում (լիակատար համաժամանակություն):

Երբ նա խոսեց այդ թեմայի մասին, ես կեսից գրեցի նրա ասածները (մասնակի համաժամանակություն):

Ինչպես երևում է այս վերջին փաստերից, միայն քերականական (բայի ժամանակների) միջոցներով ոչ միշտ են հասկացվում տարժամանակության արտահայտությունները: Դրանց հստակ դրսևորման համար հաճախ գործածվում են բառական տարբեր միջոցներ:

Ծանոթություն: Ժամանակի իմաստ ունեցող ստորադաս նախադասությունը կարող է կապվել գերադաս նախադասության ոչ թե բայական, այլ անվանական անդամի հետ և մասնավորապես լրացնել ժամանակի պարագայի, ժամանակի իմաստ ունեցող գոյականի: Այդպիսի ստորադաս նախադասությունը ժամանակի պարագա չէ, այլ որոշիչ կամ բացահայտիչ (սովորաբար մասնավորող պարագայական բացահայտիչ), նայած թե ինչպիսի հարաբերության մեջ է իր լրացյալի հետ:

Այն օրը, երբ նա պատշգամբում չի լինում, ինձ բվում է, թե խաղը լավ չի գնում (ՍԶ): Հմմտ. *Նրա՛ պարզգամբում չեղած օրը ինձ բվում է, թե խաղը լավ չի գնում:*

Երեկոյան, երբ արևը թեքվում էր դեպի դիմացի լեռան կատարը, մենք դուրս եկանք՝ դիտելու լեռնային գեղեցիկ մայրամուտը: Հմմտ. *Երեկոյան՝ արևը դեպի դիմացի լեռան կատարը թեքվելու ժամանակ, մենք դուրս եկանք՝ դիտելու լեռնային գեղեցիկ մայրամուտը:*

ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Պատճառի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության բայական անդամի արտահայտած գործողության կամ եղելության պատճառը:

Պատճառի հարաբերություն արտահայտող կապակցությունները մոտ են հիմունքի հարաբերություն արտահայտողներին: Սակայն չնայած պատճառի ու հիմունքի հարաբերությունների այդ ընդհանրությանը՝ այնուամենայնիվ, դրանց միջև կա նաև էական տարբերություն: Գործողության կամ եղելության պատճառը այն բուն ազդակն է, որդապատճառը, որի հետևանքով կատարվում է գործողությունը, իսկ հիմունքը մտավոր կամ այլ գործողության իրավական, սովորույթային, ճանաչողական կամ այլ ելակետն է:

Այս տարի դասերն սկսվելու են սեպտեմբերի 16-ին, որովհետև շինարարները դեռ չեն վերջացրել վերանորոգման աշխատանքները: Դասերը սկսվելու են սեպտեմբերի 16-ին, որովհետև այդ մասին կա ռեկտորի հապուկ հրամանը:

Առաջին օրինակի ստորադաս նախադասությունը ցույց է տալիս դասերի ուշ

սկսվելու բուն պատճառը, իսկ երկրորդում՝ այդ նույն երևույթի իրավական հիմունքը:

Պատճառի պարագա ստորադաս նախադասությունը գլխավորի հետ ամենից շատ կապակցվում է **որովհետև, քանի որ** շաղկապներով:

Ընթրիքը կարճ տևեց, որովհետև հյուրերը հոգնած էին (ԳԳ): Երջանիկների գրույցն ընդհատվեց, որովհետև աշտարակ էին բարձրանում Ռշտունյաց նախարարն ու Գեդեոնը (ԳԳ): Իմ կյանքը ապահով է, քանի որ սրանք կան (ՂԱ):

Պատճառի հարաբերությունն արտահայտող այսպիսի կապակցությունն իմաստով երբեմն մոտենում է հիմունքի հարաբերությունն արտահայտող կապակցությանը, երբ գերադաս նախադասության մեջ գործածվում են խոսողի վերաբերմունքն արտահայտող այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ **իհարկե, անշուշտ, հավանաբար, ըստ երևույթին, երևի** և այլն¹:

Հավանաբար հյուրերը գալու են, քանի որ նախապատրաստություններ են տեսնվում: Ըստ երևույթին, անձրև է գալու, որովհետև սև ամպերը կուտակվում են:

Եղանակավորող բառերի գործածությամբ գերադաս և ստորադաս նախադասությունների արտահայտած երևույթների փոխհարաբերությունը և մասնավորապես գերադաս նախադասության բովանդակությունը (որում գործածված է եղանակավորող բառը), օբյեկտիվ իրական վիճակը որոշ չափով փոխադրվում է տրամաբանության, դատողության ոլորտը, որի հետևանքով պատճառի հարաբերությունը ստանում է նաև հիմունքի հարաբերության երանգ:

Գերադաս նախադասության ստորոգյալը մեծ մասամբ լինում է բայական, բայց կարող է լինել և հաճախ լինում է բաղադրյալ:

Նրանք մեկնեցին, որովհետև ավարտել են իրենց անելիքը: Աշխատանքները վերսկսվեցին, քանի որ շինանյութն արդեն ստացվել է: Նա վերջերս տխուր է այն պատճառով, որ սպասումները չիրականացան: Քանի որ վառարանը չէր վառվում, սենյակում ցուրտ էր:

Այս շաղկապներով ձևավորված կապակցություններում հարաբերյալ սովորաբար չի գործածվում: Հարաբերյալ կարող է գործածվել այն դեպքում, երբ պատճառի պարագա ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապակցվում է **որ** շաղկապով: Սա այն պատճառով է, որ այդ շաղկապը բազմիմաստ է, կապակցում է տարբեր բնույթի ստորադաս նախադասություններ (որոշիչ, ստորոգելի, ենթակա, ուղիղ խնդիր և այլն), և գերադաս նախադասության մեջ գործածված **այն պատճառով, նրա պատճառով, այն քանի պատճառով, նրա համար, նրանից** և պատճառի հարաբերությունն արտահայտող մնան կապակցություններով նրա իմաստի մեջ ընդգծվում է պատճառի հարաբերությունը:

Նրանք այն պատճառով շուտ մեկնեցին, որ անհրաժեշտ էր նախապատրաստել խորհրդակցությունը: Նա այն քանից (նրանից) վիրավորվեց, որ դու չտեսնելուն տվեցիր իրեն: Ես նրա համար եմ բարկանում, որ դու միշտ թույլ ես տալիս նույն սխալը:

Ծանոթություն: Հետաքրքրական է, որ **նրա համար** հարաբերյալը կարող է և նպատակի հարաբերությունն արտահայտել ու կապել նաև նպատակի պարագա ստորադաս նախադասություն: Վերևի օրինակի հետ համեմատիր. *Ես նրա համար եմ բարկանում, որ այլևս նա այդ սխալը թույլ չտա:* Նպատակային հարաբերության ձևավորմանը նպաստում է հատկապես ստորադաս նախադասության

1. Տե՛ս Ն. Ա. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Եր., 1961, էջ 145:

ստորոգյալի եղանակաժամանակային արտահայտությունը. այս դեպքում այն դրսևորված է բայի ըղձական եղանակի ապառնիով, և ժամանակային տեսակետից նրա գործողությունը հաջորդում է գերադաս նախադասության գործողությանը:

Պատճառի պարագա ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության հետ կապվում է նաև այլ պատճառական շաղկապներով, որոնք են՝ **չէ որ, մանավանդ (որ), թե ինչ է, ինչ է թե** և այլն, որոնք տարբեր չափով են մասնակցում պատճառական կապակցության ձևավորմանը: Առհասարակ կապակցող յուրաքանչյուր շաղկապ, կապակցման ամեն մի միջոց իրենով պայմանավորում է որոշ յուրահատկություն:

Չէ՞ որ շաղկապը կապում է այնպիսի պատճառական ստորադաս նախադասություն, որի մեջ առկա է նաև խոսողի որոշ անառարկելիության վերաբերմունքը. սրան նպաստում է հարցական հնչերանգը:

Չէ՞ որ շաղկապով կապված հարցական նախադասությունը իր հարաբերության իմաստով համանիշ է **քանի որ** շաղկապով կապակցությանը: *Հմտ. Մենք ժամանակին պիտի վերջացնենք այս աշխատանքը, չէ՞ որ պարտավորվել ենք: Մենք ժամանակին պիտի վերջացնենք այս աշխատանքը, քանի որ պարտավորվել ենք:* Այս շաղկապով կապակցվող նախադասությունները զգալի չափով ինքնուրույնություն ունեն, որի պատճառով էլ գրավոր խոսքում հաճախ գերադաս նախադասությունից բաժանվում են միջակետով:

Ճշմարիտ է, ամեն ճակատամարտում էլ Աշոտ թագավորը հաղթող էր հանդիսանում, բայց այդ միևնույնն է. չէ՞ որ հայոց գորբերից էլ շարունակ ջարդվում էին (Մուր.):

Քանզի շաղկապը պատճառական հարաբերությամբ գործածվում է հատկապես չափածոյում, ինչպես և հոետորական ոճ ունեցող արձակում:

Ես ներում եմ քեզ, ներում եմ էլի, Քանզի խեղճ ես դու և ոչ թե չար (ԵԶ):

Ինչ է թե շաղկապը այնպիսի պատճառական նախադասություն է կապում գերադաս նախադասությանը, որի մեջ պատճառի հետ միասին կա նաև խոսողի որոշ արհամարհական, նվաստական վերաբերմունքը տվյալ պատճառի վերաբերյալ որպես ոչ արժանի, ոչ հիմնավոր:

Քանի որ է՝ չի գալիս աշխատանքի, ինչ է թե գլուխը մի քիչ ցավում է: Նա իրեն խիստ վիրավորված է զգում, ինչ է թե վրան մի փոքր բարկացել են:

ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմունքի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության բայական անդամի արտահայտված գործողության կամ եղելության հիմունքը:

Հիմունքը տարբեր կարգի է լինում՝ իրավական, սովորույթային, դատողական, ճանաչողական և այլն: Հիմունքի այս տարբեր դրսևորումները կարելի է բաժանել երկու խմբի՝ **ա)** հետևության (եզրակացության, դատողության) հիմունք, **բ)** գործողության կատարման հիմունք:

Հետևության հիմունք արտահայտող պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս այն գործողությունը, եղելությունը, որ ծառայում է որպես տրամաբա-

նական հիմունք գերադաս նախադասությամբ արտահայտված հետևության, եզրակացության, դատողության համար:

Նրան համարում են խելացի, որովհետև նա ամեն մի քայլը կատարում է մտածված: Այդ որոշումը սխալ է, քանի որ հակասում է ընդունված օրենքներին: Նա հազիվ թե համաձայնի քեզ հետ, որովհետև նա այդ հարցի մասին այլ կարծիք էր արտահայտում:

Գործողության կատարման հիմունք արտահայտող ստորադաս նախադասությունը ցույց է տալիս այն գործողությունը, եղելությունը, որ հիմունք է հանդիսանում գերադաս նախադասությամբ արտահայտած գործողության, եղելության համար:

Նա արդեն գալիս է աշխատանքի, քանի որ ապացուցվեց նրա անմեղությունը: Արանը կպարզևատրվի, որովհետև արդեն կա նախնական համաձայնություն:

Հիմունքի պարագա ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է **քանի որ, որովհետև, որ, չէ՞ որ, մանավանդ (որ)** շաղկապներով:

Հիմունքի հարաբերություն արտահայտող ամենաբնորոշ շաղկապներն են՝ **քանի որ, որովհետև**, որոնցով կապակցված հիմունքի պարագան սովորաբար այլ երանգներ չի ունենում:

Քանի որ թուղթը կնքված էր կնիքով, գրված էր պատշաճ ձևով, նախագահը բացեց մտից մատյանը և գրեց (Քակ.):

Որ շաղկապը հիմունքի հարաբերություն է արտահայտում հատկապես ժողովրդախոսակցական լեզվում և համարժեք է **քանի որ** շաղկապին:

Որ լույսը վառվում է, նշանակում է եկել են: Որ ուսանողական տոմս ունի, նշանակում է ուսանող է: Որ այդքան գիրք է գնում, հավանաբար շատ է կարդում:

Այսպիսի կառուցվածքներում կապակցական դեր են կատարում նաև **նշանակում է, հավանաբար** և նման բառերը:

Մանավանդ, մանավանդ որ շաղկապներով արտահայտված պատճառի հարաբերությունը զուգակցվում է մասնավորող սաստկացումով, որ հետևանք է այդ շաղկապների՝ եղանակավորող բառերից ծագած լինելուն:

Իհարկե, չէր կարող այսպես երկար շարունակվել, մանավանդ որ նա, լռությունիցս խրախուսված, սկսել էր այլևս քանի տեղ չդնել ինձ (ՆԳ): Մեզնից խորշելու ամենևին հարկ չկա, մանավանդ որ ձեր վարժուհին մեր աղջիկն է (ՆԳ):

Սակավ դեպքերում հիմունքի հարաբերության իմաստ են արտահայտում **որքան, որքանով** հարաբերական դերանունները, որոնց կարող է միանալ **որ** թարմատարը (որքան որ, որքանով որ): Սրանք գործածվում են սահմանափակ կապակցություններում, ինչպես՝ **որքան ինձ հայտնի է, որքանով ես գիտեմ, որքանով որ հիշում եմ, որքան նկատել եմ** և այլն: Սրանք մոտենում են միջանկյալ կապակցություններին, բայց դեռևս ունեն ստորադաս նախադասության արժեք՝ հիմունքի հարաբերության իմաստով:

Հիմունքի պարագա ստորադաս նախադասությունը կարող է ունենալ թե՛ նախադաս և թե՛ հետադաս շարադասություն, ինչպես երևում է վերը բերված օրինակներից: Սակայն որոշ տարբերություն կա տարբեր շաղկապներով կապակցված հիմունքի պարագա նախադասությունների շարադասության միջև: **Քանի որ, որովհետև, որ, չէ՞ որ** շաղկապներով ստորադաս նախադասությունները համարյա ազատ կերպով շարադասվում են նախադաս ու հետադաս: **Հմնտ. Հավանաբար այդտեղ մարդ չկա,**

քանի որ ոչ մի չայն չի լսվում: Քանի որ ոչ մի չայն չի լսվում, հավանաբար այդտեղ մարդ չկա:

Ըստ երևույթին, արդեն քնել են, որ (քանի որ) լույսերը մարած են:

Որ (քանի որ) լույսերը մարած են, ըստ երևույթին, արդեն քնել են:

Մանավանդ (որ), նամանավանդ (որ) շաղկապներով առավելապես հետադաս նախադասություններ են կապակցվում:

Այժմ լուրջ կերպով կխոսեմ, մանավանդ որ պարոն Բազենյանն ասում է, որ խոսակցությունը բոլորովին լուրջ քանի մասին է (ՆԴ):

Երբ հիմունքի պարագա ստորադաս նախադասությունը նախադաս է, գլխավոր նախադասությունը հաճախ ձեռք է բերում հետևանքային զգալի երանգ, իսկ երբեմն էլ նրանում գործածվում է հետևանքի, հետևության իմաստ արտահայտող բառ (նշանակում է, ուրեմն, ուստի և այլն):

Հմնտ. Այդտեղ սպանված որս կա, քանի որ ազոավները պտտվում են վերևում: Քանի որ ազոավները պտտվում են վերևում, նշանակում է (ուրեմն, հավանաբար) այդտեղ սպանված որս կա:

Անծրե է գալու, որ արևը ծակոտում է: Որ արևը ծակոտում է, ուրեմն (նշանակում է, հավանաբար) անծրե է գալու:

Իհարկե, չի բացառվում, որ հիմունքի պարագա ստորադաս նախադասության հետադաս գործածության դեպքում գերադաս նախադասության սկզբում գործածվեն հետևանքի ու հետևության իմաստ արտահայտող բառեր, սակայն գերադաս նախադասության այդ երանգը և նշված բառերի գործածությունն ավելի սովորական են ստորադաս նախադասության նախադաս գործածության դեպքում:

Որքան (որ), որքանով (որ) բառերով կապակցվող հիմունքի պարագա նախադասությունները սովորաբար նախադաս են գործածվում:

Որքանով մեզ հայրնի է, այնտեղ դեպքերը ծավալվում են ցանկալի ուղղությամբ: Որքան ես գիրեն, նա այստեղ գալու մեծ ցանկություն չունի:

ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պայմանի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության բայական անդամի արտահայտած գործողության կամ եղելության պայմանը:

Եթե ամեն որ իր տեղում լինի, ամեն ինչ էլ իր տեղում կլինի: Եթե դու չերգեիր, Արշալույսները նվազ ծիրանի կլինեին (Իս.):

Պայմանի պարագա ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության հետ կապակցվում է **եթե, թե, որ, թե որ, քանի որ, մինչև որ, եթե միայն, միայն թե, նայած թե, քանի դեռ, եթե...սպա** շաղկապներով, պայմանով որ շաղկապական կապակցությամբ:

Գերադաս նախադասության մեջ սովորաբար հարաբերյալ չի գործածվում: Երբեմն, սակայն, գերադաս նախադասությունում հանդես են գալիս **այն դեպքում, այդ դեպքում, այն պարագայում, այն ժամանակ** կապակցությունները՝ հարաբերյալի դերով:

Եթե բոլորը համաձայն լինեն, միայն այդ դեպքում կսկսենք այդ աշխատանքը: Դուք ասե՛ք ժամանակ կլինե՞ք իրարից գոհ, եթե իրար լավ հասկանաք:

Գերադաս նախադասության ստորոգյալը մեծ մասամբ լինում է բայական, բայց կարող է լինել նաև անվանական: Բայական ստորոգյալի օրինակներ են վերը բերվածները: Բերենք անվանական ստորոգյալի օրինակներ:

Եթե մարդ մեծահոգի է ուրիշների հանդեպ, նրա համար ևս հաճելի է ուրիշների նույնպիսի վերաբերմունքը: Եթե այստեղ հով է, նշանակում է սարերում իսկական ցուրտ է: Եթե մարդ չի վարժվել, ապա այդ պայմաններում աշխատելը նրա համար դժվար է:

Պայմանի ստորադաս նախադասությամբ կապակցության գերադաս նախադասությունը որոշ նմանություն ունի հետևանքի իմաստ արտահայտող նախադասությանը: Եվ դա հասկանալի է, քանի որ գերադաս նախադասության բովանդակությունը բխում է ստորադաս նախադասությունից: Սակայն այդ հարաբերությունը մնում է տրամաբանության սահմաններում, և հետևանքի որոշ իմաստ ունեցող այդ նախադասությունն իր քերականական դիրքով ընկալվում է որպես գերադաս և էապես տարբերվում է հետևանքի ստորադաս նախադասությունից:

Հմտ. Եթե ամեն ինչ նախապատրաստված է, մենք վաղը կմեկնենք:

Ամեն ինչ նախապատրաստված է, ուրեմն մենք վաղը կմեկնենք:

Պայմանի ստորադաս նախադասությամբ ամենատարածված կապակցությունը ձևավորվում է **եթե** շաղկապով՝ գրական, գիտական և մյուս ոճերում:

Եթե բոլոր ներկա եղողները լուսեաբար և տեղնուտեղը մահանան, դարձյալ նրա աչքերը չպիտի թրջվեն (Շիրվ.): Եթե ուզում ենք հարազատ հայրենիք, պետք է այն ստեղծենք մեր սեփական ձեռքերով (ՆԶ):

Թե և **որ** պայմանի շաղկապները **եթե**-ից տարբերվում են գործածության ոլորտով. սրանք առավելապես գործածվում են ժողովրդախոսակցական ոճում:

Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին, Թե չլինին կինն ու գինին (ՀԹ): Բայց թե աղջիկ կուզես չքնաղ, անսպարտելի փահիկան, Արի գնանք Կասպույտ բերդի թագավորի աղջկան (ՀԹ): Փորձանքը որ գա, հանկարծ կգա (ԳԴ):

Թե շաղկապի հետ երբեմն գործածվում է **որ** թարմատարը՝ կազմելով **թե որ** հարադրությունը:

Թե որ բախտ ունենամ, մեծ մարդ կդառնամ ու էս աստղերի համրանքի չափ ոսկի կուենամ (Իս.):

Հետաքրքրական է, որ **թե** շաղկապը **որ** թարմատար ընդունում է միայն պայմանի հարաբերություն արտահայտելու դեպքում:

Ուշադրության արժանի է, որ այս երկու շաղկապները (**որ**, **թե**) գրական հայերենին շատ հատուկ ու նրանում շատ գործածվող շաղկապներից են, և նրանց կիրառության հիշյալ սահմանափակումը (առավելապես ժողովրդախոսակցական ոճում գործածվելը) վերաբերում է ոչ գլխավոր կիրառություններին (մեկնական), այլ պայմանի (ինչպես և վերն ասվեց՝ նաև պատճառի, հիմունքի) իմաստով գործածությանը:

Պայմանի պարագա ստորադաս նախադասության իմաստի մեջ երբեմն զգալի է լինում ժամանակային իմաստը: Եվ դա հասկանալի է. պայմանը գերազանցապես նախորդում է գերադաս նախադասությամբ արտահայտված երևույթին, հետևանքին: Միայն թե ժամանակային հարաբերությունը ոչ միշտ է իրեն զգալ տալիս. այն շատ է զգալի հատկապես այն դեպքում, երբ կապակցվում է **երբ** հարաբերական բառով:

Երբ նրանք այդ պայմաններին համաձայն լինեն, մենք պատրաստ կլինենք սկսելու աշխատանքը:

Եթե միայն, միայն թե շաղկապներով կապակցված պայմանի նախադասությունները պայմանի հետ միասին արտահայտում են որոշ սահմանափակման, մասնավորման իմաստ. այդ բաղադրյալ շաղկապների **միայն** բաղադրիչը սահմանափակում, մասնավորում է նախադասությամբ արտահայտված պայմանի իմաստը:

Սպառնում էր ոչնչացնել, եթե միայն Վասակին մի ակնթարթ նա ցույց տար որևէ հակառակություն (ԳԳ): Նա պատրաստակամություն հայտնեց անմիջապես մեկնելու, միայն թե օղանավի տունս լինի:

Պայմանի նախադասությամբ կապակցությունները ձևավորվում են նաև շարահարությամբ:

Պայմանների կատեղծեր՝ կաշխատենք, չեք ստեղծի՝ չենք աշխատի: Եղանակը լավ լինի՝ հենց վաղը կսկսենք դաշտային աշխատանքները:

Պայմանի ստորադաս նախադասության և գերադաս նախադասության բայական ստորոգյալների ժամանակների միջև լինում է որոշ համապատասխանություն՝ պայմանավորված այդ երկու գործողությունների կամ եղելությունների իրական ժամանակային հարաբերությամբ:

Պայմանի պարագա ստորադաս նախադասությունների բայ-ստորոգյալի ժամանակը մեծ մասամբ արտահայտվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակով, իսկ գերադաս նախադասության ստորոգյալը՝ ենթադրականի ապառնիով:

Եթե գրես, կպատասխանեմ: Եթե մարդ աշխատի, մի բանի կհասնի: Նա կհամագործակցի մեզ հետ, եթե միայն առողջությունը ների:

Ստորադաս նախադասության՝ ըղձական եղանակի բայաձևով արտահայտված ստորոգյալին գերադաս նախադասության մեջ կարող են համապատասխանել նաև հարկադրական, սահմանական, մասամբ և ըղձական եղանակների ապառնիով ու հրամայականով արտահայտված ժամանակ:

Եթե եղանակը լավ լինի, պիտի գնանք դաշտ: Եթե այսպես շարունակվի, մենք փեղափոխվելու ենք ուրիշ տեղ: Եթե ժամանակ ունենաս, անպայման գնա՛, մի՛ հրաժարվիր:

Պայմանը կարող է արտահայտվել նաև սահմանական, սակավ դեպքերում՝ հարկադրական եղանակների ժամանակաձևերով: Այս դեպքում գերադաս նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել սահմանական, ենթադրական և նույնիսկ հրամայական, ըղձական եղանակի բայաձևերով:

Եթե եկել եմ, մենք էլ ենք գալիս: Եթե նրանք գնացել են, դուք ևս գնացե՛ք: Եթե դուք գնում եք, մենք էլ կգանք: Եթե դուք գնում եք, մենք էլ գանք:

Վերջին կառուցվածքը հատուկ է առավելապես ժողովրդախոսակցական ոճին և յուրահատուկ զեղչումից է ստացվել: **Հմմտ.** *Եթե դուք գնում եք, ասացե՛ք, որ մենք էլ գանք:*

Բերված բոլոր օրինակներում պայմանի պարագա ստորադաս նախադասության ստորոգյալի ժամանակը նախորդում է գերադաս նախադասության ժամանակին:

Համեմատաբար քիչ դեպքերում հաջորդող գործողությունը, որ արտահայտվում է ստորադաս նախադասությամբ, պայման է հանդիսանում նախորդի համար, որ արտահայտվում է գերադաս նախադասությամբ: Ինչպես՝ *Եթե վաղը դուք գալու եք,*

մենք այլևս այսօր չենք գնում (չենք գնա): Եթե հաջորդ տարում պիտի ավարտվի այս շենքի շինարարությունը, (ուրեմն) հարկավոր է այժմվանից լարված աշխատել (այժմվանից պիտի լարված աշխատենք):

Պայմանի ստորադաս նախադասության ժամանակի հաջորդելը գերադաս նախադասության արտահայտած գործողության ժամանակին հնարավոր է և այն պատճառով, որ այսպիսի կառուցվածքները (և առհասարակ բուն պայմանի հարաբերություն արտահայտող կառուցվածքները) վերաբերում են դատողական մակարդակին. այսինքն՝ տվյալ դեպքում ոչ թե առկա է մի գործողության կատարում, որը պայման է դառնում մի ուրիշ գործողության, այլ ավելի ճիշտ՝ կատարված կամ կատարվելիք որևէ գործողություն, եղելություն տրամաբանորեն, դատողաբար դիտվում և գնահատվում է որպես պայման դրանից հետո կամ առաջ կատարվելիք գործողության, եղելության:

Պայմանի ստորադաս նախադասությունը կայուն չէ: Այնուամենայնիվ, առավել սովորական շարադասությունը պայմանի ստորադաս նախադասության նախադաս գործածությունն է (այդպիսիք են վերը բերված օրինակները):

Պայմանի ստորադաս նախադասությունը կարող է գործածվել նաև հետադաս:

Մենք վաղը կուղևորվենք, եթե ամեն ինչ նախապայտարարված է: Մենք վաղը կուղևորվենք, թե որ ամեն ինչ բարեհաջող լինի: Մենք վաղը կուղևորվենք, միայն թե ամեն ինչ բարեհաջող լինի:

Բացի շաղկապների մեծ մասով կազմված կապակցությունների շարադասության նշված ընդհանուր օրինաչափությունից՝ կան շարադասական մասնակի այլ յուրահատկություններ: Այսպես՝ **թե** շաղկապով կապակցված պայմանի պարագա ստորադաս նախադասության հետադաս գործածությունը սովորական չէ¹, իսկ երբ **թե**-ին միանում է **որ** թարմատարը, ստորադաս նախադասության հետադաս շարադասությունը դառնում է հնարավոր ու առավել սովորական:

Հմտ. Մենք կառաջարկենք, թե նրանք համաձայն լինեն (ուչ գործածական): Մենք կառաջարկենք, թե որ նրանք համաձայն լինեն (գործածական):

Պայմանով որ, միայն թե շաղկապական կապակցություններով կապվող պայմանի ստորադաս նախադասությունը գործածվում է հետադաս:

Մենք շինարարությունը ժամանակին կավարտենք, պայմանով որ շինանյութը ժամանակին ստանանք: Ձեր հիվանդը լիովին կապաքինվի, միայն թե ժամանակին կատարի բժշկի բոլոր նշանակումները:

ՁԻՋՄԱՆ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ձիջման պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս այնպիսի գործողություն, իրողություն, հակառակ որի կամ որի փոխարեն կատարվում է գերադաս նախադասությամբ արտահայտված գործողությունը, եղելությունը:

Այլ կերպ՝ այսպիսի կապակցության գերադաս նախադասությամբ արտահայտ-

1. Այսպիսի կառուցվածքը, այնուամենայնիվ, չի բացառվում, այլ հանդիպում է հազվադեպ: Ինչպես՝ *Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին, Թե չլինին կինն ու գինին:*

վում է ոչ թե ստորադասին համապատասխանող, այլ նրա էությանը չհամապատասխանող, նրան ներհակ գործողություն, եղելություն:

Թեև ամառը դեռ չէր վերջացել, օդի մեջ արդեն զգալի էր վաղահաս աշնան ցուրտ շունչը (ՆԳ): Նա խելոք կլին էր և չափազանց սիրում էր ինձ, թեև շատ էլ երես չէր փալիս (ՆԳ): Ես չեմ կարող ուրիշի բարությունը շահագործել, թեկուզ այդ ուրիշը լինի իմ բարեկամը (ՆԳ):

Չիջման ստորադաս նախադասությունն իր զիջականությամբ հակադրվում է ոչ միայն հիմունքի պարագա ստորադաս նախադասությանը, որի դեպքում կունենալինք հակառակ հիմունքի պարագա, այլև պատճառի ու պայմանի պարագա ստորադաս նախադասություններին:

Այսպիսով՝ լայն առումով վերցրած պատճառահետևանքային հարաբերություն արտահայտող ստորադաս նախադասություններից յուրաքանչյուրը (պատճառի, հիմունքի, պայմանի) ունի համապատասխան իմաստով, բայց զիջականությամբ, հակառակ հարաբերությամբ արտահայտվող ստորադաս նախադասություններ: Գլխավորն այստեղ, իհարկե, զիջման հարաբերությունն է, որի հիման վրա նշված նախադասությունները միավորվում են՝ ունենալով կապակցման ինքնուրույն միջոցներ:

Վերոհիշյալից բխում է, որ զիջման պարագա ստորադաս նախադասությունները երեք տեսակի հարաբերությունների են վերաբերում և լինում են՝

ա) պատճառի զիջականություն.

Չնայած որ հորդ անչրև էր փեղում, աշխատանքները շարունակվեցին: Թեև նախապարասրական աշխատանքները չեն ավարտվել, գարնանացանը սկսվելու է նախատեսված ժամանակին:

բ) հիմունքի զիջականություն.

Թեև որդուց նամակ չէր սրանում, այնուամենայնիվ հուսով էր, որ նա կենդանի է: Չնայած որ հրամանով դեռ վերականգնված չէր, նա կանոնավոր հաճախում էր դասերին:

գ) պայմանի զիջականություն.

Թեև պայմանավորվել ենք, նա չկատարեց իր խոստումը: Թեկուզև ժամանակին ես համաշայնած լինեի, միևնույնն է, այժմ ձեզ աշխատակցել չէի կարող:

Չիջական ստորադաս նախադասությունները լինում են՝ **ա) բուն զիջական և բ) փոխարինության զիջական:**

Բուն զիջական նախադասությունն արտահայտում է զիջական հարաբերություն, և, ինչպես վերն ասվեց, այս դեպքում ստորադաս նախադասությունը գերադասի համար հակառակ հիմունք, պայման ու պատճառ է, որը չի պայմանավորում գերադաս նախադասությամբ արտահայտած իրողությունը: Այդպիսիք են վերը բերված բոլոր օրինակները:

Փոխարինության զիջական նախադասությունը ցույց է տալիս մի գործողություն, եղելություն, որը, հակառակ սպասվածի, չի կատարվում, այլ կատարվում է մի ուրիշ գործողություն, որ արտահայտված է գերադաս նախադասությամբ:

Նրանք, փոխանակ աշխատեն, ամբողջ ժամանակ խոսում են: Փոխանակ մենք գնանք, իրենք են եկել:

Չիջական ստորադաս նախադասությունները գերադաս նախադասության հետ կապակցվում են գերազանցապես զիջական շաղկապներով՝ **թեև, թեկուզ, թեկուզև, թեպետ, թեպետև, չնայած, չնայած որ, փոխանակ:**

Բուն զիջական հարաբերություններն արտահայտելիս զիջական շաղկապների հետ գերադաս նախադասության մեջ զուգորդվում են (սովորաբար սկզբում) ներհակական շաղկապներ՝ կազմելով շաղկապական զուգորդումներ՝ **թեև...բայց, թեպետ...բայց, թեպետ...սակայն, թեպետ... այնուամենայնիվ, թեպետև... այնուամենայնիվ, չնայած որ... բայց, թեկուզ...բայց, թեկուզ...բայց և այնպես, թեև... բայց և այնպես. թեև...սակայն, թեպետև...սակայն և այլն:**

Թեպետ տակավին կրում էր արքայական գորաց սպարապետի կոչումը, այնուամենայնիվ նրա պաշտոնը կատարում էր Գորը (Մուր.): Թեև դրաման արդեն գրեթե բոլորովին պարզ էր ինձ համար, բայց և այնպես զարմանքս այնքան մեծ էր, որ չկարողացա չհարցնել (Բակ.):

Չիջական շաղկապները գերազանցապես դրվում են ստորադաս նախադասության սկզբում: Երբեմն, սակայն, դրանք գործածվում են որոշ բառերից հետո:

Հովհաննիսյանը և Ծատուրյանը թեպետև ավելի սերտ են կապված ամեն կողմով նահորդ սերնդի հետ իրենց թեմաներով, լեզվով և ուղղությամբ, սակայն անտարակոյս շատ գծերով մի քայլ առաջ են (ՎՏ): Այս տարի եղանակը թեև նպաստավոր չի եղել, այնուամենայնիվ առատ բերք ենք հավաքել: Այցելած ժամանակն էլ թեև շատ ազատ էր սլախում իրեն, բայց երբեք հարգանքի սահմանից չէր անցնում (ՆԴ):

Չիջական ստորադաս նախադասությունները գերադասի հետ կապակցվում են նաև **որքան էլ, ինչքան էլ, ինչ էլ** կապակցություններով, որոնք բաղադրված են հարաբերական դերանունից և էլ եղանակավորող բառից:

Այս բոլոր շաղկապական կապակցություններն ունեն շեշտված զիջականության իմաստ, ըստ որում դրանցից յուրաքանչյուրը կապակցությանը տալիս է իր բառական իմաստից բխող իմաստային երանգ: **Որքան էլ, ինչքան էլ** կապակցությունները շեշտում են զիջման հարաբերությամբ ներկայացված գործողության, եղելության չափը, հակառակ որի (որքան էլ այն իբրև հակառակ հիմունք լինելու կամ կատարվելու լինի մեծ չափով)՝ կատարվելու է գերադաս նախադասությամբ արտահայտված գործողությունը, եղելությունը:

Որքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,

Էլի ես որք ու արնավառ իմ Հայաստան յարև եմ սիրում (ԵՉ):

Եթե **որքան էլ, ինչքան էլ** կապակցություններով շեշտվում է զիջման հարաբերությամբ վերցվող գործողության, եղելության չափը, ապա **ինչ էլ**-ը շեշտում է ոչ թե չափը, այլ բուն խնդրային ու ենթակայական առումով վերցվող երևույթներ: Այս պատճառով էլ այս կապակցություններից յուրաքանչյուրը գործածվում է համապատասխան բայի հետ: **Հմնտ. ինչքան (որքան) էլ** պայքարեն (վազեն, քայլեն, շտապեն, աշխատեն, կովեն, մրցեն, հաղթեն, մեծանան, հպարտանան, մեծամտանան, խելոքանան և այլն). բայց **ինչ էլ** անեն (լինի, պատահի, դառնա և այլն): Կան, իհարկե, բայեր, որոնք կարող են գործածվել թե՛ **ինչքան էլ, որքան էլ** կապակցությունների և թե՛ **ինչ էլ** կապակցության հետ. ինչպես՝ **ասել, բերել, տանել, կարդալ** և այլն: Համենայն դեպս, այդ տարբեր շաղկապական բառերի կապակցելիության վերոհիշյալ տարբերություններից իսկ երևում է դրանց իմաստային տարբերությունը: Եթե այդ կապակցությունների արժեքի մասին դատելու լինենք՝ ըստ այն հարաբերական դերանունների նյութական իմաստի, որոնցից կազմված են դրանք, ապա պետք է ասել, որ **ինչ-**

քան (էլ), որքան (էլ) բառերը համապատասխան բայի հետ կապվում են չափի պարագայական հարաբերությամբ, իսկ **ինչ (էլ)** -ը՝ ուղիղխնդրային ու ենթակայական:

Ինչ էլ որ լինի, մարգարանը պիտի գլխավորի մեր պատասխան նամակը (ԳԳ): Ինչ էլ աճեք, միևնույնն է, դրությունը փրկել հնարավոր չէ:

Ջիջական ստորադաս նախադասությունները կապակցվում են նաև պայմանի շաղկապներով (**եթե, թե, որ** և այլն)՝ զուգակցված եղանակավորող բառերի հետ: Ընդհանրապես և մասնավորապես այս դեպքում զիջական ստորադաս նախադասությունների ձևավորման մեջ կարևոր դեր են կատարում մի շարք եղանակավորող բառեր՝ **էլ, նույնիսկ, մինչև անգամ, մինչև իսկ, անգամ**, որոնք, ստորադաս նախադասության մեջ զուգորդվելով լեզվական այլ միջոցների հետ, արտահայտում են զիջականության իմաստ:

Եթե դուք վերադառնաք, մենք գնալու ենք օրինակի *Եթե դուք վերադառնաք* նախադասությունը պայման է արտահայտում (պայմանի ստորադաս նախադասություն): Այն ցույց է տալիս խոսակցի վերադառնալը՝ որպես պայման գերադաս նախադասությամբ արտահայտված **գնալու** գործողության կատարման համար: Իսկ երբ այդպիսի ստորադաս նախադասության մեջ գործածվում են **էլ, նույնիսկ, մինչև անգամ** և նման եղանակավորող բառեր, այն դառնում է զիջման պարագա և ցույց է տալիս, որ գերադաս նախադասության գործողությունը կկատարվի ստորադաս նախադասության արտահայտած գործողության նույնիսկ կատարման դեպքում, այլ կերպ՝ նույնիսկ հակառակ այդ գործողության կատարման: Եվ այս զիջական հարաբերությունից բխում է, որ գերադաս նախադասության գործողության կատարման առավել իրական նախադրյալ է հանդիսանում ստորադաս նախադասության գործողության կամ եղելության չկատարվելը (ի հակադրություն պայմանի պարագա ստորադաս նախադասության): Սա վերաբերում է հաստատական կառուցվածքի ստորադաս նախադասությանը:

Եթե նույնիսկ (մինչև անգամ, անգամ) դուք վերադառնաք, մենք գնալու ենք: Եթե դուք վերադառնաք էլ, մենք գնալու ենք:

Իսկ ժխտական ստորադաս նախադասության կառուցվածքի դեպքում համապատասխանաբար փոխվում է այդ նախադասության արտահայտած գործողությունը կատարվելու և չկատարվելու նախադրյալային արժեքը գերադաս նախադասության համար: Այսպես՝ *Եթե նույնիսկ դուք չվերադառնաք, մենք գնալու ենք* օրինակի ստորադաս նախադասության գործողության կատարումը ավելի իրական նախադրյալ է գործողության կատարման համար, քան չկատարումը, թեև նույնիսկ չկատարման դեպքում, հակառակ նրա չկատարման, գերադաս նախադասության գործողությունը կատարվելու է: Այսպիսի կառուցվածքների գերադաս նախադասության մեջ հաճախ գործածվում են նաև՝ **միևնույնն է, բոլոր դեպքերում**:

Եթե նույնիսկ դուք մեզ չօգնեք, միևնույնն է, մենք այդ աշխատանքը պիտի շարունակենք և ավարտենք: Եթե նույնիսկ ավելի մեծ խոչընդոտների հանդիպենք, բոլոր դեպքերում մենք պետք է պայքարենք մինչև վերջ:

Ջննարկվող կարգի ստորադաս նախադասությունները կարող են ձևավորվել նաև կապական կապակցություններով, ինչպես՝ **անկախ նրանից, անկախ այն բանից**:

Անկախ նրանից՝ դուք գալու եք, թե չէ, մենք գնալու ենք: Անկախ այն բանից՝ ինչպիսի դժվարություններ կլինեն, մենք պետք է պայքարենք մինչև վերջ:

Ձիջական նախադասության արժեք ունեն **ճիշտ է** (մասամբ և **ճշմարիտ է**) միադիմի ստորոգյալով ձևավորված կապակցությունները, որոնցում առաջին նախադասությունն արտահայտում է զիջական իմաստ, որին և հակադրվում է գերադաս նախադասությունը: Այսպիսի ստորադաս նախադասությունը լինում է **Եսխադաս**, իսկ գերադաս նախադասությունն սկսվում է **սակայն, բայց, բայց և այնպես** շաղկապներով¹:

Ծանոթություն: Ժամանակակից հայերենի առավել վաղ շրջանում՝ մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակները, զիջականության իմաստով գործածվում էր նաև **չնայելով** որ կապակցությունը, որ այժմ արդեն ընկալվում է որպես հնարանություն:

Չնայելով որ կինը շատ քիչ լավ օր էր տեսել նրա ձեռքին, բայց և այնպես երկար ժամանակ սուզ էր անում նրա համար (ՆԳ): Չնայելով որ ոչինչ չէր կերել, այնուամենայնիվ քաղց չէր զգում և ուտելու մասին չէր մտածում (ՆԳ):

Ձիջական ստորադաս նախադասությունները կարող են գործածվել թե՛ նախադաս և թե՛ հետադաս: Սակայն նրանց նախադաս գործածությունն ավելի սովորական ու հաճախադեպ է:

Թեկուզև գեներալ չէ և ոչ էլ զինվորական, բայց քաղաքում ունեցած իր դիրքի և ազդեցության շնորհիվ նա ստացել է այդ պատվավոր հորջորջումը (ԵՉ): Փոխանակ այս բոլորից հեպո լոեք, դեռ համարձակվում եք (ԲԹ): Եղանակն անձրևային էր, անախորժ, մինչև անգամ ցուրտ, թեև օգոստոսը դեռ չէր վերջացել (Շիրվ.):

Ձիջման պարագա ստորադաս նախադասությամբ կապակցությունները որոշ չափով նման են ներհակական կապակցություններին, սակայն վերջիններիցս ըստ էության տարբերվում են իրենց ստորադասական բնույթով: Չնայած որ զիջական ստորադաս նախադասություններով կապակցություններում երբեմն գործածվում են **սակայն, բայց, բայց և այնպես** ներհակական շաղկապները, բայց սրանք տվյալ դեպքում ոչ թե համադասական հարաբերություն արտահայտողներ են, այլ զիջական հարաբերության մեջ առկա անհամապատասխանության իմաստը ընդգծող, շեշտող բառական միջոցներ:

Հմմտ. Թեև վատ եղանակի պատճառով զարնանացանն ուշ սկսվեց, այն ավարտվեց ժամանակին: **Թեև** վատ եղանակի պատճառով զարնանացանն ուշ սկսվեց, **բայց և այնպես** այն ավարտվեց ժամանակին:

Չնայած որ ես շատ եմ ուզում լինել իմ հայրենի գյուղում, այդ ինձ քիչ է հաջողվում: **Չնայած որ** ես շատ եմ ուզում լինել իմ հայրենի գյուղում, **սակայն** այդ ինձ քիչ է հաջողվում:

Ձիջական կապակցություններում ներհակական շաղկապները գործածվում են, երբ զիջման պարագա նախադասությունը գործածվում է նախադաս: Վերջինիս հետադաս գործածության դեպքում այդ շաղկապները չեն գործածվում: **Հմմտ. Թեև** մեր հանդիպելու ցանկությունը մեծ էր, **բայց** պայմանները չէին թույլ տալիս: **Պայմանները** չէին թույլ տալիս, **թեև** մեր հանդիպելու ցանկությունը մեծ էր:

1. Հմմտ. Ն. Ա. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, 1961, էջ 181:

ՉԵՎԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Չևի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության բայական անդամի արտահայտած գործողության կամ եղելության ձևը:

Չև ասելով՝ տվյալ դեպքում նկատի է առնվում գործողության ու եղելության բուն արտաքին-ձևային, ինչպես և ներքին որակական հատկանիշը: Այս երկուսն էլ պատասխանում են **ինչպե՞ս** հարցին:

Նա այնպես է սլարում, որ կարծես թե կարապ է մեղմորեն սահում: Նա այնպես է տրամաբանում, ինչպես կորամաբաներ հասունացած ու խելացի մարդը:

Առաջին օրինակի ստորադաս նախադասությամբ արտահայտվում է շարժման արտաքին ձևը, երկրորդինը՝ մտավոր գործողության եղանակն ու մակարդակը, բայց երկուսն էլ ցույց են տալիս գերադաս նախադասության բայ-ստորոգյալի արտահայտած գործողության **ինչպես** կատարվելը: Ընդ որում ստորադաս նախադասության իմաստային այդ տարբերության դրսևորման հարցում դեր կատարում է նաև գերադաս նախադասության մեջ հանդես եկած լրացյալը:

Լրացյալի դերն այս տեսակետից հաճախ շատ վճռական է: **Հմմտ.** *Նա այնպես է վազում, կարծես թե փոքր երեխա լինի: Նա այնպես է տրամաբանում, կարծես թե փոքր երեխա լինի:* Թեև նշված կառուցվածքում ստորադաս նախադասությունները ձևականորեն նույնական են, բայց յուրաքանչյուրի մեջ հասկացվում է որոշակի գործողության ձև:

Հմմտ. *Նա այնպես է վազում, կարծես թե փոքր երեխա լինի վազելիս: Նա այնպես է տրամաբանում, կարծես թե փոքր երեխա լինի տրամաբանելիս:*

Ստորադաս նախադասության պարագայական նշված յուրահատկությունները կարող են պայմանավորված չլինել գերադաս նախադասության բայական անդամի գործողության բնույթով: Դա երևում է նրանից, որ միևնույն գործողությունը ստորադաս նախադասության միջոցով կարող է լրացվել արտաքին ու ներքին հատկանիշների տեսակետից:

Հմմտ. *Նա այնպես է խոսում, որ չայնը լավում է հեռվից: Նա այնպես է խոսում, որ խողները հոգեկան մեծ բավականություն են ստանում:*

Երբեմն միևնույն բառական կազմով ձևավորված ստորադաս նախադասությունները, որոնք լրացնում են միևնույն գերադաս նախադասությունը, կարող են արտահայտել ձևային տարբեր հատկանիշներ:

Հմմտ. *Նա այնպես է խոսում, որ ոչինչ չի հասկացվում (շատ ցածր է խոսում):*

Նա այնպես է խոսում, որ ոչինչ չի հասկացվում (շատ անտրամաբան է խոսում):

Այստեղ դեր են կատարում ստորադաս նախադասության բայ-ստորոգյալի իմաստային տարբերությունները. առաջին օրինակում այն նշանակում է **չի լավում**, երկրորդում՝ **չի ըմբռնվում**:

Չևի պարագա ստորադաս նախադասությունները գերադաս նախադասության հետ կապվում են **ինչպես**, **ինչպես որ**, **ոնց որ**, **որ**, **ասես**, **ասես թե**, **կարծես**, **կարծես թե**, **ինչ ձևով**, **ինչ կերպ** շաղկապներով ու շաղկապական բառերով: Գերադաս նախադասության մեջ հաճախ գործածվում է **այնպես** հարաբերյալը. երբեմն այդպիսի հարաբերյալի դերով գործածվում են **այնպիսի ձևով**, **այն ձևով** և նման կապակցություններ:

Նա լսում էր այդ ամենն այնպես, ինչպես կլսեր ամեն մի սովորական և երկրի դժբախտության հետ ոչ մի կապ չունեցող պատմություն (Մուր.): Նա նկարագրեց երկրի դրությունը այնպես, ինչպես որ տեսել էր (Մուր.): Բարակ շրթունքները սեղմած էր պահում, կարծես ծիսակատարության մեջ էր (Գ.Գ.):

Չնի պարագա ստորադաս նախադասության քերականական իմաստը հիմնականում դրսևորվում է **բաղդատության** միջոցով. գերադաս նախադասության բայական անդամի գործողությունը կամ եղելությունը բնութագրվում է ստորադաս նախադասությամբ արտահայտված որևէ համեմատության միջոցով: Որպես այդպիսի համեմատության եզր՝ գործածվում են մեկ այլ առարկայի գործողությունը, նույն առարկայի՝ մեկ այլ ժամանակ կամ մեկ այլ տեղում կատարած գործողությունը, դատողության ոլորտի գործողությունը և այլն:

Նա աշխատում է այնպես, ինչպես իր ուսուցիչը: Նա այժմ աշխատում է այնպես, ինչպես անցյալ փարի գյուղում էր աշխատում: Նա աշխատում է այնպես, ինչպես պահանջվում է (ինչպես ինքը կուզեր աշխատել):

Բաղդատությունը երկու հիմնական արտահայտություն ունի՝ ա) համապատասխանության և բ) անհամապատասխանության:

Համապատասխանության ձևի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս ստորադաս և գերադաս նախադասությունների գործողությունների համապատասխանությունը, որ կարող է արտահայտվել դրանց նմանության (հեռավոր կամ մոտավոր, իրական կամ թվացող) ու նույնության մեջ:

Այսպիսի ձևի պարագա ստորադաս նախադասության կապակցությունը բնորոշվում է կառուցվածքային հետևյալ հատկանիշներով. **ա)** կապակցումը գերադաս նախադասության հետ կատարվում է **ինչպես, ինչպես որ, որ, ոնց որ, ասես, ասես թե, կարծես, կարծես թե, ինչ ձևով, ինչ կերպ** շաղկապներով և շաղկապական բառերով ու կապակցություններով. **բ)** ստորադաս ու գերադաս նախադասությունների ստորոգյալները խոնարհման նույն բնույթի են լինում (կամ հաստատական, կամ ժխտական), և որևէ մասում չի լինում ստորոգյալի իմաստը ժխտող այլ միջոց:

Արևը մայր է մտել, ինչպես մեռնում է դյուցազնը (Բակ.): Զնաթաթախ, երկար եղունգներով քորում էր մարմինը, ինչպես եզն էր քորում վիզը՝ մի հաստ քարի կամ սյունի քսելով (Բակ.):

Կապակցող բառական միջոցների իմաստից երևում է, թե որ շաղկապները կամ շաղկապական բառերը համապատասխանության ինչ աստիճան են արտահայտում: Այսպես՝ **ինչպես, ինչպես որ, ոնց որ, ինչ կերպ, ինչ ձևով** բառերն ու կապակցությունները ստորադաս նախադասությունների առավել սերտ համապատասխանություն են արտահայտում. ցույց են տալիս իսկական նմանություն, որ երբեմն կարող է հասնել նույնության:

Կատարեց այնպես, ինչպես հարսն էր պարվիրել (Բակ.): Նա քաղցր էր պատմում, ինչպես Միրզամը չմտան գիշերին պարմում էր Շարմաղ աղջկա և յոթ եղբոր հեքիաթը (Բակ.):

Համապատասխանության երանգը, բնույթը կարող են փոխվել նախադասության մեջ գործածվող տարբեր բառերի միջոցով: Այդպիսի բառեր են՝ **հենց, ճիշտ, մոտավորապես, համարյա, գրեթե:**

Հմմտ. *Նա ճիշտ այնպես է աշխատում, ինչպես պահանջվում է:*

Նա գրեթե այնպես է աշխատում, ինչպես պահանջվում է:

Նա մոտավորապես այնպես է աշխատում, ինչպես պահանջվում է:

Անհամապատասխանության ձևի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս ստորադաս ու գերադաս նախադասությունների գործողությունների, եղելությունների անհամապատասխանությունը: Դրանով իսկ որոշ չափով բնութագրվում է գերադաս նախադասության բայական անդամի գործողությունը կամ եղելությունը: Այսպիսի կապակցության կառուցվածքը սովորաբար բնորոշվում է կապակցվող նախադասությունների բայ-ստորոգյալների տարբեր խոնարհումներով (մեկը՝ հաստատական, մյուսը՝ ժխտական):

Նա այժմ այնպես է զգում իրեն, ինչպես չէր զգացել երբևէ:

Որոշ դեպքերում հաստատական խոնարհումով ստորոգյալ ունեցող նախադասության հետ կարող է կապակցվել հաստատական խոնարհումով ստորոգյալ ունեցող այնպիսի նախադասություն, որի մեջ կա ժխտում արտահայտող բառ:

Նա միշտ երգում է այնպես, ինչպես որ կուզեր: Նա հազիվ թե այսօր կարողանա երգել այնպես, ինչպես որ կուզեր:

ԶԱՓԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Զափի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության բայական անդամի գործողության, եղելության չափը:

Այսպիսի ստորադաս նախադասությունները կարող են լինել նաև գերադաս նախադասության բայական անդամի և մասնավորապես ստորոգյալի՝ գերադաս նախադասության կազմում գործածված լրացման մի բաղկացուցիչ մասը: Այսինքն՝ ստորադաս նախադասությունը հանդես է գալիս որպես բաղադրյալ անդամի մի մասը, իսկ մյուս մասը գործածվում է գերադաս նախադասության մեջ:

Այսպիսով՝ չափի պարագա ստորադաս նախադասությունը՝

ա) կարող է լրացնել միայն բայով արտահայտված անդամին և հատկապես բայական ստորոգյալին. *ինչպես՝ Ուսանողներն այնքան աշխատեցին, որքան անհրաժեշտ էր բերքահավաքը ժամանակին ավարտելու համար: Նրանք այնքան հեռացան, որ այլևս չէին երևում:*

բ) կարող է լրացնել անվանական բաղադրյալ ստորոգյալին, որը սովորաբար արտահայտված է լինում հատկանիշ ցույց տվող բառով (ածականով, մակբայով և այլն). *ինչպես՝ Այնքան փոքր էր, որ (որքան), այնքան հեռու էր, որ (որքան), ընթացքն այնքան արագ էր, որ (որքան) և այլն, օրինակ՝ Արդեն այնքան մութ էր, որ մի փոքր հեռավորության վրա ոչինչ չէր երևում: Նրանց պահանջն այնքան մեծ էր, որ մենք բավարարել չէինք կարող: Արդեն այնքան ուշ էր, որ նրանք չճանապարհվեցին:*

գ) ուղղակիորեն վերաբերելով գերադաս նախադասության ստորոգյալի պարագային, հարստացնում է նրա բովանդակությունը՝ հաճախ ցույց տալով նրա արտահայտած հատկանիշի աստիճանը՝ ըստ էության նրա հետ միասին կատարելով չափի պարագայի պաշտոն: Այսպես՝ *Մենք այնքան շատ էինք հուզվել, որ բառերով դժվար է նկարագրել* կառուցվածքի ստորադաս նախադասությունը գերադասի չափի պարագայի բաղկացուցիչ մասն է: Գերադաս նախադասության մեջ չափի պարագա է **այնքան շատ** կապակցությունը, որտեղ **շատ**-ը բուն չափի իմաստ է արտահայ-

տում, իսկ **այնքանը**-ը, չափ արտահայտող հարաբերյալ լինելով, թե՛ ընդհանուր ձևով նշում է **չատ**-ի աստիճանը և թե՛ կապակցման դեր է կատարում: Այլ օրինակ՝ *Արամն այնքան քիչ է պարսպում, որ չի հասցնի ժամանակին կարդալ հանձնարարված գրականությունը:*

Այսպիսի ստորադաս նախադասությունը կարող է կապվել նաև գերադաս նախադասության ստորոգյալի ոչ թե չափի, այլ ուրիշ, հատկապես ձևի պարագայի հետ և ցույց տալ վերջինիս չափը:

Նա այդ օրն այնքան գեղեցիկ երգեց, որ բոլորիս ականջներում երկար ժամանակ կարծես հնչում էր նրա ջայնը: Նա այնքան անկեղծորեն էր խոսում այդ ամենի մասին, որ իր անկեղծությամբ ու անմիջականությամբ վարակեց բոլորիս:

Չափի պարագա ստորադաս նախադասությունները գերադասի հետ կապվում են հետևյալ հարաբերական բառերով ու շաղկապներով՝ **որքան, որչափ, ինչքան, ինչչափ, որ, ինչ, մինչև, մինչև որ**: Այսպիսի ստորադաս նախադասությամբ կապակցության գերադաս նախադասության մեջ մեծ մասամբ գործածվում է **այնքան** հարաբերյալը, թեև լինում են գերադաս նախադասություններ նաև առանց հարաբերյալի: **Հմմտ.** *Նա այնքան աշխատեց, որքան կարող էր: Նա աշխատեց, որքան կարող էր:*

Բայց նա այնքան խելոք չէ, ինչքան կարծում էինք: Նրանք այնքան չէին ուշացել, որ ներս չթողնեինք:

Վերջին տեսակի կառուցվածքներն առանց **այնքան** հարաբերյալի չեն կարող գործածվել՝ պահպանելով բարդ նախադասության տվյալ կառուցվածքային տիպը. հարաբերյալը չգործածվելու դեպքում փոխվում է գերադաս նախադասության միտքը, և դրա հետ կապված՝ ստորադաս նախադասության հարաբերությունը՝ բնույթը: Այսպես՝ «*Նա խելոք չէ, որքան կարծում էինք*» (**հմմտ.** *Որքան կարծում էինք, նա խելոք չէ*) կառուցվածքի գլխավոր նախադասությունը բոլորովին այլ իմաստ է արտահայտում (ժխտվում է նրա խելոք լինելը), քան «*Նա այնքան խելոք չէ*», որտեղ նրա խելոքությունը չի ժխտվում, ժխտվում է նրա խելոքության չափազանցումը, և դրա հետ կապված՝ ստորադաս նախադասության բնույթը փոխվում է՝ դառնալով հիմունքի պարագա:

Չափի պարագա ստորադաս նախադասության արտահայտած չափի հարաբերությունը դրսևորվում է երկու հիմնական եղանակով՝ **1. բաղդատությամբ, 2. հետևանքի նշումով**:

Չափի բաղդատությունը կատարվում է հետևյալ կերպ. ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության մեջ նշված գործողության կամ այլ հատկանիշի չափը՝ մի ավելի հայտնի կամ բնորոշ գործողության կամ հատկանիշի հետ բաղդատելու միջոցով:

Բաղդատությունը կարող է կատարվել թե՛ տարբեր առարկաների տարբեր գործողությունների կամ հատկանիշների, թե՛ նույն առարկայի՝ տարբեր ժամանակներում կատարած գործողությունների, ունեցած հատկանիշների միջոցով:

Արամը վազեց այնքան, որքան վազել էր Աշոտը:

Արամը այս անգամ վազեց այնքան, որքան վազեց նախորդ մրցման ժամանակ:

Բաղդատական հարաբերությամբ չափի պարագա նախադասությունը գերադաս նախադասության հետ կապվում է **որքան, որչափ, ինչքան, ինչչափ** հարաբերականներով:

Բաղդատությունը երկու հիմնական արտահայտություն ունի՝ **համապատասխանություն** և **անհամապատասխանություն**:

Համապատասխանության չափի պարագա ստորադաս նախադասությամբ արտահայտվում է գործողության, հատկանիշի չափի համապատասխանությունը գերադաս նախադասությամբ արտահայտված գործողության, հատկանիշի չափին: Համապատասխանության չափի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցություններում բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալները լինում են նույն բնույթի՝ կամ հաստատական, կամ ժխտական:

Արամն այնքան կարողացավ վազել, որքան պետք էր մրցման մեջ երկրորդ տեղը գրավելու համար:

Նա այնչափ ուրախացավ ընկերոջ հաղթանակի համար, որչափ կուրախանար իր անձնական հաջողության համար:

Անհամապատասխանության չափի պարագա ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության մեջ արտահայտած գործողության կամ հատկանիշի չափը բնութագրում է՝ նշելով անհամապատասխանությունը, տարբերությունը մեկ այլ գործողության կամ հատկանիշի չափից: Անհամապատասխանությունն արտահայտվում է գերադաս ու ստորադաս նախադասությունների ստորոգյալների բնույթների տարբերությամբ (մեկը լինում է հաստատական, մյուսը՝ ժխտական), մասամբ և ոչ բառով:

Նրանք այնքան չաշխատեցին, որքան որ նախատեսված էր: Նրանք այսօր աշխատեցին այնքան, որքան չէին աշխատել ոչ մի օր: Նրանք աշխատեցին ոչ այնքան, որքան որ նախատեսված էր:

Հետևանքի նշումով չափի պարագա ստորադաս նախադասության մեջ հետևանքի միջոցով գաղափար է տրվում գերադաս նախադասության գործողության կամ հատկանիշի չափի վերաբերյալ: Այսպիսի նախադասությունը գերադասին կապակցվում է **որ, մինչև որ** շաղկապներով:

Այսպես՝ «*Նա այնքան պնդեց, մինչև որ բոլորը համաձայնեցին նրա հետ*» կառուցվածքի գերադաս նախադասության ստորոգյալի չափի մասին գաղափար տրվում է այդ գործողության հետևանքի նշումով:

ԱՅԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԵՎԱՆՔԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հետևանքի ստորադաս նախադասությունը ցույց է տալիս մի գործողություն, եղելություն, որ բխում է գերադաս նախադասության արտահայտած իրողությունից՝ որպես նրա հետևանք:

Նշանակում է՝ այսպիսի բարդ նախադասության երկու բաղադրիչների միջև առկա է պատճառահետևանքային հարաբերություն: Պատճառահետևանքային հարաբերությունն արտահայտվում է նաև պատճառի պարագա ստորադաս նախադասու-

թյան կապակցությամբ: Սակայն, ի տարբերություն պատճառի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցության, հետևանքի ստորադաս նախադասությամբ կապակցության մեջ պատճառական հարաբերությունը նշող նախադասությունը արտահայտված է լինում որպես գերադաս նախադասություն, որի նկատմամբ հետևանք նշող նախադասությունը ստորադաս է:

Կլիմայական պայմաններն այս տարի աննպաստ էին, ուստի ցանկալից ու նախատեսվածից քիչ բերք ստացանք:

Այս (և ոչ միայն այս) կառուցվածքում հատուկ կարևորություն են ստանում կապակցության բաղադրիչների բերականական ձևավորումն ու հարաբերությունը՝ այն, թե բերականորեն ո՞ր բաղադրիչն է դիտվում որպես գլխավոր, և որը՝ երկրորդական:

Վերը բերված կառուցվածքը հեշտությամբ կարելի է վերածել պատճառի պարագա ստորադաս նախադասությամբ բարդ ստորադասական նախադասության: Այսպես՝ **Որովհետև (քանի որ) պայմաններն այս տարի աննպաստ էին, ցանկալից ու նախատեսվածից քիչ բերք ստացանք (կամ՝ Ցանկալից ու նախատեսվածից քիչ բերք ստացանք, որովհետև (քանի որ) կլիմայական պայմաններն այս տարի աննպաստ էին):**

Միևնույն տրամաբանական իմաստն արտահայտող այս համանիշ կառուցվածքները (հետևանքի ստորադաս նախադասությամբ կապակցություն և պատճառի ստորադաս նախադասությամբ կապակցություն) էապես տարբերվում են բաղադրիչ նախադասությունների բերականական հարաբերությամբ, որով և որոշվում է դրանցից յուրաքանչյուրի կառուցվածքային տեսակը:

Հետևանքի ստորադաս նախադասությունը սովորաբար կապվում է ամբողջ գերադաս նախադասության և ոչ թե նրա որևէ անդամի հետ: Շարադասական տեսակետից նրա դիրքը կայուն է. այն լինում է հետադաս:

Հետևանքի ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է հետևանքի (մակաբերական) շաղկապներով, որոնք են՝ **ուստի, ուրեմն, հետևաբար, հետևապես, այնպես որ, ուստի և, ուրեմն և, և ուրեմն**, ինչպես և հարաբերական բառերով ու նրանցով կազմություններով՝ **որից, որի հետևանքով, որի պատճառով**: Հետևանքի ստորադաս նախադասությամբ կապակցության գերադաս նախադասության մեջ հարաբերյալներ չեն գործածվում:

Հետևանքի ստորադաս նախադասությամբ կապակցության գերադաս նախադասության ստորոգյալը կարող է լինել թե՛ բայական և թե՛ անվանական: Սա նշանակում է՝ ստորադաս նախադասությամբ արտահայտված հետևանքի համար պատճառ կարող է ծառայել առարկայի թե՛ գործողությունը (բայական ստորոգյալ), թե՛ այլ հատկանիշներ ունենալը (անվանական ստորոգյալ):

Այնուամենայնիվ, սրանցից առաջնությունը պատկանում է բայական ստորոգյալին, և դա հասկանալի է. գործողությունն ավելի է դառնում մի այլ գործողության պատճառ, քան այլ հատկանիշը:

Հավատացած եմ, որ այս թույլին դուք լիովին զգում եք այդ, ուստի վերջացնենք այս տխուր միջադեպն այսօր (ՆԳ): Նրա առաջին միտքն էր գնալ իրեն սպասող Վարդանյանի ու Միսակյանի մոտ, ամեն ինչ պատմել նրանց, ուստի նա ոտքերը քարշ տվեց երկար միջանցքով (ՄԽ):

Քննարկվող կառուցվածքի գերադաս նախադասության ստորոգյալը, ինչպես ասվեց, կարող է լինել անվանական:

Նա շատ խելացի ուսանող է, ուստի կարելի է մտածել նրա ուսումնառությունը շարունակելու մասին: Այսօր արդեն ուրբաթ է, այնպես որ հարկավոր է նախապատրաստվել կիրակի օրը երեխաներին ճամբար տանելու համար: Քաղաքում շոգ է, ուստի պետք է գնալ ամառանոց: Արդեն շատ ուշ է, այնպես որ չես հասցնի ավարտել աշխատանքդ:

Հետևանքի ստորադաս նախադասությունը իմաստային հետևյալ երկու հիմնական արտահայտությունն ունի.

1. Այն կարող է ցույց տալ գործողության, երևույթի բուն իրական հետևանքը:

Ճանապարհն անձրևներից շատ տեղերում քանդվել էր, ուստի նրանք գնացին ոտքով: Գրիչի թանաքը վերջացել էր, ուստի և նա շարունակեց գրել մատիտով:

2. Այն կարող է ցույց տալ ասված մտքից տրամաբանորեն բխող մի եզրակացություն:

Նա խնդիրները լուծում է ինքնուրույն և արագ, ուրեմն պետք է որ բավականին ընդունակ լինի: Օդանավն արդեն թռել է, այնպես որ մեր շրապելն անպտեղի է:

Այսպիսի կապակցություններում քերականական հետևանք (հետևություն, մակաբերություն) արտահայտող նախադասությունը տրամաբանական տեսակետից կարող է լինել բուն պատճառ կամ հիմունք:

Արագիլը տղմուտ հողերում այլևս գորտ չէր բռնում, ուրեմն ետ էին գնացել Արաքսի ջրերը (Բակ.):

Ստորադաս նախադասությունն այստեղ արտահայտում է տրամաբանական հետևություն (մակաբերություն), և այդ եզրակացության հիմքն արտահայտված է գերադաս նախադասությամբ: Սակայն բուն իրական, դեմոտատային տեսակետից պատճառը Արաքսի ջրերի ետ գնալն է, իսկ հետևանքը՝ տղմուտ հողերում արագիլի՝ գորտ չբռնելը: Սակայն, իհարկե, նախադասության կառուցվածքային տեսակը որոշելիս հաշվի ենք առնում քերականական կողմը:

Այս վերջին դեպքերին **հետևանք** անվանումը վերապահությամբ է համապատասխանում: Քննարկվող ստորադաս նախադասությունների այսպիսի կիրառություններին ավելի շուտ կհամապատասխանեն **հետևություն, մակաբերություն** անվանումները:

Բուն հետևանք արտահայտելու համար մակաբերական շաղկապները համանիշներ են և հիմնականում նույն իմաստն են արտահայտում: Այսպես՝ «*Ամեն բան աշխարհիս մեջ փոփոխության անխուսափելի օրենքին է մատնված, հեղևապես ապագան կարող է ավելի մեծ ուժեր ծնել*» (Գ) կառուցվածքում **հետևապես** շաղկապը կարելի է փոխարինել **ուստի, ուրեմն, հետևաբար, այնպես որ** շաղկապներով. ինչպես՝ *Ամեն բան աշխարհիս մեջ փոփոխության անխուսափելի օրենքին է մատնված, ուստի ապագան կարող է ավելի մեծ ուժեր ծնել և այլն:*

Սակայն ոչ բոլոր կառուցվածքներում է, որ այդ շաղկապները հավասարաթեք են, և կարելի է լինում փոխարինել մեկը մյուսով: Դրանց միջև երբեմն հանդես են գալիս իմաստային նուրբ տարբերություններ: Այդ տարբերությունները ավելի ակնհայտորեն երևում են հատկապես անցյալ կատարյալ ու վաղակատար ժամանակներով արտահայտված ստորոգյալով կառույցներում:

Երեկ բոլորը վերադարձան, այնպես որ հենց երեկ էլ սկսեցինք մեր աշխատանքը:

Այս նախադասության մեջ, որի ստորոգյալն արտահայտված է անցյալ կատարյալ ժամանակով, չէր կարելի գործածել այլ, ասենք, **ուրեմն, հետևաբար, հետևապես** շաղկապները: Վերջիններիս իմաստի մեջ ընդգծված է հետևության, մակաբերության իմաստը, մինչդեռ տվյալ դեպքում նշվում է ոչ թե տրամաբանական մակաբերության հարաբերություն, այլ իրական, եղած պատճառահետևանքային հարաբերություն: Իսկ ապառնիի իմաստ ունեցող բայաձևերում, որոնք չեն նշում կատարված իրողություն, կարևորություն է ստանում տրամաբանական հետևության իմաստը: Դա է պատճառը, որ եթե վերոհիշյալ նախադասության ստորոգյալն արտահայտենք ապառնիություն արտահայտող բայաձևով, հնարավոր կլինի գործածել հետևության իմաստ արտահայտող հիշյալ շաղկապները: Ինչպես՝ *Երեկ բոլորը վերադարձան, ուրեմն (հետևաբար, հետևապես) վաղը կարող ենք սկսել մեր աշխատանքը:*

Հետևանքի ստորադաս նախադասությամբ կապակցությունները պատմողական և հարցական բնույթի նախադասություններով արտահայտվելիս կապակցվում են տարբեր միջոցներով: Պատմողական բնույթի դեպքում գործածվում են **ուստի, ուրեմն, այնպես որ, հետևապես, հետևաբար** և նման շաղկապներն ու շաղկապական կապակցությունները, իսկ հարցական բնույթի դեպքում՝ սովորաբար **որ** շաղկապը: **Հմնտ. Նա քայլում էր գլուխը կախ, այնպես որ չնկատեց Գարեգինին (ՍԽ): Նա ինչպե՞ս էր քայլում, որ չնկատեց Գարեգինին: Մեծ պատվիրակություն է գալու, ուստի ինստիտուտում նախապատրաստվում են ընդունելու: Ովքե՞ր են գալու, որ ինստիտուտում նախապատրաստվում են ընդունելու:**

Որ շաղկապով կարող են կապվել նաև բացականչական երանգի նախադասությունները:

Որքա՞ն շատ էին հիացել նրա ծայնով, որ մինչև այժմ խոսում են այդ մասին:

Ծանոթություն: Հետևանքի ստորադաս նախադասությունը չպետք է շփոթել ձևի և չափի պարագա այնպիսի նախադասությունների հետ, որոնք ունեն հետևանքի իմաստ: Ինչպես՝ *Նա այնպես է արտասանում, որ հիացնունք է պատճառում բոլորին: Նա այնքան աշխատեց, որ հասավ առաջավորներին:* Թեև տրամաբանական տեսակետից այս ստորադաս նախադասություններում առկա է հետևանքի իմաստ, բայց գերադաս նախադասության նկատմամբ ունեցած նրանց քերականական կապը պարագայական է. առաջին օրինակում՝ ձևի, երկրորդում՝ չափի: Այստեղ հետևանքների նշման նպատակն է գաղափար տալ գերադաս նախադասության բայ-ստորոգյալի արտահայտած գործողության ձևի ու չափի մասին: Ի դեպ, դա երևում է նաև հարաբերյալներից (այնպես, այնքան), հարցերից (ինչպե՞ս է արտասանում, որքա՞ն աշխատեց):

ԱՄՔՈՂՋ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆԸ ԿԱՄ ՆՐԱ ԲԱՂԱԴԲՅԱԼ ՄԱՍԻՆ ԼՐԱՅՆՈՂ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն վերոհիշյալ կապակցությունների, որոնցում ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության մեկ անդամի հետ է կապվում և լրացնում նրան, կապակցության այս տեսակն այն յուրահատկությունն ունի, որ լրացնում է ամբողջ գերադաս նախադասությանը կամ նրա բաղադրյալ մասին և արտահայտում է լրացական տարբեր հարաբերություններ:

Այսպիսի ստորադաս նախադասությունը սովորաբար լինում է հետադաս, գերադասի հետ կապվում է հարաբերական բառերով:

Վերադարձել էր՝ չախ ուրը բեկորից վնասված, որը ստիպում էր նրան առայժմ ման գալ հենակով (ՄՁ): Նա ընկերոջը հիասթափեցրեց, որը և դարձավ նրանց հեռացման պատճառը: Անահիտը խելացի է և ուշադիր, որի համար և նրան սիրում են բոլորը:

Ամբողջ նախադասությանը լրացնող ստորադաս նախադասությամբ կապակցությունը բնույթով մոտ է համադասական կապակցությանը: Պատահական չէ, որ այսպիսի նախադասությունները հեշտությամբ կարող են փոխակերպվել համադասական կապակցության:

Համեմատենք վերոհիշյալ նախադասությունների հետևյալ փոխակերպները: *Վերադարձել էր՝ ծախ ոտը բեկորից վնասված, և դա ստիպում էր նրան առայժմ ման գալ հենակով: Նա ընկերոջը հիասթափեցրեց, և դա դարձավ նրանց հեռացման պատճառը:* Այնուամենայնիվ, ամբողջ նախադասությանը լրացնող նախադասությունները ստորադաս են, ուրեմն և ամբողջ կապակցությունը՝ բարդ ստորադասական կապակցություն:

ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր բնութագիր

Բազմաբաղադրիչ կոչվում է այն բարդ ստորադասական նախադասությունը, որը կազմված է երկուսից ավելի բաղադրիչներից:

Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության յուրահատկությունը միայն բաղադրիչների քանակի մեջ չէ, այլև այն բանում, որ այդպիսի նախադասության մեջ հանդես են գալիս հարաբերությունների զուգորդումներ: Եթե երեք և ավելի բաղադրիչներով կազմված բարդ ստորադասական նախադասության մեջ առկա է բազմաստիճան ստորադասություն, ապա ստորադաս նախադասությունը, կարող է ունենալ իր լրացում ստորադաս նախադասությունը, որի նկատմամբ գերադաս հարաբերություն ունի: Այս գերադասությունը միայն շարահյուսական հարաբերության տեսակետից պետք է հասկանալ և ոչ այն որոշ հարաբերական ինքնուրույնության առումով, որ ունենում են գերադաս նախադասությունները:

Այսպես՝ *Մի անգամ Դավիթ Բեկը խաներին հասկացրեց (1), թե օգտակար կլինի (2), եթե շահ Թահմազը բանակցություններ սկսի իր հետ (3) (ՄԽ)* նախադասության մեջ կա մեկ գլխավոր ու երկու երկրորդական նախադասություն՝ 2-րդը և 3-րդը: Սակայն եթե 3-րդ բաղադրիչն այս կառուցվածքում սուկ ստորադաս է, ապա 2-րդ նախադասությունը 1-ինի նկատմամբ ստորադաս է, իսկ 3-րդի նկատմամբ՝ գերադաս: Սրա պատճառն այն է, որ եթե 1-ին և 3-րդ նախադասություններից յուրաքանչյուրը միայն մեկ հարաբերության մեջ է մտնում (2-րդի նկատմամբ), ապա 2-րդ նախադասությունը կապվում է թե՛ 1-ինի, թե՛ 3-րդի հետ: Ըստ որում 1-ինի նկատմամբ լրացում հանդիսացող 2-րդ նախադասությունն իր հերթին լրացման կարիք ունի, որի նկատմամբ էլ շարահյուսորեն գերադաս դիրքում է:

Թեև կառուցվածքային տեսակետից այսպիսի գերադաս նախադասության և ամբողջ կառուցվածքի գլխավոր նախադասության միջև կառուցվածքային տարբերություն է լինում (բուն գերադաս նախադասությունն առավել ինքնուրույն է), այնուամենայնիվ դրանք երկուսն էլ իրենց լրացնող նախադասության նկատմամբ գերադաս են, ուստի և այսպիսի և նման դեպքերում նպատակահարմար է գործածել **գերադաս նախադասություն** տերմինը, դրա տակ հասկանալով թե՛ գլխավոր և թե՛ այն երկրորդական նախադասությունը, որն ունի ստորադաս նախադասություն: Վերոհիշյալ օրինակում գերադաս են 1-ին ու 2-րդ բաղադրիչները:

Նպատակահարմար է նաև գործածել **ստորադաս նախադասություն** տերմինը, որով կարելի է անվանել նշված կառուցվածքի այն նախադասությունները, որոնք լրացնում են որևէ նախադասության (գլխավորին կամ երկրորդականին): Բերված օրինակում ստորադաս են 2-րդ ու 3-րդ բաղադրիչ նախադասությունները:

Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության մեջ ոչ միշտ է առկա միայն ստորադասական հարաբերություն: Բարդ ստորադասական նախադասության մեջ կարող է առկա լինել նաև համադասական հարաբերություն, քայց կապակցության ավելի ստորին օղակներում:

Ինձ թվում էր (1), թե այն հնչյուններն արձակում են հեռու բարձրությունում լողացող սպիտակ ամպերից (2), և ես հոգով ձգտում էի դեսյի վեր (3) (Շիրվ.): Թեև 2-րդ և 3-րդ նախադասությունները համադասական հարաբերության մեջ են գտնվում, քայց ամբողջ կառուցվածքը ստորադասական է, քանի որ այդ երկու նախադասություններից յուրաքանչյուրն իր հերթին ստորադասված է գլխավորին, և հիշյալ համադասական հարաբերությունը հետևանք է միևնույն նախադասության միևնույն անդամին միանման հարաբերությամբ կապված լինելուն:

ԲԱԶՄԱԲԱՂԱԳՐԻՉ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԳՐԻՉՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես երևում է, բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունների կառուցվածքը միատեսակ չէ: Այդ կառուցվածքը որոշվում է տվյալ բարդության մեջ եղած բաղադրիչների հարաբերությունների ամբողջությամբ: Այդ հարաբերություններն են՝ **ենթաստորադասություն, համաստորադասություն և տարաստորադասություն:**

ԵՆԹԱՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ենթաստորադասությունն այն հարաբերությունն է, որի դեպքում միևնույն բարդ նախադասությունը կազմված է երկուսից ավելի իրար ստորադաս նախադասություններից:

Բոլորի հայացքներն ուղղված են ծովի հեռավոր հորիզոնին, ուր հազիվհազ նշմարվում է ծխի մի փոքրիկ խողովակ, որը հանդարտությամբ բարձրանում է վեր (Շիրվ.): Պարտեզներ էլ կային, որոնք ծաղիկներ ունեին, որ ցերեկները բուրում էին անուշահոտ (ՀԹ): Այժմ սկսվե-

ցին լայն ճանապարհները, որ անցնում էին Արաքսի մերձակայքի կանաչագարդ տափաստաններով, երբ ավելի մոտենում էին գետի ափերին (Բ):

Բերված օրինակներից յուրաքանչյուրում առաջին բաղադրիչը գլխավոր նախադասություն է, երկրորդը լրացնում է առաջինին, իսկ երրորդը լրացնում է երկրորդին:

Այսպիսի նախադասության մեջ լինում է առնվազն երկու ստորադասություն, ինչպես վերևի օրինակներում է: Սակայն դրանց քանակը հաճախ լինում է ավելին:

Դեպի ամուսինը նա հենց սկզբից ոչինչ սեր չէր գգում, բացի երախտագիտության զգացմունքից, եթե միայն կարելի է այդպես անվանել այն զգացմունքը, որ ծնվել էր նրա մեջ դեպի երիտասարդ իշխանը նրա համար միայն, որ այս վերջինս էր եղել պատճառը, որ նրա փառասիրական բոլոր ցնորքներն ու ձգտումներն իրագործվել էին (ՆԳ):

Ենթաստորադասական կառուցվածքներում բաղադրիչների հարաբերությունը կարող է լինել **նույնաբնույթ և տարաբնույթ**: **Նույնաբնույթ** կոչվում է այն ենթաստորադասությունը, որի բոլոր բաղադրիչները կապված են միևնույն բնույթի շարահյուսական հարաբերությամբ, ասենք, կամ միայն ուղիղ խնդիր են, կամ միայն որոշիչ, կամ միայն ձևի պարագա և այլն: Այսպես՝ *Էս էն շունն է, որ գգել է էն կատվին, որ բռնել է էն մկանը, որ կերել է էն ցորենը, որ պահված էր էն տանը, որ շինել է վարպետ Օհանը (ՀԹ)* հայտնի օրինակում բոլոր երկրորդական նախադասությունները բնույթով որոշիչ են:

Լեզուն սովորաբար խուսափում է նույնաբնույթ բաղադրիչ նախադասությունների շատ կուտակումից, որովհետև բնույթի նույնությունը իր հետ սովորաբար բերում է նաև կապակցման միջոցների նույնություն, որ պատճառ է դառնում անցանկալի միօրինակության:

Հաճախադեպ է այնպիսի նույնաբնույթ ենթաստորադասությունը, որի բաղադրիչները կապակցվում են բառաբերականական տարբեր միջոցներով:

Ես կտամ քեզ մի առաջնորդ (1), որը կտանե միջնաբերդը (2), որտեղ շատ կգտնեք հիշյալ արձանագրություններից (3) (Բ): Այս օրինակի երկրորդ և երրորդ նախադասությունները բնույթով որոշիչ են, բայց կապակցված են տարբեր հարաբերական բառերով:

Միօրինակությունը պակաս զգալի է լինում նաև այն դեպքում, երբ միևնույն բնույթի ստորադաս նախադասությունները գերադասի հետ կապվում են նույն հարաբերական դերանվան քերականական (թվի, հոլովի) տարբեր ձևերով:

Մերձծովյան քամին տարուբերում էր արմավենու ճյուղերը, որի տակ փայլվում էին պտուղների պղնձյա հսկայական ողկույզները, որոնք ծանրացել էին ժամանակից, արևից և խոնավությունից (լր.):

Տարաբնույթ կոչվում է այն ենթաստորադասությունը, որի մեջ առկա են շարահյուսական տարբեր լրացական հարաբերություններ, այլ կերպ՝ տվյալ կառուցվածքի մեջ լինում են տարբեր գործառույթի ստորադաս նախադասություններ:

Անշուշտ ոչ ոքի մտքով չէր անցնում (1), թե ինչքան փոքր պիտի լինեն այդ սատանաները (2), որ տեղավորվեն ու խեղդվեն թասի ջրի մեջ (3) (ՆԳ): Մենք հաստատ գիտեինք (1), որ ծաղկեփունջն այրին ինքը չի դնում իր լուսամուտը (2), որովհետև ամեն անգամ ծաղկեփունջը տեսնելիս նա սառը դեմքով հրամայում էր աղախնուն՝ հեռացնել այն (3) (ՍԶ):

Առաջին օրինակի երկրորդ նախադասությունը ենթակա է, երրորդը՝ չափի պարագա, երկրորդ օրինակում երկրորդ նախադասությունը ուղիղ խնդիր է, երրորդը՝ պատճառի պարագա:

Բերենք մեկ այլ օրինակ. *Մանեն մայեց եղբորն այնպիսի հայացքով, որից երևում էր, որ չհասկացավ, թե ինչ ասաց Վահանը (ՆԳ):*

Ենթաստորադասական կառուցվածքի դեպքում հաճախ երկու տարբեր ստորադասական շաղկապներ գործածվում են կողք կողքի. դրանցից մեկը վերաբերում է հաջորդող ամբողջ ստորադասական կապակցությանը՝ ստորադաս նախադասություններին՝ միասին վերցրած, իսկ մյուսը (սովորաբար երկրորդը)՝ գերադասին անմիջապես հաջորդող նախադասությանը:

Սոսկալին այդ անհայտությունն էր, որովհետև եթե սպույզ իմացվեր, որ նա այլևս չկա, լաց կլինեին (Բակ.):

Ենթաստորադասական կապակցության բաղադրիչ նախադասություններն ունենում են հետևյալ շարադասությունը:

1. Գերադաս նախադասությունը կարող է լինել նախադաս, որին հաջորդում են ստորադաս նախադասությունները՝ ըստ հաջորդական լրացման:

Բայց որքա՛ն մեծ եղավ նրա զարմանքն ու ուրախությունը (1), երբ դեռ Գարդմանա գետակը չանցած տեսավ իշխանին (2), որ իջնում էր ամրոցի գառիվայրից (3) (Մուր.): Բայց պետք է ասել (1), որ նա երբեք չէր կարծում (2), թե հյղեհի պատճառ կարող է լինել ինքը (3) (ՍԶ):

2. Գերադաս նախադասությունը կարող է լինել հետադաս, որին նախորդում են ստորադաս նախադասությունները: Այս դեպքում սովորաբար գլխավորին լրացնող նախադասությունը ոչ թե դրվում է նրան կից, այլ լինում է բարդ նախադասության սկզբում, որին հաջորդում է լրացում նախադասությունը (կամ հաջորդում են նախադասություններ):

Երբ որ դպրոցների տեսուչն ինձ պատմեց Չորագյուղի մասին, թե... կողքին մթին անտառներ կան, որտեղ առատ է որսը, ես իսկույն համաձայնեցի (Բակ.):

Ստորադաս նախադասությունների շարադասությունն այս դեպքում ևս (ինչպես որ երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններում) կարող է չհամապատասխանել նկարագրվող երևույթների իրական հաջորդականությանը:

Նրա անկեղծությունն ու ճշմարտությունը մի այնպիսի հռչակ էր հանել պալատում (1), որ ամենքը նրա ստորադրյալներից ամբողջ մարմնով դողում էին (2), երբ նա հաշիվ էր պահանջում նրանցից իրենց հանձնված գործերի մասին (3) (ՆԳ):

Թեև այստեղ երկրորդ նախադասությունը լրացնում է 1-ինին, իսկ 3-րդը՝ 2-րդին, սակայն իրականում 3-րդ նախադասության արտահայտած իրողությունը նախորդում է 2-րդի արտահայտած իրողությանը: Սակայն սա հարցի սոսկ տրամաբանական և նույնիսկ դեմոտատային կողմն է: Ավելի կարևոր է այն, որ վերը բերված օրինակների պես բաղադրիչ նախադասությունների շարադասական հաջորդությունը համապատասխանում է նրանց քերականական լրացական հաջորդականությանը:

Եթե երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության մեջ գերադաս նախադասությունը շատ հաճախ կարող է լինել հետադաս, ապա ենթաստորադասական կառուցվածքում գերադաս նախադասության հետադաս գործածությունը սակավ դեպքերում է լինում:

3. Ստորադաս նախադասությունները կարող են լինել միջադաս, երբ լրացնում են գերադաս նախադասության մեջտեղում գործածված որևէ անդամի և քերականական անհրաժեշտությամբ պետք է դրվեն նրա մոտ:

Ճանապարհի շինարարության այն հատվածում, ուր դանդաղում են աշխատանքները, բանի որ փեղանքը շարք քարոս է և աննպաստ, լրացուցիչ մարդկային ուժի և տեխնիկայի կարիք է զգացվում: Ամեն անգամ, երբ նայում է մանուկներին, որոնք անհոգ, երջանիկ խաղում են, ուրախանում, նրա սիրտը լցվում է անհուն բերկրանքով (լր):

ՀԱՄԱՍՏՈՐԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Համաստորադասությունն այն հարաբերությունն է, երբ միևնույն գերադաս նախադասությանը ստորադասված են երկու կամ ավելի նույնատեսակ, համադասական հարաբերության մեջ գտնվող ստորադաս նախադասություններ:

Արդյոք գիտե՞ր նա, որ ինքը դողանջուն, անփառների ազատ երեխան է եղել, որ իր մայրը այնպես է կաթ փվել իրեն, որ այնպես է իր հայրը եղջյուրները խփել կաղնիներին (Իս):

*Ինձ քաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում,
երբ փխուր գգվանքով արեգակը մեռնող
Սարերի արծաթե կապարներն է վառում,
երբ մթնում կորչում են ծով ու հող (ՎՏ):*

Բերված օրինակներում կան երեքական ստորադաս նախադասություններ, որոնք լրացնում են գերադաս նախադասության միևնույն անդամին (ստորոգյալին) և համագոր են իրար: Դրանք հենց համաստորադաս նախադասություններ են, այսինքն՝ համադաս են միմյանց նկատմամբ և ստորադաս են գլխավոր նախադասությանը:

Բերված կառուցվածքներում ստորադաս նախադասությունների համադասությունը հետևանք է այն բանի, որ դրանք քերականական միևնույն հարաբերությամբ և միևնույն իմաստային բնույթով կապվում են գլխավոր նախադասության նույն անդամի հետ:

Համաստորադասական նախադասության համադաս նախադասությունները միմյանց նկատմամբ կարող են ունենալ այն հարաբերությունները, ինչ որ հատուկ է առհասարակ բարդ համադասական նախադասության բաղադրիչներին:

1. Դրանք կապվում են միավորական հարաբերությամբ: Միավորական հարաբերությունը՝ ա) կարող է հետևանք լինել այն իրողությանը, որ համադաս նախադասություններն առանձին-առանձին միևնույն քերականական հարաբերության մեջ են գտնվում գերադաս նախադասության նկատմամբ, բ) կարող է զուգակցվել բաղադրիչների միմյանց նկատմամբ, այսպես ասած, ակտիվ հարաբերությամբ (պատճառահետևանքային և այլն):

Ա Իսկ ճաշին, երբ աշակերտուհիները ցրվեցին իրենց փները, երբ օրհորդ Մարիամն սկսել էր կասկածել, հանկարծ երևաց հաշվապահը (ՄՁ): Այդ փոքրիկ քաղաքում, ուր փները միհարկանի են, կրուրները փափակ և փողոցները ծուռ ու կեղտոտ, ուր խանութներից շարերը ցուցանակ չունեն և ընփանիքների մի մասը՝ ինքնատե...նա երկար ժամանակից ի վեր կատարում էր այդ երկու պաշտոնը (ՄՁ):

Բ Կյանքը մի արյունոտ կոիվ է, ուր ամեն արարած պարսպվում է, և հաղթող չկա (Իս): Նա սկսել էր վախենալ, քե մարդիկ իրեն վախաբանել են, և ղեկավարությունը փոխել է իր որոշումը: Շարմաղ Բիրին շլսեց, քե զանգերն ինչպես լռեցին և ուր կորան նրանց վերջին քավ էլևէջները (ԱԲ):

Համաստորադասական կապակցության մեջ հանդես են գալիս կապակցության տարբեր միջոցներ՝ թե՛ ստորադասական և թե՛ համադասական: Այս երկու միջոցների գուգակցումը տարբեր համաստորադասություններում տարբեր կերպ է կատարվում:

Երբ համաստորադասության մեջ առկա է միավորական հարաբերություն, ստորադասական շաղկապը կամ շաղկապական բառը հաճախ կրկնվում է համադաս բաղադրիչներից յուրաքանչյուրի հետ, մանավանդ երբ խոսողը ցանկանում է շեշտել նրանց արտահայտած իմաստը:

Համաստորադասական նախադասության մեջ համադաս նախադասությունների կապը միմյանց հետ մեծ մասամբ արտահայտվում է շարահարությամբ:

Աշխարհիս երեսին բացի քեզանից ոչինչ, ոչ մի սրտակից չունեի, որի առաջ կարողանայի բանալ սիրտս, որի հետ կարողանայի խոսել մտերմորեն, որի ցավակցության, հոգացողության վրա կարողանայի հույս դնել (ԳԳ):

Այսպիսի կապակցություններում համադասական հարաբերությունը կարող է և արտահայտվել վերջին համադաս նախադասությունից առաջ դրվող միավորիչ շաղկապով: Վերջին օրինակի հետ **հմմտ**. *Աշխարհիս երեսին բացի քեզանից ոչինչ, ոչ մի սրտակից չունեի, որի առաջ կարողանայի բանալ սիրտս, որի հետ կարողանայի խոսել մտերմորեն և որի ցավակցության, հոգացողության վրա կարողանայի հույս դնել:*

Այսպիսի կապակցումը բնորոշ է հատկապես հավասարաթեք թվարկում արտահայտող համադաս նախադասություններով համաստորադասությանը (տե՛ս վերը՝ Ա կետում նշված կապակցությունը): Բ կետում նշված կապակցությունների համար բնորոշ է ստորադասական շաղկապի կամ հարաբերական դերանվան կրկնությունը. այստեղ ավելի հաճախակի են գործածվում համադասական կապակցման բառական միջոցները՝ շաղկապները:

Ես տեսա, որ նա կարդաց այդ մամակը, և նրա աչքերը խոնավացան:

Կարծում էի, թե նա խելացի անձնավորություն է և հոգատար կլինի մարդկանց նկատմամբ:

2. Համաստորադասական նախադասության համադաս բաղադրիչներ կարող են կապված լինել ներհակական հարաբերությամբ, որ բնորոշվում է բաղադրիչների տարբեր աստիճանի հակադրություններով ու համապատասխան կապակցման միջոցներով:

Ուրեմն ես օգուտ եմ քաղել այն բանից, որ դու անտարբեր չես դեպի Եվան, իսկ Եվան անտարբեր չէ դեպի ինձ (ՆԳ): Պարզվեց, որ Վանոյի տղան դպրոց չի գալիս ոչ թե հիվանդության պատճառով, այլ հայրը նրան դպրոցից հանում է աշխատանքի ուղարկելու նպատակով (ՆԶ):

Ի տարբերություն միավորական հարաբերության՝ ներհակական հարաբերության դեպքում կապակցման ստորադասական միջոցները չեն կրկնվում յուրաքանչյուր համադաս բաղադրիչի հետ միասին. ստորադասական հարաբերություն արտահայտող բառը (շաղկապ կամ շաղկապական բառ) գործածվում է առաջին համադաս նախադասությունից առաջ, իսկ համադաս նախադասություններն իրար հետ սովորաբար կապակցվում են ներհակական շաղկապներով (տե՛ս վերը բերված օրինակները):

Կապակցման այս յուրահատկությունը պայմանավորված է կապակցության բաղադրիչների հարաբերության յուրահատկությամբ՝ նրանով, որ համադաս նախադաս-

սությունները ներքին կապով միանում են իրար որպես մեկ ամբողջական կապակցություն, և ապա միասին կապակցվում գերադասի հետ՝ դառնալով նրա լրացում:

3. Համաստորադասական նախադասության համադաս բաղադրիչները կարող են ունենալ նաև տրոհական հարաբերություն և կապակցվել համապատասխան շաղկապներով:

Նա հմտորեն առաջ էր շարժվում դեպի հակառակորդի դիրքերը, երբ կամ մութ է լինում, կամ մառախլապատ: Նա որոշել էր, որ կամ ծնողներին կբերի իր մոտ, կամ ինքը կտեղափոխվի գյուղ՝ հայրական օջախը:

Կապակցման միջոցների տեսակետից տրոհական կապակցությամբ համաստորադասության յուրահատկությունն այն է, որ այստեղ պարտադիր կերպով գործածվում են տրոհական շաղկապներ: Իսկ կապակցման եղանակի և գերադաս նախադասության նկատմամբ հարաբերության ու կապակցման տեսակետից սրանք նման են ներհակական կապակցությամբ համաստորադասությանը:

4. Համաստորադասական նախադասության համադաս բաղադրիչները երբեմն կարող են ունենալ նաև հավելական հարաբերություն:

Նա առաջին անգամն է լինում Երևանում, որտեղ ականատես եղավ գիտության ու մշակույթի մեծ առաջընթացին, և դա նրան մեծ բավականություն պատճառեց:

ՏԱՐԱՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Տարաստորադասության դեպքում միևնույն լրացյալին կարող են ստորադասվել տարբեր գործառույթի ստորադաս նախադասություններ, տարբեր լրացյալների՝ նույն գործառույթի ստորադաս նախադասություններ, այլև կարող են ներառվել ենթաստորադասության ու համաստորադասության տարրեր:

Երբ արևը մութեցավ Դիզափայտի կապարին, ես համակ տեսողություն դարձա, որ մի անգամ ևս վայելեմ իմ հայրենի եզերքի չքնադ, բայց տխուր մայրամուտը:

Աշակերտները, որոնք խաղում էին դպրոցի բակում, նկատեցին այնտեղ կանգնած իրենց մտուցչին, որը հեռվից դիպում էր իրենց խաղը:

Առաջին օրինակում գերադաս նախադասության ստորոգյալին լրացնում են ժամանակի և նպատակի պարագա ստորադաս նախադասություններ: Երկրորդ նախադասության մեջ երկու որոշիչ ստորադաս նախադասությունները լրացնում են գերադաս նախադասության գոյականական տարբեր անդամների:

Դիտենք մեկ այլ նախադասություն:

Երբ մեքենաբար վեր կացա և չուզող քայլերով բաժանվում էի քանկազին գերեզմանից, հանկարծ տեսա Երվանդին, որ այդպես պարկառանքով՝ գլխահակ կանգնած մեկուսի դիպում էր ինչ (Իս.):

Այս նախադասության մեջ կա երեք ստորադաս նախադասություն. դրանցից առաջին երկուսը, որոնք իրար համագոր են, լրացնում են գերադասի ստորոգյալին, վերջինը՝ **Երվանդին** խնդրին: Այս օրինակում առաջին երկու ստորադաս նախադասությունները ժամանակի պարագա են, իսկ երրորդը՝ որոշիչ: Առանց այս վերջին ստորադաս նախադասության՝ բարդ կառույցը կլիներ բարդ համաստորադասական նախադասություն:

Հետևյալ նախադասությունը նման է վերը բերված օրինակին, բայց կառուցվածքի մեջ ունի որոշ տարբերություններ: *Երևում էր միայն պատուհաններից մեկը, որի փեղկերը բաց էին. և այդ պատուհաններից դուրս՝ դիմացի տան պատը, որ լուսավորված էր փողոցի լապտերի աղոտ լույսով (ՆԳ):* Երկու ստորադաս նախադասությունները լրացնում են գերադաս նախադասության բազմակի ենթականերին (*պատուհաններից մեկը, պատը*):

Անհամասեռ ստորադաս նախադասությունները կարող են լինել գերադաս նախադասության միևնույն անդամի լրացում:

Երբ Անահիտը եկավ, բոլորն ուրախացան, որովհետև նրան շար էին սիրում: Եթե Սուրենը գիրքը վերադարձրել է, տո՛ւր ինձ, որ ես էլ կարդամ:

Ընդգծված նախադասությունները, թեև լրացնում են միևնույն անդամին՝ ստորոգյալին, բայց քանի որ իրենց գործառույթով տարբեր են, ուստի և տարասեռ են:

Տարաստորադասական կապակցության բաղադրիչների շարադասությունը պայմանավորված է այդ կապակցության բնույթով:

Երբ ստորադաս նախադասությունները լրացնում են նախադասության տարբեր անդամների, նրանք դրվում են համապատասխան լրացյալ անդամի մոտ, մեծ մասամբ հետադաս:

Ամեն անգամ, երբ փեսաները գալիս էին ու գնում, նրանց թվում էր, թե իրենց այցելությանը իսկ մխիթարում են մենակ ծերունուն (ՍԶ): Հյուսիսային Հայաստանի անտառների մոտայլ ու գաղջ խորքերում, ջրերի ափերին, ուր շար էն արմատահան եղած ու փտող ծառերը, շատ է և այդ կենդանու քանակը, որովհետև այսպեղ առաք են զանազան միջապրներ ու որդեր (ՎԱ):

Միևնույն տարաստորադասական կապակցության մեջ ստորադաս նախադասությունները կարող են լինել թե՛ նախադաս, թե՛ հետադաս:

Երբ այդ մասին զգույշ խոսք բաց արեց բեկի մոտ, հակառակ իր սպասածին, բեկն անհող ծիծաղեց և միայն իրեն հատուկ հնարամտությամբ աշխատեց աննկատելի իմանալ, թե ով է այդ գաղտնիքը հայտնել նրան (ՍԽ):

Տարաստորադաս նախադասությունների շարադասության հարցում դեր կատարում է նաև տվյալ նախադասության բնույթը: Սակայն նախադասության բնույթի դերն այսպիսի կապակցություններում շատ սահմանափակ է, քանի որ այստեղ տարբեր գործոնները խաչաձևվում են: Տվյալ տարաստորադաս նախադասության շարադասությունը հաճախ պայմանավորված է նույն բարդ կառուցվածքում մեկ այլ ստորադաս նախադասության շարադասությամբ: Այսպես՝ *Որպեսզի ծառից ոչ մի արմավ չընկնի. հասուն ողկույզները փաթաթում են ձկնորսական ցանցով, որոնց ծայրերը կապում են ճյուղերին (ԳԱ)* բարդ նախադասության մեջ առաջին ստորադաս նախադասությունը նախադաս է, և այն հետադաս գործածվել չէր կարող, քանի որ այլ ստորադաս նախադասություն կա գործածված հետադաս: Ըստ որում վերջինս որոշիչ ստորադաս է, որ անմիջականորեն դրված է իր լրացյալի (*ցանցով*) մոտ՝ հետադաս: Բայց եթե տվյալ դեպքում չլիներ անհամասեռ ստորադասություն ստեղծող վերջին ստորադաս նախադասությունը, և մենք ունենայինք երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն, ապա նպատակի պարագա երկրորդական նախադասությունը կարող էր և դրվել հետադաս:

Հմնտ. Հասուն ողկույզները փաթաթում են ձկնորսական ցանցով, որպեսզի ծառից ոչ մի արմավ չընկնի:

Երբ ստորադաս նախադասությունները վերաբերում են գերադաս նախադասության միևնույն անդամին, սովորաբար դրանցից մեկը լինում է նախադաս, մյուսը՝ հետադաս:

Եթե դու մի անգամ մեր ամրոցն ու պահակավայրերը շրջագայես, կտեսնես, թե որքան շար գործեր են կատարվել (Մուր.): Երբ մենք հանդիպում ենք, ես մեծ բավականություն եմ գգում, որովհետև նա շար հաճելի ու խելացի գրուցակից է:

Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքը ոչ միշտ է սահմանափակվում վերոհիշյալ կառուցվածքային տեսակների տարբերակված արտահայտությամբ: Հաճախ ստորադասության վերոհիշյալ տեսակները հանդես են գալիս միևնույն նախադասության մեջ:

Նույն նախադասության մեջ կարող են հանդես գալ ենթաստորադասություն և համաստորադասություն:

Երբ սեղանն արդեն պատրաստ էր (2), և նրանք լցրած բաժակները բարձրացրել էին (3), որ իրար շրխկացնեն, լսվեց դրան ամուր թակոց (1), որն անցանկալի էր այդ պահին (4), բայց որին ոմանք սպասում էին (5):

Այս նախադասության մեջ առկա է թե՛ ենթաստորադասություն (*Երբ նրանք լցրած բաժակները բարձրացրել էին, որ իրար շրխկացնեն, լսվեց դրան ամուր թակոց*), թե՛ համաստորադասություն (*Երբ սեղանն արդեն պատրաստ էր, և նրանք լցրած բաժակները բարձրացրել էին, լսվեց դրան ամուր թակոց*): Համաստորադասություն է նաև գերադաս նախադասության և 4-րդ ու 5-րդ նախադասությունների կապակցությունը:

Բերենք այլ օրինակ.

Երբ այդպիսի մի ժողովուրդ տաժում է ու սպանում բարեկամություն, երբ սրեղծված մրայնության շնորհիվ նա լայն է նայում իր շրջապատին, աշխարհին, ժողովուրդներին, մենք ողջունում ենք նկատվող այդ նոր գիծը, որովհետև այն հարստացնում, լրացնում, ավելի ճիս ու ընդգրկուն է դարձնում հայության նկարագիրը (ՄԿ):

Միևնույն բարդ նախադասության մեջ կարող են զուգակցվել տարբեր ենթաստորադասություններ, որոնք բնականաբար անհամասեռ են միմյանց նկատմամբ, և այդպիսով ստեղծել մի յուրահատուկ բազմաբարդ կապակցություն:

Երբ լուր տարածվեց, թե Բեշիրը դիմում է Բյուրական՝ կաթողիկոսին ձերբակալելու, ճրգ-նավորը հրավեր կարդաց լուր գնդին գնալ հայրապետին օգնության, որովհետև նա էլ նույնաչափ լքյալ ու անօգնական էր, որքան անօգնական էր գեղջուկ ժողովուրդը (Մուր.):

Միևնույն բարդ ստորադասական նախադասության մեջ միաժամանակ կարող են հանդես գալ ենթաստորադասություն և համաստորադասություն՝ ստեղծելով տարաստորադասական բազմաբարդ կառուցվածք:

Եթե ընդունենք, որ սուպատրատի միացումը առաջացնում է կիսահեղուկ կաթիլի բյուրեղացում, այդ դեպքում փորձերը հեշտությամբ են բացատրվում, քանի որ շարժում կաթիլը ցանկացած ֆերմենտին ներկայացնում է իր տարբեր մասերը, իսկ բուն կառուցվածքը՝ միայն մի որոշակի մասի (ԳԱ):

Ինչպես երևում է, գերադաս նախադասությունը նախորդող կապակցության հետ կազմում է ենթաստորադասական, իսկ հաջորդող մասի հետ՝ համաստորադասական կապակցություն:

Իրար կարող են զուգակցվել **համաստորադասական** և **տարաստորադասական** կառույցներ:

Բայց հիմա, երբ իմացավ, որ Նունուֆարը տանն էր, նրան թվում էր, թե կոտրված մի բան նորոգվեց ու ամեն ինչ կարգի ընկավ (ՄԶ):

Բայց հիմա նրան թվում էր գերադաս նախադասությանը ստորադասված են տարբեր նախադասություններ. **հիմա** ժամանակի պարագային ստորադասված է *երբ իմացավ, որ Նունուֆարը տանն էր* ենթաստորադասական կապակցությունը, իսկ ստորոգյալին լրացնում են վերջին երկու համադաս նախադասությունները (համաստորադասություն):

Տարաստորադասությունը բազմաստիճան է դարձնում այն հանգամանքը, որ լրացյալները գերադաս նախադասության տարաբնույթ անդամներ են:

ՄՏԶԲԵՐՎՈՂ ԽՈՍՔՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գրելիս, խոսելիս հաճախ է կարիք լինում մեջբերելու, վկայակոչելու ուրիշի կամ սեփական խոսքը: Այդ անհրաժեշտությունը լինում է լեզվի գործառական բոլոր տարբերակներում՝ գիտական, գեղարվեստական, առօրյա, հրապարակախոսական, պաշտոնական-գործարարական: Այս տարածված երևույթը հայտնի էր «ուրիշի խոսք» անվանումով:

Ճշտված են շարահյուսական այս կառույցի ըմբռնումն ու անվանումը: Նախ՝ «ուրիշի խոսք» կոչվածը կարող է լինել ոչ միայն ուրիշի ասածը, այլև հենց իրենը՝ խոսողինը:

Մարտիրոս Մարյանն ասել է. «Բնությունն ամենամեծ փիլիսոփան է»:

Ես ասել եմ. «Զօգտագործված ժամանակը կորցրած զանձ է, որ անկարելի է գտնել»:

Առաջին օրինակում մեջբերված է ուրիշի, իսկ երկրորդում՝ խոսողի խոսքը:

Երկրորդ՝ քերականական տեսակետից կարևոր չէ, թե տվյալ խոսքը ում է պատկանում, այլ կարևորն այն է, որ **մեջբերվում է** որևէ մեկի ասածը, խոսքը և միացվում հեղինակի խոսքին: Բերված երկու օրինակներում ներկայացված ուղղակի խոսքերը այդպես են կոչվում միայն այն դեպքում, երբ մեջբերվում են որևէ մեկի կողմից, իսկ չակերտների մեջ ներկայացված այդ նույն նախադասություններն իրենց հեղինակների խոսքում ուղղակի խոսք (ուրիշի կամ մեջբերված) չեն: Այդպիսին դառնում են, երբ կապվում են հեղինակային խոսքի հետ, այսինքն՝ երբ որևէ մեկը մեջբերում է և քերականորեն շաղկապում իր խոսքին, ինչպես վերը բերված օրինակներում է: Ահա թե ինչու քննարկվող կառույցը պետք է կոչել **մեջբերվող**:

Մեջբերվող խոսքը (նախադասությունը) շարահյուսական ինքնուրույն միավոր չէ. այն կապակցվում է հեղինակային խոսքի հետ և կազմում մի ամբողջական կառույց: Այն լիարժեք քննելու համար անհրաժեշտ է վերցնել հեղինակային խոսքի հետ կապակցության մեջ: Մեջբերվող խոսքը ոչ թե պարզապես կցվում է հեղինակային խոսքին, այլ նրա հետ կազմում է մի իմաստային, հնչերանգային, կառուցվածքային ամբողջություն, որի բաղադրիչները որոշակի փոխադարձ կապի մեջ են և ունեն ոչ միայն իմաստային, այլև կառուցվածքային փոխներգործություններ, փոխ-

պայմանավորվածություններ: Այստեղ նշենք դրանցից միայն մեկը. մեջբերվող խոսքի շարահյուսական գործառույթը հիմնականում պայմանավորված է հեղինակային խոսքի բայ-ստորոգյալի կամ լրացյալ դերբայի սեռով (սովորաբար ներգործական կամ կրավորական սեռով):

Այս ամենից բխում է, որ մեջբերվող և հեղինակային խոսքերը պետք է դիտել որպես մի ամբողջական կառույց՝ **մեջբերվող խոսքով կապակցություն**, և ուսումնասիրել ու ուսուցանել որպես այդպիսին:

Մեջբերվող խոսքի երկու տեսակները լայն ու բազմազան ընդգրկում ունեն. ավելացնենք՝ դրանք կարող են լինել թե՛ ուրիշի և թե՛ խոսողի խոսքը: Մեջբերվող խոսքով կառույցներ դիտարկենք Ավետիք Իսահակյանի «Հիշատակարան»-ից բերված հետևյալ հատվածում, որտեղ ներկայացվում է մեծ բանաստեղծի՝ արտասահմանից Հայաստան վերադառնալուց հետո Շուշիկի հետ ունեցած իր գրույցը.

«Շուշիկն ասաց. «Ավետի՛ք, հիշո՞ւ՛մ ես Ղփչաղ, այն կարմիր ծաղիկը՝ բաց, նուրբ կարմիր, բայց մեղմ կտրտված քերթերով: Ի՞նչ էր նրա անունը... (1)

Ես չհիշեցի:

- Այն ծաղիկը, որ դու քաղեցիր բարձր ժայռի կրծքից: Զորում մի բարձր ժայռ կար մազլցեցի ու քաղեցիր... (2)

Ես ասացի, որ բնավ չեմ հիշում, բոլորովին մոռացել եմ (3):

Բայց ասացի մտքիս մեջ. «Այդ մեր սիրո, մեր երջանկության ծաղիկն էր, որ քառամեկ ու մեռավ անդարձ»: ...Այո՛, երջանկությունը, սերը անկրկնելի է» (4): (Մեջբերման մեջ կառուցվածքային որևէ փոփոխություն չենք կատարել: Ծավալը սեղմելու նպատակով դուրս ենք թողել միայն որոշ նախադասություններ:)

Առաջին երկու մեջբերվող խոսքերը ուրիշի (Շուշիկի) խոսք են, իսկ երրորդը և չորրորդը խոսողին են (հեղինակին)՝ Իսահակյանին:

Բերված օրինակները հավաստում են նաև, որ մեջբերվող խոսքը կարող է շատ լայն ընդգրկում ունենալ: Այն կարող է կազմված լինել ոչ միայն երկու նախադասություններից, ինչպես վերը բերված օրինակի մեջ է, այլև լինել ավելի շատ ծավալուն, մանավանդ գիտական, պաշտոնական խոսքի մեջ: Ահա մի օրինակ, որ մեջբերում ենք մեծ կրճատումով:

Ռժուսկին գրում է. «Հետևյալ օրերը մեզ համար հանգիստ անցան: Մեզ տանջում էին միայն սարսափելի շոգերը, ճանճերը և զանազան սողունները...Շոգերից մենք փրկություն գտնում էինք այն գետնափորերում, որոնք շինված էին համարյա ամբողջ Անիի տակ: Գնդի հրամանատարը շոգի տոթից հանգստանալու տեղ ընտրեց մի ամբողջ ստորերկրյա դահլիճ...» (Լեռ):

Ավելացնենք, որ մեջբերվող խոսքը կարող է արտահայտվել նաև մեկ բառով, որը նախադասություն չի կազմում:

Մի՞տղ է, ինչպես մի անգամ

Ինձ ասացիր դու. «Գնչու» (ՎՏ):

Միլուետը արագ դուրս լողաց փողոց, և հետևեց թույլ ճիչը. -Ա՛, ա՛ (լր):

-Մի՞թե, - գուցե Սմբատը հեզնությանը (Շիրվ.): -Ը՛սս, - ասում է նա՝ գլուխն ուտերի մեջ խրելով (Քակ.):

Մեկ մեջբերվող խոսքով կապակցությունը կարող է գործածվել մի նոր կազմվող մեջբերվող խոսքում և այդպիսով կազմել երկաստիճան կառույց:

Շարլ Ազնավուրն իր ինքնակենսագրականում գրում է. «Շարունակում եմ երգել ու ինքս ինձ ասում. - Բանի տեղ մի՛ դնի, արա՛ այնպես, կարծես ոչինչ չի եղել»: Ահա թե ինչ է գրում Ազնավուրն իր մասին. «Դժվար կյանքս ու խաբված սերերս են, որ ինձ դարձրին այն, ինչ կամ, ու համարձակվում եմ ասել. -Թող սա ինքնագովություն չթվա, ես ինձ դուր եմ գալիս»:

Մեջբերվող խոսքով կապակցությունն ունի երկու հիմնական տեսակ՝ **մեջբերվող ուղղակի խոսքով կապակցություն և մեջբերվող անուղղակի խոսքով կապակցություն:**

Այս բաժանման հիմքում ընկած են մեջբերվող և հեղինակային խոսքերի քերականական կապի ու փոխհարաբերության ու մեջբերվող խոսքի քերականական հարաբերական ինքնուրույնության աստիճանն ու բնույթը:

Հմնտ. *Ավետիք Իսահակյանն ասել է. «Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է ուսուցչին»:*

Ավետիք Իսահակյանն ասել է, որ յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է ուսուցչին:

Ինչպես տեսնում ենք, մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսքերը բառացիորեն նույնն են: Տարբերությունը միայն հեղինակային խոսքի հետ քերականական կապի մեջ է: Ուղղակի խոսքը շարահարությամբ է կապվում հեղինակային խոսքի հետ, առկա է արտասանական փոքր դադար, զգալի է խոսքի երկու բաղադրիչների մաս քերականական, հնչերանգային ինքնուրույնությունը: Մինչդեռ անուղղակի խոսքի դեպքում մեջբերվող և հեղինակային խոսքերի միջև ավելանում է կապակցող բառ (շաղկապ), արտասանական դադարը ավելի փոքր է, ընդհանուր կառուցվածքը համապատասխանում է բարդ ստորադասական նախադասության կառուցվածքին, ակնհայտ է կառուցվածքի ընդհանուր, միասնական հնչերանգը:

ՄԵՋԲԵՐՎՈՂ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ.

ՄԵՋԲԵՐՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ

Մեջբերվող անուղղակի խոսքով կապակցությունը կառուցվածքային առումով բարդ ստորադասական նախադասություն է, որի մեջ հեղինակային բաղադրիչը լինում է գերադաս նախադասություն, իսկ մեջբերվող բաղադրիչը՝ ստորադաս:

Ղազար Փարպեցին ասել է, որ խոհեմ իմաստնությամբ կարելի է հաղթել մեծ գորությանը:

Այսպիսի կառույցներում գերազանցապես գերադաս նախադասության ստորոգյալը լինում է ներգործական սեռի ասացական կամ մտածական բայ, իսկ ստորադաս նախադասությունը՝ ուղիղ խնդիր, ինչպես բերված օրինակում է: Հաճախ է պատահում, որ այսպիսի կառույցի գերադաս նախադասության ստորոգյալն արտահայտվում է բայի կրավորական սեռով: Այսպիսի դեպքերում ստորադաս նախադասության շարահյուսական դերը, բնականաբար, փոխվում է. այն ենթակայի դեր է կատարում:

Դեռևս հինգերորդ դարում է ասվել, որ խոհեմ իմաստնությամբ կարելի է հաղթել մեծ գորությանը:

Մեջբերվող ուղղակի խոսքը և հեղինակային խոսքը իրար հետ կապվում են տարբեր միջոցներով, որոնցից առավել ամենազխասավորները երկուսն են՝ **շարահարություն** և **խնդրառություն**: Ավելացնենք, որ շարահարությունը հատուկ է ուղղակի խոսքով կապակցությանը, իսկ խնդրառությունը՝ նաև անուղղակի խոսքով կապակցությանը:

Կապակցման հարցում ընդհանրապես, այդ թվում և հատկապես մեջբերվող ուղղակի խոսքի շարահարական կապի դեպքում նրա դերը մեծ է: Հնչերանգի մի բաղադրիչ է դադարը՝ կապակցվող միավորների միջև, այսինքն՝ դադարն էլ է կապի դեր կատարում տվյալ կառույցի հնչերանգի համակարգում:

Ծանոթություն: Տրոհելու և կապելու փոխհարաբերությունը լեզվի կառուցվածքում կարևոր հարց է, և հարկ կա այն մի փոքր ավելի մանրամասն քննելու:

Քերականական դադարը ոչ միայն տրոհում, այլև դրա հետ միասին և հենց դրանով իսկ կապակցում է իր տրոհած բաղադրիչները: Հիշենք տարբեր տրոհումները, որոնք գրավոր խոսքում արտահայտվում են ստորակետով, միջակետով և վերջակետով: Կետադրական այս նշանները, նշելով տարբեր աստիճանի տրոհումներ, դրանով իսկ ընթերցողին հուշում են, թե շարահյուսական տվյալ կապակցության մեջ իրենք շարահյուսական ինչ արժեք ունեցող տրոհում են ձևավորվել՝ նշելով կապակցվող բաղադրիչների սահմանը:

Այս առումով առավել ակնհայտ է բութ նշանի դերը. այն բացահայտության նշան է, բացահայտում է բացահայտյալի իմաստը:

Բայց բութը համարվում և հանդիսանում է տրոհության նշան, քանի որ նրանով բացահայտիչը յուրահատուկ դադարով տրոհվում է բացահայտյալից: Ուրեմն բութը տվյալ և այլ դեպքերում, արտասանական առումով նշելով տրոհում, հենց դրանով էլ նշում է այն քերականական կապը, որ կա իրենով տրոհված քերականական միավորների միջև:

Մեջբերվող ուղիղ խոսքի և հեղինակային խոսքի կապի մյուս միջոցը, ինչպես ասվեց, խնդրառությունն է: Այս հարցը կարիք է զգում որոշ մեկնաբանության:

Մեջբերվող խոսքը անմիջականորեն կապվում է հեղինակային խոսքի ստորոգյալի հետ, որը սովորաբար լինում է ասացական բայ՝ ներգործական սեռի. **ասել, գրել, հայտնել, հաղորդել, հայտարարել, հարցնել, պատասխանել, բացատրել, գեկուցել, մտածել, խորհել** և նման շատ բայեր: Մեջբերվող խոսքը հանդես է գալիս որպես հեղինակային խոսքի մեջ գործածված այս և նման բայերի ուղիղ խնդիր:

Ուսուցիչը հայտնեց. «Վաղը՝ ժամը 14-ին, դասարանով գնալու ենք քանդարան»: Վերջին նամակում գրել է. *«Շուտով կվերադառնամ, չանհանգստանաք»:*

Կապակցման այս միջոցը վերաբերում է նաև մեջբերվող անուղղակի խոսքով կապակցությանը: Այսպես՝ *Ուսուցիչը հայտնեց, որ հաջորդ օրը՝ ժամը 14-ին, գնալու են քանդարան: Վերջին նամակում գրել է, որ շուտով կվերադառնա, չանհանգստանան: Եվ դա այդպես է ոչ միայն լեզվի մեջ: Բնակարանի սենյակները միջանցքով ոչ միայն բաժանվում են, այլև կապվում: Մարմնի մասերը հողերով ոչ միայն բաժանվում են իրարից, այլև կապվում են միմյանց: Գլուխների և ենթազուխների բաժանված գիրքը ներկայացնում է ուսումնասիրության հարցերը համակարգային կապերի մեջ:*

Նշված և նման ներգործական սեռի բայերը կարող են նույն դիրքում գործածվել նաև կրավորական սեռի դեպքում: Այս պարագայում բայի սեռի թելադրանքով մեջբերվող խոսքի շարահյուսական գործառույթը փոխվում է. այն կատարում է ենթակայի կամ խնդրի դեր:

Հեղինակային խոսքում գործածվող բայերը հաճախ, պահպանելով ասացական իմաստը, ստանում են իմաստային այլ նրբերանգներ, որոնցով արտահայտվում է ասելու գործողության տարբեր երանգային հատկանիշներ: Այդպիսիք են՝ **առարկել, հակաճառել, կրկնել, գոռալ, բղավել, շնչալ, ընդհատել, միջամտել, համառել, շարունակել, պնդել, շեշտել** և այլն:

Չաքարեն շնչալ. «Ահա և քաղաքի պարիսպը» (ՄԶ): *Խորենն արդեն հարցաքննում է . «Հա՞ն ես»* (ՎՊ): *Կախարդական գավազանը բարձրացնելով՝ ծղրլուս.* «Քարացեք» (ՎՊ): *Վատ է լինելու թռռնիկիս ճակատագիրը,- վշտացավ Փառանձենը* (լր.): *Հետո տարեց մարդու լրջությամբ ավելացրեց.* - *Սուգ անելու համար էլ փորդ կուշտ պիտի լինի* (Բս.): *Դուք հանգիստ գնացեք ձեր տները,- կրկնում է տերտերը* (ՄԶ):

*Բուրաստանի ծեր պահակին
Մի անցորդ դիմեց խնդրով.
- Մի վա՛րդ տուր ինձ՝ դնեմ կրծքիս,
Ուրախանամ այդ պերճ գարդով:
Մի ցավագին սարսուռ անցավ
Ծեր պահակի և վարդերի սրտի միջով.
- Ո՛վ, բարեկամ, կարելի չէ,
Ես ո՞ր վարդը, ասա՛, քաղեմ,
Որ մյուսը չըհատաչէ:*

(Ավ. Իսահակյան)

Մեջբերվող խոսքը քերականորեն կարող է լրացնել հեղինակային խոսքի ոչ միայն դիմավոր բային, այլև դերբայով արտահայտված անդամին:

Երբ գդակ էին տալիս, նա մի կողմ էր նետում՝ ասելով. «Իմ փափախը տվեք, դնեմ, ուրիշը չեմ ուզում» (Բս.): *Չայրացած ու մտախտի քայլում էր՝ ինքն իրեն մտորելով. «Ինչո՞ւ մարդ իրեն ավելի դժվար է ճանաչում, քան ուրիշներին»:*

Սովորաբար մեջբերվող անուղղակի խոսքը ձևավորվում է ուղղակի խոսքի փոխակերպումով: Մտքերի առօրյա հաղորդակցման ընթացքում հաճախ է կարիք լինում հիշելու, հիշեցնելու ուրիշի կամ սեփական ասած (գրած) որևէ միտք: Շատ դեպքերում կարիք չի լինում խոսքը մեջբերել ճշգրտությամբ, այլ ավելի շատ պետք է լինում այն մեջբերել պատմողաբար:

Հայտնեցին, որ ուսանողների այսօրվա հավաքը հետաձգվում է:

Ժպիտոր երեսին մոտեցավ, պատվիրեց, որ ձիուն լավ նայեմ և չթողնեմ, որ մոտենա մյուս ձիերին (Բակ.):

Մեջբերվող ուղղակի խոսքով կապակցությունը անուղղակի խոսքով կապակցության փոխակերպելիս կատարվում են մի շարք փոփոխություններ: Այդ փոփոխությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) ընդհանրական կառուցվածքային փոփոխություններ, որոնք տեղ են գտնում մեջբերվող խոսքով կապակցությունների բոլոր տարատեսակների դեպքում, բ) փոփոխություններ, որոնք համեմատաբար մասնակի երևույթների են վերաբերում, մեծ մասամբ ունեն իրադրական բնույթ:

Ընդհանրական կառուցվածքային փոփոխությունները վերաբերում են մեջբերվող խոսքով կապակցության բուն էությանը, խոսքի հեղինակային և մեջբերվող բա-

դադրիչների կապակցմանն ու հարաբերությանը. շարահարական կապակցությունը վերածվում է շաղկապական կապակցության, երկու բաղադրիչների մեջ զգալի դադարը վերածվում է ավելի փոքր դադարի (որը հատուկ է գերադաս և ստորադաս նախադասությունների միջև եղած դադարին), ամբողջ կապակցությունը ձեռք է բերում մեկ միասնական ընդհանուր հնչերանգ:

Նա միշտ ասում էր. «Հայրենիքն ամենաթանկ բանն է»:

Տնօրինության անունից կրկին հիշեցնում եմ. «Անհապաղ վերադարձրե՛ք գրադարանի գրքերը»:

Ես տեղյակ եմ պահել. «Զբաղվածությանս պատճառով առաջիկա միջոցառմանը չեմ մասնակցելու»:

Մտածե՛ք. «Մեր աշխատակիցներից ովքե՞ր են մասնակցելու գիտաժողովին»:

Այս տարբեր կառուցվածքի կապակցությունները փոխակերպվում են միևնույն սկզբունքով.

Նա միշտ ասում էր, որ հայրենիքն ամենաթանկ բանն է:

Տնօրինության անունից հիշեցնում եմ, որ անհապաղ վերադարձնե՛ք գրադարանի գրքերը:

Ես տեղյակ եմ պահել, որ զբաղվածությանս պատճառով առաջիկա միջոցառմանը չեմ մասնակցելու:

Մտածե՛ք, թե ձեր աշխատակիցներից ովքեր են մասնակցելու գիտաժողովին:

Ընդհանրական հնչերանգ ասելով՝ նկատի ունենք ոչ միայն բաղադրիչների արտասանական սերտ կապը, այլև այն իրողությունը, որ կապակցության մեջբերվող մասից (նախադասությունից) վերանում է հրամայական և հարցական հնչերանգը, և ամբողջ կապակցությունը ստանում է պատմողական երանգ, այլ կերպ՝ հեղինակային խոսքի հնչերանգը տարածվում է նաև մեջբերվող բաղադրիչի վրա:

Հմնտ. *Տնօրենը հանձնարարեց տեղակալին. «Հո՛գ տարե՛ք ժամանող հյուրերի նկատմամբ»:*

Տնօրենը հանձնարարեց տեղակալին, որ հոգ տանեն ժամանող հյուրերի նկատմամբ:

Եթե մեջբերվող խոսքը ներկայացնող նախադասությունն արտահայտված է անորոշ դերբայով ձևավորված հրամայական նախադասությամբ, ապա փոխակերպելիս այն վերածվում է դիմավոր նախադասության:

Հմնտ. *Զորավարժության ժամանակ հրամանատարը հրամայեց. «Դասակ, գրավե՛լ դիմացի բարձունքը»:*

Զորավարժության ժամանակ հրամանատարը հրամայեց, որ դասակը գրավի դիմացի բարձունքը: Կամ՝ ... հրամայեց դասակին, որ նա գրավի դիմացի բարձունքը:

Մեջբերվող խոսքի փոխակերպման հետ կապված միջոցների այս դասակարգումը օգնում է ճիշտ հասկանալու այդ փոփոխությունների էությունը, պատճառները և հատկապես այն, որ ընդհանրական կառուցվածքային փոփոխություններն ընկած են մասնակի կառուցվածքային փոփոխությունների հիմքում:

Մասնակի կառուցվածքային փոփոխությունները հիմնականում իրադրական բնույթի են՝ կապված դիմային, տարածական, ժամանակային հարաբերությունների հետ: Այս խմբի մեջ են մտնում նաև ուղղակի խոսքում եղած հուզական, զգացական իմաստ ունեցող բառերի, այլև կոչականների չգործածվելը անուղղակի խոսքի մեջ:

Մեջբերվող ուղղակի խոսքի՝ անուղղակի վերածման խնդրում հատուկ կարևորու-

թյուն է ստանում այն իրողությունը, որ ուղղակի խոսքում գործածվող բառը (կոչական) անուղղակի խոսքում կարող է հանդես գալ հեղինակային խոսքում:

Հմմտ. *Հակոբը խորհուրդ տվեց. «Արամ, դու հանգստանալու կարիք ունես»:*

Հակոբը խորհուրդ տվեց Արամին, որ նա հանգստանալու կարիք ունի:

Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ ուղղակի խոսքի կոչականը դարձել է հանգման խնդիր հեղինակային խոսքում: Սա, ըստ էության, մեջբերվող խոսքի երկու հիմնական բաղադրիչների միաձուլման, սերտաճման մասնակի երևույթ է:

Մեջբերվող ու հեղինակային խոսքերի փոխակերպները հաճախ շատ են տարբերվում իրենց կառուցվածքով:

Հմմտ. *Ես նրան երեկ ասել եմ. «Վաղն արի՛ ինձ մոտ»:*

Ես նրան երեկ ասել եմ, որ այսօր գա ինձ մոտ:

Նա երեկ ինձ հարցրեց. «Դու ի՞նչ կարծիք ունես այսօր քննարկվելիք հարցի մասին»:

Նա երեկ ինձ հարցրեց, թե ես ինչ կարծիք ունեմ երեկ քննարկված հարցի մասին:

Ինչպես տեսնում ենք, բառական, ձևաբանական զգալի տարբերություններից բացի՝ մեջբերվող խոսքերը երկու օրինակներում էլ փոխել են իրենց երանգը. առաջին օրինակի հրամայական և երկրորդ օրինակի հարցական նախադասությունները վերածվել են պատմողականի: Այս կապակցությամբ նշենք նաև հետևյալը. առաջին նախադասության բաղադրիչները անուղղակի խոսքում կապված են **որ**, իսկ երկրորդ օրինակի համապատասխան բաղադրիչ նախադասությունները՝ **թե** շաղկապով: Այս հարցում դեր են կատարում այդ երկու շաղկապների տարբեր իմաստները. **որ**-ը հաստատական իմաստ ունի, որը համապատասխանում է **ասել եմ** բային, իսկ **թե**-ն ունի երկբայական, թեական իմաստ, և դա համապատասխանում է **հարցնում էր** բայի բառական իմաստին:

Ինչպես տեսնում ենք, մեջբերվող խոսքի քննությունն ամբողջ կապակցության մեջ, իհարկե, բաղադրիչների կապի ու փոխհարաբերության հաշվառումով արդյունավետ է: Դա բխում է այդ կառույցի էությունից և առավելագույնս նպաստում է կառույցի էության բացահայտմանը:

Որո՞նք են իրադրական իրակությունները մեջբերվող խոսքում, ի՞նչ փոփոխությունների են ենթարկվում դրանք փոխակերպման դեպքում և ի՞նչ հիմունքով:

Իրադրական կոչում ենք լեզվական այն իրակությունները (քերականական, բառական), որոնց նշանակյալը արտահայտվում և հասկացվում է՝ պայմանավորված որոշակի իրադրականությամբ: Մեջբերվող խոսքի համակարգում գործող այդպիսի լեզվական միջոցներ են՝

ա) բայի քերականական դեմքերը,

բ) դերանվան դեմքերը,

գ) եռաշարք ցուցական դերանունները՝ **այս, այդ, այն** և դրանցով կազմված բաղադրյալ դերանունները՝ **այսպիսի, այդպիսի, այնպիսի. այսպես, այդպես, այնպես. այսքան, այդքան, այնքան. այստեղ, այդտեղ, այնտեղ** և այլն: Ցուցական դերանունների այս եռաստիճանությունը թե՛ ծագումով և թե՛ իմաստով առնչվում է անձնական դերանունների երեք դեմքերի հետ.

դ) **գ** կետում նշված բառերով (որպես առաջին բաղադրիչ) ձևավորված բաղա-

դրյալ բառեր՝ **այսօր** (այլև այս հակադրությամբ՝ **երեկ, վաղը**), **այստեղացի, այդտեղացի, այնտեղացի (նույնտեղացի), այսօրինակ, այդօրինակ, նույնօրինակ** և այլն.

ե) տարածական, ժամանակային հարաբերություն արտահայտող այլ բառեր՝ **նախորդ** (տարի, ժամը, շենքը), **հաջորդ**, որոնք գործածվում են **այս** (տարի, ժամը, շենքը) դերանվան հարաբերությամբ.

զ) որոշակի իրադրականություն ունի կոչականը, որը խոսող-խոսակից հարաբերության մեջ ներկայացնում է խոսակից եզրը կամ մտածվում է որպես խոսակից:

Նշված բոլոր կետերն ունեն իրադրականության ընդհանուր հատկանիշ. բոլորն էլ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են խոսելու գործընթացը ներկայացնող երեք դեմքերին. կամ ուղղակիորեն նշում են այդ դեմքերը, կամ առարկան, երևույթը ցույց են տալիս այդ դեմքերի հետ առնչվող ժամանակային, տարածական հարաբերությամբ: Ասվածը դիտարկենք փոխակերպման մեկ օրինակի վրա:

Ա *Ուսուցիչը դիտողություն արեց. «Արամ, դու քո գրավորում կրկնել ես նախկինում քո կատարած սխալները, թեև ես քեզ շատ եմ զգուշացրել»:*

Փոխակերպենք:

Բ *Ուսուցիչը դիտողություն արեց Արամին, որ նա իր գրավորում կրկնել է նախկինում իր կատարած սխալները, թեև ինքը նրան շատ է զգուշացրել:*

Ա օրինակում մեջբերվող ուղղակի խոսքում նախադասության ենթական արտահայտված է երկրորդ դեմքով, և բնականաբար այդ նույն դեմքով են արտահայտված ստորոգյալը, խոսակցին ներկայացնող դերանունները (**կրկնել ես, դու, քո, քեզ**): Նշենք, որ երկրորդ դեմքի արժեք ունի նաև կոչականը (**Արամ**): Բերված օրինակում գործածված են նաև առաջին դեմքով բառաձևեր՝ (**ես, զգուշացրել եմ**). սա հասկանալի է, քանի որ խոսողը, խոսքի հեղինակը քերականորեն առաջին դեմք է:

Նույն նախադասության փոխակերպված տարբերակում մեջբերվող ուղղակի խոսքը (նախադասությունը) զրկվում է իր հարաբերական ինքնուրույնությունից, միաձուլվում է հեղինակային (գերադաս) նախադասությանը. երկրորդ դեմքը (խոսակիցը) իր դիմային և այլ արտահայտություններով վերածվում է երրորդ դեմքի, որի մասին խոսվում է: Ամբողջ մեջբերվող խոսքը վերակառուցվում է այս առումով: Երկրորդ դեմքը վերածվում է երրորդ դեմքի՝ իր բոլոր կիրառություններով: Կոչականը ևս կորցնում է երկրորդ դեմքի արժեքը, դառնում է խնդիր լրացում՝ մտնելով գերադաս նախադասության կազմի մեջ: Երրորդ դեմքով է արտահայտվում նաև մեջբերվող նախադասության հեղինակի խոսքը. *«Ես քեզ շատ եմ զգուշացրել»* դարձել է *«ինքը նրան շատ է զգուշացրել»*, այսինքն՝ ուղղակի խոսքը վերածվել է երրորդ դեմքով արտահայտված անուղղակի խոսքի, որի մասին խոսվում է:

Ուղղակի խոսքը անուղղակիի վերածելու դեպքում դիմային փոփոխության մասին որոշ գաղափար տալիս կարող են տալ հետևյալ փոխակերպումները.

Մեջբերվող ուղղակի խոսքով կապակցություն.

1. *Հակոբն ինձ ասաց. «Դու հանգստանալու կարիք ունես»:*
2. *Հակոբը քեզ ասաց. «Դու հանգստանալու կարիք ունես»:*
3. *Հակոբը Արամին ասաց. «Դու հանգստանալու կարիք ունես»:*

Մեջբերվող անուղղակի խոսքով կապակցություն.

1. *Հակոբն ինձ ասաց, որ ես հանգստանալու կարիք ունեմ:*
2. *Հակոբը քեզ ասաց, որ դու հանգստանալու կարիք ունես:*
3. *Հակոբը Արամին ասաց, որ նա հանգստանալու կարիք ունի:*

Ուղղակի խոսքով կապակցություններում ունենք միևնույն ուղղակի մեջբերվող խոսքը՝ միևնույն դու ենթակայով, որը տարբեր գերադաս նախադասություններում (հեղինակային խոսքում) համապատասխանում է տարբեր քերականական դեմքով արտահայտված բառերի՝ ինձ, քեզ, Արամին: Բայց յուրաքանչյուր նախադասության մեջ այդ տարբեր դեմքերն արտահայտում են միևնույն նշանակյալը: Եվ նշանակյալի ընդհանրությունը հնարավորություն է տալիս, որ փոխակերպման դեպքում մեջբերվող խոսքում ելակետ ընդունվի գերադաս նախադասության մեջ գործածված դեմքը (ինձ ասաց, որ ես..., քեզ ասաց, որ դու..., Արամին ասաց, որ նա...):

Եթե հեղինակային և մեջբերվող նախադասությունների ենթակաները տարբեր են, երկուսն էլ պահպանվում են:

Հակոբն ինչ ասաց. «Ես հանգստանալու կարիք ունեմ»:

Հակոբն ինչ ասաց, որ ինքը հանգստանալու կարիք ունի:

ՈՒՂՂԱԿԻ ՄԵՋԲԵՐՎՈՂ ԽՈՍՔԻ ՇԱՐԱՊԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուղղակի մեջբերվող խոսքի շարադասությունը միօրինակ չէ:

1. Այն կարող է դրվել հեղինակի խոսքից հետո:

Մայրենի լեզվի մասին գրել եմ. «Պահպանելու համար պետք է սիրել, սիրելու համար պետք է ճանաչել»:

Տիկին Էլոիզը խղճահարվեց և նրա սիրտը շահելու համար ասաց. «Իմ երիտասարդ բարեկամը թող չփխրի» (Բակ.): Աղամ ... հոգեսպառ ասաց. «Իմ չքնաղ ընկերս, նայի՛ր հեռուն, ի՞նչ վսեմ է» (Իս.):

2. Այն հաճախ դրվում է հեղինակի խոսքից առաջ:

- Դու, որ սիրում ես ինչ այդչափ, շո՛ւրդ փար ինչ այսփեղից. ես վաղուց սպասում էի քեզ,- ասաց աղջիկը, և վարդի պես բռնկվեց նրա դեմքը (Իս.): - Դիվանագիտությունը փառքարյունություն չի սիրում,- ասաց մեղմ ու հեռացավ արագիլի քայլերով (ՍԽ): «Դժվարն այն է, որ փայտանից դուրս գամ. այնուհետև ոչինչ»,- մտածում եմ ես (ՍԶ):

3. Հեղինակային նախադասությունը հաճախ դրվում է մեջբերվող խոսքի մեջ:

- Գիտե՞ք ինչու համար երեխաներին չթողեցի եկեղեցի գնալ,- շարունակեց նա,- որովհետև պահանջողը ու ձեր մորը դրդողը ձեր քույրն է (Շիրվ): - Զափազանց ճարպիկ էր փոքրիկ Շարլը,- ասում էին ծնողներս,- պատկերացրե՛ք, որ նա իր առաջին քայլերն արեց ընդամենն ինն ամսական հասակում (Շ. Ազնավուր):

4. Երբեմն մեջբերվող ուղղակի նախադասությունը երկու կողմից առնվում է հեղինակի խոսքի մեջ, որով բնութագրվում է տարբեր տեսակետներից, կամ տրվում տարբեր բացատրություններ:

Եվ կարդում էր Սասդիի հոգին սիրո բարևագրերը. «Սիրող սիրտը լսում է միշտ այն

խոսքերը, որ մրմնջում են իրերը... Աշխարհը թրթռում է անվախճան և սիրավառ արբեցումով», հիշեց Սաադին իր հին խոսքերը (Իս.): Ու մի քիչ ինքն իրեն մրաժեւուց հեյոռ ավելացնում էր, ասես ինքն իրեն էր խոսում - Էն փորձանքն էլ թե չէ՞ր եղել, հիմնի մի ուրիշ մարդ կլինէր,- վերջացնում էր և մեղմ հառաչում (Քակ.):

Ուղղակի մեջբերվող խոսքը կարող է ընդմիջվել մեկից ավելի անգամ: Դա լինում է այն դեպքում, երբ հեղինակը (խոսողը) մեջբերվող մտքի տարբեր բաղադրիչների վերաբերյալ կամ դրանց հետ կապված հանգամանքների մասին բացատրություններ է տալիս:

- *Քեռի՛ Միտրիչ,- կանչեց երիտասարդ զինվորը,- իսկ երբ մազերը սև են, և քիթը մեծ է, բայց աչքերը սև չեն, այլ...- և երիտասարդը դժվարացավ ասել, թե ինչ գույնի են աչքերը, և հանկարծ բռնեց կնոջ գլխաշորից և ուրախացած բղավեց,- ա՛յ այս գույնի, աստված վկա, ճիշտ այս գույնի են աչքերը (Քակ.):*

Միևնույն նախադասության մեջ կարող են լինել տարբեր անձերի պատկանող ուղղակի մեջբերվող մտքեր:

Եվ հենց Մկրտումը սկսեց կարդալ՝ «Վեր առիմ և պարտ եմ...», հայրն ընդհատում էր.- Էդ չի,- և մի ուրիշն էր տալիս (Քակ.):

Ուղղակի մեջբերվող խոսքը գործածվում է առանց քերականական ու բառական փոփոխության: Մեջբերվող խոսքում որևէ նկատառումով կարող են բաց թողնվել բառեր (բառ)՝ հատուկ կետադրությամբ (բազմակետերով) նշելով այդ բացթողումը:

Գրավոր խոսքում ուղղակի մեջբերվող նախադասությունը հեղինակի խոսքից առանձնացվում է կետադրական նշանների միջոցով:

1. Գիտական խոսքում հետադաս ուղղակի մեջբերվող խոսքն առնվում է չակերտների մեջ, իսկ հեղինակային նախադասությունից հետո դրվում է միջակետ:

Հենդերսոնը դրանից հետո գրել է. «Այն ժամանակ ես հասկացա, որ յուրաքանչյուր կենդանու մեջ կա մի ինչ-որ բան, որ մարդու մոտ մենք անվանում ենք ազնվախոսություն և քոկունություն» (ԳՏ):

Գիտական խոսքի համար պարտադիր այս կետադրությունը հաճախ կիրառվում է խոսքի այլ տեսակներում ևս:

Ավագ քրոջ գորովով նայում եմ նրա վշտոտ աչքերի մեջ ու ասում. «Գիտե՞ս, Վազգեն, քո վերջին բաղձանքը կապարվեց» (ՄԿ): Իսկ ես չեմ համբերում և հարցնում եմ. «Մենա՞կ ես պատրաստվում, Ե՛վա» (ՄԶ): Եվ խորհում էի, «Ո՞վ պիտի հայ գյուղը հանն այս խավարից, այս աղքատությունից» (Իս.):

2. Միջադաս հեղինակային նախադասությունը երկու կողմից մեջբերված խոսքից բաժանվում է ստորակետ-գծով, իսկ ամբողջ ուղղակի մեջբերված նախադասությունը հեղինակային խոսքի ընդհանուր շարադրանքից զատվելու համար առնվում է չակերտների մեջ:

«Ամաչում եմ, երբ մտածում եմ, որ իմ ստեղծած, տարիներով մտածած ու տանջված գրքերը, - գրել է Ավետիք Իսահակյանը, - պիտի փողով ծախվեն, որ ես իմ հոգու բախումի համար պիտի փող ստանամ»:

Հեղինակային նախադասությունից հետո կարող է գործածվել նաև միջակետ-գիծ, վերջակետ-գիծ՝ պայմանավորված՝ մեջբերվող խոսքի հեղինակային նախադասությանը հաջորդող մասի ինքնուրույնության աստիճանով:

3. Գեղարվեստական խոսքի մեջ, հատկապես երկխոսություններում, ուղղակի մեջբերվող նախադասությունը հեղինակային խոսքից անջատվում է սկզբից գծով, իսկ միջադաս ու վերջադաս հեղինակային խոսքից՝ ստորակետ-գծով:

- *Մարդը գնացական է, - ամփոփեց իր միտքը Օհան ամին, - նրա լավ գործը՝ մնացական (Իս.): - Երբ կբերես, ասա՛, Ադամ, - և Լիլիթ քնքշությամբ ձեռքը դրեց Ադամի ձեռքի վրա (Իս.):*

Այսպիսի կառուցվածքում հեղինակային խոսքը հաջորդող ուղղակի մեջբերվող խոսքից կարող է բաժանվել նաև միջակետ-գծով և վերջակետ-գծով:

- *Ո՛չ, - գայրացած ասաց Լիլիթ. - և վերջապես ես այն եմ ուզում (Իս.): - Ո՛վ ապրելու դառն անհրաժեշտություն, - խոսեց նա իր սրտի մեջ: - Անհուն է ձեր տառապանքը, ո՛վ ապրողներ (Իս.):*

ՄԵԶԲԵՐՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ուղղակի մեջբերվող նախադասությամբ կապակցությունը ինքնատիպ բարդ ստորադասական նախադասություն է, որի մեջ մեջբերվող նախադասությունը ստորադասական հարաբերության մեջ է գտնվում հեղինակային նախադասության հետ: Սակայն այդ կապն ու հարաբերությունը պակաս սերտ է, քան սովորական բարդ ստորադասական նախադասության, այդ թվում և անուղղակի մեջբերվող նախադասությամբ կապակցության մեջ է լինում:

Ուղղակի մեջբերվող խոսքով կապակցության բաղադրիչների կապի ու հարաբերության համեմատաբար թույլ լինելն արտահայտվում է հետևյալում.

1. Ուղղակի մեջբերվող նախադասությունը կառուցվածքային տեսակետից ունի որոշակի ամբողջականություն (ի տարբերություն սովորական ստորադաս նախադասությունների):

2. Ուղղակի մեջբերվող խոսքի և հեղինակային խոսքի միջև դադարն ավելի է, քան սովորական ստորադաս ու գերադաս նախադասությունների միջև:

3. Ուղղակի մեջբերվող և հեղինակային խոսքերի միջև չկան բայական ժամանակների համապատասխանություններ ու փոխայանաավորվածություններ:

Այս ամենով հանդերձ ուղղակի մեջբերվող խոսքը հեղինակայինի համեմատությամբ ինքնուրույն ու անկախ չէ, այլ լրացնում է նրա միտքը և քերականական կախման մեջ է նրանից:

Նա ծալեց գիրքը և ուրախ բացականչեց. - Էլիզբեթ մեզ հյուրասիրում է սուրճով (Բակ.): Զիլի Սուրբանը նայում է, նայում է, ասում է. - Շիտակ, որ մեծ սիրտ է ունեցել էս մարդը (Իս.): Էդպես է անում, որ հարսը ուշքի գա, - պատասխանում է մեկը (Իս.): Դու պիտի հաշտվես հորս հետ և վերջնական, - պահանջեց աղջիկը (ՍԽ):

Ուղղակի մեջբերվող նախադասությունը հեղինակային նախադասության համեմատությամբ կարող է լինել ենթակայական հարաբերության մեջ, եթե գերադաս (հեղինակային) նախադասության ստորոգյալն արտահայտված է կրավորական կամ չեզոք սեռի բայով:

Պաշտոնապես հաղորդվել է. «ստաջիկա օրերին եղանակը կտրուկ ցրտելու է. պետք է արագացնել բերքահավաքը»:

Հայտնվել է, որ դպրոցներում պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 3-ին:

Երբեմն, հատկապես ժողովրդախոսակցական ոճում, հեղինակային նախադասության բայ-ստորոգյալը չի գործածվում, բայց նրա ասացական իմաստը հասկացվում է:

Շարունակ՝ ամեն օր - Միմոն, սամովարը քցե, շոտ, շոտ արա: Սամովարը զգում եմ, կրակը փչում եմ, մեկ էլ - Միմոն, աղայի կոշիկները արի տար, շուտ սրբիր, բեր: Մեկ՝ սամովարն եմ փչում, մեկ՝ կոշիկները սրբում: **Նորից անունս** - Տո՛, տղա Միմոն... դե՛հ, գնա՛, մի լիմոն էլ բեր, միայն շոտ արա (Իս.): **Մեկը քե՛** « Ուսուցի՛չ, մեզ չմոռանա» (Քակ.):

Երբեմն հեղինակային նախադասության մեջ գործածվում են ասացական կամ մտածական իմաստ ունեցող ներգործական սեռի բայի ուղիղ խնդիրը կամ չեզոք, կրավորական բայերի ենթական. այդ դեպքում մեջբերվող նախադասությունը իր շարահյուսական նշանակությամբ հարում է բացահայտիչ, երբեմն էլ՝ որոշիչ ստորադաս նախադասությունների:

Մի օր, 1892 թվին ցույց տվի մի նոր ուրանավոր. «**Ծաղիկ էի նորաբողբոջ Սարի լանջում, երկնի փակ**» (Իս.): **Գոնսալոն ընդհատեց Թեոդորի խոսքը** - **Դուք գնում եք ազապագրված մարդկության մեծ հայրենիքը** (Իս.): **Ողջույնի խոսքում կային հետևյալ փողերը**. «**Ինչ որ Հայաստան կբուրե, կխոսի մեր սրտեն, կհուզե մեզ**» (ՄԿ):

Մեջբերվող նախադասությունը կառուցվածքով լինում է բազմազան:

Այն կարող է լինել՝

ա) պարզ.

Սաադին հատաչեց՝ աչքերը բանալով. «**Ավա՛ն, անցավ հարյուր փարի մի գիշերվա երազի պես**» (Իս.): Նա, ճիուց իջնելով, ասաց վճռաբար. «**Այնուամենայնիվ ես իմ ձին չեմ փոխի նրա սևի հեյր**» (ՍԶ):

Ուղղակի մեջբերվող նախադասությունը կարող է լինել միակազմ նախադասություն, բառ-նախադասություն, մեկ բառով արտահայտված լրիվ կամ թերի նախադասություն:

-**Քարի լույս**, - անփույթ ողջունեց երիտասարդը (ՍԽ): - **Փա՛նք**, - այս անգամ գոռացին մելիքները (ՍԽ): - **Կեցցե՛ս**, - ասում է Չաքար վարժապետը (ՍԶ): **Բարձրանում է զարմանալի արագությամբ և կատարը կամ թռչունի բնին հասնելուն պես ճչում է**. «**Ուռու՛**» (ՍԶ): - Մի-թե՞, - գուցե Սմբատը հեզնությամբ (Շիրվ.): - **Հո՛, հո՛ - հո՛**, - գուցում է Եզորը, փակելով մուտքը (Քակ.): - **Ը սս**, - ասում է նա, գլուխն ուտերի մեջ խրած, - **ը՛ սս** (ՍԶ):

բ) բարդ համադասական.

Նորից խոսեց իր սրտում. «**Կախարդված է աշխարհը, և բոլոր իրերը հնայված են մի անտեսանելի վիուկի դյուրական գավազանով, և հեքիաբացած է ամեն բան**» (Իս.):

գ) բարդ ստորադասական (իր տարբեր տեսակներով).

Նստեց ծաղկած հասմիկի տակ... և մրմնջաց յուրովի. «**Ինչպես մաքաղ աղջիկը ծափում է գզվող սիրականին, այնպես էլ վարդը իր շրթերն է բանում առավոտյան հովիկին**» (Իս.): «**Ա՛խ, ինչո՞ւ մեծ չեմ, որ կարողանամ օգնել հորս, որ նա ազապովի նեղությունից և հրաժարվի հոր բաժնից ու էլ փխոր չմտածի բաժանքի մասին**» - մտածում եմ ես տխրությամբ (ՍԶ):

դ) ինքնուրույն նախադասությունների կապակցություն:

Հիշո՞ւմ ես Կարլ Սոտրն ինչ է ասում Շպիգելբերգին. «**Օրենքը կրիայի քայլեր է անել փալիս այն մարդուն, որ կարող էր թռչել արծվի պես. օրենքը երբեք մեկ մեծ մարդ չսրեղծեց, մինչդեռ ազապությունը հսկաներ է առաջ բերում և դյուցազուններ...: Տուր մի գունդ**

ինչ նման կորիճներ, և Գերմանիան կդառնա մի հասարակապետություն, որի առջև կուսանոց-վանքեր կրվան Հոունն ու Սպարտան» (Բակ.):

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջանկյալ կոչվում է այն նախադասությունը, որը քերականորեն չի կապվում այն նախադասության հետ, որի կազմում կամ որի հետ գործածվում է, բայց արտահայտում է նրա հետ առնչվող վերաբերմունք, բացատրություն, տեղեկույթ:

Քերականորեն ու հնչերանգով առանձնանալով՝ միջանկյալ նախադասությունը, այնուամենայնիվ, վերաբերում է հիմնական նախադասությանը և նրա առնչությամբ արտահայտում է տարբեր իմաստներ:

Ուզում ես ասել՝ Սառան, - այդպես ասացիր, չէ՞, նրա անունը, - նրանց որդեգիրն է (ՆՊ):

Իսկ ե՞րբ են մարդիկ թաքցնում դեմքը:

Գուցե ամոթի՞ց

(Ես չեմ ամաչում իմ սիրո համար):

Գուցե կարոտի՞ց

(Ես ուզում եմ քեզ տեսնել բաց աչքով) (ՊՍ):

Բերված միջանկյալ նախադասություններում խոսողը (հեղինակը) տարբեր վերաբերմունքներ է արտահայտում հիմնական նախադասության և մասնավորապես նախորդող բառերի վերաբերմամբ:

Նախադասության միջանկյալության աստիճանը տարբեր է լինում: Կան միջանկյալ նախադասություններ, որոնք միայն այդպես՝ որպես միջանկյալ կարող էին գործածվել, և, ընդհակառակը, կան այնպիսիները, որոնք հեշտությամբ կարող են փոխել իրենց այդ բաժանվածությունը ու քերականորեն կապվել հիմնական նախադասության հետ:

Այսպես՝ վերը բերված օրինակներից առաջինում միջանկյալ նախադասությունը հազիվ թե այլ կերպ հնարավոր լինի գործածել և քերականորեն կապել հիմնական նախադասության հետ: Մինչդեռ երկրորդ օրինակի միջանկյալ նախադասությունները, հանելով փակագծից և սկզբից ավելացնելով **բայց** շաղկապը կամ առանց ավելացնելու, կարելի է քերականորեն կապել հիմնական նախադասության հետ հավելական հարաբերությամբ:

Իսկ ե՞րբ են մարդիկ թաքցնում դեմքը:

Գուցե ամոթի՞ց. (բայց) ես չեմ ամաչում իմ սիրո համար:

Գուցե կարոտի՞ց. (բայց) ես ուզում եմ քեզ տեսնել բաց աչքով:

Լինում են ավելի սերտ հարաբերություններ, երբ բավական է տվյալ նախադասությունը հանել փակագծերից կամ փոխել տվյալ կետադրությունը, որ այն վերածվի քերականական կապակցության:

Հմնտ. *Եվ անկարող եմ նաև քրքջալ (Քրքիջի համար ո՞ւժ է հարկավոր) (ՊՍ):*

Եվ անկարող եմ նաև քրքջալ, քանի որ քրքիջի համար ո՞ւժ է հարկավոր:

Եվ անկարող եմ նաև քրքջալ. քրքիջի համար ո՞ւժ է հարկավոր:

Ավելին, լինում է այնպիսի միջանկյալ նախադասություն, որ առանց որևէ փոփո-

խության կարելի կլիներ գործածել որպէս հիմնական նախադասութեան հետ քերականորեն կապված բաղադրիչ:

Սկզբում նա մտածում էր թեյարանի նորալուր անվան վրա, որը, նայելով նրա հաճախորդներին (որոնք, յուր կարծիքով, արդար քրտինքով ապրողներ էին), համարում էր խորիմաստ ու սլառշաճավոր (Մուր):

Այս և նման նախադասությունները որպէս միջանկյալ կառուցվածք ներկայացնելը երկու հանգամանքով է պայմանավորված: Նախ՝ այն, որ հեղինակը (խոսողը) կարող է տվյալ միտքը միջանկյալ դիտել հոգեբանական, վերաբերմունքային առումով՝ նրան տալով ավելի երկրորդական դեր և դիտելով իբրև լրացուցիչ արտահայտված միտք: Երկրորդ՝ տվյալ դեպքում դրան նպաստում է նախադասութեան կառուցվածքը՝ այն, որ նրանում առկա են բազմաստիճան հարաբերություններ, և դրա մեկ օղակի առանձնացումով (որպէս միջանկյալ) ավելի հստակ են դառնում թե՛ ամբողջ նախադասութեան կառուցվածքը (բաղադրիչ նախադասությունների հարաբերությունները) և թե՛ միջանկյալ դիտված նախադասութեան տեղը, դերը ամբողջ կառուցվածքում:

Միջանկյալ նախադասությունները ըստ շարադասութեան լինում են երեք տեսակ՝ **նախադաս, միջադաս ու հետադաս:**

Ինչպէս երևում է, այս ձմեռը խիստ է լինելու: Այս ձմեռը, ինչպէս երևում է, խիստ է լինելու: Այս ձմեռը խիստ է լինելու, ինչպէս երևում է:

Միջանկյալ նախադասություններով արտահայտվում են խոսողի տարբեր վերաբերմունքները հիմնական նախադասութեամբ արտահայտված մտքի, նրա որևէ բաղադրիչ իմաստի վերաբերյալ:

Միջանկյալ նախադասութեամբ կարող է արտահայտվել խոսողի հաստատական վերաբերմունքը նախադասութեամբ արտահայտված երևույթի վերաբերյալ:

Անտոյի է այս բերդը (ամենքը այդ գիտեն), և դավաճանություն է այդ բերդը հանձնել եկվոր սրիկաներին (ԵԶ): Այո՛, գարմանալի, կարծես (շապր ճիշտ նկատեցիր) դասը չիմացող աշակերտ լինեմ՝ ուսուցչի առաջ կանգնած (ՆԳ):

Միջանկյալ նախադասութեամբ խոսողի վերաբերմունքը կարող է արտահայտվել՝ վկայակոչելով ուրիշի կամ ուրիշների կարծիքը:

Մատյանի առաջին մասում ունևոր տնտեսություններն էին և շատ «պաշտոնի» (ինչպէս ասում էր Երեմը) մարդիկ, որոնց ամենօրյա առևտուրը նրանց խանութիցն էր (Բակ.): Կանանց աղմուկի վրա մենք դուրս թափվեցինք սենյակներից, բայց անհայտ ոմն արդեն չբացել էր, կուրատորի աղջկան... թողնելով ուշագնաց վիճակում, որայիսին, - ինչպէս հավաստիացրեց նրա մայրը, նաև օգնութեան հասած զինվորական բժիշկ Վերպենիկովը, - առաջացել էր սարսափից և ամոթխածութեան հարվածից (Բակ.):

Միջանկյալ նախադասութեամբ կարող է արտահայտվել խոսողի ենթադրական, հավանականութեան վերաբերմունքը:

Եթէ չես սխալվում, խմբի անդամները իրենց համեստ աշխատանոցում առաջին անգամ էր, որ հայաստանցի գրող էին ընդունում (ՍԿ): Նույն մտահոգութեան մեջ է, ինչպէս երևում է, նաև հայրս (ՍԶ):

Միջանկյալ նախադասութեամբ կարող է արտահայտվել խոսողի երկբայական վերաբերմունքը տվյալ երևույթի նկատմամբ:

Բայց այստեղ, չգիտես ինչու, ասելիքս ստացվեց այնպես, ինչպէս որ կուզեի (ՍԿ): Խո-

րին թախիծով եմ նայում ճանապարհի երկու կողմի տներին, ծառերին, որոնց, ով գիտի, մեկ էլ երբ եմ տեսնելու (ՄԶ):

Այս և նման միջանկյալ նախադասություններն իրենց արտահայտած իմաստով հարում են երկբայական եղանակավորող բաղադրյալ բառերին:

Միջանկյալ նախադասություններով կարող են արտահայտվել խոսողի բավականությունը, գոհունակությունը, զարմանքը, զոջումը և այլն:

Հայարտ եմ ես իմ փայփայած նպատակով, թեկուզ նրան չիասնեմ էլ (մեղքը կնկնի ո՛չ իմ վզին): Թեկուզ նույնիսկ իզուր անցած Ուրախ ու նուրբ իմ կատակով (Տախակները չհասկացա՞ն) (ՊՍ): Իրերի ի՞նչ երջանիկ բերումով է, որ նա կարողացել է Նախրյան այդ, թող ներվի ասել, բավականին հետամնաց քաղաքից թռչել, պատկերավոր ասած, այդքան հեռու (ԵԶ):

Միջանկյալ նախադասության մի տեսակն ընդունված է անվանել **ներդրյալ նախադասություն:**

Այս նախադասություններն առավելապես արտահայտում են **լրացուցիչ տեղեկություն, ճշտում, բացատրություն:**

Սրանք նույնպես միջանկյալ են, որովհետև քերականորեն, ուղղակիորեն կապված չեն այն նախադասության հետ, որին առնչվում են մտքով:

Ներդրյալ նախադասությունն, այսպիսով, արտահայտում է ոչ թե խոսողի վերաբերմունքը, այլ օբյեկտիվ հարաբերություններ: Ի տարբերություն բուն միջանկյալ նախադասության՝ ներդրյալ նախադասությունը կարող է դրվել հիմնական նախադասության միջում ու վերջում, այն նախադաս սովորաբար չի գործածվում:

Այս բոլորի հետ միասին երդում - կրակն ընկա, թե առաջվա պես սիրում եմ իրեն, ցավ հայտնեցի, որ ամուսնացել է (ինքն ասաց), բայց և այնպես ասացի, այդ չի խանգարում, որ մեր նախկին հարաբերությունները շարունակենք (ՆԳ): Կբացվի նոր մի օր՝ ինչպես աչքակապը (Մանուկ հասակում եմ պահմարոցի խաղում): Կբացվի նոր մի օր՝ ինչպես վիրակապը (Երեկվա խոր վերքն է սպիացել արդեն) (ՊՍ): Հայրս, մայրս, մորս մեծ մայրը (մորս կողմից գաղթի ճամփաներում միակ կենդանի մնացածը, որին շար աղոյս եմ հիշում), Աիդան ու ես վատ պայմաններում էինք ապրում (Շ Ազնավուր):

Եթե ներդրյալ կառուցվածքն արտահայտված է ինքնուրույն նախադասությամբ, ապա այն վերաբերում է նախորդին:

Արաբուհին ինձ է տալիս փոքրիկ մի հարցաթերթիկ: (Ամեն մի պեպոթյան սահման մըր-նելիս այդպիսի հարցաթերթիկ եմ լրացնում): Շվարած նայում եմ մեկ թերթիկին ու մեկ՝ արաբուհուն (ՄԿ): Բայց այստեղ, չգիտես ինչու, ասելիքս ստացվեց այնպես, ինչպես որ կուզեի: Ափսոս, որ չճայնագրվեց: (Մի բան, որ հաճախ լինում էր): Այն էլ ասեմ, որ խոսելիս արտակարգորեն հուզված էի (ՄԿ):

Ներդրյալ նախադասությունը կարող է վերաբերել հիմնական նախադասության մեկ որևէ անդամի կամ ամբողջ նախադասությանը: Առաջին դեպքում դրվում է տվյալ անդամի (կամ նրանով կազմված կապակցության) մոտ, սովորաբար՝ հետո:

Նայեմբերի մի ցուրտ գիշեր, երբ երեկոյան պաշտոնական աշխատանքս վերջացնելուց հետո վերադարձա տուն և մտա ննջարան՝ գրական գործովս զբաղվելու (ննջարանս միշտ փաթ էր, որի պարճառով այդպեղ էի փոխադրել գրասեղանս), ակամա կանգ առա զարմացած (ՆԳ): Նա կարող էր առանց կողմնակի եկամտոտի էլ լավ ապրել, մանավանդ որ շատ համեստ, կարելի է ասել ճգնավորի կյանք էր վարում, և այդ ոչ թե նրա համար, որ ժխտ էր, - ընդհակառակն, շար ընկերներ դիմում էին նրա օգնությանը, և նա ոչ ոքի չէր մերժում, - այլ այն պատ-

ճառով, որ պարզապես չգիտեր, թե ինչ բանի վրա կարելի էր փող ծախսել (ՆԳ):

Եթե ներդրյալ նախադասությունը վերաբերում է հիմնական նախադասության մտքին ընդհանրապես, դրվում է նրանից հետո:

Միշտ պինդ զարկողը, իբրև հարվածող, ազատ է լինում ցավից, ուստի և ծիծաղում է, մինչդեռ հարված ընդունողը ստիպված է լինում հեծել (ասենք թե միայն նեղ ֆուրգոններում չի աղաչես, նույնիսկ մեր ընդարչակ աշխարհում լաց լինելու և ծիծաղելու համար՝ մարդիկ միշտ միևնույն օրենքներին են ենթարկվում) (Մուր.):

Ներդրյալ նախադասությունը կարող է ներկայացվել՝ ա) հիմնական նախադասության կազմում և բ) նրա կազմից դուրս, ձևականորեն որպես ինքնուրույն նախադասություն:

ա) Տիկին Մարթան Մոմճյանի սենյակում նստած բացատրություն է պահանջում նրանից յուր գործած աններելի հանցանքի համար (տիկինը առհասարակ, իրեն խաբելը աններելի հանցանք էր համարում) (Մուր.): Չոփուռի տղա Սանդրոն (այդ էր թեյարանի տիրոջ անունը) այդպիսի պարտաճանաչ երիտասարդներից մինն էր (Մուր.): Երկուսս էլ պատրաստ էինք շատ բան գոհել երգին: Երգը մեզ համար (ինչ համար հիմա էլ) ապրուստի միջոց չի եղել, այլ եղել է ապրելածև իր ուրախություններով, բարոյախոսություններով (ՇԱ):

բ) Թեմականի դասընթացն ավարտելուց հետո պատրաստվում էր գիմնազիական քննություն տալու...բայց մտավ յունկերական դպրոցը, որ վերջը սպա դառնա: (Այն ժամանակ մենած էին ծնողները, և նա գրկվել էր, իբրև իր ծնողների միակ զավակը, զինվորականությունից ազատվելու արդուությունից) (ՆԳ): Այդ բանի համար գնաց Էջմիածին, բայց երեք ամիս հետո վերադարձավ կատարելապես հիասթափված կուսակրոնների անբարոյական կյանքից: (Էջմիածնում նա իջել էր իր հոր հին ծանոթ մի եպիսկոպոսի մոտ, որի սենյակից մի գիշեր դուրս էր փախել ներքնաշորով) (ՆԳ):

Ներդրյալ նախադասությունները կառուցվածքով տարբեր են լինում՝ պարզ, բարդ՝ իրենց բոլոր տեսակներով ու ենթատեսակներով (տե՛ս վերը բերված օրինակները):

Ներդրյալ նախադասությունները կառուցվածքային ինքնուրույնության ու հիմնական նախադասության հետ առնչվող քերականական-բառական միջոցների տեսակետից երկու հիմնական տեսակ են լինում:

ա) Այն իր կազմում կարող է ունենալ հիմնական նախադասության հետ առնչվող շաղկապ կամ հարաբերական բառ. այսպիսի ներդրյալ նախադասությունը իր կառուցվածքով նման է լինում բարդ նախադասության բաղադրիչ նախադասությանը, ուրե՛մն և պակաս ինքնուրույն է լինում կամ պարզապես ինքնուրույն չի լինում (մանավանդ եթե նրա կազմի մեջ լինում են ստորադասական շաղկապ կամ հարաբերական մասնավոր բառ):

Այժմ Մարյանը կայտոլ է Մովսիսյանի տեղը բռնել (որովհետև Մոմճյանը թեյարանում արդեն յուր զգայուն հոփառությամբ այդ երիտասարդի՝ ինչ բանի պիպանի լինելն իմացած էր), և գուցե նա Մովսիսյանից մի բանի աստիճան էլ ավելի հմուտ կերպով կտաներ գործը (Մուր.): Եթե այնտեղ ընկնելու համար հարկավոր է ոչ միայն սեփական ինքնաշարժ (քանի որ դեպի հեռավոր վայրեր փանող հասարակական ոչ մի փոխադրամիջոց չկա այնտեղ), այլ նաև մեկ շիշ վիսկիի համար 4-5 անգամ ավելին վճարելու ընդունակ գրպան, ապա կարարենները առավել մատչելի են (ՍԿ):

բ) Ներդրյալ նախադասությունը իր կազմում կարող է չունենալ շաղկապներ ու

հարաբերական բառեր. այսպիսի նախադասությունը կառուցվածքով ավելի ինքնուրույն, անկախ է լինում:

Օղերը տեսնելուն պես նրա աչքերը փայլեցին, չգիտեմ հիացմունքի՞ց, թե՞ նախանձից: (Սպիտակահեր ամուսնու մոտ այդ կինը ավելի ևս ջահել երևաց իմ աչքին) (ՆԳ): Քաղաքավարությունը ստիպում էր ինձ հավանություն տալ այդ շատախոս ծերունու խոսքերին, մանավանդ որ, - այդ բանը փեսանում էի նրա ինչ վրա նեպած խորհրդավոր հայացքներից և խոսակցության եղանակից, - նա ուզում էր, որ ես օգնեմ իրեն փեսացուի կոտրված սիրտը տեղը գցելու (ՆԳ):

Ներդրյալ նախադասությունները կարող են արտահայտել հիմնական նախադասության հետ ուղղակի և անուղղակի առնչվող ամենատարբեր իմաստներ: Դրանցից առավել կարևորներն են՝

ա) հիմնական նախադասության մեջ ընդհանուր ձևով ասվածի տարբեր կարգի մասնավորումներ.

Ասածներս, որ պատասխաններն էին իրենց հարցերի, հանրահայտ բաներ էին (ինչպե՞ս հասկանալ սոցիալիստական ռեալիզմը, ինչո՞ւ են Հայաստանում այդքան շատ կատարում լեզվական փոխառություններ, ի՞նչ կարծիքի եք սիյունքահայ գրականության մասին...) (ՄԿ): Գաղթականների մեծամասնությունը (իսկ նրանց ընդհանուր թիվը 1919 թվականին անցնում էր 260 հազարից) չունեի հող, տուն և աշխատանք (ՀԺՊ):

բ) պատճառական և պարագայական տարբեր իմաստներ.

Պահակը վառում է երկարուկ ոլորած լրագիրը (այդ օրը էլեկտրական հոսանք չկար) ու լուսավորելով այցելուների համար պատրաստած նեղլիկ սանդուղը՝ մեզ իջեցնում է դեպի գնդանի հատակը (ՄԿ): Ծալապատիկ մտեց աթոռի վրա (ըստ երևույթին, բոքիկ ուրները մրսում էին մերկ հատակի վրա), հետո հանկարծ նայեց ինձ և ասաց (ՆԳ):

գ) լրացուցիչ տեղեկություններ հիմնական նախադասության մեջ անվանված առարկաների, իրողությունների կամ նրանց հետ կապված երևույթների անցյալ ու հետագա վիճակների վերաբերյալ.

Նույն շրջանում բացվեցին՝ 1834 թ. Մուրադյան դպրոցը Իտալիայի Պադուա քաղաքում, 1836 թ. Ռաֆայելյանը Վենետիկում (նրանք հեպտագայում միացան) (ՀԺՊ): Վաղարշ Երկրորդից և Խոսրով Առաջինից սկիզբ է առել հայ Արշակունցի ժառանգական հարստությունը (մինչ այդ հայոց թագավորները նշանակվում էին պարթևական թագավորի ազգակիցներից) (ՀԺՊ):

դ) ռեմարկային և համանման բացատրություններ.

Ես քեզ լավ եմ ճանաչում, դու իմ առաջին թշնամին ես: (Վեր է կենում և սկսում անցուդարձ անել) (Շիրվ.): Հիմա, բարեկամս, կարծում եմ՝ կայտղ եք գոնե թուրք վերցնել (նա ցույց է փայխս վարժության թուրք) և վազելով թոցնել ցցերին ամրացած ճղները (ՍԶ):

ե) հեղինակային բացատրություններ խոսքի մեջ գործածված բառերի իմաստի, ձևի և նրանց հետ կապված երևույթների վերաբերյալ:

-Դե՛, շտապիր, Վաղոր՛, - ասում է մայրս (իմ երկրորդ անունը Վաղինակ է):

Առաջին դարում Հոմերը իր տիրապետության տակ է առնում նաև Փյունիկյան այս հովիտը, և Անտոնիոս Պիոսը Բաալ կոչվող հովտում (Բաալքեկ նշանակում է հովիտաբարձունք), կիկլոպյան գետնահարկի վրա կառուցում է հսկա հեթանոսական տաճարը (ՄԿ): Բժիշկն ինքն էլ սկսում է ականց դնել երիտասարդի «հայաշունչ... բանաստեղծություններին», վա-

յել... նրա «կերպարովեստի ազգային նորագույն (ընդգծումը իմն է - ՄԿ) ոգուն», իբրև առկայ-
ծումը հայ տաղանդի զարթոնքի (ՄԿ):

գ) այլ կարգի դիտողություններ, մեկնաբանություններ:

Պիտի... հայտներ իր կարծիքը՝ կամ մեջը փուչ է (այդ դեպքում նա պիտի ասեր, թե ո՞ւմ
կողմն է քաշել), և կամ պատկառանքով եզրակացներ, որ դեռ խակ է, սերմը չի բուսել (Բակ.):
Մտտեցավ ծառին, խոտի մեջ ինչ-որ որոնեց-գտավ (գիրք էր), դրեց թևի տակ (ՆԳ):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր բնութագիր

Նախադասությունը մտքերի ձևավորման և հաղորդման գլխավոր, նվազագույն միավորն է, որը կարող է գործածվել միայնակ՝ արտահայտելու համար այս կամ այն միտքը: Բայց դա լինում է սակավ դեպքերում: Խոսելիս (գրելիս) մարդ գերազանցապես գործածում է նախադասությունների կապակցություններ: Նախադասությունների կապակցությունն իր բաղադրիչների սուսկական գումար չէ ոչ կառուցվածքային, ոչ բովանդակային առումներով, այլ շարահյուսական կառույց է՝ իր քերականական, բառական, հնչերանգային ներքին օրինաչափություններով:

Նախադասությունների կապակցության մեջ զգալի չափով գործածվում են բարդ նախադասության բաղադրիչների կապակցման հիմնական միջոցները, բայց, իհարկե, համապատասխան սահմանափակմամբ ու յուրահատկությամբ՝ պայմանավորված նախադասությունների կապակցության բնույթով ու նպատակով: Այդ նպատակի համար գործածվում են նաև լեզվական այլ միջոցներ, որոնք հատուկ են միայն կամ հիմնականում նախադասությունների կապակցությանը: Թեև նախադասությունը սովորաբար բնորոշվում է որպես ամփոփ, ավարտուն միտք արտահայտող միավոր, բայց նախադասությունների կապակցության մեջ նրա ինքնուրույնությունը հարաբերական է:

Դիտարկենք հետևյալ օրինակը բաղադրիչների կապի ու փոխհարաբերության տեսանկյունով:

Արարատի ծեր կատարին

Դար է եկել վայրկյանի պես

Ու անցել:

Անհուն թվով կայծակների

Մուրն է բեկվել աղամանդին

Ու անցել:

Մահախուճապ սերունդների

Աչքն է դիպել լույս գազաթին

Ու անցել:

Հերթը հիմա քոնն է մի պահ.

Դու էլ նայի՛ր սեզ ճակատին

Ու անցի՛ր...

Թեև բանաստեղծությունը ձևավորված է կազմությամբ ամբողջական նախադասություններից, այնուամենայնիվ յուրաքանչյուր եռատողը լիովին հասկանալի է դառնում ամբողջ խոսքի մեջ: Առանձնապես կարևոր է առաջին եռատողը, որը ելակետային, կողմնորոշիչ դեր ունի հաջորդ եռատողերի, ուրեմն և ամբողջի համար: Խոսքը ոչ միայն բանաստեղծության (խոսքի) բովանդակության հասկանալիության մասին է, այլև այն մասին, որ դրա հետ կապված՝ պարզ է դառնում բառական, ձևաբանական, շարահյուսական մի շարք միավորների նշանակությունը կապակցության մեջ (**աղամանդ, լույս գազաք, սեզ ճակատ, հերթ, դու, եկել է, անցել է, անցի՛ր**, ի տարբերություն առաջին երեք եռատողերի՝ **վերջին եռատողում բայերն ու դերանունները երկրորդ դեմքով գործածելը** և այլն): Խոսքի բովանդակային նպատակայնության գործում այստեղ շատ կարևոր դեր է կատարում շարադասությունը՝ նախադասությունների հերթականությունը:

Ավելին, շարադասությունը նախադասությունների կապակցությունը դարձնում է կուռ կառույց՝ իր բաղադրիչներով միասնական, միաձույլ: Բաղադրիչները ենթարկվում են կապակցություն-կառույցի պահանջներին, հաղորդակցային նպատակին: Այստեղ գործում է մասի և ամբողջի փոխհարաբերությունը լեզվական-խոսքային ներքին լայն ու ճկուն հնարավորությունների իրացման պայմաններում:

Այս առումով դիտարկենք նախադասությունների կապակցությունը Նար-Դոսի «Մահը» վեպի մի փոքր հատվածում, որտեղ բաղադրիչ նախադասությունների փոխկապվածությունն ավելի սերտ է:

«Կյանքիս մեջ ես միայն մի անգամ եմ մահ տեսել (1): Բայց այդ մի անգամն էլ բավական էր, որ գզայի մահվան սյատնատած սարսափն ու վիշտը (2): Մեռնողն իմ ընկերուհին էր (3): Չափազանց լավ աղջիկ էր (4): Չեմ կարծում, թե հարազատ քրոջս այնքան շատ սիրելի, որքան նրան էի սիրում (5): Նա էլ ինձ համար հոգին չէր խնայում (6): Ամեն օր իրար տեսնելը մի կատարյալ սրահանջ էր դարձել մեզ համար (7): Նրա հիվանդ ժամանակ գիշերներն անգամ չէի հեռանում նրանից (ՆԴ):

Թեև այս հատվածը կազմված է քերականական օրինաչափություններով ձևավորված նախադասություններից, սակայն նույնիսկ այդ դեպքում առանձին նախադասությունների միտքը լիովին հասկանալի է դառնում նախորդ նախադասության կամ նախադասությունների հետ ունեցած կապակցության մեջ: Առանց 1-ին նախադասության անհասկանալի պիտի մնար 2-րդ նախադասության **բայց** շաղկապը և **այդ մի անգամն էլ** կապակցությունը: Նշենք, որ **բայց**-ը այստեղ երկու նախադասությունների որոշակի հարաբերություն է արտահայտում, և նրա փոխարեն չէր կարելի գործածել, ասենք, **ուրեմն** կամ **ուստի, այնպես որ** շաղկապները: 3-րդ նախադասության **մեռնողն** ենթակայի էությունը որոշակիորեն հասկացվում է 1-ին նախադասության շնորհիվ: 4-րդ նախադասության միտքը և մասնավորապես ենթական հասկացվում են 2-րդից: 2-րդ և նախորդ նախադասություններից է հասկացվում նաև, թե ինչու է 4-րդ նախադասության ստորոգյալի հանգույցը գործածված անցյալ ժամանակով (որովհետև աղջիկը մահացած է): Այսպես կարելի էր շարունակել մինչև վերջ, բայց ասվածն էլ բավական է ցույց տալու համար խոսք կազմող նախադասությունների ինքնուրույնության հարաբերականությունը և նրանց քերականական ու իմաս-

տային կապը: Քերականական կապի միջոցների մեջ էական դեր է կատարում նաև շարադասությունը: Բերված հատվածի նախադասությունների շարադասությունը խստորեն պատճառաբանված է: Առաջին չորս նախադասությունների հերթականությունը բոլորովին հնարավոր չէ փոխել: Հաջորդ նախադասությունների շարադասությունը միայն մասնակիորեն կարելի է փոխել: Բայց չի կարելի, օրինակ, 6-րդ նախադասությունը շարադասել 5-րդից առաջ, իմաստային որոշ խախտում կամ անհետևողականություն կառաջանար, եթե, օրինակ, 7-րդ նախադասությունը դրվեր 6-րդից առաջ, և այլն:

Նախադասությունների փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը հաճախ ավելի սերտ են լինում, քան նախորդ հատվածում: Դա հատկապես վերաբերում է երկխոսություններին, որոնցում շատ են գործածվում թերի նախադասությունները:

Հաճախ նախադասության անդամների զեղչումը այնպիսի մեծ չափերի է հասնում, որ նախադասությունը կորցնում է իր կառուցվածքային տեսքը: Սակայն նախադասության այդ թերիությունը չի դառնում թերություն և բովանդակային առումով իրեն զգալ չի տալիս, որովհետև կապակցությունը՝ որպես մի ամբողջություն, լրացնում է այդ «թերին»: Ահա այդպիսի մեկ հատված.

- *Բլիթ գնիր, եղբայր... Վերցրո՛ւ, համտե՛ս արա, հետո՛ գնիր: Անուշիկներն են...*

- *Տո՛ւր առանց համտեսի, - ասաց երաժիշտը:*

- *Քանի՞ հատ, - ուրախացավ բլիթավաճառը:*

- *Տասը:*

- *...Երաժիշտը բլիթների գինը վճարեց, փորձեց մեկի համը:*

- *Համեղ է, - ասաց, - երևում է՝ կինդ քաղցր ձեռք ունի:*

- *Է՛... Է՛հ - հառաչեց բլիթավաճառը: - Քաղցր չեռք ունեք, հա... Ուներ: Հիմի ո՞վ գիտի, ինչ քոսոպ մահմեդականի համար է բլիթ թխում: Ա՛յս, ա՛յս... Աստված չուզեց, որ մնա... (ՍԽ):*

Ինչպես երևում է, ընդգծված թերի նախադասությունների միտքը կարելի է հասկանալ միայն համապատասխան կապակցության մեջ՝ այլ նախադասությունների հաշվառումով: Ըստ որում նախադասության թերի լինելու աստիճանի մեծացմանը զուգընթաց մեծանում է այլ նախադասությունների հետ նրա կապի ու փոխհարաբերության հաշվառման անհրաժեշտությունը: Այսպես՝ եթե «*Վերցրո՛ւ, համտե՛ս արա, հետո՛ գնիր*» թերի նախադասության մեջ, խոսքով պայմանավորված, բաց է թողնված միայն ուղիղ խնդիրը (ենթակայի զեղչումը պայմանավորված է խոսելու իրադրությամբ), ապա, օրինակ՝ «*Տասը*» թերի նախադասությունը արտահայտված է հանձին միայն ուղիղ խնդրի որոշչի (*Տո՛ւր տասը բլիթ*), իսկ մյուս անդամները հասկացվում են նախորդ նախադասություններից:

Այլ օրինակ՝ *Գեղեցիկը էսթետիկայի հիմնական կատեգորիան է: Ինչո՞ւ: Որովհետև գեղեցիկը բոլոր դեպքերում արվեստի ելակետն ու նպատակն է (Է՛Չ):* Ընդգծված նախադասությունները թերի են, և դրանք թե՛ մտքի, թե՛ քերականական տեսակետից լիովին հասկանալու համար անհրաժեշտ է վերցնել նախորդի հետ ունեցած կապակցության մեջ: Այդպես էլ հասկանում ենք. «*Ինչո՞ւ*» նախադասությունը այստեղ նշանակում է «*Ինչո՞ւ է գեղեցիկը էսթետիկայի հիմնական կատեգորիան*»: Իսկ վերջին նախադասության լրիվ պատկերը կլինի այսպես. «*Գեղեցիկը էսթետիկայի հիմնական կատե-*

գորիան է, որովհետև այն (գեղեցիկը) բոլոր դեպքերում արվեստի ելակետն ու նպատակն է»:

Երբեմն նախադասությունների կապն այնքան սերտ է լինում, որ նախադասության որոշ անդամներ որոշելիս անհրաժեշտ է լինում հաշվի առնել խոսքը, տվյալ նախադասության հարաբերությունը կից նախադասության հետ:

Ժամանակով մի թագավոր է լինում. էնքան ուժեղ, էնքան բարձր ծեն է ունենում, որ հազար վերստի վրա լսվում է: Մեկի հետ, հենց էնպես, գրույց անելիս հեռվից կարծում են, թե որոտն է թնդում: Դրա համար էլ անունը դնում են Որոտ թագավոր (ՀԹ):

Այստեղ **դրա համար** կապակցությունը ցույց է տալիս թագավորի անունը Որոտ թագավոր դնելու պատճառը, ուստի և պատճառի պարագա է: Բայց դա հատկապես վերջին նախադասությունից չի բխում, այլ նախորդ նախադասություններից, որոնցում խոսվում է թագավորի՝ հազար վերստի վրա լսվող և որոտի թնդյունի նմանվող ձայնի մասին:

Հետևյալ օրինակում **դրա համար** կապակցությունը կատարում է նպատակի պարագայի դեր:

- *Դու չասացի՞ր, թե ինչ ասելիք ունես հորս:*

- *Ես որոշել եմ ձեր բրուտանոցն օգտագործել որպես դաշտային օթևան, - պատասխանեց Գարեգինը...*

- *Հենց դրա համար՞ ես գիշերվա կեսին այստեղ եկել (ՍԽ):*

Նախադասությունների կապակցության ուսումնասիրումը կարևոր է ոչ միայն շարահյուսության մի կարևոր կառույցի կազմության ու դերի լուսաբանման, այլև նախադասության ու նրա կիրառության ամբողջական պատկերի վերհանման առումներով, որոնք թե՛ տեսական և թե՛ գործնական արժեք ունեն:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադասությունների կապակցության մեջ իմաստային-քերականական կապերը բազմազան են ու բարդ: Այդ բարդությունն ունի երկու հիմնական պատճառը: ա) Բաղադրիչ նախադասությունները համեմատաբար առավել ինքնուրույն են, քան թե բարդ նախադասության բաղադրիչները: Իսկ որքան բաղադրիչ միավորներն ինքնուրույն են, այնքան նրանց կապը պակաս հստակ է և հաճախ տարբեր: Տարբեր լինելը հատկապես վերաբերում է տվյալ նախադասության՝ նախորդ ու հաջորդ նախադասությունների նկատմամբ իմաստային ու քերականական կապերին:

բ) Նախադասությունների կապակցման քերականական միջոցների մեջ մեծ կշիռ ունի շարահարությունը, որի դեպքում հնարավոր են տարբեր քերականական հարաբերություններ, ըստ որում հաճախ առանց սահմանազատիչ ձևային հատկանիշի:

Որպեսզի համոզիչ լինի կապի այսպիսի բնույթի դեպքում կապվող միավորների հարաբերության պակաս որոշակիությունը, հիշենք, որ, օրինակ, եթե բարդ նախադասության բաղադրիչները կապվում են շարահարությամբ, այդ դեպքում հարաբերության բնույթն ավելի անորոշ է լինում: **Հմնտ.** «Երբ կհավաքվեն, ժողովը կսկսենք» և «Կհավաքվեն, ժողովը կսկսենք»: Առաջին օրինակում, որտեղ շաղկապումը կատար-

ված է **երբ**-ով, ունենք ժամանակի հարաբերություն, իսկ երկրորդ օրինակի բաղադրիչների կապը կարելի է հասկանալ տարբեր իմաստներով՝ ժամանակի (երբ հավաքվեն...), պայմանի (եթե հավաքվեն...), և նույնիսկ այն կարելի է հասկանալ համադասական հարաբերության իմաստով (կհավաքվեն, և ժողովը կսկսենք):

Չնայած նշված հանգամանքներին, որոնք, համենայն դեպս, անկարելի չեն դարձնում նախադասությունների հարաբերությունների որոշումը, այլ միայն դժվարացնում են, այդ հարաբերությունները կարելի է որոշել՝ ըստ նախադասությունների կապի առավել բնորոշ հատկանիշի: Նշենք, որ նախադասությունների հարաբերությունները որոշելիս խոսքի շղթայի մեջ տվյալ նախադասության՝ տարբեր (նախորդ և հաջորդ) նախադասությունների հետ ունեցած կապերը, բնականաբար, գնահատվում են առանձին-առանձին: Ասվածը ցույց տանք մեկ օրինակի վրա:

Ինչ-որ վատ զգացմունք գողի նման ներս սողաց էմմայի սիրտը, և նա ակամա զզվանքով շրջեց դեմքն ամուսնուց: Բայց նույն լույսին, կարծես բնագոյմամբ հասկանալով, որ այդ լավ չէ, նա ի ներքուստ ինքն իր դեմ կատաղեց և անկոչ զզացմունքը խլացրեց իր մեջ: Արագ մտնեցավ լամպին, լույսը ցածրացրեց, դողդոջում ձեռքերով հանվեց և սլառեց իր անկողնու մեջ... (ՆԳ):

Այստեղ ունենք երեք նախադասություն, որոնցից երկրորդը նախորդի հետ կապված է հակադրական հարաբերությամբ, որ արտահայտված է **բայց** շաղկապով: Իսկ երկրորդ և երրորդ նախադասությունների միջև կա միավորական հարաբերություն, որ արտահայտված է շարահարությամբ:

Հաճախ մեկ նախադասությունը հարաբերության մեջ է մտնում մի քանի նախադասությունների հետ՝ միասին վերցրած, իսկ սրանք իրար հետ կարող են ունենալ տարբեր հարաբերություններ:

Առանց քաշվելու դիտում են շրջապատս (1): Այստեղ համարյա բոլորը նստած են խմբերով, գույգերով, մենակ (2): Մեծ մասամբ մենակ (3): Կան ամեն կարգի ու տարիքի մարդիկ (4): Բիչ չեն տարեցները, մանավանդ կանայք (5): Թորշոմած դեմքեր, բայց աչքն ու ունքը ներկված, թավշյա ծաղիկներով գլխարկ (6) (ՄԿ):

Այս հատվածում 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ նախադասությունները միասին վերցրած մասնավորման հարաբերության մեջ են գտնվում առաջինի նկատմամբ, քանի որ շրջապատի դիտածը թվարկված նախադասություններով մասնավորվում է և ստանում համապատասխան մեկնաբանություններ: Բայց միաժամանակ 2-6-րդ նախադասություններն իրար նկատմամբ ունեն տարբեր հարաբերություններ: Այսպես՝ 3-րդ նախադասությունը մեկնական հարաբերություն ունի 2-րդի նկատմամբ, 6-րդը՝ 5-րդի, 5-րդը՝ 4-րդի նկատմամբ:

Խոսքի մեջ նախադասությունների հարաբերությունները քննելիս անհրաժեշտ է վերցնել նրանց կապակցության ամեն մի օղակն առանձին ու հաշվի առնել տվյալ օղակի առավել բնորոշ հատկանիշը: Ըստ այդմ՝ նախադասությունների հարաբերությունները լինում են՝ **միավորական, ներհակական, մասնավորման, ընդհանրացման, մեկնական, տրոհական, պատճառահետևանքային, զիջական, ժամանակի, տեղի** և այլն:

Այժմ քննենք այդ հարաբերություններն առանձին-առանձին:

ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Բարդ համադասական նախադասության կապակցությամբ ասվել է, որ միավորական հարաբերության դեպքում բաղադրիչ նախադասությունները միանում են իրար նույն կարգի, համասեռ, թվարկվող երևույթներ արտահայտելու հիմքի վրա և կապակցվում են միավորիչ շաղկապներով ու շարահարությամբ: Հիմնականում քերականական այդ նույն միջոցներն են դեր կատարում նաև նախադասությունների միավորական կապակցության մեջ՝ այն տարբերությամբ, որ այս դեպքում շարահարությունն ավելի մեծ կշիռ ունի, քան շաղկապները:

Միավորական հարաբերության մեջ գտնվող նախադասությունների կապակցման մեջ կարևոր դեր են կատարում միավորիչ շաղկապներն ու նրանց համարժեք շաղկապական բառերը. **ինչպես՝ և, ու, նաև, ևս, նույնպես (նաև իմաստով), բացի դրանից, դրա հետ միասին, մյուս կողմից և այլն:**

Ուտնակոխ էին անում ջրվոր Ավետիսենց այգին, խոտի դեզն ու մարագը վառում, տունը թալանում: Եվ արյուն էր լինում, երեխաներ էին զոհվում, զոհվում էին նաև ջրվոր Ավետիսի եղբայրները, սրանց որդիները (ՍԽ): Պռոշյանը նույնպես որոշ չափով գտնվեց ռոմանտիկական դպրոցի ազդեցության տակ: Նա մերձեցավ նաև սենտիմենտալիզմի ոճին (ՀՆՓՊ): Ուտնատակ տալով երկիրը՝ Հայաստան էին ներխուժում արաբական հորդաները: Մյուս կողմից՝ Հայաստանը դեռևս շարունակում էր սյատերազմների թատերաբեմ մնալ Բյուզանդիոնի և Պարսկաստանի միջև (ՀՆՓՊ): Մարտին ասելը չէր թողնում նրան՝ ծանր բաներ վերցնի, դժվար գործ անի. վառարանը վառում էր ինքը. ինքնատուր ներս բերելու կամ կարպետ ու գորգ թափ տալու համար կանչում էր Սահակին: Եկեղեցի գնալու համար նույնպես զգուշացնում էր Մարտին ասելը, թե կարող է մրսել, սառույց կպատահի՝ կընկնի, շունը կհաչի՝ կվախենա (ՍԶ):

Նախադասությունները հաճախ կապվում են թվարկում արտահայտող բառական այնպիսի զուգադրական կապակցություններով, որոնք հարում են շաղկապներին: Այդպիսիք են՝ **նախ...ապա, նախ... ապա... այնուհետև, նախ... այնուհետև, նախ... ապա... այնուհետև... վերջապես, նախ և առաջ...ապա, մի կողմից...մյուս կողմից, բացի դրանից (դրանից բացի) և այլն:**

Մարդկային լեզվի այս նախնական շրջանի համար շունենք շոշափելի տվյալներ, ուստի այստի անենք միայն ենթադրություններ: Մի կողմից՝ ունենք կենդանիների լեզուն. կատուն մըլավում է, շունը հաչում է... Մյուս կողմից՝ ծանոթ են մարդկային ցեղերի մեջ ամենաքիչ զարգացած, անգիր, մինչև անգամ քարե դարի շրջանում ապրող ցեղերը (Ավստրալիայի բնիկները) (ԱՃ): Կիրակոսենց Գարոյինն անհամեմատ ավելի լավ էր: Նախ՝ Սարոյենց Թորոսի խանութի նման «ջիուղի բազար» չէր... Բացի դրանից՝ խանութի առջև գտնվող հովանոցաձև սյատշգամբն ավելի լայն էր, գետնին ավագ փռած, սյուները հարթ, գունավորված... (ՎՓ): Ժամանակակից հայերենը հին հայերենից (գրաբարից) ժառանգել է բառային հիմնական ֆունդի և քերականական կառուցվածքի հիմքերը... Դրանք են, նախ, բառային հիմնական ֆունդից այնպիսի տարրեր, ինչպես, օրինակ՝ հայր, մայր, քույր, եղբայր... Այնուհետև՝ քերականական կառուցվածքից, օրինակ, որոշ ժամանակաձևեր (կարդամ, գրեմ... կարդայի, գրեի), էական կամ օժանդակ բայեր... (Դաս):

Երբեմն վերոհիշյալ նպատակով գործածվում է **մյուս կողմից** բառակապակցությունը՝ առանց նախապես **մի կողմից** բառակապակցության գործածության:

Ռուսական դեսպանությունը կտրական կերպով պահանջ է դնում նույնը, ինչ որ ժողովուրդը՝ ջնջել անգլիական ընկերության տված արտոնությունը: Մյուս կողմից՝ անգլիական դեսպանությունը պնդում է պայմանագրության վրա՝ տուգանքի սպառնալիքը մեջտեղ բերելով (ՎՓ):

Միավորական հարաբերությունը հաճախ արտահայտվում է շարահարությամբ:

Թռչունները ուրախ-ուրախ ճախրում էին մի թուփից դեպի մյուսը: Գույնզգույն թիթեռները, գույնզգույն ծաղիկների նման, ցանված էին օդի մեջ: Մայիտակ արագիլը, կարմիր ոտները հարիզոնական դիրքով ուղիղ մեկնած լայն թևերով թափահարում էր, շտապելով դեպի Արաքսի մոլուտները: Չեռնասուն եղջերուները, վայրենի վիթն ու այծյամը, դուրս էին եկել Խոսրովի արքայական անտառներից և ազատ, համարձակ վազվզում էին շրջակա մարզերի վրա (Բ):

Շքեղ մի դղյակ կար, բա՛րձր, բա՛րձր, արծվի թևերի վրա: Սլացիկ սոսիներն ու դարասիները գիշեր-ցերեկ սոսափում էին այնտեղ: Նրանց մետաքսե տերևների վրա մրշտամրմունջ շատրվանների ցողերն էին շողշողուն (Իս.):

Միավորական հարաբերության արտահայտման գործում կարևոր դեր են կատարում թվարկման արժեք ունեցող բառերը՝ դասական թվականները, մի շարք ածականներ, մակբայներ և այլ բառեր: Այս միջոցներից ամենատարածվածը դասական թվականներով կազմվող կապակցություններն են: Այս տարբեր միջոցների ընտրության հարցում որոշակի դեր կատարում են նաև տվյալ խոսքի բնույթը, ոճը: Ասենք՝ գեղարվեստական, գիտական և պաշտոնական-գրասենյակային խոսքի մեջ այս տեսակետից կա զգալի տարբերություն: Վերջին երկուսում և մասնավորապես երրորդ ոճում թվականներով թվարկումն ավելի հաճախ է հանդիպում, քան գեղարվեստական խոսքի մեջ: Ըստ որում թվականները գրավոր խոսքում կարող են արտահայտվել բառերով, թվանշաններով, տառերով, և այս հանգամանքը առանձին նշանակություն չունի նրանց կապակցական արժեքի տեսակետից:

Ինքը այս հոգնակիները բաժանում է ութ խմբի:

ա) Հոգնակին առանձին ձև չունի և նույնն է եզակիի հետ: բ) Կան բառեր, որոնք միայն հոգնակի են գործածվում և եզակի չունեն (անեզակյան բառեր): գ) Կան բառեր էլ, որոնք հոգնակի չունեն և միայն իբրև եզակի են գործածվում (անհոգնական բառեր): դ) Հոգնակին կազմվում է՝ եզակիի վերջում ավելացնելով զանազան մասնիկներ... (դաս.):

Սովորաբար թվականներով կապված նախադասությունները միմյանց նկատմամբ լինում են միավորական հարաբերության մեջ, իսկ թվարկմանը նախորդող նախադասության նկատմամբ՝ մասնավորման կամ ընդհանրացման: Այդպիսիք են բերված նախադասությունները:

Դասական թվականը կապակցական դեր կատարելիս կարող է զուգակցվել հերթականություն նշող ու թվարկման իմաստ ունեցող այլ բառերի հետ. ինչպես՝ **ճախ, նախ և առաջ, հետո, այնուհետև, վերջապես** և այլն: *Կարելի՞ է արդյոք գուշակել, թե ինչ պիտի լինի հայերենի հոլովման վիճակը ավելի հեռու ապագայում: Կարելի է հաստատապես ասել, որ **ճախ** գրաբարածև հոլովման մնացորդները կջնջվեն աշխարհաբարից կամ գոնե*

վերջին աննշան հետքեր միայն կմնան նրանցից: **Երկրորդ՝** միակերպության ձգտումը, որ գործել է հնդեվրոպական շրջանից մինչև գրաբարը և գրաբարից մինչև արդի հայերենը և դեռ լիովին ավարտում չի ստացել, կշարունակի իր գործունեությունը... (ԱՃ):

Նախ և առաջ նա ձեզ համար տատիկ չէ, այլ Ասյա Արտեմովնա, նա իմ տատիկն է միայն, ես էլ նրա միակ թոռնիկն եմ... **Երկրորդը՝** տատիկս գիտի ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն. դա ձեզ չի՞ բավարարում, բազմաչարչար հայ ժողովրդի ընկեր գավակ (ՀՔ):

Երբեմն թվարկման հարաբերության համար միաժամանակ գործածվում են և՛ թվանշան կամ տառ, և՛ բառով արտահայտված դասական թվական: Օրինակ՝ *Խոնարհման համակարգի քննության դեպքում հարացույցը կազմող վերջամասնիկների առանձնացման և հաջորդման կարգի որոշումը որոշ դժվարություններ ունի...*

ա) Առաջին դժվարությունը կապված է խոնարհման հարացույցի մեջ հանդես եկող, այսպես կոչված, լծորդ ձայնավորների դերի հետ: **բ) Երկրորդ** դժվարությունը կապված է լեզվի մեջ գործող նվազագույն ճիգի և դրան զուգահեռ՝ ավելցուկայնությունից խուսափելու միտման օրենքների հետ... (դաս):

Ինչպես երևում է, բերված օրինակում դասական **առաջին, երկրորդ** թվականները կապակցված են գոյականի հետ (**դժվարություն**), և հատկապես այդ հանգամանքն է հնարավոր դարձնում դասական թվականի գործածությունը թվարկման այլ միջոցի հետ միասին:

Երբեմն թվարկության իմաստով գործածվող դասական թվականները միաժամանակ կատարում են փոխարինման գործառույթ, և այդպիսով նրանցով կապվող նախադասությունները միմյանց նկատմամբ գտնվում են թվարկման հարաբերության մեջ, իսկ կապակցող թվականները անմիջական կապի մեջ են գտնվում մի այլ նախադասության համապատասխան բառերի կամ բառակապակցությունների հետ:

Գարեգին Սրվանձտյանը հայ գրականության մեջ մուտք է գործել 60-70-ական թվականներին գրված երկու թատերգություններով: Առաջինը, որ կրում է «Ռդբերգութիւն մեծին Սահակայ Պարթևի և անկումն Արտաշրի Արշակունտոյ» խորագիրը, գրված է 60-ական թվականների վերջերին... Երկրորդը, որ կրում է «Շուշան Շավարշանայ» խորագիրը, լույս է տեսել 1875 թվականին Կ. Պոլսում» (ՀՆԳՊ):

Բերված նախադասության մեջ **առաջինը** և **երկրորդը** բառերը միավորական հարաբերություն են ձևավորում, բայց դրանցից յուրաքանչյուրը միաժամանակ մասնավորում է «երկու թատերգություններ» բառակապակցության իմաստը:

Միավորական հարաբերությունը երկու տեսակ է լինում՝ համաժամանակություն և տարժամանակություն:

Համաժամանակության հարաբերությամբ միավորված նախադասությունների արտահայտած երևույթները, դեպքերը տեղի են ունենում, նկարագրված առարկաները ներկայացվում են միևնույն ժամանակում: Այս հարաբերության արտահայտման գործում կարևոր դեր է կատարում ստորոգյալները միևնույն ժամանակով դրվելը՝ պայմանով, որ տարբեր նախադասություններում չլինեն տարբեր ժամանակներույց տվող բառեր:

Գիշերը խոժոռվել էր Տարոնի դաշտավայրի վրա: Ամեն ինչ ընկղմվել էր խավարի մեջ (ԳԳ): Մաքսիմովը մեկնվել էր անտաշ ձողիկների վրա, մի ոտքը լայն տարածել ու քնել: Բեյլին պառկել էր կողքի վրա, մոռացել ուսապարկը հանել մեջքից: Երբորդը քնել էր՝ դեռ չմարած ծխախոտի մնացորդը բերանում (ՍԽ):

Ինչպես երևում է, բայի ժամանակը կարևոր դեր է կատարում համաժամանակությամբ հարաբերության արտահայտման մեջ, թեև նրա դերը բացարձակ չէ: Բայի ժամանակ ասելով տվյալ դեպքում նկատի ունենք ոչ միայն խոնարհված բայի (պարզ ստորոգյալ), այլև բաղադրյալ ստորոգյալի հանգույցի ժամանակը: Ըստ որում համաժամանակության հարաբերությամբ կապված նախադասությունները հաճախ ունենում են բաղադրյալ ստորոգյալ:

«Վերք Հայաստանի»-ի տեղն ու դերը մեր նոր գրականության մեջ եզակի է, անմրցելի: Նա մեզ համար հավերժական մի բան է, որին անուն չեն կարող տալ: Մեր գրական ամեն տեսակների սկիզբն է նա (Իս.): Օրը մեղմ էր: Նոյեմբերի արևը դուրեկան ջերմություն էր քափում ժայռերին (ՎԱ):

Համաժամանակության հարաբերության մեջ գտնվող նախադասությունները կարող են կապվել թե՛ շարահարությամբ և թե՛ շաղկապներով: Վերք բերված օրինակներում առկա է շարահարական կապակցությունը: Բերենք օրինակներ, որոնցում կապակցումը կատարված է շաղկապներով:

Խշիշոցը լսվում էր երկար, բայց խշիշացնողը ինքը չէր երևում: Եվ նա շարունակ ականջմերը խլշած մայում էր այդ խշիշոցի կողմը (ՄԶ): Գիշերվա մթության մեջ հեռվում սև կերպարանքներ էին երևում ու կարծես շարժվում էին: Ու անբուն էի ես (ՀԹ):

Համաժամանակության հարաբերությունն արտահայտելու համար հաճախ անհրաժեշտ է լինում հատուկ բառով կամ բառակապակցությամբ նշել տվյալ նախադասությամբ արտահայտված երևույթի, գործողության, իրողության ժամանակային նույնությունը նախորդի հետ: Այդպիսի բառեր ու բառակապակցություններ են՝ **միաժամանակ, այդ ժամանակ, այդ նույն ժամանակ, այդ պահին, այդ նույն պահին, այդ րոպեին (ժամին և այլն), դրա հետ միասին, դրա հետ միաժամանակ և այլն:**

Մեկ գղայն էր բերանը տանում, մեկ հացի կտորը կծում, և այնպես շտապ, կարծես աճապարում էր տեղ: Ու միաժամանակ նայում էր սենյակի անկյունները, իրերին, երեխաներին... (ՍԶ): Նա Տոլստոյի «Չարին չհակառակելու» ուսմունքին հակադրել է չարը ոչնչացնելու ուսմունքը: Դրա հետ միասին նա փայտիայել է մի երազանք՝ տիրապետող «համատարած թշվառությանը փոխարինող սոցիալական հավասարության մի գեղեցիկ հեռանկար» (ՀՆԳՊ):

Տարժամանակության հարաբերության դեպքում տարբեր նախադասություններում արտահայտված գործողությունները, երևույթները կատարվում, տեղի են ունենում, կամ առարկաները նկատի են առնվում տարբեր ժամանակներում: Ըստ որում երկուսից ավելի նախադասությունների կապակցության դեպքում գործողությունները կարող են՝ ա) իրար կանոնավորապես հաջորդել, բ) պարզապես կատարվել տարբեր ժամանակներում՝ առանց օրինաչափ հաջորդականության:

ա) Հայ մեծատաղանդ բանաստեղծ Վահան Տերյանը ծնվել է 1885 թվականին, նախկին Ախալքալաք գավառի Գանձա գյուղում: Նա գրաճանաչ է դառնում իր հոր՝ Տեր-Սուքիասի մոտ: Այնուհետև սովորում է Ախալքալաքի քաղաքային դպրոցում և Թիֆլիսի գիմնազիայում: 1899 թ. ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, որն ավարտում է 1906 թվականին: Դրանից հետո Վ.Տերյանը ուսումը շարունակում է Մոսկվայի համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետում և Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնում (Դաս.): Զառասուճորս թվականին փախա ճամբարից, Ֆրանսիայի Նիմ քաղաքում միացա հայ պարտիզանների խմբին: Կովեցիկն հայրենի եզերքներից հեռու (ՀԲ): բ) Վերջին հանդիպման ժամանակ «Արարատը» կարևոր հաղթանակ փարավ և գրավեց երկրորդ

տեղը: Շուտով արարատցիները մեկնելու են Մերձավոր Արևելքի երկրներ, ուր հանդիպումներ կունենան այդ երկրների մի քանի քիմերի հետ: Այժմ նրանք վաստակածի իրավունքով հանգստանում են և պատրաստվում կարևոր ուղևորության (ՀՅ):

Տարժամանակության հարաբերությունը կարող է արտահայտվել շարահարությանը, շարադասությանը, շաղկապներով, ստորոգյալի ժամանակով և ժամանակ ցույց տվող տարբեր բառերով:

Շարադասությունը տարժամանակության հարաբերությունն արտահայտելու խնդրում այն չափով է էական դեր կատարում, ինչ չափով նվազ է մյուս գործոնների դերը:

Նշան բռնեցի ու կրակեցի: Մի կտոր մեղր ընկավ: Ես, մեղրահացի կտորը ձեռքիս, մեղուներից հալածված, վազեցի նեղ շավիղով, մի քարայրի առաջ նստեցի և ախորժակով կերա մեղրը (ՎԱ): Երկյուղով ու հետաքրքրությամբ ես շրջեցի այլը և վաղուց քայքայված դիակների մեջ մի գույգ շատ խոշոր եղջյուրներ նկատեցի... Ես շուռումուռ տվի դիակը և առաջին ձախ ոտքի քիակի վրա սայի նկատեցի... Ես հանեցի դաշույնս, կտրեցի քիակը (ՎԱ):

Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, բերված օրինակներում (և, իհարկե, համանման դեպքերում) նախադասությունների հաջորդականությունը՝ շարադասությունը, ինքնին արդեն ցույց է տալիս համապատասխան գործողությունների իրար հաջորդելը, որ տարժամանակային հարաբերության մի տարատեսակն է:

Շարադասությունը, սակայն, ոչ միշտ է պայմանավորում տարժամանակություն. իրար հաջորդող նախադասությունները, ինչպես տեսանք վերը, բնականաբար, կարող են արտահայտել նաև համաժամանակության հարաբերություն:

Ձինվորները արձակել էին բաց կանաչ բլուզների կոճակները, ոմանք՝ նստել դռան շեմին, ոտքերը կախ գցել: Մյուսները վիզները երկարել, ազահորեն խմում էին դաշտի ու անտառի տաք բույրերը (ՄԽ):

Տարժամանակության հարաբերության արտահայտման հարցում մեծ դեր են կատարում ժամանակ ցույց տվող բառերը: Որպես այդպիսի բառեր գործածվում են ամենից առաջ ժամանակի անունները՝ ժամանակի միավորների անունները (**տարի, ամիս, շաբաթ, րոպե, վայրկյան**) առանձին կամ ավելի հաճախ՝ ցուցական իմաստ ունեցող **այս, հաջորդ, անցյալ, նախորդ, հետագա** և նման այլ բառերի հետ, տարվա եղանակների, ամիսների, շաբաթվա օրերի անունները և ժամանակ ցույց տվող այլ բառեր՝ **առավոտ, ցերեկ, գիշեր** և այլն:

Հունվարին ու փետրվարին նրանք լավ նախապատրաստվել էին գարնանացանին: Մարտին, երբ եղանակը փոքր-ինչ տաքացավ, ամբողջ համայնքը մի մարդու սլես անխափան աշխատում էր դաշտում:

Անցյալ փարի կամրջի շինարարները հասան մեծ հաջողությունների: Այս փարի կամրջի շինարարությունը կավարտվի, եթե աշխատանքների ընթացքը չդանդաղի (Լբ.):

Տարժամանակությունն արտահայտելու համար գործածվում են նաև մակբայներ, հատկապես նրանք, որոնք ունեն տարրորշված իմաստ (**այժմ, հիմա, ապա, հետագայում, այնուհետև** և այլն), կապեր՝ իհարկե, կապվող բառի հետ գործածվելով (**հետո, անց, նախքան, մինչև, առաջ** և այլն), այլև տարեթվեր, ամսաթվեր և այլն:

Ալեքսանն ուղղվեց և թևով սրբեց ճակատից ծլող քրտինքը: Ապա, մեկեն ցնցվելով, ուշքի եկավ և սկսեց ծածկել Վանոյի բացված ոտքը (ՍԶ): Այս կարգի պատմվածքներ «Մշակը» չափազանց շատ տպագրեց: Հեղափոխում մայրաքաղաքներում կրթված երիտասարդու-

թյան հարցը գեղարվեստական զանազան մեկնաբանումների ստացավ Շիրվանգադեի և Մուրացանի մոտ (**ՀՆԳՊ**): Նրանք գնում էին դաշտ և մոռացել էին, որ տանը մարդ չկա, և դռները բաց էին հավերի ու շների առջև: **Փոքր հեպո** նրանք դուրս եկան դաշտը և երկար ժամանակ գնում էին խոտերի միջով (**ՍԶ**): Լուրն ստուգելու համար տղամարդիկ ելան կտուրները, երեխաները վազեցին դեպի խճուղին: **Շատ չանցած՝** երևացին իսկապես ձիավոր կադրուտցիներ՝ հրացանով և վախվորած դեմքերով (**ՍԶ**):

ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նախադասությունները հաճախ իրար հետ կապվում են ներհակական հարաբերությամբ, այսինքն՝ տարբեր նախադասություններ իրենց արտահայտած մտքով գտնվում են հակադրության մեջ:

Այսպիսի հարաբերությունը ամենից շատ արտահայտվում է ներհակական շաղկապներով՝ **սակայն, բայց, իսկ, մինչդեռ** և այլն:

*Մի՛ քաշվիր նախապատվություն տալ նրան, որքան էլ իշխանները ինքնագլուխ են այնտեղ... Բայց իմացիր, թագավորն առանձնապես ատում է Հազկերտին (**ԳԳ**): Վաղ առավոտ արթնանալով՝ դուստրերն ու տղան տեսան հորն իր գրասեղանի առջև նստած աշխատելիս, ինչպես միշտ տեսել էին աշխարհն հիշելու իրենց առաջին օրերից: **Միայն** սեղանի վրա ոչ լամպն էր վառվում, ոչ էլ մոմեր կային (**ՀՔ**): Նա հաստատ գիտեր, որ այդ փողը ինքը չի ծախսել և գրայանումն էր, բայց թե ի՞նչ էր եղել, երկար ժամանակ չէր կարողանում ըմբռնել: **Սակայն**, ինչպես հետո պարզվեց, այդ տասը կոպեկը գրայանից հանել էր կինը և խուրմա գնել շրջիկ մրգավաճառից (**ՍԶ**):*

Ներհակական հարաբերության արտահայտմանը մասնակցում են նաև մի շարք բառական միջոցներ՝ եղանակավորող բառեր, բառակապակցություններ և այլն: Ինչպես՝ **ընդհակառակն, ոչ, հակառակ դրան (դրան հակառակ), ինչ վերաբերում է, իսկ ինչ վերաբերում է** և այլն:

*Այսօր էլ թեև նեղացած տնեցիներից, բայց ցանկություն չունի այդ մասին խոսելու: **Ընդհակառակը**, նա ուզում էր այդ ամենը մոռանալ, չհիշել (**ՍԶ**): Մեծ եղբայրը գտնում էր, որ կովն իրեն կհասնի, որպես ավագի: **Փոքրն, ընդհակառակը**, պնդում էր, որ կովը պիտի մնա իրեն, իբրև կրտսերի, որ ավելի քիչ է օգտվել հայրենական տնից (**ՍԶ**):*

Ներհակական հարաբերությունն արտահայտվում է նաև շարահարությամբ՝ առանց հատուկ կապակցող բառերի: Այս դեպքում սովորաբար նախադասություններից մեկի ստորոգյալը բնույթով լինում է ժխտական:

*Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիբորին տանի քաղաք մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաչայնում (**ՀԹ**): Նվագում էի, նվագում ու միայն տատիկի և թոռնիկի հայացքներում էի նկատում արվեստիս ազդեցությունը: Միջին սերնդի այդ պաղ ներկայացուցչուհին չէր հմայվում (**ՀՔ**):*

ՄԱՍՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մասնավորման կոչվում է այն հարաբերությունը, որի դեպքում մեկ կամ մի քանի նախադասություններ մասնավորում են մի այլ նախադասության (երբեմն նախադասությունների) միտքը: Մասնավորվել կարող է ընդհանուրն իր ամբողջ ծավալով կամ մասամբ: Հետևյալ օրինակում մասնավորումը կատարվում է ընդհանուր ասվածի ամբողջ ծավալի վերաբերմամբ. «Դա ի՞նչ էր նշանակում: Մի՞թե կինը չի հետաքրքրվում մարդով: Թե՞ սովոր է մարդու մի քանի օրվա բացակայելուն. դրա համար հանգիստ է» (ՄԶ): «Դա ի՞նչ էր նշանակում» ընդհանուր հարցը տվյալ դեպքում մասնավորվում է երկու մասնակի հարցերով, որոնցից յուրաքանչյուրն արտահայտված է մեկ նախադասությամբ: Այնպես որ բերված օրինակի մեջ առաջին նախադասության ընդհանուր միտքը մասնավորված է երկու նախադասություններով, որոնք, ի դեպ, իրար նկատմամբ միավորական հարաբերության մեջ են գտնվում:

Մասնավորման հարաբերությունը հաճախ մասնակի չափով է ընդգրկում ընդհանուր կերպով ասվածը:

Ամենքն էլ աշխատում են ցույց տալ, որ պատահածը ոչինչ բան է, բայց նրանց շարժուձևը, հայացքը մատնում էին նրանց: Ամենից անհանգիստ էր տեսուչը: Նա շարունակ կրծում էր ներքևի շրթունքը (ՄԶ): Մեծ պատմաբանը ծերացել էր ու կուրացել, բայց պահպանվել էին նրա վիթխարի կերպարանքը և անընկճելի, հախտոն ոզին: Փողոցով անցնելիս, ծանր ձեռնափայտը ձեռքին, այնպիսի ահեղ ու կայծակնացայտ հայացքով էր նայում մարդկանց, որ նրան ճանաչողները փշաքաղվում էին՝ կարծելով, թե ծերունին վրեժ ունի աշխարհի դեմ (ՀԲ):

Առաջին օրինակում մասնավորումը կատարված է շատերից մեկի, իսկ երկրորդում՝ նույն անձի մի մասնավոր հանգամանքի վերաբերմամբ: Կան մասնավորման այլևայլ արտահայտություններ ևս:

Մասնավորման կապակցությամբ բերված բոլոր օրինակներում կապակցման քերականական միջոցներից առկա է շարահարությունը: Միաժամանակ այդ կապակցմանը նպաստում են այլ կարգի միջոցներ ևս: Նշենք, օրինակ, որ ընդհանրացում արտահայտող նախադասության մեջ առկա է «ամենքը» որոշյալ դերանունը, որ ունի հանրական իմաստ. դրա դիմաց մասնավորող նախադասության մեջ ունենք «տեսուչը» բառը, որի իմաստը որոշակիորեն սահմանափակ է: Հաջորդ օրինակում առկա է ենթակայի գեղչումը, ուրեմն և ընդհանուր անդամ, որի վերաբերյալ մասնավորող նախադասության մեջ վերցված է «Փողոցով անցնելիս» մասնավորող պարագայական կապակցությունը:

Մասնավորման հարաբերության արտահայտության մեջ հաճախ դեր են կատարում համապատասխան իմաստ ունեցող բառեր ու բառակապակցություններ: Ինչպես՝ **մասնավորապես, հատկապես, առանձնապես, այսպես, օրինակ, այսպես օրինակ, միայն, միմիայն, երբեմն, ըստ որում** և այլն:

Նա ցավ ի սիրտ անաչառ ու անողոր քննադատության է ենթարկել այդ իրականության առավել հոռի երևույթները, բացահայտելու այդ երևույթների պատճառները: Առանձնապես մտալ գույներով է պատկերում Սրվանձտյանցը այն բռնություններն ու շահատակությունները, որ գործադրում են թուրք և քուրդ հարստահարիչները զավառի հայության նկատմամբ (ՀՆԳՊ): Պարոնյանի երգիծանքի բնորոշ կողմերից մեկն էլ օբյեկտի նկարագրության ըն-

թացքում կողմնակի միջոցներով տարբեր երևույթների ծաղրելն է: **Այսպես, ցանկանալով նկարագրել Կիրակոս աղայի նախապատրաստական աշխատանքը ուխտի գնալու համար, գրում է. «Կիրակոս աղան պատրաստած էր յուր ուխտագնացության համար պետք եղած ուտելիքը՝ ապուխտ, սյանիր, խորոված միս, սարդելա, խավյար...» (ՀՆԳՊ): Աղայանի լեզվաբանական հետաքրքրությունների մեջ կարևոր տեղ է գրավում մեր ժողովրդական բարբառների ուսումնասիրության և օգտագործման հարցը... Ըստ որում նա առավելապես ուսումնասիրել է իր մայրենի՝ Ղարաբաղի բարբառը՝ գրելով մի շարք հոդվածներ և կազմելով նրա բացատրական բառարանը, որը պահվում է հեղինակի արխիվում (ՀՆԳՊ):**

Մասնավորման հարաբերության ձևավորմանը մասնակցում են նաև դասական թվականները և նման իմաստ ունեցող այլ բառեր:

«Գրոց ու բրոց» ժողովածուն բաղկացած է երկու հիմնական մասերից: **Առաջինի մեջ հեղինակը բավական հանգամանորեն խոսում է հայ ժողովրդի կենդանի խոսակցական լեզվի, մասնավորապես Տարոնի ու Վասպուրականի բարբառների առանձնահատկությունների մասին (ՀՆԳՊ): Տաճարի քիվերից թռան երկու աղավնի, ապա երրորդը: Առաջինն իջավ ու նստեց ծերունու ուտերին (ՀՔ):**

Մասնավորման հարաբերության ձևավորման մեջ հաճախ որոշակի դեր են կատարում մասնավորող արժեք ունեցող կապակցություններ (դերանվան և գոյականի, թվականի ու գոյականի, դերանվան, ածականի ու գոյականի և այլն):

Անհասկանալի բաներ շատ են պատահում կյանքում: Այդպիսի մի բան պատահեց և մեր ծեր ժամկոչին, որին ամենքը «քեռի Անտոն» էին կանչում (ՍԶ): Ժողովրդական հեքիաթների աղայանական մշակումներում սյուժետային հյուսվածքի պատմականացման գծում գրեթե միշտ միանում է հեղինակի ազգային-հայրենասիրական գաղափարը: **Այդ առանձնահատուկ գիծը տեսնում ենք նաև «Արևամանուկ» և «Արեգնագան» հեքիաթներում (ՀՆԳՊ):**

Չնայած այլ, ինչպես և մասնավորման հարաբերության հետ կապված լեզվական միջոցները քննում ենք առանձին-առանձին (սա անհրաժեշտ է դրանցից յուրաքանչյուրի դերը վեր հանելու համար), բայց պետք է նկատի ունենալ, որ հաճախ կապակցման քերականական միջոցներին զուգակցվում են բառական և այլ միջոցներ: Գա ցույց տանք մեկ օրինակի վրա: **«Բոլոր փասը փարիների ընթացքում Արամը եղել է ուսման առաջավորների շարքում: Հարկապես իններորդ և առավել ևս վերջին դասարանում նա դարձավ դպրոցի պարծանքը»:** Մասնավորման հարաբերություն ունեցող այս կապակցության մեջ քերականական տեսակետից առկա է շարահարական միջոցը: Բայց տվյալ դեպքում միայն այդ միջոցը քիչ է արտահայտելու համար նշված հարաբերությունը: Բերված օրինակում միաժամանակ հանդես են գալիս մասնավորման հարաբերության ձևավորմանը մասնակցող լեզվական այլ միջոցներ, որոնք են **հատկապես ու առավել ևս** մասնավորող բառերը, **իններորդ դասական թվականը և վերջին** ածականը, որոնք, **դասարան** գոյականի հետ կապակցվելով, մասնավորում են արտահայտում **տասը տարիների** համեմատությամբ:

ԸՆԴՀԱՆՐԱՑՄԱՆ, ՀԵՏԵՎՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Հարաբերության այս տեսակը հակադիր է նախորդին՝ մասնավորմանը: Ընդհանրացման հարաբերության դեպքում տարբեր մասնավոր նախադասություններից

կամ մեկ նախադասությամբ արտահայտված մի քանի մասնավորներից կատարվում է ընդհանրացում, արվում է հետևություն:

Մեր վեպը դարեր ու դարեր պատմել են ու երգել մեր ռամիկ ասացողներն ու գուսանները, ավանդելով սերնդեսերունդ և հասցրել են մինչև մեր ժամանակները: Գրական մշակումի չի ենթարկվել նա, գրական միջամտություններ չի ունեցել: Մեր վեպը լեռներից բխող աղբյուրի պես անարատ և անխառն հասել է մեզ՝ այս թանկագին գանձը: Մեր վեպը, այսպիսով, բացառապես ժողովրդական ստեղծագործության արդյունք է (Բս.):

Այս օրինակում ընդհանրացումն արտահայտված է վերջին նախադասությամբ, իսկ նախորդ նախադասություններն արտահայտում են համեմատաբար մասնավոր բնութագրումներ, որոնք նախապատրաստում են վերջին ընդհանրացումը:

Ընդհանրացման հարաբերության դեպքում կարևոր դեր են կատարում ընդհանրացման կամ հետևության իմաստ արտահայտող մի շարք բառեր, ինչպես՝ **ուստի, ուրեմն, հետևաբար, հետևապես, այսպիսով, և այսպես, առհասարակ, ընդհանրապես** և նման այլ բառեր ու բառակապակցություններ:

Մի նիհար կին, երկու երեխայի հետ, տան առջևի փոքրիկ բոստանում քաղհան էր անում, իսկ երեխաները, ծաղկած արևածաղիկների տակ նստած, հաց էին կրծում: Ալեքսանն անցավ, նրանց կողմը նայելով: Կինը տարված էր աշխատանքով: Առհասարակ անհանգստության նշան չէր երևում (ՍԶ): 70-80 ական թվականներին պատմական դրաման, չնայած իր կատարած որոշ դրական դերին, այնուամենայնիվ նկատելի վայրէջք էր ապրում: Հեպուսպես այդ պիեսները չէին, որ պետք է հիմնականում սնուցեին բեմը, հանդիսականին, կյանք մեշնչեին թատրոնին (ՀՆԳՊ): Նոր բարձրարժեք պիեսներ քիչ էին գրվում, «Պեպոյից» հետո Սունդուկյանը բեմ հանեց միայն «Քանդած օջախը», որը, սակայն, վերջինը եղավ և որոշ իմաստով եզրափակեց արևելահայ ռեալիստական թատրոնի մի որոշ էտապը: Եվ այսպես՝ մի ամբողջ տասնամյա բուռն գործունեությունից հետո 70-ական թվականների կեսերին արևելահայ թատրոնը կանգնեց տեղատվության առաջ (ՀՆԳՊ):

Ընդհանրացման կամ հետևության հարաբերության արտահայտության մեջ դեր ունի նաև շարահարությունը, շարադասությունը: Որքան տվյալ երևույթի կապակցման ձևական միջոցները նվազ են հանդես գալիս, այնքան մեծանում է նախադասությունների իմաստային կապի, այլև շարադասության, շարահարության դերը: Բերենք մի օրինակ.

Մարյանը ազգային կոլորիտի նկարիչ է: Նրա արվեստի արմատները սուզվում են մեր հին արվեստի մեջ: Սակայն, երբ օտարը հիանում է մի ուրիշ ժողովրդի արվեստով, հասկանում է, գնահատում և սիրում, ապա այդ արվեստը անվիճելիորեն դառնում է համամարդկային: Մարտիրոս Մարյանի արվեստը բովանդակ աշխարհինն է... (Բս.):

Վերջին նախադասությունը նախորդներից բխող հետևություն է, որ նախորդների հետ կապված է շարահարությամբ:

ՄԵԿՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեկնական հարաբերությամբ կապվում են այնպիսի նախադասություններ, որոնցից մեկը կամ մի քանիսը մեկնում, բացատրում, բացահայտում են նախորդի կամ նախորդների միտքը:

Ի՞նչն էր Պեպոյի նպատակը: Կովելով Ջիմզիմովի դեմ, մերկացնելով նրան, արտահայտելով ժողովրդի զայրույթը նրա հանդեպ՝ միաժամանակ զգալ տալը վաճառականին, որ նա սխալ ճանապարհի վրա է կանգնած (ՀՆԳՊ): Ավելի լավ է պատմեմ ձեզ, քե ինչ կատարվեց Եփրատի կամուրջի վրա, երբ ես 15 տարեկան էի: Նախրի նման քշում էին մեզ խոր մի ձորի միջով, քշում էին ամբողջ մի բազմություն՝ ծեր տղամարդկանց ու պառավ, զառամյալ կանանց, պատանի տղաների ու փոքրիկ աղջիկների ու դեռ ծծկեր երեխաների, որ ճշում, ճշում ու լռում, մեռնում էին մայրական գրկի մեջ (ՀՔ): Ժողովն ավարտվեց լուսադեմին, և լույսը դեռ չբացված՝ նրա որոշումները հայտնի էին բոլորին՝ գյուղացիներին: Արամին հեռացրել են նախագահի պաշտոնից (ՀՔ):

Մեկնական իմաստ ունեցող նախադասությունը սովորաբար ունենում է հետադաս գործածություն: Այդպիսիք են վերը բերված օրինակները: Երբեմն նրանք գործածվում են նախադաս: Սա կարելի է ցույց տալ վերը բերված օրինակներից առաջինի շարադասությունը փոխելով: Այսպես՝ *Կովելով Ջիմզիմովի դեմ, մերկացնելով նրան, արտահայտելով ժողովրդի զայրույթը նրա հանդեպ՝ միաժամանակ զգալ տալը վաճառականին, որ նա սխալ ճանապարհի վրա է կանգնած: Ահա քե ինչն էր Պեպոյի նպատակը: Ծարադասության փոփոխությամբ մեկնական նախադասությունը դրվեց նախադաս: Միաժամանակ վերջին նախադասության մեջ ավելացվեց **ահա** ցուցական եղանակավորող բառը, որով ցույց է տրվում, որ մեկնող նախադասությունը նախորդն է: Ցուցականության իմաստով նման դեպքերում գործածվում են նաև այլ բառեր: Ասենք՝ **Սա էր Պեպոյի նպատակը: Այս էր Պեպոյի նպատակը:***

ՏՐՈՒՀԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նախադասությունների հարաբերությունը կարող է լինել նաև տրոհական: Տրոհական հարաբերության դեպքում տարբեր նախադասություններով արտահայտված երևույթներից մեկն է համարվում հնարավոր, անհրաժեշտ, իրական, և կամ թվարկվում են տարբեր հնարավորություններ, իրողություններ, որոնք լինում են կամ հնարավոր են տարբեր ժամանակներում, պարագաներում: Տրոհական հարաբերության արտահայտման համար գործածվում են տրոհական շաղկապներ ու շաղկապական կապակցություններ՝ **կամ, կամ քե, և կամ, կամ քե չէ** և այլն:

Ո՞վ գիտե, գուցե ուզում էր, որ Գարեգինը տեսնի իրեն, հասկանա, որ նշանվելով մի նոր ու ծանր վերք է հասցրել իր սրտին: Կամ գուցե անբուն գիշերից հետո պարզապես գնում էր գրոսնելու ու թարմ օդ շնչելու (ՍԽ): Տնից դուրս էր գալիս, իջնում էր գյուղի մոտի ժայռեղեն ավերակ խոր ձորը, այնտեղ նստում էր հին մատուռի առջև՝ մամոռտ քարերի վրա, ու ծխում էր: Կամ Ափրոյի հետ միասին մարգեր էր շինում նրա այգում, բաժակներ էր սարքում ջահել խնձորենիների բների շուրջը, նայում էր հանդիպակաց սարերին, կապույտ, թափանցիկ, մշուշով լցված դաշտավայրին (ՀՔ):

ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Պատճառահետևանքային հարաբերությունը բնորոշվում է նրանով, որ նախադասություններից մեկը կամ մի քանիսը պատճառ են արտահայտում, մյուսը կամ մյուսները՝ հետևանք:

Ռազմաֆեոդալական պետությունը միայն գոյում էր, իսկ տնտեսության կազմակերպումն ու բարենորոգումը նրան բնավ չէր մտահոգում: **Ահա թե ինչու ընչազուրկ ժողովուրդը շարունակաբար մատնվում էր տարերային աղետների շարիքին (ՀՆԳՊ):**

Բերված օրինակում առաջին նախադասությունը պատճառ է արտահայտում, իսկ երկրորդը՝ հետևանք: Բննարկվող հարաբերության, ինչպես և բարդ նախադասության կառուցվածքում այդ նույն հարաբերության հարաբերակցության տեսակետից ուշագրավ է այն երևույթը, որ ինքնուրույն նախադասությունների պատճառահետևանքային հարաբերությունը հաճախ կարելի է արտահայտել բարդ նախադասությամբ: Վերոհիշյալ օրինակի հետ հմմտ. հետևյալը. *Որովհետև ռազմաֆեոդալական պետությունը միայն գոյում էր, իսկ տնտեսության կազմակերպումն ու բարեկարգումը նրան բնավ չէր մտահոգում, ուստի ընչազուրկ ժողովուրդը շարունակաբար մատնվում էր տարերային աղետների շարիքին:*

Պատճառահետևանքային հարաբերության արտահայտմանը մասնակցում են մի շարք բառեր ու բառակապակցություններ. ինչպես՝ **ուստի, ուրեմն, ահա թե ինչու, ահա ինչու, այդ (այս, նշված) պատճառով, դրա հետևանքով** և այլն:

Երբ ինչ է կազմակերպվում արտադրությունը, գնահատվում են առաջարկություններն ու ներդրվում արտադրության մեջ, հատուկ հսկողություն է սահմանված որակական ցուցանիշների վրա: Ուստի և ձեռնարկությունը ապահովում է արտադրանքի բարձր որակը (ՍՀ): Հենց գետին ընկած միջոցին նա ճանկոտտել է հողը: Ահա ինչու ձեռներն ու շորերը հողոտ են (ՍԶ): Գարրիելի հետագա կրթությունը դեմ էր առնում ընտանիքի ճորտական կեցությանը: Ըորտն իրավունք չունեի սովորել գիմնագիտյում, ուր մնաց թե համալսարանում: Ահա թե ինչու Թինաքինան 1831 թվականից հարց է հարուցում ընտանիքը ճորտագրյալ վիճակից ազատելու մասին (ՀՆԳՊ): Գիմնագիտ Արծրունին մեկնելով ուսման, իր հետ տարել էր թիֆլիսյան կյանքի խոր իմացությունը. նա տեղյակ էր ոչ միայն քաղաքային բարքերին, այլև ժողովրդի ընդհանուր հասարակական պահանջներին: Այդ պատճառով հենց Պետերբուրգում նա ծրագրում է մի հայկական օրաթերթի հրատարակությունը (ՀՆԳՊ):

Երբեմն պատճառական հարաբերությունն արտահայտող բառակապակցության դերով հանդես է գալիս բարդ նախադասության բաղադրիչ գլխավոր նախադասությունը: **Այդ պատճառով** բառակապակցության իմաստն արտահայտվում է **այդ է պատճառը** (կամ **պատճառն այդ է**), **այս պատճառով** բառակապակցության իմաստը՝ **այս է պատճառը** նախադասությամբ (որպես բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ գլխավոր նախադասություն):

Տյուսաբի հերոսները նման են միմյանց, հանդես են գալիս միայն որպես հեղինակի մտքերի խոսափողներ: Այդ է պատճառը, որ ընթերցողը հաճախ չի հավատում նկարագրվող դեպքերի ճշմարտությանը (ՀՆԳՊ): Հմմտ. Տյուսաբի հերոսները նման են միմյանց, հանդես են գալիս միայն որպես հեղինակի մտքերի խոսափողներ: Այդ պատճառով ընթերցողը հաճախ չի հավատում նկարագրվող դեպքերի ճշմարտությանը:

Պատճառահետևանքային հարաբերության դեպքում կապակցական դերով հանդես է գալիս **չէ՞ որ** եղանակավորող բառը, որով կապ է ստեղծվում թե՛ հարցական և թե՛ այլ բնույթի նախադասությունների հետ: Այն գործածվում է հատկապես ոճական որոշակի նպատակով՝ ճարտասանական հարցի դեպքում:

Վաղը նա չի լինի, և նրա հետ կմոռացվի նաև նրա անունը: Բայց ինչո՞ւ մոռացվի նրա գոհի անունը, ինչո՞ւ: Չէ՞ որ նրա հոգին ապրում է ազատ արևի շողերի մեջ, կարմիր ծաղիկների

տոսափում... **(ՄԽ):** Արամի հրամանով մի քանի հոգի վազեցին գյուղի բոլոր կողմերը՝ շրջակայքը նայելու: **ՉԷ՞ որ Առաքելը սովորություն ուներ նույնիսկ զիշերները դաշտ դուրս գալու (ՀՔ):**

Հաճախ նախադասությունների պատճառահետևանքային կապն արտահայտվում է առանց կապակցող բառական միջոցների՝ շարահարությամբ:

Ջինվորները խլեցին պատավի ոսկրացած թևերը և պարաններով կապկպեցին: Պատավը դադարեց խոսելուց, բայց նրա կզակը ցնցվում էր ու դողում (ԳԴ): Ամեն անգամ, երբ խոսելու հերթը Նահապետին էր հասնում, բոլորն էլ ուշադրությամբ լսում էին: Գիտեին, որ շատ փորձությունների միջով է անցել նա, շատ մահեր է տեսել, շատ հարազատների է կորցրել (ՀՔ):

ՋԻՋԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ջիջական հարաբերությամբ կապված նախադասություններից մեկն արտահայտում է այնպիսի գործողություն, երևույթ, որը կատարվում, տեղի է ունենում՝ ի տարբերություն, ի զիջումն նախորդ նախադասության կամ նախադասությունների մեջ արտահայտվածի:

Թուկի ծայրը, որ երկաթե օղակ ուներ, դիպավ նրա կողքի ոսկորին, և դրանից Ծովանն այնպես վատ, այնպես ծանր ցավ զգաց, ինչպես ազդրը խարանելու ժամանակ: Այնուամենայնիվ կրկին փորձեց դուրս գալ, բայց տիրուհին դարձյալ չթողեց (ՄՁ):

Առաջին նախադասության մեջ արտահայտված՝ երկաթե օղակը ոսկորին կաշելուց պատճառած ուժեղ ցավից սպասվում էր, որ Ծովանը պիտի հնազանդվեր, բայց հաջորդ նախադասությամբ նշվում է, որ չնայած դրան, նա նորից է փորձում դուրս գալ: Դրանով իսկ ստեղծվում է զիջական հարաբերություն:

Ջիջական հարաբերությունը գերազանցապես արտահայտվում է որոշ զիջական շաղկապներով և նման իմաստ ունեցող բառակապակցություններով. ինչպես՝ **այնուամենայնիվ, այդուամենայնիվ, այսուամենայնիվ, այնուհանդերձ, այսուհանդերձ, այդուհանդերձ, չնայած դրան, չնայած այդ ամենին, դրա փոխարեն և այլն:**

Իբրև գրող՝ Բաֆֆին հայտնի դարձավ և հասարակականորեն ճանաչվեց 70-ական թվականներին: Այդուհանդերձ 50-60-ական թվականներին նրա երկերը կազմում են ստեղծագործական մի ուրույն էտապ և հետաքրքիր են հեղինակի գրական-գեղարվեստական ու գաղափարական զարգացումը լուսաբանելու տեսակետից (ՀՆԳՊ): Աշխատել էր առանց դադարների, անընդմեջ ու անխոնջ կես դար ու ևս երկու տարի: Թողել էր հետնորդներին տպագրված ու անտիպ 50 հատոր: Եվ այնուամենայնիվ, հիմա տեսնում էր, որ չի բացել իր փոքր ժողովրդի մեծ պատմության բոլոր գաղտնիքները (ՀՔ): Արարատցիները այդ օրը խաղացին մեծ եռանդով ու մի առանձին ակտիվությամբ: Չնայած դրան՝ հաղթանակը չապահովվեց խաղացողների ոչ միասնականության պատճառով (ԼԲ):

ԺԱՄԱՆԱԿԻ, ՏԵՂԻ, ՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախադասությունները այլ նախադասության հետ երբեմն կապվում են ժամանակի, տեղի, որոշիչային ու այլ հարաբերություններով: Իհարկե, այս հարաբերություններով կապված նախադասությունները, ի տարբերություն համապատասխան երկրորդական նախադասությունների, շարահյուսորեն ինքնուրույն են: Այնպես որ

թեև կրում են նրանց անունները (տեղի, ժամանակի, որոշիչային), բայց էապես տարբեր են նրանցից, հարաբերականորեն անկախ են:

Հետևյալ օրինակների առաջին նախադասությունն արտահայտում է հաջորդ նախադասությամբ արտահայտված իրողության ժամանակը:

1905 թվականի հոկտեմբերի վերջերին էր: Ցարական նենգ ու կեղծավոր սահմանադրությանը հաջորդեցին արյունալից օրեր (Իս.): 1905 թվի աշնանն էր. թուրք-հայկական ընդհարումները ամենակատրուկի սարսիճանի էին հասել:

Տեղի հարաբերությունն արտահայտող նախադասությունները ևս սովորաբար հանդես են գալիս նույնաման կառուցվածքով: *Գյուղի նորակառույց փներից մեկում էր: Գյուղի աշխատավորները հավաքվել էին մեծ ուրախության՝ մի խումբ հայրերի հայրենադարձության առթիվ. նրանք տասնամյակների բաժանումից հետո իրենց հարազատներին ու ընկերներին վերագտան հայրենիքի այս բարեկարգ գյուղում:*

Երբեմն նախադասությունները կապի մեջ են մտնում որոշիչային հարաբերությամբ: Նախադասությամբ բնութագրվում, բնորոշվում է մի այլ (սովորաբար նախորդ) նախադասության մեջ անվանված առարկան, անձը:

Ներս բերին Առաքելին: Գունապ էր, այրերի կարմրությունն անցել էր (ՀՔ): Բաղաքից եկան Արամն ու մայրը: Տխուր էին (ՀՔ):

Սրանք են նախադասությունների քերականական կապի ու հարաբերությունների հիմնական տեսակները:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Նախադասությունները կապակցվում են բազմազան միջոցներով: Դրանք բնութո՞ւյնով երբեմն իրարից տարբեր են, բայց ծառայում են միևնույն նպատակին: Այդպիսի դեր կատարում են շատ շաղկապներ, շաղկապական բառեր ու բառակապակցություններ, դերանուններ, դերանուններին հարող շատ բառեր, ածականներ, մակբայներ, եղանակավորող բառեր, տարբեր նախադասություններում մեկ ընդհանուր անդամը, շարադասությունը, շարահարությունը:

Ինչ խոսք, քանի որ շաղկապը իր էությամբ կապակցական դեր կատարող խոսքի մաս է, իսկ, ասենք, նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը՝ ոչ, ուստի դրանց դերը քննարկվող հարցում տարբեր բնույթ ունի: Շաղկապը կամ շաղկապական բառը տվյալ դեպքում հանդես է գալիս իր ուղղակի կապակցական արժեքով:

Նավ նստեցի և եկա այստեղ. միևնույն է մի տեղ պետք է գնայի... Եվ ես քանի ողջ եմ, չեմ վերադառնա նորից ստրկացած հայրենիքս... Քայց կուզենայի՝ գոնե աճյունս թաղվեր իմ հայրենիքում (Իս.):

Եվ, բայց շաղկապներն այստեղ ուղղակիորեն կապակցական դեր են կատարում, և դա նրանց էությունն է, միակ դերն է լեզվի մեջ:

Մինչդեռ, օրինակ, ցուցական դերանունների, եղանակավորիչների միջոցով նախադասությունների կապը, հարաբերությունն արտահայտվում է այլ կերպ: Դրանք տվյալ նախադասության մեջ որոշակի դերով ու արժեքով հանդես գալու հետ միասին հաճախ տարբեր առումներով ու չափով վերաբերում են նաև կից նախադասու-

թյանը կամ նախադասություններին և դրանով իսկ կապ են ստեղծում նրանց միջև:

Բայց մտածել, սառը դատել անկարող էի այդ պահին. բարկություն, նախանձ, կատաղություն. այդ ուժերն էին սիրտս տակնուվրա անում: Կյանքիս մեջ առաջին անգամն էի զգում այս անասնչ, վայրագ զգացումները: Մարդ, անշուշտ, այսպիսի վայրկյանի մեջ է ոճիր գործում (Իս):

Ընդգծված **այս, այսպիսի** դերանունները համապատասխան նախադասություններում հանդես են գալիս իրենց շարահյուսական պաշտոնով, բայց նրանք միաժամանակ մատնացույց են անում նախորդ նախադասություններում արտահայտված իրողությունը, որոնցում այն ներկայացված է ըստ էության: Ուրեմն **այս, այսպիսի** դերանուններն իրենց հարաբերության իմաստով ցույց են տալիս նախորդ նախադասությունները, իրենց բովանդակությունն ըստ էության ստանում են նրանցից և դրանով պայմանավորում նախադասությունների կապը: **Անշուշտ** վերաբերականը, թեև մտնում է վերջին նախադասության կազմի մեջ և ուղղակիորեն վերաբերում է նրան, բայց թե՛ հեղինակի (խոսողի), թե՛ ընթերցողի (լսողի) համար վերջին նախադասության մեջ՝ ոճիր գործելու վերաբերյալ արտահայտված մտքի նկատմամբ **անշուշտ** բառով արտահայտված հաստատական վերաբերմունքը պատճառաբանված ու հասկանալի կարող է լինել միայն նախորդ նախադասությունների բովանդակության հաշվառման դեպքում: Վերջապես, բերված օրինակում կապակցական որոշ դեր ունի նաև **անասնձ, վայրագ զգացումները** բառակապակցությունը, որը, նախորդ նախադասության մեջ արտահայտված երևույթների ընդհանրացնող գնահատություն լինելով, դրանով իսկ կապի մեջ է մտնում նրա հետ, դրանով էլ արտահայտվում է այդ բառակապակցության կապակցական արժեքը: Ինչպես երևում է, նախադասությունների կապակցման միջոցները բազմազան են ու տարբեր բնույթի:

Նախադասությունների կապակցման միջոցները ըստ բնույթի կարելի է բաժանել երկու խմբի՝ **ա) բառական, բ) քերականական**: Իհարկե, նախադասությունների կապակցության մեջ սրանք բոլորն էլ կատարում են քերականական դեր. այդ խըմբավորումը կատարված է ըստ նրանց լեզվական ընդհանուր բնույթի:

Բառական միջոցներն են շաղկապները, շաղկապական բառերը, շատ գոյականներ, ածականներ և այլ խոսքի մասերի պատկանող բառեր, որոնք խոսքի մեջ կատարած շարահյուսական դերի հետ միասին հաճախ որոշակի հարաբերության մեջ են մտնում մեծ մասամբ նախորդ, երբեմն էլ հաջորդ նախադասության (կամ նախադասությունների) հետ և դրանով իսկ հանդես բերում իրենց կապակցական դերը:

Քերականական միջոցներն են շարահարությունը, շարադասությունը: Քերականական (շարահյուսական) միջոց է նաև նախադասությունների ընդհանուր անդամը (կամ անդամներ, անդամների խումբ) տարբեր նախադասությունների մեջ: Դա էլ հենց դառնում է այդ կապի ու հարաբերության միջոց: Այս միջոցն անվանում ենք շարահյուսական՝ հաշվի առնելով, որ այն առաջ է բերում նախադասության կառուցվածքի (շարահյուսական) որոշակի յուրահատկություններ: Դրա հետևանքով մասնավորապես ստեղծվում է կառուցվածքային տեսակ՝ թերի նախադասություն և դրա հետ կապված՝ ընդհանուր անդամի առկայություն տարբեր նախադասություններում:

ԲԱՌԱԿԱՆ ՄԵՋՈՅՆԵՐ

Նախադասությունների կապակցման բառական միջոցները կարելի է բաժանել չորս խմբի՝ ա) քերականական հարաբերություն արտահայտող բառեր, բ) իրադրական հարաբերություն արտահայտող բառեր, գ) անվանում արտահայտող բառեր, դ) վերաբերմունք արտահայտող բառեր:

Առաջին խմբի մեջ մտնում են շաղկապներն ու շաղկապական բառերը, որոնք, բացի բառեր ու նախադասություններ կապակցելուց, ունեն նաև ինքնուրույն նախադասություններ կապակցելու դեր:

Երկրորդ խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք ցույց են տալիս տվյալ խոսքի մեջ այլ նախադասություններով, բառերով կամ բառակապակցությամբ արտահայտված երևույթ, առարկա և այլն, ու դրանով կապ է ստեղծվում այդ նախադասությունների միջև: Այդպիսի բառեր են դերանունները և հատկապես նրանց որոշ տեսակները (ցուցական, որոշյալ, անձնական և այլն), այլև դերանուններին հարող որոշ բառեր, որոնք թեև խոսքիմասային պատկանելությամբ դերանուն չեն, բայց նրանց պես հարաբերություններ են արտահայտում:

Տանը կին ուներ հեզ ու բարի, երեխա ուներ, որ արդեն ման էր գալիս: Նրանց կերակուր էր հարկավոր (ՄԽ): Իր ժամրային առանձնահատկությամբ էլ «Արություն և Մանվելը» նորույթ էր իր ժամանակի համար: Հեղինակի խոստովանությամբ դա ինքնակենսագրական վեպ է, բայց այնտեղ ինքնակենսագրականն ու վիպագրականն իրար չեն ծածկում: Վերջինն առաջինի պարզ վերարտադրությունը չէ (ՀՆԳՊ):

Երրորդ խմբի մեջ են մտնում անվանական արժեք ունեցող բառերը, որոնք անվանում են խոսքի մեջ նկարագրված երևույթներ, նշված առարկաներ, անձեր և այլն և այդպիսով կապ ստեղծում տվյալ ու մյուս նախադասությունների միջև: Այդպիսի բառեր են գոյականները, ածականները, մակբայները, թվականները, բայերը:

Համայրյա ամբողջ ամառն անցավ պարսպի շինարարության վրա: Օր օրի բարձրանում էր կավե պատը՝ օրական մի երեք մատ, երբեմն՝ ավելի քիչ (ՀՔ): Կավե պատը բառակապակցությամբ բնորոշվում է այլ նախադասության մեջ գործածված պարիսպը բառով արտահայտված առարկան:

Նահապետն ու Նուրարը տան մեջ մնացին մենակ: Երկուսն էլ շփոթվեցին (ՀՔ): Երկուսը թվականի միջոցով քանակական հատկանիշով նշվում են նախորդ նախադասության մեջ անվանված անձինք:

Իհարկե, սրանք ևս արտահայտում են հարաբերություն, և դա հասկանալի է, բանի որ առանց հարաբերություն արտահայտելու՝ կապակցման դեր չէին կարող կատարել: Բայց այս խոսքի մասերի այդ հարաբերությունն էապես տարբերվում է, ասենք, դերանունների արտահայտած հարաբերությունից: Տարբերությունն այն է, որ եթե դերանունների համար, ինչպես տեսանք վերը, այդ հարաբերությունն ուղղակիորեն արտահայտված իմաստային հատկանիշ է, ապա անվանում արտահայտող խոսքի մասերի համար բնորոշը անվանումն է, իսկ հարաբերությունը հանդես է գալիս որպես անվանման հետևանք, խոսքի մեջ նկարագրվածն անվանելուց բխող գործառույթ:

Չորրորդ խմբի մեջ մտնող վերաբերմունքային բառերը կապակցական դերը կա-

տարում են յուրովի: Դրանք, վերաբերմունք արտահայտելով այլ նախադասության մեջ արտահայտվածի նկատմամբ, դրանով իսկ ստեղծում են համապատասխան հարաբերություն, կապ այդ նախադասությունների միջև:

Երկու քննիչն ու պետքադվարչության նախագահ Հայկազ Շավարշյանը հաստատ համոզմունք էին հայտնում, որ Առաքել Էլոյանի փախուստի ու վերադարձի պատմությունը քաղաքական բնույթ չունի: Իսկապես կարոտն է նրան տարել հայրենի եզերքները, և ետ է կանչել նրան հարազատ ժողովուրդը (ՀՔ):

Նախադասությունների կապակցման բառական այս խմբերի միջև երբեմն դրժվար է լինում որոշակի սահմանագիծ անցկացնել, և մի խոսքի մասի պատկանող որոշ կարգի բառեր կարող են ձեռք բերել մի այլ խոսքի մասին հատուկ կապակցական հատկանիշներ: Այսպես՝ դասական թվականների կապակցական հատկանիշը հաճախ մոտենում է դերանունների հատկանշին նրանով, որ դասական թվականները, ի տարբերություն անվանողական արժեք ունեցող խոսքի մասերի, ասենք՝ ածականի, պարզապես նշում են թվային կարգ և ոչ թե բնութագրում առարկան: **Հմմտ. այս շենքը և առաջին շենքը, այն շենքը և երրորդ շենքը:** Բայց դրանք իրենց նշված դերով չեն նույնանում, որովհետև, ի տարբերություն դերանունների, թվականներն անվանում են առարկան՝ ըստ նրա հերթական թվային կարգի: **Հմմտ. առաջին դասարան, երկրորդ դասարան, երրորդ դասարան և այս դասարանը, այդ դասարանը, այն դասարանը:**

Նշենք նաև, որ մի շարք ածականներ (**վերոհիշյալ, վերջին, միջին, հաջորդ, հետևյալ** և այլն) իրենց կապակցական դերով հարում են դերանուններին և քննվում են նրանց հետ միասին: Այսպիսի փաստերը և վերոհիշյալ վերլուծությունները ցույց են տալիս, որ թեև բառերի՝ ըստ կապակցման դերի հիշյալ խմբերի միջև անջրպետ չկա, բայց և այնպես այդ բաժանումն արտացոլում է բառերի կապակցական դերի հիմնական յուրահատկությունները:

Այժմ այդ միջոցները քննենք ավելի հանգամանորեն:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐ

Նախադասությունների կապակցության մեջ քերականական շաղկապական հարաբերություն են արտահայտում շաղկապները, շաղկապական բառերը, ինչպես և դրանց հարող որոշ կապակցություններ:

Այդպիսիք են՝ **բայց, սակայն, իսկ, մինչդեռ, այնինչ, միայն, այնուամենայնիվ, և, ու, նաև, այլև, ևս, կամ, ուստի, ուրեմն, հետևաբար, այնպես որ, այսպիսով, այսպես, օրինակ, այսպես օրինակ, և այսպես ուրեմն, արդ, ի դեպ, ինչ վերաբերում է, իսկ ինչ վերաբերում է, բանն այն է, բացի դրանից** և այլն:

Ինչպես երևում է, նախադասությունների կապակցման դերով հանդես են գալիս առավելապես ներհակական, միավորիչ, մակաբերական շաղկապները:

Ներհակական շաղկապները (**սակայն, բայց, իսկ, մինչդեռ** և այլն) արտահայտում են տարբեր նախադասությունների ներհակական հարաբերություն:

Նույն վայրկյանին բնագրական վախով շուտ եկավ դեպի նա Բաղամյանը և ակամա պաշտպանական դիրք բռնեց, պինդ կաշելով լուսամուտի տախտակին: **Բայց** Վահանը հանկարծ կանգ առավ, նայեց նրա սարսափահար աչքերին և ժպտաց (**ՆՊ**): Երկու սպաներն էլ լուրջ ու հանդիսավոր էին: **Սակայն** նրանք էլ պակաս զարմանքով չէին նայում իրենց առջև կանգնած հայ զինվորներին (**ՄԽ**): Նա միանգամյան գոհ էր, որ ոչ ոք և ոչինչ չէր խանգարում իր հանգիստը: **Իսկ** նրա հանգիստը այն էր, որ ամբողջ օրը կամ չափում էր տաք սենյակի մի ծայրից մյուսը, կամ կարդում էր մադձով լի հոռետես փիլիսոփաների երկերը (**ՆՊ**):

Շատ տարածված է միավորիչ շաղկապների՝ ինքնուրույն նախադասություններ կապելու դերը: Բուն միավորիչ շաղկապների այդ դերը ըստ էության նման է նախադասության բաղադրիչ մասեր կապելու նրանց դերին:

Եղկելի՛ մարդիկ, փոշի կրդառնան ձեր վատ սրտերը, ձեր գործերը չար,

Եվ ժամանակի ձեռքը անտարբեր կըսրբե-կավլե պիղծ հետքերը ձեր:

Եվ ունայնաշունչ՝ հողմը կըշաչե ձեր ոսկորների քարերի վրա,

*Իսկ վայելելու դուք միշտ ապիկար՝ երազն այս չքմաղ, հեքիաթն այս՝ ոսկյա (**Իս**):*

*Սա կանգնում է, թե չէ, իմ գառը տալիս եք՝ տվեք, թե չէ՝ դես թոչեմ, դեն թոչեմ, հարսին առնեմ, դուրս թոչեմ: Ու հարսին առնում է թոչում (**ՀԹ**):*

Ինչ վերաբերում է հավելական միավորիչ շաղկապներին, ապա պետք է ասել, որ սրանք ավելի շուտ նախադասություններ են կապում, քան նախադասության բաղադրիչներ: Իսկ սա նշանակում է, որ նախադասությունների կապակցությունն ունի իր որոշ առանձնահատուկ, բնորոշ միջոցները, որոնցից են հավելական շաղկապները:

*Բացի սահմանային զորագնդերից՝ մյուս բոլոր գնդերը եկել, իրենց դրոշակներով շարվել էին մեղ ճանապարհի երկու կողմերին: Եկել էին նաև գավառների աշխարհագորային գնդերը (**ՄԽ**):*

Առաջին նախադասության «սահմանային զորագնդերի» ու «մյուս բոլոր գնդերի» համեմատությամբ երկրորդ նախադասության մեջ **նաև** շաղկապով նշվում է «գավառների աշխարհագորային գնդերի» հավելական հարաբերությունը, և դրանով իսկ երկրորդ նախադասությունը կապվում է առաջինի հետ:

Հավելական այլ շաղկապներով նախադասությունների կապակցման օրինակներ՝ *Հնաբանությունների օգտագործումը միշտ պետք է խստորեն պատճառաբանված լինի, նրանց չարաշահումը կարող է մթազնել երկի խմաստը... Սակայն բարբառների օգտագործումը ևս պետք է միշտ բխի անհրաժեշտությունից (**ԷՉ**):* - Իմ բանակը գերելով, - դուք դեռ չկրտրեցիք օսմանյան աղեղի լարը, որից ահ ունեն շատ մեծ տերություններ: -Կկտրենք, փաշա՛, մեզ վրա ուղղած ձեր աղեղի լարն էլ կկտրենք (**ՄԽ**):

Ինչպես երևում է, հավելական շաղկապները, ի տարբերություն ներհակականի ու բուն միավորիչի, դրվում են ոչ թե կապվող նախադասությունների միջև կամ ավելի ճիշտ՝ երկրորդ նախադասության սկզբում, այլ երկրորդ նախադասության այն անդամի մոտ, որի հավելական հարաբերությունն են արտահայտում: Ավելացնենք, որ հատկապես **սակայն** շաղկապը կարող է դրվել երկրորդ նախադասության ոչ միայն սկզբում, այլև մեջտեղում:

Քերականությունը (ձևաբանությունը, շարահյուսությունը) բառերի փոփոխության և նախադասությունների մեջ բառերի կապակցության կանոնների ժողովածուն է: Այդ կանոնները, սակայն, քերականությունը տալիս է ընդհանուր, արստրահիված կերպով (դաս.):

Մակաբերական շաղկապները գործածվում են արտահայտելու համար նախադասությունների միջև հետևանքային, մեկնական, հետևության հարաբերություններ, հետևապես և կապում են միմյանց նկատմամբ այդպիսի հարաբերության մեջ գտնվող նախադասություններ:

Նա (Մանուշյանը) ֆաշիզմի մեջ տեսնում էր... ժողովուրդների ստրկացնող չար ոգին, Սովետական Միությունը և իր մտասևեռման կենտրոն Սովետական Հայաստանը ստրկացնել և ոչնչացնել ձգտող հին ոգին: Ուրեմն գտավ իր ազգի և մարդկության թշնամուն՝ գերմանական ֆաշիզմը: Հիմա կանգնել է նրան դեմուդեն: Ուրեմն պետք է զարկել նրան՝ ամեն տեղ, ամեն ձևով, ամեն միջոցներով (Իս): Ռուսերենում Եռասու թեև ստուգաբանորեն նշանակում է «աստված քեզ փրկի», բայց այժմյան իմաստով նշանակում է «շնորհակալություն», այսպես և մյուս օրինակները: Հեղեաբար լեզվի պահպանողականությունը չի կարելի դիտել որպես լեզվի զարգացման բացառում (Աճ): Առաջի կողմից տունը բաց էր, պատը՝ բարձր, իսկ հետևի կողմից պատը չէր երևում, և կտուրի պոռնկը հավասարեցվում էր լանջին: Այնպես որ եթե անձանոթ մարդը, մեր գյուղի միջին լանջից ցած իջներ, չէր հասկանա, որ իր առջև տուն կա (ՎԱ):

Շաղկապական բառերը և կապակցությունները առավելապես գործածվում են ինքնուրույն նախադասություններ կապակցելու համար: Այդպիսիք են՝ **այսպիսով, այսպես, օրինակ, և այսպես, այսպես ուրեմն, արդ, ի դեպ, ինչ վերաբերում է, իսկ ինչ վերաբերում է, բանն այն է, բացի դրանից (բացի ասվածից, բացի վերոհիշյալից) և այլն:**

Երբ խոսքի տրամաբանական զարգացումը գնում է ընդհանուրից դեպի մասնավորը, հարաբերությունը կարող է արտահայտվել հետևյալ բառերով ու բառակապակցություններով՝ **այսպես, օրինակ, այսպես օրինակ** և այլն:

Պարոնյանի երգիծանքի բնորոշ կողմերից մեկն էլ օրյեկտի նկարագրության ընթացքում կողմնակի միջոցներով տարբեր երևույթները ծաղրելն է: Այսպես՝ ցանկանալով նկարագրել Կիրակոս աղայի նախապատրաստական աշխատանքը ուխտի գնալու համար, գրում է. «Կիրակոս աղան պատրաստած էր յուր ուխտագնացության համար պետք եղած ուտելիքը՝ ապուխտ, պանիր, խորոված, միս, սարդելա, խավիար» (ՀՆԳՊ):

Լեզվի պահպանողականությունը, հաճախ հետամնաց ու սխալ ըմբռնողությունը կարելի է տեսնել ոչ միայն հասարակ առարկաների, այլև գիտության զանազան ճյուղերում: Այսպես, օրինակ՝ շարունակում ենք ասել շնչերակ՝ համաձայն այն հին կարծիքի, թե շունչը այդ երակումն է բնակվում (Աճ):

Այսպիսով, և այսպես, այսպես ուրեմն և նման բառերով ու բառակապակցություններով արտահայտվում են ընդհանրացման, մեկնական հարաբերություններ:

Վերջապես՝ նրա (Հր. Աճառյանի) բարբառագիտական հետազոտությունների արգասիքն են հանդիսանում բազմաթիվ բարբառների մենագրական ուսումնասիրությունները... Աճառյանը ոչ միայն գիտական անզնահատելի ավանդ է մտցրել հայ բարբառագիտության մեջ, այլև ստեղծել է բարբառների ուսումնասիրության գիտական եղանակ ու ավանդույթ, որին հետևում են ժամանակակից հայ բարբառագետները: Այսպիսով՝ Հրաչյա Աճառյանը հիմնադիրն է հայ բարբառագիտության՝ որպես գիտական ճյուղի, և նրա մեծավաստակ մշակը (դաս.): Նա (Պուշկինը) տեսնում էր հեռավոր ապագան, զգում էր պատմության առաջընթացը, այդ պատճառով էլ Բելինսկին ասել է, որ նա ապագայի մեջ պիտի ապրի և գալիք սերունդների ուսուցիչը պիտի լինի: Եվ այսպես, Պուշկինը իր հեղափոխական պաթոսով, իր ազատասիրությամբ, իր հայրենասիրությամբ առնչվում է մեր հոյակապ էպոխային (Իս):

Երբեմն յուրահատուկ ընդհանրացման հարաբերություն է արտահայտվում **առ-
հասարակ, ընդհանրապես** բառերով:

Հայ ժողովրդի հազարամյա ուղին այստեղ ներկայացվում է լերկ անապատի ավազների վրա ձգվող քարավանի անվերջ ընթացքի փոխաբերական պատկերի միջոցով: Առհասարակ բանաստեղծությունը կառուցվում է փոխաբերական պատկերների ու բնորոշումների շարքի վրա (դաս.):

Ինչ վերաբերում է, իսկ ինչ վերաբերում է կապակցությունները գործածվում են տրամաբանական տարաբնույթ անցումների, մի հարցից մի այլ բնույթի հարցի անցնելու դեպքում:

Գիտե՞ք, թե ինչ հրաշքներ են գործում գավառում...Մի հինգ-տասը տարուց հետո վերջին խոզարածին էլ կտեսնեք հեղափոխական դրոշի տակ կանգնած...Ինչ վերաբերում է ընդհանուր լուսավորության գործին, այստեղ երևույթն ավելի մխիթարական է (ՆԳ): Այս այն է ապացուցանում, իմ սիրունիկ տիկին, որ Երուսաղեմում էլ են շներ հաչում: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ դու ինձանից ես հարգանք պահանջում դեպի կրոնական զգացումը, ես մի օրինակ կպատմեմ քեզ իմ պրակտիկայից (ՆԳ):

Արդ-ը առավելապես գործածվում է գիտական, հրապարակախոսական ոճերի մեջ. նրանով նշվում է ավելի մեծ անցումը մի հարցից մեկ ուրիշի:

Եվ ահա իրեն ծանոթ այդ սյուժեն «Երկու քույրուհի» մշակելիս Աղայանն ընդարձակել է այն, սիրային, կենցաղագրական գիծը զուգահեռաբար միացրել է մի նոր գծի՝ գյուղի սոցիալական-հողային հարաբերությունների...գծին: Արդ՝ ինչո՞վ է բնութագրվում վեպի գլխավոր հերոսը՝ Արզումանը (ՀՆԳԳ): Արդ այստեղ նշանակում է «այժմ անցնենք այն հարցին, թե...», «իսկ այժմ տեսնենք թե...»:

Քանն այն է կապակցությունն արտահայտում է մեկնական հարաբերություն՝ բառիս լայն իմաստով. այդ հարաբերության իմաստի մեջ կարող են լինել պատճառաբանության, լրացուցիչ բացատրության տարրեր և այլն:

Մխալ է գեղեցիկը բացարձակորեն հակադրել օգտակարության զգացումին, ինչպես արել են Կանտոն և նրա հետևորդները: Քանն այն է, որ գեղեցիկի օգտակարությունը երբեք չպետք է հասկանալ տառացի, նյութական իմաստով (դաս.):

ԻՐԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐ

Նախադասությունների կապակցման բառական միջոցների մեջ մեծ դեր ունեն մաս դերանունները և նրանց հարող ու հատկապես ցուցականություն արտահայտող բառերն ու բառակապակցությունները:

Որպես կապակցման բառական միջոց՝ դերանունները տարբերվում են շաղկապներից: Եթե շաղկապները լուրջ կապակցման քերականական դեր կատարող միավորներ են, որոնք ինքնուրույն նախադասություններ կապելիս այլ դեր չունեն, ապա դերանունների կապակցական դերը հետևանք է նրանց իմաստային-կիրառական յուրահատկության. տվյալ նախադասության մեջ դերանունով ցույց տրված առարկան, հատկանիշը նախադասության կամ նախադասությունների մեջ անվանված են լինում այլ խոսքի մասերով, և փաստորեն սրանց միջոցով է հասկացվում մյուս նախա-

դասության մեջ գործածված դերանվան բուն իմաստը: Այս ձևով կապ է ստեղծվում տարբեր նախադասությունների միջև:

Ամեն ինչ փոխվում էր՝ բացի Մուկուչից: Տասը տարի էր, ինչ նա պահապան էր կաշվի գործարանում (ՄԶ): Ավելի սարսափելի բան չկա, քան իր կենսական ուժերի սպառման կանխագագումը: Դա ծնում է մոտայուտ ներքին տագնապ (ՀՆԳՊ):

Նախադասությունների կապի դերով հանդես են գալիս նաև դերանունների որոշ կապակցություններ: Հատկապես տարածված է ցուցական դերանվան կապակցությունը որոշյալ դերանվան հետ՝ **այս (այդ, այն) բոլորը, այս (այդ, այն) ամենը (ամեն ինչը)** և այլն:

Այվագյանի մասին Պարոնյանը գրել է շատ, օգտագործել է գրական բազմաթիվ ձևեր՝ մանրապատում, երկխոսական զրույց, աֆորիզմներ և այլն: Այս բոլորի մեջ նա ներկայացվում է որպես տգետ, անսկզբունքային մի մարդ, որը ոչ միայն երգիծական գրականության, այլև առհասարակ գրականության հետ առնչություն չունի (ՀՆԳՊ): Անհասկանալի նահանջներ էին լինում քուրքական ճակատում և անսպասելի հարձակումներ, դարձյալ նահանջներ ու կրկին հարձակումներ: Այդ բոլորից ոտի տակ էր գնում ժողովուրդը (ՀՔ): Հայկական քատրոնը Շիրմագանյանի «Դարպասում» տվել էր իր ներկայացումները: Այս ամենն ուներ աշխատիկ բնույթ և ոգի, առնչվում էր արդիական կյանքին (ՀՆԳՊ):

Նշված նպատակով գործածվում են նաև այնպիսի կապակցություններ, ինչպիսիք են՝ **նրանցից ոմանք (ամեն մեկը, յուրաքանչյուրը), դրանցից յուրաքանչյուրը (ամեն մեկը, ոմանք)** և այլն:

Չորրորդ դարի երկրորդ կեսին Հայաստանը դարձել էր կոմսիսնձոր երկու հզոր պետությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Դրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր իր ազդեցությանը ենթարկել Հայաստանը (ՀՆԳՊ): Պիեսներ են գրում Հովհաննես Աճեմյանը, Հովհաննես Յաղիճյանը, Սկրտիչ Աճեմյանը, Սրապ Մանասարյանը, Ռշտունին և ուրիշներ: Դրանցից ոմանք զբաղվել են նաև թատերական երկերի թարգմանությամբ (ՀՆԳՊ):

Հաճախ դերանվան հետ միասին գործածվում է նաև մի այլ խոսքի մասի պատկանող բառ, և նախադասությունների կապն արտահայտվում է դերանվան ու այդ բառի կապակցության միջոցով:

Կառավարության որոշմամբ 1923թ. Երևանում հիմնադրվում է հանրապետությունում առաջին գիտահետազոտական առողջապահական հիմնարկը...: Նույն թվականին Ծաղկածորում կազմակերպվում է հանգստյան տուն (ՀԺՊ): Մանուկներին է ուղղված նաև «Ձմեռ» բանաստեղծությունը (սկզբում «Սառնամանիք» վերնագրով՝ տպված 1884 թ. «Աղբյուր» ամսագրում): Այդ երկու վերնագրերն էլ նույն այլաբանական իմաստն ունեն (ՀՆԳՊ): Յերեկն էլ արդեն հանգիստ չկար, պետք էր մեղուներին նայել, շներին ու հավերին կերակրել, գնորդներին ճանապարհի դնել և դարձյալ հսկել, որ գող չմտնի որևէ կողմից... Այսքան աշխատանքից հետո նրանք կարիք էին գգում լավ ճաշելու (ՄԶ):

Ինչպես երևում է օրինակներից, այն գոյականը, որի վրա դրվում է դերանունը, մեծ մասամբ գործածված է լինում նախորդ նախադասության մեջ: Այդ դեպքում երկու նախադասությունների կապը արտահայտվում է ոչ միայն դերանվան միջոցով, այլև նախորդ նախադասության մեջ գործածված ու հաջորդի մեջ կրկնված գոյականով:

Կապակցման դերով հանդես գալիս, սակայն, դերանունը կարող է դրվել նաև այնպիսի գոյականի (կամ այլ բառի) վրա, որը հանդիսանում է կից նախադասության կամ նախադասությունների մեջ եղած նկարագրության ընդհանուր անվանու-

մը, և այդ ընդհանուր կերպով անվանվածը որոշակի է դառնում ու պարզվում կից նախադասությունից կամ նախադասություններից: Սա ևս նախադասությունների միջև կապի արտահայտության եղանակ է:

«Ճախարակը» նախասովետական շրջանի հայ աշխատավոր գեղջկուհու կիսաքաղց կյանքի ռեալիստական պատկերն է տալիս: Գեղջկուհու միակ հույսը իր ճախարակն է ... Ծայրահեղ աղքատությունն է իշխում տանը: Ամեն ինչից զրկվել են ... Նույն ոգով ու փրամադրությամբ է համակված նաև «Սերմնացանը» (ՀՆԳՊ): «Սերմնացանի» մեջ արտահայտված «ոգին ու տրամադրությունը» ընթերցողի համար պարզվում է նախորդ նախադասություններից: Կամ՝ Գրականագիտության մեջ ընդունված է Պոռոշյանի գրական ուղղությունն անվանել ռեալիստական: Ընդհանուր առմամբ ճիշտ լինելով, այս բնորոշումը, սակայն, չի սպառում հարցի ամբողջ բովանդակությունը (ՀՆԳՊ):

Կապակցական դեր կատարող բառեր ու բառակապակցություններ են՝ վերջին(ս), վերոհիշյալ(ը), նման (այդպիսի իմաստով), ներքոհիշյալ(ը), հետևյալ(ը), հաջորդ(ը), նախորդ(ը), նշված(ը), վերը (ստորև) հիշատակված(ը), վերը (ստորև) բերված(ը) և այլն: Ինչպես երևում է բերված բառերի ու բառակապակցությունների իմաստից, դրանց մի մասը ցույց է տալիս նախորդ նախադասության կամ նախադասությունների մեջ հիշատակված առարկա, երևույթ և այլն, հետևապես և կապ է ստեղծվում տվյալ և նախորդ նախադասությունների միջև:

441թ. պարսիկ մարզպանը ետ կանչվեց Հայաստանից, և նրա փոխարեն մարզպան նշանակվեց Վասակ Սյունին: Վերջինս մինչ այդ վարում էր կովկասյան մարզերի գորահրամանատարի և Վրաստանի մարզպանի պաշտոնը (ՀԺՊ):

Քննարկվող բառերի ու բառակապակցությունների մյուս մասը ցույց է տալիս հաջորդ նախադասության կամ նախադասությունների մեջ արտահայտված առարկա, երևույթ և այլն, հետևապես և կապ է ստեղծվում տվյալ ու հաջորդ նախադասությունների միջև:

Մի ընկեր ինձ պատմեց հեպրևյալ իրադեպը: Մի օր, Երևանի բանտում մեր խուցը բերին մի շղթայակապ հանցավորի (Իս):

ԱՆՎԱՆՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐ

Կապակցական դեր կատարող բառերի երկրորդ խումբն ունի անվանողական արժեք: Այդպիսի խոսքի մասեր են գոյականը, ածականը, թվականը, մակբայը, բայը, վերջինիս հատկապես դերբայական ձևերը: Հայտնի է, որ այս խոսքի մասերից անուն են համարվում գոյականը, ածականը, թվականը: Առանց անուն հասկացության վերանայման՝ մենք նշված խմբի մեջ ենք մտցնում նաև մակբայը և բայը՝ հաշվի առնելով, որ, ըստ էության, մակբայն անվանողական դեր է կատարում հատկանիշի (հմմտ. արագ քայլել, շուտ արթնանալ), ինչպես և բայը՝ գործողության համար (հմմտ. քայլել, երգել, պատասխանել, որոնք արտահայտում են որոշակի հատկանիշներ):

Կապակցման դեր կատարող գոյականով հաճախ մասնավորվում է նախապես ասված առավել ընդհանուր հասկացությունը:

Երկու օր ու գիշեր ճանապարհ էին գնում սարերով ու ձորերով: Յերեկները անծանոթը նրան թողնում էր անտառում թփուտների մեջ արածելու, իսկ գիշերը քշում էր ինչ-որ վատ,

անծանոթ ճանապարհներով (ՍԶ): ...**Ծեր ամուսինները** փակվում էին իրենց սենյակում: **Պառավը** նստում և բրդե գուլպա էր գործում, իսկ **ծերունին** շուտ-շուտ փայտ էր ավելացնում վառարանի կրակին (ՍԶ):

Գոյականները հաճախ ամփոփ կերպով, ընդհանուր բնորոշումով անվանում, արտահայտում են այն, ինչ որ առավել մասնավոր ձևերով արտահայտված, նկարագրված է կից նախադասության կամ նախադասությունների մեջ:

Նախագահը խիստ սաստեց նրան.

- Ճիշտ չեք պահում ձեզ, ճիշտ չեք պահում:

- Ի՞նչ ես արթորանում, տո՛, - պատասխանեց Ծամերյանը երիտասարդին:

Վեճը խիստ սաստկացավ (ՀՔ):

Մյուս օրն արդեն այդ գյուղում բոլորն իմացան, որ Ափրոն ու Անթառամն այրի Նուբարին պիտի պսակեն Անթառամի եղբոր՝ արտամետցի Նահապետի հետ: Լուրը լսեց նաև արտամետցի խելագարված ծերունի Հակոբը, որը ապրում էր այդ գյուղում (ՀՔ):

Ինչպես երևում է, **վեճ** և **լուր** բառերով անվանվում, բնութագրվում է նախորդ նախադասություններում նկարագրվածը: Ահա այլ օրինակներ, որոնցում **նպատակ** և **խնդիր** բառերով բնորոշվում է նախորդ նախադասություններով արտահայտվածը:

«Մշակը» ամեն ձևով, երբեմն իբրև բաց թշնամի, երբեմն իբրև կեղծ բարեկամ գրեց և շարունակում է գրել ու հաղորդել գրական ֆոնդի դեմ: Եզրում է, որ դայրոցական-գրական մեծ տոնին գրական ֆոնդը ոչինչ ստանա: Ասում է՝ դա կխանգարի դայրոցական ֆոնդին: Իր վատ նպատակին հասնելու համար, գրական ֆոնդին վնասելու համար, նա՝ «Մշակը, դուրս հանեց և շարունակում է դուրս հանել իր «Շ»-երը (ՀԹ): Մեր գրողներից ոմանք դիմում են ինձ և խնդրում են պաշտպանել իրենց գրական սեփականության իրավունքն ու շահերը դասագրքեր, ժողովածուների կազմողների, հրատարակչական մարմինների ու պարբերական հրատարակությունների դեմ: Խնդիրը լուրջ է և հասունացած, ժամանակն է, որ վճովի մի ձևով (ՀԹ):

Հաճախ հասարակ անունով բնութագրվում են անձ, առարկա, որոնք նախապես անվանվել են հատուկ անունով, և հակառակը, հատուկ անունով անվանվում են նախապես հասարակ անունով բնութագրված անձ, առարկա:

Երբ Մինասն ամեն ինչ պատրաստեց, սայլը կապեց թոկերով, նայեց հանկարծ Թևոսի կողմը և զարմանքից մնաց կանգնած: Հարևանը, կարծես, բոլորովին չէր շտապում (ՍԶ): Ավարտեցի, Տիգրանուհի՛, ավարտեցի իմ պոեմը, իմ երգը...Զգո՛ւյշ քայլի, թերթերը չկոխկըրտես, զգո՛ւյշ, դստրիկս (ՀՔ):

Ածականների՝ նախադասություններ կապակցելու դերը տարբեր դրսևորումներ ունի: Գոյականաբար գործածվելիս նրանց այդ դերը մնանվում է բնութագրական արժեքով հանդես եկող գոյականների կապակցական դերին, այսինքն՝ ածականով բնութագրվում է մանրամասնորեն նկարագրված երևույթ, առարկա և այլն:

Հյուսված առասպելը ջրվեց: Հիմա նորը պիտի ծնվեր (ՀՔ): Օմար Օնրաշին ձգեց նծույզի սանձը, նրա գլուխը շուտ տվեց մեր կողմը: Միականու այլանդակ դեմքին հիմա սարսափ էր նստել (ՀՔ):

Ոչ գոյականաբար գործածությամբ կապակցական դեր կատարելիս ածականը մեծ մասամբ հանդես է գալիս գոյականի հետ միասին: Եվ ածականի ու գոյականի կապակցությամբ բնութագրվում է այլ նախադասության կամ նախադասությունների մեջ մանրամասն նկարագրված կամ այլ բառերով ներկայացված երևույթ, առար-

կա և այլն: Այս եղանակով կապ է ստեղծվում տվյալ (ածականի ու գոյականի կապակցություն ունեցող) նախադասության և կից նախադասությունների միջև:

Ճիվանյանի ստեղծագործական կյանքում բացառիկ դեր խաղաց Հ.Այվազովսկին, որի հետ նա հանդիպել էր Պոլսում: Հանճարեղ նկարչի ազդեցությամբ նա կերտում է ծովանկարների մի ամբողջ շարք (ՀՆԳՊ): Եվ նա մոտեցավ ոտքի կանգնած Առաքելին, աջ ձեռքի բռունցքը թափահարեց նրա դեմքի առաջ: Վիթխարահասակ դաշտապահը նայում էր այդ փոքրամարմին, մանր աչքերով մարդուն ու վախենում էր (ՀԲ):

Մի շարք ածականներ իրենց կապակցական դերով հարում են դերանուններին ու թվականներին, ուստի և քննվում են նրանց հետ միասին: Այդպիսիք են՝ **նման, հիշյալ, վերոհիշյալ, վերջին, միջին, ստորին, նախավերջին** և այլն: Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, այդ ածականների կապակցական նշված յուրահատկությունը բխում է նրանց իմաստից. **հմմտ. նման - այդպիսի** (այսպիսի), **վերջին, նախավերջին** (դասարան) - **տասներորդ, իններորդ** (դասարան), **ստորին** (դասարաններ) - **առաջին, երկրորդ, երրորդ** (դասարաններ): Հասկանալի է, որ մենք համեմատության համար բերել ենք առավել դիպուկ համապատասխանությունների օրինակներ. երբեմն դրանց նմանությունը հեռավոր է, բայց բոլոր դեպքերում էլ համապատասխանությունը կա:

Քանակական թվականների կապակցական դերը դրսևորվում է հետևյալ կերպ. անվանված կամ անվանվելիք առարկաների, անձանց քանակի նշումով կապ է ստեղծվում տվյալ և նախորդ կամ հաջորդ նախադասությունների միջև:

Երեքն էլ սկսեցին մտածել տարբեր բաների մասին: Արքան խորհում էր, թե երբ պետք է առիթ ներկայանա պարթևների վրա գրոհելու համար: Բագրատը երազում էր Բագրևանդի գեղեցիկ հովիտների մասին, իսկ Մերուժանը մտածում էր, թե ինչպես կընդունի Ծովիքը Արտանի գլխատվելն ու իր գահերեց նշանակվելը (ՀԽ):

Այստեղ գոյականաբար գործածված **երեքը** թվականով ընդհանուր ձևով նշվում են հիշատակված զրուցակիցները, և դրանով իսկ կապ է ստեղծվում համապատասխան նախադասությունների միջև: Ընդհանրացնող թվականը կարող է գործածվել համապատասխան մասնավորներից հետո:

Եվ տեսական, և՛ գեղարվեստական մտածողությունը ենթարկվում է իրականության ճանաչողության միևնույն ընդհանուր օրինաչափություններին՝ կենդանի հայեցողությունից զնալով դեպի ընդհանրացում: Երկուսն էլ ձգտում են տարբերել երևույթների գլխավոր գծերը երկրորդական, պատահական գծերից և հասնել իրականության էական կողմերի ճշմարտացի արտացոլման (դաս.):

Դասական թվականները հաճախ հանդես են գալիս նախադասությունների, խոսքի հատվածների կապակցման, իրենց համար բնորոշ դերով և կապում թվարկման հարաբերությամբ գործածված նախադասություններ:

Արիստոտելը իր աշխատությունը բաժանել է երեք մասի. առաջին մասում տրվում են այն սկզբունքները, որոնցից էլնելով ճարտասանը գտնում է կամ պարսավում, համոզում կամ հերքում: Երկրորդում խոսվում է ճարտասանի անձնական հատկությունների մասին, որոնցում նա կարող է հավատ ներշնչել և հասնել նպատակին: Երրորդը վերաբերում է այն միջոցներին, որոնցից օգտվում է ճարտասանը (դաս.):

Ինչպես երևում է, այս օրինակում դասական թվականները գործածված են գոյա-

կանաբար և թվարկման հետ միասին նաև ցույց են տալիս նախապես ասված նախադասության մեջ արտահայտված առարկան («երեք մաս»): Սակայն թվարկում արտահայտելիս դասական թվականը կարող է ցույց չտալ նախապես անվանված առարկան, ուրեմն և գործածվել սովորական կիրառությամբ ու գոյականաբար:

Կարելի՞ է արդյոք այդ և այդպիսի մի քանի ընդհանրությունների հիման վրա ցեղակից համարել հայերենն ու վրացերենը՝ իրար հետ և խոտիերենի հետ: Ո՛չ, չի կարելի: Չի կարելի նախ այն պատճառով, որ դրանք պարզապես փոխառություն են... խոտիերենից: Չի կարելի, երկրորդ, այն պատճառով, որ այդպիսի ընդհանրությունները հայերենի և վրացերենի հիմնական բառախմբի մի աննշան մասն են կազմում և, մանավանդ, չեն ընդգրկում քերականությունը... (դաս.):

Թվարկման նպատակով գործածվում են նաև քանակական թվականները, որոնք տվյալ դեպքում ձեռք են բերում դասականի արժեք: Ըստ որում այս կիրառության դեպքում նրանք սովորաբար գրվում են թվականներով:

Անտիկ աշխարհի ստուգաբանական փորձերը մի քանի կարևոր թերություններ ունեին. 1) հունարենի և ...լատիներենի լեզվական փաստերը առնվում էին այլ լեզուներից լիովին անկախ... 2) Ստուգաբանական զանազան փորձերի ժամանակ բացակայում էր պատմական մոտեցումը ... 3) Բառերի հնչյունական համապատասխանությունները որոնելիս հույները որևէ օրինաչափություն չէին հաստատում (դաս.):

Առանձին դեպքերում միևնույն ասույթի մեջ կապակցական դերով գործածվում են թե՛ քանակական և թե՛ դասական թվականներ:

Փողի հաշիվներից էլ փափուկ բա՞ն... Այդ մեկ: Երկրորդ՝ արտասահմանից ես ախր գիտություն էլ եմ բերել, քույրի՛կ ջան, ինչո՞ւ ես մոռանում (ՆԳ):

Այսպիսի կիրառությունները սակավադեպ են, ինչպես երևում է, գրական լեզվին հատուկ թվարկման սովորական կառուցվածքին չեն համապատասխանում և գրականի մեջ թափանցում են հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվից:

Մակբայները ևս հաճախ են հանդես գալիս կապակցական դերով: Այդ դեպքում մակբայները իրենց տարբեր տեսակների հատուկ իմաստներով (ժամանակային, տեղի և այլն) կապ են ստեղծում տվյալ և նախորդ նախադասությունների միջև: Այս դերով գործածվում են հատկապես այնպիսի մակբայներ, որոնք իրենց մեջ ունեն համեմատության իմաստ կամ իմաստային երանգ: Դա կարող է լինել ժամանակի, ձևի, չափի, աստիճանի և այլ առումներով:

Ծովանը, որ բոլորից ետ էր, երկու անգամ իր մեջքին զգաց փայտի հարվածներ: Հեղո մի հարված էլ իջավ կողքին (ՄԶ): Ներսից ձայն չսվեց: - Քեռի՛ Անտոն, քեռի՛ Անտոն, - ասաց նա... Ներսից ձայն չսվեց: Տիրացուն նորից կանչեց. - Քեռի՛ Անտոն, ա՛յ քեռի Անտոն, վե՛ր կաց, տերտերը կանչում է: Կրկին պատասխան չկար (ՄԶ): Տունը և նրա մեջ եղած իրերը առհասարակ մեծ անհանգստություն էին պատճառում ծերերին: Ավելի անհանգստացնում էր սյառավը (ՄԶ):

Բայերը կապակցական տեսակետից ունեն հետաքրքրական յուրահատկություններ: Առավել ակնհայտ է որոշ դերբայների կապակցական դերը հատկապես գոյականաբար գործածվելու դեպքում: Այս նպատակով առավելապես գործածվում են հարակատար, ենթակայական, անորոշ դերբայները:

Նրանցից մի քանիսը շտապում են, մյուսները ծանրաքայլ են: **Շտապողները** ետ մնացած քանվորներն են, **ծանրաքայլ անցնողները**՝ ծառայողների բանակի առաջապահները (ԱԲ):

Վարորդը շնորհակալ: Ասելիք չունի և իր **հեռու մնալն** արդարացնելու համար բացեց մեքենայի շարժիչի կափարիչը ու սկսեց ինչ-որ բան խառնել ու շտկել (ՍՀ):

- Հը՛,- և բազմաթիվ ձեռքեր հրեցին ֆուրգոնն ու անիվները: Կաս-կարմիր էին կտրել նրանց դեմքերը... - Նո՛ւ,- և ձիերը դուրս քաշեցին ֆուրգոնը: **Օգնողները** ետ փախան (Բակ.):

Բայի դիմավոր ձևերին բնորոշ չէ նախադասությունների կապակցական դերը: Մասնակի կիրառություններից հատկապես նշելի է գործողության ընդհանուր հասկացությունը առավել մասնավորներով արտահայտելու և հակառակ երևույթը, որով կապ է ստեղծվում համապատասխան նախադասությունների միջև:

Լեռնային կածաններով և դժվար արահետներով **գնում էին մարդկանց և ձիերի անընդմեջ շարքերը**: Նրանք **իջնում էին բարձր լեռներից, որոնց գոգերում, ինչպես լեռնային արծվի բները, ծվարել են քարակույի գյուղերը**: Նրանք **եյնում էին մթին ձորերից, ուր խավար խեղճություն կար** (Բակ.):

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐ

Վերաբերմունքային բառեր են վերաբերականները, եղանակավորիչները և ձայնարկությունները: Հիշենք, որ վերաբերականների ու ձայնարկությունների արտահայտած վերաբերմունքը կարող է վերաբերել՝ ա) տվյալ նախադասությամբ արտահայտվածին, բ) այլ նախադասությամբ կամ նախադասություններով արտահայտվածին: Երկրորդ դեպքում այդպիսի բառերը ձեռք են բերում նաև կապակցական դեր:

Վերաբերմունքային բառերի կապակցական դերի դրսևորման յուրահատկության տեսակետից կարելի է տարբերել նրանց գործածությունը՝ ա) երկխոսության մեջ և բ) սովորական պատմողական խոսքում:

Երկխոսության ժամանակ հաճախ խոսողը խոսակցի ասածի վերաբերյալ արտահայտում է իր վերաբերմունքը (համաձայնություն, անհամաձայնություն, երկբայություն և այլն) եղանակավորող բառով: Այս բառի բնագրային իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է դիմել նախորդ նախադասությանը կամ նախադասություններին: Միաժամանակ վերջիններիս մտքի հետագա ընթացքն ու զարգացումը պարզվում են հաջորդ նախադասություններում, ըստ որում հաճախ կարևոր դեր են կատարում վերաբերմունքային բառերը, որոնք կարող են ունենալ մեկ նախադասության արժեք:

- Արժանի է և իրավ, որ տեր Հազարապետը գնա...

- Այո՛, Հմայակ սեպուհը՝ եղբայրն սպարապետի, և Մերուժան սեպուհը՝ ազգակիցը Արծրունյաց տիրոջ, - ասաց Արշավիրը (ԴԴ):

- Պահե՛ք ձեզ մոտ, վաղը կտաք, - ասաց Սմբատը:

- Ո՛չ, վերցրե՛ք, ես չեմ կարող մոտ մի ժամ անգամ դրամ պահել (Շիրվ.):

- Դու աչք ունեի՞ր Մաթենիկի վրա, - հարցրեց պատավը:

- Հիմա էլ ունեմ:

- Ինքն է՞լ:

- Էդպես է երևում:

- Վա՛յ, աչքերս թափվեն...ես էլ ասում եմ՝ Մաթենիկս ինչու էր չեմ ու չում անում: Վա՛յ սա-
բաթի տունը կրակվի (ՍԽ):

Բացի վերաբերականներից ու ձայնարկություններից՝ նշված դերով ու վերաբեր-
մունքային իմաստով հատկապես երկխոսություններում գործածվում են նաև այլ
խոսքի մասերի պատկանող մի շարք բառեր, ինչպես՝ **ոչինչ, լավ, գեղեցիկ, բարի, ինչ**
և այլն:

Այս ծորը չե՞ս կարող անցնել: **Ոչինչ, ես քեզ կօգնեմ (ՍԽ): Մի որդեգրուիի ունեմ տանը,**
էս նրա ձեռքի գործն է: Լավ, որդեղեգրուիիդ լինի: Տար, տուր նրան, քող նա կարի (ՀԹ):
Մենք ևս անցավորաց ենք, սպարապետ: - Բարի, արհավիրքը կանցնի: Դուք կանցնեք, մենք
կանցնենք, ապա ի՞նչը կմնա: - Կմնա հայոց աշխարհը, սպարապետ (ԳԳ): - Չեմ գնա, -
ասաց Բաբիկը վճռական: - Ի՞նչ, պիտի հակառակե՞ս, - վախեցավ Փառանձեմը (ԳԳ):

Վերաբերականներն ու ձայնարկությունները կապակցական դերով հանդես են
գալիս նաև սովորական պատմողական խոսքի (ոչ երկխոսության) մեջ, ըստ որում
ձայնարկությունները և որոշ վերաբերականներ (**այո, իհարկե, անշուշտ, ոչ, չլինի**
թե, հապա (ապա), դե և այլն) համեմատաբար քիչ են գործածվում, քանի որ իր իսկ
պատմածի վերաբերմամբ համապատասխան վերաբերմունք արտահայտելու
անհրաժեշտությունը քիչ է զգացվում:

Իսկ վերաբերականների մեծ մասի և մի շարք ձայնարկությունների համար կա-
պակցական դերը խոսքի նշված տեսակի մեջ սովորական է:

Արամը բարկանում էր մոր վրա, որ լռի, ամբոխին առաջարկում էր, որ ցրվեն: Բայց ոչ
Սանսան էր լռում, ոչ ամբոխն էր ցրվում: **Ընդհակառակն, ավելի ու ավելի էին շարունակում**
մարդիկ, գալիս էին գյուղի ամենահեռու ծայրերից (ՀՔ): Ծովանը հասկացավ, որ նոր գյուղ
են մտնում, թե շների հաչոցն էր ուրիշ, թե ճամփան...Եվ իսկապես. նոր գյուղ էր (ՍԶ): Ու յոթ
տարի աշխատել էր մեր քաղաքի սուրբ Հակոբ եկեղեցու վրա, մինչև նրա ավարտի և առա-
ջին ժամերգության օրը: Է՛, այն ժամանակ այդպես էր, հիմի ուրիշ է, լուսավորություն կա,
գիտություն կա հիմի (ՀՔ): Հարգում էինք նրան, հայարտանում էինք նրանով, բայց չէինք սի-
րում: Նույնիսկ ակնածանքով էին նայում նրան, բայց սիրո զգացմունք չէինք տածում (ՀՔ):

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Նախադասությունների կապակցման բուն քերականական միջոցներն են շարա-
հարությունը և շարադասությունը:

ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Շարահարությունը կապակցման քերականական միջոց է, որի դեպքում չկան կա-
պակցող շաղկապներ, շաղկապական բառեր, այլ նախադասությունները պարզապես
գործածվում են կողք կողքի և իրար հետ կապվում են իմաստով, շարադասությամբ:

Շարահարության դեպքում սովորաբար հանդես են գալիս կապակցական այլ օ-

ժանդակ միջոցներ և՛ ստորոգյալի ժամանակը, գոյականներ, դերանուններ և այլ խոսքի մասերի պատկանող բառեր: Այնպես որ, շաղկապներ ու շաղկապական բառեր չգործածվելը մեծ մասամբ զուգակցվում է նշված այլ խոսքի մասերի ու լեզվական այլ միջոցների կապակցական առավել ակտիվ դերով:

Քամին շարունակում էր սրբել փողոցն ու փոշին պատերովը տալ, և Մարգոն ոչ թե քայլում էր, այլ գրեթե վազում էր հալածված մի ահավոր մտքից, որ ներշնչում են քաղաքածայրի ամալի փողոցներն իրենց մութ արկածներով: Նա գնում էր արագ, ու նրա սիրտը թվում էր՝ վեր է թռչում, քունքերը տրոփում են: Թվում էր լապտերները գլորվում են, ու տներն իրար են գալիս (ՄԶ):

Այս փոքրիկ հատվածի երեք նախադասությունների իմաստային կապն այն է, որ դրանք պատկերում են ուշ գիշերին քաղաքի ծայրամասով քայլող ուսուցչուհի Մարգոյի հոգեվիճակը: Իմաստային կապի արտահայտման հետ միասին այդ նախադասություններն ունեն կապի արտահայտման այլ միջոցներ և: Դրանցից նշելի է հատկապես **նա** դերանունը (երկրորդ նախադասությունում), որով ցույց է տրվում առաջին նախադասության մեջ անվանված Մարգոն և երրորդ նախադասության մեջ զեղչված, բայց մտքով հասկացվող **Մարգոյին** խնդիրը (**Մարգոյին** թվում էր...): Սրանց ավելանում է երեք նախադասությունների բայ-ստորոգյալների՝ միևնույն ժամանակով դրված լինելը, որը նույնպես քերականական կապի արտահայտության միջոց է:

Շարահարությունը նախադասությունների կապակցության մեջ լայն ոլորտ ունեցող միջոցներից է:

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Շարահարությունը նախադասությունների կապակցման ամենակարևոր միջոցներից է. այն ունի իր քերականական դերի դրսևորման շատ ավելի լայն ոլորտ, քան մի քանի այլ միջոցներ:

Նախադասությունների շարահարությամբ հաճախ պայմանավորվում են նրանց ժամանակային, պատճառահետևանքային, մասնավորման, ընդհանրացման և այլ հարաբերություններ: Բերենք մեկ օրինակ Հր. Քոչարի «Եփրատի կամուրջին» պատմվածքից:

«Պայթում է Օմար Օնբաշու հրացանը: Վահանիկն անշարժանում է: Սալբի նանեն ծղրտում է վիրավոր թռչունի պես»:

Այս երեք նախադասությունների տվյալ շարահարությամբ որոշվում է նրանցում արտահայտված գործողությունների հաջորդականությունը և պատճառահետևանքային որոշակի հարաբերությունը: Վերոհիշյալ օրինակում պատկերված իրավիճակը չէր կարելի արտահայտել նախադասությունների այլ շարահարությամբ և առանց լրացուցիչ կապակցական միջոցների: Շարահարության փոփոխությունը կըստեղծեր այլ իրավիճակի նկարագրություն:

Հմնտ. ա) Սալբի նանեն ծղրտում է վիրավոր թռչունի պես: Վահանիկն անշարժանում է: Պայթում է Օմար Օնբաշու հրացանը: բ) Վահանիկն անշարժանում է: Սալբի նանեն ծղրտում է վիրավոր թռչունի պես: Պայթում է Օմար Օնբաշու հրացանը:

Շարադասության կարևոր դերը նախադասությունների հարաբերությունների արտահայտման գործում որոշակիորեն կարելի է տեսնել նաև Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխի» հետևյալ հատվածում:

«Քառասուն տարեկան հասակում գյուղում հողաբաժին եղավ: Հարուստներն իրենց մեջ բաժանեցին բերրի հողերը և ստեղծեցին հողերը տվին թույլերին, խեղճերին: Օհանը գայրացավ: Վառեց ու բորբոքեց հողագործների արդար վրեժը: Գյուղի զրկված մասը ըմբոստացավ: Հարձակվեցին, ծեծեցին ոեսին ու մի քանի հարուստներին: Գանգատը հասավ քաղաք: Եկավ կաշառված պրիստավը մի քանի յասավույներով, հավաքեց ըմբոստներին...ու քաշեց նրանց մտրակի տակ: Այլուներ կոխեց Օհանի գլուխը: Ձեռքը ձգեց պատահած քարին և նետեց պրիստավի կրծքին»:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՈՑ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ԶԵՂՉՈՒՄ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄ

Նախադասությունների կապակցման շարահյուսական-ոճական միջոցն է կապակցվող նախադասությունների անդամների զեղչումը, որի հետևանքով տարբեր նախադասություններում հանդես են գալիս ընդհանուր անդամներ: Այսպիսով՝ մեկ նախադասության մեջ գործածված անդամը դառնում է իմաստային տեսակետից ընդհանուր նաև այլ նախադասության կամ նախադասությունների համար: Այս երևույթն էլ հանդես է գալիս որպես կապի միջոց:

Եկեք ստուգենք, ընկերներ: Ո՞վ է ուզում Ստեփան Շահումյանի նկուղներն ստուգել (ԱՀ): Այստեղ **ստուգենք** ներգործական բայը առաջին նախադասության մեջ չունի ուղիղ խնդիր, որի կարիքը, սակայն, զգացվում է՝ **ի՞նչը ստուգել:** Այդ նախադասության ուղիղ խնդիրը պարզվում է հաջորդ նախադասությունից, ուր այն գործածված է (**նկուղները**) նույն **ստուգել** խնդրառու բայի հետ: Այսպիսով՝ երկրորդ նախադասության մեջ գործածված **նկուղները** ուղիղ խնդիրը դառնում է մի տեսակ ընդհանուր անդամ երկու նախադասությունների համար, որոնցում այն վերաբերում է միևնույն բայով արտահայտված անդամին:

Միևնույն ընդհանուր անդամը կարող է վերաբերել երկուսից ավելի նախադասությունների, երբեմն նույնիսկ տարբեր բառերի:

- *Կարդացել եմ Պյոտարբոսը, Կասիոս Դիոնը, ապա հունական Քսենեֆոնը, Հոմերոսը:*
- *Կրկնո՞ւմ էիր, թե մի անգամ կարդալով, շարտում մի կողմ:*
- *Կարդում եմ շարունակ, հա՛յր, միամիտ կաց (ԳԳ):*

Այս օրինակը կազմված է երեք նախադասություններից, որոնցից վերջին երկուսում ներգործական սեռի բայերը տվյալ նախադասություններում չունեն ուղիղ խնդիր: Այս բայերի ու բայաձևերի (**կրկնում էիր, կարդալով, շարտում էիր, կարդում եմ**) ուղիղ խնդիրը արտահայտված է միայն առաջին նախադասության մեջ՝ **կարդացել եմ** բայի հետ կապված: Ուշագրավն այստեղ այն է, որ առաջին նախադասության մեջ **կարդացել եմ** ձևի ուղիղ խնդիրը իմաստով վերաբերում է հաջորդ նախադասու-

թյան ոչ միայն **կարդալով, կարդում են** բայաձևերին, այլև **կրկնում էիր, շարտում (էիր)** բայերին: Սրանից որոշ չափով երևում է նախադասություններում ընդհանուր անդամի գործածության լայն հնարավորությունը, մի երևույթ, որի շնորհիվ կապ է ստեղծվում տարբեր նախադասությունների միջև:

Տարբեր նախադասությունների համար ընդհանուր անդամներն իրենց պաշտոնով ու բնույթով շատ բազմազան են. դրանք կարող են լինել ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, խնդիրներ, պարագաներ: Ահա տարբեր նախադասություններում ընդհանուր ենթակայի օրինակ, մի երևույթ, որ հետևանք է ենթակայի գեղչման:

Արշակը մի թերթ գնեց, ծովեց, մտավ մի նեղ փողոց:

... *Ներս մտավ մի փոքր սրճարան: Նստեց մեկուսի, անկյունում, պատվիրեց մի բաժակ տաք կաթ և հացիկ: Բացեց թերթը, չկարողացավ կարդալ (Իս.):*

Այս օրինակի չորս նախադասություններից վերջին երեքը իրենց կազմում չունեն քերականորեն արտահայտված ենթակա, և դրա կարիքը չի էլ զգացվում, քանի որ դրանցում արտահայտված գործողությունները կատարողն արտահայտված է նույն առաջին նախադասության ենթակայով (**Արշակը**), որը և որպես այդպիսին է հասկացվում հաջորդ նախադասությունների համար:

Բերենք տարբեր նախադասությունների համար ընդհանուր որոշիչ ու հատկացուցիչ օրինակներ:

«Վերցնենք Հ. Թումանյանի «Հայոց լեռներում» բանաստեղծությունը... Բանաստեղծության բովանդակությունը մեր ժողովրդի պայքարով ու տառապանքով լեցուն պատմության գեղարվեստական ընդհանրացումն է... Բանաստեղծության այսպիսի բնույթն ու նպատակադրումը պայմանավորել են նրա պատկերների ամբողջ համակարգը» (Գաս.):

Ընդգծված բառի որոշիչը տվյալ նախադասություններում գործածված չէ. այն գործածված է առաջին նախադասության մեջ, այն է՝ «Հայոց լեռներում», և հասկացվում է նաև հաջորդ նախադասություններում:

«Մասիս» թերթի խմբագիր Կ.Ութունյանին հետաքրքրում էր երգիծաբանի ստորագրությունը, նա հույս ուներ այդ ստորագրության շնորհիվ ապահովել նոր բաժանորդներ: Մակայն Պարոնյանի համարձակ մերկացումները չէին կարող չանհանգստացնել զգույշ խմբագրին (ՀՆՓՊ):

Այս օրինակի երկրորդ նախադասության մեջ **խմբագրին** բառը իր մոտ չունի համապատասխան լրացում, որով պարզվեք, թե ո՞ր կամ ինչի՞ խմբագրի մասին է խոսքը: Դա պարզվում է առաջին նախադասությունից, որում նույն **խմբագիր** բառն ունի որոշակի լրացում՝ «**Մասիս**» **թերթի**, որը վերաբերում է նաև երկրորդ նախադասության նույն անդամին (**խմբագրին**):

Ուշագրավ իրողություն է այն, թե որքան մեծ է բառական միջոցների կապակցման դերը նախադասությունների կապակցության մեջ: Եվ, բնականաբար, սա հնարավոր է վերհանել հարաբերությունների դրսևորման դերի, իմաստային տարբեր դրսևորումների հարցում նախադասությունների կապակցության ընձեռած լայն հնարավորությունների ուսումնասիրության շնորհիվ:

Առանձին նախադասության ոլորտում բառերի իմաստային, քերականական հնարավորությունները, բնականաբար, չեն կարող լիարժեք, ամբողջությամբ դրսևորվել:

Լեզվի բնական, կենդանի վիճակը բանավոր խոսքն է: Գրավոր խոսքը բանավորի գրային պատկերն է: Բանավոր խոսքի արտասանական, հնչական հատկանիշները, դադարները նպաստում են մտքի ճիշտ հաղորդմանը, խոսողի տարբեր վերաբերմունքների, հույզերի լիարժեք դրսևորմանը: Գրավոր խոսքում այդ նույն նպատակին են ծառայում կետադրության նշանները: Ճիշտ կետադրությունը էապես նպաստում է գրավոր խոսքի լիարժեք համապատասխանությանը բանավորին: Այնպես որ կետադրության նշանների կիրառություններին, նրանց նրբություններին տիրապետելը գրագիտության բարձրացման կարևոր պայմաններից մեկն է: Կետադրական նշանների դերի մասին որոշ պատկերացում կարող է տալ, օրինակ, հետևյալ նախադասությունների համեմատությունը:

Դու հիմա գնում ես:

Դու հիմա գնո՞ւմ ես:

Դու հիմա գնո՞ւմ ես:

Դու հիմա գնո՞ւմ ես:

Միևնույն բառական կազմն ունեցող այս նախադասությունները կատարում են տարբեր հաղորդակցային դեր և կարող են գործածվել տարբեր նպատակներով: Առաջին նախադասությունն արտահայտում է հաստատում, երկրորդը՝ հարցում, երրորդը՝ կարգադրություն (հորդոր), վերջինը՝ հաստատական վերաբերմունքի հետ միասին նաև շեշտված հուզականություն: Այդ նշանակությունները դրսևորվում են տարբեր հնչերանգների շնորհիվ, որոնք գրավոր խոսքում արտահայտվում են համապատասխան նշաններով:

Առանձին դեպքերում խոսքի գրավոր տարբերակը նույնիսկ ունենում է մտքի ձևավորման առավելություն՝ բանավորի համեմատությամբ:

Կարդանք հետևյալ երկու նախադասությունները, որոնք արտահայտված են միևնույն բառերով ու քերականական ձևերով:

Հայաստանի Հանրապետությունը կհաղթահարի դժվարությունները:

«Հայաստանի Հանրապետությունը» կհաղթահարի դժվարությունները:

Բանավոր խոսքում սրանք կընկալվեն որպես միևնույն նախադասություն: Մինչդեռ գրավոր խոսքում դրանք տարբեր նախադասություններ են, արտահայտում են տարբեր մտքեր: Եվ դա հասկացվում է երկրորդ նախադասության մեջ գործածված չափերտներից, որոնք ընթերցողին հուշում են, որ խոսքը վերաբերում է այդ անունը կրող օրաթերթին: Տվյալ իմաստի ճիշտ ձևավորման համար նաև հատուկ կարևորություն է ստանում կետադրական նշանի գործածման տեղի ճշտությունը: Դիտարկենք հետևյալ երկտողը.

***Հայն իր ոսկեփառ գրերի պես է,
Մի՛ այրեք նրան, մեկ է, լույս կգա...
(Վ. Ներսիսյան)***

Շեշտը «այրե՛ք» բայաձևի վրա դնելու դեպքում բոլորովին կփոխվի նախադասության միտքը, քանի որ արգելական հրամայականը (մի՛ այրեք) կդառնա հաստատական հրամայական (այրե՛ք):

Կետադրական նշանները սովորաբար բաժանվում են երեք խմբի՝ **տրոհության, բացահայտության և առոգանության**: Այս նշանների միջև հստակ սահմանագիծ չկա: Դա վերաբերում է հատկապես տրոհության և բացահայտության նշաններին, որոնց էության, յուրահատկությունների բնութագրման հարցը հատուկ բացատրության կարիք է զգում:

Տրոհության նշանների նշանակյալները քերականական դեր ունեցող դադարներ են, ավելի ճիշտ՝ տրոհումներ (ինքնուրույն նախադասությունների, բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների, նախադասության անդամների, բառերի միջև): Ուրեմն կետադրության նշանների այս տեսակի «տրոհության» անվանումով նկատի է առնվում այնպիսի տրոհումը, որն ունի քերականական նշանակություն:

Բացահայտության նշաններն իրենց բնույթով ու դերով էապես տարբերվում են առոգանության ու տրոհության նշաններից նրանով, որ ի տարբերություն սրանց՝ բացահայտության նշանները բնորոշվում են ոչ թե արտասանական նշանակյալի նշումով, այլ ուղղակի իմաստային, ճանաչողական դերով: Դրանք նպաստում են լեզվական տարբեր միավորների, նրանց բաղադրիչների իմաստային, ճանաչողական տարբեր հատկանիշներ պարզելուն, բացահայտելուն:

Այսպես, եթե խոսքի որևէ հատված, նախադասություն, արտահայտություն չակերտների մեջ է առնվում, հասկացվում է, որ դրանք մեջբերված են ուրիշի կամ սեփական խոսքից: Եթե հատկանիշ արտահայտող բառը չակերտների մեջ է առնվում, այն կարող է հասկացվել հակառակ կամ հեզմական իմաստով:

Շա՛ր «համեստ» է. որքան շար ես գովում, այնքան իրեն երջանիկ է զգում:

Տրոհության ու բացահայտության նշանները բնութագրվում են՝ հիմք ընդունելով նրանց առաջնային հատկանիշները և առավել բնորոշ ու տարածված կիրառությունները: Կետադրության նշանների այդ երկու տեսակներն ունեն շփման եզրեր, դրանց միջև անանցանելի սահման չկա:

Օրինակ՝ միջակետը հայտնի է որպես տրոհության նշան, և նրա հիմնական կիրառությունները, իրոք, տրոհական են: Բայց բառերի կրճատ գրության դեպքում նրա գործածությունը (օրինակ՝ **պրոֆ. Մ. Աբեղյան**) բացահայտման արժեք ունի, որ նրա համար երկրորդական է:

Կետադրությունը կանոնարկելիս և կանոնները կիրառելիս պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք: Եթե բառերի ուղղագրությունը բառին վերաբերող ինքնամփոփ բնագավառ է, ապա կետադրությունը շատ լայն ընդգրկում ունի և թափանցում է խոսքի ոլորտը: Իսկ խոսքը իր առարկայական ու վերաբերմունքային առումներով շատ բազմազան է ու բազմաբնույթ: Նրա կառուցման առարկայական օրինաչափությունները հաճախ խաչաձևվում են խոսողի վերաբերմունքի գործոնի հետ: Այս հանգամանքը զգալի չափով դժվարացնում է կետադրության կանոնարկումն ու կանոնների կիրառումը:

Դիտարկենք հետևյալ կապակցությունը:

Տոթը խեղդում էր նրանց կիսամերկ մարմինները: Խոշոր կայծերը անձրևի նման հեղեղվում էին նրանց գլխին: Խորասուզված իրենց գործի մեջ՝ նրանք կարծես ոչինչ չէին զգում:

Այս ինքնուրույն նախադասությունները ներկայացնում են մեկ ամբողջական նկարագրություն, և նրանց մտքի սերտությունը թույլ է տալիս այս կապակցության ինքնուրույն նախադասությունները միացնել իրար՝ դարձնելով մեկ բարդ նախադասության բաղադրիչներ.

Տոթը խեղդում էր նրանց կիսամերկ մարմինները, խոշոր կայծերը անձրևի նման հեղեղվում էին նրանց գլխին, խորասուզված իրենց գործի մեջ՝ նրանք կարծես ոչինչ չէին զգում:

Նաև կարելի է այդ բաղադրիչ նախադասությունները կապակցել որպես կիսանկախ միավորներ, որոնք իրարից բաժանվում են զգալի դադարով.

Տոթը խեղդում էր նրանց կիսամերկ մարմինները. խոշոր կայծերը անձրևի նման հեղեղվում էին նրանց գլխին. խորասուզված իրենց գործի մեջ՝ նրանք կարծես ոչինչ չէին զգում:

Միևնույն բաղադրիչ նախադասությունների ինքնուրույնության տարբեր աստիճանները, դրանցով պայմանավորված՝ արտասանության տարբեր յուրահատկությունները, հատկապես տարբեր չափի դադարները, ինչպես տեսնում ենք, գրավոր խոսքում կարող են նշվել տրոհության տարբեր նշաններով՝ վերջակետով, ստորակետով, միջակետով: Այս ճիշտ տարբերակների ընտրության հարցում դեր է կատարում այն հանգամանքը, որ շարահյուսական միավորի ինքնուրույնության աստիճանը ոճական որոշակի արժեք ունի. լեզվական միավորի ինքնուրույնացումը միտքը շեշտելու միջոց է:

Այսպիսով՝ բառական միևնույն կազմն ունեցող նախադասությունները տարբեր նշաններով տրոհելու հնարավորությունը ցույց է տալիս, որ գրավոր խոսքում տրոհության ամեն մի նշանի կիրառություն բանավոր խոսքում ունի քերականական, ոճական պատճառաբանվածություն, և ցանկալի է, որ բանավոր խոսքի իմաստային ու ոճական նրբությունները առավելագույնս հաշվի առնվեն գրավոր խոսքում:

ՏՐՈՒՄԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Տրոհության նշաններն են վերջակետը (:), միջակետը (.), ստորակետը (,), բութը (), փակագծերը (()), որոնցով նշվում են խոսքի, նախադասության մեջ քերականական արժեք ունեցող տրոհումները, դադարները:

1. ՎԵՐՋԱԿԵՏ

Ա. Վերջակետ դրվում է ինքնուրույն նախադասության վերջում՝ արտահայտելով համեմատաբար մեծ դադար նախադասությունների միջև:

Բացվում էր օրը: Գլուղն արթնացել էր արևից առաջ:

Նոր թխած հացի բուրմունք էր գալիս:

Պարզորոշ լսվեց հորթուկին կանչող մի կովի բառաչ:

Մի բահ զրնգաց՝ զարնվելով քարին:

(Պ. Սևակ)

Վերջակետի այս կիրառությունը վերաբերում է նաև թվարկում արտահայտող ինքնուրույն նախադասությունների այն կապակցությանը, որի նախադասություն-

ներից առաջինն արտահայտում է ընդհանրական միտք, իսկ մյուսները նրա մասնավոր դրսևորումներն են:

Չմեռնուկն ունի մի քանի բնորոշ հատկանիշներ:

1. *Ծառին հատուկ է ուժեղ աճ, այն ունի ոչ խիտ սաղարթ:*
2. *Պտուղները մանր են կամ միջին մեծության, կլորավուն:*
3. *Պտղամաշկը հարթ է, պինդ, բաց կանաչ գույնի:*
4. *Պտղամիսը սպիտակ է, հյութալի, կոշտ: (Ճեռնարկ)*

Եթե այսպիսի կապակցությունների բաղադրիչ նախադասությունները պակաս ինքնուրույն են և իրար հետ առավել սերտ կապի մեջ են, դրանք կարելի է տրոհել միջակետով (տե՛ս միջակետի գործածության **Բ** կետը):

Ծանոթություն 1: Եթե մեջբերվող ուղղակի խոսքի երկու ինքնուրույն նախադասությունների միջև կա հեղինակային խոսք, վերջինիս նախորդող նախադասության ավարտը նշող վերջակետը դրվում է հեղինակային խոսքից հետո՝ անջատման գծից առաջ:

– Արևը քիչ-քիչ անցնում է հորիզոնից այն կողմ, – ասաց ընկերս: – Ընտով մութը կտարածվի սարերի վրա:

Ծանոթություն 2: Վերջակետ չի դրվում այն նախադասություններից հետո, որոնք չեն կապակցվում խոսքի հետ, գործածվում են անկախ, որպես վերնագիր, պարբերականի, ստեղծագործության անվանում, կոչ կամ ունեն տեղեկատու իմաստ:

ա) Հավատում եմ քեզ

*Հավատում եմ քեզ, իմ հա՛յ ժողովուրդ,
Քեզ, որ լեռներում՝ այս բարձրիկ ու լուրթ,
Ապրել ես դարեր, դարեր մարտել
Եվ քո կրակը միշտ վառ ես պահել...
(Վ. Գալթյան)*

բ) «Եթերում է Երևանը»

գ) Նկարում՝ դիմավորում են Արցախի ազատամարտիկներին

դ) Հաստատված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից

ե) Հրատարակվում է 1932 թ. փետրվարի 25-ից

Ծանոթություն 3: Վերջակետ չի դրվում նախադասության վերջում գործածված կախման կետերից հետո, որոնք կատարում են նաև վերջակետի դեր:

Ի՞նչ իմանաս, ի՞նչ կար այդ պահին նրա հոգում՝ չտեսած հայրենիքի կարո՞տ, քե՞՞ էլի ուրիշ անընթացների կարոտներ, տենչե՛ր, մարած ու մարվելիք երազնե՛ր... ի՞նչ իմանաս...

(Ս. Կապույտիկյան)

Բ. Վերջակետ դրվում է տողակգբում գործածվող վերնագրից, ծանոթություն, վարժություն, խնդիր, առաջադրանք և նման բառերից կամ նրանց թվահամարից հետո:

ա) Կատակերգություն: *Կատակերգությունը գրականության բուն երգիծական ժանրերից ամենախոշորն է:*

(դասագիրք)

բ) Ծանոթություն: *Գալ, փալ, լալ բայերն ում վերջավորությամբ անկատար դերբայ չունեն: Դրանց անկատարի փոխարեն գործածվում են գալիս, փալիս, լալիս ձևերը:*

(դասագիրք)

զ) Առաջադրանք: *Վերհիշել բայի և նրա անդեմ ու դիմավոր ձևերի սահմանումները:*
(դասագիրք)

դ) Վարժություն 3: *Տրված գոյականներով ու ածականներով կազմել բառակապակցություններ՝ յուրաքանչյուր գոյականի հետ գործածելով համապատասխան ածական:*
(դասագիրք)

Գ. Վերջակետ դրվում է մատենագիտական ցանկում, տողատակում մատենագիտական ամեն մի ինքնուրույն հղումից հետո:

Գրականություն

Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906: Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:

Դ. Վերջակետ դրվում է ուսումնական և այլ հարցեր, թեմաներ ներկայացնող բառերի, բառակապակցությունների միջև, որոնք հաջորդում են իրար:

ա) Էլեկտրական դաշտ: *Էլեկտրական դաշտի լարվածությունը: Կետային լիցքի դաշտի լարվածությունը: Լարվածության գծեր:*

(Ֆիզիկայի դպրոցական ծրագրից)

բ) Բնական թվեր: *Պարզ և բաղադրյալ թվեր: Բաժանարար, բազմապատիկ: Ընդհանուր բաժանարարներ: Ընդհանուր ամենափոքր բազմապատիկ:*

(մաթեմատիկայի դպրոցական ծրագրից)

2. ՄԻՋԱԿԵՏ

Ա. Միջակետ դրվում է բարդ համադասական նախադասության այնպիսի համադաս նախադասությունների միջև, որոնք կապված են առանց շաղկապի, ունեն գգալի ինքնուրույնություն և արտասանվում են գգալի դադարով:

Դադարեց անձրևը, լուսինը վար նայեց սպիտակ լեռների կապույտ ձորերից, անտառապահի աղջիկը բորբոքեց կրակը (ԳՄ):

Ծանոթություն: Այսպիսի դեպքում որոշ դեր կատարում է կառույցի ընկալումը: Բաղադրիչ նախադասությունների առավել նվազ ինքնուրույնության, ուրե՛մն առավել փոքր դադարով տրոհվելու դեպքում դրանց միջև դրվում է ստորակետ, իսկ առավել մեծ ինքնուրույնության, ուրե՛մն մեծ դադարով տրոհվելու դեպքում՝ վերջակետ:

Դադարեց անձրևը, լուսինը վար նայեց սպիտակ լեռների կապույտ ձորերից, անտառապահի աղջիկը բորբոքեց կրակը:

Դադարեց անձրևը: Լուսինը վար նայեց սպիտակ լեռների կապույտ ձորերից: Անտառապահի աղջիկը բորբոքեց կրակը:

Բ. Միջակետ դրվում է թվարկում արտահայտող այն նախադասությունների միջև, որոնցից առաջինն արտահայտում է առարկան, երևույթն ընդհանուր կերպով, իսկ մյուսները նրա մասնավոր հատկանիշներն են, դրսևորումները: Այս դեպքում բաղադրիչ նախադասություններն ավելի պակաս ինքնուրույն են, դրանց միջև դադարն ավելի փոքր է, քան վերջակետով տրոհման դեպքում (տե՛ս վերջակետի գործածության Ա կետը):

Չմեռնուկն ունի հետևյալ հատկանիշները.

1. Ժառին հատուկ է ուժեղ աճ.

2. պտուղները մանր են կամ միջին մեծության.

3. պտղամաշկը հարթ է, պինդ.

4. պտղամիսը սպիտակ է:

Թվարկումը կարող է և շարունակվել նույն տողում, ինչպես՝

Չմեռնուկն ունի հետևյալ հատկանիշները. ա) ծառին հատուկ է ուժեղ աճ. բ) պտուղները մանր են կամ միջին մեծության. գ) պտղամաշկը հարթ է, պինդ. դ) պտղամիսը սպիտակ է:

Գ. Միջակետ դրվում է առանց շաղկապի կամ շաղկապական բառի կապակցված այն նախադասությունների միջև, որոնցից մեկը մյուսի բացատրությունը, մեկնաբանությունն է կամ նշանակում է հետևանք, եզրակացություն:

Հզոր է Ակսելի մեջ բնապաշտական զգացողությունը. նա ապրում է, զգում է հողը, տարերքը, եղբայրական մի բարությանը համակված է դեպի բույսերը, թռչունները, կենդանիները:

(Ավ. Իսահակյան)

Ակսելն ապրում է, զգում է հողը, տարերքը. հզոր է նրա մեջ բնապաշտական զգացողությունը:

Մենք ուշանում ենք. պետք է շտապել:

Այս կամուրջը հմուտ վարպետներ են կառուցել. կարող ենք վստահ լինել, որ այն անվտանգ կծառայի սերունդներին:

Դ. Միջակետ դրվում է բարդ համադասական նախադասության այնպիսի համադաս նախադասությունների միջև, որոնցից առաջինը ընդհանուր դատողություն, նկարագրություն է պարունակում, իսկ հաջորդը կամ հաջորդները՝ դրա մասնավորումը կամ մասնավորումները:

Տարվա ամեն մի եղանակ իր յուրահատուկ ներկայանակն ունի. անտառն աշնանը դեղնակարմիր է դառնում:

Մանկահասակ երեխաները փորձում էին որևէ գործ անել. աղջիկը բակն ու տունն էր ավյում, տղան ջրում էր այգին:

Ծանոթություն: Եթե մեջբերվող ուղղակի խոսքը համապատասխանում է Ա, Բ, Գ կետերում նշված դեպքերին, և ուղղակի խոսքի համադաս նախադասությունների միջև կա հեղինակային խոսք, այդ նախադասությունները տրոհող միջակետը դրվում է հեղինակային խոսքից հետո՝ անջատման գծից առաջ:

– Լուսինը վար նայեց սպիտակ լեռների կապույտ ձորերից,– պատմում էր երիտասարդը.– անտառապահի աղջիկը բորբոքեց կրարկը:

«Հզոր է Ակսելի մեջ բնապաշտական զգացողությունը,– գրում է Ավետիք Իսահակյանը.– նա ապրում է, զգում է հողը, տարերքը, եղբայրական մի բարությանը համակված է դեպի բույսերը, թռչունները, կենդանիները»:

– Տարվա ամեն մի եղանակ իր յուրահատուկ ներկայանակն ունի,– ասաց պապը բոռնիկին.– անտառն աշնանը դեղնակարմիր է դառնում:

Ե. Միջակետ դրվում է մեջբերվող ուղղակի խոսք ունեցող նախադաս հեղինակային խոսքից հետո:

Ավետիք Իսահակյանը գրել է. «Երանի՜ նրանց, ովքեր սովորում են և սովորեցնում»:

Զ. Միջակետ դրվում է առավելապես վերնագրերում այն բառերի, բառակապակցությունների միջև, որոնցից մեկն արտահայտում է մյուսի վերաբերյալ կամ նրա կապակցությամբ մասնավորում (հաճախ որպես ենթավերնագիր), ընդհանրացում, լրացուցիչ միտք:

ա) «Հայաստանի Հանրապետություն. անկախացման առաջին քայլերը»

բ) «Հայոց լեզու. շարահյուսություն»

գ) «Երևան. բացվեց հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովը»

Է. Միջակետ դրվում է թվարկում նշող թվանշաններից, տառերից հետո:

Ժողովի օրակարգի հարցերն են՝

1. երկտարեցիների հետ տարվող աշխատանքը.
2. մարզական միջոցառումների նախապատրաստման ընթացքը:

Ժողովի օրակարգի հարցերն են՝

- ա. երկտարեցիների հետ տարվող աշխատանքը.
- բ. մարզական միջոցառումների նախապատրաստման ընթացքը:

Ծանոթություն: Եթե թվարկում արտահայտող թվանշաններից կամ տառերից հետո կա փակագիծ, ապա միջակետը չի դրվում:

Ժողովի օրակարգի հարցերն են՝

- 1) երկտարեցիների հետ տարվող աշխատանքը.
- 2) մարզական միջոցառումների նախապատրաստման ընթացքը:

Գերադրական աստիճանը կազմվում է՝

- ա) ածականի դրական աստիճանի ձևին ավելացնելով **ամենա** նախածանցը.
- բ) ածականի դրական աստիճանի ձևին ավելացնելով **ագույն** վերջածանցը:

Ը. Միջակետ դրվում է այն թվարկվող միավորների միջև, որոնք արտահայտված են ծավալուն բառակապակցություններով կամ ունեն ստորակետով նշված ներքին տրոհումներ:

Հոկտեմբերին հողատարածությունը մշակելիս կատարել հետևյալ աշխատանքները.

1. հողամասի հարթեցման ժամանակ վերին բերրի շերտը կույտավորել, հարթեցնել, սկսել դարավանդավորման աշխատանքները.
2. բերել համապատասխան քանակությամբ լիցքի հող, ցանկապատի համար անհրաժեշտ պարագաներ և տնկանյութ.
3. տեղաձևել նախապատրաստված հողատարածքը, ձեռնամուխ լինել ծառատընկման աշխատանքներին: (**չեռնարկ**)

Ծանոթություն: Կապակցված խոսքից դուրս՝ նոր տողից կատարվող սուկական թվարկումների դեպքում տրոհության նշան չի դրվում:

Հայաստանի ստեղծագործական միությունները

1. Հայաստանի գրողների միություն
2. Հայաստանի նկարիչների միություն
3. Հայաստանի ճարտարապետների միություն
4. Հայաստանի լրագրողների միություն

Պարզ բառեր

հող ջուր
մարդ քար

Բարդ բառեր

դասագիրք հացթուխ
օդաչու բառապաշար

Թ. Միջակետ դրվում է անվանում, կոչ, հարցադրում արտահայտող բառերից, բառերի կապակցություններից, ինչպես և նախադասություններից հետո, որոնց հաջորդում է դրանց

հետ ուղղակիորեն կապված, դրանց անմիջականորեն վերաբերող կարծիք, գնահատություն, եզրակացություն:

ա) Միասնություն. ահա այն նշանաբանը, որով մենք պետք է ղեկավարվենք:

բ) Թումանյան, Իսահակյան, Տերյան, Վարուժան, Մեծարենց. սրանք են իմ սիրած դասական բանաստեղծները:

գ) Միշտ նայել առաջ. սա բոլորիս պարտականությունն է:

դ) Ո՞րն է ելքը. սա է մեր մտահոգությունը:

Ժ. Միջակետ դրվում է կանոններից, սահմանումներից հետո, երբ դրանց անմիջապես հաջորդում է օրինակը՝ առանց օրինակ, ինչպես, այսպես և նման բառերի:

Տեղի պարագան կարող է արտահայտվել տրական, բացառական, գործիական, ներգոյական հայտվներով.

Դրքերը դասավորված են գրասեղանին: Նրանք վերադարձան Արցախից: Ավտոմեքենաները սլանում են մայրաղով: Դրսում օղբ սառն է:

ԺԱ. Միջակետ դրվում է բառերի կրճատ գրված մասից հետո:

Պրոֆ. Մ. Աբեղյանը մեծ գրականագետ ու մեծ լեզվաբան է:

Երևանի Խ. Աբովյանի անվան հմ. 2 դպրոց

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 4:

Ծանոթություն 1: Չափի միավորների անունների կրճատ ձևերը գրվում են առանց կետի, ինչպես՝ մ (մետր), կմ (կիլոմետր), դմ (դեցիմետր), սմ (սանտիմետր), գ (գրամ), կգ (կիլոգրամ), ց (ցենտներ), տ (տոննա), լ (լիտր), ը (րոպե), Ժ (Ժամ) և այլն:

Չափի միավորների կրճատ ձևերը գործածվում են թվանշանների հետ, իսկ բառերի հետ գործածվելիս դրանք չեն կրճատվում.

Ավտոմեքենան 4 ժ-ում անցավ 240 կմ: Զանի՞ կիլոմետր կանցնի նա 7 ժ-ում, եթե արագությունը մեծանա 5 կմժ-ով: (դասագիրք)

Ժամ բառը ժամանակի (ոչ ժամանակային չափի) իմաստով գործածվելիս կարող է կրճատվել, և այդ դեպքում կրճատման տեղում դրվում է միջակետ.

Հավաքը տեղի կունենա Ժ. 9- ին:

Ծանոթություն 2: Երբ կրճատումը կատարվում է բառի ոչ թե վերջից, այլ նրա ներքին ձայնավորների հաշվին, ապա նրա կրճատ ձևը գրվում է առանց միջակետի: Ինչպես՝ *պրն (պարոն), մլն (միլիոն):*

3. ՍՏՈՐԱԿԵՏ

Ա. Ստորակետ դրվում է գերադաս և ստորադաս նախադասությունների միջև:

Աշակերտներն ակնածանքի զգացումով մտան այն տունը, որտեղ ապրել ու ստեղծագործել է մեծ բանաստեղծը:

Ես ճամփա եմ, որ տեղ հասնեմ,

Որ տեղ հասցնեմ մոլորվածին (ԲՁ):

Այդ օրերին, երբ նա առավոտից մինչև ուշ գիշեր նկարում էր, ոչ ոք իրավունք չուներ խանգարել նրան:

Ծանոթություն 1: Երբ տարբեր ստորադաս նախադասություններ կապող ստորադասական շաղ-

կապները կամ շաղկապական բառերը գործածվում են իրար մոտ, ստորակետով տրոհումը կատարվում է ըստ տարբեր նախադասությունների:

Նրանք պայմանավորվեցին, որ, եթե ամեն ինչ բարեհաջող ավարտվի, կմեկնեն նախատեսված ժամին:

Նրանք գոհ են, որ, երբ մի բան որոշում են, բոլորի համար դրա կատարումը դառնում է օրենք:

Ծանոթություն 2: Եթե ստորադասական շաղկապը զեղչված է, գերադաս և ստորադաս նախադասությունների տրոհումը սովորաբար կատարվում է բուրով:

Թվաց՝ երկինքը շողեր է շաղում:

Չգիտենք՝ երբ է տնկված, ում ձեռքով (Ավ. Իս.):

Տեսան՝ տանը չի կարողանում ծառայել, խանութ տարան Գիբորին (ՀԹ):

Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի:

Լուսանա՝ ճանապարհ կընկնենք:

Բ. Ստորակետ դրվում է համադաս նախադասությունների միջև, երբ սրանք կապակցված են առանց շաղկապի, ինչպես նաև, և-ից, ու-ից, կամ-ից բացի, որևէ շաղկապով (լուկ, բայց, սակայն, մինչդեռ և այլն):

ա) Անրջային կիսալույսով կամաց-կամաց իջնում է մթնշաղը, նախիրը տուն է դառնում հանդից, վատվում են տների ճրագները (Ավ. Իս.):

բ) Նա մարդկանց չի դատապարտում, այլ սիրում է նրանց:

գ) Աշակերտները երեկ պիտի գնային արշավի, սակայն վատ եղանակի պատճառով արշավը հետաձգվեց:

Գ. Ստորակետ դրվում է և, ու, կամ շաղկապներով կապակցված համադաս նախադասությունների միջև, որոնք չունեն ընդհանուր ենթակա:

ա) Տներում վատվում են ճրագները, և գյուղի վրա բացվում է պարզ, աստղազարդ երկինք (ՍԽ):

բ) Նրանք վաղուց սպասում էին լույսը բացվելուն, և վերջապես լուսացավ:

գ) Ամեն օր նոր ու նոր լուրեր էին հասնում Արաքսի ափի գյուղ, կամ հենց այդ գյուղում էին հորինվում լուրեր Առաքելի մասին (ՀԲ):

Դ. Ստորակետ դրվում է և, ու, կամ շաղկապներով կապակցված համադաս նախադասությունների միջև, որոնց ենթական ընդհանուր է, սակայն առաջինին հաջորդում է ստորադաս նախադասություն, կամ այն ունի տրոհվող վերջադաս դերբայական դարձված:

ա) Մենք ճանապարհ ընկանք, երբ լույսը նոր էր բացվել, և տեղ հասանք ուշ երեկոյան:

բ) Նրանք աշխատանքը նույն օրը կավարտեն, եթե օգնող ունենան, կամ կշարունակեն հաջորդ օրը:

գ) Մենք լսում էինք ջութակահարին՝ կլանված նրա նվագով, և հիանում էինք նրա վարպետությամբ:

Ե. Ստորակետ դրվում է նախադասության համադաս անդամների միջև, երբ սրանք կապակցված չեն և, ու, կամ շաղկապներով:

ա) Երկրում ստեղծվեց մի խառնակ, անորոշ, անտանելի վիճակ (ԴԴ):

բ) Ռշտունյաց նախարարը եկել էր որսի՝ բարակներով, ծառաներով, զինվորներով (ԴԴ):

Ծանոթություն: Համադաս անդամների միջև ստորակետ է դրվում նաև այն դեպքում, երբ նրանցից մեկը դերբայական դարձված է:

Հուզմունքից շատագունած, լուռ կանգնել էր նա դուռն շենին:
Կանգնել էր նա դուռն շենին լուռ, հուզմունքից շատագունած:

Ձ. Ստորակետ դրվում է միջանկյալ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների և նախադասության մնացած մասի միջև:

- ա) Իհարկե, նրա նման ես չեմ կարող պատմել (**ՀԹ**):
- բ) Եվ, սոսկալի բան, կայծակի նման կիզիչ ու արագ մի ցնցում անցավ մարմնով (**Վրթ Փ**):
- գ) Նույն մտահոգության մեջ է, ինչպես երևում է, նաև հայրս (**ՍՁ**):
- դ) Նա հանձն շտապ իր սխալները և, այնուամենայնիվ, փորձեց ուղղել դրանք:

Ծանոթություն: Խոսքի մասերից միջանկյալ կիրառությամբ առավելապես հանդես են գալիս ձայնարկությունները, վերաբերականների մի մասը:

- ա) Ա՛խ, ինչ երջանիկ կյանք կլինի դա (**ՌԳ**):
- բ) Հե՛յ, բացվեցե՛ք, ամո՛ր փակեր (**ՀԹ**):
- գ) Օ՛, այո՛, անգղը մեզ մոտ է արդեն,
Իր սև ստվերը տարածել է սուրբ Մասսի փեշերին (**ՌԳ**):
- դ) Ո՛չ, մենք չենք բաժանվի միմյանցից (**Բ**):

Որոշ ձայնարկություններ կարող են իմաստային յուրահատուկ գործածությամբ կապվել այլ բառի հետ և չտրոհվել:

- ա) Ա՛յ տղա, էդ անտեր ճիճուները կոտորվեցին (**ՀԹ**):
- բ) Ա՛յ թե սառնամանիք է:
- գ) Վա՛յ նրան, ով հետ է մնում ժամանակից:

Է. Ստորակետ դրվում է կոչականի և նախադասության հիմնական մասի միջև:

– Հայրի՛կ, ինչու՞ ետ չդարձան
Էն քաջերը սիրատենչ.
Մի՞թե, հայրի՛կ, ինձ մոռացան,
Էլ չեն բերի հուրն անշեջ (**ՀԹ**):

Սեպտեմբերի մեկը, սիրելի՛ երեխաներ, կդառնա ձեր կյանքի ամենահիշարժան օրերից մեկը:

Ը. Ստորակետ դրվում է կրկնադիր և...և, թե...թե, կամ...կամ, ոչ...ոչ շաղկապներով կապակցված բառերի, նախադասությունների միջև:

- ա) Նա կարգապահ է ամենուրեք՝ թե՛ դպրոցում, թե՛ դրսում:
- բ) Նրանք որոշել են ամռանը հանգստանալ կամ Սևանում, կամ Դիլիջանում, կամ Լոռիում:
- գ) Նրանք և՛ տեսնում էին ամեն ինչ, և՛ ոչինչ չէին հասկանում:

Թ. Ստորակետ դրվում է միջադաս տրոհված դերբայական դարձվածից առաջ և հետո:

Նրանք, ավարտելով իրենց աշխատանքը, սկսեցին օգնել ընկերներին:
Աշակերտները, դպրոցի դահլիճում հանդիպելով ուսուցիչների հետ, հուզիչ պահեր ապրեցին:

Ծանոթություն: Միջադաս դերբայական դարձվածի տրոհման կանոնը պահպանվում է նաև այն դեպքում, երբ դերբայական դարձվածին նախորդում կամ հաջորդում են միայն նրան համագոր անդամներ:

- Թախժոտ դեմքով, աչքերն արցունքով լցված, նա ընկերներին հրաժեշտ էր տալիս:
- Նա ընկերներին հրաժեշտ էր տալիս, աչքերն արցունքով լցված, թախժոտ դեմքով:

Այս դեպքերում դերբայական դարձվածը կարելի է տրոհել նաև բութով՝ նկատի ունենալով, որ դերբայական դարձվածը իրեն համադաս անդամների հետ կազմում է մեկ կապակցություն, որի վրա կարելի է տարածել դերբայական դարձվածի կետադրությունը:

*Թախծոտ դեմքով, աչքերն արցունքով լցված՝ նա ընկերներին հրաժեշտ էր տալիս:
Նա ընկերներին հրաժեշտ էր տալիս՝ աչքերն արցունքով լցված, թախծոտ դեմքով:*

Ժ. Ստորակետ դրվում է ըստ, նայած, համաձայն, համապատասխան, հակառակ, հանդերձ, չնայած, չհաշված, փոխանակ, ի տարբերություն, ի հեճուկս, բացի, գատ, բացառությամբ կապերով ձևավորված հիմունքի ու զիջման միջադաս պարագաներից առաջ և հետո:

*ա) Ճամբարում հանգստացողները, պետի հատուկ կարգադրության համաձայն, պիտի մասնակցեն մոտակա անտառը փտած ու չորացած ճյուղերից մաքրելու աշխատանքներին:
բ) Լեռնագնացները, չնայած դժվարին տեղանքին ու անբարենպաստ եղանակին, հաջողությամբ ավարտեցին նախատեսված արշավը:*

ԺԱ. Ստորակետ դրվում է բացահայտչից հետո, եթե նախադասությունը շարունակվում է:

ա) Վաղը մենք՝ կանայքս, կմեկնենք գավառները և նոր զոհաբերություններ կհավաքենք (Մե):

բ) Ձմեռային արձակուրդները՝ հունվարի 1–10-ը, մենք կանցկացնենք Ճաղկածորում:

գ) Նրան՝ որպես մարզիկի, բոլորս բարձր ենք գնահատում:

Ծանոթություն 1: Բացահայտչից հետո ստորակետ չի դրվում.

1. երբ հատկացուցչի բացահայտչին հաջորդում է նրանից տարբեր հոլովով բառ, որը չի կարող շփոթվել բացահայտչի հետ.

*Մեծատաղանդ դերասանի՝ Վահրամ Փափազյանի արվեստը միշտ հիացմունք է պատճառել բոլորիս:
Եթե այդպիսի բացահայտչին հաջորդում է նույն հոլովով դրված բառ, որը կարող է շփոթվել բացահայտչի հետ, ապա այդ թյուրիմացությունը կանխելու համար բացահայտչից հետո դրվում է ստորակետ:*

Աշոտի՝ ընկերոջս, որդու կազմակերպվածությունը հիացրել է բոլորին:

Այստեղ բացահայտիչն է ընկերոջս բառը, իսկ առանց ստորակետի՝ բացահայտիչը կլինի որդու-ն:

2. երբ բացահայտչի հետ գործածված է հետադաս կապ.

Այս ամենը բոլորիս՝ ձեզ և մեզ համար կատարվածի միայն մի մասն է: Նա իր մոր՝ որպես առաջին խորհրդատուի հետ էլ խորհրդակցեց:

3. երբ տրամաբանական շեշտը բացահայտչի վրա ընկնելու պատճառով ստորոգյալի հանգույցը կամ օժանդակ բայը դրվում է բացահայտչից հետո.

Ժամանակակից հայ երաժշտությունը մեծ կոմպոզիտորին՝ Կոմիտասին է պարտական իր զարգացման մի շարք կողմերով:

Ամռանը՝ ամենասարևոտ օրերին է նա սիրում նստել պարտեզում:

4. երբ բացահայտչին հաջորդում է հավելական էլ շաղկապը:

Մեր դասարանի ավագը՝ Լիլիթն էլ այդ կարծիքին է:

Ծանոթություն 2: Բացահայտչից հետո ստորակետ չի դրվում, եթե նույն տեղում պահանջվում է դնել բութ կամ միջակետ:

Փողոցում հանդիպեցի դպրոցական ընկերոջս՝ Արամին՝ գրքերի կապոցը ձեռքին:

Դպրոցի բակում տեսա նոր տնօրենին՝ Գրիգոր Գալստյանին՝ իմ դպրոցական ընկերոջը՝ շրջապատված աշակերտներով:

Ամբողջ ընտանիքն անհամբեր սպասում էր հյուրերին՝ արտասահմանից նոր վերադարձած ազգականներին. գրեթե հինգ տարի իրար չէին տեսել:

ԺԲ. Ստորակետ դրվում է հետադաս տրոհված որոշչից հետո, եթե նախադասությունը շարունակվում է:

Նրա հոգին՝ մթնշաղի պես փափուկ ու բարի, դուրս էր հորդում նրա էությունից:

Պատշգամքում երևաց մելիք Բարխուդարը՝ ծանր մուշտակով, սրածայր զլխարկով, և նայեց դեպի հեռուները:

Ծանոթություն: Տրոհված որոշչից հետո ստորակետ չի դրվում, եթե նույն տեղում պահանջվում է դնել բութ կամ միջակետ:

Մորացկաններ էին՝ կիսամերկ ու բոկոտն. հույսի փայլ չկար նրանց հայացքում:

ԺԳ. Ստորակետ դրվում է մեկնական բառից առաջ:

Արշավախումբն ուղևորվեց դեպի վեցերորդ աշխարհամաս, այն է՝ Անտարկտիդա:

ԺԴ. Ստորակետ դրվում է մատենագիտական աղբյուրի նկարագրության մեջ ներկայացվող տվյալների միջև:

Ալ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1951, էջ 421:

4. ԲՈՒԹ

Ա. Բութ դրվում է բացահայտյալի վրա՝ բացահայտչից տրոհելու համար:

ա) Մենք՝ երիտասարդներս, լավ գիտենք մեր պարտականություններն ու իրավունքները:

բ) Անքուն էր միայն բերդի թագուհին՝ Փառանձենը (Ռ):

գ) Հանդիպումը տեղի կունենա մարտի 1-ին՝ կիրակի օրը:

դ) Հանրահավաքը տեղի ունեցավ Երևանում՝ Ազատության հրապարակում:

ե) Հակոբին՝ որպես մասնագետի, բոլորը հարգում են:

Ծանոթություն 1: Երբ մասնական բացահայտիչը գործածվում է նախադաս, բութը դրվում է նրա վրա:

Որպես մասնագետի՝ Հակոբին բոլորը հարգում են:

Ծանոթություն 2: Եթե բացահայտյալի և բացահայտչի միջև գործածված է դիմավոր բայ (երբեմն նաև այդ բայի հետ կապված անդամներ), բութը դրվում է դիմավոր բայից, նրա հետ կապված անդամներից հետո:

Ներս մտնողն Արամն էր՝ իմ ընկերը:

Ինձ ասացին, որ ինձ Արամն է գանգել՝ իմ ընկերը:

Այդ մասին Արամն է երեկ պատմել՝ իմ ընկերը:

Բ. Բութ դրվում է որոշյալի վրա՝ հետադաս ծավալուն (երկու և ավելի բառերից կազմված), ինչպես և բազմակի որոշիչներից տրոհելու համար:

Ներս մտավ մի անձնավորություն՝ իշխանական արտաքինով: Ժայռի լանջից կախված էր մի գանգ՝ երկար կոթով:

Փերիները՝ գեղեցիկ, չքնաղ, անմման, գարուն բերին իրենց թևերով:

Ծանոթություն: Եթե որոշյալի և հետադաս որոշչի միջև գործածված է դիմավոր բայ (երբեմն նաև այդ բայի հետ կապված անդամներ), բութը դրվում է դիմավոր բայից, նրա հետ կապված անդամներից հետո:

Մեր հյուրը մի երիտասարդ էր՝ կապույտ աչքերով, թավ հոնքերով:

*Մեր տունն մի երիտասարդ էր եկել՝ կապույտ աչքերով, թավ հոնքերով:
Փողոցով մի երիտասարդ էր արագ անցնում՝ կապույտ աչքերով, թավ հոնքերով:*

Գ. Բուք դրվում է նախադաս ու հետադաս տրոհված դերբայական դարձվածների և նախադասության մնացած մասի միջև:

Բուքը դրվում է դերբայական դարձվածի վրա, եթե այն նախադաս է: Հետադաս դերբայական դարձվածի դեպքում բուքը դրվում է դերբայական դարձվածին նախորդող բառի վրա:

Նախադաս դերբայական դարձվածի տրոհման այս կանոնը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ դերբայական դարձվածը հաջորդում է շաղկապին:

- ա) Հաջողությամբ ավարտելով օրվա աշխատանքը՝ նրանք գոհ վերադարձան տուն:*
- բ) Մեր դպրոցն ամեն ինչ անում է՝ հաղթելու առաջիկա մրցումներում:*
- գ) Մանկության հուշերով տարված՝ նա ոչինչ չէր նկատում:*
- դ) Նրանք վերջապես հասկացան, որ իրենց թույլ տված սխալները համատրեն չընդունելով՝ կկանգնեն փակուղու առջև:*

Ծանոթություն 1: Բարդ նախադասության մեջ դերբայական դարձվածի շարադասությունը որոշվում է ամեն մի բաղադրիչ նախադասության մեջ՝ առանձին վերցրած:

Նա զարմացավ՝ այդ գյուղում հանդիպելով իր հին ընկերոջը, և սկսեց մանրամասն հարցուփորձ անել: (հետադաս)

Գարնան արևի ջերմությունից բողբոջները սկսել էին բացվել, կիսահալ ձյան շերտը ճեղքելով՝ իրենց գիսիկներն էին բարձրացնում ձնծաղիկները: (նախադաս)

Ծանոթություն 2: Միջադաս տրոհված դերբայական դարձվածը նախադասության մյուս անդամներից բաժանվում է ստորակետերով:

Նրանք, հաջողությամբ ավարտելով օրվա աշխատանքը, գոհ վերադարձան տուն:

Միայլ է «Նրանք հաջողությամբ ավարտելով օրվա աշխատանքը՝ գոհ վերադարձան տուն» տարբերակը. ենթական չի կարող մտնել դերբայական դարձվածի մեջ:

Այն դերբայական դարձվածները, որոնց նախորդում կամ հաջորդում են միայն նրանց համազոր անդամներ, կարելի է տրոհել նաև բութով՝ նկատի ունենալով, որ դերբայական դարձվածը իրեն համադաս անդամների հետ կազմում է մեկ կապակցություն, որի վրա կարելի է տարածել դերբայական դարձվածի կետադրությունը: Դերբայական դարձվածը իրեն համազոր անդամից տրոհվում է ստորակետով:

Արագ, մեծ քայլերով, դիմացի տան պատուհանին մի հայացք գցելով՝ նա անցավ փողոցը:

Նա անցավ փողոցը՝ դիմացի տան պատուհանին մի հայացք գցելով, արագ, մեծ քայլերով:

Ծանոթություն 3: Եթե նախադաս դերբայական դարձվածն ավարտվում է դերբային լրացնող ստորադաս նախադասությամբ, դրանից հետո կարելի է դնել բութ կամ ստորակետ՝ նկատի ունենալով դերբայական դարձվածի և ստորադաս նախադասության կետադրման կանոնները:

Տեսնելով, որ անձրև է գալիս՝ նա որոշեց մնալ տանը:

Տեսնելով, որ անձրև է գալիս, նա որոշեց մնալ տանը:

Ծանոթություն 4: Նախադաս դերբայական դարձվածի տրոհման կանոնը պահպանվում է նաև այն դեպքում, երբ դերբայական դարձվածին հաջորդում է նրան համազոր անդամ: Վերջադաս դերբայական դարձվածի տրոհման կանոնը պահպանվում է նաև այն դեպքում, երբ դերբայական դարձվածին նախորդում է նրան համազոր անդամ:

Դիմացի տան պատուհանին մի հայացք գցելով՝ արագ, մեծ քայլերով նա անցավ փողոցը:

Նա անցավ փողոցը արագ, մեծ քայլերով՝ դիմացի տան պատուհանին մի հայացք գցելով:

Այս դեպքերում նախադաս դերբայական դարձվածից հետո և վերջադաս դերբայական դարձվածից առաջ կարելի է դնել ստորակետ՝ նկատի ունենալով համադաս անդամների տրոհման կանոնը:

*Դիմացի տան պատուհանին մի հայացք գցելով, արագ, մեծ քայլերով նա անցավ փողոցը:
Նա անցավ փողոցը արագ, մեծ քայլերով, դիմացի տան պատուհանին մի հայացք գցելով:*

Դ. Բութ դրվում է ըստ, նայած, համաձայն, համապատասխան, հակառակ, հանդերձ, չհաշված, չնայած, փոխանակ, ի տարբերություն, ի հեճուկս, բացի, զատ, բացառությամբ կապերով ձևավորված նախադաս ու հետադաս տրոհված հիմունքի ու զիջման պարագաների և նախադասության մյուս անդամների միջև:

ա) Ըստ դպրոցի տնօրենի կարգադրության՝ մեր ամառային արձակուրդի մի մասը պետք է հատկացնենք դաշտային աշխատանքներին:

բ) Չնայած վատառողջությանը՝ նա գալիս է աշխատանքի:

գ) Հակառակ իր հայացքներին՝ Սմբատը համաձայնություն էր տվել:

դ) Նա գալիս է աշխատանքի՝ չնայած վատառողջությանը:

ե) Սմբատը համաձայնություն էր տվել՝ հակառակ իր հայացքներին:

Ծանոթություն: Նշված պարագաները միջադաս գործածության դեպքում նախադասության մյուս անդամներից բաժանվում են ստորակետով:

ա) Նա, չնայած վատառողջությանը, գալիս է աշխատանքի:

բ) Սմբատը, հակառակ իր հայացքներին, համաձայնություն է տվել:

Ե. Բութ դրվում է անորոշ առումով թվարկված հետադաս բազմակի ենթակայաներից առաջ, եթե նախադասությունն ունի անվանական բաղադրյալ ստորոգրյալ:

ա) Հայաստանի Հանրապետության մեծ քաղաքներն են՝ Երևան, Գյումրի, Վանաձոր:

բ) Նրա դավանած սկզբունքներն են՝ ազատություն, արդարություն, մարդասիրություն:

Զ. Բութ դրվում է թվարկումից առաջ, եթե թվարկմանը նախորդում է բառ կամ բառակապակցություն, կամ թվարկվող միավորները բառեր կամ բառակապակցություններ են:

ա) Հայ դպրության ընկերության համագումարը՝

1) որոշում է ընկերության գործունեության հիմնական ուղղությունները.

2) հաստատում է ընկերության կանոնադրությունը, անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ մտցնում նրա մեջ.

3) ընտրում է ընկերության կենտրոնական վարչություն և կենտրոնական վերստուգիչ հանձնաժողով:

բ) Հայ դպրության ընկերության համագումարը որոշեց՝

1) ընկերության գործունեության հիմնական ուղղությունները.

2) ընկերության վարչության կազմը.

3) ընկերության տեղական մարմինների ընտրության կարգը:

Ծանոթություն: Թվարկմանը նախորդող բառից հետո դրվում է միջակետ կամ վերջակետ, եթե թվարկմանը նախորդում է նախադասություն, և թվարկվող միավորները նախադասություններ են:

Ձրոյով բազմապատկում և բաժանում կատարելիս պետք է նկատի ունենալ հետևյալ կանոնները.

ա) թիվը զրոյով բազմապատկելիս ստացվում է զրո.

բ) զրոն ցանկացած թվի բաժանելիս ստացվում է զրո.

գ) թիվը զրոյի բաժանել չի կարելի:

(դասագիրք)

Անձնանունների ցանկը կազմելիս հիմք են ընդունվել որոշակի ընդհանուր սկզբունքներ:

1. Ժամանակակից հայերենի անձնանունները ռուսերեն արտահայտվում են ոչ թե գրադարձությամբ, այլ տառադարձության սկզբունքով:
2. Հայերենի այն հնչույթները, որոնք չունեն ռուսերեն համարժեքներ, տառադարձում են նրանց ըստ հնարավորին առավել մոտ հնչույթներ արտահայտող տառերով:
3. Հայերեն անձնանունները ռուսերեն տառադարձելիս նկատի են առնվում ռուսերենի գրության և ուղղագրության կանոններով պայմանավորված սահմանափակումները:

Է. Բուք դրվում է նախադասության մեջ իրար հետ չկապվող, բայց մեկը մյուսին հաջորդող կամ իրար մոտիկ գտնվող բառերից առաջինի վրա՝ եղած իմաստային շփոթումը կանխելու համար:

Դանդաղ ու աննկատելի՝ այգեստանը վերածվում էր գյուղի:

Պատահական չէ, որ նրա՝ Օշական գյուղում գտնվող համեստ շիրիմն այսօր էլ հայ ժողովրդի սրբություն սրբոցն է (Պ. Էմին):

Ը. Բուք դրվում է թվարկում արտահայտող նախ, ապա, առաջին, երկրորդ, երրայդ, չորրորդ և նման այլ բառերի վրա:

Մեր դասարանի հաջողությունների մեջ դեր են կատարում տարբեր պատճառներ. նախ՝ մենք լավ ենք զիտակցում և կատարում մեր պարտականությունները, ապա՝ մենք սովորություն ունենք իրար օգնել նաև մեր դիտողություններով, հենց որ դրա կարիքը լինում է:

Մի կողմից՝ հարցերը լուծելու մեծ ցանկությունը, մյուս կողմից՝ առկա դժվարությունները նրան դրել էին դժվարին երկրնտրանքի մեջ:

Թ. Բուք դրվում է մեկնական այսպես, այսպիսով, այն է, այսինքն, որոնք են, օրինակ և նման բառերի վրա:

ա) Գործարանում շատ բան է արվում վերակառուցման ուղղությամբ: Օրինակ՝ ճիշտ է կազմակերպվում արտադրությունը, հատուկ հսկողություն է սահմանված արտադրական ցուցանիշների վրա:

բ) Առեղծված է մեր սիրտը, այսինքն՝ մեր զգացումների մեծ ու խորունկ աշխարհը (Ավ. Իս.):

Ծանոթություն 1: Մեկնական բառից առաջ նույն նախադասության մեջ սովորաբար դրվում է ստորակետ, որոշ դեպքերում՝ միջակետ:

ա) Արշավախումբն ուղևորվեց դեպի վեցերորդ աշխարհամաս, այն է՝ Անտարկտիդա:

բ) Որոշիչը կարող է արտահայտվել ածականով. օրինակ՝

Եվ մութ այրերից մամոտ ժայռերի,

Թավուտ ծմակի լռին խորքերից,

Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի

Արձագանքն ահա լսում են նորից:

Ծանոթություն 2: Այսպիսով, օրինակ մեկնական բառերը միջադաս գործածության դեպքում ընկալվում են որպես միջանկյալ բառեր և առնվում են ստորակետերի մեջ:

ա) Բոլոր ելույթ ունեցողները, այսպիսով, հանգեցին նույն եզրակացությանը:

բ) Մեր դասարանը, օրինակ, այս տարի լավ նախաձեռնություններ է հանդես բերում:

Ժ. Բուք դրվում է նախադասության զեղչված անդամի կամ զեղչված բառի տեղում առաջացող դադարը նշելու համար:

ա) Մենք աշխատում էինք դպրոցամերձ հողամասում, նրանք՝ արհեստանոցում:

բ) Անահիտն ուսանողուհի է, իսկ Լիլիթը՝ աշակերտուհի:

*գ) Ամեն տեղ առաջինն է, քնելիս՝ վերջինը,
Մարմնացած ջանք է նա կարծես,
Մի ձեռքը՝ չիբուխին, մի ձեռքը մածին է,..
Նկարիչ, կանչում է նա մեզ (ՀՄ):*

դ) Մեկը՝ թելադրում, մյուսը գրում է:

ե) Կարծում եմ՝ ամեն ինչ կվերջանա բարեհաջող:

զ) Գնացքից իջած ուղևորը քայլեց դեպի կայարանի շենքը՝ ծախ ձեռքին բռնած մի ճամպուուկ, աջ ձեռքին՝ մի մեծ սլաշուսակ:

ԺԱ. Բուք դրվում է վերնագրային և անկախ գործածություն ունեցող այլ արտահայտություններում զեղչված բառի փոխարեն:

ա) Մշակույթի զարգացմանը՝ մեծ ուշադրություն:

բ) Խաչատուր Աբովյանը՝ հայ նոր գրականության հիմնադիր:

ԺԲ. Բուք դրվում է շատ հակիրճ, առավելապես մեկ բառով արտահայտված մեջբերվող ուղղակի խոսքից առաջ, երբ այն գրվում է առանց չակերտների.

Սիրտըս կարտոով կանչում է քեզ՝ ե՛կ (ՎՏ):

Արամն ասում էր՝ մնա՛, բայց ես չկարողացա կատարել նրա խնդրանքը:

ԺԳ. Բուք դրվում է կապակցված խոսքից դուրս գործածվող տեղեկատու արտահայտություններում՝ տեղեկույթ պահանջող բառի կամ բառակապակցության վրա:

ա) Տնօրեն՝ Ս. Հովնանյան

բ) Խմբագիր՝ Ա. Գևորգյան

գ) Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գասպարյան

դ) Գործ՝ Մ. Մարյանի

ե) Նկարում՝ Երևանի մարզահամերգային համալիրը

զ) Սկիզբը՝ ժամը 20-ին

է) Մուտքը՝ բակի կողմից

ԺԴ. Բուք դրվում է վերջադաս նպատակի պարագայից առաջ, եթե այն անմիջաբար չի հաջորդում ստորոգյալին:

ա) Առավոտյան գյուղի հարսները գնում էին աղբյուրը՝ ջրի:

բ) Ուշ երեկոյան գորախմբի հրամանատարները հավաքվեցին իշխանի վրանում՝ ամյացի գրուիը նախապատրաստելու համար:

Ծանոթություն: Եթե վերջադաս նպատակի պարագան տրական հոլովով դրված անորոշ դերբայով (առանց կապի) դերբայական դարձված է, ապա տրոհվում է՝ անկախ վերը նշված հանգամանքից:

Արվեստի նշանավոր գործիչներ և բազմաթիվ արվեստագետներ էին հավաքվել՝ նշելու մեծ նկարչի հորեյանը:

5. ՓԱԿԱԳԻԾ

Ա. Փակագծերի մեջ են առնվում տեղեկատու, մեկնական իմաստ արտահայտող ներդր-

րյալ բառերը, բառերի կապակցությունները, նախադասությունները, որպես նմուշ բերվող նշանները:

Ավետիք Իսահակյանը ծնվել է 1875 թ. հոկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի):

Բաֆֆին (Հակոբ Մելիք - Հակոբյան) հայ պատմավիպասանությունը բարձրացրեց նոր աստիճանի:

Երևում է, որ շորերը հանել է, գետն անցել (հավանաբար սպանված բադերը հավաքելու համար) ու մինչև հագնելը սառել (ՎԱ):

Եվ անկարող եմ նաև քրքջալ (քրքիջի համար ուժ է հարկավոր) (ՊՄ):

ե) Այդ թեման մեծ ուժով հնչեց Թումանյանի «Իմ երգը» (1916 թ.) բանաստեղծության մեջ:

զ) Կախման կետերը (...) պետք է տարբերել բազմակետից (...):

Բ. Միակողմանի (փակվող) փակագիծ դրվում է թվարկում նշող թվանշաններից, տառերից հետո:

Սյունակով հանում կատարելու համար փարվում ենք հետևյալ կերպ.

1) հանելին գրում ենք նվազելիի տակ.

2) թվերի միջև դնում ենք հանման նշան.

3) ըստ կարգերի՝ կատարում ենք միանիշ թվերի հանում: (դասագիրք)

Սյունակով հանում կատարելու համար փարվում ենք հետևյալ կերպ.

ա) հանելին գրում ենք նվազելիի տակ.

բ) թվերի միջև դնում ենք հանման նշան.

գ) ըստ կարգերի՝ կատարում ենք միանիշ թվերի հանում:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Բացահայտության նշաններն են չակերտները (« »), միության գծիկը (-), անջատման գիծը (—), կախման կետերը (...), բազմակետը (...), ենթամասն (~), ապաթարցը (*), որոնք նպաստում են նախադասությունների մտքի, բառերի իմաստների, բաղադրիչների հարաբերության ճիշտ ընկալմանը:

1. ՉԱԿԵՐՏՆԵՐ

Ա. Չակերտների մեջ է առնվում մեջբերվող ուղղակի խոսքը:

ա) Իսահակյանն ասել է. «Մարտիրոս Սարյանի արվեստը բովանդակ աշխարհինն է, սիրելի է բոլորին»:

բ) Դուրյանը մեզ իր օրինակով մտերմացրեց այդ «մելամաղձոտ լճակ»-ին, ինչպես նաև սովորեցրեց «գրավիլ, լռել ու խոկալ» (ՊՄ):

գ) Հույն մեծ փիլիսոփա Դեմոկրիտն ասել է. «Սովորի՛ր ամաչել ինքդ քեզնից մի փոքր ավելի, քան ուրիշներից»:

Ծանոթություն 1: Մեջբերվող են դիտվում նաև այնպիսի նախադասությունները, որոնք թեև իրականում ասված չեն, բայց հեղինակը վերագրում է որևէ մեկին՝ ընդհանրապես կամ տվյալ պահին նրա համար դրանք համարելով բնորոշ:

Նրա (Բեն. – Բ. Ներսիսյանի՝ «Իմ սիրտը լեռներում է» պիեսում) պահվածքն ու քայլվածքը, նրա շարժումն ու ձայնի ելևէջները, նրա ամբողջ վարքագիծը պիտի, վերջիվերջո, մի բան ասեն. «Փողը դեռ ամեն բան չէ»:

Նա ծնվել է, տառապելով ապրում է, որպեսզի հաստատի, որ «երգերն էլ են կարևոր»: Այնինչ նրա վերջին ժպիտի բարգմանությունը կարող է նշանակել մի հակատրամադրական բան՝ այն, որ «փողը ոչինչ է», «էականը հացը չէ» (ՊՍ):

Ծանոթություն 2: Եթե պահպանվում է մեջբերվող խոսքի հարաբերական ինքնուրույնությունը, ապա այն սկսվում է մեծատառով, իսկ եթե մեջբերվող խոսքը քերականորեն ձուլվում է հեղինակային խոսքի մեջ, սկսվում է փոքրատառով, ինչպես երևում է բերված վերջին երեք օրինակներից:

Բ. Չակերտների մեջ են առնվում գրական երկերի, գիտական աշխատությունների, հողվածների վերնագրերը, արվեստի ստեղծագործությունների, թերթերի, հանդեսների անունները խոսքում մեջբերվելիս:

Նա մեծ ոգևորությամբ արտասանեց Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» չքնաղ բանաստեղծությունը: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Գարուն» հանդես, «Հայոց լեզու» դասագրք, Երվանդ Քոչարի «Մասունցի Դավիթ» արձանը, Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբեն» ստեղծագործությունը:

Ծանոթություն: Մատենագիտական ցանկերում, տողատակերում, ներդրյալ հղումներում գեղարվեստական երկերի, գիտական աշխատությունների, հողվածների վերնագրերը բերվում են առանց չակերտների:

ա) Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Ա, Երևան, 1955:

բ) Մարդկային գոյի խորհուրդը քննող... մոնումենտալ դրական հերոս է Օհան ամին (Ավ. Իսահակյան, Համբերանքի շիրուխը):

Այս նույն պարագաներում չակերտների մեջ են առնվում ամսագրերի, հանդեսների, լրագրերի, այլ պարբերականների անունները և այն աշխատությունների, գրքերի վերնագրերը, որոնք հիշատակվում են առանց հեղինակի անվան.

ա) «Նորք», 1990, հմ. 5:

բ) «Գրական թերթ», 2001, հմ. 15:

գ) «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1988, հմ. 5, էջ 42:

դ) Այդպես են մասնավորապես բնապատկերները, ծաղիկների և բարդիների, անտառի և անձրևի մասին գրված երգերը («Երեք բարդի», «Կարմիր կակաչ», «Հովվերգություն», «Գարնան անձրև է խըշշում», «Սերգեյ Եսենինին» և այլն):

(Յեռնարկ)

Գ. Չակերտների մեջ են առնվում ընկերություններին, հիմնարկներին, ձեռնարկություններին տրվող պայմանական անունները, սարքերի, մեքենաների մակնիշները:

«Լույս» հրատարակչություն, «Անի» հյուրանոց, «Մասիս» գործարան, «Երևան» կինոթատրոն, «Ալոգա» ավտոմեքենա, «Արագած» սառնարան, «Սոյուզ - 6» տիեզերանավ:

Դ. Չակերտների մեջ են առնվում հեզնական, ժխտական իմաստով գործածված բառերը, արտահայտությունները:

ա) Բանտարկյալներին մի կարճ պահի հանում էին բանտի բարձր պարիսպներով պատած բակը «գրոսանքի» (Ավ. Իս.):

բ) Նա շա՛տ «ժամեստ» է, ամբողջ օրն իր գովքն է անում:

գ) Այդ «անմեղ գառից» հարկավոր է մի քիչ գգույշ լինել:

Ե. Չակերտների մեջ են առնվում բառը, լեզվական միավորը, որը հիշատակվում է խոսքում, և նրա մասին որևէ բան է ասվում:

- ա) «Հայրեն» բառը ծագում է «հայ» և ոչ թե «հայր» արմատից (ՊՍ):
- բ) «Վարկաբեկել» բառը կազմված է «վարկ» և «բեկել» բաղադրիչներից:
- գ) «Լուսացավ», «Անծրեում է» նախադասություններն անենթակա են:
- դ) «ա»-ն ծայնավոր է, «բ»-ն՝ բաղաձայն:

Ծանոթություն: Նույն պարագայում վկայվող բառի, միավորի առանձնացումը կարող է կատարվել նաև ընդգծումով, բուն շարվածքից տարբեր տառատեսակով, մասնավորապես շղատառով:

- ա) Հայրեն բառը ծագում է հայ և ոչ թե հայր արմատից:
- բ) Վարկաբեկել բառը կազմված է վարկ և բեկել բաղադրիչներից:
- գ) Լուսացավ, Անչրեում է նախադասություններն անենթակա են:
- դ) Ա-ն ծայնավոր է, ք-ն՝ բաղաձայն:

2. ՄԻՈՒԹՅԱՆ ԳԾԻԿ

Ա. Միության գծիկով գրվում են նույն բառի կրկնությամբ (անհնչյունափոխ կամ հնչյունափոխված) կազմված բարդ բառերը. գույգ-գույգ, արագ-արագ, կամաց-կամաց, մեկ-մեկ, ուշ-ուշ, մանր-մունր, ոլոր-մոլոր, պարապ-սարապ և այլն:

Ծանոթություն 1: Այն կրկնավոր բարդ բառերը, որոնց բաղադրիչներից մեկը քարացած քերականական ձև է, գրվում են առանց գծիկի՝ միասին. տնետուն, գյուղեգյուղ, բերնեբերան, տարեցտարի և այլն:

Ծանոթություն 2: Կրկնությամբ կազմված այն կապակցությունները, որոնց թեքված բաղադրիչի հոլովական իմաստը գիտակցվում է, գրվում են առանց գծիկի՝ անջատ. քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, երկրից երկիր, ձեռք ձեռքի, կողք կողքի (կանգնել) և այլն:

Բ. Միության գծիկով գրվում են միևնույն խոսքի մասին պատկանող բառերի այն միացությունները, որոնք, առարկան, անձը, իրը, երևույթը բնութագրելով կամ ներկայացնելով տարբեր կողմերից, արտահայտում են մեկ հասկացություն կամ հանդես են գալիս որպես մեկ անուն:

- ա) ինժեներ-մեխանիկ, տուն-քանգարան, վազոն-ոեստորան, հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք, կիլովատտ-ժամ, լիտր-վայրկյան, մեքենա-օր,
- բ) ասել-խոսել, ուտել-խմել, գնալ-գալ, լինել-չլինել,
- գ) Սալտիկով-Շչեդրին, Դուրյան-Արմենյան, Էլզաս-Լոթարինգիա,
- դ) աշակերտ-աշակերտուհի, ուսանող-ուսանողուհի, ուսուցիչ-ուսուցչուհի, բանվոր-բանվորուհի,
- ե) ազգային-ազատագրական, հասարակական-քաղաքական:

Գ. Միության գծիկով գրվում են բառերի այնպիսի միացությունները (առաջին բառի վերջածանցի կրճատումով), որոնք արտահայտում են տարբեր կողմերի (լեզուների, ժողովուրդների, պետությունների) հարաբերություններ:

- ա) հայ-ռուսերեն, ֆրանս-գերմաներեն, ռուս-լատիներեն,
- բ) հայ-վրացական, հայ-իտալական, ռուս-գերմանական,
- գ) գերմանա-իտալական, եգիպտա-սիրիական և այլն:

Ծանոթություն 1: Լեզվագրական, ֆիզիկամաթեմատիկական, պատմաաշխարհագրական, դրամաիրային, նյութատեխնիկական, ռազմածովային, բառաբերականական, ուսումնադաստիարակչա-

կան, աղեստամոքսային և նման կազմությամբ մեկ միասնական գաղափար արտահայտող բառերի բաղադրիչները, որոնցից առաջինի վերջածանցը լրիվ կամ մասամբ ընկել է, գրվում են առանց գծիկի՝ միասին:

Ծանոթություն 2: Այն կապակցությունները, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է որոշիչ դեր կատարող ածականով կամ գոյականով, գրվում են առանց գծիկի՝ անջատ:

ա) ալ կարմիր, բաց դեղին, բաց կապույտ, մուգ կարմիր,

բ) Նոր Չեչանդիս, Նոր Նախիջևան, Մեծ Պարնի, Վերին Թալին, Հեռավոր Արևելք, Փոքր Ասիա:

Այստեղ նշված տեղանուններից կազմված ածականները և գոյականները գրվում են միասին:

Նորգեյանդական, հեռավորարևելյան, փոքրասիական, մեծպարնեցի, վերինթալինցի և այլն:

Ծանոթություն 3: Անձի անվան և նրա գործունեությունն այս կամ այն առումով բացահայտող գոյականի կապակցությունը գրվում է առանց գծիկի՝ անջատ:

Թումանյան քննադատը, Շիրվանզադե դրամատուրգը, Րաֆֆի վիպասանը:

Գ. Միության գծիկով գրվում են որևէ անունից (կամ ազգանունից) և տեր, մելիք, միրզա ու նման բաղադրիչներից կազմված անձնանունները (կամ ազգանունները), երբ նշված բաղադրիչներն արտասանվում են առանձին. օրինակ՝ Տեր-Գաբրիելյան, Մելիք-Մուսյան, Միրզա-Ավագյան և այլն:

Ծանոթություն 1: Նշված բաղադրիչներն անձնանվան (կամ ազգանվան) մյուս բաղադրիչների հետ միասին արտասանվելու դեպքում գրվում են առանց գծիկի՝ միասին:

Մելիքսեթ (յան), Բեկնազարյան, Միրզախանյան, Միրզաբեկյան և այլն:

Ծանոթություն 2: *Տեր, մելիք* և նման բառերը հատուկ անվան հետ որպես որոշիչ գործածվելիս գրվում են առանձին.

Տեր Մահակ, մելիք Ավան և այլն:

Ե. Միության գծիկով գրվում են ինչ դերանունով բաղադրված անորոշ իմաստ արտահայտող բառերը՝ ինչ-որ, փոքր-ինչ, դուրս-ինչ:

Զ. Միության գծիկով գրվում են ավանդաբար գծիկով գրվող հատուկ անունները՝ Նայ-Դոս, Գամառ-Քաթիպա, Սայաթ-Նովա և այլն:

Ծանոթություն 1: Առանց գծիկի, անջատ են գրվում երկու կամ ավելի առանձին բաղադրիչներից կազմված հետևյալ օտարազգի հատուկ անունները՝

ա) արևմտյան դա, դը, վան, ֆոն, սենտ և նման այլ բաղադրիչներ ունեցող անձնանունները. օրինակ՝ Լեոնարդո դա Վինչի, Լյուդվիգ վան Բեթհովեն, Անտուան դը սենտ Էքզյուպերի, Վիլիելմ ֆոն Հումբոլդտ,

բ) արևելյան ալ, էլ, էդ, էն և նման այլ բաղադրիչներ ունեցող անունները. օրինակ՝ Հարուն ալ Ռաշիդ, Նահր էլ Բարիդ. «Ալ Աիրամ» թերթ,

գ) որոշիչ ու որոշյալի կապակցությամբ արտահայտված օտարազգի բաղադրյալ տեղանունները. օրինակ՝ Նյու Յորք, Նյու Ջերսի, Նիժնի Տագիլ և այլն:

Ծանոթություն 2: *Փոխ, էքս, օքեր* բաղադրիչներով կազմված բառերը գրվում են առանց գծիկի՝ միասին:

Փոխգնդապետ, փոխնախագահ, փոխծովակալ, փոխարքա, էքսչեմպիոն, օքերլեյտենանդ և այլն:

Է. Միության գծիկով գրվում են թվականների այն կապակցությունները, որոնք արտահայտում են մոտավորության իմաստ:

Տասը-տասնհինգ (10-15) մարդ, չորս-հինգ (4-5) օր, քսան-քսանհինգ (20-25) տարի, ինը-տասը (9-10) տարեկան և այլն:

Ծանոթություն: Թվականների այն կապակցությունը, որի առաջին բաղադրիչն ունի բացառականի իմաստ, գրվում է՝

ա) անջատման գծով, եթե արտահայտված է թվանշաններով, որոնցից առաջինը բացառականի իմաստ է արտահայտում:

Էջ 10–15, I–IV դասարաններ, I–VIII հատորներ, V–XI դարեր,

բ) առանձին, եթե արտահայտված է բառերով.

Առաջինից չորրորդ դասարաններ, փաստից փաստհինգ էջերը, հինգից փաստմեկերորդ դարեր, առաջինից ութերորդ հատորներ:

Ը. Միության գծիկով գրվում են այն քերականական ձևերը, որոնց հիմքերը գրված են թվանշաններով, տառային, վանկատառային հապավումներ են, ինքնանվանող փոխանուններ կամ չակերտների մեջ առնված վերնագրեր:

ա) 3-ից, 5-ից, X-ի, XV-ից, 15-ամյա, 100-ամյակ, 2-րդ, 8-ական.

բ) ԱՄՆ-ն, ՄԱԿ-ում, ԱՊՀ-ից, ՀՀ-ի.

գ) Հինգ-ը թվական է: Գարուն-ը երկվանկ բառ է: Երգ-ը գրվում է գ-ով, բայց կարդացվում է ք-ով:

դ) «Անչրևում է»-ն միակազմ նախադասություն է: Եթե-ից առաջ ստորակետ դիր: Մոփեցրեցի-ն սխալ ձև է, ճիշտն է մոփեցրի-ն:

ե) Միոված բանաստեղծությունների ասմունքի մրցույթն սկսվեց Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»-ով:

Ծանոթություն: Ինքնուրույն բառի վերածված հապավումներով կազմությունները գրվում են առանց գծիկի՝ միասին:

Բուհի, բուհական, բուհեր, զագսի, զագսով և այլն:

Թ. Միության գծիկով գրվում են տառերով արտահայտված պայմանանիշերի, այլև բառերի և նրանց հետ գործածվող թվանշանների կապակցությունները:

Ա-93 բենզին, ՏՈՒ-104 ինքնաթիռ, «Զվարթնոց-2» օդանավակայան և այլն:

3. ԱՆՋԱՏՄԱՆ ԳԻԾ

Ա. Անջատման գիծ դրվում է երկխոսության ամեն մի մասի սկզբում, որն սկսվում է նոր տողից. մեջբերվող ուղղակի խոսքի և հեղինակային խոսքի միջև նույն նախադասության մեջ դրվում է ստորակետ ու գիծ :

– Ինչու՞ լուռ ես, – հարցրեց նա:

– Հա՛յր Զիովաննի, սիրո՞ւմ ես դու Գարիբալդիին:

– Օ՛, ինչե՛ր ես ասում, բարեկա՛մ, – զարմացած ինչեց նրա ձայնը, – մարդ էլ չսիրի՞ Գարիբալդիին (Ավ. Իս.):

Գիտական գրականության մեջ մեջբերվող ուղղակի խոսքը հեղինակի խոսքից երբեմն տրոհում են անջատման գծով, երբ անհրաժեշտ է լինում ընթերցողի ուշադրությունը հրավիրել մեջբերվող խոսքի վրա: Այդ նպատակով էլ այն սկսում են նոր

տողից, գործածում անջատման գիծ, որոնք առավելապես հատուկ են գեղարվեստական խոսքին:

ա) – Մաքուր տեղում մաքուր մնալը դժվար չէ, – ասում էր Արմեն Գուլակյանը, – կարո՞ղ եք մաքուր մնալ անմաքուր տեղում:

բ) Բեմում կոտրվող հախճապակե ափսեի բեկորը Փափագյանի ձեռքից թռավ, ընկավ հանդիսասրահ: Առաջին կարգում նստած հոգևորականը վեր կացավ, խաչակնքեց, կռացավ. զգույշ վերջրեց բեկորը, դրեց ծոցագրպանը և, ի պատասխան իրեն ուղղված հարցական հայացքների, շշուկով ասաց.

– Սուրբ է (Հ. Հովհ.):

Ծանոթություն 1: Եթե հեղինակային խոսքից հետո շարունակվում է մեջբերվող խոսքն ինքնուրույն նախադասությամբ, այս վերջինից առաջ դրվում է անջատման գիծ, որին նախորդում է ավարտված նախադասության վերջակետը:

– Սիրեցեք գիրքը և շատ կարդացեք, – խորհուրդ տվեց ուսուցիչը:– Մարդ, իհարկե, սովորում է ամբողջ կյանքում, բայց դպրոցում ձեռք բերածը բացառիկ ու որոշիչ դեր ունի մարդու համար:

Ծանոթություն 2: Եթե հեղինակային խոսքին նախորդող և հաջորդող մեջբերվող նախադասությունները լրիվ անկախ չեն, բայց ունեն զգալի ինքնուրույնություն, հեղինակային խոսքին հաջորդող անջատման գծից առաջ դրվում է միջակետ:

–Մենք սիրում ենք մեր հայրենիքը,–ասացին աշակերտները.– այն մեզ համար ամենանվիրական բանն է աշխարհում:

Ծանոթություն 3: Անջատման գիծը գեղարվեստական խոսքում կարող է դրվել նաև այն ուղղակի խոսքից առաջ, որ երկխոսության մաս չի կազմում:

ա) Եկավ դերվիչը, արձանացավ սֆինքսի առջև ... և ասաց.

– Եկել եմ մոտոլ համայն աշխարհի բոլոր ծայրերից. բոլոր ծայրերից հարցումն եմ արել իմանալու, թե ինչ է երջանկությունը, որն է նրա իմաստը... և մնացել եմ անպատասխան:

բ) Նա ամեն առավոտ զարթնելիս և ամեն երեկո բուն մտնելիս կրկնում էր.

– Ես բախտավոր եմ, ես ապրում եմ հիմա (Ավ. Իս.)

Բ. Անջատման գիծ դրվում է խոսողի անվան և նրա խոսքի միջև (թատերական ստեղծագործություններում, երկխոսություններում):

ԲԱԳՐԱՏ – Երեկ դու այդպես չէիր խոսում:

ԱՆԴՐԵԱՍ – Երեկը երեկ էր, այսօրը՝ այսօր (Շիրվ.):

Գ. Անջատման գիծ դրվում է բառերի բացատրություններում՝ բացատրվող բառի և բացատրության միջև:

հոտնկայս – ոտքի կանգնած

թույր – գույն, երանգ

քղանցք – հագուստի ներքևի մասը, փեշ

Դ. Անջատման գիծ դրվում է բառերի (թվերի) միջև, որոնցից առաջինը ցույց է տալիս սկիզբ, սկզբնակետ (ունենալով բացառականի իմաստ), հաջորդը՝ վերջ, վերջնակետ:

Երևան – Վանաձոր երթուղի

Ծրագրեր IV–X դասարանների համար

Հանրախանութը բաց է ժամը 10 –21-ը

Ե. Անջատման գիծ դրվում է թվարկումով ներկայացվող այնպիսի բառերի, բառակապակցությունների միջև, որոնցից հաջորդը նախորդի վերաբերյալ տալիս է որևէ տեղեկույթ՝ արտահայտելով տարբեր հարաբերություններ (գործող անձ և բնութագիր, դեր և դերասան, հեղինակ և ստեղծագործություն և այլն):

- ա) *Չասայեր Մեք-Գրեգոր – լեռներով հափշտակված մարդ*
Պարոն Կոսակ – նպարավաճառ
- բ) *Չասայեր Մեք-Գրեգոր – Հրայյա Ներսիսյան*
Պարոն Կոսակ – Միեր Սկրտչյան
- գ) *Անգիր սովորել*
Հովհաննես Թումանյան – «Հին օրհնություն»
Ավետիք Իսահակյան – «Արագածին»
Համո Սահյան – «Հայոց լեզու»

4. ԿԱԽՄԱՆ ԿԵՏԵՐ

Կախման կետերը (երեք կետ) գործածվում են այնպիսի նախադասության մեջ, որը լրիվ չի արտահայտում խոսողի ասելիքը, և նա ուզում է հատկապես նշել չդրսևորված հույզ, զգացմունք: Կախման կետեր կարող են դրվել նախադասության վերջում, մեջտեղում, սկզբում՝ պայմանավորված նրանով, թե չարտահայտված հույզը նախադասության հատկապես ո՞ր մասի հետ է կապվում:

- ա) – *Դուք նա՞ եք...*
– *Այո՛, նա եմ... Չարմանում եմ, որ չճանաչեցիք:*
– *Ախր, շատ եք փոխվել... միայն աչքերը... այո՛, նույնն են (ԱԲ):*
- բ) *Թող գիտությունը նույնիսկ սլապանձվի՛:*
Աստծուն ժխտում է Արարա՛տն անգամ՝
Աստվածաշնչի սրբազան լեռը՝
Բախտով իր դժխեմ...
– *Դե՛, մի՛ քոցըրու խելքըդ, Վարդապետ... (ՊՍ)*

գ) **ՀՐԱՇՔԸ**

- Եվ այսքան հրաշք տեսնելուց հետո*
Ինձ համար դարձյալ հրաշքը վերին
Տաք հողի միջով բոբիկ քայլելու
Այն վաղնջական երանությունն է... (ՎԳ)

5. ԲԱԶՄԱԿԵՏ

Քազմակետը (չորս կետ կամ ավելի) գործածվում է մեջբերումներում և դրվում է մեջբերման կրճատված մասի տեղում:

... Վարդապատի տոներին իմ բարեկամներից մեկը հրավիրել էր ինձ գնալ իր հետ միասին Դիզափայտ, որ բավականին նշանավոր և հայտնի ուխտավայր էր... Երկարատև անշարժությունից հետո տեսնել կրկին անգամ Ղարաբաղի գեղեցիկ տեսարանները, հարուստ ու

վայրենի բնությունը, մտնել գյուղական պարզ նահապետական կյանքի մեջ. այս ամենն այն-
քան հրապուրում էր ինձ, որ ես շտապեցի մի քանի օր առաջ.... դուրս գնալ Շուշիից: (Լեո)

Այս մեջբերման մեջ կրճատված են երեք մանրամասներ, որոնց տեղում նշանակ-
ված է բազմակետ:

6. ԵՆԹԱՄՆԱ

Ենթամնան դրվում է տողադարձի դեպքում:

ա) սո- բ) սովո-
վորել րել

7. ԱՊԱԹԱՐՅ

Ա. Ապաթարցը գործածվում է արևմտահայ գրական լեզվում. դրվում է բառի զեղչված
ձայնավորի փոխարեն, հատկապես կը, մը մասնիկների ը-ի սղման դեպքում:

ա) Հայուհի մ'էր վեր ելնողն,
Բարձրահասակ և գեղադեմ.
Անցավ մոտես նե սիգածեն,
Նստավ անկյուն մ'ինձ դեմ առ դեմ (ՊՊ):

բ) Կիսալուսինն հազիվ թե շող մ'արծակած,
Թաղվիլ կ'երթա մութ-գույն ամայերուն ետին.... (ՄՄ)

գ) Կ'անցնին հովերն ողբազին
Դիակներուն վրայեն և վրայեն փլատակին.... (ԳՎ)

դ) Ջինջ պսակն այդ կարծես դափնի մ'է դժգույն....
Մաքուր կյանքի մ'արտաբխումն է, ինչպես
Չյունն երկրի:

ե) Ուղի մ'ունիմ ես նրբանույշ,
Միրո ուղին մետաքսավետ,
Որուն հըմայքն երջանկախուշ՝
Կ'ոգևորե զիս առ հավետ (ՄՄ):

Բ. Ապաթարցը գործածվում է արևմտյան դ, օ և նման նախամասնիկներո
հատուկ անուններում, որոնք համապատասխան լեզվում գրվում են ապաթարց
Ժաննա դ'Արկ, դ'Ալամբեր, դ'Անունցիո, Օ'Հենրի, Օ'Նիլ:

ԱՌՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Առոգանության նշաններն են շեշտը (ˆ), հարցականը (?), բացականչականը (~): Նրանցով
նշվում են հնչման ելևէջները՝ համապատասխան վերաբերմունք, հաղորդակցային երանգ
արտահայտելու համար:

1. ՇԵՇՏ

Ա. Շեշտ դրվում է հրաման, կոչ, կարգադրություն, առաջադրանք, հորդոր և համանման իմաստ արտահայտող այլ բառերի, բառաձևերի վրա, որոնցով խոսողը դիմում է խոսակցին համապատասխան պահանջով:

- ա) *Ելե՛ք, զարթոնեցե՛ք, կանգնեցե՛ք արթուն.
Գիտցե՛ք՝ քնում են գետերն ու քամին,
Սակայն չի քնում երբեք թշնամին (ԱՎ. Իս.):*
- բ) *Ճախրի՛ր, սավառնի՛ր, սլացի՛ր հայարտ,
Հայոց աշխարհի սրաթև՝ արծիվ (ՎԳ):*
- գ) *Իշխաննե՛ր, չծախե՛ք մեր հոգիները (ԳԳ):*
- դ) *Բարձրացնե՛լ արտադրանքի որակը:*
- ե) *Ձե՛նք չտալ պարսիկներին...նրանք կդատվեն Արտաշատում (ԳԳ):*
- զ) *Երբ կընդունես, կրգագագես աշխարհից,
Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից... (ՎՏ)*
- է) *– Առա՛ջ դեպի թշնամու դիրքերը, – հրամայեց սպան:*

Ծանոթություն 1: Հրամայական եղանակի բայաձևի վրա կարող է շեշտ չդրվել՝ պայմանավորված որոշակիորեն մեղմ հնչերանգով:

Հասմիկ, խնդրում եմ՝ լուսամուտը փակիր:

Ծանոթություն 2: Հրամայական եղանակի բայաձևի և հրամայականի դերով գործածվող այլ բառի շեշտը կարող է անցնել այդ բառերի նախադաս լրացմանը, եթե շեշտված է արտաբերվում նրանց նախադաս լրացումը:

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ (ՀԹ):

–Մի բաժակ ջուր տուր ծարավ ճամփորդին:

–Շտապ գինամթերք հասցնել մարտիկներին:

Ծանոթություն 3: Հրամայական նախադասության մեջ շեշտի փոխարեն կարող է գործածվել բացականչական, եթե բառն արտաբերվում է բացականչումով:

ա) *Հե՛յ, օգնեցե՛ք,*

Մեռած հո չե՞ք (ՀԹ):

բ) *Առա՛ջ: Թող որոտան ձեր անգոր թնդանոթները (ՎՍ):*

գ) *Եկե՛ք, ձկնորսնե՛ր, ոռկա՛ն գցեցեք (ՀԹ):*

Բ. Շեշտ դրվում է կոչականի վրա, իսկ եթե նախադաս լրացումներ ունի, սովորաբար նրան նախորդող բառի վրա (բացի դերանունից):

ա) *Պտտվի՛ր, պտտվի՛ր, կարուսե՛լ,*

Ես քո երգը վաղուց եմ լսել... (ՎՏ)

բ) *Երկի՛ր Հայաստան, նորից լեռնային ճամփադ է իմ դեմ...*

Երկի՛ր առեղծված, դեռ պիտի իջնեմ վիհերը ոգուդ,

Այնտեղից ոսկե աստղերդ դիտեմ... (ՎԳ)

գ) *Խոսք-աղոթքի կարոտ սարեր,
Մարդու ուտքի կարոտ սարեր,
Մարոտ սարեր, ցավոտ սարեր,
Մարե՞ր, ձեզ ի՞նչ ասեմ (ՀՍ):*

*Իմ բարեկամ, իմ սե՛ր, հերոսական ընկեր,
Դու այլբեցիր, անցար ու չկաս հիմա (ԵԶ):*

Ծանոթություն: Կոչականի կամ նրա նախադաս լրացման շեշտի փոխարեն կարող է դրվել բացականշական, եթե բառն արտաբերվում է բացականչումով:

Հարազատներ՝, իմ շա՛տ սիրելի հայրենակիցներ, այսօր իմ հուզական աշխարհում իրար են խառնվել մեր հանդիսման հրճվանքը և առաջիկա բաժանման տրտմությունը:

Գ. Շեշտ դրվում է կամային և բնաձայնական ձայնարկությունների վրա:

ա) – *Է՛յ, այդ ինչո՞վ ես գբաղված (ՍԶ):*

բ) – *Փի՛շտ, փի՛շտ, – վեր բռանք ամենքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտոցով ընկավ կատվի ետևից (ՀԹ):*

գ) – *Շրը՛խկ, – մթության մեջ լսվեց գետնին տապալվելու ձայն:*

Դ. Շեշտ դրվում է նախադասության մեջ որևէ բառի վրա, որին խոսողը տրամաբանական, ոճական առումներով հատուկ կարևորություն է տալիս և ուզում է շեշտել:

Հիմա բոլորին հրավիրեցե՛ք դահլիճ:

Հիմա՛ բոլորին հրավիրեցե՛ք դահլիճ:

Հիմա բոլորի՛ն հրավիրեցե՛ք դահլիճ:

Հիմա դահլի՛ճ հրավիրեցե՛ք բոլորին:

Ծանոթություն 1: Կրկնադիր շաղկապների վրա շեշտ նշանակելը պարտադիր չէ. ավելի հաճախ դրանք չեն շեշտվում.

Իմաստուն է և արդար

Եվ չըկար ոչինչ, որ սիրտըս դյուրեր.

Օրերի երգն անընդհատ,

Ոչ սիրո կարոտ, ոչ բախտի ծարավ,

Դառը տանջանք ու դադար,

Ոչ հարստության և մեծության բեռ ՎՏ):

Եվ սե՛ր, և վի՛շտ, և հերիա՛թ... (ՎՏ)

Ծանոթություն 2: Շեշտ նշանակելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հայերենի շեշտադրության հետևյալ կանոնները.

1. Ժամանակակից գրական հայերենում բառի շեշտը սովորաբար դրվում է վերջին վանկի վրա:

Ընկեր, ընկերներ, քաղաք, քաղաքացի, քաղաքացիություն, իններորդ, քսանութերորդ, վեցական և այլն:

2. Ը հոդը և բառավերջի փակ վանկի ը ձայնավորը (որը չի գրվում) շեշտ չեն ստանում, որի հետևանքով նման դեպքերում բառի շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա:

Ծաղիկը, ծառերը, գիրքը, քանչո, կարծր, վագր:

3. Մի բանի համադրական կազմություններում շեշտը սովորաբար դրվում է առաջին վանկի վրա:

Գու՛ցե, մի՛գուցե, մա՛նավանդ, նա՛մանավանդ: Մի՛թե բառում միշտ շեշտվում է առաջին վանկը:

4. Որոշ փոխառյալ բառերի, հատկապես անունների ուղիղ ձևում շեշտը դրվում է ոչ վերջին վանկի վրա. իսկ նրանց բառակազմական ու քերականական ձևերում՝ վերջին վանկի վրա:

Լերմոնտով, լերմոնտովյան, Լերմոնտովի, Լերմոնտովից, Ասիա, ասիական, ասիացի, Ասիայի, Ասիայից, Ամերիկա, ամերիկյան, ամերիկացի, Ամերիկայի, Ամերիկայից, Բուլղարիա, բուլղարական, բուլղարացի, Բուլղարիայի, Բուլղարիայից, Անտարկտիդա, Անտարկտիդայի, Անտարկտիդայից:

5. Հարադրական բայերի շեշտը դրվում է առաջին ոչ բայական բաղադրիչի վրա:

Ցույց փախ, ջանք փախ, ման գալ, պահ գալ, վեր կենալ, մայր մտնել, գլխի ընկնել, աչքի ընկնել, բաց անել:

6. Հարադրական կազմությանը մի շարք բառեր, որոնց վերջին բաղադրիչը **թե, որ** բառերն են, շեշտը կրում են առաջին բաղադրիչի վրա:

Ասես թե, միայն թե, ինչպես թե, հագի՛վ թե, ե՛րբ որ, հե՛նց որ, քանի՛ որ, մինչև՛ որ և այլն:

7. Արգելական հրամայականի շեշտը դրվում է **մի** արգելականի վրա:

–Մի՛ խոսիր այդպես խրատական ոգով, տե՛ր Վահևունյաց, – խստորեն հանդիմանեց կաթողիկոսը (ԳԳ):

Մի՛ դարձրու այդպես անիրական, անհաս

Իմ հասարակ, համեստ երազը լուրթ:

(Ս. Հարությունյան)

2. ՀԱՐՑԱԿԱՆ ՆՇԱՆ

Հարցական նշան դրվում է այն բառերի վրա, որոնք արտաբերվում են հարցական հնչերանգով:

Լիլիթը գնա՞ց գրախանութ:

Լիլիթը գնաց գրախանութ:

Լիլիթը գնաց գրախանո՞ւթ:

Ծանոթություն: Բառի մեջ հարցական նշանը դրվում է այն վանկի վրա, որի վրա դրվում է շեշտը:

Մի՞ թե քեզ համար ամեն ինչ պարզ չէ:

Ի՞նչ անել. վազե՞լ նրա հետևից, ծա՞յն տալ:

Ամե՞րիկա ես գնում, Ամերիկայո՞ւմ պիտի գտնես երջանկությունդ:

3. ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՆՇԱՆ

Ա. Բացականչական նշան դրվում է ձայնարկությունների, այդ թվում և բնաձայնականների վրա, որոնք սովորաբար արտաբերվում են բացականչական հնչերանգով:

ա) Վա՛յ, գաղտնի լինը դա՞ է... Վա՛, ինչքա՛ն թռչում կա: Իսկ սրանք ի՞նչ են, բներ են... Վա՛ հ, ինչքան բուն կա (ՎԱ):

բ) Օհո՛, աչքերդ կարմրեցին, ծայնդ դողաց, չլինի՞ սիրահարված ես (Շիրվ.):

գ) Է՛ հ, արե՛ք, ինչ ուզում եք, – ասաց նա խորին անտարբերությամբ (Նար-Դոս):

դ) Օ՛ ն, ուրեմն կատարենք մեր սյարտքը (Մուր.):

ե) Հե՛յ, սլաղոններ, տեսա կանաչ գարունքին, էս սարերում լաց էր լինում մի պախրա (ՀԹ):

զ) Օ՛, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր (ԵԶ):

է) Քամին գլորում է սյահածոյի տուփը
Փողոցն ի վեր, ի վար.
Չրրը նգ, զրրը նգ, զրրը նգ (ՌԴ):

Ք. Բացականչական նշան դրվում է հարցահարաբերական և որոշ ցուցական դերանունների վրա՝ նրանց բացականչական կիրառության դեպքում բառի իմաստը շեշտելու և հուզական երանգ հաղորդելու նպատակով:

ա) Այդ ի՞նչ սրտամաշ տխրություն է քեզ
Պատել, հայրենի գեղեցիկ աշխարհ.... (ՀԹ)

բ) Ո՞վ կարող է համարձակվել դիմել այդ քայլին:

գ) Ինչքա՞ն գեղեցիկ է աշունը Հայաստանում:

դ) Որքա՞ն մեծ էր Հայաստանը, և որքա՞ն փոքր է նա այժմ:

ե) Ինչպիսի՞ երազներ ու երազանքներ են պարուրում մեզ պատանության տարիներին:

զ) Քանի՞ տարի է՝ ես քեզ չեմ տեսել:

է) Այնքա՞ն մարդ էր հավաքվել այդ օրը հրապարակում:

ը) Այնպիսի՞ հուզմունքով հանդիպեցին դայրացի նախկին սաներն իրենց ուսուցիչների հետ:

Բացականչական հնչերանգով (և համապատասխան կետադրությամբ) այսպիսի կառուցվածքի նախադասությունները արտահայտում են պատմողական իմաստ՝ որոշակի հուզական երանգով: «Ինչքա՞ն գեղեցիկ է աշունը Երևանում» նշանակում է «Շատ գեղեցիկ է աշունը Երևանում»:

Գ. Բացականչական նշան դրվում է հրամայական բայաձևի շեշտի փոխարեն՝ խոսքին հուզական երանգ տալու նպատակով:

ա) Շողա՛, շողա՛, բարի՛ արև, հիվանդ եմ (ՄՄ):

բ) Ջարդի՛ր քեզ մաշող բանտի փականքը.... (Գ. Էմին)

գ) Ցանե՛, ցանե՛. նույնիսկ հեռու սահմանեն,
Աստղերու այես, ալիքներու այես ցանե՛:
Ծիտերն ինչ փույթ, թե հատիկներդ կավերեն.
Տեղը աստված պիտի մարգրիտ սերմանե (ԳՎ):

դ) Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ սլատմեցե՛ք
Ձեր անդունդներով եկեք չափվեցե՛ք.... (ՀԹ)

Ծանոթություն 1: Բացականչական նշանը դրվում է բառի այն վանկի վրա, որի վրա դրվում է շեշտը:

Ողջո՛ւյն քեզ, անհայտ անձանոթ ընկեր,
Խաղաղություն քեզ, հեռավոր եղբայր,
Ողջո՛ւյն ձեզ, վաղվա չժնված կյանքեր (ԵԶ):

Սիրե՛լ ու կրկին սիրել խնդագին,
Փայփայե՛լ քնքուշ, լինել հարազատ,
Հեռանա՛լ, դառնա՛լ կրկին ու կրկին
Անհուն աշխարհում բացսիրտ ու ազատ (ՎՏ):

Ծանոթություն 2: Բացականչական նշանի գործածությունը հաճախ զուգակցվում է բառերի կրկնության հետ, և դրանով ավելի է շեշտվում միտքը, ավելի հուզական է դառնում խոսքը:

- ա) *Ի՞նչ է բողել նա մեզ.
Մեզ բողել է զոհե՛ր, կրկին զոհե՛ր, զոհե՛ր
Չոհված երազների հիշատակներ անմար... (ՌԳ)*
- բ) *Իսկ մեզ հարկավոր էր, որ ինչ-որ տեղ մարդը...
Ընդդեմ ավերակող ու ճարակող հրի,
Եվ կոխվ տար ոչ թե ընդդե՛մ, ընդդե՛մ, ընդդե՛մ,
Այլ լոկ
Հանո՛ւն, հանո՛ւն, հանո՛ւն ուրիշների (ՌԳ):*
- գ) *Եվ մեծ բնության հրաշքների պես
Մեռնում ենք երկա՛ր, երկա՛ր ու երկա՛ր,
Այդպես ապրում ենք հավիտենապես (ՌԳ):*
- դ) *Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրա
Անցնում օրերն անո՛ւշ, անո՛ւշ,
Անրջային, թեթևասահ,
Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ (ՀԹ):*

Ծանոթություն 3: Բացականչական նշանի, շեշտի գործածության չափը հաճախ կախված է գրողի (հեղինակի) անհատական հակումից: Որոշ հեղինակներ առավելագույն չափով են օգտագործում առուգանությունը՝ առավել լիարժեք արտահայտելու համար իրենց հույզերը, խոհերը:

*Սակայն դեռ երեկ մի հա՛նք չէր փլվում,
Այլ մի բովանդակ երկինք անողոր,
Եվ փլվում ո՛չ մեկ, ո՛չ էլ տասնըմեկ,
Այլ միլիո՛ն ու մեկ թշվառի գլխին...
Եվ երեկ ո՛չ մեկ, ո՛չ էլ տասնըմեկ,
Այլ միլիո՛ն ու մեկ մարդ էր հոնդում
Մի համատարած բացօթյա բանտում...
Եվ սովամահ էր լինում բռնությամբ,
Քարից հաց քամող մի ամբո՛ղջ երկիր...
Աքսոր էր քշվում բովանդա՛կ մի ազգ
Ու տաշվում-մաշվում բովանդա՛կ մի ցեղ...
Եվ այն ժամանակ, երեկ տակավին,
Ո՞ր էր ականջը հանուր մարդկության,
Որ չանսաց, օ՛, ո՛չ, չուզեցա՛վ լսել
Մի ամբողջ ազգի կանչը կաղկանձուն.
– Կոչեմ ապրողա՛ց...*

(Պ. Սևակ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ	3
ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ	4
<i>Բառակապակցությունը որպես շարահյուսության ուսումնասիրության առարկա</i>	4
<i>Բառակապակցության տեսակներն ըստ շարահյուսական արժեքի</i>	6
<i>Բառակապակցությունների կազմությունը</i>	8
<i>Նախադասություն</i>	9
<i>Բնորոշ հատկանիշներն ու սահմանումը</i>	9
<i>Նախադասության տեսակներն ըստ կազմության</i>	21
ՊԱՐՁ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ	22
<i>Երկկազմ նախադասություն</i>	22
<i>Շարահյուսական անմիջական կազմիչներ և նախադասության անդամներ</i>	23
<i>Նախադասության գլխավոր անդամներ. ենթակա և ստորոգյալ</i>	25
<i>Ենթակայի արտահայտությունը</i>	28
<i>Ստորոգյալի արտահայտությունը</i>	29
<i>Նախադասության երկրորդական անդամներ</i>	31
<i>Գոյականական անդամների լրացումներ</i>	32
<i>Բայական անդամի լրացումներ</i>	38
<i>Խնդիրներ</i>	39
<i>Պարագաներ</i>	45
<i>Նախադասության անդամների զեղչումը, թերի նախադասություն</i>	51
<i>Ենթակայի զեղչումը</i>	52
<i>Ստորոգյալի զեղչումը</i>	53
<i>Նախադասության այլ անդամների. մասերի զեղչում</i>	53
<i>Չեղչումը երկխոսության մեջ</i>	53
<i>Շարադասություն</i>	55
<i>Միակազմ նախադասություն</i>	58
<i>Դիմավոր միակազմ նախադասություն</i>	61
<i>Ձևական դիմավոր միակազմ նախադասություն</i>	64
<i>Անորոշ դիմավոր նախադասություններ</i>	66
<i>Ընդհանրական դիմավոր նախադասություն</i>	67
<i>Անդեմ նախադասություն</i>	69
<i>Բայական անդեմ նախադասություն</i>	70
<i>Անվանական անդեմ նախադասություններ</i>	72
<i>Բառ-նախադասություն</i>	74
<i>Հաստատական բառ-նախադասություն</i>	75
<i>Ժխտական բառ-նախադասություն</i>	76

Նախադասության տեսակներն ըստ երանգի.....	77
Պատմողական նախադասություն.....	79
Հարցական նախադասություն.....	81
Հրամայական նախադասություն.....	86
Բացականչական նախադասություն.....	91
Խառը երանգի նախադասություններ.....	95
ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ	96
Ընդհանուր բնութագիր.....	96
Համադասությունն ու ստորադասությունը բարդ նախադասության կառուցվածքում.....	99
Բարդ նախադասության բաղադրիչների հարաբերության արտահայտման եղանակներն ու միջոցները.....	103
Համասեռ և տարասեռ բարդ նախադասություններ.....	105
ԲԱՐԴ ՀԱՍԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ	108
Ընդհանուր բնութագիր.....	108
Ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասություն.....	110
Բարդ համադասական նախադասության բաղադրիչների կապակցման միջոցները.....	112
Բարդ համադասական նախադասության բաղադրիչների հարաբերությունները.....	115
Միավորական հարաբերություն.....	115
Համաժամանակություն.....	117
Տարաժամանակություն.....	121
Ներհակական հարաբերություն.....	124
Հանդիպադրական հարաբերություն.....	125
Հակասման հարաբերություն.....	127
Ժխտման հարաբերություն.....	130
Պայմանաներհակական հարաբերություն.....	132
Տրոհական հարաբերություն.....	133
Հավելական հարաբերություն.....	136
Համադասական տարբեր հարաբերությունների համատեղումը միևնույն բարդ նախադասության մեջ.....	137
Տարասեռ բարդ համադասական նախադասություն.....	138
ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ	139
Ընդհանուր բնութագիր.....	139
Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցման միջոցները.....	140
Բարդ ստորադասական նախադասության տեսակներն ըստ բաղադրիչների քանակի.....	143
Երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն.....	143
Գերադաս ու ստորադաս նախադասություններ.....	143
Ստորադաս նախադասությունների տեսակները և նրանց կապակցությունը.....	146
Նախադասության գլխավոր անդամներին համապատասխանող ստորադաս նախադասությամբ կապակցություն.....	146
Ենթակա ստորադաս նախադասությամբ կապակցություն.....	146
Ստորոգելի ստորադաս նախադասությամբ կապակցություն.....	149
Որոշիչ ստորադաս նախադասությամբ կապակցություն.....	152

<i>Նախադասության ստորադաս անդամներին համապատասխանող ստորադաս նախադասություններով կապակցություն.....</i>	<i>151</i>
<i>Գոյականական անդամի լրացում ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>151</i>
<i>Հատկացուցիչ ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>156</i>
<i>Բացահայտիչ ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>158</i>
<i>Բայական անդամի լրացում ստորադաս նախադասություններով կապակցություն.....</i>	<i>160</i>
<i>Խնդիր ստորադաս նախադասություններով կապակցություն.....</i>	<i>162</i>
<i>Ողիղ խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>162</i>
<i>Հանգման խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>165</i>
<i>Անջատման խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>166</i>
<i>Միջոցի խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>167</i>
<i>Ներգործող խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>167</i>
<i>Վերաբերության խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>168</i>
<i>Մասնավորման (սահմանափակման) խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>169</i>
<i>Պարագա ստորադաս նախադասություններով կապակցություն.....</i>	<i>170</i>
<i>Տեղի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>170</i>
<i>Ժամանակի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>172</i>
<i>Պատճառի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>175</i>
<i>Հիմունքի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>177</i>
<i>Պայմանի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>179</i>
<i>Զիջման պարագա ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>182</i>
<i>Ձևի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>187</i>
<i>Չափի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>189</i>
<i>Այլ գործառույթի ստորադաս նախադասություններով կապակցություն.....</i>	<i>191</i>
<i>Հետևանքի ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>191</i>
<i>Ամբողջ գլխավոր նախադասությանը կամ նրա բաղադրյալ մասին լրացնող ստորադաս նախադասությամբ կապակցություն.....</i>	<i>194</i>
<i>Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն.....</i>	<i>195</i>
<i>Ընդհանուր բնութագիր.....</i>	<i>195</i>
<i>Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների հարաբերությունները</i>	<i>196</i>
<i>Ենթաստորադասություն.....</i>	<i>196</i>
<i>Համաստորադասություն.....</i>	<i>199</i>
<i>Տարաստորադասություն.....</i>	<i>201</i>
<i>Մեջբերվող խոսքով կապակցություն. Մեջբերվող անուղղակի խոսքով կապակցություն. Մեջբերվող ուղղակի խոսքով կապակցության փոխակերպումը անուղղակի խոսքով կապակցության.....</i>	<i>206</i>
<i>Ուղղակի մեջբերվող խոսքի շարադասությունը և կետադրությունը.....</i>	<i>212</i>
<i>Մեջբերվող ուղղակի խոսքով կապակցություն.....</i>	<i>214</i>
<i>Միջանկյալ նախադասություններ.....</i>	<i>216</i>
<i>ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....</i>	<i>221</i>
<i>Ընդհանուր բնութագիր.....</i>	<i>221</i>
<i>Նախադասությունների քերականական հարաբերությունները.....</i>	<i>224</i>
<i>Սիավորական հարաբերություն.....</i>	<i>226</i>
<i>Ներհակական հարաբերություն.....</i>	<i>231</i>

<i>Մասնավորման հարաբերություն.....</i>	<i>232</i>
<i>Ընդհանրացման, հետևության հարաբերություն.....</i>	<i>233</i>
<i>Մեկնական հարաբերություն.....</i>	<i>234</i>
<i>Տրոհական հարաբերություն.....</i>	<i>235</i>
<i>Պատճառահետևանքային հարաբերություն.....</i>	<i>235</i>
<i>Զիջական հարաբերություն.....</i>	<i>237</i>
<i>Ժամանակի, տեղի, որոշիչային հարաբերություններ.....</i>	<i>237</i>
<i>Նախադասությունների կապակցման միջոցները.....</i>	<i>238</i>
<i>Բառական միջոցներ.....</i>	<i>240</i>
<i>Քերականական հարաբերություն արտահայտող բառեր.....</i>	<i>241</i>
<i>Իրադրական հարաբերություն արտահայտող բառեր.....</i>	<i>244</i>
<i>Անվանում արտահայտող բառեր.....</i>	<i>246</i>
<i>Վերաբերմունք արտահայտող բառեր.....</i>	<i>250</i>
<i>Քերականական միջոցներ.....</i>	<i>251</i>
<i>Շարահարություն.....</i>	<i>251</i>
<i>Շարադասություն.....</i>	<i>252</i>
<i>Շարահյուսական միջոց.....</i>	<i>253</i>
<i>Նախադասության անդամի զեղչում, ընդհանուր անդամ.....</i>	<i>253</i>
ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	255
ՏՐՈՂՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ.....	257
<i>Վերջակետ.....</i>	<i>257</i>
<i>Սիջակետ.....</i>	<i>259</i>
<i>Ստորակետ.....</i>	<i>262</i>
<i>Բութ.....</i>	<i>266</i>
<i>Փակագիծ.....</i>	<i>270</i>
ԲԱՅԱԿԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ.....	271
<i>Չակերտներ.....</i>	<i>271</i>
<i>Միության գծիկ.....</i>	<i>273</i>
<i>Անջատման գիծ.....</i>	<i>275</i>
<i>Կախման կետեր.....</i>	<i>277</i>
<i>Բազմակետ.....</i>	<i>277</i>
<i>Ենթամնա.....</i>	<i>278</i>
<i>Ապարարց.....</i>	<i>278</i>
ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ.....	278
<i>Շեշտ.....</i>	<i>279</i>
<i>Հարցական նշան.....</i>	<i>281</i>
<i>Բացականչական նշան.....</i>	<i>281</i>
<i>Բովանդակություն.....</i>	<i>284</i>

ՍԵՐԳԵՅ ԳՅԱՆՁՈՒՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՀԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ

Խմբագիր՝ **Կ. Մաֆրազյան**

Գեղ. խմբագիր՝ **Գ. Գյուլամիրյան**

Տեխն. խմբագիր՝ **Ռ. Ախիրյան**

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ **Գ. Սյրեփանյանի**
Ա. Սահակյանի

Չափսը՝ 70x100 ¹/₁₆ Տպարանակը՝2000:

«Լույս հրատարակչություն» ՓԲԸ

Երևան - 9, Իսահակյան 28:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան

Երևան, Արշակունյաց 2:

✓ N
801243

